

ՄԵՐ ԱՊՈՒՐ ԵՎ ՄԻԶՈՒ

ՄԵԿԵԼԵՐԻ

ԵՐԿՐՆԵՐ

ԵՎ

ՕՐՈՒՆՎՈՐՈՒՄՆԵՐ

XIX




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿՄՏԵՒ

**ՄԵՐՉԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼԻ
ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ**

XIX

*Մեկնաստեղծություններ
Արմեն և Բերարդ ճերեմեան Հիմնադրամի - ԱՄՆ*



ԵՐԵՎԱՆ – 2000

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

**СТРАНЫ И НАРОДЫ
БЛИЖНЕГО И СРЕДНЕГО ВОСТОКА**

XIX

ЕРЕВАН — 2000

NATIONAL ACADEMY OF SCIENCES
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

**THE COUNTRIES AND PEOPLES
OF THE NEAR AND MIDDLE EAST**

XIX

*This publication was made possible by
Armen and Bersabe Jerejian Foundation Inc. - USA*

YEREVAN - 2000

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

ԴՏՀ 94/99
ԳՄԴ 63.3(5)
Մ 663

Ի Մ Բ Ա Գ Բ Ա Ա Ն Ի Ո Ր Հ Ո Ի Բ Դ
Հովհաննիսյան Ն.Հ. (նախագահ), Բայբուրդյան Վ.Ա., Բոզոյան Ա.Ա.,
Խամոյան Մ.Հ., Հարությունյան Ն.Վ., Մովսիսյան Ա.Ե.,
Սաֆրաստյան Ռ.Ա., Քոչյան Ա.Վ.

Մ 663 Անրձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (XIX)-
Եր., «Ձանգակ-97», 2000, 280 էջ:

Ժողովածուում բնութագրված են 2000թ. հունիսին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինս-
տիտուտում կայացած Երևուսապոլ առևտագիտների համադախական XXI
գիտական նստաշրջանին ներկայացված գեղուցումները, որոնք նվիրված են
Անրձավոր և Միջին Արևելքի երկրների և ժողովուրդների պատմության, լեզվի,
գրականության և կրոնի արդիական խնդիրներին՝ հնագույն ժամանակներից
մինչև մեր օրերը:

ԿՐ 0503020000 2000 թ.
0003(01)2000

ԳՄԴ-63.3(5)

ISBN 99930-2-133-4

© Հեղինակներ, 2000 թ.

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտը 1960թ. սկսած իրականացնում է «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարը: Արդեն հրատարակվել է 18 հատոր, որի հեղինակներն են եղել Հայաստանի և արտասահմանի ականավոր գիտնականները, արևելագիտության բնագավառի երևի դեմքերը:

Մատենաշարը իր բնույթով եզակի երևույթ է ոչ միայն հայ իրականության մեջ, այլև իր նմանակը չունեցող հրատարակություն մախկին խորհրդային հանրապետություններում: Դա, ըստ էության, հայ արևելագիտության տարեգրությունն է, արժեքավոր պատմական հուշարձան, հայ արևելագիտական մտքի զարգացման քարձր մակարդակի խոստում վկայությունը:

Մատենաշարի հատորներում արծարծված խնդիրները և հոդվածների պրոֆեսիոնալ քարձր մակարդակը նրան ապահովել են արժանի հեղինակություն միջազգային արևելագիտական շրջաններում:

Ներկա XIX հատորը, շարունակելով իր նախորդների լավագույն ավանդույթները, ունի մի կարևոր առանձնահատկություն: Այն ամբողջապես հանձնված է երիտասարդ արևելագետներին: Հատորում ներկայացված են ՀՀ ԳԱԱ Արևելագիտության, Պատմության, Գրականության, Հնագիտության և Ազգագրության ինստիտուտների, Երևանի Պետական Համալսարանի, «Հրայր Աճառյան» հումանիտար համալսարանի, Գյումրիի մանկավարժական ինստիտուտի և գիտական այլ կենտրոնների երիտասարդ արևելագետների և հայագետների հոդվածները:

Նման քայլի դիմելը՝ հատորն ամբողջությամբ երիտասարդների տնօրինությանը հանձնելը, կապված էր որոշակի ռիսկի հետ: Մատենաշարի մեծ հեղինակության պարագայում, հարց էր ծագում, կկարողանա՞ն արդյոք երիտասարդ արևելագետներն ապահովել այնպիսի մակարդակ, որն արժանի լինի դատմալու իր նախորդների օրինական ժառանգորդը:

Ծանոթությունը հասարակ գետեղված հոդվածների հետ ընդհանուր առմամբ փարատում է այդ մտավախություն, թեև մենք հեռու ենք այդ հոդվածները կատարյալ և ավարտուն համարելու մտքից:

Սակայն մի բան անվիճելի է և դա, քերևա, ժողովածուի ամենակարևոր արժանիքներից մեկն է: Հողվածների հեղինակները համարձակորեն ոտք են դրել արևելագիտության դժվարին, սակայն խիստ պատվավոր բնագավառը: Նրանք իրենց հետ բերել են մտածելակերպի փարձուկներ, երևույթները նորովի լուսաբանելու գովելի միտում, լավատեսություն արդյունքներին և մասնագիտական գրականությանը, այդ թվում՝ արևելյան և արևմտյան լեզուներով, բանավիճելու և իրենց տեսակետները հիմնավորելու անուրանալի ծիրք:

Մյուս կողմից, հատորը և դրանում զետեղված երեք տասնյակից ավելի հոդվածները, վկայում են արևելագետների պահուստային հուսալի ուժի անկայությունը մեր հանրապետությունում: Իսկ դա արևելագիտության որպես մեր հանրապետության համար ստրատեգիական նշանակություն ունեցող գիտական ուղղության շարունակականության ապահովման գրավականն է:

Գիտության բնագավառ է մուտք գործում արևելագիտության մի նոր կրթված սերունդ, որն առաջիկայում, ամրվազն XXI դարի առաջին կեսում իր ուսերի վրա է կրելու արևելագիտության ծանր բեռը:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտը և ողջ հեղինակային կազմը իր խորին երախտագիտությունն են հայտնում «Արմեն և Քերաբե Դերեճեան Հիմնադրամ-ԱԱՆ»-ի պրեզիդենտ մեծարգո Արսեն Ջերեջյանին սույն հաստի հրատարակության ծախսերը մեծահոգաբար ստանձնելու համար:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ

Տնօրեն՝ *պատմ. գիտ. դոկտոր,*
պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյան

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ

**ԹՈՒՐԻՔԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԴԻՎԱՆԻ
ՓԱՏՏԱԹՂԹԵՐԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ԳԱՐՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(XIX դ. վերջ - XX դ. սկիզբ)**

Թուրքիայի հայաբնակ շրջաններից և Արևմտահայաստանից անձնական, կրթական, տնտեսական, քաղաքական, մշակութային, կրոնական և այլ հանգամանքների բերումով ժամանակի ընթացքում ԱՄՆ մեկնած հայ զաղթականները մշտապես պահպանել են կապը հարազատ Պոլսո Վայոց պատրիարքության հետ՝ այն համարելով իրենց հոգևոր, բարոյական ու գործնական մնայուն պատվար: Այդ մասին են վկայում Թուրքիայի Վայոց պատրիարքարանի (եիմնադրված 1461թ.) դիվանում մինչև օրս պահպանվող բացառիկ արժեք ու հետաքրքրություն ներկայացնող փաստաթղթերը, որոնց ինձ քայտտ է վիճակվել ծանոթանալ 1997թ. Թուրքիա կատարած այցելության ընթացքում:

«Ամերիկա» ընդհանուր խորագիրը կրող ֆոնդում ամփոփված գործերը ներառում են երկարատև մի ժամանակաշրջան՝ 1880-ական թվականներից մինչև մեր օրերը: Փաստաթղթերն արխիվային գործերում դասակարգված են ժամանակագրական կարգով, հետևաբար, հնարավոր է հստակ պատկերացում ստանալ պատմական այս կամ այն ժամանակահատվածի մասին: Այսպես, եթե 1880-ական թվականներից սկսվող գործերը տվյալ ժամանակաշրջանի վերաբերյալ բավականին սովոր նյութեր են պարունակում, ապա Առաջին աշխարհամարտի, ինչպես նաև նախորդող տարիների գործերում նկատելի է փաստական նյութերի զգալի նոսրացում, իսկ հաջորդող տարիներին՝ ընդհանրապես անհետացում: Հետպատերազմյան շրջանի գործերում կրկին նկատվում է փաստաթղթերի որոշ սովորացում, քայց արդեն ոչ մասնկին չավտվ:

Հարկ է նշել, որ Թուրքիայի Վայոց պատրիարքարանի դիվանի գործերը երկրում առկա պատմաքաղաքական ստիպողական հանգամանքների բերումով պարբերաբար զտվել են, ինչպես նաև արտածվել ԱՄՆ և այլուր: Այդ է պատճառը, որ ներկայումս մեզ հասած արխիվային նյութերը ընդհանուր

առնմամբ չեզոք բնույթի են՝ գերծ որևէ քաղաքական, կուսակցական, ազգայնական ու անցյալի պատմական երանգավորումներից: Այդուհանդերձ, պատմական իրադարձությունների բովանդակում, հրաշքով փրկված ու մեզ հասած այդ փաստաթղթերն իրենց ինքնատիպությամբ ու պատմագիտական կարևորությամբ սկզբնաղբյուրային բացառիկ արժեք են ներկայացնում:

Փաստագրական այդ նյութերն ընդգրկում են ինչպես մինչև 1898թ. Պուտ Վայոց պատրիարքության վիճակ հանդիսացած Ամերիկահայ թեմի (1902թ. Ամերիկահայոց առաջնորդությունը պաշտոնապես անցել է Սր. Էջմիածնի կաթողիկոսության հովանու ներքո), այնպես էլ հետագայում՝ նորաստեղծ Ամերիկահայոց առաջնորդարանի, գաղութահայ տարբեր կազմակերպությունների ղեկավարների ու անհատների կողմից թուրքիայի Վայոց պատրիարքներին, ինչպես նաև ԱՄՆ-ի հայաշատ վայրերից Ամերիկայի հայոց առաջնորդներին ուղղված և հանգամանքների բերումով Պուտում հայտնված բազմաթիվ մամուլներ, խնդրագրեր, փաստաթղթեր: Հիշյալ սկզբնաղբյուրներում լուսաբանվում են ԱՄՆ-ի հայ գաղթականության դրությունը, սոցիալ-տնտեսական վիճակը, հայրենի բնակավայրեր վերադառնալու ցանկությունը, ամերիկահայ երիտասարդությանն ուժացումից զերծ պահելու նպատակով Պուլից հայ որբուհիներ ուղարկելու նպատակահարմարությունը, պատշաճ և կարող հոգևորականներ ունենալու անհրաժեշտությունը, հայ որբերի որդեգրմանը, որբահավաքին ու որբախնամին, ամերիկահայ եկեղեցիների կարիքներին, գաղութահայ հարանվանական եկեղեցիներին առնչվող հարցերը, եկեղեցական ու քաղաքական պաշտոնական հարաբերությունները, ամերիկահայ տարբեր կազմակերպությունների գործունեությունը, նրանց ազգանպաստ ու հայրենանպաստ ձեռնարկումները, անձնական ու ընտանեկան խնդրանքները, Մեծ եղեռնից վերապրած իրենց հարազատներին վնասներ, նրանց նյութական նպաստ ուղարկելու հետ կապված հարցերը, ինչպես նաև՝ առանձին ղժգհուբյուրներ, բողոքներ և այլն:

Այս բազմապիսի ու բազմաբնույթ փաստաթղթերը պատմական ու տրամաբանական շրջանի մեջ ներկայացնելու նպատակով կարելի է խմբավորել հետևյալ կերպ՝ գաղթականական, հայապահպան-որբանպաստ, եկեղեցական, անձնական, հասարակական-քաղաքական:

Գաղթականական բնույթի փաստաթղթերը ներկայացնում են օսմանյան թուրքիայում հայերի տարեցտարի աճող արտահոսքը երկրից, որն անհատական պանդխտությունից վեր էր անվել հայրենի բնօրրանի ողջ տարածքը ներառող մեծ չափերի հասնող զանգվածային գաղթի, նոր երկրում գաղթականների թշվառ վիճակը, աշխատանքային ծանր պայմանները, բարոյական ու ազգային արժեքների կորուստը, զանգվածային բնույթ կրող ընտանիքներով գաղթականությունը կանխելու խնդրանք, ինչպես հայրենիքում անպաշտպան մնացած կարոտյալ հարազատներին, այնպես էլ հայ-

րենի երկրի տայրեր հաստատություններին առաքված նյութական օգնությունները, հետ վերադառնալու արգելքները մեղմելու և անցագրեր ձեռք բերելու համար թուրքական կառավարությունից թույլտվություն ստանալու վերաբերյալ Պոլսո չայոց պատրիարքներին ուղղված անձնական խնդրանքներ՝ դարասկզբին ԱՄՆ-ում տիրող տնտեսական ճգնաժամի անբարենպաստ ազդեցության հետևանքով դեպի Նոր Երկիր հայ գաղթականությունը կանխելու խնդրանքներ, ընդհուպ մինչև 1914թ. պատերազմը դեպի Թուրքիա հետդարձի և հայրենի երկրի վերականգնմանը սատարելու պատասխանակամություն և այլն:

Ստորև ներկայացնում ենք հատվածներ ԱՄՆ-ի հայ գաղթականների դրությամբ վերաբերյալ Թուրքիայի չայոց պատրիարքարանի դիվանում պահպանվող որոշ փաստաթղթերից:

Այսպես, 1898թ. փետրվարի 17-ին, Ռատրի Ս. Փրկիչ եկեղեցու հոգևոր հովիվ Մաշտոց վարդապետը հետևյալն մամակն է հղել Կ.Պոլսի Ս. Մաղասի արք. Օրմանյան պատրիարքին (1896-1908)՝ «Նախարդ քի 224 պաշտօնագրով մը (7/13 Յունվ.) քացատրած են, թե այստեղի հայ ժողովուրդը ի՞նչ անել կարողանան մեջ է, մի կողմէն զարման կը պատրաստուին Խարբերդէն հարիւրատը ընտանիքներ գաղթելու ... այլևս սամոնիստութիւնը գաղթականութեան վտխուեր է: Ահա ամենէն մեծագոյն գործը որ ազգային ամենամեծ կարևորութիւն ունի.- դարման.- երկիրը կը պարայեն, հոս քշուառներով կը լեցնեն, անելու, անարուեստ խեղճ գիւղացիներ կու գան կը դիզուին իրարու վրայ,- հոս գործերը բոլորովին ընկած են, տեղացիներն իսկ հազարաւոր թուերով անգո յծ են.- հասպա ընտանի ք բերելը.- քանինն ր - տեսած են խորին քշուառութեան մեջ. փավտուկ կիները, 12-13 տարեկան աղջիկները կը ստիպուին չարաչար աշխատիլ գործարաններու, ապակահեսպ մթնոլորտին մեջ ... ցամաք հաս մը ճարելու համար: Ո՛չ, այդ չէ, որ պիտի գրեմ, գայդ գիտէք արդէն դուք, մախարդ պաշտօնագրովս լաւ շեշտած են այդ պարագայն՝ խնդրելով, որ ամէն միջոց ձեռք առնուի արգիլելու համար ընտանիք գաղթականութիւնը:

... Եթէ չ'ենք ուզեր, որ այստեղի պանդուխտները իրենց ընտանիքները բերեն երկրէն՝ պարտատը ենք յորդորել և նիւտութիւն տալ, որ իրենք դառնան չայրենիք, իրենց ընտանեաց ծոցը: ... Գարնան հայրիւրատը անձեք պատրաստուած են՝ չայրենիք վերադառնալ Ամերիկայէն, գայդ ստուգեցի և կուգամ իմաց տալ Պատկ. Ժողովոյդ: Ատենոք տասնեակ տարիներէ 'ի վեր Ամերիկայի մեջ՝ գործարաններու զարշահտ անկիւններում փտտող քշուառներ են. մինչև ցարդ իրենց արինք քրտինքէն մի քանի տոլար կ'անելցնէին և իրենց ընտանեաց կը դրկէին: Այժմ այդպիսի կեանքէ մը բոլորովին ձանձրացած և զգուած որոշած են ամէն դժուարութեանց տոկարով, մեղուելով, գաղտնիօրէն անպատճառ վերադառնալ, հոս իրենց ոյժը, կեանքը, բարոյականը յամբօրէն կը ջլատուի, մախամեծար կը սեպեն իրենց ընտանեաց գրկին մեջ լինել և անոնց հետ մոյն իսկ իրենց հանգուցեալ դժբախտ

եղբարց վիճակին ենթարկուիլ: Ամերիկայի օսմանն հիպատոսները ան-
ցագիր չեն տար, Տանկաստանի նախահանգիստներում մեղութիւն և բան-
տարկութիւններ, ատոնց ճարը նայինք, և եթէ քննութիւն մը կայ ընելիք, թող
հոս հիպատոսները ընեն և յետոյ անցագիր տան՝ որպէս զի ճամբան չմեղ-
կին: Եթէ այդպիսի դիրութիւններ ձեռք բերելու յաջողինք, վստահ եղէք,
Պատկ. Ժողովականք, որ Ամերիկայէն հազարաւոր հայեր ետ պիտի դառ-
նան: Դամբաներու և անցագրի դժուարութիւնը ամենցմէ մեծ մասը լքած և
յուսահատացուցած է: ... Ամերիկայի ընտանեկարօտ հայերը անձկանօք կը
սպասեն Չեր կարգադրութեան ..»: Իսկ Նյու Յորքի Հայ գաղթային ըմկե-
րակցութեան տնօրէն, «Կոչմակ» շաբաթաթերթի խմբագիր վերապատկէ
Խաչատուր Կ. Պեննեյանը, ի մտտ տեղյակ լինելով ԱՄՆ-ի հայ գաղթակա-
նութեան ծանր դրութեանը, ընդամենը 1914թ. հունվար ամսին անագանգել է
Կ. Պոլսի ժամանակի պատրիարք Ամենապատիվ Տ.Չավեն արք. Եղիայա-
նին (1913-1922 թթ.), նշելով. «...Վերջին քանի մը ամիսներուն մէջ Ամերիկա
անտեսական տագնապայից վիճակի մը մէջէն կ'անցնի, որուն հետևանօք
շատ մը գործարաններ փակուած են և հազարաւոր գործատրներ. ի շարս
որոց բազմաթիւ հայեր, անգործ կը թափառին շաբաթներէ իվեր, ողորմելի
դժբախտութեանց մատնուած:

Նկատելով, թէ մեր հայրենակիցներէն շատեր հոս գալէ ետքը շարաշար
յուսախար եղած կը գտնեն ինքզինքնին եւ շատեր, չլիմանալով անգործու-
թեան տառապանքին, յետին թշուառութեան և յուսահատութեան մէջ կ'իյ-
նան, կը խնդրենք Չեր Սրբազնութենէն, որ Թուրքիոյ Առաջնորդարաննե-
րուն եւ տեղական թեթեւօն միջոցաւ հրահանգ տար հայ ժողովուրդին, որ
այս միջոցներուն Ամերիկա չգաղթեն ...»:

Եկեղեցական բնույթի փաստաթղթերը ներկայացնում են ԱՄՆ-ում «Կա-
ճառ Հայկական» (1888թ., Ուստր) և հոգևոր-եկեղեցական այլ կազմակեր-
պութիւններին, Ամերիկահայոց առաջնորդարանին, առանձին հոգևորական-
ների և անհատների կողմից Պոլսո Հայոց պատրիարքութեանն ուղղված բա-
ցառիկ վկայություններ, ամերիկահայ առաքելական եկեղեցու կարիքները
հոգալու, համայնքի հոգեբանությունը հասկացող կրթված, հայասեր, առա-
քելագործ արևմտահայ, մասնավորապես, պոլսահայ ու անգլիախոս հոգևո-
րականներ ուղարկելու վերաբերյալ խնդրագիր-մամակներ, հայրենի երկ-
րում և Պոլսո Հայոց պատրիարքությունում տեղի ունեցող իրադարձություն-
ներին ամերիկահայության արձագանքներ և այլն:

Այս կապակցությամբ բնութագրական է ֆրեզնոյարմակ հայագի Հա-
կոբ Նշկյանի փետրվար 1905 թվակիր մամակը Ամենապատիվ Տ. Մաղա-
քիա արք. Օրմանյան պատրիարքին. «... Արդ ներկայիս կու գամ աղաչել
Չեր Սրբազնութենէն, որ կարող ու այս ժողովուրդին և տեղույս յարմար հո-
վի մը ներկայացունէ մեզ: Իբրաւ է թէ՛ այս երկիրը իբրև արտասահման, Մ.
Էջմիածնի Գերիշխանութեան կենթարկուի, բայց զիտնալով այս դժուարին
կացութիւնը որոյ մէջ կը գտնուի Մ. Կաթողիկոսը, չեմք կարծեր թէ հարկ ե-

դսծ ուշադրութիւնը պիտի կարող ըլլայ դարձունել մեր վրայ եթէ երբէք Նորին Սրբազնութեան դիմեմք, սակայն ատկէ աւելի գերազանց պատճառ մը կայ, որ Չեղ Սրբազնութեան դիմել կը պարտավորիմք: Գիտէք արդէն, թէ տեղոյս գաղթականութիւնը կազմուած է՝ առանց բացառութեան, Տաճկաստանէն եկող հայերէ, հետևապէս Ռուսաստանէն դրկուելիք հովիւ մը բնաւ - չը պիտի կարենայ գոհացունել այս ժողովուրդը, մի միայն Տաճկաստանի մէջ մեծցած անձնատրութիւն մը պիտի կարենայ գոհացունել զմեզ ու ապրիլ մեզ հետ:

... Սրբազան Հայր, գիտէք թէ այս գաղթականութիւնը եկած է Տաճկաստանի գանազան քաղաքներէ ու զաւառներէ, այնպէս որ շատ կը տարբերին իրարմէ սովորութեանք, զարգացման աստիճանով և մտածման կամ դատելու եղանակովն, հետևապէս այնպիսի անձնատրութիւն մը պէտք է, որ ոչ միայն զարգացած, այլ նաև նկարագրի ու կորովի տէր ըլլայ և մանաւանդ զաւտային բարքերուն ու կեանքին ծանօթ: Այս տեղի համար եսկան պահանջ մ'է լա: Խօսելու կամ վարուելու ձիրքը, մեր Ս. Եկեղեցոյ պարզ և ուղիղ սկզբունքներն կամ դաստիարակներն քարոզած պահուն գիտնայ նաև տեղական հանգամանքներուն կամ պահանջներուն համաձայն շինիլ, և բարոյացուցիչ յորտորներ ու խրատներ տալ ժողովուրդին, վոյսանակ անտեղի ու քանդիչ մոլեռանդութեան՝ որ մանաւանդ այս երկրին մէջ կործանարար է մեզ համար, լուսամիտ և ճշմարիտ սկզբունքներով մեր սիրտը վառ պահել դեպ 'ի մեր Ս. Եկեղեցին և մերձեցնել մեզ այն ազգայինները, որ հետանալու և օտարանալու ճամբուն մէջ մտած են: Մեր նոր սերունդը իսկապէս կորսուելու վտանգին մէջ ըլլալով, կարող ըլլայ գէթ Մայրենի լեզուի նախնական ուսումը տալ ու լեզուն կենդանի պահել ...»: Փրովիդենսի Հայ առաքելական եկեղեցու հոգաբարձութեան ատենապետ Ա.Տերայեցի Կ.Պոլսի Ամենապատիւ Տ. Եղիշե արք. Դուրյան պատրիարքին (1909-1910) ուղղված 1910թ. նամակը եզակի չէ սոսկ ամերիկահայ տվյալ եկեղեցական համայնքի համար. «... Քաղաքս՝ որ երեք հազարէ աւելի հայ գաղթականութիւն մ'ունի և որուն գրեթէ չորս հարիւրն ընտանեօք, քանի տարիներէ 'ի վեր է այս մեծ գաղթականութիւնը առ 'ի չ'գոյէ եկեղեցական գրկուած կը մնայ կրօնական ամեն միսիթարութենէ, տարուան ընթացքին մէջ հագիւ մի անգամ կարող կ'ըլլայ հայ եկեղեցական մը ձեռք բերել եկեղեցական արարողութիւն կատարել տալու համար. նմանեցեալներ կը թաղուեն առանց եկեղեցականի, Պասկի խորհուրդներ կը կատարուին օտար եկեղեցականներու ձեռամբ, երեխաներ կը պահուեն երկար ատեն առանց մկրտութեան, մինչև որ եկեղեցական մը ձեռք բերուի, ու կը պատահի շատ անգամ ալ որ կը մեռնին առանց մկրտութեան ...»:

Հայաստանի արքայազն-որդանապաստանի վիստաքորները ներկայացնում են ամերիկահայ անհատների, ազգայինների և, հատկապես, հոգևոր դասի ներկայացուցիչների մտահոգությունն ու ձեռնարկած հայաստանյալան միջոցառումները՝ սպառնացող օտար ամուսնություններից, ձուլման ու այլասեր-

ման վտանգից համայնքի երիտասարդությանը զերծ պահելու ուղղությամբ, ամերիկահայ երիտասարդության ուժացումը կանխելու նպատակով ԱՄՆ հայ սրբուհիներ ուղարկելու խնդրանքը, որը միաժամանակ որքանապատ փրկարար առաքելություն պիտի դառնար քուրքական կոտորածների հետևանքով անտեղծության մատնված հայ որբերի համար, այդ նպատակով ԱՄՆ-ում ստեղծված Հայուհյաց որբախնամ ընկերության գործունեությունը՝ նյութական առաքումները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և այլն, հետպատերազմյան Թուրքիայում իրենց ազգականների ու որբերի ճակատագրով մտահոգ ԱՄՆ-ի հայերի դիմումները ընդհուպ մինչև ամերիկացի պաշտոնյաներին, ինչպես նաև պատվախնդիր ու ազգային արժանապատվություն ունեցող զաղթական հայ երիտասարդների ու նրանց ծնողների անձնական դիմումները՝ Պոլսո հայոց պատրիարքներին՝ կարգադրելու հայ օրիորդների հետ իրենց զավակների ամուսնության խնդիրը՝ «յօզուտ հայ ազգութեան», «որք մը խնդացնելու» և ոչ հարազատ միջավայրում գտնվող հայաշունչ ընտանիքներ կազմելու նպատակով, ինչպես ուսյալ ու կրթված, այնպես էլ 1915թ. Մեծ եղեռնի հետևանքով հարկադրաբար փախստական դարձած և Թուրքիայի հայաբնակ տարրեր շրջաններից Պոլսում ապաստանած հայուհիների հետ, որոնց ծնողներն իրենց զավակների փրկության համար պատրաստակամ էին նույնիսկ քաժանվել նրանցից:

Հիշատակության է արժանի Ամերիկայի հայոց ընդհանուր հովիվ Մաշտոց վարդապետի Ուորչեսթերից Կ. Պոլսի պատրիարք Ամենապատիվ Տ. Մաղաքիա արք. Օրմանյանին 1897թ. սեպտեմբերի 29-ին ուղղված հետևյալ նամակը. «... Որք աղջիկներու համար Չեր Մրքագնութիւնը շատ դժուարութիւններ կը տեսնէ (նախկին նամակիս յիշեալ պայմանով). սակայն պէտքը յոյժ զգայի է. երիտասարդներ սկսան օտար աղջիկներ փնտռել. հետզհետէ մեծ խումբերով ասորի ընտանիքներ կուզան և աղջիկներ կը բերեն իրենց հետ հայերուն տալու համար. ասոնք շատ վտանգաւոր են: Այժմ խորհեցայ ուրիշ պայման մը. պիտի օգնամ, ընկերակցութիւն մը կազմելով. հայրայրել որք աղջիկներու ճանապարհածախսն ալ: Միայն պիտի հարցնէի Չեր Ամենապատուութիւնէն, թէ Պատրիարքարանը յանձնառու պիտի լինի՞ գտնալ քիչ շատ հասուն, խելահաս և դպրոց տեսած որք աղջիկներ (զի Ամերիկայի երիտասարդները մի քիչ խստապահանջ ալ են) և հետզհետէ՝ երկ-երկու, երեք-երեք դրկել՝ ճանապարհածախսերը հետզհետէ մեզմէ ստանալով»⁶. Հուզիչ ու տպավորիչ են Կ. Պոլսի հայոց պատրիարքներին ուղղված ամերիկահայ երիտասարդների նամակները, ուր դրսևորվում է ազգային ինքնության պահպանության նրանց աննկուն ձգտումը. «... նպատակս է իմ հայրենիքի հայ օրիորդի մը հետ ամուսնանալը (Հայ որբանոցէն ուսեալ)՝ փոխանակ օտար ազգիցը, ինչու որ՝ չեմ ուզեր ազգութեանս արիւնը ապականել...»: Եվ կամ՝ «... Աստղ, ազգս յուրանալու համար այնչափ տառապանքներ քաշեցի ու քուրքերուն քովէն փախայ, եկայ հոս ազատ քաղաքին մէջ ազգս պիտի ուրանամ, չէ՛, չէ՛, չեմ կրնար: Խնդրեմ, կ'աղայեմ, ազատեցեք

զիս, և ես պատրաստ եմ աշխատելու ինչ տեսակ գործ ալ, մինակ թէ ազգայնորանամ...»¹:

Թեպետ ամբամասնալ ցանկացող ամերիկահայ երիտասարդները հոգում էին հայտնիների երթևեկի ծախսերը, Պոլսո պատրիարքությունը ներկայացրեց անձնական խնդրագիր-նամակներին կցում էին մաս իրենց լուսանկարները, ամողջական վիճակի մասին բժշկի եզրակացությունը, ծանոթների կողմից իրենց բնութագրող երաշխավորությունը, այդուհանդերձ, հաճախ նման պայմաններում կնքված ամուսնություններն ամենազոր էին լինում՝ տեղի տալով ամուսնավորություններին:

Այդ առիթով Պոլսո Հայոց պատրիարք Ամենապատիվ Տ. Չավեն արք. Տեր-Եղիսյանը 1920թ. պաշտոնագիր նամակ է եղել ԱՄՆ-ի հայոց առաջնորդություն՝ վերջինիցս խնդրելով ավելորդ բյուրիմացություններից զերծ մնալու նպատակով ստանձնել հայրենի երկրից հարսնացու փնտրող ամերիկահայ երիտասարդների՝ պատրիարքությանն ուղղված դիմումների, անձի ինքնությունն ու ամողջական վիճակը հավաստող համապատասխան փաստաթղթերի պաշտոնական վկայականով հաստատման գործը: Ամերիկահայոց Առաջնորդական տեղապահ Տ. Բարկեն եպս. Կյուլեխերյանի (1920-1921) նույն թվականի պաշտոնական հայտարարությամբ վավերացվել են հիշյալ հարցի վերաբերյալ առաջնորդարանի մշակած պայմանները (Ինքնություն և Ամողջական վկայականներ, համապատասխան դիմումի՝ ձև և այլն):

Վերահիշյալից բացի, Թուրքիայի Հայոց պատրիարքարանի դիվանի «Ամերիկա» ֆոնդում պահպանվում են անձնական, հասարակական, ինչպես նաև հատուկներտ քաղաքական բնույթի փաստաթղթեր:

Անձնական բնույթի նյութերն ընդգրկում են տարբեր տարիքի ու զբաղմունքի տեր (ուսանող, հոգևորական, աշխատավոր և այլն) անհատների խնդրագրեր, դիմումներ, զանգատներ ու գոհացուցիչ նամակներ՝ ուղղված Պոլսո Հայոց պատրիարքներին՝ հայրենի երկրում թողած իրենց հայրենակիցներին որոնելու, նյութական նպաստ առաքելու, քաղաքայես սատարելու, ընտանեկան խնդիրները կարգավորելու, հեռադրձի հնարավորությամբ և այլնի մասին զանազան փաստաթղթեր:

Հասարակական բնույթի փաստաթղթերը ներառում են ամերիկահայ տարբեր կազմակերպությունների (հայրենակցական, որբանպաստ, բարեսիրական, ռաուսնակրթական, մշակութային, կրոնա-եկեղեցական, տիկնայաց և այլն) ստեղծման ու գործունեության, հայրենի երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, քաղաքական իրադարձությունների մասին նրանց արձագանքների, ամերիկահայ գաղութի ու նրա առանձին համայնքների թվաքանակի, ազգային կյանքի, բազմաբնույթ անցուղարձների և այլնի մասին տեղեկություններ:

Քաղաքական բնույթի սակավաթիվ նյութերը ներառում են ամերիկացի պաշտոնատար անձանց հեռագրեր, առանձին քաղաքական գործիչների նամակներ և այլն:

Թուրքիայի Հայոց պատրիարքարանի շիվանում պահվող հիշյալ փաստաթղթերը, առաջին անգամ հրատարակվելով և զիտական շրջանառության մեջ դրվելով, իրենց ինքնատիպությամբ ու պատմաճանաչարական մեծ արժեքով կարևոր ներդրում են ԱՄՆ-ի հայ գաղութի՝ տվյալ ժամանակահատվածի ներհամայնքային կյանքի տարբեր ասպարեզների լուսարման և համակողմանի ուսումնասիրման ուղղությամբ պատիվ բերելով պատմաքաղաքական տարբեր փորձությունների թվով անցած և առ այսօր կանգուն մնացած Պոլսո Հայոց պատրիարքարանն ու հայ համայնքին:

KNARIK AVAKIAN

THE ARCHIVAL DOCUMENTS OF THE ARMENIAN PATRIARCHATE OF
TURKEY CONCERNING THE ARMENIAN COMMUNITY OF THE USA
(end of the XIX - beginning of the XX centuries)

(Summary)

Armenians who had emigrated to the USA from the Armenian localities of Turkey and from the Western Armenia for different purposes, have maintained moral and practical links with their native Armenian Patriarchate of Constantinople. Documents that are being kept at the archives of the Armenian Patriarchate of Constantinople under the file name "America" include requests and other letters of the American-Armenian individuals, different parochial and secular organizations to the Armenian Patriarches of Turkey, referring to the Armenian Community life in the USA. These documents, which are being introduced for the first time, have historical-cognitive value for the Armenian studies.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մինչև 1896թ. օսմանյան կայսրությունից գաղթել հնարավոր էր քաջառապես սուլթանի բույլովությամբ, իսկ 1896թ. հոկտեմբերից՝ թուրքական հպատակությամբ հրաժարվելու, երկրի հետ խաղաղ հարաբերություններ պահպանելու և այլևս երբեք չվերադառնալու երաշխավորագրի ստորագրումից ու Հայոց պատրիարքի կողմից այն հաստատվելուց հետո միայն (Sh u Mirak, R. Torn Between Two Lands. Armenians in America, 1890 to World War I, Cambridge, 1983, p. 61):
2. Ֆունդ Ամերիկա, գործ 1880-1899 թթ., արձևգր. 1207, քիվ 2, թուղթ 1-2:
3. Ֆունդ Ամերիկա, գործ 1914 թ., արձևգր. 624, քիվ -, թուղթ 1-2:
4. Ֆունդ Ամերիկա, գործ 1902-1905 թթ., արձևգր. 778, քիվ 982, թուղթ 1-5:

5. Ֆոնդ Ամերիկա, գործ 1910 թ., արձևգր. 5134, քիվ -, քուտք 1-2:
6. Ֆոնդ Ամերիկա, գործ 1880-1899 թթ., արձևգր. 122, քիվ -, քուտք 2:
7. Ֆոնդ Ամերիկա, գործ 1907 թ., արձևգր. 3633, քիվ -, քուտք 1-3:
8. Ֆոնդ Ամերիկա, գործ 1921 թ., արձևգր. 194, քիվ -, քուտք 1-2:

ՆՈՐԱ ԱՐԻՍՅԱՆ

**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՍԻՐԻԱԿԱՆ ՍՓՅՈՒՈՔԻ ՄԱՍՈՒԸ**

Համիդյան շրջանում մամուլի հանդեպ որդեգրած անհանդուրժողականությունը, ինչպես նաև երիտթուրքերի կողմից սահմանված խիստ զրաքննությունը և իշխանության ճնշումները պատճառ դարձան, որպեսզի սիրիացի արաբ հայտնի թղթակիցները հայաժամբի ենթարկվեն ու առիպված երկրից հեռանան՝ օտար ափերում հիմնելով մամուլ: Այսպիսի պայմաններում է ծնունդ ստել սիրիական սփյուռքի մամուլը Եվրոպայի և Լատինական Ամերիկայի երկրներում:

Սփյուռքում սիրիացի արաբ մտավորականները հնարավորություն ունեին ազատորեն արտահայտել իրենց մտքերը և ազգային պահանջներ ներկայացնել: Սիրիական սփյուռքի մամուլը քաղաքական, անտեսական և գրական ուղղվածություն ուներ: Սրանք բացառապես ազատ ոճի, ազգային գաղափարներ արտահայտող թերթեր էին, որոնք իրենց շնորհիվ մեծ տեղ էին հատկացնում սիրիական լուրերին: Ուշագրավ է, որ թերթերի տեղեկատվությունը ստացվում էր նաև Կ. Պոլսից և այլ օտար աղբյուրներից: Սիրիական սփյուռքի մամուլը թերի է ուսումնասիրված, բացառությամբ որոշ սիրիացի մտավորականների կողմից Միքիա ուղարկած ժողովածուներից, որոնց միջոցով փորձ է արվել ամբողջացնելու սիրիական թերթերի ընդհանուր պատկերը:

Մեր ուսումնասիրության առարկան հատկապես այն թերթերն են, որոնք անդրադարձել են հայկական քեմաներին: Դրանք քաղաքական ուղղվածության տասներեք թերթեր են, որոնցից հարկ է նշել «Ալ Բասիլը» («Պայծառաստեա», խմբագիր՝ Յուսեֆ Բախա), «Ալ Միքրասան» («Հնչակ»՝ Սադիմ Լաբաբի), «Ալ Անջարը» («Մուքբեր»՝ Սաիդ Աբու Շամրաս), «Ալ Քալամ ալ Հադիտիմ» («Երկաթե գրիչ»՝ Շարի Հադդադ), «Ալ Մուստաքբալը» («Ապագա»՝ Հաքի ալ Ադրմ) և այլն: Դրանցում գետնտված են հոդվածներ հայոց ցեղասպանության մասին, որոնցից ստորև բերվում են որոշ մեջբերումներ:


1881թ. Փարիզում լույս տեսնող «Ալ Բասիլը» շաբաթաթերթը անդրադարձել է միջազգային դիվանագիտության մեջ հայկական հարցի լուսարանմա-

նը²: Ուշագրավ է, որ սուրբան Արդուլ Համիդը թերթի հրատարակիչ Խալիլ Ղանեմին պարզևատրել է Օսմանյան կայսրության շքանշանով ու դրամով, սակայն վերջինս մերժել է ստանալ այն: Այդ, ինչպես նաև թերթերում հայկական քննադատի և համիդյան քաղաքականության դեմ Ղանեմի կողմից հրատարակված հոդվածների պատճառով սուրբան Արդուլ Համիդը Փարիզում դատ է բացել նրա դեմ, սակայն Ղանեմին հաջողվել է շահել այն³: Ցավոք, Ղանեմի ազգանպաստ թերթը կարճ կյանք ունեցավ: Օսմանյան իշխանությունները արգելեցին թերթը հայրենիքում տարածել:

Միլիտարի մի շարք հայտնի թղթակիցներ և մտավորականներ կարողացան իրենց ձայնը տեղ հասցնել նույնիսկ Բրազիլիայից: 1913թ. Սան Պաուլոյում հայտնի թղթակից Ժորժ Հադադը սկսեց հրատարակել «Ալ Քալամ ալ Հադիդին», որը բացահայտում էր ազգային վաքրամասնությունների (արաբներ, հայեր, քրդեր) նկատմամբ թուրքերի ոչ նպաստավոր քաղաքականությունը: «Խմբագրության գրասենյակ» հաստատում խորագրի ներքո Ժորժ Հադադը Միլիտարի մասին քննադատական վերլուծական հոդվածներով էր հանդես գալիս, ուր հաճախ անդրադարձել է հայերի վիճակին⁴: 54-րդ համարում (03.08.1915) «Հայերի ջարդերը» վերնագրով զգայացունց հոդվածում գրում է. «Ասում ենք, որ պատմության մեջ այսպիսի արհավիրքների միակ պատճառը հետամնացությունն է, հիմարությունը և կրճատված խտրականությունը: Եվ այսպիսի ջարդերը, որոնց մասին կարդալու եք հիմա, մարմինները սարսռում է և ցավից մարդկության սիրտն է արյունոտվում»: Այնուհանդերձ, որ թերթը կարողացել է լավագույնս նկարագրել հայերի հոռեզույն վիճակը:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի 1903 թվականից կրկին Սան Պաուլոյում հրատարակվող «Ալ Աֆրաթը», որը բավական երկար կյանք ունեցավ՝ մինչև 1921թ: «Ալ Աֆրաթը» հայտնի է եղել որպես ազատամիտ թերթ, որտեղ տեղ են գտել հայերի ցեղասպանության մասին ցայտուն վիստեր⁵: Թերթի խմբագիրն էր հայտնի մտավորական Սաիդ Աբու Շամրան: Թերթը մանրամասներ է ներկայացնում հայերի ցեղասպանության մասին, որն ըստ վերլուծությունների, երիտթուրքերի կողմից նախօրոք ծրագրված քաղաքականության արդյունք էր: 1918թ. հրատարակումներում հանդիպում ենք երեսուցից ավելի հոդվածների, ուր հաղորդվել են հայերի ջարդերի մանրամասներ և այդ թեմայով արված վերլուծություններ: «Ալ Աֆրաթը» երևան է բերում երիտթուրքերի կողմից կազմակերպված հայերի տեղահանման, կոտորածների և ցեղասպանության մասին հրահանգված և կիրառված որոշումները:

Սաիդ Աբու Շամրան իր մի շարք հոդվածներում արտահայտվել է թուրքական թուրանիզմի, թուրքացման քաղաքականության, ինչպես նաև երիտթուրքերի ոչ իսլամ տարրերի ոչնչացման ծրագրերի դեմ⁶, որոնք մուսուլմանների մեջ հայերի դեմ թշնամանքի և դժի զգացումներ առաջացրեցին: Վկայակոչվում են Հալեպի նահանգում օսմանյան իշխանությունների կող-



մից հայերի տեղահանման հրահանգները: Թերթի հրատարակումների համաձայն՝ Օսմանյան կայսրության թուրանական ծրագրերը նպատակ ունեին իսլամական ազգերի թուրքացումը և ոչ իսլամ փոքրամասնությունների բնաջնջումը: Հայերի ցեղասպանության մասին խոսում են արաբ ակամատեսները, որոնք ստույգ թվեր բերում են մահացածների մասին: Թերթը հայերի ցեղասպանության կազմակերպման մեջ Թուրքիային օգնելու համար մեղադրում է Գերմանիային: Բազմաթիվ են այն հոդվածները, ուր մանրամասն նկարագրվում է հայերի տառապանքը իրենց երկրից քշվելուց, սովի միջոցով մահվան դատապարտվելուց հետո:

1219-րդ համարում (25.03.1918) «Հայաստանում թուրքերի վայրագությունները» վերնագրով հոդվածում բաղդադի մի արաբ ակամատես պատմում է: «Թուրքերը Գարահիսարից քշել են հարյուր հայ ընտանիքներ, որոնց կեսին խեղդել են Երիրատ գետում՝ նավակները շրջելով, ուրիշները Դեր Ջոր հասնելուց հետո էլ քայլել են քաղաքից հեռու: Ռասուլ Այնուլ, որը մարդաշատ է, ջարդեր չկան, սակայն ոչ մի արգելք չկա, որպեսզի կամայք և երեխաները սովից մահանան... Թուրքերը յարյարելու մեջ վարպետացան, նրանք հագարավոր ծարավ հայ տղամարդկանց, կանանց և երեխաներին ցույց էին տալիս Հալեպից եկած ջրի պահեստները և նրանց առաջ ջուրը հոսեցնում էին ավազի վրա»:

«Ալ Աֆքարը» պարզաբանում է, որ սույն հոդվածը հրատարակել է, որպեսզի քաղաքակիրթ աշխարհը իմանա թուրքերի կողմից գործադրված վայրագությունների մասին: Թերթը իր մի այլ հոդվածում (1244-րդ համար՝ 06.07.1918), վերլուծություններ անելով հայկական հարցի մասին, գրում է. «Աշխարհի ժողովուրդների մեջ չկա որևէ մի ժողովուրդ, որը հայերի նման տառապած և տանջված լինի: Թուրքերը թող իմանան, որ ինչ որ արել են, անցնելի մեծ մեղք է»:

Հիշատակության է արժանի այն վիստր, որ հայերի դեմ թուրքերի բռնությունները լայն արձագանք են գտել ոչ միայն սիրիական-արաբական, այլև Միդիայի սփյուռքի արաբական մամուլի էջերում, որը վկայում է արաբների կողմից հայկական խնդիրների նկատմամբ անվերապահ ուշադրության մասին:

Հայերի ցեղասպանության լուրերը արձագանք են գտել նաև 1916թ. Փարիզում լույս տեսած «Ալ Մուստաքբա» պաշտոնաթերթում, որը հիմնել էր Ֆրանսական կառավարությունը, իսկ խմբագիր նշանակվել էր Հաքի ալ Արդը: «Ալ Մուստաքբա» քաղաքական ազատ թերթ էր, որի էջերում, բացի Ֆրանսիայի տեղական լուրերից, կարդում ենք նաև Միդիայի և Լիբանանի, այստեղ հաստատված հայերի մասին: 1916-1919թթ. թերթի համարներում լույս են տեսել ավելի քան յոթանասուն հոդվածներ, որոնք առնչվում են մարդկության պատմության ամձայն ռճիրին՝ հայոց ցեղասպանությանը: Թերթի 4-րդ համարում (07.05.1916) պարզաբանվում է արարների և թուրքերի միջև գոյություն ունեցող տարբերությունները հայերի հանդեպ իրենց վե-

րարերմունքում: «Արաբական պատմության մեջ չեք գտնի որևէ հիշատակություն հայոց երկրում այնպիսի հետևողական և կրկնվող կոտորածների մասին, որը թուրքերն իրենց հետ քերեցին մոնղոլների երկրից և կեղծորեն վերագրում են իսլամին և մուսուլմաններին... Արաբական աշխարհը բողոքում է հայկական ջարդերի դեմ, պատմության ատաջ արդարացնելով իսլամը և մուսուլմաններին»:

Նույն ինքը Հաքի ալ Աղըմը 103-րդ համարում (10.05.1918) «Ընդհանուր ամբիոն» իր հոդվածում, մեջբերելով գերմանացի հյուպատոսի և Նուբար փաշայի խոսքերը, վերլուծում է թուրանական ծրագրի եռթյունը և վտանգը՝ այս առիթով գրելով. «Հայերից հետո մեր հերթն է գալու: Եթե Միլիթան մնա թուրքական լծի տակ, ուրեմն սիրիացիները մուլուպես կենթարկվեն սպանդի, կախաղանի և անավոր չարյարանքի, և մեր երկրում ջարդերը կլինեն ավելի սարսափելի, քան հայերի ջարդերը»:

Որպես հայտնի քաղաքական գործիչ, Հաքի ալ Աղըմը արարներին զգուշացնում է թուրքական վտանգի մասին և անկախության կռիւնք է անում թուրքական լծից ազատագրվելու համար:

Միլիթան մամուլի էջերում առկա է այն տեսակետը, որ թուրքերը բռնությունների առաջին փորձը արել են հայերի վրա: Արաբները գիտակցում էին, որ թուրքերի դեմ պետք է պայքարել զենքով: Հեջազի ազգային ազատագրական պայքարը եկավ ապացուցելու այդ:

Միալված չենք լինի, եթե եզրակացնենք, որ սիրիական սփյուռքի մամուլը հայոց ցեղասպանության պատճառներից մեկը համարում էր թուրքերի մոլեռանդությունը, տգիտությունը և կրոնական խտրականություն պատճառները: Համաձայն սիրիական մամուլի, թուրքերը մոնղոլների և Չինգիզ խանի սերնդից են, և հետևողական ու կրկնվող կոտորածների ակունքները հենց այստեղից են գալիս, որն էլ հայոց ցեղասպանությունն իրականացնելու պատճառ դարձավ:

Սիրիական քերթերում տպագրված հոդվածների մեջ ապացուցվում էր, որ իսլամը որևէ առնչություն չունի թուրքերի ոճիրների հետ և ատաջ էին քաշում իսլամի անմեղության վարկածը, որի միջոցով ներկայացվում էր հարցի ոչ կրոնական կողմը:

Այնուհետ է, որ սիրիացի արար մտավորականները, թղթակիցները և քաղաքական գործիչները մեծապես աջակցել են հայերին և լուսաբանել հայոց ցեղասպանության հանգրվանային փուլերը՝ սկսած տեղահանություններից, տարագրություններից, կոտորածներից, ընդհուպ մինչև Միլիթանի հայերի հաստատվելը: Այս ամենը անվիճելիորեն փաստում է Օսմանյան կայսրության մեջ հայերի ցեղասպանությունը:

NORA ARISYAN

THE ARMENIAN GENOCIDE AND THE SYRIAN ARAB
DIASPORA PRESS

(Summary)

The paper deals with the reflections of the Armenian Genocide in the Syrian Arab Diaspora press. Taking into consideration that the press is an important historical source, it is the first time that the Syrian press is studied and analyzed. The paper is based on 13 of the Syrian Diaspora newspapers published in Brazil, France etc. (1881-1921), which have dealt with the events of the Armenian massacres and genocide. Many of the articles speak about the Ottoman plan of the extermination of the non-Muslim minorities and about the tortured Armenians after they were driven out of their lands. The study of the Syrian press leads to a conclusion that the Armenian genocide had a vast echo not only in the Syrian Arab press but also in the Syrian Arab Diaspora press, which testifies its non-preservative attention toward the Armenian affairs.

The Syrian intellectuals, journalists and politicians supported the Armenians and they elucidated all phases of the Armenian genocide. The author concluded that the Syrian Diaspora press testifies the Armenian genocide in the Ottoman Empire.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ալ Մոսախլի Մունզեր, «Միլիական մամուլը և նրա այրերը», Դամասկոս, 1997, էջ 93 (արաբերեն):
2. «Ալ Բասիդ», 1881թ., քերթի ժողովածու (արաբերեն):
3. Դարրազի Ֆիլիս, «Արաբական մամուլի պատմությունը», Բեյրութ, 1913, հտ. 2, էջ 271 (արաբերեն):
4. «Ալ Ջալան ալ Հադիթի», 1914-1918թթ., քերթի ժողովածու (արաբերեն):
5. «Ալ Աֆքար» 1918-1921թթ., քերթի ժողովածու (արաբերեն):
6. Միլիական արաբական մամուլում Օսմանյան կայսրության մեջ ապրող ազգերը անվանվում են «տարրեր», ըստ այդմ իսլամ և ոչ իսլամ տարրեր:
7. «Ալ Մոստաքբա», 1916-1919թթ., քերթի ժողովածու (արաբերեն):

ՄՈՒՐԵՆ ԲԱՂՎԱՍԱՐՅԱՆ

**ԹՈՒՐԻՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԴՈՒՄՆԵՐԻ
ԲՆՈՐԱՆՈՑ ԳԾԵՐԸ (1920-1930 թթ.)**

Յուրաքանչյուր պետության մեջ քաղաքական իշխանության մեխանիզմը գործում է գլխավոր գործող անձանց՝ քաղաքական կուսակցությունների, քաղաքական առաջնորդների և քաղաքական ընտրանու միջոցով: 1920-1930-ական թթ. Թուրքիայում ծառայած էր նոր քաղաքական ընտրանու՝ իր նոր արժեքներով, մտեցումներով և գաղափարներով, ձևավորման անհրաժեշտությունը: Այն քաղկասցած էր զինվորականներից, հատկապես քարձրագույն սպայակազմի ներկայացուցիչներից, քաղաքարձրակ մտավորական խավից, բյուրակրատիայի մարտկանցից, Անատոլիայի տեղական վերնախավի և հոգևորականության ներկայացուցիչներից և նոր ձևավորվող արդյունաբերական ու առևտրական կամ «միջին» խավից: Քաղաքական և հասարակական գիտությունների մեջ տարածված է այն տեսակետը, որ քաղաքական ընտրանին մարդկանց մի խումբ է, որի ձեռքում գտնվում են կրթության, տեղեկատվության, ֆինանսական հիմնական միջոցները և ինստիտուտները, որոնց օգնությամբ էլ փաստորեն իրականացվում է քաղաքական իշխանությունը:

Թուրքական քաղաքական ընտրանու մասին իր ընդգրկումը աշխատության մեջ ամերիկյան մասնագետ Ֆրեդերիկ Ֆրեյը նշում է, որ «քաղաքական ընտրանին կազմում էր իշխանության կայացման և գործունեության ամուր հիմքը, որը մասնակցում էր քաղաքական ծրագրերի և քարեփոխումների մշակմանը և կենսագործմանը»: Թուրքիայում դեռևս պարբյուրաբար գաղափարախոս Ջիյա Գյոքալքին էր առաջ քաշում այն գաղափարը, որ գերագույն իշխանությունը պետք է տրվի ոչ թե ժողովրդին, այլ ազգային էլիտային, որը պետք է իշխի՝ ելնելով ժողովրդի շահերից. «Ժողովրդական իշխանությունը ընտրանու իշխանությունն է»: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ քաղաքական ընտրանին որոշակի խումբ է կամ հասարակության խավ, որը կենտրոնացնում է իր ձեռքերում պետական իշխանությունը և գրադեցնում է ղեկավար պաշտոնները՝ կառավարելով հասարակությունը: Նրա մեջ մտնում են իշխանական լիազորություններ և գործա-

ռույթներ ունեցող բարձր կարգի քաղաքական գործիչները, բարձրագույն պետական ծառայողները: Քաղաքական ընտրանքին հանդիսանում է քաղաքական համակարգի կենտրոնական օղակը: Թուրքիայում իշխանությունը ազգայնական պատերազմի ընթացքում և դրանից հետո հայտնվեց, բնականաբար, ազգայնական շարժումը գլխավորող անհատների ձեռքում, ընդ որում, նրանցից ոչ բոլորը մնացին իշխանական համակարգի զազաթին. մնացածներն էլ դարձան նոր՝ հանրապետական ընտրանու հիմքը:

Համաձայն մասնագիտական գրականության մեջ առաջ քաշված, մասնավորապես՝ Ֆ. Չրեյի և քուրդ հասարակագետ Շադյար Քելյուրի տեսակետների, քուրդական քաղաքական ընտրանքին 1920-1930-ական թթ. քաղկացած էր մի քանի շերտերից՝ բարձրագույն, միջին, վարչական: Բարձրագույն օղակի մեջ մտնում էին Հանրապետության նախագահը (որը միաժամանակ Հանրապետական Ժողովրդական Կուսակցության (ՀԺԿ) գլխավոր նախագահն էր), Հանրապետության վարչապետը (միաժամանակ ՀԺԿ-ի վախճանախագահը), ՀԺԿ-ի գլխավոր քարտուղարը, ներքին գործերի, արտաքին գործերի, ֆինանսների և տնտեսության, ազգային պաշտպանության նախարարները, Թուրքիայի Մեծ Ազգային Ժողովի նախագահը, կրթության, արդարադատության նախարարները, 1924-1925 և 1930թ. կարճատև գոյություն ունեցած Առաջադիմական-Հանրապետական և Լիբերալ-Հանրապետական կուսակցությունների նախագահները, մնացած նախարարները, ՄԱԺ-ի վախճանախագահները և մշտական կոմիտեների ղեկավարները, ՀԺԿ-ի կենտրոնական կոմիտեի և վարչության անդամները, ՀԺԿ-ի տարածքային տեսուչները: Այս շրջանակն էր ընդունում ժողովրդի համար ամենակարևոր քաղաքական որոշումները: Միջին քաղաքական ընտրանքին ձևավորվում էր խորհրդարանի անդամներից, վիլայեթների մահաճգապետներից, քաղաքապետներից, տարբեր քաղաքական ուժերի ղեկավարներից: Վարչական ընտրանու մեջ մտնում էին պաշտոնյաները, որոնք զբաղեցնում են բարձր դիրքեր նախարարություններում և պետական կառավարման այլ մարմիններում⁴:

Ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրությունները, ինքը՝ քաղաքական վերնախավը բաժանվում էր մի քանի խմբերի՝ կառավարության անդամներ, ՀԺԿ-ի ղեկավար մարմինների անդամներ, մեջլիսի պատգամավորներ, զինված ուժերի հրամանատարական կազմ, դատավորներ, մահաճգապետներ: Այդ ընտրանու ներսում գոյություն ունեին մի քանի մրցակից խմբեր. սկզբից դրանք Մուստաֆա Քեմալի շուրջ համախմբված և նրան ընդիմադիր անձինք էին, որոնց միջև պայքարի զազաթնակետը դարձան 1924-1926թթ. Առաջադիմական կուսակցության և Իզմիրի դավադրության հետ կապված իրադարձությունները, ապա վարչապետ Իսմեթ Ինյունյուի և ներքին գործերի նախարար Ռեջեփ ֓եքերի գլխավորությամբ արմատականացման, 1930-1934թթ. գործունեություն ծավալած ձախարմատական «Կադրո» և ֆինանսների նախարար և վարչապետ Ջելալ Բայարի ազատա-

կան հայացքներ դավանող ընտրանու անդամների խմբերը: Սակայն քաղաքական որոշումների ընդունման գործընթացում այս խմբերի խաղաղացած դերը, թեպետ և զգալի էր, բայց ոչ վճռորոշ: Չկար որևէ մեկ գործիչ, որ կարողանար ասել, որ ինքը հանդիսանում է նախագահի գլխավոր հենարանը. անգամ Իսմեթ Ինյունյուն չէր հավակնում կռչվել այդպիսին: Իր իշխանությունը և լիազորությունները Աթաթուրքը չէր կիսում ոչ մեկի հետ: Միայն 1937-1938թթ.՝ ծանր հիվանդության պատճառով, նա քույր տվեց իր շրջապատին ձեռք բերել մեծ չափերի հասնող ինքնուրույնություն և ազդել որոշումների վրա:

Թուրքիայի Հանրապետության իշխող վերնախավը իր արձատնեղով պատկանում էր օսմանյան և երիտթուրքական ընտրանու երկրորդ և երրորդ շարքին, ուստի թե՛ իր մտածելակերպով, թե՛ վարքագծով այն օտարված չէր նախորդ ժամանակաշրջանից: Նոր ընտրանու մտա դեռևս չէր վերացել օսմանյան ինքնիշխան և տիրապետող էին մնում օսմանյան մտածելակերպն ու ավանդույթները պետության և իշխանության մասին հատուկ պատկերացումներով, մասնավորապես, երկրի կառավարման ռճի, ժողովրդի կյանքում պետության խաղաղացած դերի վերաբերյալ: Այսպես, հանրապետական ընտրանին, օսմանյան վերնախավի պես, ընդունում էր պետության և նրա առաջնորդների գերակայությունը՝ համոզված լինելով, որ պետությունն է մարմնավորում արդիականության գաղափարները և կարող է տարածել դրանք ամբողջ բնակչության մեջ բարեփոխումների միջոցով: «Նեկավարների պարտականությունն է, - հայտարարում էր Մուստաֆա Քեմալը 1928թ.,- ազգին կենսական վերածննդի և երջանկության ճանապարհը ցույց տալը»⁵:

Ընդհանրապես, հին օսմանյան բյուրոկրատիայի ներկայացուցիչներից շատերը տեղ գտան նաև Անկարայի կառավարության հաստատություններում: Հանրապետության 50-ամյակին նվիրված իր հուշերում թուրք հայտնի գրող և պետական գործիչ՝ Յակուբ Քադրի Կարասամանոլուն գրում էր. «Բարեփոխումների առաջընթացի համար հարկավոր էր ազատվել նախորդ ժամանակաշրջանի մարդկանցից: Մինչդեռ մենք մեր պետության գլուխ հավաքեցինք ինչ որ կար Բաբը Ալիում... Ահա այդ պակասն էր, որ մեր բարոյությունների պատճառը դարձավ: Աթաթուրքը ինձ այս իմ հարցումներին պատասխանում էր, որ «ինձ մի բողոքի՛ր: Ես ազգային պայքարը սկսեցի կանաչ դրոշմների տակ հավաքված հոջաների հետ: Մարդ չկար, չկարողացա գտնել: Ո՞վ եկավ, ո՞վ ինձ հավատարիմ ծառայեց: Խալիֆայությունը, սուլթանությունն անգամ շեյխ-ուլ-իսլամի ֆեթվայով վերացնել տվեցին»⁶: Հետևաբար, Քեմալ Աթաթուրքը ամեն կերպ ջանք էր գործադրում, որպիսի թուրք երիտասարդությունից մեր ընտրանի աճեցնի. «Մենք ամեն ինչ երիտասարդներին ենք քողմեղու... Մեր ամբողջ հույսը երիտասարդությունն է»⁸: Փաստորեն, Թուրքիայում իշխող վարչակարգը իր ուսերի վրա էր վերցրել երկրի մոր ընտրանու ձևավորման գործը:

Թուրքական ընտրանին մեծ մասամբ հավակնում էր հանդես գալու որպես կրթված, մտավոր, պաշտոնավոր խավ: Ընտրանու մյուս խումբը կազմում էին տեղական մակարդակով ազդեցություն ունեցող մարդիկ, որոնք, սակայն, տվյալ ժամանակաշրջանում զգալի չափով ներկայացված չէին իշխանության համակարգում: Ընդ որում, երկրի տարածքի մեծ մասում քաղաքականությունը շարունակում էր մնալ, մի կողմից, տեղական աղաների և ցեղապետերի, մյուս կողմից, իշխանությունների միջև բանակցությունների գործ:

Թուրքիայում քաղաքական ընտրանու և բնակչության զանգվածների միջև գոյություն ուներ բավականին մեծ ճեղք, որը արտահայտվում էր ինչպես սոցիալական ծագման և դիրքի, այնպես էլ կրթական և մտավոր մակարդակներում: Թուրքական ընտրանին շատ ավելի կրթված էր հասարակ ժողովրդից: Քեմալական ժամանակաշրջանում մեջլիսի մոտ 60 տոկոսը ունեցել է բարձրագույն համալսարանական կրթություն: Հիմնականում մեջլիսի պատգամավորները ավարտում էին քաղաքական գիտությունների և իրավաբանական բաժանմունքները⁹: Փաստագրական տվյալները վկայում են, որ թուրքական քաղաքական ընտրանու մեջ տիրապետող էին միջին տարիքի¹⁰ բարձրագույն կրթությամբ սովախայիցի¹¹, որոնք պատկանում էին սոցիալական բարձր և միջին խավերին: Դրանք հիմնականում պետական բյուրոկրատիայի, զինվորականության, մտավորական խավի ներկայացուցիչներ էին¹²:

Որքանով մեջլիսն էր տարբերվում երկրի ընդհանուր բնակչությունից, այդքանով էլ բարձրագույն դեկավարությունն էր առանձնանում խորհրդարանից: Նախարարների կաբինետի անդամները զերազանցապես համասարանական մակարդակի կրթություն ունեին: Ըստ մասնագիտությունների մրանք բաժանվում էին զինվորականների, բժիշկների, իրավաբանների և քաղաքագետների¹³: Այսպիսով, երկրի քաղաքական ընտրանու մեջ մուտք գործելու համար պահանջվում էր հասնապատասխանել որոշակի չափանիշներին, ինչպես, օրինակ, բարձրագույն կրթություն ունենալը, պատկանելությունը բանակային վերնախավին կամ պետական բյուրոկրատիային:

1920-1930-ական թթ. քեմալական ընտրանու գործունեության գլխավոր հենարանը հանդիսանում էին գործադիր իշխանությունը (բյուրոկրատիան), կուսակցությունը և բանակը, իսկ կենտրոնական մպատակներն էին երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական կառուցվածքների, մշակութային կյանքի և մտածողության արձատական վերափոխումը և արդիականացումը: Այս ենթատեքստում նրա հիմնական կարգախոսները դարձան ազգայնականություն, աշխարհիկ պետության և արդիականացման գաղափարները¹⁴, որոնց ամունից էլ քաղաքական ընտրանին իրեն իրավունք վերապահեց խիստ վերահսկողություն սահմանել զանգվածների և երկրի քաղաքական դեկավարման գործընթացների նկատմամբ՝ տեսնելով Թուրքիայի զարգացումը ուժեղ և կենտրոնացված վերահսկողության տակ, այսինքն, «խնամա-

կար» վարչակարգի պայմաններում: Ավելին, երկրի քաղաքական ընտրանին սկսել էր իրեն նույնացնել ազգի և պետության հետ: «Հանրապետության ղեկավարությունը, - ընդգծում է Աթաբաթյանի կենսագիր լորդ Կոնրոսը, - անկեղծորեն հավատում էր, որ իրավունք ունի երկրի բնակչության հնազանդություն պահանջելու և ստանալու»¹⁵: Այսպիսի ավտորիտար իշխանության պայմաններում քաղաքական ղեկավարության և քաղաքական ընտրանու գործառույթը կայանում էր պետական, զինվորական, մտավորական կառույցների նկատմամբ վերահսկողության պահպանման մեջ: Ընդ որում, շնորհիվ բնակչության մեջ արձատրված այդ նույն մտածելակերպի, նրանք իրենց քաղաքականությունը անցկացնելիս կարիք չունեին դիմելու դեմագոգիայի և տեռորի հսկայական ապարատի օգնությանն, ինչպես դա տեղի էր ունենում միաժամանակ Խորհրդային Սիությունում և Գերմանիայում: Թեև, մասնավորապես, մեկ անգամ չէ, որ արձանագրվում էին դեպքեր, երբ նրանք, ովքեր համաձայն չէին իշխող վերնախավի դիրքորոշումների և քաղաքականության հետ, դիտվում էին ոչ միայն որպես քաղաքական ընդդիմախոսներ, այլ նաև որպես «պետության և ազգի թշնամիներ»¹⁶:

Հարկ է նշել նաև, որ թուրքական ընտրանու մեջ գոյություն չունեին բավականաչափ ինքնուրույն խմբեր: Տնտեսական վերնախավը, օրինակ, չէր կարող հավակնել հանդես գալու իբրև ինքնավար քաղաքական ուժ, մտավորականությունն էր փնտրել չէր առաջ քաշել այլընտրանքներ առկա քաղաքական համակարգին և հանդիսանում էր իշխող վարչակարգին ավելի շուտ «սպասարկող», քան թե ընդդիմադիր ուժ, իսկ բանակային սպայակազմը բավարարվում էր իր նախկին հրամանատարներին Հանրապետության բարձրագույն պաշտոններում տեսնելով և կենտրոնացած էր երկրի տարածքային ամբուջակառության պահպանման և բանակի արդիականացման խնդիրների վրա, պետական բյուրոկրատիան էլ զբաղված էր կառուցվածքային բարեփոխումների խնդրի լուծմամբ: Իշխող ընտրանին պատասխանատու չէր երկրի բնակչության առաջ, քանի որ չէր գործում պարբերական ընտրությունների միջոցով այն փոխելու մեխանիզմը: Ընդ որում, հանրապետական քաղաքական ընտրանու առաջին սերնդին այդպես էլ չհաջողվեց փոխադարձ կապ հաստատել լայն զանգվածների հետ: Չ. Ջեյդեբը այս առթիվ նշում է, որ «հանրապետականներն այդպես էլ չկարողացան շահել բնակչության լայն խավերի աջակցությունը: Նրանք մնացին որպես զանգվածներից կտրված ընտրանի»¹⁷: Բավական էր միայն 1950թ. թուրքերին տալ ազատ ընտրության իրավունքը, և 27 տարի իշխող Հանրապետական-Ժողովրդական կուսակցությունը ջախջախիչ պարտություն կրեց՝ հանձնելով իշխանությունը քաղաքական ընտրանու հաջորդ՝ երկրորդ սերնդին:

SUREN BAGHDASARYAN

THE CHARACTERISTICS OF THE TURKISH POLITICAL ELITE (1920-1930s)

(Summary)

The mechanism of the political power in every state works through its major actors - the political parties, political leaders and political elite. In 1920-1930s in Turkey there was a need to form a new political elite. The main components of the Turkish political elite were the military, state bureaucracy, urban intellectuals as well as the representatives of Anatolian local elite and clericals. It was divided into several groups - the associates of the President of the Republic, members of the government and the ruling organs of Republican People Party, the deputies of *mejlis*, the commanders of the army, the vilayets' governors.

In its common sense the political elite is a definitive group which concentrates in its hands the state power and occupies leading posts in the society. The political elite is a central link of the political system. The ruling class of the Turkish Republic originated from the previous - the Ottoman and Young Turks - elite. Consequently it inherited its mentality and behaviour as well as its traditions and ideas about state and power.

The Turkish political elite by its most part claimed to appear as an educated, intellectual class. In order to enter the political elite of the country the main conditions were - high education and social status (military or bureaucratic classes). As a result, the major bases of this elite were the executive power, army and a single-party system.

Seeing the development of Turkey under the strong and centralized rule in the conditions of a "tutelary" regime the ruling elite established a strain control over the masses and the political process in the country. The main function of such elite was the preservation of the control over the state, military, and intellectual structures. Consequently, between the ruling elite and the people masses on both the social and the educational and intellectual levels was formed a large gap. That is why the first generation of the Republican elite could not win wide support of the masses remaining as an isolated elite.

ՄԱՆԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. International Encyclopedia of Social Sciences, Washington, 1964, vol. 4, p.362.
2. F. Frey, The Turkish Political Elite, Cambridge, Mass., 1965, p.40.
3. U. Heyd, Foundations of Turkish Nationalism, London, 1950, p.133.
4. F. Frey, The Turkish Political Elite, p. 45; Ç. Keyder, State and Class in Turkey, New York, 1983, p.136.

5. Atatürk'ten Düşünceler, Ankara, 1960, s. 132.
6. Բարդ Ալի «Բարձրագույն Դուռ» կոչվում էր սուլթանական մեծ վեզիրի նստավայրը. որը դարձավ ամբողջ սուլթանական կառավարության հոմանիշը:
7. Y.K.Karaoşmanoğlu, Açık oturum, "Milliyet", 28.10.1973.
8. M.Kansu. Atatürk'le Beraber, ss. 471-472; մեջբերվում է ըստ D.Avcioğlu, Milli Kuruluş Tarihi, c. 3, İstanbul, 1976, s. 1233.
9. F. Frey, The Turkish Political Elite, p. 94.
10. Նրանց միջին տարիքը 40-ից 60 տարեկան էր:
11. Հինգերորդ մեջխում, որը ընտրվել էր 1935թ., երբ վերագրվեց ընտրական իրավունքի հետ կապված սեռական խտրականությունը, կանայք կազմում էին նրա անդամների 4,1%:
12. Պաշտոնյա և զինվորական խավերի ներկայացուցիչները կազմում էին մեջխի մտավորապես 21%, իսկ տնտեսական խավի ներկայացուցիչները՝ 9%: Բոլոր տվյալները բերվում են ըստ F. Frey, The Turkish Political Elite, p. 105-125.
13. Նույն տեղում, p. 130.
14. D.Vasileva, Cultural Revolution or Cultural Reform? (Kemalist Cultural Transformations in Turkey in the 20's and 30's), "Etudes Balkaniques", N 2, 1989, pp. 59.
15. Kinross, Lord, Atatürk. The Rebirth of a Nation, London, 1965, p. 477.
16. Խոսքը Առաջադիմական-Հանրապետական կուսակցության և 1926թ. երիտթուրքական վերնախավի մնացորդների ջախջախման հետ կապված դեպքերի մասին է: Տե՛ս E.J. Zürcher, The Unionist Factor. The role of the Committee of Union and Progress in the Turkish national movement 1905-1926, Leiden, 1984, p. 175.
17. Ç. Kocyder, Türkiye'nin Demokrasinin Ekonomi Politüji.- I.C. Schick ve E. Tonak (derl.). Geçir Sürccinde Türkiye, İstanbul, 1998, s. 50.

СҮРҒН БАГДАСАРЯН

**К ВОПРОСУ ОБ ОСОБЕННОСТЯХ
ПОЛИТИЧЕСКОЙ МОДЕРНИЗАЦИИ
В ТУРЕЦКОЙ РЕСПУБЛИКЕ (1920-1930-е гг.)**

Со дня основания Турецкой Республики в основу ее развития легла политика модернизации. Первые лидеры Республики - Кемаль Ататюрк, Исмет Иненю и другие, справедливо полагали, что, если Турция хочет сохранить то, что она завоевала силой оружия, если она желает на равных вести диалог и иметь дело с доминирующим в международной политике Западом, то она просто обречена идти по пути модернизации, в ходе которой турецкий народ пережил трансформацию своих традиционных институтов и ценностей, смену основ политической власти, переход от религиозно-общинного общественного строя к светскому-националистическому, обретение нового смысла национальной идентичности.

В отношении модернизации в политологической и социологической науках существуют различные мнения. Обычно под термином "модернизация" подразумевают комплексный процесс общественных, политических, экономических и культурных изменений. По определению известного израильского социолога Шмуэла Айзенштадта, "модернизации присущи (1) развитие плюралистической политической системы, (2) развитие современных политических структур, что означает распространение централизованного управления, законодательной и политической деятельности во всех сферах и кругах общества, (3) последовательное вовлечение широких слоев общества в политическую власть, (4) ослабление или ликвидация легитимности прежней, традиционной элиты и ее замена представителями новой элиты"¹.

Согласно точке зрения известного турецкого историка Тарыка Тунайи, "модернизация - это ряд мер, предпринятых с целью создания государства, основанного на либеральных принципах и современном обществе"². По мнению же американского социолога Роберта Беллы, "в ходе модернизации общество сталкивается с серьезными сдвигами, ко-

которые являются следствием выраженных в институционально-структурных изменениях стремления к сближению с Западом ради выживания страны"³.

Как уже отмечалось выше, турецкие лидеры имели ясное представление о значении модернизации для своей страны. Они не видели ей какой-либо альтернативы. Президент Турции Кемаль Ататюрк в одном из своих выступлений заявлял, что "те нации, которые не являются современными, обречены быть растоптанными под ногами цивилизованных наций"⁴. Он был полон решимости до конца довести дело модернизации Турции, считая его вопросом жизни и смерти для своего народа: "Страна любой ценой станет современной, цивилизованной и обновленной. Для нас это вопрос национального существования"⁵.

Согласно замыслу Ататюрка, модернизация должна была проникнуть во все сферы турецкой жизни - от армии до быта и одежды. Первый президент Турции и его соратники хорошо осознали, что для сохранения и защиты независимости страны необходимо создание современной военной структуры, что невозможно сделать что-либо без создания современной науки и промышленности. Те же, в свою очередь, не могли бы существовать без реформированных общественной и политической систем, которые позволили бы турецкому народу максимально использовать и развивать свой потенциал.

Для создания современного национального и светского государства турецким лидерам нужно было прежде всего ликвидировать всю структуру Османской империи. Мустафа Кемаль осторожно двигался в этом направлении в первой половине 1920-х гг., так как хорошо знал силу и влияние этих многовековых институтов. Ликвидация султаната, осуществленная после победы в войне за независимость в 1922г., и провозглашение Республики в октябре 1923г. выявили столкновение двух направлений политических сил и политической мысли в стране - 1) выступающих за сохранение традиционных институтов и их синтез с республиканскими институтами "умеренных" или консерваторов и 2) признающих только новый строй радикалов или республиканцев. В этой ситуации Кемаль пошел на ликвидацию халифата и начал секуляристские реформы⁶, воспринимая старые традиции и институты как застывшую силу, исторически приговоренную к уничтожению.

Ататюрк осуществлял свои реформы как путем принуждения, так и благодаря использованию своего громадного авторитета: "Революция"⁷ - заявлял он, - означает силой изменить сделавших в течение последних столетий турецкую нацию отсталой учреждения и создать вместо них учреждения, соответствующие национальным потребностям цивилизации и обеспечивающие прогресс"⁸.

Известно, что признаком современных политических систем является наличие институтов, организующих и осуществляющих политическую

деятельность, т.е. политических партий. Таким институтом в молодой Турецкой Республике стала Народно-Республиканская партия, являвшаяся одной из опор власти Мустафы Кемалю и его окружения. Она была создана весной 1923г., когда Кемалю требовалась политическая база на предстоящих выборах в ВНСТ, где он стремился получить абсолютное большинство голосов. Важность роли партии обуславливалась тем обстоятельством, что она служила основным каналом, через который можно было контролировать поведение депутатов меджлиса, а также осуществлять контроль сверху над всей общественно-политической жизнью страны. НРП служила в качестве механизма, обеспечивающего целостность правительственных и общественных структур. Программа НРП фиксировала официальное единство государства и партии. Партия являлась скорее инструментом осуществления политической власти, чем организацией, которая влияет на формирование самой политики.

Первая же попытка установления режима западного типа в Турции в середине 1920-х годов провалилась. Здесь имеются в виду события, связанные с деятельностью Прогрессивно-Республиканской партии, которая была намерена выступить в качестве оппозиции диктаторскому стилю правления Мустафы Кемалю. Ее лидеры обладали немалым авторитетом среди населения и пользовались поддержкой как консервативных, так и пока немногочисленных либеральных кругов. Поэтому ПРП представляла серьезную угрозу для позиций народно-республиканцев и лично Мустафы Кемалю, которого прогрессистские лидеры, в частности, Кязым Карабекир и Али Фуад обвиняли в том, что он присвоил себе часть их заслуг в деле создания нового турецкого государства и игнорирует их мнение при принятии важных политических решений.⁹ Кроме того, различались подходы М.Кемалю и его бывших соратников в вопросе реформации в Турции. Кемаль считал, что реформы должны быть проведены в условиях сильной или авторитарной власти, после чего можно было бы говорить о либерализации политического режима, в то время как его оппоненты отдавали приоритет демократизации страны.

Идеи и действия ПРП были расценены со стороны властей как крамола и активизация сил реакции. Весной 1925г. в отношении оппозиции были предприняты жесткие меры - ПРП была официально запрещена, ее лидеры отстранены от политической деятельности, а некоторые члены подверглись репрессиям по обвинению в содействии курдскому восстанию шейха Саида и в создании угрозы республиканскому строю, после чего в стране установился однопартийный режим, ознаменовавший завершение этапа национального движения и основания Республики.

Доминирующими политическими силами стали партия, правительство и армия, руководство которыми находилось в руках одного и того же человека - президента Республики Мустафы Кемалья. Этой конфигурации соответствовала и концепция парламентских и муниципальных выборов. По сути дела, это были не выборы, а единогласное утверждение списков лиц, назначенных руководством НРП.

Однако многие насущные проблемы страны так и не находили своего разрешения в условиях такой системы. В поисках выхода из этой ситуации Мустафа Кемаль, в одном из своих интервью заявлявший, что "правительство не может опираться на страх. Правительство, основанное на штыках, не устоит. Такое правительство, даже диктатура, необходимо лишь для предотвращения мятежа на временный период"¹⁰, летом 1930г. инициировал создание "управляемой" - оппозиционной партии, которая, не угрожая власти и основам Республики, обеспечила бы плавный переход к демократическому правительству. Созданная другом президента Али Фетхи Либерально-Республиканская партия заняла критичную позицию в отношении статистской экономической политики правительства и ставила акцент на расширении гражданских и политических прав и свобод. Однако недовольство правящим режимом было так велико, что ЛРП стала центром выражения протестных настроений населения страны. Не удалось провести и первые в стране более или менее демократические выборы¹¹, где либералы столкнулись с полицейскими методами и нажимом правящих народно-республиканцев. Под предлогом опасности дестабилизации ситуации в стране ЛРП была распущена и второй эксперимент демократизации политической системы закончился так же отрицательно. Но эпизод с ЛРП не прошел бесследно для Турции. В какой-то степени эта партия стала политической и идеологической предтечей Демократической партии, которая через 20 лет отобрала власть у НРП.

1930-е годы, в отличие от 1920-х, были периодом не столько быстрых реформ, сколько интенсивных шагов в направлении ужесточения однопартийного режима и укрепления лаицистско-националистической идеологии. Этими шагами были принятие новой программы НРП, закрепление шести фундаментальных принципов партии¹² в Конституции Республики, фактическое слияние государства и партии, открытие пропагандистских центров партии - "Народных домов".

Авторитарное правление, по мнению американского исследователя Р.Робинсона, являлось для Турции насущной необходимостью, ибо, как показал опыт с ЛРП, проводимые реформы часто не пользовались популярностью и встречали сопротивление, которое, с точки зрения турецких лидеров, если бы не было подавлено в самом начале, то представило бы слишком серьезную угрозу для будущего страны¹³.

Государство взяло на себя решающую и всеобъемлемую роль в национальной жизни, что только привело к усилению авторитарных тенденций в турецкой политике. В Турции превалировали не идеи личности, свободы или гражданского общества, а доминирующей роли государства. Государство - это "отец", который защищает и оберегает своих детей-граждан, это символ великих стремлений нации и их претворения в жизнь. И политическая модернизация в Турецкой Республике была прежде всего реализацией государственных интересов и укреплением государственных институтов. В результате в кемалистской Турции был создан авторитарно-преддемократический тип власти с президентским правлением, отсутствием альтернативных выборов, подавлением оппозиции, полностью подконтрольным парламентом. Сам Ататюрк и его соратники исповедывали не столько антилиберальные взгляды, сколько прагматическую точку зрения относительно того, что либеральная идеология не приспособлена для модернизации народа, который только-только отходил от традиционалистского строя и образа жизни. И говорить об установлении политического плюрализма, приоритете прав человека, создании системы, основанной на индивидуальной свободе инициативы и выбора, (а это все - цели, которые и в сегодняшней Турции отнюдь не достигнуты), было более, чем преждевременно. Демократия в этой стране не имела ни политической, ни социальной, ни исторической основ. Общество, находившееся многие десятилетия в социально-экономическом застое, где царили фатализм и традиционализм, где политическое сознание было односторонним и замкнутым, не могло бы продвигаться вперед без авторитарной, централизованной власти и принудительной модернизации.

Поэтому закономерно, что права и свободы граждан, установленные Конституцией, оставались лишь декларацией и не соблюдались в реальной жизни, что те газеты и журналы, чьи публикации "вступали в противоречие с главной политикой государства"¹⁴, подлежали закрытию. Используя различные законы, власти имели право распусть любое собрание или закрыть любую газету под предлогом угрозы государственному строю. Известный французский политолог Морис Дюверже утверждает, что "неразвитые или развивающиеся страны обречены идти по пути авторитарного правления и не имеют условий для установления демократии"¹⁵.

В подобном русле кемалистский режим рассматривал и решал национальный вопрос. Турецкие руководители, поставив перед собой задачу создания единого, мононационального государства, встали на позицию отрицания факта существования в стране национальных меньшинств и отказались признавать национальные права нетурецких народов, проживавших в Турции, чем добились не решения самой проблемы национальных меньшинств, а ее обострения, проявившегося в курдских

восстаниях в 1925 и 1930-х гг. - этнической гражданской войне, продолжающейся до наших дней. С этой точки зрения, политический режим Турецкой Республики являлся продолжением абдул-хамидовского и младотурецкого режимов и в чем-то перекликался с другим современным ему режимом - нацистской диктатурой в Германии.

Реальная политическая власть в тот период была сосредоточена в руках Кемаля Ататюрка, который одновременно являлся президентом Республики, верховным главнокомандующим Вооруженными Силами и генеральным председателем правящей Народно-Республиканской партии. В его случае действительно справедливо суждение, что "в модернизирующихся странах сохранение политической стабильности связано с присутствием великого харизматического лидера"¹⁶. Следует признать, что деятельность турецкой политической системы и ход модернизации страны во многом зависели от личностей президента Республики Кемаля Ататюрка и премьер-министра Исмета Иненю. Но перед ними в первую очередь стояла проблема перехода от системы, построенной на авторитете личности, к системе, где главную роль играют государственные и политические институты. А для этого требовалось сформирование политической, интеллектуальной и экономической элиты, способной ответить на современные политические, социальные и экономические вызовы и эффективно владеющей технологией управления. По мнению американского политолога Фредерика Фрея, "процессом модернизации обычно руководят "модернизирующиеся кадры", которые осуществляют посредством реформ и различных групп переход от одной системы к другой"¹⁷. Эта элита должна была решить в процессе модернизации четыре основные задачи: (1) установить как над индивидуальными членами общества, так и над этническими, религиозными и иными группами сильную государственную власть, (2) осуществить эффективную централизацию политической, административной и экономической власти, (3) представить обосновывающую политическую легитимность и цели правящего режима идеологию, (4) сформировать полноценную национальную идентичность. Естественно, что решение этих проблем требовало времени и не было полностью достигнуто в тот период.

Опорой первого президента Турции в деле модернизации были правящая Народно-Республиканская партия и армия. Одним из залогов успешного хода реформ в кемалистской Турции были концентрация и консолидация всех имеющихся средств и сил вокруг одного центра, что изначально исключало существование других самостоятельных политических центров - партий и групп. НРП стала именно таким центром в кемалистской Турции. Однако важным звеном, обеспечивающим прочную и устойчивую основу процесса модернизации, являлась армия. Эта роль была обусловлена тем фактором, что армия, сыграв решающую

роль в создании турецкого национального государства, стала наиболее организованной по сравнению с политическими партиями и группами интересов силой в стране.

Следует отметить, что для руководства Республики главная проблема в ходе модернизации состояла не в установлении в стране демократии и политической свободы, а в создании способной управлять страной власти. Сохранение равновесия между единством и стабильностью государства, с одной стороны, и происходящими переменами, с другой стороны, было весьма важной задачей для руководства молодой Республики.

Очевидно, что период модернизации - создание современной политической, общественной и экономической систем в Турции в 1920-1930-х гг. нашел свое выражение в режиме сильной личной власти, полномочном правлении одной партии, влиянии армии, политике этатизма и национализма.

Турецкий опыт модернизации свидетельствует также, что авторитарная политическая система с некоторыми элементами тоталитаризма способна регулировать и контролировать переход от традиционного общественно-политического строя к современному строю. Модернизирующаяся диктатура на начальных этапах этого перехода может быть намного эффективней, чем демократия, создавая условия для стабильного развития и появления в будущем либеральной политической системы.

Подобный ход процесса политической модернизации в Турции позволяет разделить его на несколько этапов. На первом этапе - кемалистском или довоенном - лишь только начали решаться проблемы, имеющие жизненное значение для Турции, как например проблемы урбанизации, экономического роста, строительства промышленности, ликвидации безграмотности, создание мощной и хорошо оснащенной армии и установление действительно свободной политической системы, позволяющей участвовать в ней как можно большему числу людей и считаться с мнением народа. В этот период для лидеров Республики первоочередным было не столько решение этих проблем, сколько создание благоприятных условий, почвы для их решения, чем Турция занялась уже в посткемалистский - послевоенный период. Более того, турецким политическим лидерам, партиям и армии пришлось потратить еще несколько десятилетий чтобы хотя бы добиться минимального решения вышеупомянутых задач.

SUREN BAGHDASARYAN

ON THE QUESTION OF THE PECULIARITIES OF THE POLITICAL
MODERNIZATION IN THE TURKISH REPUBLIC (1920-1930S)

(Summary)

In the Kemalist Turkey of 1920-1930s the modernization was laid in the basis of the national development being a matter of life and death. The goals of the modernization consisted in the strengthening of the state independence and the stable socio-political development. Process of the Turkish modernization has proceeded complexly including the military, economic, scientific, social, and political spheres of life.

Though of the Kemalists could not achieve the final aim - the creation of society with the developed economy, the stable and effective political structures, the westernized way of life, nevertheless, they prepared the foundations for the later realization of these aims.

The core of the Turkey's transformation was the change of the political unity organized on the religious basis by the political unity organized on the secular-nationalistic basis.

Turkey of 1920-1930s was a model of a strong, centralized state, who was in control of the political, economic and cultural life of the society. The Turkish political modernization above all was aimed to the establishment of the effective government in the country. As a result, there was created a one-party, "tutelary" political regime, which must establish and lead to the modern society.

The Turkish modernization's experience testified also that the authoritarian government can be effective in the initial stages of the modernization and can do the fluent transition to a more liberal and pluralistic system.

ПРИМЕЧАНИЯ

1. S.Eisenstadt, Modernization and Conditions of a Sustained Growth. - "World Politics", vol. XVI, N 4, April 1964, p. 572.
2. T.Z.Tunaya, Türkiye'de Siyasi Hayatında Batılılaşma Hareketleri, İstanbul, 1961, s. 18.
3. R.Bellah, Religious Aspects of Modernization in Turkey and Japan. - "The American Journal of Sociology", vol. LXIV, N 1, July 1958, p. 24.
4. Atatürk'ün İhtisari, İstanbul, 1960, s. 46.
5. Atatürk'ten Düşünceler, Ankara, s. 48.
6. К этим реформам относились решения, принятые в марте 1924г. относительно упразднения министерства шариата и вакуфов, перехода духовных школ-медресе в ведомство министерства просвещения. За этими шагами последовали национализация церковных земель-вакуфов, закрытие священных могил-теке, запрещение дервишеских орденов, запрет на ношение фесок и

- введение европейской одежды, отмена летоисчисления Хиджры и введение григорианского календаря, и наконец, в 1928г. замена арабского алфавита латинским и отмена статьи Конституции, провозглашавшей ислам государственной религией.
7. Этим понятием К.Ататюрк и его соратники обычно обозначали инициированные и претворяемые ими в жизнь реформы.
 8. H.Eroğlu, *Türk Devriminin Millî Degeri*, Ankara, 1973, s. 3.
 9. F.Frey, *The Turkish Political Elite*, Cambridge, Mass., 1965, p. 325.
 10. *Atatürk'ün Söylev ve Demeçleri*, C. 2, Ankara, 1961, s. 265.
 11. Речь идет о состоявшихся осенью 1930 г. муниципальных выборах.
 12. Республиканизм, национализм, народничество, лаңцизм, этатизм и революционизм.
 13. R.Robinson, *The First Turkish Republic*, Cambridge, Mass., 1965, p. 33.
 14. Ç. Keyder, *State and Class in Turkey*, London - New-York, 1987, p. 99.
 15. T.Z.Tunaya, *Türkiye'de Siyasi Partiler*, İstanbul, 1952, s. 136.
 16. E.Shills, *Intelligentsia in the Political Development of the New States*. - "World Politics", vol. XII, 1960, p. 74.
 17. F.Frey, *The Turkish Political Elite*, p.13.

ԱՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ

**ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ ՄԻԱՅՑԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ
ՄԵՐՉՄՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ
(1978-1979թթ. իրանական հեղափոխությունից հետո)**

1978-1979թթ. իրանական հեղափոխությունից հետո մերժավորաբար ենթարկված տարածաշրջանում ստեղծված որակապես նոր իրադրությունն առաջ բերեց բազմապիսի և բազմաբնույթ խնդիրներ, որոնք հարկադրեցին ԱՄՆ-ին վերանայել և ամերիսեշտ փոփոխությունների ենթարկել այնտեղ իր ռազմավարությունը:

Ինչպես նշում էին քաղաքագետներն ու վերլուծաբանները, իրանական իրադարձություններն ԱՄՆ-ի ղեկավար շրջանների համար քաջահայտել էին մի շարք կարևոր իրադրություններ, որոնք մա չէր կարող անտեսել տարածաշրջանում իր քաղաքականության և դիվանագիտության նոր սկզբունքները մշակելիս և ձևակերպելիս:

Պաշտոնական վաշինգտոնը, մախ և առաջ, համոզվել էր, որ սեփական ռազմական հզորությունն ու իր կողմից հովանավորվող որևէ երկրի գերզինումն ինքզինն դեռևս վատահեղի երաշխիք չէ վերջինիս քաղաքական կայունության համար, ավելին, որոշակի համգամանքներում դա կարող է այնտեղ ապակայունացնող գործընթացների պատճառ դառնալ:

ԱՄՆ-ի տիրող շրջանների համար պարզ էր դարձել մաև, որ այսուհետև անհրաժեշտ էր առավել իրատեսական մտեցում ցուցաբերել իրեն շահագրգռող երկրներում տիրող իրադրությանը, հրաժարվել անհիմն, չպատճառաբանված լավատեսությունից և, հատկապես, չթերագնահատել այդ երկրներում ընդդիմության դերն ու հնարավորությունները, ինչպես Իրանի պարագայում: Այս տեսակետից ԱՄՆ-ի համար կարևորվում էր մաև ռզ տարածաշրջանում ստեղծված քաղաքական նոր իրադրության առավել խոր ու համակողմանի ուսումնասիրության և վերլուծության խնդիրը:

Իրանական դեպքերից հետո ԱՄՆ-ի համար հատկապես հրատապ էր դառնում այդ տարածաշրջանում իր դիրքերի և ազդեցության հետագա անձեռնմխելիությունն ապահովելու համար նոր հենարանի որոնումը: Այդ նպատակով ԱՄՆ-ը անհապաղ պետք է վերականգներ տարածաշրջանի

արևմտամետ վարչակարգերի շրջանում իր խաթարված վարկն ու նախկին վստահությունը, ինչը նրանից մեծ ջանքեր և քաղաքական ճկունություն էր պահանջում:

Չնայած ԱՄՆ-ի նկատմամբ ձևավորված քերականությունն ու կասկածամտության մթնոլորտին, տարածաշրջանի բոլոր արևմտամետ երկրներում (Եգիպտոս, Իսրայել, Սաուդյան Արաբիա, Հորդանան), այնուամենայնիվ առկա էին որոշակի ընդհանուր գործոններ, որոնք, հնտորեն օգտագործելու դեպքում, կարող էին մեծ չափով նպաստել ԱՄՆ-ի մտադրությունների բարեհաջող իրականացմանը: Այդ գործոններից, քերես, կարելի է առանձնացնել հետևյալ երկուսը. իրենց երկրների անվտանգության նկատմամբ ստեղծված լուրջ սպառնալիքը և, հետևաբար, հետագայում ևս ԱՄՆ-ին որպես հովանավոր և պաշտպան ռեզերվու ձգտումը, ինչպես նաև տարածաշրջանում գերակայություն ձեռք բերելու և Իրանի նախկին դերն ստանձնելու նրանցից յուրաքանչյուրի անսքող հավակնությունը: Իզուր չէ, որ տարածաշրջանում իր քաղաքականությունն իրականացնելիս այս փուլում ԱՄՆ-ը վտորձում էր հիշյալ հանգամանքներն ըստ ամենայնի շահարկել մի կողմից՝ դիտավորյալ չափազանցելով վտանգի մեծությունը և, մյուս կողմից՝ նրանցից յուրաքանչյուրին խոստանալով իր անվերապահ աջակցությունը:

Հայտնի է, որ Միացյալ Նահանգների մերձավորարևելյան քաղաքականության մեջ Իրանից բացի կարևոր տեղ էր հատկացվում նաև Իսրայելին և Եգիպտոսին, և ԱՄՆ-ի ղեկավարությունը տարածաշրջանում «կայունություն» ապահովելու և այնտեղ իր ռազմավարությունն իրականացնելու նպատակով նախաձեռնել էր ստեղծել այդ երեք երկրների ոչ պաշտոնական դաշինք, և այդ հարցում հատկապես մեծ հույսեր էր կապում Իրանի հետ: «Վաշինգտոնը, - գրում է Ե. Պրինսլովը, - հատկապես եգիպտա-իսրայելական սեպարատ գործարքի նախապատրաստման շրջանում, ապավինում էր շահին (Մոհամեդ Ռեզա Փեհլևին - Ա.Գ.) որպես մի ուժի՝ «համախմբելու» Եգիպտոսին և Իսրայելին և եգիպտա-իսրայելյան եռյակ համակցության մեջ տեսնում էր Մերձավոր Արևելքում իր նոր ռազմա-ստրատեգիական հենարանի, Միացյալ Նահանգների հովանու ներքո նոր ռազմաքաղաքական դաշինքի ձևավորմանը»²: ԱՄՆ-ի հույսերը, սակայն, չարդարացան, քանի որ իրանական իրադարձությունները վերջնականապես կասեցրին այդպիսի դաշինքի ստեղծման հնարավորությունը:

Փոփոխված իրադրությունը նաև լրացուցիչ դժվարություններ էր հարուցել չկայացած դաշինքի մյուս քեկնածուների համար, որոնց Իրանը մինչ այդ օգնություն էր ցուցաբերում: Բավական է նշել, որ Իսրայելը Իրանից էր ստանում իր վառելիքի 60%-ը³, որից այժմ գրկվել էր: Բացի այդ, Իսրայելի իշխանությունները լրջորեն մտահոգված էին Իրանում հրեական բավական ընդարձակ համայնքի հետագա ճակատագրով: Այս հանգամանքները, ինչպես նաև տարածաշրջանում իսլամական գործոնի ակտիվացման տագնա-

պահարայց հեռանկարն, անկասկած, մեծ չափով նպաստեցին Իսրայելի ամերիկամետ կողմնորոշման կայունացմանը:

Որքան էլ Իսրայելը տարբեր առիթներով ցուցաբերում էր իր մշտական նվիրվածությունը ԱՄՆ-ին և նրա հետ այսուհետև ևս ամենասերտ կապեր պահպանելու պատրաստակամությունը (Իսրայելն, օրինակ, արդեն ցանկություն էր հայտնել վտխարհիկ Իրանին որպես ԱՄՆ-ի ռազմական բազա և արդեն սկսել էր մի քանի օդանավակայանների շինարարությունը)⁵, այսուհանդերձ, տարածաշրջանում նրա շուրջն ստեղծված ոչ շահեկան մթնոլորտը և արաբական աշխարհի հետ նրա հարաբերությունների բնույթն ինքնըստինքյան բացատում էին տարածաշրջանային պրոբլեմներին նրա ակտիվ միջամտությունն ու այնտեղ ԱՄՆ-ի շահերի միակ հզոր պաշտպանի վերածվելու հնարավորությունը: Ել ԲԻ ՄԻ հետոստանդնկերությանը տված իր հարցազրույցի ժամանակ Մարտկելոյի քաղաքի Հասան Ա-ը հայտարարեց, որ հակահամալիրիստական շարժումն Իրանում վախեց ուժեղի հարաբերակցությունը հօգուտ Մերձավոր Արևելքի արաբների և թուլացրեց Իսրայելի դիրքերը⁶:

Ինչ վերաբերում է Եգիպտոսին, ապա այնտեղ առկա էին զրեթե բոլոր գործոնները, որոնք Իրանում հանգեցրել էին հայտնի իրադարձություններին: Բայց և, միաժամանակ, Եգիպտոսն ուներ այնպիսի տվյալներ, որոնց շնորհիվ հեշտությամբ կարող էր դառնալ տարածաշրջանում Իրանին վտխարհիկ ամենահարմար թեկնածու: Մի առիթով ԱՄՆ-ի նախագահ Ջ. Քարտերը, ներկայացնելով Եգիպտոսի այնպիսի առավելությունները, ինչպես նրա բազմաքանակ բնակչությունն ու մեծաթիվ զինված ուժերը, վստահություն էր հայտնում, որ մոտ ապագայում այդ բարենամությունները կփոխեն նրա դերը Մերձավոր Արևելքում, մասնավորապես, կմեծանա նրա՝ կայունացնող գործոնի նշանակությունը⁶:

Ստեղծված նոր իրադրության պայմաններում ԱՄՆ-ին անհրաժեշտ էր անհասպաղ արագացնել եգիպտա-իսրայելական համաձայնագրի կնքումը, որն առանց այդ էլ ձգձգվում էր կողմերի միջև առկա հակասությունների և տարածայնությունների պատճառով, իսկ իրանական դեսպերի առաջ թեքած նոր պրոբլեմներն այն կարող էին ընդհանրապես անհրապահանալի դարձնել: Իզուր չէ, որ պաշտոնական Վաշինգտոնը եգիպտա-իսրայելական համաձայնագրի կնքումը համարում էր այդ պահին ԱՄՆ-ի կարևորագույն աբտաքին-քաղաքական խնդիրներից մեկը:

Համաձայնագրի կնքումն ԱՄՆ-ի համար անհետաձգելի էր դառնում նաև այն պատճառով, որ սթափ գնահատելով Եգիպտոսում տիրող իրադրությունը, ԱՄՆ-ը գտնում էր, որ նախագահ Ա. Մադաթի դիրքերն այնքան էլ կայուն չեն⁷, քանի որ այնտեղ հաստատում էին իրադարձություններ, որոնք կարող էին հանգեցնել նրա վարչակարգի տապալմանը: Ելնելով դրանից՝ ԱՄՆ-ի ղեկավարությունը որոշել էր կանխել սպասվող իրադարձու-

յունեները և Եզիպտոսը հիշյալ համաձայնագրով կապել Իսրայելի հետ՝ նախքան Սաղաթի վարչակարգի հնարավոր տապալումը¹։

ԱՄՆ-ը վախենում էր նաև, որ Սաղաթն ինքը, չնայած ԱՄՆ-ի հետ սերտորեն համագործակցելու իր ձգտմանը և, առավել ևս, տարածաշրջանում Իրանի նախկին «կայունության գործունի» դերն ստանձնելու հրապտրիչ հեռանկարին, կարող էր, նաև արաբական մյուս երկրների նշման տակ, կամավոր հեռանալ ԱՄՆ-ից։ Սաղաթի վրա կարող էր մեծ ազդեցություն ունենալ նաև Մաուանում Իրանի նախկին շահի հետ նրա ունեցած մտերմիկ գոտյցները², երբ անկեղծացած շահը, սեփական դատը վարձից ելնելով, զգուշացնում էր նրան ԱՄՆ-ի երկրորդի քաղաքականությանն անվերապահորեն վստահելու անխուսափելի հետևանքներից։

Վերջին հաշվով հենց Իրանի օրինակն էր, հիմնականում, որ դրոշեց Սաղաթին ամենայն լրջությամբ զբաղվել Եզիպտոսի ներքաղաքական վիճակի ուսումնասիրությամբ և մշակել ներքին ընդդիմությունն աստիճանաբար ճնշելու ծրագիրը։ Որոշեց նաև իր ձեռքում կենտրոնացնել իրական իշխանությունը և, մանավանդ, երկրի զինված ուժերի վրա հսկողությունը։ Մյուս կողմից Սաղաթն անսպասելիորեն սկսեց մտախոգություն ցուցաբերել երկրում ժողովրդավարության ընդարձակման, կամ, առնվազն, առերևույթ այն ինչ-որ չափով պահպանելու ուղղությամբ։

Չնայած Իսրայելի նկատմամբ Միացյալ Նահանգների չթաքցրած համակրանքին (ինչը չէին դադարում ընդգծել դեպքերի ընթացքին հետևող քաղաքագետներն ու դիտորդները), ԱՄՆ-ը կանգնած էր ծանր երկրնտրանքի ստզև. եթե նա շարունակեր բացահայտորեն պաշտպանել բանակցություններում Իսրայելի դիրքորոշումը, ապա ընդմիջտ կզրկվեր արաբական աշխարհի քաղաքականությունից և նրա հետ երբևէ նորմալ հարաբերություններ զարգացնելու հնարավորությունից, հակառակ դեպքում՝ կկորցնեիր Իսրայելին։ Այս երկու հնարավոր տարբերակներն էլ ԱՄՆ-ի համար անցանկալի ու անընդունելի էին և բարդացնում էին նրա վիճակը։

Այս հարցի կարգավորման նպատակով ԱՄՆ-ի ղեկավար շրջաններում տեղեկագին քանքեր էին գործադրվում։ 1979թ. հունվարի կեսերին հատուկ առաքելությամբ Մերձավոր Արևելք ժամանեց ԱՄՆ-ի Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ջ.Մքերտանը¹⁰, որին հանձնարարված էր վարձել հարթել կողմերի միջև տարածայնությունները և ըստ հնարավորին մերձեցնել նրանց տեսակետները։

Սակայն, որոշ ժամանակ անց, Եզիպտոս-իսրայելական համաձայնագրի կնքումը ևս սպասված արդյունքները չտվեց, քանի որ, փաստորեն, տարածաշրջանում իրադրությունը կայունացնելու վախաբեկ վերջինս այն ավելի քաղաքացրեց՝ սասաջ բերելով բազմապիսի նոր կոնֆլիկտներ։ «Համաձայնագրի ստորագրումը Եզիպտոսի և Իսրայելի միջև ԱՄՆ-ում համարվեց Քարտեռի վարչակազմի ամենամեծ արտաքին քաղաքական հաջողություններից մեկը։ Սակայն կարելի է արդյոք հաջողություն համարել մի համա-

ձայնություն, որը փակուղի տարավ մերձավորարևելյան համապարփակ կարգավորումը, նոր բաժանումներ ստեղծեց տարածաշրջանում և էլ ավելի ամրապնդեց խրայելյան ծայրահեղական ուժերը», - իրավացիորեն գրում է Ռ. Կարապետյանը¹¹:

ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության ծրագրում առանձնահատուկ նշանակություն էր տրվում նաև Սաուդյան Արաբիային: Պատահական չէ, որ ԱՄՆ-ի ղեկավար շրջաններում խիստ անհրաժեշտ էին համարում ամերիկյան քաղաքականության արմատական վերանայումը ընդարձակ տարածք, նավթային հարուստ պաշարներ և ռազմավարական կարևոր դիրք ունեցող¹² այդ քաղաքականության մկատմամբ: ԱՄՆ-ը չէր թաքցնում, որ իրանական հայտնի իրադարձություններից հետո Սաուդյան Արաբիան ևս նրա կողմից դիտվում էր որպես եթե ոչ ամբողջությամբ, ապա զգույն մասնակիորեն Իրանին փոխարինելու ընդունակ երկիր:

Սաուդյան Արաբիան, իր հերթին, հատկապես տարածաշրջանում ստեղծված նոր իրադրության պայմաններում, հավակնում էր, օգտագործելով իր մտերիմ հարաբերությունները ԱՄՆ-ի հետ, առաջնային տեղ զբաղեցնել վերջինիս մերձավորարևելյան քաղաքականության և ռազմավարության մեջ, ինչպես նաև մեծացնել կենտրոնական ուժի իր դերը Իսրայելի և Եգիպտոսի համեմատությամբ, մանավանդ այն պարագայում, երբ եգիպտոս-իսրայելական համաձայնագրի կնքումն անընդհատ հետևեցվում էր:

Մակայն Սիսցյալ Նահանգներում լավ էին հասկանում, որ Սաուդյան Արաբիան, նույնիսկ Արևմտքի հետ ամենասերտ համագործակցության պարագայում, չի կարող դառնալ տարածաշրջանում միակ գերակշռող գործոն, քանի որ տարածաշրջանային իրադրության և այնտեղ ընթացող պրոցեսների վրա ազդելու նրա կարողությունները, ամենատարբեր հանգամանքների բերումով, անսահման չէին: Պատահական չէ, որ մինչ այդ նա ձգտում էր Իրանի հետ «պարիտետային գերիշխանության» և համագործակցում էր նրա հետ տարածաշրջանում կայունության հաստատման և շատ այլ կարևոր հարցերում¹³: Սաուդյան Արաբիան, բացի սեփական պատվամոլությունից, ուներ նաև ԱՄՆ-ի հետ առավել մերձենալու այլ ծանրակշիռ պատճառներ: Մասնավորաբար, նա ևս լրջորեն մտահոգված էր իր անվտանգության խնդրով, և, ինչպես մյուս երկրները, մտավախություն էր հայտնում, որ Իրանում ընթացող պրոցեսները, մեղմ ասած, չեն նպաստում տարածաշրջանի կայունության պահպանմանը¹⁴: Չնայած տարածաշրջանում ԱՄՆ-ի հիմնական հենարանի վերածվելու գայթակղությանը՝ Սաուդյան Արաբիան, այնուամենայնիվ, չէր կարողանում զսպել իր ժգոհությունը ԱՄՆ-ից, որն, ըստ նրա, ժամանակին պատշաճ լրջություն չէր ցուցաբերել իրանական իրադարձություններին և անհրաժեշտ քայլեր չէր ձեռնարկել դրանք կանխելու համար: Սաուդյան Արաբիայի ղեկավարներն, անշուշտ, բոլոր հիմքերն ունեին վախենալու, որ Իրանում միապետության տապալումն իրենց երկրի համար անցանկալի նախադեպ կհանդիսանա, մանա-

վանդ, եթե Իրանում հաստատվի արմատական, հակաարևմտյան վարչա-կարգ, որի հավանականությունը մեծ էր:

Անդրադառնալով Սառայան Արաբիայի և ԱՄՆ-ի փոխհարաբեռնությունների՝ Վ.Լուկինը գրում է. «Սառայան Արաբիայի արտաքին քաղաքական շահերի բացառիկ կարևոր ուղղությունը մեկը նրա արևմտամետ, ավելի կոնկրետ՝ ամերիկամետ կողմնորոշումն է: Սակայն Սառայան Արաբիայի խառնուրդ և հարուստ պետություն դառնալուց հետո, որը մեծ ազդեցություն ունի մերձավորարևելյան իրադրության էվոլյուցիայի վրա, այդ երկրի նշանակությունը ԱՄՆ-ի համար կտրուկ մեծացավ: Ինչ վերաբերում է սառայան կլանին, ապա ԱՄՆ-ի վրա հենվելու մեջ նա տեսնում է երկար ժամանակով իր իշխանությունն ու հարստությունը պահպանելու միակ երաշխիքը՝ չնայած իրանական դեպքերը սաստիկ խարխիլ են այդ հավատքը»¹⁵:

Հասկանալիորեն, ԱՄՆ-ի համար առանձնապես կարևորվում էր տարածաշրջանի երկրներին (առաջին հերթին նաև Սառայան Արաբիային) համագելը, որ ԱՄՆ-ի ռազմավարության հիմնական սկզբունքները վավախություն չեն կրել, և որ նա չի հրաժարվել այնտեղ իր շահերից: Հենց այդ նպատակն էր հետապնդում ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Հ.Բրաունի տասնօրյա այցը (1979թ. փետրվարի 9-19-ը) Մերձավոր Արևելքի չորս երկրներ՝ Սառայան Արաբիա, Հորդանան, Իսրայել, Էգիպտոս¹⁶: Ավելորդ չէ նշել, որ նախատեսվում էր նաև սառայան թագաժառանգ Ֆահդի վախարարձ այցը Միացյալ Նահանգներ¹⁷, որի հիմնական նպատակներն ակնհայտ էին:

Փարատելու համար Ասառայան Արաբիայի՝ սեփական անվտանգության նկատմամբ ունեցած վախը՝ ԱՄՆ-ը պատրաստվում էր ժամանակակից «F-15» կործանիչներ ուղարկել այնտեղ՝ ցուցադրելու ոչ միայն վերջինիս, այլև տարածաշրջանի այլ երկրների անվտանգության պահպանման հարցում իր շահագրգռությունն ու նրանց աջակցելու իր պատրաստակամությունը: Ի դեպ, ԱՄՆ-ի Պետդեպարտամենտը, միաժամանակ շեշտում էր այն հանգամանքը, որ Սառայան Արաբիայի անվտանգությունն անմիջապես կապված է Պարսից ծոցի և ողջ Մերձավոր Արևելքի անվտանգության հետ¹⁸: Մինչդեռ իրականում այդ կործանիչների մեծ խմբի տրամադրումը տարածաշրջանում իր ռազմական ներկայությունը պահպանելու և ամրապնդելու ԱՄՆ-ի ընդարձակ ծրագրերի գործնական արտահայտություններից մեկն էր միայն¹⁹: Տարածաշրջանային այցից վերադառնալուց հետո Հ.Բրաունը հեռուտասանությամբ իր ելույթում, վերլուծելով նավթով հարուստ այդ շրջանում տիրող իրադրությունը, առարկություն չընդունող տոնով պնդում էր այնտեղ ամերիկյան զինված ուժեր ուղարկելու և ԱՄՆ-ի ռազմական ներկայությունն ապահովելու անհրաժեշտության մասին: «Մենք կենսականորեն շահագրգռված ենք Մերձավոր Արևելքից նավթի անարգել մատակարարմամբ, - հայտարարեց Հ.Բրաունը հիշյալ ելույթում, - Ես արդեն սասել եմ և մեկ անգամ ևս կրկնում եմ, որ այդ կենսական շահերը պաշտպանելու հա-

մար մենք կձեռնարկենք ցանկացած միջոցառում, այդ թվում գործի կղմենք մեր ռազմական հզորությունը»²⁰։ Ավելորդ չէ նշել, որ նույն միտքը նույն շեշտադրությամբ կրկնվում էր նաև ամերիկյան մեկ այլ քարձրաստիճան պաշտոնյայի՝ Էմերզոնիկայի նախարար Ջ.Շլեսինգերի հետուստանությունում²¹։

Նման քաղաքականությունն, այսպիսով, առավելապես ուղղված էր հենց իր՝ ԱՄՆ-ի, քան այնտեղի երկրների շահերի անվտանգության պահպանմանը։

Հատկանշական է, որ մի կողմից փորձերով վերականգնել իր նկատմամբ վստահությունը և հավատացնել, որ ԱՄՆ-ի աջակցության դեպքում Սաուդյան Արաբիան, և, մասնավորաբար, քաղաքական ընտանիքը, գերծ կլինեն որևէ վտանգից, ամերիկյան դիվանագիտությունը, միևնույն ժամանակ, նրբորեն ակնարկում էր, որ Սաուդյան Արաբիայում առկա են գործոններ (նավթարդյունաբերության մեջ և տնտեսության այլ բնագավառներում կարևոր պաշտոններ զբաղեցնող պաղեստինցիների ստվար և ազդեցիկ խավ²², 10% շիա ազգաբնակչության գոյությունը²³) մշտապես կարող են սպառնալ երկրի կայունությանը։

ԱՄՆ-ի դեկավար շրջանները լավատեղյակ էին, թե ինչպիսի տագնապի է մատնել Իրանում իր քաղաքականության անհաջողությունը Սաուդյան Արաբիայի արքայական ընտանիքին, և որ վերջինս մոտ ապագայում դժվար թե կարողանար ձերբազատվել դրանից առաջացած հոգեբանական անհարմարավետությունից և վերականգնել ԱՄՆ-ի նկատմամբ իր նախկին վերաբերմունքը։ ԱՄՆ-ը շտապում էր հավաստիացնել սաուդյան դեկավարներին, որ ինքը նրանց չի թողնի բախտի քմահաճույքին, եթե նրանք լիովին ապավինեն իր աջակցությանը։

Այդ պահին Սաուդյան Արաբիայի նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքական ակտիվությունը մեծապես պայմանավորվում էր նաև նրանով, որ Մերձավոր Արևելքում ընդհանուր իրադրությունը հույսեր չէր ներշնչում եգիպտա-խորալեյան համաձայնագրի շուտափույթ կնքման և, բացի այդ, չէր բացառվում, որ Սաուդյան Արաբիան որոշակի պահի կարող էր մերձենալ արաբական մյուս՝ ոչ արևմտամետ պետությունների հետ՝ իր հետևից տանելով նաև Եզիպտոսին։ Պատահական չէ, որ Մերձավոր Արևելք կատարած վերոհիշյալ այցից հետո, Հ.Բրաունը ընդգծում էր, որ ո՛չ Սաուդյան Արաբիան, ո՛չ Հորդանանը չեն փոխել իրենց բացասական դիրքորոշումը Քեմֆի Դևիդի համաձայնագրի նկատմամբ²⁴։ Այսուհանդերձ, չթաքցնելով իրենց քաղաքականության շահադիտական նպատակները, ամերիկյան դեկավար շրջանները առանց ավելորդ ձևականությունների հիշեցնում էին այդ երկրներին նրանց պարտականություններն ու ԱՄՆ-ի սպասելիքները։ Ամերիկյան հայտնի կոնգրեսական Ֆ.Չերչը, օրինակ, որն, ի դեպ, որոշակի անհամաձայնություններ ուներ Մերձավոր Արևելքում ամերիկյան քաղաքականության առանձին դրսևորումների հանդեպ, իր հարցազրույցներից մեկի ժամանակ այն կարծիքն էր հայտնում, որ եթե սաուդյան արքայական ընտանիքն, ի

վերջ, ԱՄՆ-ին դիտելու է որպես իր պաշտպան, ապա ԱՄՆ-ն էլ, իր հերթին, իրավունք ունի նրանցից քեկուզ «շատ զգուշ ցուցաբերված» աջակցություն ակնկալել ԱՄՆ-ի համար տարածաշրջանում առաջնահերթ նշանակություն ունեցող եզրագծա-խրաչելյան համաձայնագրի հարցում⁵:

Ինչպես և պետք էր սպասել, ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության մեջ ակնհայտորեն դիտվող այս նոր միտումներն ու նրանց զործնական իրականացման ակտիվ վարձերը, որոնց հետ ԱՄՆ-ը մեծ հույսեր էր կապում, ոչ միայն որևէ չափով չնպաստեցին տարածաշրջանում լարվածության թուլացմանն ու կայունության հաստատմանը, այլև ավելի բարդացրին այնտեղ ահրաժեշտ իրադրությունը, առաջ բերելով քե՛ տարածաշրջանի և քե՛ իր՝ Միացյալ Նահանգների համար նոր, դժվարությունի հիմնախնդիրներ:

ARAM GASPARYAN

NEW TRENDS IN THE MIDDLE EASTERN POLICY OF THE USA
(After the 1978-1979 revolution in Iran)

(Summary)

The completely changed situation established in the Middle East after the 1978-1979 Iranian revolution forced the USA to reconsider its strategy in this region. For the USA, the lack of a loyal partner in the region was of utmost importance in order to strengthen its position and influence here. However, the new tendencies observed in the USA policy in the Middle East not only did not promote any relaxation of tension or lead to the establishment of stability, but, in the contrary, worsened the situation in the countries of the region, creating new problems for the USA.

ՄԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. "Известия", 15.02.1979.
2. Примаков Е.М., История одного сговора, М., 1985, с.135.
3. "Известия", 24.02.1979.
4. «Ար-Րուսիա», 03.02, 1979 (արար.)
5. "Известия", 24.02.1979. «Պատահական չէ, որ Իսրայելի արտգործնախարար Մ. Դայանը իրանական իրադրությունները քննադատում էր որպես երկրաշարժ, որի ցնցումները հասնելու էին մաև իրենց երկրին (Balta P., Rulleau Cl., L'Iran insurgé: 1789 en Islam? Un tourment du monde, P., 1979, p.265-266).
6. "Washington Post", 27.02, 1979.
7. «Աշ-Շաար», 25.01.1979.

8. Նույն տեղում.
9. Heikal M., *The Return of the Ayatollah*, L., 1981, p.173.
10. "The New York Times", 17.01.1979.
11. Կարապետյան Ռ., Սիրիա-ամերիկյան հարաբերությունները (1967-1996), Եր., 2000, էջ 92.
12. Ali Emami M., *Perspectives on the Security of the Persian Gulf*, "The Iranian Journal of International Affairs", vol.5, Nos.3-4, Fall/Winter, 1993/1994, p.692.
13. Лукин В.П., "Центры силы". Концепции и реальность, М., 1983, с.178.
14. «Այ-Տազիր», 14.01.1979 (տրւք).
15. Лукин В.П., *указ.соч.*, с.179-180.
16. "Christian Science Monitor", 09.02.1979.
17. "Правда", 23.01.1979.
18. "The New York Times", 14.01.1979.
19. Яковлев А.И., *Саудовская Аравия и Запад*, М., 1982, с.131.
20. "Известия", 28.02.1979.
21. Նույն տեղում.
22. Նույն տեղում.
23. Mojtabeh-Zadeh P., *A Geopolitical Triangle in the Persian Gulf. Actions and Reactions among Iran, Bahrain and Saudi Arabia*, "The Iranian Journal of International Affairs", vol.5, Nos.1-2, Spring/Summer, 1994, p.53.
24. "Christian Science Monitor", 22.02.1979.
25. "US News and World Report", 13.03.1979.

ՀԱՅԿ ԳԵՄՈՑԱԼ

**ՂԱՐԱԲԱԳՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԹՅՈՒՐՔԱԼԵԶՈՒ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀՂԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

ԽՄՀՄ փուլումից հետո դարաբաղյան հակամարտության կարգավորման ոլորտը մերգրավվեցին բազմաթիվ երկրներ և միջազգային կազմակերպություններ: Որոշ հետազոտողներ անդրադարձել են դարաբաղյան հիմնախնդրի միջազգայնացմանը, տալով իրենց համոզիչ եզրահանգումներն ու կարծիքները այս հարցի շուրջ¹: Մույն հոդվածն անդրադառնում է Կենտրոնական Ասիայի քյուրքալեզու հանրապետությունների և Ադրբեջանի միջև հարաբերություններում, ինչպես նաև առաջին և երկրորդ քյուրքական զագաթաժողովների ժամանակ դարաբաղյան հարցի ունեցած դրոշիչ դերին:

Խորհրդային կապանքներից ազատված քյուրքալեզու հանրապետություններն իրենց արտաքին քաղաքականության առաջնությունները ճշտելու վուլում համարժեքորեն արձագանքեցին քյուրքական կողմի գրավիչ ծրագրերին: Օգնության ակնկալիքներն այնքան մեծ էին, որ Ռուզբեկտանի արտաքին գործերի նախարարությունը հետաձգեց ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի 1992թ. գարնանը ծրագրված այցը Տաշքենդ՝ հատուկ նամակով տեղյակ պահելով, որ «... որոշ հանգամանքների թերուժով պատրաստ չեն ընդունելու նման բարձր հյուրին համապատասխան մակարդակով»²: Ամենայն հավանականությամբ, ուզբեկական կողմի խուսանակելու պատճառը Թուրքիայի վարչապետ Ս.Դեմիրելի ծրագրվող այցն էր տարածաշրջան, և Հայաստանի նախագահի այցը Տաշքենդ բացասական ազդանշաններ էր ուղարկելու Անկարա:

Կենտրոնական քյուրքալեզու հանրապետությունների միասնական արձագանքը Ղարաբաղում ընթացող դեպքերին առաջին անգամ տեղի ունեցավ 1992թ. մայիսին, այս հանրապետությունների նախագահների մասնակցությամբ Աշխաբադում կայացած զագաթաժողովի վերջում, երբ Թուրքիայի վարչապետ Ս.Դեմիրելի նախաձեռնությամբ ներկաները հանդես ե-

կան համատեղ հայտարարությամբ, որտեղ նշվում էր Շուշին հայկական կազմավորումներից դատարկելու անհրաժեշտությունը³։

Հարկ է նշել, որ եթե այս հանրապետությունների պաշտոնական շրջանները հանդես էին գալիս դարաբարյան հիմնահարցը խաղաղ ճանապարհով լուծելու օգտին, ապա ընդդիմադիր ուժերը, ի դեմս ազգայնական կուսակցությունների, փորձեր կատարեցին զինյալ ջոկատներ կազմել և դարաբարյան ճակատներում հանդես գալ Ադրբեջանի կողմից։ Հիմնականում այդպիսի դիրքորոշումներ ընդունեցին համաթուրքական և հակառուսական գաղափարներ կրող կուսակցություններն ու շարժումները։

1992թ. ապրիլին, դազախական «Ժելտոքսան» ազգային-ժողովրդավարական կուսակցությունը դիմեց բնակչությանը, կոչ անելով աջակցել «ադրբեջանցի եղբայրներին հայ զորհայինների դեմ պայքարում»։ Այդ կոչին արժագանքեցին ավելի քան երեք հարյուր մարդ։ Սակայն նյութական միջոցների պակասի պատճառով Ալմա-Աթայից կարողացավ մեկնել միայն քսան հոգուց բաղկացած խումբ, նպատակ ունենալով Տաշքենդում միանալ ուզել կամավորների հետ, այնտեղից էլ անցնել Բաքու։ «Ժելտոքսանի» նախագահ Ն. Կոթախանջյանի խոսքերով, «Թուրքեստան» շարժումը և մի քանի այլ կազմակերպություններ հավաքել էին երկու հարյուր հազար ռուբլի իրենց նպատակներն իրագործելու համար⁴։ Բացի այդ, Ուզբեկստանի մայրաքաղաքում ստեղծվեց դարաբարյան հակամարտությունում ադրբեջանական կողմին աջակցող կոմիտե։ Տաշքենդում գործող «Հայկական մշակութային կենտրոնի» ղեկավարը մտահոգություն հայտնեց նման կոմիտեի գործունեության կապակցությամբ, նշելով, որ այն կարող է հակամարտության պատճառ հանդիսանալ Տաշքենդում բնակվող հայերի ու ադրբեջանցիների միջև, որոնց թիվը մայրաքաղաքում հաշվվում էր մոտ 120 հազար մարդ։ Թերևս այս հանգամանքով էր պայմանավորված Ուզբեկստանի նախագահ Ի. Բարիսովի որոշումը, որով լուծարվեց Ուզբեկստանում կազմավորված ադրբեջանամետ «Դարաբարյի օգնության կոմիտեն»։ Միևնույն ժամանակ ուզբեկական «Էրք» կուսակցության համանուն քերթի նկատմամբ քրեական գործ հարուցվեց, հակահայկական տրամադրություններ հրահրելու մեղադրանքով⁵։

Այդուհանդերձ պետք է փաստել, որ Կենտրոնական Ասիայից Ադրբեջանը չստացավ ակնկալվող աջակցությունը Դարաբարյի հայերի դեմ իր պայքարում։ Չցանկանալով վատթարացնել իրենց հարաբերությունները Հաստատանի որպես ԱԳՀ անդամ երկրի, ինչպես նաև Ռուսաստանի հետ, որի դերը գնալով ավելի էր կարևորվում, կենտրոնասիական հանրապետությունների նախագահները ավելի ճկուն դիրքորոշում ընդունելով, տեղի չտվեցին Բաքվի ու Անկարայի «թյուրքական եղբայրության» կարգախոսով առաջնորդվող ճնշումներին։

1991-1993թթ. տեղ գտան կենտրոնասիական հանրապետությունների նախագահների կողմից դարաբարյան հակամարտությունում միջնորդա-

կան առաքելությանը հանդես գալու մի քանի ձեռնարկումներ, որոնք սակայն հաջողություն չունեցան:

ԽՍՀՄ փուլումից հետո Թուրքիան ստիպված էր ցավով արժանագրել, որ Ադրբեջանի և Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու հանրապետությունների հարաբերությունները հետո են «եղբայրական» լինելուց: Վերը հիշատակած «Ղարաբաղի օգնության կոմիտեի» ցրումից հետո, իր հերթին Ադրբեջանի նախագահ Ա.Էլչիբեյը դատապարտեց ուզբեկական «Բիլլիկ» կուսակցության ցրումը, որի ակտիվիստները ապաստան գտան Ադրբեջանում:

Ա.Էլչիբեյը նախագահական ընտրություններում տարած հալթանակից հետո «Նեզավիսիմայա գազետա» թերթին տված հարցազրույցում բավական կոշտ կերպով անդրադարձավ Քարիմովի այդ ձեռնարկներին, նշելով հետևյալը. «...Այդ մարդը (ընդգծումը մերն է- չ. Գ.) այնքան կորցրեց յափի զգացումը, որ հանրգեցեց Ադրբեջան ուղարկել «կոմանդոսներին», որպեսզի այստեղ ձեռքակալեն ուզբեկական ընդդիմության ակտիվիստներին: Միդոցե սա պատճառ է այն բանի, որ Քարիմովը խաղաղիչ է դարձել հայկական շրջանի ձեռքում...»: Հետագրքի ի է այն փաստը, որ «Բիլլիկ» կուսակցության հիմնգրողը համագումարը դատապարտեց Քարիմովին «ԱԳՀ Կոլեկտիվ անվտանգության պայմանագիրը ստորագրելով այրումակից Ադրբեջանին դավաճանելու համար»:

Տարածաշրջան կատարած իր այցից հետո թուրքական «Դեմոկրատական ժախ կուսակցության» առաջնորդ Բ.Էջեբլը «Ջումհուրիեթի» թղթակցի այն հարցին, թե ի՞նչն է կենտրոնասիական հանրապետությունների լռության պատճառը Հայաստանի հարձակողական քայլերի հանդեպ, նշեց, որ այս երկրներ կատարած իր այցելություններից այն տպավորությունն է ստացել, որ այդ հանրապետությունները Ադրբեջանից հետո մնալու և Իրանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու մտադրություններ ունեն»:

Ղարաբաղյան հարցում թյուրքական համերաշխության դյուրարեկտության մեկ այլ ապացույցը հանդիսացավ 1992թ. հոկտեմբերին Անկարայում կայացած համաթյուրքական առաջին զագաթածառովը, որի եզրափակիչ հռչակագրում տեղ չգտավ ղարաբաղյան հիմնախնդրին վերաբերող որևէ հիշատակություն: Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու հանրապետությունների նախագահները դեմ դուրս եկան Անկարայի ծրագրերի մեծ մասին: «Թյուրքական պետությունները չպետք է սատարեն հակամարտող կողմերից որևէ մեկին», - ընդգծեց Ղազախստանի նախագահ Նազարբաևը: Նա միևնույն ժամանակ դեմ արտահայտվեց Հայաստանի նկատմամբ պատժամիջոցների կիրառման թուրք-ադրբեջանական առաջարկներին, նշելով, որ այն կարող է բարդացնել իրավիճակը տարածաշրջանում: Էլչիբեյին մնում էր հայտարարել, որ եթե զագաթածառովի ժամանակ Ղա-

րաբարդի հարցով բանաձև ընդունվելը, ապա «...մեզ մեղադրելու էին միասնական ճակատով քրիստոնյա Հայաստանի դեմ դուրս գալու համար»⁹։

Տաշքենդյան կոլեկտիվ անվտանգության պայմանագրի ստորագրումը Ռուսաստանի, Հայաստանի և կենտրոնասիական հանրապետությունների (բացի Թուրքմենստանից) միջև, ինչպես նաև ԱՊՀ շրջանակներում ստանձնած պարտավորություններն ավելի ազդեցիկ գտնվեցին, քան համաթուրքական միություն ստեղծելու հետագա հեռանկարը։

Պետք է փաստել նաև, որ 1992թ. ստորագրված Կոլեկտիվ անվտանգության պայմանագրով ստանձնած պարտավորությունները դարաբարդյան հասկանալիության համատեքստում միանշանակ կերպով մեկնաբանություն չստացան։ Դաշնագրին յանդամակցած Ադրբեյջանի հետ պատերազմի դեպքում, ըստ պայմանագրի, Հայաստանը, բացի Ռուսաստանի Դաշնությունից, ակնկալելու էր նաև Ղազախստանի, Ղրղզստանի, Ուզբեկստանի և Տաջիկստանի աջակցությունը։ Ուզբեկստանի նախագահ Ի.Քարիմովը կոչ անելով թուրքական կողմին հեռու մնալ հակամարտության մեջ անմիջականորեն ներգրավվելուց, «Türkiye» քերթին տված հարցազրույցում նշեց, որ «խնդիրը պետք է լուծեն նրանք (Հայաստանը և Ադրբեյջանը - Հ. Դ.) ինքնուրուք... Սենը, որպես մանկեղանակներ և բուրբեր, մեր ազերի նորայրների հետ ենը, բայց այս պահին մենք պետք է հեռու մնանք...»¹⁰ (ընդգծումը մերն է - Հ.Դ.)։ Իսկ Ղրղզստանի պաշտպանության պետական կոմիտեի նախագահ Ջ.Ումեդիևը նշեց, որ «...ստորագրված պայմանավորվածությունների պահպանումը չի նշանակում, թե Ղրղզստանը ինքնաբերաբար պետք է մասնակցի մարտական գործողություններին»¹¹։

Անկարայի զազաթաժողովի ժամանակ որոշվեց երկրորդ համաթուրքական զազաթաժողովն անցկացնել Բաքվում, 1993թ. վերջերին։ Սակայն ռուսական կողմը ամեն կերպ փորձեց ընդդիմանալ այս մտադրությանը։ 1993թ. դեկտեմբերին Աշխաբադում կայացած ԱՊՀ հերթական զազաթաժողովի ժամանակ ՌԴ-նախագահ Բ.Ելցինը հանդես եկավ Բաքվում նախատեսվող երկրորդ համաթուրքական զազաթաժողովի անցկացման դեմ, ճնշում գործադրելով, մասնավորապես Ուզբեկստանի նախագահ Քարիմովի նկատմամբ¹²։ Այնուամենայն էր, որ զազաթաժողովի անցկացումը Բաքվում ուղղակիորեն ազդելու էր կենտրոնասիական թյուրքալեզու հանրապետությունների և Հայաստանի միջև հարաբերությունների զարգացման վրա։ Բաքվի պաշտոնյաները հանդես եկան հայտարարությամբ, որտեղ հիշատակում էին նախկինում այս երկրների ղեկավարների կողմից Բաքու այցելելու փաստը¹³։ Բաքվում զազաթաժողովի անցկացման ծրագրի տապալումը, բացի նշված հանգամանքներից, պայմանավորված էր նաև մի շարք այլ գործոններով։ Ղարաբաղյան հակամարտության ընթացքում Ադրբեյջանի կողմից պետական մակարդակով աֆղան մոջահեդների հավաքագրումը և նրանց ներգրավումը ռազմական գործողություններին չէր կարող չամհանգստացնել կենտրոնասիական հանրապետություններին, այն դեպքում երբ վերջին-

ներս Տաջիկստանում ներգրավված էին մտջահեղական կազմավորումների դեմ պայքարում¹⁴:

Այդ ընթացքում զգալիորեն վատթարացան նաև Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունները: Ալիևի իշխանության գալուց հետո արժանագրովեցին անմախաղեպ ձեռնարկումներ ընդդեմ թուրք ձեռնարկեցների, որոնց Ադրբեջան մուտք գործելու համար պահանջվեցին մուտքի վիզայի ձևակերպում, մի բան, որից նրանք ազատված էին Ելչիբեյի օրոք: Միաժամանակ Ալիևը հետադարձ Ադրբեջանում ծառայող մոտ 1600 թուրք զինվորական մասնագետների ու կամավորների¹⁵:

1993թ. Բաքվում նախատեսված հանդիպումը, այդպես էլ չկայացավ: Այս փաստը տեղիք տվեց այն պնդումներին, թե թյուրքական պետությունները զգուշավորություն են հանդես բերում ԱՊՀ անդամ հանդիսացող Հայաստանի նկատմամբ, հօգուտ Ադրբեջանի դիրքորոշում չընդունելու համար: Թե՛ Անկարան, թե՛ Բաքուն չէին քաջցնում Վարաբադի հարցում հայկական կողմին դատապարտելու համատեղ հայտարարություն անելու իրենց նպատակը: Անկարայում Ադրբեջանի դեսպան Մեհմետ Նավրուզօղլի Ալիևը քննադատեց Թուրքմենստանին՝ «Հայաստանին բնական զգա մատակարարելու համար, ինչը նրա կարծիքով «ուսկանակարական կարևոր նշանակություն ունի» և այս փաստը «չի համապատասխանում եղբայրության սկզբունքներին»:

Ի վերջո, երկրորդ համաթյուրքական զագաթածաղովը տեղի ունեցավ Մտամբուլում, 1994թ. հոկտեմբերին: Այս հանդիպման եզրափակիչ հայտարարության չորրորդ կետով նշվում էր, որ «... պետությունների ղեկավարները շեշտեցին Ադրբեջանի և Հայաստանի միջև հակամարտության խորհրդի կարգավորման անհրաժեշտությունը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերի հիման վրա»¹⁶: Մա պետք է որ բավարարել ադրբեջանական կողմին, քանզի ՄԱԿ-ի ընդունած այդ բանաձևերն ընդգծում էին Ադրբեջանի տարածքային ամբողջականության հարգման անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ, թյուրքական համերաշխության սահմանափակված լինելը ակնհայտ էր նաև երկրորդ համաթյուրքական զագաթածաղովի ժամանակ: Վագաթածաղովի նախագահ Նագարբաևը բացահայտորեն հանդես եկավ Հայաստանին որպես ազրեստր բնորոշելու դեմ, իսկ Ադրբեջանի նախագահ Ալիևը հայտնեց իր դժգոհությունը, նշելով, որ հարաբերությունները Կենտրոնական Ասիայի և Ադրբեջանի միջև չեն գտնվում ցանկալի մակարդակում: Այնուհայտ էր, որ Հայաստանի նկատմամբ կոշտ դիրքորոշումը ցանկալի չէր հատկապես թուրքմենական կողմի համար, քանզի Հայաստանը հանդիսանում էր թուրքմենական զագը ներկրող երկիր:

Եւրոք հաջողություն չուներալով դարաբաղյան հակամարտության հարցում Անկարայի և մյուս թյուրքալեզու երկրների կողմից Բաքվի համար

ձեռնտու դիրքորոշում ընդունելու առումով, զգալիորեն սառեցին նաև Անկարա-Բաքու հարաբերությունները:

Հայ-ադրբեջանական հակամարտությունը Լեռնային Ղարաբաղի շուրջ որոշակի տեղաշարժեր ունեցավ ԽՍՀՄ փլուզումից հետո: Հակամարտության մեջ ներգրավվեցին, ըստ էության, տարածաշրջանի բոլոր երկրները՝ Ռուսաստանը, Իրանը, Թուրքիան և գերտերություն ԱՄՆ-ը: Նշված երկրների շարքում Թուրքիան առանձնացավ իր առանձնահատուկ շահագրգռությամբ խնդիրն անսլայման ադրբեջանական կողմի օգտին լուծելու մշակված քաղաքականությամբ:

Սակայն Թուրքիայի արտաքին քաղաքականությունը լուրջ դժվարություններ ապրեց 1992թ. Անկարայում կայացած համաթյուրքական առաջին զագաթաժողովում: Թյուրքական համադաշնություն ստեղծելու, ինչպես նաև Ղարաբաղի հարցում Ադրբեջանին համերաշխություն հայտնելու թուրքական ծրագրերը ըմբռնում և աջակցություն չստացան կենտրոնախական հանրապետությունների կողմից: 1994թ. հոկտեմբերին Ստամբուլում կայացած երկրորդ համաթյուրքական զագաթաժողովի եզրափակիչ հռչակագրի մեջ կենտրոնախական հանրապետությունների ճնշման ներքո արձանագրվեց լուրջ Ղարաբաղյան հակամարտությունը ՄԱԿ-ի որոշումների շրջանակում լուծելու ամերաժեշտությունը: Սակայն առաջին հայացքից Ադրբեջանի օգտին արված հայտարարությունը բնավ էլ համերաշխության արտահայտում չէր, քանի որ Հայաստանի դեմ պատժամիջոցներ կիրառելու առաջարկը կտրուկ կերպով մերժվեց Նագաբաղի և մյուս ղեկավարների կողմից:

Ղարաբաղյան հիմնախնդրի առկա զարգացումները խոչընդոտեցին Թուրքիայի ազդեցության հետագա խորացմանը Ադրբեջանում և նրա ներքափանցմանը Կենտրոնական Ասիա: Ադրբեջանում ղեկավար շրջանները փորձեր արեցին քարելավելու ադրբեջանա-ռուսական հարաբերությունները և խորացնել կապերը Իրանի հետ: Տեսանելի ապագայում Ղարաբաղյան հակամարտությունը և նրա կարգավորման գործընթացը էական դեր կկատարի Բաքու-Անկարա հարաբերությունների հետագա զարգացումներում:

HAKK DEMOYAN

THE KARABAGH CONFLICT IN THE CONTEXT OF RELATIONS BETWEEN TURKISH COUNTRIES

(Summary)

The Armenian-Azeri confrontation over Nagorno-Karabagh was transformed after the collapse of the USSR. In the process of conflict's resolution Russia, Iran, Turkey and USA were actively involved. Among these countries

Turkey took a very ambitious and pro-Azerbaijani position. Besides she tried to resolve this question in favour of Azerbaijan and to present it as a convincing argument for emerging solidarity between Turkish-speaking countries. However, pragmatic approach of Central Asian leaders towards Karabagh issue during the first and second all-Turkish summits disappointed Baku and Ankara. Moreover, Karabagh issue became a preventing factor for further spreading of Turkish influence in Central Asian and Caucasian regions.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հ.Չարրյան, Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Եր., 1998, N. Novhannisyana, The Karabagh Problem. Factors, Criteria, Variants of Solution, Yerevan, 1999; В. Г. Митяев, Карабахский конфликт в контексте международных отношений, в кн.: Армения: трудности независимого развития, М., РИСИ, 1998, с.487-554.
2. "Независимая газета", 14.05.92
3. «Ազգ», քի 28, ապրիլի 15, 1992:
4. «Ազգ», քի 25, ապրիլի 4, 1992:
5. «Ազգ» քի 33, մայիսի 2, 1992:
6. А.Расизаде, Азербайджан: новые политические ориентиры, "Азия и Африка сегодня", М.,1993/1, с.19-20.
7. "Независимая газета", 17. 06. 1992.
8. "Cumhuriyet" 28.05.92.
9. "Независимая газета", 03. 11. 1992.
10. "Turkiye", Istanbul 9 April 1992, inbu Henry Hale, Islam, State-building and Uzbekistan Foreign Policy // "The New Geopolitics of Central Asia and Its Borderlands", Edited by A. Banuazizi and M. Weiner, Indiana, 1994, p. 148.
11. «Ազգ», 2 հուլիսի, քի 50 1992:
12. "Milliyet" 27. 01. 1994.
13. Gareth M. Winrow, Turkey and the Former Soviet South, London, 1995, p. 20.
14. Մոնթանիների հավաքագրումը իրականացվում էր Ադրբեջանի ներքին գործերի փոխնախարար Ռուշան Ջիվադովի կողմից, որը 1993թ. հուլիսին ժամանելով Աֆղանստան, քննարկեց այդ հարցը վարչապետ Գուլբերդին Հերմաթյարի հետ: Վարկվածները հիմնականում ներկայացնում էին Հերմաթյարին դաշնակից Հեզր-ի Վահրատ բնը, տես՝ Joseph A. Kechichian and Theodore W. Karasik, The Crisis in Azerbaijan: How Clans Influence the Politics of an Emerging Republic, "Middle East Policy", Vol, IV, No. 1-2, September 1995, p. 63.
15. Նույն տեղում, p. 64.
16. "Documents d'actualite internationale", Paris, 1995, 15 janvier, No. 2, p. 68.

ԿԱՐԵՆ ԴՈՒԻՆՅԱՆ

ԻՐԱՆՈՒՄ ԱՄՆ-Ի ԴԵՄՊՈՆԱՏԱՆ ԳՐԱՎՈՒՄԸ ԵՎ
ԱՄԵՐԻԿԱ-ԻՐԱՆԱՆ ՀԱՐԱԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՓՈՒԼԸ

«Մենք դիտում ենք Մերձավոր Արևելքը՝ ներառյալ Պարսից ծոցը, իբրև մի մասը ավելի լայն ռազմա-քաղաքական ֆատերաբեմի, որը գտնւոքվում է Թուրքիայով, Պակիստանով և Հյուսիսային Աֆրիկայով և զմահատում ենք այն իբրև ռազմավարական քաղաքականության մեկ միավոր, որը կարիք ունի համակրումանի «ստորջացման» նպատակ ունենալով ապահովել մեզ համար ուժերի բարենպաստ հարաբերակցություն», - այսպես է ԱՄՆ-ի՝ 70-80-ական թթ. Պարսից ծոցում վարած քաղաքականության համատեղ բնութաւորումը (Ռոբերտ Բարտ. պետդեպարտամենտի ներկայացուցիչ Անվտանգության ենթահանձնաժողովի Մենատի Ուստ)՝:

Իսլամական հեղափոխությունը լուրջ ազդակ հանդիսացավ ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը վերանայելու գործում: ԱՄՆ-ի պաշտպանության և էներգետիկայի նախկին նախարար Ջ. Շլեսինգերի խոսքերով՝ «Դա առաջին լուրջ հեղափոխությունն էր 1917թ. հետո՝ միջազգային իրադրության վրա էսպես ազդելու տեսանկյունից, որը ցնցեց ԱՄՆ-ի ողջ արտաքին քաղաքականությունը»: Քաղաքական շրջանակները էսպես վախեցին Պարսից ծոցում իրենց գործողությունների բնույթը, ինչը վկայում էր Վաշինգտոնի արտաքին քաղաքականության տրամաբանական ճոր փուլի ի հայտ գալու մասին՝ 1978թ. նոյեմբերի 4-ին, երբ Իրանում ճշվում էր շահական վարչակարգի դեմ ելած նահատակված ուսանողների սգո տարեդարձը, 400 իրանցի ուսանողներ, որոնք հետագայում ներկայացան իբրև «Մուսուլման ուսանողների կազմակերպության» անդամներ, երբ ժամայա դիմադրությունից հետո գրավեցին ԱՄՆ-ի դեսպանատան շենքը: Խումբը գլխավորում էր քաղաքական ասպարեզում մինչ այդ անհայտ հուշաթուղ էլամ Մուսավի Խոնենին: Պատանդ վերցվեց 66 անձ, 6 հոգու իրաւանցման ընթացքում հաջողվեց քարգվել կամադական դեսպանատան տարածքում: Դեսպանատան գրավումից անմիջապես հետո «Մուսուլման ուսանողների կազմակերպությունը» հայտարարեց, որ այս գործողությունը ուղղված է ԱՄՆ-ի դեմ՝ իբրև բողոք Իրանի հանդեպ նրա վարած քաղաքա-

կանության: Մակայն կազմակերպության ղեկավար Խոենին այնքան էլ հետևողական չէր փաստերը լուսարանելիս, քանի որ 1980թ. ամռանը «Ջումիուրի-ե Էսլամի» քերթին տված հարցազրույցում նշում էր, որ ԱՄՆ-ի դեսպանատան գրավումը ծրագրավորված էր առանց Իմամ Խոմենիի գիտության և նպատակ ունեցող կանգնեցնել կատարված փաստի առջև: Նույն թվականի աշնանը խտալական «Ռեպուբլիկա» քերթին տված հարցազրույցում նա նշում էր. «Մեր բոլոր գործողությունները ի սկզբանե հավանության են արժանացել և թելադրված են եղել Իմամի կողմից»: Եվ վերջապես, 1980թ. վերջին «Մանդ» քերթում տպագրված հարցազրույցում Խոենին քաջան է խաղաղարտերը. «Ներկայիս գործողությամբ լավ արդյունքների հասանք ներքաղաքական կյանքում: Ստիպեցինք հետանալ Բագարզանի կառավարությանը և լիբերալներին հեռացրեցինք ակտիվ քաղաքական կյանքի թատերաբեմից»: Բագարզանի հրաժարականով Իսլամական հեղափոխական խորհուրդը արդեն դե յուրե իր ձեռքում կենտրոնացրեց իշխանության լծակները: Բագարզանը իր պաշտոնավարման այդ շրջանում բողոքում էր, որ Իրանը դարձել է «հազար շերիֆների երկիր» և, որ ժամանակն է, որ իշխանության ակունքներում գտնվող հոգևորականները վայր դնեն իրենց լիազորությունները և զբաղվեն զուտ կրոնական և քաղաքական հարցերով: Ինքը Խոմենին 1979թ. դեկտեմբերին եզիպտացի լրագրող Մ. Հեյբալին տված հարցազրույցում նշում է, որ դեսպանատան գրավումը ամենից առաջ ուղղված էր մեկ նպատակի՝ ետ վերադարձնել շահի հարստությունները Իրան:

Անկասկած, դեսպանատան գրավումը բազմապատկյալ քաղաքական ակցիա էր, որը և՛ արտաքին, և՛ ներքին քաղաքական ոլորտում միտում ունեցող առաջ քերելու լուրջ տեղաշարժեր: Հեղափոխությունից հետո ներքաղաքական կյանքում լուրջ խնդրումներ էին տեղի ունենում տարբեր գաղափարական ուղղվածության հոսանքների միջև, դեռևս առկա էր այն հարցը, թե Իրանը ինչ ուղով պիտի ընթանա: Ուժերը, որոնք նպատակ ունեին քույլ չառնել «հեղափոխական գծի» բեկումն աջ կամ ձախ, այս գործողությամբ վերջակետ դրեցին ներքաղաքական պայքարի տվյալ փուլին՝ նայեմբերի 6-ին Բագարզանի կառավարությունը հրաժարական տվեց: Հիշեցնենք, որ վարչապետ Բագարզանը և արտգործնախարար Յազդին վարում էին ԱՄՆ-ի հետ հարաբերությունների աստիճանական նորմալացման և իր բնականոն հունին վերադարձնելու քաղաքականություն: Հակառակորդ ճամբարում հատկապես շահարկվում էր Ալժիրում նրանց գաղտնի հանդիպումը նախագահ Քարտերի անվտանգության գծով խորհրդական Ջ.Բզեթինսկու հետ, ինչը հետագայում լայնորեն լուսարանվեց արևմտյան մամուլում: Դժգոհություն էր առաջացրել նաև Քարտերի վարչակարգի հայտարարությունը այն մասին, որ իրենք աջակցում են նոր կառավարությանը և որ այդ կառավարության հետ նորմալ հարաբերությունները Իրանի ամբողջականության հուսալի երաշխիք կարող են հանդիսանալ: Պահպանողական ուժերին դուր

չէր եկել նաև այն, որ արտգործնախարարությունը, չնայած երկրում իշխող հավաքահական մթնոլորտին, այդպես էլ չդիմեց պաշտոնական հայցով ԱՄՆ-ին շահին ետ վերադարձնելու պահանջով: Խոնջնին եթե ոչ ուղղակիորեն, ապա անուղղակի ձևով տեղյակ էր դեսպանատան գրավման մասին, քանի որ դեռևս նոյեմբերի 1-ին իր հավատարիմ զինակիցներ Հ.Ռաֆ-սանջանիի և Մոնթագերիի հետ ելույթ ունենալով Դամասկոս, կոչ արեց ուսանողներին շքույլացնել պայքարը ԱՄՆ-ի դեմ և ամեն ինչ անել, որպեսզի շաբաթ և նրա հարստությունները ետ վերադարձվեն Իրան: Իսկ դրանից առաջ, երկտեմբերի 24-ին Խոնջնին դիմել էր Նյու Յորքի բոլոր մուսուլմաններին՝ զանգվածային ցույցեր կազմակերպելու կոչով՝ ընդդեմ Իրանի հանդեպ ԱՄՆ-ի վարած քաղաքականության⁷:

Դեսպանատան գրավումը, ինչպես նաև 1980թ. սեպտեմբերի 22-ին սկսված իրանա-իրաքյան պատերազմը ինքնին բարենպաստ հիմք էին ընդհանուր քչնամու դեմ պայքարի քարոզչության ծավալման համար, ինչը մեծամասամբ ուղղված էր ժողովրդական զանգվածների շրջանում գաղափարական համախմբվածություն ապահովելուն: Չնայած տեսաբանների բազմաթիվ կարծիքներին, ԱՄՆ-ի դեսպանատան գրավումը թեև ծայրահեղ միջոցառում էր իր բնույթով, բայց և այնպես ակնկալելի էր ԱՄՆ-ի կառավարության համար: Դեռևս հունիսին Քարտերի վարչակարգը տարբեր ուղիներով ձգտում էր պարզել, թե շահի հյուրընկալումը ԱՄՆ-ում ինչ անցանկալի հետևանքների կարող է հանգեցնել Իրանում: Իրանում ԱՄՆ գործերի հավատարմատար Բ.Լեյնգենի պատասխանը միանշանակ էր՝ այն կարող է հանգեցնել դեսպանատան գրավմանը⁸: Շահը, որ իրական իշխանության լծակներից զրկվել էր, մնում էր իբրև գլխավոր խաղաթուղթ և խորհրդամիշ մերձավորարևելյան առճակատման դաշտում, ուր ԱՄՆ-ի գլխավոր նպատակը Իրանում ցանկացած զնով ամերիկամետ քաղաքականության ապահովումն էր⁹:

Դեսպանատան գրավումը միջազգային իրավունքի տեսանկյունից միանշանակորեն դատապարտելի էր, քանի որ միջազգային բոլոր նորմերը և 1961թ. ապրիլի 18-ի Վիեննայի կոնվենցիան (հոդված 29) հաստատում են, որ բոլոր դիվանագիտական ներկայացուցչությունները, անձնակազմը, գույքը և տարածքը գտնվում են հյուրընկալող երկրի պաշտպանության ներքո, անձեռնմխելի են և չեն կարող բռնագրավվել և ձեռքարկվել¹⁰: ԱՄՆ-ն իր քարոզչական արշավի լայնածավալ գործողությունների հիմքում դնում էր հարցի հենց այս կողմը: Իրանական կառավարությունը վկայակոչում էր նույն կոնվենցիայի 41-րդ հոդվածը, ուր հստակեցված են դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեության ոլորտները և նշվում է, որ դրանք չպետք է վտանգեն հյուրընկալող երկրի ազգային անվտանգությունը¹¹: 1978թ. Հասագայի միջազգային դատարանը դատապարտեց Իրանի դիրքորոշումը և ձեռնարկած գործողությունների բնույթը ԱՄՆ-ի հանդեպ¹²: 1978թ. դեկտեմբերին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հաստատեց քա-

նածև, որով դիմում էր Իրանին՝ պատանդներին անհասպող ազատ արձակելու կոչով¹³։ Քացի զուտ քարոզական շրջափակումից, ԱՄՆ-ն սկսեց իրականացնել նաև մասնակի ռազմական և տնտեսական շրջափակում։ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Լուենը հայտարարեց, որ դաշնակիցները թնադրելով են Իրանում հնարավոր ռազմական միջամտության հարցը։ 1978թ. փետրվարին Իրանը դադարեցրեց իր անդամությունը ՄԵՆՏՕ-ին, սալթիլին միակողմանիորեն լուծարեց ամերիկա-իրանյան «փարեկամության մասին» պայմանագիրը, իսկ նոյեմբերին շեյալ հայտարարեց 1959թ. ամերիկա-իրանյան ռազմական համագործակցության պայմանագիրը։ Ստեղծվեց ռազմաքաղաքական դաշտի «վակուում», որը ԱՄՆ-ը փորձում էր չեզոքացնել ամեն զեռվ (Ջ.Բեթինսկի)¹⁴։ ԱՄՆ-ն «ռազմականացրեց» իր ներկայությունը Պարսից ծոցում՝ էսպես ավելացնելով արագ ծավալման ուժերի քանակը տարածաշրջանում¹⁵։ Հարկ է նշել, որ ճգնաժամային վաղում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը ձգտում էր հարմարվել արմատական փոփոխությունների մթնոլորտին և գործում էր մի քանի հարթություններով՝ հարաբերություններ պահպանելով շահի, զինվորականների, հոգևորականության ներկայացուցիչների հետ¹⁶։

ԱՄՆ քաղաքական դարբնոցում զգացվում էր երկու տարամետ ուղղվածություն՝ Ազգային Անվտանգության Խորհուրդը Ջ.Բեթինսկու գլխավորությամբ և ոչ առանց շահամետ լոբբիի աջակցության հակված էր դիմելու կոպիտ միջամտության քաղաքականության, այնինչ պետքարտուղար Ս.Վենսը խորհուրդ էր տալիս շիանգարել դեպքերի քնականն ընթացքին և աջակցել Խոմեյնուն, քանի որ Իմամը ինքը «ղեղձված հակակոմունիստ է»¹⁷։

1978թ. մարտին ԱՄՆ պաշտպանության նախարար Ջ.Բրաունը Եզիպտոս, Հորդանան, Սաուդյան Արաբիան և Իսրայել իր այցելության ընթացքում վարձ արեց «անվտանգության համակարգի» երկրների կողմից Իրանի շրջափակում իրականացնել, ինչը նրան մասնակիորեն հաջողվեց¹⁸։ Սառնեցվեցին իրանական ավանդույթը, արգելք դրվեց իրանական մարտի ներկրման վրա, դադարեցվեցին առաքումները Իրան։ Նմանօրինակ այցով Արևմտյան Եվրոպա մեկնեց պետքարտուղար Ս.Վենսը։ Եվրոպական Տնտեսական Միության (ԵՏՄ) անդամ երկրների Լիսաբոնյան համաժողովը հայտարարեց Իրանի հանդեպ տնտեսական պատժամիջոցների կիրառման մասին։ ԱՄՆ-ը վարձեց շրջափակում իրականացնել Իրանի հանդեպ Իսլամական Կոնֆերանս կազմակերպության անդամ երկրների կողմից, որոնք անտիլորեն աջակցում էր Պակիստանը։ ԿՀՎ ղեկավար ծովակալ Թերները հանդես եկավ հայտարարությամբ, որ մասնավորապես սավում էր, որ իր գլխավորած կազմակերպության տրամադրության տակ կան բավականաչափ ուժեր առաջիկա 10 տարում Իրանի քարձրաստիճան ղեկավարության շրջանում քայքայիչ գործունեություն ծավալելու համար։

ՕՊԵԿ-ի (Organization of Petroleum Exporter Countries) անդամ երկրները, ինչպես նաև Արաբական երկրների լիգան, մերժեցին ԻԻՀ պատվիրակություններին¹⁹: Դեսպանատան գրավման երկրորդ օրն արդեն ԿՀՎ-ն և Պենտագոնը սկսեցին մշակել պատանդների ազատագրման ծրագիր, թեև պետության արտամեծտում հրավիրված խորհրդակցության ժամանակ նյաշում էր րնյունվել անմիջապես յհարվածել Իրանին²⁰: ՅՈՒՊԻ (United Press International) գործակալության հաղորդման համաձայն, ԱՄՆ-ն լրջորեն նախապատրաստվում էր ռազմական միջամտության Իրանում: Մարտական պատրաստության էին բերվել 6-րդ միջերկրածովյան նավատորմը, հատուկ նշանակության ղեկավարային զուժարտակները Արևմտյան Գերմանիայում և Իտալիայում, «F-4» կործանիչների էսկադրիլյան Թուրքիայում և ևս 12 ռազմանավ Պարսից ծոցի շրջանում²¹: Նոյեմբերի 21-ին Սալիտակ տանը տեղի ունեցած խորհրդակցությունից հետո Քարտերը հայտարարեց, որ «ԱՄՆ-ն, բացի դիվանագիտական ուղիներից, բավականաչափ ուժեր ունի նաև հարցի լուծման այլ տարրերակներ ընտրելու համար»²²: Պետք է հաշվի առնել, որ ԱՄՆ-ի դեսպանատան գրավումը Իրանում ոչ միայն ուղղակի ազդեցություն ունեցավ Իրանի, այլև ԱՄՆ-ի ներքաղաքական կյանքում: Մոտենում էին հերթական նախագահական ընտրությունները և Քարտերի վարչակարգի համար հիմնահարցի հաջող լուծումը սեփական վարկանիշի բարձրացման կարևորագույն նախապայմաններից էր, քանի որ կառավարման վերջին շրջանում տնտեսական ասպարեզում ԱՄՆ-ի ցուցանիշները բավական ցածր էին²³:

Պենտագոնը քննարկում էր ինչպես լայնամասշտաբ միջամտության, այնպես էլ տևական բնույթի ռազմական ծրագրեր, որոնք պիտի ապահովեին պատանդների ազատագրումը և, որպես հետավոր նպատակ Իրանում վարչակարգի փոփոխությունը²⁴:

- Նախատեսվում էր.
1. Պարսից ծոցի լիակատար շրջափակում:
 2. Իրանական նավահանգիստների ակամապատում:
 3. Նպատակային ոմբահարումներ՝ ստրատեգիական և նավթարդյունաբերական կենտրոնները ոչնչացնելու համար:
 4. Օովային հետևակի 82-րդ դիվիզիայի ափհանում՝ Իրանի նավթարդյունաբերական շրջանները գրավելու և վերահսկելու համար²⁵:

Միաժամանակ քննարկվում էր նաև տեղական բնույթի գործողությունների ծրագիր՝ «Արծվի մագիլներ» կամ «Կապույտ կայծակ» անվանումով, որը նպատակ ուներ ոչ միայն ազատագրել պատանդներին, այլև, հաջող ելքի դեպքում, վերածվել շահամետ ռազմական շրջանակների ելույթի՝ ընդդեմ հոգևորականության²⁶: Ինչպես նշում է Չ.Բզեթինսկին 1982թ. ապրիլի 18-ին «Նյու Յորք թայմս մեգրզին»-ում տպագրված հարցազրույցում. ««Կապույտ կայծակ» օպերացիան ավելի շատ հետապնդում էր հեռահար նպատակներ և հեռանկարում պիտի վերածվեր լայնամասշտաբ գործողությունների»²⁷:

Ապրիլի 23-ին նախագահ Քարտերի, Բժնեզինակու, փոխնախագահ Մոն-դիլի և ԿՀՎ-ի անօրեն թերմերի համաձայնությամբ հաստատվեց առաջիկա գործողության ծրագիրը և անցկացման ճշգրիտ ժամկետները: Գործողության անմիջական ղեկավար նշանակվեց ԱՄՆ-ի շտաբների պետերի կոմիտեի նախագահ Դ.Ջոուսոնը: Գործողության մշակման ընթացքը, իրագործումը, հաջորդող ծախսերը մոտից երևան հանեցին ամերիկյան արտաքին քաղաքականության իրականացումների ճամբարում տիրող երկակիության միտումը:

Ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը 6 ամերիկյան C-130 ուղղաթիռներ, որոնք իրանական ՌՕՈՒ-ի տարբերանշաններ էին կրում, ուղղություն վերցրեցին դեպի Իրան, թռեցան 430 կմ հեռու գտնվող «Ն1 անապատը»: Արդեն ապրիլի 25-ի առավոտյան ԱՄՆ նախագահ Քարտերը հեռուստատեսությամբ հայտարարեց «Կապույտ կայծակ» գործողության ծախսուման մասին²⁸: Գործողության ծախսերը հանդիսացավ այն ազդակներից մեկը, որոնք էսպես վախեցին ուժերի հարաբերակցությունը ԱՄՆ մերթադարձական խաղատախտակին: Գեներալտական կուսակցությունը կորցրեց իր 26-ամյա իշխանությունը Մեհաաում: Համարյա նույն ժամանակ Մերձավոր Արևելքում սկսվեց հակամարտության երկրների մի շարք՝ դեկտեմբերի 4-ին գրավվեց ԱՄՆ դեսպանատունը Դամասկոսում, դեկտեմբերի 2-ին՝ Լիբիայում, 2 օր անց Սուամբուլում սպանվեցին մի քանի ամերիկյան դիվանագետներ: Թվում էր, թե ճգնաժամի հաղթահարման բոլոր ուղիները սպառված են, քանի որ ծախսված ակցիան հակամարտության երկրների մոտ ալիք էր բարձրացրել Իրանում²⁹:

Բացի այդ, ճգնաժամի խորացմանը նպաստեց նաև այն, որ ապրիլի 30-ին 5 զինված անձինք գրավեցին Մեծ Բրիտանիայում Իրանի դեսպանատունը՝ ի պատասխան իրանական կողմի քայլերի: Մակայն Մեծ Բրիտանիայի վարչապետ Մ.Թետչերը հավաստիացրեց Իրանի ղեկավարությանը, որ հիշյալ գործողությունը ոչ մի կերպ չի կարելի որակել իբրև հակակշիռ Իրանում ԱՄՆ-ի դեսպանատան գրավման³⁰: Կոնֆլիկտի ձգձգվող բնույթը այնևս ձեռնտու չէր կողմերից և ոչ մեկին: 1981թ. հունվարի 2-ին Իրանի կառավարությանը հանձնվեց ԱՄՆ-ի առաջարկը՝ ապաստանեցնել 9,5 մլրդ. դոլար իրանական ավանդները և ևս 5,5 մլրդ.՝ պատանդների ազատ արձակումից հետո: Ամերիկյան կողմը պարտավորվում էր վերացնել տնտեսական շրջափակման արգելքը և չխաղնդոտել շահի կարողությունների ետ վերադարձմանը³¹: Հունվարի 18-ին իրանական խորհրդարանը հաստատեց այս համաձայնագիրը: Իրանի վարչապետ Ռաջային հայտարարեց 444-օրյա լարված մրցապայքարի ավարտի մասին: 1980թ. հուլիսին Կահիրեի զինվորական հոսպիտալում վախճանվեց Ռեզա շահ Փեհլեյին, որի մահը հարմար առիթ էր երկու կողմերի մոտեցումները արտաքինապես արդարացնելու: Պաշտոնապես առճակատումը հարթվեց և հաղթահարվեց իրանա-ամերիկյան հարաբերությունների ճգնաժամային փուլը, թեև պատճառա-հետևան-

քային կապերի ուսումնասիրությունը վկայում է, որ դեսպանատան և պատանդների գրավումը հետևանք և արտահայտություն էր ավելի խոր գործընթացների, որոնք էլ իրենց հերթին վկայում էին լուրջ փոփոխությունների մասին ինչպես տարածաշրջանում, այնպես էլ ԱՄՆ-ի ներքաղաքական և ընդհանրապես աշխարհաքաղաքական քարտեզի վրա: Ինչպես նշում էր «Մեղ հիպոթեզաները», այդ օրերին՝ «հեղափոխությունը Իրանում չի կարելի համեմատել ոչ մի ուրիշ հեղափոխության հետ: Այն եզակի է իր տեսակի մեջ»: Ահա քն ինչու է դժվար ըմբռնել և հասկանալ նրա ամենօրյա զարգացումը, քանզի այն դասական գծերից բացի, ուներ արտահայտման յուրատեսակ դրսևորումներ³²:

KAREN DOLINYAN

THE USA EMBASSY OCCUPATION IN IRAN AND THE CRISIS PERIOD
OF THE USA-IRANIAN RELATIONS

(Summary)

The USA embassy occupation by the "Organization of Muslim students" was the highest crisis period during the whole USA-Iranian relations and it indicated the new power and dominating reformations all over the world, especially in the Persian Gulf region. The occupation of the USA embassy in the I.R.A. was a multipurpose political action, which intended to realize great changes not only in the USA-Iran relations, but also in the political influence scene of Iran. This action intensified the resignation of "liberalist" revolutionaries' leader prime-minister M.Bazarghan. It was shown that there were two different political approaches in the USA foreign policy. The USA reaction to such a political action underlined that a new political philosophy system was created and realized in Washington's foreign policy.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Примаков Е. М., История одного сговора (ближневосточная политика США в 70-80-е годы), М., 1985, с.130.
2. Агаев С. Л., Иран: между прошлым и будущим, М., 1987, с.110.
3. Ա. Վախիկ, Պարսից ծոցը փոքրիկի էպիկենտրոնում, Եր., 1986, էջ 102:
4. Агаев С. Л., Иран: рождение республики, М., 1984, с. 301.
5. Кремениук В. А., Борьба Вашингтона против революции в Иране, М., 1984, с.111.
6. Агаев С. Л., Иран: между прошлым и будущим, М., 1987, с. 305.
7. Агаев С. Л., ук. соч., с. 247.

8. Ա. Վափրիկ, Գլխ. աշխ., էջ 294:
9. Abbas-Ali Amid Zanjani, The Islamic revolution and it's roots, Tehran, 1374, p.327 (Persian).
10. Кременюк В. А., ук. соч., М., 1984, с.109.
11. Նոյն տեղում, էջ 114:
12. Նոյն տեղում, էջ 110:
13. Նոյն տեղում, էջ 111:
14. Агаев С. Л., ук. соч., с.130.
15. Ա. Վափրիկ, Գլխ. աշխ., էջ 147:
16. Агаев С. Л., ук. соч., с. 65.
17. Նոյն տեղում, էջ 42:
18. Кременюк В. А., ук. соч., с. 111.
19. Агаев С. Л., Иранская революция, США и международная безопасность, М., 1984, с. 164.
20. Кременюк В. А., ук. соч., М., 1984, с.133.
21. Ա. Վափրիկ, Գլխ. աշխ., էջ 217:
22. Кременюк В. А., ук. соч., М. 1984 с.131
23. Агаев С. Л., Иран: между прошлым и будущим, М.,1987, с.95.
24. Ա. Վափրիկ, Գլխ. աշխ., էջ 219:
25. Նոյն տեղում, էջ 229-239:
26. Кременюк В. А., ук. соч., М., 1984, с.135.
27. Германович А.В, Медведко И.А., Именем Аллаха..., М.,1988, с.119-120.
28. Агаев С. Л., Иранская революция США и международная безопасность, М.,1984, с.164.
29. Նոյն տեղում, էջ 209:
30. Ա. Վափրիկ, Գլխ. աշխ., էջ 181:
31. Նոյն տեղում, էջ 241:
32. Агаев С. Л., ук. соч., с.19.

ԳՈՂՄՐ ԻՍԿԱՆԴԱՐՁԱՆ

**ԱՄԵՐԻԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՆԻՆ՝ ՈՐՊԵՍ
ԻՐԱՆԱ-ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾՈՆ**

1941թ. սեպտեմբերի 16-ի առավոտյամ՝ Խորհրդային Միության և Անգլիայի ճնշման ներքո, Ռեզա շահ Փահլավին հրաժարվեց զանից հօգուտ իր 22-ամյա որդու՝ Մեհամեդադ Ռեզա Փահլավիի, որը մինչ այդ մեջլիսի կողմից հաստատված էր որպես օրինական զահաժառանգ: Նոր շահի զահակալությունը սկսվեց Իրանի համար քարոզ ու դժվարին պայմաններում: Ընթացում էր II համաշխարհային պատերազմը, երկիրը օկուպացված էր խորհրդային և անգլիական զորքերի կողմից, բացակայում էր քաղաքական կայունությունը, զանձարանը դատարկ էր: Այս պարագայում, բնականաբար, երկիրը կարիք ուներ արտաքին ֆինանսա-տնտեսական օգնության, որը տվյալ պայմաններում կարող էին ցուցաբերել միայն ԱՄՆ-ը: Այդ գործը դրվում էր ռեալ հիմքերի վրա նախ այն պատճառով, որ 1942թ. վերջին վարչապետ Ղափան էս Սաթանեի համաձայնությամբ Միացյալ Նահանգներն Իրան մտցրին 30 հազարամոց մի քանակ, որի խնդիրն էր ասպահովել ռազմական բեռների տեղափոխման անվտանգությունը դեպի Խորհրդային Միություն (խոսքը վերաբերվում է «Լենդ-Լիզ» ծրագրի շրջանակներում Խորհրդային Միության հասանելիք մասնաբաժնին):

Իրանը օգնության խնդրանքով դիմեց Վաշինգտոնին: 1942թ. ամռանը Անտաղ Ղափանը խնդրեց Իրան ուղարկել ամերիկյան ֆինանսական խորհրդական Արթուր Միլսպոյին, որը դեռևս 1922թ. եղել էր Իրանում՝ երկրի ֆինանսա-տնտեսական կյանքը կարգավորելու առաքելությամբ: Միլսպոյն իր ֆինանսական խորհրդականների ուղեկցությամբ ժամանեց Թեհրան:

Բացի ֆինանսական և տնտեսական օգնություններից, ԱՄՆ-ը հոգ տարան, որպեսզի Իրանի կառավարության քարձրագույն պաշտոններում տեսնեն ամերիկյան քաղաքացիներին, որոնք էլ, բնականաբար, կպաշարպանեին ԱՄՆ-ի շահերն Իրանում: Այսպես, օրինակ, Գ. Գրեշամը նշանակվեց Իրանի մաքսային վարչության գլխավոր տնօրեն, Ու. Լեկատտը՝ գլխավոր զանձապահ, Ռ. Պիկալին՝ ներքին եկամտուների ղեկավարման գլխավոր

անօրեն: Ամերիկյան խորհրդակցականների վերահսկողության տակ էին գտնվում գնեթի կարգավորումը, արդյունաբերությունը, մատակարարումը: Միաժամանակ, 1942թ. աշնանը, Իրանին օգնելու նպատակով, ԱՄՆ-ը կազմակերպեցին ևս երկու առաքելություն. ռազմական իրանական բանակը վերակազմելու, և ոստիկանական՝ իրանական ժամկետային օգնություն ցուցաբերելու համար: 1943թ. մարտին մեջլիսը որոշում ընդունեց 4,5 մլն. դոլարի օգնության խնդրանքով դիմել Միացյալ Նահանգներին, որպեսզի գործի և ժամկետային համար կարողանան գնել անհրաժեշտ զենք և զինամթերք:

1943թ. ԱՄՆ-ի նախագահ Ֆ. Դ. Ռուզվելտը մշակեց այսպես կոչված «ժողովրդավորման» քաղաքականությունը, որը հետպատերազմյան տարիներին շարունակվեց նրան հաջորդող գրեթե բոլոր նախագահների կողմից: Այդ քաղաքականության էությունը այն էր, որ ամերիկյան կենսական գոտիներում, օգնության մեխանիզմի շնորհիվ, ստեղծվեց ագրեսիվության ուժեղ լծակներ: Անտարակույս, Իրանը մտնում էր ամերիկյան կենսական շահերի գոտու մեջ՝ ոչ միայն իր նավթի և բնական ռեսուրսների, այլև գրաված կարևորագույն ռազմավարական դիրքի պատճառով:

1945 թվականից ամերիկացիները կիրառում են դրեջին իրենց օգնության ծրագիրը, որը սկզբնական շրջանում իրականացվում էր հիմնականում հանցահատիկի, սերմացուի և սննդամթերքի լայնածավալ մատակարարումներով: Մակայն ավելի ուշ այդ օգնությունն ընդգրկեց նաև այլ բնագավառներ, ընդհուպ մինչև զենքի և սպառազինության:

1945թ. ապրիլին, Ֆ. Դ. Ռուզվելտի մահից հետո, իշխանության գլուխ եկած դեմոկրատ Հարի Տրյումենը շարունակեց իր նախորդի «ժողովրդավորման» քաղաքականությունը:

1947թ. փետրվարին ամերիկյան Մերիտոն-Նադսոն ֆիրման Իրանի կառավարությանը խոստացավ օժանդակել երկրի 7-ամյա զարգացման ծրագրին: Այս նպատակով Համաշխարհային Բանկը 250 մլն. դոլար վարկ տվեց Իրանի կառավարությանը: Հունիսի 19-ին Ղալանը փոփոխություններ մտցրեց կարգիներում, իր շուրջը հավաքելով արևմտյան կողմնորոշում ունեցող մարդկանց: Հունիսի 20-ին Իրանը 25 մլն. դոլարի վարկ ստացավ Միացյալ Նահանգներից⁴: Երբ, Թրյումենի ղոկտրինայով նախատեսվում էր ռազմական և տնտեսական օգնություն ցուցաբերել Հունաստանին և Թուրքիային, որոշվեց Իրանին նույնպես անմասն չթողնել, սակայն վերջիններս համեմատ Իրանի օգնությունը չնչին էր:

ԱՄՆ-ի կառավարությունը, սկսած 1947թ. հոկտեմբերից, Իրանին տարեկան հատկացնում էր 25 մլն. դոլարի ռազմական օգնություն: 1947-1954թթ. ռազմական օգնության քանակը կազմեց շուրջ 175 մլն. դոլար⁵:

1948թ. փետրվարին իրանական մեջլիսը համաձայնվեց ԱՄՆ-ից 10 մլն. դոլարի պարտք վերցնել հանդերձանք և ռազմամթերք գնելու համար, ինչպես նաև անհրաժեշտ էր 16 մլն. դոլար այդ ամենը Միացյալ Նահանգներից

Իրան հասցնելու համար⁶։ Պարսքը պետք է մարվեր 12 տարիների ընթացքում՝ սկսած 1950-ից՝ տարեկան վճարելով 2 3/4 տոկոս։ Այդ ժամանակից ի վեր, իրանական գործին ու ժամդարմերիային պարբերաբար ամերիկյան զենք ու զինամթերք էին մատակարարում։

1949թ. հոկտեմբերի 6-ին Միացյալ Նահանգների կոնգրեսը որոշեց նազական փոխօգնության քաղաքականությունը, որի հիմքում դրված էր միլիտարիզմը դադարեցնելը։ Այս ծրագրի մեջ կար հատուկ մի ֆունդ, ըստ որի պետք է 27,6 մլն. դոլարի ռազմական օգնություն ցուցաբերվեր Իրանին, Ֆիլիպիններին և Կորեային։ Հաշվարկված էր, որ Իրանը կստանա շուրջ 10 մլն. դոլար։ Սա այնքան փոքր գումար էր Իրանի համար, որ չէր կարող հոգալ ոչ՝ տնտեսական և ոչ՝ էլ ռազմական կարիքները։ Իրանը ակնկալում էր Չարզացման և Վերակառուցման միջազգային բանկից ստանալ 250 մլն. դոլարի պարտք և Միացյալ Նահանգներին էլ որոշ չափի վարկ կամ մպաստ⁷։

1949թ. Մոհամմադ Ռեզան այցելությամբ գտնվում էր ԱՄՆ-ում։ Նոյեմբերի 21-ին նա Վաշինգտոնում ելույթ ունեցավ, որում մասնավորապես ասաց, որ Իրանը ԱՄՆ-ի հետ համագործակցելու ցանկություն ունի, հատկապես «ազգային անվտանգության, տնտեսության զարգացման և սոցիալական հարցերում առաջընթացի հասնելու համար»⁸։ Հարկ է նշել, որ այս հայտարարությունը ակնառու կերպով ցույց տվեց Իրանի արտաքին քաղաքականության ուղղվածությունը, որին էլ հաջորդեց օգնությունների տարափոք⁹։

Իրանը առաջին պետությունն էր, որն օգտվեց «4-րդ կետի» օգնություններից. 1950թ. հոկտեմբերի օգնությունը կազմեց 500.000 դոլար⁹։ Անկախ Իրանի կառավարությունը իրավասու չէր այդ գումարները ծախսել՝ հոգալու համար երկրի կարիքները։ Այդ առաքելությունը իրականացնում էին ամերիկացիները Ուորենի գլխավորությամբ։ 1951-1954թթ. տեխնիկական օգնության ընդհանուր գումարը կազմեց ավելի քան 71 մլն. դոլար։

Այսպիսով, հետպատերազմյան ժամանակաշրջանից մինչև 1954թ. ներառյալ ԱՄՆ-ի օգնությունը Իրանին ուներ հետևյալ տեսքը (մլն. դոլար)¹⁰։

| | |
|--|-------|
| 1. Պարտքեր և մպաստներ | 46,6 |
| 2. «Չորրորդ կետի» շրջանակներում հատկացումներ | 72,2 |
| 3. Ռազմական օգնություն (սկսած 1947թ.) | 175 |
| 4. Ամենապաղ օգնություն | 45 |
| Ընդամենը | 338,8 |

1951թ. վարչապետ նշանակվեց Մոհամմադ Մոսադեղը, որը վայելում էր ժառվերի սերն ու հարգանքը և դրան արժանացել էր հիմնականում Մեծ Բրիտանիայի դեմ՝ նավթի ազգայնացման հարցի շուրջ պայքարելու շնորհիվ։ Օրեցօր մեծանում էր վարչապետի հեղինակությունը, որը բնավ դուր չէր գալիս շահին, ինչպես նաև ԱՄՆ-ին։ Եվ դա միակ պատճառը չէր, որ

անհանգստացնում էր ԱՄՆ-ին: Կարևոր էր մի խնդիր. վարչապետ Մոսադեղի և կոմունիստական թուրք կուսակցության տեսակետները. առանձին հարցերում, մասնավորապես նավթի ազգայնացման և ԱՄՆ-ի նկատմամբ մասնատիպ դիրքորոշման հարցում, կատարելապես համընկնում էին իրար. և դա չէր կարող չամհանգստացնել Վաշինգտոնին: ԱՄՆ-ը չէին կարող բույլ տալ ևս մեկ անգամ խորհրդային Միության ազդեցության ուժեղացումը Իրանում: Նշենք նաև, որ խորհրդային Միությունը այս ժամանակաշրջանում աջակցում էր թուրք կուսակցությանը: Հենց այս պարագայում էլ ԱՄՆ-ի նորընտիր նախագահ Դ.Դ. Էյզենհաուերը Իրանի կառավարությանը հասկացրեց, որ եթե չլուծեն նավթի հետ կապված իրենց տարածայնությունները Անգլիայի հետ, ԱՄՆ-ն Իրանին հասանելիք օգնությունը կըրճատեն: Իսկ այն, որ դա լույս սպառնալիք չէր, այլ լիակատար շանտաժ, վկայում է շահը՝ գրելով. «Ինչպե՞ս, 1331-32թթ. (1952-53) Ամերիկայի օգնությունների մակարդակը իջավ 22.100.000 դոլարի»¹⁰: Դեռևս 1951թ. ամռանը իրանական կողմը քանակություններ էր վարում ԱՄՆ-ի արտահանման և Նեդերլանդների քանակի հետ՝ 25 մլն. դոլարի օգնություն ստանալու նպատակով: Ընդ որում, օգտվելով Վաշինգտոնի կողմից Իրանին հատկացված ֆինանսական և տեխնիկական օգնության ժապավենից, ԱՄՆ-ի ներկայացուցիչները իրանական կառավարության, քանակի և ուտիլիանության մեջ գրավեցին բազմաթիվ կարևորագույն պաշտոններ: Հոկտեմբերին, երբ Մոսադեղը Մոսադեղը այցելեց ԱՄՆ, որոշակի օգնություն էր ակնկալում: Սակայն ամերիկյան քանակները Միջազգային Նավթային կարտելի ճնշմամբ տակ, հրաժարվեցին Իրանին վարկ տրամադրել: Մոսադեղը Մոսադեղը որոշեց 120 մլն. դոլարի օգնության խնդրանքով դիմել ԱՄՆ-ի կառավարությանը. սակայն վերջինս ևս մերժեց նրա խնդրանքը՝ պատասխանելով, որ Իրանը կարող է մեծ եկամուտներ ստանալ նավթի արտահանումից¹¹:

Շուտով Իրանի տնտեսական դրությունը այնքան վատացավ, որ նույնիսկ և փրճակի չէր պետական հիմնարկություններում աշխատողներին աշխատավարձ վճարել: 1953թ. մայիսի 28-ին Մոսադեղը կրկին օգնության խնդրանքով դիմեց ԱՄՆ-ի նախագահին: Նախագահը պատասխանեց միայն 43 օր հետո՝ մերժումով: 1953թ. հուլիսին իր ելույթներից մեկում ԱՄՆ-ի պետքարտուղար Ջոն Բոսթեր Դալլեսը քաջահայտորեն չէր թաքցնում Միացյալ Նահանգների հակակրակները վարչապետ Մոսադեղի նկատմամբ. «Իրանական, ոչ կոմունիստական, ցանկացած կառավարություն, մեզ համար ավելի գերադասելի է քան այսօրվա կառավարությունը: Մենք գտնում ենք որ անհնար է համագործակցել Մոսադեղի հետ»¹²: Այս հայտարարությունը կարելի է համարել Մոսադեղի դատավճիռը, քանի որ դրանից անմիջապես հետո մշակվեց հեղաշրջման ծրագիրը: Օգոստոսի 10-ին Ալեք Դալլեսը այցելեց Ըվինջսթրիա, որտեղ հանդիպում ունեցավ Իրանում ԱՄՆ-ի դեսպան Լոյնս Հեյնզերստի և շահի քրոջ՝ Աշրաֆի հետ:

Օգոստոսի 13-ին շահի հրամանով Մոսաղեղը պետք է քողներ վարչապետի պաշտոնը. փոխարենը պետք է այն ստանձնեն պաշտոնաթող գեներալ Ֆազուլա Չահեղին: Արդեն մեծ թվով համախոհներ լքել էին Մոսաղեղին: Նույնիսկ Լուսինյան կոլեկտիվները և ուսանողները, որոնք համարվում էին նրա համակիրները, նույնպես երես թեքեցին նրանից:

Մոսաղեղը որոշեց չզիջել դիրքերը, նա ուներ անձնական թիկնազոր, 12 հրասայեր պահպանում էին իր տունը: Շուտով գեներալ Ֆազուլա Չահեղին գլխավորությամբ իրականացվեց «Այաք» կողավորված գործողությունը, որի ժամանակ Մոսաղեղը ձերբակալվեց և հետագայից իշխանությունից: Հասկանալի է, որ Անգլիան և ԱՄՆ-ը այս հեղաշրջման ժամանակ բնավ դիտողի կարգավիճակով հանդես չէին գալիս: Կեղծելով իրականությունը Մոսաղեղը Ռեզա շահը գրում է, որ «Մերդադի 28-ի (օգոստոսի 19-ի Ի.Գ.) պատմական ընդվզումը կերտող հասարակ ժողովրդին տրված է եղել մեծ գումարներով ամերիկյան դոլար և անգլիական փառնդ տոնրլինգ»¹³: «Այաք» գործողությունը ըստ անգլիական ալթերնատիվների, արժեցավ 100.000 - 200.000 դոլար¹⁴: Իսկ այլ տվյալներով, այն միայն ԱՄՆ-ի վրա նստեց ավելի քան 10 մլն. դոլար¹⁵: 1953թ. հեղաշրջումից հետո, երբ Մոսաղեղը հետագայից իշխանությունից, Իրանում ամերիկյան շահերը իրականացնելու և իրենց ազդեցության ոլորտները մեծացնելու համար բացվեց գործունեության անհայտնաբերված լայն դաշտ: 1953թ. հուլիսին Իրան ժամանած նախագահ Ռուզվելտի թողած Քերմիթ (Կիթ) Ռուզվելտը, որի լուսանկարը անհայտնաբերվեց մեծ էր Մոսաղեղի կատավարության տասնամյակի գործում, ծավալեց աներևակայելի լայն թափի գործունեություն: Հենց նրա առաջարկով Վաշինգտոնը Իրանին հատկացրեց խոշոր գումարի մի «անհաստույց օգնություն», որով ԱՄՆ-ը փակեց Իրանի բյուջեի ճեղքվածքը: Հիրավի, Մոսաղեղի պաշտոնանկությունից հետո տեղի ունեցավ ամերիկյան օգնությունների տարափ: Դրանցից ամենաաչքի ընկնողը 1954թ. նոյեմբերի 2-ին Իրանին հատկացված 127 մլն. դոլարի նպաստն էր:

Ինչպես հայտնի է, հեղաշրջման ժամանակ Մոսաղեղը Ռեզա շահ Փանլիալին և նրա կին Սորայան փախուստի դիմեցին երկրից՝ հանգրվան գտնելով սկզբում Բաղդադում, հետո՝ Հռոմում: Հայրենիք վերադարձից յոթ օր հետո, հեղաշրջումն իրականացրած գեներալ Ֆազուլա Չահեղին, որը ստանձնել էր վարչապետի պաշտոնը, նստակից հղեց Վաշինգտոն՝ տնտեսական օգնության շտապ խնդրանքով: 1953թ. օգոստոսի 26-ին նախագահ Դ.Դ. Էյզենհաուերը կարդաց այդ նամակը, որտեղ նշվում էր, որ Իրանին հատկացվող ամերիկյան օգնության քանակը և ձևը բավարար չեն երկրի ֆինանսական և տնտեսական առկա ճգնաժամը հաղթահարելու համար: Նամակում նաև շեշտվում էր. «գանձարանը դատարկ է, ազգային տնտեսությունը քայքայված, Իրանը շտապ ֆինանսական օգնության կարիք ունի, հնարավորություն ընձեռեք դուրս գալ տնտեսական և ֆինանսական այս քառսից»¹⁶:

Հարկ է նշել, որ ամերիկյան օգնություններին անդրադառնում են նաև իրանցի գիտնականները: Նրանք, չկեղծելով, անցյալի իտությունները, նույնպես մատնանշում են ԱՄՆ-ի օգնությունները Իրանին. ինարկե յուսվի մեկնաբանելով այն:

Ամերիկյան տնտեսական և ռազմական օգնությունները Իրանին
(միլիոն դոլարով)¹⁷

| Տարի | Ընդամենը | Ռազմական | Տնտեսական |
|---------|----------|----------|-----------|
| 1946-48 | 25.8 | --- | 25.8 |
| 1949-52 | 33.1 | 16.6 | 16.5 |
| 1953 | 59.2 | 27.3 | 31.9 |
| 1954 | 111 | 26.5 | 84.5 |
| 1955 | 146.3 | 17.5 | 128.8 |
| 1956 | 98 | 23.6 | 74.4 |
| 1957 | 90.5 | 39 | 51.5 |
| 1958 | 114.9 | 73 | 51.9 |
| 1959 | 137.8 | 90.9 | 46.9 |
| 1960 | 127.3 | 89.1 | 38.2 |

Քանի որ ԱՄՆ-ը չէին ցանկանում կորցնել Միջին Արևելքում իրենց ռազմավարական գլխավոր հենարաններից մեկը, սեպտեմբերի 3-ին Արտասահմանյան Օպերացիաների Վարչությունը հայտարարեց, որ ԱՄՆ-ն Իրանին 23,4 մլն. դոլարի տեխնիկական օգնություն տալու մտադրություն ունեն: Երկու օր անց, նախագահ Դ.Է. Էյզենհաուերը մամուլում հայտարարեց Իրանի տնտեսությանը 45 մլն. դոլարի օգնություն ցուցաբերելու մասին¹⁸: Էյզենհաուերի վարչակազմը շարունակեց ֆինանսական «ներարկումները» Իրանին:

1955թ. աշմանը Իրանի կառավարությունը ստորագրեց Բաղդադի պակտը, որով էլ ավելի մերձեցավ ԱՄՆ-ին: Այդ մերձեցումը նոր որակ ընդունեց Իրանի՝ ՄԵՆՏՕ-ի պակտին անդամագրվելուց հետո: Կարևորելով Իրանի հանգուցային դերը Մերձավորարևելյան ռազմական այս խմբավորման մեջ՝ ԱՄՆ-ն ավելացրին թրոտմենի դեկտրինայի «4-րդ կետով» սահմանված օգնության մասնաբաժինը Իրանին, իսկ 1953թ. հեղաշրջումից հետո ԱՄՆ-ից ստացված անտեսական կամ անհատույց օգնության շնորհիվ փակեցին Իրանի բյուջեի ճեղքվածքը¹⁹:

ՆԱՏՕ-ի և Բաղդադի պակտի մեջ ներգրավված երկրներից Իրանն առավել երկար սահման ուներ Խորհրդային Միության հետ: Բացի այդ, Իրանը տարածաշրջանում կարծես հանդիսանում էր կասպո օղակ, մի կողմից՝ Թուրքիայի, որ ՆԱՏՕ-ի կազմի մեջ մտնող տերություններից էր, մյուս կողմից՝ Բաղդադի պակտի անդամ Պակիստանի միջև: Նույն 1955թ. ԱՄՆ-ի և Իրանի միջև ստորագրվեց պայմանագիր «Պաշտպանության նպատակներով փոխադարձ օգնության մասին», որի շնորհիվ ավելի սերտացան իրա-

նա-ամերիկյան հարաբերությունները: Բավական է նշել, որ 1949-52թթ. «Մաքրչալի պլանով» Իրանին հատկացված ամերիկյան օգնությունը կազմում էր մի շտապիկի գումար՝ 83,7 մլն դոլար, որի 80%-ը (67,2մլն դոլար) ուղղված էր ռազմական և միայն 16,5մլն. դոլարը՝ տնտեսական քննազավառներին:

1953-60թթ. ամերիկյան «ներարկման քաղաքականությունը» կազմում է 567մլն. դոլարի տնտեսական օգնություն և 450 մլն. դոլարի ռազմական օգնություն²⁰:

Պետք է նշել, որ ԱՄՆ-ի օգնությունները միայն դրամական տեսքով չէին մտնում Իրան: 1950թ. վերջին Ամերիկյան Շինարարական Ֆիրման՝ «Այրեկ Հատսինգ Բորվորեյչն»-ը իրականացրեց 200 հանգստյան վիլլաների կառուցման ծրագիրը Թեհրանի մերձակայքում և պայմանագիր կնքեց Իրանի Ազգային Նավթային Ընկերության հետ, որպեսզի Աքադանում ես կառուցեն 114 տուն²¹:

1955թ. Թրյումենի դոկտրինայի «4-րդ կետի» համաձայն, ԱՄՆ-ում ուսում ստացող 1170 իրանցիներին ցույց տրվեց նյութական օգնություն, ընդհանուր առմամբ՝ 4,7 մլն դոլար²²: Այս օգնությունների շնորհիվ կրկնակի աճեց իրանցի ուսանողների քանակը Միացյալ Նահանգներում: Հարց է ծագում, թե ինչու՞ էր ԱՄՆ-ը շահագրգռված, որ իրանցի ուսանողները ուսում ստանան Միացյալ Նահանգներում և նրանց համար ստեղծում էր նպաստավոր պայմանները: Միակ տրամաբանական պատճառը այն էր, որ ամերիկյան կրթություն ու նաև դաստիարակություն ստացող ուսանողները սերտորեն կկապվեին ԱՄՆ-ի հետ, իսկ մի քանի տարի հետո արդեն նախկին ուսանողներից շատերը կհայտնվեին Իրանի կառավարության բարձրագույն պաշտոններում:


1957թ. ԱՄՆ-ն Իրանին հատկացրեցին 2,5 մլն. դոլար²³, ավարտին հասցնելու համար արդեն 10 տարի ձգձգվող Մեհրաբադի օդանավակայանի կառուցումը, որը մինչև օրս հանդիսանում է Իրանի լավագույն օդանավակայաններից մեկը: 1960թ. սկսվեց Թավրիզից մինչև իրանա-թուրքական սահմանը ընթացող երկաթգծի շինարարությունը:

1958թ. վերջին ԱՄՆ-ի և Իրանի միջև ստորագրվեց պայմանագիր, ըստ որի ամերիկյան ֆինանսական կազմակերպությունները՝ Ներմուծման և Արտահանման քանկը 12 մլն. դոլար էր ներդրում նոր մեքենաներ և սարքավորումներ ձեռք բերելու համար, իսկ Միջազգային Արժույթային Հիմնադրամը ֆինանսավորում էր էլեկտրահաղորդման գծի կառուցումը: Դա բավականին մեծ ներդրում էր Իրանի տնտեսության մեջ :

Այսպիսով, հանրագումարի բերելով վերջարարդյալը, հարկ է նշել, որ համեմատաբար կարճ ժամանակահատվածում, ընդամենը յոթ տարվա ընթացքում, Ամերիկայի Միացյալ Նահանգներն ավելի քան 1 մլրդ. դոլարի օգնություն հատկացրեցին Իրանին: Դրա շնորհիվ Մեհամմադ Ռեզա Փահլավին կարողացավ ամրապնդել իր դիրքերը և զարկ տալ տնտեսությանը՝ հիմ-

Մեծ կարգի շնորհիվ իրականացված են իրենց մշակած արտաքին քաղաքականությունը, այնուամենայնիվ, այս օգնությունները մեծապես նպաստեցին Իրանի տնտեսության զարգացմանը, ռազմական ներուժի հզորացմանը: Անտարակույս, այդ օգնությունները ունեցան մեծ քաղաքական հետևանքներ. դրանց շնորհիվ Իրանը դարձավ ԱՄՆ-ի կայուն հենարաններից մեկը Մերձավոր Արևելքում:

Միացյալ Նահանգների տեխնիկական օգնությունը Իրանին 1951-1956թթ. (միլիոն դոլարով)



GOHAR ISKANDARYAN

THE USA AID TO IRAN AS A MAIN FACTOR IN THE IRANIAN-AMERICAN RELATIONS

(Summary)

The article deals with the aids of the USA to Iran during 1941-1960. This aid was military, economic and gratis. Due to these aid some schools, dwelling houses, holiday homes, hospitals, highways were constructed, they helped to finish the airport, etc. A well planned foreign policy was realized through the aids of USA, which greatly assisted Iran's economy and strengthened its army. USA even had covered the budget deficit of Iran. The aid programs increased USA's influence over the country and Iran became its ally. Iran had become a member of CENTO.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. George Lenczowski, American Presidents and the Middle East, London , 1990, p. 7-8.
2. Arthur C. Millspaugh, American in Persia, New York, 1976, p. 45.
3. Политика США на Ближнем и Среднем Востоке (США и страны СЕНТО), Москва, 1960, стр. 168.
4. Peter Avery, Modern Iran, London 1965, p 399-400.
5. А. Расади, Иностраный капитал в Иране после Второй мировой войны(1945-1967гг.), М,1972, с. 22.
6. J. C. Hurewitz, Middle East Politics. The Military Dimension, New York, 1969, p. 279.
7. George Lenczowski, The Middle East in World Affairs, New York, 1956, p.188.
8. Политика США на Ближнем и Среднем Востоке (США и страны СЕНТО), стр. 270.
9. Peter Avery, Modern Iran, London 1965, p 417-418.
10. Ն. Շ. Մ. Մոհամմադ Ռեզա Շահ Փահլավի, Առաքելություն հայրենիքի համար, Թեհրան, 1973, էջ 201.
11. Иран. Очерки новейшей истории, Москва 1976. стр 207-208.
12. Иран. Очерки новейшей истории, стр 236.
13. Ն. Շ. Մ. Մոհամմադ Ռեզա Շահ Փահլավի, Առաքելություն հայրենիքի համար, էջ 219:
14. George Lenczowski, American Presidents and the Middle East, p. 38.
15. Иран. Очерки новейшей истории, стр 244.
16. James A . Bill, The Eagle and the Lion. The Tragedy of American-Iranian Relations, London, 1988, p 113.
17. Ալիոհա Ազադի, Իրանի արտաքին քաղաքականությունը 1320-1357 թթ. (1941-1978թթ.), Թեհրան, 1997, էջ 290 (պարսկերեն):
18. George Lenczowski, The Middle East in World Affairs, New York, 1956, p.203.
19. Н. М. Мамедова, Иран в XX веке роль государства в экономическом развитии, Москва, 1997. стр. 22.
20. James A . Bill, The Eagle and the Lion. The Tragedy of American-Iranian Relations, p.114.
21. А. Расади, Иностраный капитал в Иране после Второй мировой войны, стр 85.
22. Политика США на Ближнем и Среднем Востоке (США и страны СЕНТО), стр199.
23. Политика США на Ближнем и Среднем Востоке, стр 211.

ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ

ՄՅՈՒՆԻՔԻ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԸ XVIII-XIX ԳԱՐԵՐՈՒՄ

Մյունիքի Օրբելյանների իշխանական տունը միջնադարյան Հայաստանի առավել ազդեցիկ և նշանավոր տոհմերից էր: XIII դարի սկզբին սեջուկթուրքերի դեմ հայ-վրացական զորքերի հաջող պայքարի արդյունքում Օրբելյանները տիրույթներ են ձեռք բերում Մյունիքում¹: Շնորհիվ Սմբատ Օրբելյանի ճկուն քաղաքականության, այդ տոհմի քաղաքական դերն ու հեղինակությունը հատկապես ուժեղանում է XIII դարի կեսերին: Ընդհանուր առմամբ XIII դարի 60-ական թթ. մինչև XIV դարի առաջին կեսը Օրբելյանները տիրում էին այժմյան Ջանգեզուրին, Վայոց ձորից Ամաղու, Եղեգիս, Արտաշունք, Շատին, Խաչիկ, Գուքենի, Սրատես, Ազարակածոր, Քարազլուխ, Մաղի, Հորս, Գլածոր, Այնազուր և այլ գյուղերին²:

Մեծղու կառավարող շրջանների հետ սերտ համագործակցության, ձեռք բերած *ինքնակամ* իրավունքի³ առկայության շնորհիվ Օրբելյանների դերը անհամեմատ աճում է Սմբատ, Տարսայիճ և Բուրթել (XIV դարի սկիզբ) իշխանների օրոք, որոնց հետ անգամ հայկական պետականության վերականգնման հույսեր էին կապվում: Բուրթել Մեծի անունով է կոչվում Օրբելյան տոհմի ամենանշանավոր ճյուղերից մեկը: XV դարի սկզբից Օրբելյանների իշխանությունը անկում է ապրում: 1450թ. Բուրթելյանների տոհմից հուստամը⁴ Բեշքենի որդին 1450թ. հիշատակվում է արդեն առանց շքեղ տիտղոսների⁵: Հետագայում այդ տոհմի ներկայացուցիչները բռնի մահնեղականացվում են և սկսած XV դարից հիշատակվում Մյունիքի առանձին գյուղերի մեկիցների ու տանուտերերի շարքում⁶: Մյունիքի Օրբելյանների իշխանական տան XIII-XV դարերի պատմությանն են մվիրված Ստ. Օրբելյանի «Պատմություն տանն Մխական» պատմագրական երկը, ինչպես նաև ժամանակակից ուսումնասիրողներից Գ.Մ. Գրիգորյանի, Լ.Խաչիկյանի, Հ.Գ. Փափազյանի և այլոց հետազոտությունները: Օրբելյան իշխանական տան հետմորդների ճակատագիրը XV-XVII դարերում, փաստական նյութերի սղության պատճառով մնում է չուսումնասիրված:

Սմբատ Օրբելյանը 1280թ. իր եղբայր Ստեփանասին քահանա էր ձեռնադրել⁶, որից հետո հաճախ Օրբելյան տան ժառանգներն էին ստանձնում նաև տեղի հոգևոր իշխանությունը՝ համձինս Տաթևի եպիսկոպոսների⁷: Օ-

տար տիրակալների կամայականություններից իրենց տիրությունը պաշտպանելու նպատակով Օրբելյանները հետագայում (XIV-XVդդ.) դրանց որոշ մասը որպես վակֆի հանձնում են Տաթևի վանքին, որը նման ճանապարհով ձեռք է բերում ընդարձակ հողատարածություններ¹⁰: Օրբելյան նշանավոր իշխանների սերունդները XVI-XVII դարերում անցնում են հայ հոգևորականների դասը¹¹:

Դարեր շարունակ Տաթևի վանքը ծանր հարվածներ է կրում մի քանի անգամ ավերվում և կորցնում է իր տիրությունների մի մասը¹²: Այսպես, եթե XIII դարում Տաթևի վանքի քեմին էին պատկանում 667 գյուղ, ապա XV դարում այն ուներ ընդամենը 260-ը¹³: Հետագայում դրանց քիվը նվազում է մինչև XVIII դար՝ 95 գյուղ, իսկ XIX դարում՝ ընդամենը 70-ը¹⁴: Իրենց կալվածքները օտարների ունեցություններից տեղի հոգևորականները վերձուրում են ապահովել պարսից շահերի և այդ տարածքների մահմեդական իշխանավորների կողմից Տաթևի վանքին տրված հրովարտակներով¹⁵: Օրբելյան իշխանական տան ճյուղերից Բուրքելյանների պատմությանն է վերաբերում XVII դարի 70-ականներին պարսից շահ Սուլեյմանին հղված մի խնդրագրում տեղ գտած հիշատակությունը Դարարասի Բուրքելյան համայնքի կողմից Տաթևի վանքին հասցրած վնասների մասին¹⁶: XVIII-XIX դարերի սկզբնաղբյուրներում և փաստագրական նյութերում առկա են որոշ տվյալներ, որոնք վկայում են Օրբելյանների ժառանգների կողմից իրենց նախնին հսկայական տիրությունների աննշան բեկորներին, որպես զավառների մեկիքներ, տանուտներ և հոգևոր իշխանության մերկայացուցիչներ, տիրելու մասին:

Չնայած դարերի արհավիրքներին, Սյունիքի նշանավոր Օրբելյան տան հետնորդները գոյատևում են մինչև XIX դարը: Այս փաստը հաստատում է Ղևոնդ Ալիշանը՝ գրի առնելով «Ուտբելեանների» XVII-XVIII դարերի ճյուղագրությունը, առանց նշելու, սակայն, նրանց տիրությունները¹⁷: Իշխանական այդ տեղից սերված էին համարվում XVIII-XIXդդ. Անգեղակոթում և մտակա Բոնակոթում իշխող Մելիք-Թանգյանները, Տաթևում և Բելսում իշխող Մելիք-Փարսադանյանները¹⁸:

XIX դարի պատմագիր Ներսեսովը իր «Թարիխ-ե Մաֆի» աշխատության մեջ նշում է «Մելիք Մուսի (Մովսես), Մելիք Մամուչյան և Ռոստամ բնկ Օրբելյանովների» անունները¹⁹: Մելիք Մամուչյան և Ռոստամ բնկ Օրբելյանովների մասին հիշատակում է նաև Ղ. Ալիշանը²⁰: Մելիք Մամուչյան Օրբելյանը XIX դարի կեսերին եղել է Տաթևի հոգևոր կառավարության անդամներից²¹: Քանի որ Տաթևում, ինչպես նշեցինք, իշխում էին Մելիք-Փարսադանյանները, ուստի հետաքրքրական է Ներսեսովի հիշատակած անունների համեմատությունը Ե. Լալայանի կողմից գրի առնված Մելիք-Փարսադանյանների ճյուղագրության հետ²²: Փարսադանյանների մեկիքական տան վերջին ժառանգն է նշվում Տեր-Մովսեսը, որը հավանաբար Ներսեսովի հիշատակած Մուսին է:

Երևանի Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում է պահվում մի հրավարտակ՝ տրված Ֆաթիսայի շահի կողմից Պետրոս Օրբելյանին²¹, որի մասին նշում է նաև Գ. Ալիշանը²²: Այդ եզակի փաստաթղթի բնագրում պարտաբեց շահը «Սամ-բեկ Օրբելյանի որդի Պետրոսի» դիմումի համաձայն հաստատում է վերջինիս ժառանգական իրավունքները Ամաղու գյուղի և Նորավանքի նկատմամբ՝ համոզմունքներով իր որդի՝ Աարայատականի կառավարիչ Աբրահա Սիրգային հետևել, որպեսզի նրա տիրույթների նկատմամբ ունեցած իրավունքները չկատարվեն և ապօրինի հարկեր չգանձվեն:

Ամաղուն պատկանում էր Սյունիքի Օրբելյանների ժառանգական տիրույթների թվին: Այնտեղի Նորավանքը կառուցվել էր XIII դարում Լիպուրիա Գ-ի կողմից և դարձել նրանց տոհմական գերեզմանատեղին²³: Նորավանքը երբեմն եղել է «Սյունեաց ինքնագլուխ եպիսկոպոսների աթոռը, երբեմն Վայոց ձորի և Նախճավանի եպիսկոպոսների»²⁴: Այստեղ են քաղված Օրբելյանների տան գրեթե բոլոր նշանավոր ներկայացուցիչները: XVIII դարում Ամաղուն ունեցել է 30 տնից բաղկացած մանկեղանակա և հայ խառը բնակչություն²⁵: Հրավարտակը տրվել է 1813թ. հունիսին՝ նախքան Գյուլիստանի հաշտության պայմանագրի կնքումը: Նորավանքը գտնվում էր այն տարածքում, որը այդ պայմանագրով անցնում է Ռուսաստանին:

Մատենադարանում կա մեկ պարսկալեզու փաստաթուղթ ևս՝ տրված Օրբելյան տան XIX դարի շառավիղին: Այն արդեն Նախիջևանի Ջահրի գավառամասի ռուսական կառավարման կնիքով հաստատված 1872թ. համաձայնագիրն է՝ Անդրես Օրբելյանի և Փայիզ (կամ Բայիս) գյուղի բնակիչ Ալ-Ջաֆարի հետ այդ գյուղին պատկանող Աղջե վայրի առկույտի դաշտը կիսովի մշակելու մասին²⁶:

Սա. Օրբելյանի գրի առած Տաթևի եպիսկոպոսությանը հարկատու գյուղերի ցուցակում նշվում է Սյունիքի Կահուկ (Ջահրի) գավառի 48 գյուղ: Փայիզ կամ Բայիս վայրը XIX դարում հիշվում է Կահուկի ավերված բնակավայրերի թվում²⁶: Ջահրի որ ստույգ հայտնի չեն վերը նշված հարկատու գյուղերից շատերի գտնվելու վայրերը, ուստի հնարավոր է, որ Բայիսը կամ Աղջեն լինեն նրանցից որևէ մեկի ուշ շրջանի աղավաղված ձևերը:

Այս փաստերը հիմք են տալիս պնդելու, որ չնայած իրենց իշխանության թուլացմանն ու որոշ ներկայացուցիչների (Բուրբելյան ճյուղի) թոփ մահմեդանացմանը, Օրբելյանական տան ժառանգները գոյատևում են մինչև XVIII-XIX դարերը՝ համոզու գաղթը պահելով նրանց Սյունիքի գյուղական մեկիքներ ու հոգևորական վերնախավի անդամներ:

Թարգմանություն

Կաթողիկոսական դիվան, Թղթապանակ 1գ, վավերագիր 1006, բնագիր, մեծ. 39x34սմ, գիր՝ շիրասբե-նասրապիլի
Հանում վերին ամենակարգ Աստու:
[Ֆաթիսայի շահի կնիքը]
Նա է Աստված

Արքայական հրաման եղավ:
Մեֆյան շահերի և հանգուցյալ դրախտարճակ Աղա Մուհամմադ շահի հրամանագրերի և հրովարտականքների համաձայն, Ամադու գյուղի Նորավանքի (Դրզըլ վանք) եկեղեցին կառուցվել է մեր արժանապատիվ նվիրյալ ծանոթ Օրբեյանների տոհմից Մելիք Սամ Բեկի որդի Պետրոս Բեկի նախնիների կողմից: [Վերջիններս] երկար տարիներ Նախիջևանի Դարալագյազ (Դառե-սյ-ագյաս) մահալում²⁷ գտնվող հիշյալ գյուղի եկամուտները գանձելով՝ հոգացել են նշված վանքի ծախսերը, ուստի, Նորին արքայական Մեծության որոշմամբ, այս՝ կապիկի տարվա սկզբից, որպես հետագա ծառայությունների երաշխիք, նախկին հրամանագրերին համապատասխան, Ամադու գյուղի և Նորավանքի իշխանությունը շնորհվում է քրիստոնյաների ընտրյալ Մելիք Սամ Բեկի որդի Պետրոս Բեկին: Այսուհետև, վերոհիշյալ արժանապատիվ անձը՝ իր երկու եղբայրներ Աբաս Բեկի ու քահանա Հովակիմի հետ, լինելով Օրբեյան տոհմի ազնվականներից և մեղիքագուցման ժողովներից, նրանց պես ղեկավարի մակիլյաթից²⁸ թող ազատված լինի և, ինչպես հնում, հիշյալ գյուղի արտերի հաստըը նշված վանքի համար ծախսելով, կատարյալ հանգստությամբ փառաբանի մշտնջենական պետությամբ: Որոշվում է, որ Մեր սիրելի և արժանավոր որդի, անվանի ու գերապատիվ փոխարքա, Ատրպատականի կառավարիչ Աբբաս Միրզան այդ երկրի մուրաշխրներին²⁹ խստիվ արգելի որևէ կերպ կամ որևէ անվան տակ վերոհիշյալ ազնվականից դրամ պահանջել: Նշված գյուղի մակիլյաթի տնօրինումը արժանապատիվ Պետրոս Բեկին ենք հանձնում, որպեսզի ամեն տարի հոգա հիշյալ վանքի ծախսերը: Թող Նորին Մեծության փառապանծ գրագիրները թագավորական հրովարտակի բովանդակությունը գրանցեն մատյաններում և պատասխանատու լինեն:

Գրվեց 1229 հ.թ. Ռաջաբ-ու-մուտաջաբ ամսին³⁰:

Պատվարժան փոխարքա թագաժառանգի խոնարհ ծառա՝ Օրբեյանների տոհմից Մելիք Սամ Բեկի որդի Պետրոս Բեկի խնդրագիրը ամենաողորմած Ալլահի սրբազան ստվեր, նրա ամենակարող գործակալ Նորին Մեծությամբ:

Չեր օրհնյալ ոտքի հալին գոհ դառնանք, ձեզ փառաբանողների ձեռքին են դրախտարճակ Մեֆյան շահերից և հանգուցյալ Աղա Մուհամմադ շահից ստացված հրամանագրեր ու հրովարտականք, որոնց համաձայն, մեր նախապապերի կառուցած Ամադու գյուղի Նորավանքը մշտապես պատկանել է թշվառներին: Այժմ Չեր նվիրյալ ծառայի խնդիրքն այն է, որ հզոր թագավորության կենտրոնից վճարվող և արքայական կնիքով հաստատված հրաման արձակվի, որ համաձայն հին հրամանագրերի, Նորավանքը և վերոհիշյալ գյուղը ծառաներին [ծառանգակամ] սեփականությունն է: Որևէ մեկը թող նրա նկատմամբ ոտնձգություն չկատարի, և մենք, ինչպես հնում, պահ-

պանենք Նորավանքը և հիշյալ գյուղի եկամտունքը օգտագործենք վանքի ծախսերի ու վերանորոգման վրա: Այնպիս որ, շարունակ օրիններ մշտնջենական պետությանը, զի նրա հրամանն անասան է:
[Փաստաթղթի մյուս կողմում]
Արքայական հրամանը գործի դրվեց:

KRISTINE KOSTIKYAN

THE ORBELIANS OF SYUNIK IN THE XVIII-XIX CENTURIES


(Summary)

Orbelyans were an outstanding princely family of XIII-XIV century Armenia, who held also the ecclesiastical power of their domain - the province of Siwnik. From mid-XV century the power of that family weakened, they lost the major part of their estates, apart from those, which they had turned beforehand into *vags* - church domains. Although the history of XVI-XVII centuries of Orbelyans is obscure due to the lack of sufficient information, but some facts recorded in the historical sources allow us to assert their survival down to the XIX century. According to the information of XVIII-XIX century historical sources, the descendants of Orbelyans were landlords (*meliks*) of one or few villages and representatives of the provincial ecclesiastical power of Siwnik of that period.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


1. Գ. Մ. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք, Եր., 1981, էջ 47:
2. Նույն տեղում, էջ 74, 90:
3. *Բերու* հողատիրությունների թվին էին պատկանում իլխանական շրջանում 1) կնոջ կողմից ծառաների հետ միասին որպես օժիտ տրվող կավածքները և 2) Չիմիկ խանի տոհմից սերող նահազային իշխանների տիրությունները: Բացի այդ, նույն անունն էին կրում նաև արտոնյալ այն վասալների տիրությունները, որոնք գտնվում էին Վուլավոլյանների հովանավորության տակ (այդ մասին ավելի մանրամասն տես Մ. Ս. Պետրուշևսկի, *Земледелие и аграрные отношения в Иране 13-14-х веков*, М.-Л., 1960, с. 240-245):
4. А. Д. Папазян, Новые эпиграфические данные о последних отпрысках армянской феодальной знати в Сюнике, «Պատմա-Բանասիրական հանդես», 1983, No 4, էջ 120:
5. Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրբելյան ճյուղը, Բանրեր Մատենադարանի, Եր., 1969, No 9, էջ 187:
6. Վևոնդ Ալիշան, Սիսական, Վեներտիկ, 1893, էջ 94:
7. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 189-198:
8. Г. М. Григорян, Очерки истории Сюника 9-15-х вв., Е., 1990, с. 274.

9. П. Т. Арутюнян, Освободительное движение армянского народа в первой четверти 18-ого века, Москва, 1954, с. 54.
10. Ե. Լալայան, Միսիան, Ազգագրական հանդես, գիրք Գ, Թիֆլիս, 1898, էջ 115-116: Դիվան Հայոց պատմության, գիրք Բ, էջ 57:
11. Ա. Եսլիսկի. Սմբատեան, Համառոտ պատմություն Տարևի վանքի, (առանց տիտղոսաթերթի, տպագրման տեղի և քվակամի), էջ 330:
12. Ալիշան, Սիսական, էջ 242:
13. Մատենդարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտականք, պր. I, (կազմեց Հ. Դ. Փափագյանը), Եր., 1956, վավերագրեր No 1, 2, 4, 10, 11, 15, 63:
14. Папазян, ук. соч., с. 124:
15. Ալիշան, Սիսական, էջ 96, 97:
16. R. Newsen, The Meliks of Eastern Armenia, "Revue des études Armeniens", 1975-1976, p. 224, 229.
17. Միրզա Յուսուֆ Ներսեսով, «Թարիխ-ե Սաֆի», ՎՀ, Կ. Կենտրոնի անվան ձեռ. իմաս., Արևելյան քաղցին, Բ-195, էջ 79բ:
18. Ալիշան, Սիսական, էջ 18:
19. Документы и материалы по истории армянского народа. Социально-политическое положение Восточной Армении после присоединения к России (1830-1870), Е., 1993, с. 218.
20. Ե. Լալայան, Չանգեզուրի գավառ, Կապան կամ Ղափան, «Ազգագրական հանդես», գիրք XII, Թիֆլիս, 1905, էջ 178:
21. Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 1006:
22. Ալիշան, Սիսական, էջ 205:
23. Ալիշան, Սիսական, էջ 93:
24. Ալիշան, Սիսական, էջ 184:
25. Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ե, վավ. 815:
26. Ալիշան, Սիսական, էջ 480:
27. Մահալ (արար.) – «ճահալ» («վայր») բառի հոգնակին է, որ բառացի նշանակում է «վայրեր», բայց այն հաճախ գործ էր անվում արդի «շրջանի» իմաստով», (տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, պր. I, էջ 113):
28. Մալիյաթ (արար.) - «Մալիյե» բառի հոգնակին է, որը «XV դարից գոյություն ունեցող գլխավոր եկամտահարկի տարրերակներից է, որը ավելի գործածական դարձավ XVII դարում և փոխարինում էր «ճալին» կամ «ճալթեհաթին»: Վերջինս գանձվում էր ամեն տեսակի եկամտարեք օբյեկտներից ու շենքերից, այգիներից, վարկահողերից և այլն: XIX դարում և մինչև օրս էլ Իրանում այն գործածվում է հոգնակի ձևով», (տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, պր. 2, Երևան, 1959, էջ 222):
29. Մուրաշիր (արար.) - «Հարկահավաք, վերակացու: Այսպես էին կոչվում հատկապես այն պաշտոնյաները, որոնք չափում էին կալերում կուտակված բերքը և առանձնացնում կալվածատիրոջն ու պետությանը տրվող ռենտա-հարկը», (տե՛ս - Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, պր. I, էջ 114):
30. Համապատասխանում է 1813թ. հունիսին:



ازین مکان به طرف جنوب و جنوب شرقی
ازین مکان به طرف جنوب و جنوب شرقی

ازین مکان به طرف جنوب و جنوب شرقی
ازین مکان به طرف جنوب و جنوب شرقی
ازین مکان به طرف جنوب و جنوب شرقی
ازین مکان به طرف جنوب و جنوب شرقی
ازین مکان به طرف جنوب و جنوب شرقی
ازین مکان به طرف جنوب و جنوب شرقی
ازین مکان به طرف جنوب و جنوب شرقی
ازین مکان به طرف جنوب و جنوب شرقی
ازین مکان به طرف جنوب و جنوب شرقی
ازین مکان به طرف جنوب و جنوب شرقی



ԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՐՈ

Մեր ձեռնարկներում տարածաշրջանի ազգային-քաղաքական հիմնախնդիրների համալիրում յոր հարավորակ սրտայամբ, հատկապես վերջին տասնամյակների ընթացքում, առանձնաճանաչ է քրդական հարցը, որը դարձել է Թուրքիայի առաջնային գլխացավը:

Քրդական հարցի որևէ ձևով լուծումը, կախված է ոչ միայն տարածաշրջանի շուրջ արտաքին ուժերի հարաբերակցության վիճակից այլև քրդաբնակ շրջանների ներքին ազգային-քաղաքական դրությունից: Այս առումով, տարածաշրջանում կատուցվածքային տեսանկյունից ամենից կոտորակվածը քրդերն են:

1. *Քրդերի վիճակը*: Լինելով քանակապես ամենից մեծ ազգային փոքրամասնությունը՝ քրդերն, այնուամենայնիվ, Ժայռահեղորեն մասնատված են և ամբողջ միասնական դիրքորոշման հասնելու ինչպես ներքին, այնպես էլ՝ արտաքին կողմնորոշումների հարցերում: Այդ ամենին նպաստում է նրանց վարչա-տարածքային անջատվածությունը, տարբեր երկրներում ցայտ ու ցիր լինելու պարագան, լեզվի ու կրոնի որոշակի տարբերությունը, ազգային միասնական ինքնագիտակցության պակասը: Այս բոլոր տարբերակիչ առանձնահատկությունները մի կողմից և քրդական ցեղային-քաղաքական խմբավորումների առաջնորդների միանձնյա իշխանության հասնելու ձգտումը, մյուս կողմից, հիմնավորապես խանգարում է քուրդ ժողովրդի և ղեկավար քաղաքական շրջանակների միաբանությունը: Քրդական կազմակերպություններին սկզբից ի վեր յուրաքանչյուր և ներկայումս կազմակերպված հակամարտությունը և մրցակցությունը: Ազգային-քաղաքական նպատակների և դրանց հասնելու ուղիների շուրջ սղվող վեճերի ու տարածայնությունների հիմքում, որպես կանոն, ընկած է պարզունակ անձնական մրցակցությունը: Քրդերի մոտ դեռ հիմնավորապես զգացնել է տալիս ավանդական դարձած միջցեղային հակամարտությունը և անջատողականությունը: Հենց այդ պատճառով նրանք ոչ հանրայինաճանաչ ընդունված քաղաքական կուսակցություն ունեցան, ոչ էլ քուրդի կողմից ընդունված առաջնորդ: Որ-

պես կանոն. քրդերի մոտ «Քրդստանի» գործին նվիրվածությունը արտահայտվում է առաջնորդին կոչը և մոլեռանդ հայատակությամբ:

Չափազանցություն չի լինի ասել, որ քրդերն իրենք անգամ «զուլա» չեն հանում իրենց ներքին էթնիկ-քաղաքական խռնամոցից: Այս ամենից հետո խոսել տիրող իրականության պայմաններում քրդական որևէ պետական-նախնայ միավորի ստեղծման մասին՝ անիմաստ է: Հակասությունները երբեմն հասնում են անհաշտ թշնամության, ինչը փոխանցվում է սերնդի սերունդ:

Այստեղ, արժե ընդհանուր գծերով անդրադառնալ Արևմտահայաստանում բնակվող քրդերի գլխավոր՝ Քրդական աշխատավորական կուսակցության (ՔԱԿ) մտտեցումներին: ՔԱԿ-ը ծրագրային փաստաթղթերով իրեն տարածաշրջանի բոլոր ժողովուրդների ազատության գաղափարին կողմ է հայտարարում, սակայն երբեք և ոչ մի տեղ հիշատակություն չկա արևմտահայ հողերը հայերին վերադարձնելու կամ այդ գործին՝ քրդերի կողմից որևէ կերպ նպաստելու մասին: Ընդհակառակն, այդ տարածքները ընդգրկված են ՔԱԿ-ի քաղաքական պահանջները ներառող «Քրդստանի» աշխարհագրական սահմանների մեջ: Այսինքն, զրոքալ առումով ՔԱԿ-ը դեմ է Արևմտահայաստանի՝ հայկական դատարար հետակադրին:

ՔԱԿ-ն նորաստեղծ ՀՀ-ի նկատմամբ որդեգրել է յափազանց զգույշ, հաշվեհարկ և ինչ որ տեղ չեզոք դիրքորոշում: ՔԱԿ-ն միաժամանակ քաջ հասկանում է, որ սեփական պետականության բացակայության կողքին ՀՀ գոյությունը կարևոր գործոն է, ինչը նա դիտարկում է զուտ հակաթուրքական ճակատ ձևավորելու տեսանկյունից: Մյուս կողմից, իր նպատակների լիակատար իրականացման առումով ռազմա-քաղաքականորեն հզորացող հայկական գործունե քրդերի համար ոչ ձեռնասու և վտանգավոր է: Քրդերը գիտակցում են, որ միջազգային և ներքին համապատասխան իրադրության դեպքում հայկական կողմը նրանց դուրս է մղելու արևմտահայ հողերից:

Մերձավոր Արևելքում միջազգային հարաբերությունների հետագա սրման և քաղաքացիական պայմաններում քրդական հարցը կարևորվում է: Տարածաշրջանում այդ առթիվ անմիջականորեն որոշակի շահեր ունեն և իրենց սեփական ռազմավարական նպատակներն են հետապնդում աշխարհաքաղաքական խոշոր միավորները (ԱՄՆ, Եվրոպա, Ռուսաստան) և շահագրգիռ կողմերը (Թուրքիա, Իրան, Սիրիա, Հայաստան): Նման հետաքրքրության գլխավոր պատճառներին են քրդաբնակ տարածքների աշխարհագրա-ռազմավարական դիրքը և բնական հարուստ պաշարները:

Քրդերով բնակեցված երկրների միջև բազմակողմանի համագործակցությունը բավականին բարդ և խնդրահարույց է: Առկա են այդ երկրների միջպետական տարաբնույթ ներհակություններ, որոնց ավելանում է քրդական գործունի արգելակիչ պարագան, ինչը դժվարացնում է տարածաշրջանային համագործակցության հնարավորությունը: Հիմնականում երկրորդա-

կան դերով՝ քրդական գործունեւորականացից նպաստում է վերոնշխարհային համազգայնացմանը:

Սակայն, տարածաշրջանի աշխարհաքաղաքական պատկերը վերջին տասնամյակում արմատապես փոխվել է: ՀՀ-ԼՂՀ առանցքը իրական հնարավորություններ ունի Այսրկովկասում վճռորոշ դերակատարման հավակնել: Հզորացող Իրանն այլևս նախկին շահական Պարսկաստանը չէ: Թուրքիան արևմուտքի աջակցությամբ հավակնում է տարածաշրջանային տեղադրում կարգավիճակի:

Այս համալիրում, մեկ անգամ ևս նշենք, որ քրդերի պետականության ստեղծման որևէ ծրագիր արդեն դառնում է առավել դժվար իրականացնելի, ինչին արմատապես նպաստում է պատմականորեն առկա Արևմուտք-Ռուսաստան հակամարտությունը, որն անգամ վերջինիս ժամանակավոր համաժողովրդային շի կորցրել իր նշանակությունը: Մինչև քրդերը իրենց հարցերը չկարգավորեն այդ երկու ուժերի հետ ու նրանց միջև տեղի չունենա շահերի ու նպատակների համապատասխանեցում, ինչը քիչ հավանական է, չենք կարծում, որ նրանք ինչ-որ շոշափելի արդյունքի կհասնեն: Իսկ Հյուսիսային Իրաքում քրդական ինքնավարության արհեստաժին միավորը պարզապես ԱՄՆ-Իսրայել խաղի արդյունքն է: Ի դեպ, հասկանալի պատճառներով, այդ միավորի գոյությունը ընդունելի չէ Թուրքիայի և Իրանի համար:

Միանգամայն արժե նշել մեկ պարագա ևս. ձևավորվել է այնպիսի իրավիճակ, երբ քրդերը բոլորին պետք են և, միաժամանակ, ոչ մեկին պետք չեն:

2. ԱՄՆ-ի դիրքորոշումը ԱՄՆ-ը տարածաշրջանում հետևողականորեն կիրառում է կրկնակի ստանդարտի սկզբունքը՝ աջակցում է քրդերին մի երկրում և խփում մյուս երկրներում: ԱՄՆ-ը Թուրքիային ամբողջապես չի աջակցում ՔԱԿ-ի և Օջալանի հարցում: Նրա կեցվածքի քաջասական կողմը վերաբերում է միայն ՔԱԿ-ի «հանցագործ, մաքսանենգ» առաջնորդին: Մյուս կողմից, ԱՄՆ-ը հովանավորում է Հյուսիսային Իրաքում քրդական ինքնավարության ծրագրին, որին կտրուկ դեմ է Թուրքիան: Այսինքն, Իրաքում ԱՄՆ-ը ձգտում է, որ քրդերը դառնան միայն Սադամի թշնամի:

Կապված տարածաշրջանում քրդական գործունեւորական և ակտիվացման հետ՝ ԱՄՆ ձգտում է ապահովել իր ռազմավարական շահերի պաշտպանությունը, ըստ այդմ, ձգտելով ամրապնդվել Մերձավոր Արևելքում: ԱՄՆ-ն, ըստ ամենայնի, հասկանում է իրաքյան «Քրդստան»-ի նկատմամբ վճռական հսկողության պահպանման կարևորությունը, ընդ որում, ոչ միայն Սադամի դեմ մղվող պայքարի առումով՝ այն հետահար ուղղվելով նաև Իրանի, ապա և Ռուսաստանի դեմ: Հետաքրքրությունից գուրկ չէ այն պարագան, որ Բարաք օբսերվանսի և Թալբերգի ժամանակ ԱՄՆ-ը ցույց է տալիս 100-120 մլն դոլար օգնություն (ավելին՝ քան ՀՀ-ին):

Իր շահերից ելնելով՝ ԱՄՆ-ը արմատականորեն երբեք թույլ չի տա որևիցե քրդական պետական միավորի վերջնական կայացում, այլ քրդերին

միշտ օգտագործի Ռուսաստան-Իրան-Միջին Արևելքի զույգերի և վերջին հաշվով, տարածաշրջանում մեկուսացնելու համար: Ի վերջո, քրդական հարցում ԱՄՆ-ը մինչև վերջ անկեղծ չէ մաս իր դաշնակից Թուրքիայի հանդեպ և ցանկացած անհրաժեշտ պահի քրդերին կողորդի մաս կրա դնի:

3. **Եվրոպայի դիրքորոշումը:** Եվրոպան իր քրդական քաղաքականության մեջ խաղաղակեղծ քուրդական գործունը հնուտ օգտագործում է այն առկա քննադատությունը, որին ենթարկվում է Թուրքիան՝ քրդերի հանդեպ մարդու իրավունքների ոտնահարման հարցում: Դրանով իսկ, Եվրոպան Թուրքիային անհրաժեշտաբար հեռու է պահում եվրոպական համապարփակ ինտեգրացումից: Այսինքն՝ քրդական հարցը Եվրոպայի համար մնացել է լույս թուրքերի վրա ճնշում բանեցնելու միջոց: Պատահական չէ, որ Եվրոպան առաջին իսկ վտանգի ժամանակ աներկբա հրաժարվեց քրդական հարցի պաշտպանությունից և մարդու իրավունքների պաշտպանության այդքան չարչրկված լուգունգից: Մյուս կողմից, Եվրոպան քրդական հարցը միշտ դիտարկում է ընդհանուր մերձավորարևելյան տարածաշրջանի ինդիքների համալիրում: Եվրոպան դեռևս երկար ժամանակ կշահագործի քրդական գործունը, որպեսզի Թուրքիային դուրս թողնի Եվրոպական Միությունից: Խոշոր հաշվով, Եվրոպան քրդերի հանդեպ կիրառում է այն մոդելը, ինչը հաջողությամբ վտորձարկել է հայերի նկատմամբ 19-րդ դարավերջին և 20-րդ դարի սկզբին:

Քրդական հարցում Եվրոպան թեպետ ներքին կառուցվածքային առումով միակարծիք չէ, սակայն հենց այդ պարագան նրան լավագույնս խուսաճանակելու հնարավորություն է ընձեռում: Ավելին, գլոբալ ռազմավարական տեսանկյունից Եվրոպան ստիպված է հաշվի նստել ԱՄՆ-ի դիրքորոշման հետ:

4. **Ռուսաստանի դիրքորոշումը:** Թուրքիայի դեմ մղվող պայքարում Ռուսաստանը ավանդաբար աջակցել և օգտագործել է քրդերին: Այսինքն, Ռուսաստանի համար «Քրդստանը» որոշակի աշխարհաքաղաքական և ռազմական պատմել է, որն ուղղված է արևմտյան ծավալապաշտության (ՆԱՏՕ, պանթուրքիզմ, ինչու չէ՞ մաս պանիսլամիզմ) դեմ: Փաստորեն, պանթուրքիզմի ծավալման ճանապարհին ռուսական շահերի համար քրդական զանգվածը կարող է եսկան արգելք լինել:

Ռուսաստանը Թուրքիայում քրդական անջատողական շարժումների վրա շեշտադրում կատարելով՝ նպատակ ունի այն օգտագործել մաս որպես Թուրքիայի ներքում աշխարհաքաղաքական արմատական ցնցումների իրականացմանը նպաստող ու օժանդակող կարևոր գործոն:

Փաստորեն, Ռուսաստանը օժանդակում է քրդերին, քանզի պանթուրքիստական քաղաքականության հաջողության դեպքում լուրջ վտանգ ունի իր տարածքային ամբողջականության կորուստի առումով:

Ռուսաստանի համար Թուրքիայի գործունը բարդ է, բազմակողմանի, լարված ու արդիական: Մյուս կողմից, այժմ Ռուսաստանը զգալիորեն կորց-

րել է իր ազդեցությունը տարածաշրջանի այն երկրների և ժողովուրդների նկատմամբ, որոնք ավանդաբար գտնվել են նրա ռազմավարական ազդեցության շրջանակում: Ռուսաստանը իր օգտին քրդական հարցի կարգավորմամբ կարող է կայունացնել վիճակը Կովկասում: Այսինքն, թուլացած Թուրքիան այլևս չի կարող էսպես ազդել Կովկասի վրա, որի արդյունքում Ադրբեջանը և Վրաստանը «կանցնեն» Ռուսաստանի կողմը: Այս պարագան ռուսների կողմից կարող է կիրառվել նաև Միջին Ասիայի կտրվածքով:

Վերջապես, Ռուսաստանը քրդական գործոնը ձգտում է կապել Ռուսաստան-Հայաստան-Իրան եռյակին, այսինքն՝ Թուրքիայի դեմ մղվող պայքարի առաջին ճակատում անմիջականորեն կլինեն քրդերը, իսկ նրանց քիկոնքում՝ հիշյալ եռյակը: Այս ենթադրությունն չի քացատվում Հայաստանի անմիջական «ներաշունք» հակաթուրքական ռազմական առճակատման դեպքում:

Փաստորեն, Ռուսաստանը իրական հնարավորություն չունենալով զենքով պայքարել Թուրքիայի դեմ, այդ խնդրում պետք է օգտագործի քրդական գործոնը, ինչը ռազմաքաղաքական հավասարակշռություն կարող է ստեղծել ՆԱՏՕ-ի հարավային ճակատի նկատմամբ: Խոշոր հաշվով, քրդերի միջոցով Թուրքիային թուլացնելով և չեզոքացնելով՝ Ռուսաստանը կլուծի իր տարածքում առկա և Թուրքիայի կողմից հրահրվող ու սրվող մեծ լեռնիկ կոնֆլիկտները: Կայունացնելով իր ներքին էթնոքաղաքական դրությունը, Ռուսաստանը արդեն կարող է կրկին մտածել համաշխարհային զերտեքության կարգավիճակի վերանվաճման մասին:

Այս կապակցությամբ Ռուսաստանի համար քրդական գործոնի նշանակությունը ավելի է կարևորվում: Համապատասխան ռազմաքաղաքական աշխատանքների դեպքում քրդերը Ռուսաստանի համար կարող են կատարել յուրօրինակ ժանդարմի դեր: Նման գործակցով Ռուսաստանը կարող է խաղարկել նաև իր քարտիզացիական հարաբերությունները Իրանի և Հայաստանի հետ՝ անհրաժեշտության դեպքում քրդերին օգտագործելով վերջիններիս դեմ:

5. **Թուրքիայի դիրքորոշումը:** Թուրքիան դեմ է Իրաքում քրդական հաստատուն իշխանության կայացմանը: Այսինքն, Իրաքի տարածքային ամբողջականության՝ հօգուտ քրդերի խախտումը, հակասում է Թուրքիայի շահերին: Մյուս կողմից, Թուրքիան դեռևս պահպանում է Մոսկուի և Քիբրոսի շրջանների հանդեպ իր ունեցած տարածքային հավակնությունները:

Թուրքիան ձգտելով ձեռք բերել միջինասիական մավթ-գազ և Ադրբեջանի մավթ իր տարածքով անցկացնելու հնարավորությունը կարող է հարստացնել-զարգացնել երկիրը և, հատկապես, նրա արևելյան և հարավարևելյան հատվածները, դրանք դուրս բերելով տնտեսական հետամնացությունից: Այդ պարագայի շնորհիվ Թուրքիան կկարողանա հետագայում լուծել նաև գլոբալ քաղաքական խնդիրներ՝ կապված հայկական հուլային

պահանջները և քրդական անջատողական-ազատագրական պայքարի ենթա:

Հեռանկարային նպատակներ հետապնդելով Թուրքիան մշակել է իր տարածքի հարավ-արևելյան շրջանների տնտեսական զարգացման համապարփակ ծրագիր, որի իրագործումը նրան հնարավորություն կտա ստեղծել բուրքերով բնակեցված էթնիկ գոտի՝ Մալաթիա-Էլազըղ-Դիարբեքլի-Տուրաներկ գծով: Դրանով իսկ, Թուրքիայի քրդերը կբաժանվեն Միդիայի և Իրաքի քրդերից: Այսպիսով, ամբողջական քրդական պետության ստեղծման հարցը օրակարգից կհանվի, ինչի արդյունքում արդեն հարցական կդառնա նաև Թուրքիայում քրդերի ներքին ինքնավարության խնդիրը:

Պետք է շեշտել, որ Թուրքիայի համար ռազմավարական նշանակություն ունի քրդական հարցը միջազգային քառերկուսյան դուրս գալուց արգելելու պարագան: Մյուս կողմից, Թուրքիան ներքին և արտաքին ճակատներում գտնվում է քրդական հարցի ընդունման և լուծման պարտադրանքի տակ: Եթե քուրդերը քրդերի ազգային-մշակութային կարգավիճակի որոշ քարելավում կատարեն (օրինակ՝ լեզվի խտրականության վերացում, մասնաշրջանների հիմնման արտոնություն), ինչն արդեն հետզհետե նկատելի է, ապա մեծապես կնպաստեն քրդերի մոտ ՔԱԿ-ի հեղինակության ամկմանը և հսկայական մարտական գործողությունների մարմանը:

6. **Իրանի դիրքորոշումը:** Քրդական գործունը իր օգտին խաղաղկելու հնարավորությունը Իրանի համար միշտ էլ արգելակելու ու խոչընդոտելու են «սեփական» քրդերը: Քրդերը Իրանի համար ռազմա-քաղաքական գործընկեր անընդունելի են, քանզի չունեն միասնական ազգային ինքնագիտակցություն և ցեղային պատկանելիության շեշտադրումից այն կողմ չեն անցնում: Եվ գլխավորը, քուրդ-իրանյան հարաբերությունների կնճռոտ հարցերից մեկը ՔԱԿ-ի խնդիրն է:

Այսուհանդերձ, Իրանը Թուրքիայի հետ ռազմա-քաղաքական անհավասարակշռությունը փորձում է լրացնել իսլամական արմատականության և քրդական անջատողականության լծակներն օգտագործելով: Մտառոված պանթուրքիզմի վտանգից՝ կապված «Մեծ Աղդրեջանի» ստեղծման հնարավորության հետ, Իրանը նաև այդ պատճառով աջակցում է Թուրքիայի քրդերին:

Իրանը կտրականապես դեմ է Իրաքի հյուսիսում քրդական ինքնավարության ամրապնդմանը: Այսպես, չնայած իր ծայրահեղ իսլամական պարագային, Իրանը՝ համուր Իրաքում քրդերի ճնշման, թույլ է տալիս Սադամին հարվածել նույնիսկ իրաքյան շիաներին: Մյուս կողմից, ելնատակելի է, որ Իրանի շիա քրդերը երբեք քրդական շարժումների չեն մասնակցել:

Ընդհանուր ստմամբ Իրանի քրդական քաղաքականությունը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1. Տարածաշրջանում տիրապետող դիրքի հասնելու ձգտում,

2. Այսրկովկասում և Միջին Ասիայում ազդեցության տարածման համար Թուրքիայի հետ ունեցած կարևոր և վճռորոշ մրցակցությունը,
3. Իրանը ձգտում է խաղընդոտել տարածաշրջանում ԱՄՆ-ի ազդեցության ընդլայնմանը,
4. Իր տարածքի քրդական շարժումների չեզոքացում և վերացում:
7. *Միջին Արևելքի դիրքորոշումը*։ Քրդական հարցում նրա դիրքորոշումը անվերապահորեն ընդունելի է նաև Լիբանանի համար։ Թեպետ քրդերը Միջին-արևելյան զուրկ են տարրական իրավունքներից, բայց սրված կերպով քրդական հարց գոյություն չունի։ «Մեկնական» քրդերի հարցը Միջինում լուծում է ի հաշիվ Իրաքի և Թուրքիայի քրդերին աջակցելու։ Միջին երկար ժամանակ օգնում էր հատկապես Իրաքի քրդերին, ինչը պայմանավորված է հակասադասյան դիրքորոշմամբ։
Այսուհանդերձ, հանուն Իսրայելի, Թուրքիայի և Իրաքի հետ (վերջին հաշիվով՝ նաև ԱՄՆ-ի) հաշտեցման և հարաբերությունների նորմալացման Միջին ասիական ստատուս է զոհաբերել Թուրքիայի և Իրաքի քրդերին։
8. *Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը*։ Քրդերի նկատմամբ մշակվելիք քաղաքականության հարցում ամերիկեցիները և նկատի ունենալ մի շարք հանգամանքներ, որոնք ոչ միայն կհատկացնեն առկա մոտեցումները, այլև հնարավորություն կընձեռեն հիշյալ խնդիրը դիտարկել համալիր ենթատեքստում։
Մրևնտահայաստանը ներկայումս զերազանցապես ընկնեցված է քրդական անմիաբան և հակամարտող ցեղերով, որոնք, ընդհանուր առմամբ, թշնամաբար են տրամադրված թուրքերի հանդեպ։ Այս վերաբերմունքը որոշ վերապահումներով կարելի է վերագրել նաև հայերի նկատմամբ տիրող դիրքորոշմանը։ Մեզինք զատ, անմիջական շահախնդրություններ և ռազմավարական նպատակներ են հետապնդում նաև արդեն վերջ հիշված աշխարհաքաղաքական միավորները։
Թուրքիայում գնալով անհազանում և մեծ քափ է ստանում համաթուրանական ծայրահեղ շեշտադրումով ազգայնականությունը։ Աշխարհաքաղաքական հեռահար նպատակներ հետապնդելով (Արևմուտք-Արևելք խաղում խուսանավելու և ներքին խնդիրները կարգավորելու որոշակի իրական հնարավորություն), ոչ պատահականորեն, թուրքական ազգայնականությունը, ըստ ամենայնի, վայելում է երկրի զինուժի քարծրագույն հրամանատարության և անվտանգության կառույցների բազմակողմանի աջակցությունը։
Ի դեպ, այս պարագայից ելնելով, միանգամայն օրինաչափ պետք է համարել Թուրքիայում քրդական շարժման գաղափարախոսության ազգայնականացումը։ Մասնավորապես, «մարքսիստական» ԲԱԿ-ն արագորեն ձգտում է ձերբազատվել անցյալի «մնացուկներից»։
Մյուս կողմից, հայկական և քրդական հարցերը պետք է դիտարկել միասնության մեջ, քանզի մեկի լուծումն ստանց մյուսի որոշման կլինի թերի և ժամանակավոր։ Դրանք փոխկապակցված են և պահանջում են ներդաշ-

նակ կարգավորում: Հայ-քրդական հակամարտությունը և անվտանգությունը գերազանցապես պայմանավորված են քրդերի անհիմն հողային պահանջներով: Այսինքն, հողային պահանջների փոխադարձ հանդեպումը ինչ որ տեղ խաչընդոտում է իրական համագործակցության հնարավորությանը: Սակայն, այս պարագան ամենևին չպետք է պայմանավորի որոշակի երկխոսության և ինչ-ինչ հարցերում վտխզործակցության բացառումը: Մոսկ զգայական հաշիվներով առաջնորդվելը ցանկալի և իրապաշտական չի լինի:

Մյուս կողմից, քրդերի դիրքորոշումը ՀՀ և հայկական խճերի նկատմամբ, սովորաբար, լավագույն դեպքում չեզոք-բարոյացական մակարդակից այն կողմ չի անցնում: Երանք հասկանում են, որ սեփական պետականության բացակայության պայմաններում ՀՀ գոյությունը կարևոր գործոն է, ինչը դիտարկվում է ժամանակավոր հակաթուրքական ճակատ ձևավորելու տեսանկյունից: Փաստորեն, իր նպատակների լրիվ իրականացման առումով վերջնական հաշիվով ռազմաքաղաքականապես ուժեղացող հայկական գործոնը Թուրքիայի քրդերի համար որոշակի վտանգ է:

Իրենց հերթին, որոշակի ծրագրեր ունեցող օտար ուժեր ձգտում են և հետագայում էլ կձգտեն քրդական գործոնը օգտագործել ՀՀ ռազմավարական անվտանգությունը ներքնապես և արտաքնապես խաթրվելու և վերջնական արդյունքում կործանելու նպատակով՝ որպես օժանդակ միջոց: Այդ պատճառով՝ երրորդ կողմի միջոցներով հայ-քրդական հակամարտության արհեստական սրումը ձեռնտու չէ ո՛չ հայերին, ո՛չ քրդերին:

Վարչակազմներն, Թուրքիայի կազմում գտնվող հայկական հողերի վրա քուրք-քրդական ռազմական առճակատումը գործալ ստույգ ձեռնտու է հայկական կողմին: Մասնավորապես, Թուրքիայի այսպես կոչված հարավ-արևելյան շրջանների քույլ զարգացած տնտեսական ենթակառուցվածքների պահպանումն ևս հայկական շահերի օգտին է:

Աշխարհագրական և էթնիկ առումներով «Քրդստանը» ՀՀ-ից բաժանում է բուն քրդաբնակ տարածքները, և քուրքերը ՀՀ (Կովկաս-Միջին Ասիա) պետք է ձգտեն քափանցել հենց այդ «Քրդստանի» վրայով:

Հաշիվի առնելով անցյալի պատմական դասերը՝ պետք է փաստել, որ քրդերը ՀՀ-ի համար, ընդհանուր առմամբ, անբարենույս և անվտանգության հարևաններ են: Ավելին, Թուրքիա-ՀՀ ռազմական առճակատման դեպքում քուրքերի կողմում քրդերի մասնակցության հավանականությունը ամենևին չպետք է բացառել:

Քրդերի հանդեպ հնարավորության սահմաններում ՀՀ-ն կարող է և պետք է կիրառի կրկնակի ստանդարտի սկզբունքը: Ավելին, միշտ հարկ է պատրաստ լինել քրդական հարցում իրադրության հնարավոր փոփոխության և երբեք չառաջնորդվել պատենապաշտ առիթներով:

Այս ամենից ելնելով՝ քրդական գործոնը պետք է օգտագործել որպես ժամանակավոր լծակ աշխարհա-քաղաքական տարբեր զարգացումների

ժամանակ: Մյուս կողմից, հարկ է նկատի ունենալ նրանց առանձին հատվածների տվյալ փուլում դրսևորած հակումներն և շահագրգռությունները:

Տարածաշրջանային համալիր համագործակցության զարգացումը արգելակելուց զատ քաղական գործունե ունի նաև կարևոր խթանիչ դեր: Քրդերի համար գլխավոր թշնամին և ռազմավարական մրցակիցը Թուրքիան է: Այդ պատճառով, քրդական գործունե շուրջ համախմբվելու քավականին հիմնարար եզրեր ունեն ՀՀ-ն, Ռուսաստանը, Իրանը, Հունաստանը, Միդիան և Չինաստանը: Իսկ վերջնական և ավելի ընդհանրացված այս ուժերը կարող են և պետք է կազմեն այն աշխարհաքաղաքական հզոր դաշինքը, որն ի գործ կլինի դիմակայել և արժանի հարված հասցնել ԱՄՆ-ի գովազդած «մոր աշխարհակարգի» վտանգահարույց երազանքին:

AVAG HARUTYUNYAN

THE GEOPOLITICAL ROLE OF THE KURDISH FACTOR

(Summary)

The geopolitical role of Kurdish factor in Near Eastern region is very important. The Armenian-Kurdish relations have historical and political aspects. The Kurdish factor is very actual and vital for Russia, Turkey, Iran, Syria, USA and European Union. Around the Kurdish factor Armenia, Russia and Iran can cooperate against USA.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աղոնց Ն., Հայկական հարց, Ե., 1996:
2. Բալթիկ լիգայի վերջին և 20-րդ դարի սկզբին, Երևան, 1989:
3. Հարությունյան Ա., Սերի դաշնագիրը և քրդական հարցը, «Ազդակ», Ապրիլ 24, Բազադիկ, Բեյրութ, 1999, էջ 97-105:
4. Սասունի Կ., Քիւրտ ազգային շարժումները և հայ-քրտական յարաբերությունները, Բեյրութ, 1969:
5. Государственная Дума и курдская проблема, М., 1998.
6. Южный Курдистан сегодня, М., 1998.
7. Оджалан А., Курдистанская действительность с 19-го века по настоящее время и движение РПК, М., 1998.

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԻԲԱՆԱՆԻ ԿՐՈՆԱ-ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ

Մեր կողմից ուսումնասիրվող խնդիրը գիտական քննարկման է ենթարկվել մի շարք հեղինակների կողմից, որոնցից հարկ է ճշել հատկապես Ն. Հովհաննիսյանին¹, Ա. Ազարիչևին², Լ. Վալեովին³, Վ. Կատինին⁴, Ֆ. Հիքթին⁵, Լ. Բանդերին⁶, Ջ. Հադդադին⁷, Յ. ալ-Հլյուին⁸, Բ. Ջամբրատին⁹, Բ. Բագրասաունուն¹⁰, Հ. Յուսեֆին¹¹ և այլն:

Արաբական պետությունների շարքում իր յուրահատուկ պետական կառուցվածքով աչքի է ընկնում Լիբանանը՝ Արաբական Արևելքի ամենավաղը հանրապետությունը (Լիբանանի տարածքը կազմում է մոտ 10 հազ. քառ. կմ, իսկ բնակչությունը՝ մոտ 3,5 մլն.): Ի տարբերություն այլ արաբական երկրների, որտեղ բնակչության մեծամասնությունը դավանում է իսլամ, Լիբանանում բնակչության 50%-ը քրիստոնյաներ են¹²: Հնուց ի վեր Լիբանանը հյուրընկալ ապաստան է եղել տարբեր, ինչպես քրիստոնյա, այնպես էլ իսլամ կրոնական ուսմունքների համար, որոնք հարյուրամյակների ընթացքում, շնորհիվ իրենց սոցիալական և անտեսական դիմացկունության, կարողացան հաստատվել Լիբանանում, զրյատուեյ, սուեդեյ իրենց առանձին կրոնական համայնքը: Այժմ այդ համայնքները էական և կարևոր դեր են խաղում Լիբանանի ներքաղաքական կյանքում¹³:

Լիբանանում կրոնական խայտաբղետությունը մշտապես օգտագործվում է օտարերկրյա պետությունների կողմից: Սկզբնական շրջանում եվրոպական պետությունները, իսկ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նաև ԱՄՆ-ը, Լիբանանում իրենց ազդեցությունը հաստատելու նպատակով պարբերաբար սրում էին կրոնական տարածայնություններ: Այս գործում, օրինակ, Ֆրանսիան հիմնվում էր քրիստոնյա-մարոնիների վրա (քրիստոնեական առանձին աղանդ), իսկ Անգլիան՝ մուսուլման-դրուզների (իսլամի առանձին աղանդ): 1860թ. Լիբանանում ազդեցության հաստատման համար մղված անգլո-ֆրանսիական պայքարը հանգեցրեց դրուզ-մարոնիական ջարդերի¹⁴:

Ինչպես ճշեցինք, Լիբանանը ունի յուրահատուկ պետական կառուցվածք, որի հիմքում ընկած է կրոնա-դավանական սկզբունքը¹⁵: Կրոնական տարբեր դավանաբաններ այս կամ այն չափով գոյություն ունեն համարյա

բոլոր երկրներում, սակայն այնտեղ դա սկզբունքային դեր չի խաղում այն իմաստով, որ պետական համակարգի և ներկայացուցչական հիմնարկների կառուցման հիմքում չի դրվում կրոնական հատկանիշը¹⁶։ Մինչդեռ Լիբանանում ողջ պետական համակարգը հիմնվում է հենց կրոնական սկզբունքի վրա։

Համաձայն 1943թ. Լիբանանի բոլոր կրոնական համայնքների կողմից, որպես փոխզիջում կնքված «Ազգային դաշինքի» (National Pact), Լիբանանի նախագահը պետք է լինի քրիստոնյա-մարոնի (Լիբանանի անկախության նվաճման պահին երկրի բնակչության 53%-ը քրիստոնյաներ էին, իսկ քրիստոնյաների մեջ 30%-ը՝ հենց մարոնիներ), վարչապետը՝ մուսուլման-սուննի, խորհրդարանի նախագահը՝ մուսուլման-շիա, արտաքին գործերի նախարարը՝ հույն-ուղղափառ, պաշտպանության նախարարը՝ դրուզ և այլն¹⁷։ Կրոնական սկզբունքը պահպանվում է նաև վարչական համակարգում պաշտոնյաների նշանակման և խորհրդարանում պատգամավորական տեղերի բաժանման ժամանակ¹⁸։ Ինչպես տեսնում ենք, պաշտոնյաների ընտրության ժամանակ առաջին պլան է մղվում կրոնական պատկանելությունը, իսկ գործարար հատկանիշը խաղում է միայն երկրորդական դեր, և սա, իհարկե, առաջացնում է այս կամ այն կրոնական համայնքի անդամների գայրոլթը, բացի այդ՝ թուլացնում է պետական համակարգը¹⁹։ Սահմանվեց նաև, որ երկրի ռազմական ուժերի գլխավոր հրամանատարի, պետական անվտանգության ղեկավարի և մի շարք այլ բարձրաստիճան պաշտոններ կարող են զբաղեցնել միայն քրիստոնյա-մարոնի համայնքի ներկայացուցիչները։ «Ազգային դաշինքը» Լիբանանը համարելով արաբական երկիր՝ միաժամանակ ընդգծում է նրա հատուկ քրիստոնեական բնույթը, որով Լիբանանը առանձնացվում է արաբական մյուս պետությունների շարքում²⁰։ Ելնելով կրոնական սկզբունքից՝ ընդունվեց մի կարևոր որոշում ևս. Լիբանանի խորհրդարանում մուսուլման յուրաքանչյուր հինգ պատգամավորի դիմաց ընտրել վեց քրիստոնյա պատգամավոր, որով ապահովվում էր քրիստոնյա պատգամավորների քվային առավելությունը երկրի բարձրագույն օրենսդիր մարմնում, իսկ քրիստոնյա պատգամավորների մեջ՝ մարոնիների²¹։

Լիբանանը բաղկացած է մի շարք քրիստոնյա՝ մարոնի, ուղղափառ, կաթոլիկ, բողոքական, հայ լուսավորչական, և իսլամ՝ սուննի, շիա, դրուզ և այլ համայնքներից։ Լիբանանում բնակչության պաշտոնական մարդահամար կատարվել է 1930-ական թվականների սկզբին։ 1977թ. ֆրանսիական մի կազմակերպության կողմից կատարված ժողովրդագրական ուսումնասիրությունները հանգեցրեցին հետևյալ անսպասելի տվյալների։ Ըստ այդ ուսումնասիրությունների՝ երկրում մուսուլման-շիաների թիվը կազմում էր 850-900.000 մարդ (28%), քրիստոնյա-մարոնիների թիվը՝ 750-800.000 (24%), մուսուլման-սուննի՝ 600.000 (19%), մուսուլման-դրուզներ՝ 250.000 (8%), հույն ուղղափառներ՝ 300.000 (9%), հայ լուսավորչականներ՝ 250.000 (8%), հույն

կաթոլիկներ՝ 200.000 (6%): Այսօր Լիբանանի մուսուլմանները կազմում են երկրի բնակչության կեսից ավելին, չնայած որ «Ազգային դաշինքի» ստորագրման պահին նրանք կազմում էին երկրի բնակչության 47%-ը²³: Վերջին տարիներին Լիբանանում մուսուլման բնակչության թվաքանակի կտրուկ աճը որպես հետևանք պահանջում էր կրոնա-դավանական համակարգում ռաշակի բարեփոխումներ:

Լիբանանի ամենաազդեցիկ համայնքը քրիստոնյա-մարոնիների համայնքն է: Չնայած Լիբանանը մարոնի կրոնական ուսմունքի բնօրրանը չէ (ըստ ավանդույթի՝ սուրբ Մարոնը, որից և համայնքը ստացել է իր անվանումը, իր ուսմունքը տարածում էր ներկայիս Միջին Արևելքում), սակայն այն միշտ եղել է հյուրընկալ ապաստան մայրնիների համար, և վերջիններս Լիբանանը համարում են իրենց հայրենիքը²⁴: Մարոնի ղեկավարները ակտիվորեն մասնակցում էին «Ազգային դաշինքի» մշակմանը, քանի որ արդեն այն ժամանակ նրանք բավական կշիռ ունեին Լիբանանի ներքաղաքական կյանքում: «Ազգային դաշինքի» ստորագրմամբ մարոնի վերնախավին հաջողվեց տիրապետող դիրք զբաղել պետության կառավարման մեջ: Դրա հետևանքով հասարակական-քաղաքական շրջաններում և կառավարման բնագավառում ստորադաս վիճակում էին գտնվում ոչ միայն իսլամ համայնքները, այլ նաև մյուս քրիստոնյա համայնքները և՛ ուղղափառ, կաթոլիկ, հայ և բողոքական: Մարոնի ղեկավարները միշտ աչքի են ընկել իրենց արևմտամետ հայացքներով: Լիբանանում 1958 և 1975 թվականներին բռնկված երկու քաղաքացիական պատերազմների հիմնական պատճառներից մեկը հենց հասարակության պատակտվածությունն էր: Մի կողմից դեպի արաբական աշխարհ կողմնորոշման կողմնակիցներ (հիմնականում իսլամ բնակչությունը), մյուս կողմից՝ արևմտքի հետ մերձեցման կողմնակիցներ (հիմնականում մարոնի ղեկավարները), որոնք սկզբում ամեն կերպ Լիբանանը վարձում էին ներքաշել տարբեր ռազմական դաշինքների մեջ (օրինակ՝ Բաղդադի դաշինքը), սպա վարձում էին մերձեցնել Իսրայելի և ԱՄՆ-ի հետ: Նույնիսկ անկախ Լիբանանի առաջին նախագահ Ք.Շամունը, իսխտեղով «Ազգային դաշինքով» հաստատված Լիբանանի արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքը, Լիբանանը կապեց «Էյզեն-հաուերի ղոկտրինայի» հետ, որով նախատեսվում էր օգնության տրամադրում Մերձավոր Արևելքի արևմտամետ ռեժիմներին: Սա երկրում առաջացրեց ժողովրդական ցասում և Լիբանանում 1958թ. բռնկվեց առաջին քաղաքացիական պատերազմը²⁵:

Լիբանանյան բոլոր կլանական համայնքները ունեն իրենց քաղաքական կուսակցությունները: Ամենաազդեցիկ մարոնի քաղաքական կուսակցությունը Լիբանանյան փառանգներ (Հիզր ալ-Քաթաիբ ալ-Լաբնանի) կուսակցությունն է, որը կազմակերպչական առումով հիմնվում է զինվորական սկզբունքի վրա: Կուսակցության անդամների 83%-ը մարոնիներ են, 13%-ը՝ քրիստոնյա այլ համայնքի ներկայացուցիչներ, իսկ մնացած 4%-ը (համա-

ձայն պաշտոնական տվյալների) մուսուլման-շիա համայնքի ներկայացուցիչներ²⁷: Հաջորդ կուսակցությունը, որը արտահայտում է մարտնչի համայնքի խոշոր առևտրական և ֆինանսական բուրժուազիայի շահերը Ազգային լիբերալ (Հիզր ալ-կաումի ալ-ահրար) կուսակցությունն է, որը հիմնվել է 1958թ. Լիբանանի նախկին նախագահ Ք.Շամունի կողմից՝ այստեղից էլ կուսակցության անդամները հաճախ կոչվում են շամունականներ²⁸: 1975թ. Լիբանանում բռնկված քաղաքացիական պատերազմի տարիներին այս երկու կուսակցությունները կազմում էին «Լիբանանյան ճակատի» մեջ միավորվա աջ ուժերի հիմնական կորիզը:

Լիբանանում բոլոր կրոնական համայնքներն էլ միատարր չեն: Նրանցից յուրաքանչյուրում բախվում են անձնական, տնտեսական և սոցիալական շահեր²⁹: Գոյություն ունի անընդհատ շարունակվող պայքար նրանց մեջ, ովքեր ցանկանում են լիբանանյան համայնքները տեսնել մեկ ամբողջական, խաղաղ, անկախ պետության շրջանակներում, և նրանց միջև, ովքեր ձգտում են մասնատել Լիբանանը առանձին ինքնավար համայնքների³⁰: Նույնիսկ փաղանգներն և շամունականների միջև ծավալվում էր ներքին պայքար՝ առաջատար, ղեկավար ուժ լինելու համար, և այդ պայքարից հաղթանակով դուրս եկան փաղանգները, որոնք 1980թ. իրենց ենթարկեցին շամունականներին³¹: Ազդեցիկ մարտնչի կազմակերպություն է մաս Բայնուն Էդդեի ղեկավարած Ազգային թյակ կուսակցությունը, որը սակայն հանդես էր գալիս փաղանգների քաղաքական գծի դեմ՝ դատապարտելով նրանց կապերը Բարայեի հետ³²:

Լիբանանում քրիստոնյա համայնքների մեջ իր ուրույն տեղն ունի հայ համայնքը: Դեռևս 1861թ., երբ Օսմանյան սուլթանը հարկադրված էր ընդունել Լիբանանի այսպես կոչված «օրգանական կարգավիճակը», որով ճանաչվում էր Լիբանանի ինքնավարությունը Օսմանյան կայսրության շրջանակներում: Լիբանանի առաջին մութասարիֆ՝ կառավարիչ նշանակվեց ազգությամբ հայ Կարապետ Արթին Դաուդյանը: 1861-1914թթ. լիբանանյան մութասարիֆությունն ունեցավ ութ կառավարիչ, որոնցից չորսը հայեր էին: Այսօր Լիբանանի խորհրդարանում հայերը ներկայացված են յոթ պատգամավորներով, իսկ երկրի կառավարության մեջ նախարարի մեկ պաշտոնը պատկանում է հայ համայնքի ներկայացուցչին³³: Լիբանանի հայ համայնքը ներկայացված է երեք ավանդական կուսակցություններով (ՀՅԴ, ՌԱԿ, ՍԴՀԿ), որոնք ըստ իրենց քաղաքական կողմնորոշման համագործակցում են լիբանանյան համապատասխան կուսակցությունների հետ³⁴:

Լիբանանում իսլամ համայնքների շարքում առավել նախապատվելի դիրքեր ունի սուննի համայնքը, և երկրի վարչապետները նշանակվում են հենց այս համայնքից: Լիբանանի մուսուլմանները հաճախ սուննի համայնքին մեղադրում են այն բանում, որ վերջինս համագործակցում է մարտնչիների՝ մասնավորապես փաղանգների հետ: Սակայն սուննիները, որոնք որպես

խլամ համայնք՝ ներկայացնելով Լիբանանի մուսուլմանների շահերը, չեն կարող ռազմավարական դաշինքի մեջ շինել երկրի նախագահի հետ. որը քրիստոնյա-մարոնի է³⁷:

Լիբանանյան հաջորդ իսլամ համայնքը՝ լիբանանյան շիաների համայնքն է: Չնայած, որ շիաները կազմում են Լիբանանի ողջ բնակչության 28%-ը (մոտ 1 մլն. մարդ), նրանք ամենաչքայնացվածն են լիբանանյան բոլոր կրոնական համայնքների շարքում³⁸: 1974թ. շիա համայնքի ներսում իմամ Մուսա աւ-Սադրի կողմից հիմնադրվեց Ամալ հասարակական շարժումը. որին կից հետագայում ձևավորվեցին կիսառազմական ոստիկանական ջոկատներ³⁹: 1980-ական թվականների կեսերին տեղի ունեցավ շիա համայնքի ընդհանուր արմատականացում: Շիաները պահանջում են ավելի լայն քաղաքական ներկայացուցչություն երկրի կառավարման գործում: Փահանջները երբեմն մեղադրում են լիբանանյան շիաներին այն բանում, որ նրանք հանդիսանում են ներկայիս Իրանի կամակատարները⁴⁰: Այդուհանդերձ մշեք, որ շիական երկրորդ Հիզբոլլահ կազմակերպությունը, որը ստեղծվեց շիական ծայրահեղականների կողմից, վայելում է Իրանի հովանավորությունը և սերտ կապված է վերջինիս հետ⁴¹: Լիբանանյան շիաների երկու հիմնական կազմակերպությունների (Ամալի, որը սերտորեն համագործակցում է Միլիայի հետ, և Հիզբոլլահի, որը կապված է Իրանի հետ ու քարոզում է հասարակության վերակազմավորում իսլամական սկզբունքների հիման վրա) միջև գոյություն ունի ներքին պայքար, որը ներհամայնքային հակասությունների վառ օրինակ է⁴²: Երկու կազմակերպություններից և ոչ մեկը չի զանկանում կորցնել իր ազդեցությունը ողջ շիա համայնքի վրա:

Լիբանանի իսլամ համայնքների մեջ էական դեր է խաղում լիբանանյան դրուզների համայնքը: Պետք է նշել, որ 50-60-ականներին Լիբանանում տեղի ունեցած սոցիալական վտաճիկությունները ակտիվացրեցին նաև դրուզներին, որոնք Ք. Ջումրատի ղեկավարությամբ սկսեցին բողոքել երկրի քաղաքական բաժանվածության դեմ՝ պահանջելով իրենց համայնքի համար էլ ավելի մեծ մասնաբաժին⁴³: Հիմնականում դրուզներից է կազմված Առաջադիմական սոցիալիստական կուսակցությունը, որի ղեկավար՝ Ք. Ջումրատը գտնում էր, որ Լիբանանում խաղաղության պահպանմանը կարող է նպաստել կրոնա-դավանական սկզբունքից հրաժարումը, որը թույլ կտար բոլոր համայնքներին հանդես գալ միևնույն հարթության վրա: 1975թ. Լիբանանում բռնկված երկրորդ քաղաքացիական պատերազմի ընթացքում Առաջադիմական սոցիալիստական կուսակցության ղեկավարությունը բոլոր հայրենասիրական, ծախս ուժերին միավորեց Ազգային շարժման մեջ, որոնց հիմնական նպատակն էր Լիբանանը հեռու պահել պատակտումից, հաստատել խաղաղություն և հնարավորին չափ Լիբանանում թուլացնել արևմտյան ուժեղ ազդեցությունը⁴⁴:

Լիբանանում կրոնական համայնքների միջև լարվածությունը, սոցիալական անհավասար պայմանները, որոշ չափով նաև կրոնա-դավանական

համակարգը, մայրնի ղեկավարների արևմտամետ քաղաքականությունը, ինչպես նաև արտաքին խթանիչները՝ մասնավորապես Իսրայելը և նրա ապակայունացնող գործողությունները Լիբանանում, հանգեցրեցին այն բանին, որ 1975թ. երկրում բռնկվեց երկրորդ քաղաքացիական պատերազմը, որը որոշ ընդհատումներով տևեց մոտ 15 տարի՝ Լիբանանին պատճառելով մեծ նյութական և մարդկային կորուստներ։ Քաղաքացիական պատերազմի առաջացմանը խթանեց նաև պաղեստինցիների ներհուսքը Լիբանան (մասնավորապես 1970թ. Հորդանանի ճգնաժամից հետո), որոնք դարձել են Լիբանանի համայնքային կառուցվածքի բաղկացուցիչ մասը։ Կազմելով Լիբանանի բնակչության 15%-ը, պաղեստինցիները սկսեցին լրջորեն ազդել երկրի քաղաքական կյանքի վրա։ Նրանց քանակական աճը, զինումն ու հզորացումը խախտեց Լիբանանում համայնքային ուժերի միջև հաստատված փոխորոն հավասարակշռությունն ու առաջացրեց քրիստոնյա-մարոնիների դժգոհությունն ու գործնական հակազդեցությունը⁴¹։

Լիբանանյան ճգնաժամը հնարավոր դարձավ հաղթահարել միայն 1989թ. հոկտեմբերին, Թաիֆի համաձայնագրի ստորագրմամբ, որը նախատեսում էր ներքին քաղաքական վերավիճակներ և Լիբանանի տարածքում լիբանանյան պետականության վերահաստատում։ Կատարված սահմանադրական բարեփոխումները ուղղված էին երկրի վարչապետի լիազորությունների ընդլայնմանը։ Նոր սահմանադրությունը չեղյալ էր համարում կրոնա-դավանական սկզբունքի կիրառությունը պետական որոշ բարձրաստիճան պաշտոնյաների նշանակման ժամանակ⁴²։ Սահմանվեց նաև, որ երկրի խորհրդարանում քրիստոնյաների և մուսուլմանների ներկայացուցչությունը պետք է լինի հավասար 5:5, նախկինում գործող՝ 6:5 համամասնության փոխարեն։

Լիբանանում դժվարությամբ ձեռք բերված խաղաղության պահպանման համար անհրաժեշտ է բոլոր կրոնական համայնքների միջև հավասարակշռության հաստատում, ինչպես նաև կրոնա-դավանական համակարգում ուղղակի բարեփոխումներ, որոնք ետին պլան մղելով կրոնական նախապատվությունները՝ առաջնային կհամարեն Լիբանանի անկախությունը, անվտանգությունը ու ամբողջականությունը։ Այստեղ էական և կարևոր է երկրի նախագահի ճկուն քաղաքականությունը, որը հիմնվելով բոլոր կրոնական համայնքների վրա՝ կարող է Լիբանանը զերծ պահել միջհամայնքային բախումներից։ Այս գործում որոշակի հաջողություններ ունի Լիբանանի ներկայիս նախագահ Էմիլ Լահուդը, որը լավ հարաբերությունների և ռազմավարական դաշինքի մեջ է երկրի վարչապետ Մելիմ Հոսի, խորհրդարանի նախագահ Նաբիհ Բեքրի և մի շարք այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ, որոնք ներկայացնում են Լիբանանի իսլամ համայնքները։

LILIT HARUTUNIAN

THE CONFESSIONAL POLITICAL SYSTEM OF LEBANON

(Summary)

The paper deals with the Lebanese confessional political system, which has become an oddity in the Arab world. Lebanon consists of several Christian and Muslim communities: the Maronite, the Greek Orthodox, the Greek Catholic, the Armenian, the Sunni, the Shi'i, the Druze and etc. In the unwritten National Pact of 1943, the major religious communities reached a compromise accord that proved thus far impervious to modification. Under the arrangement, the President of the Republic must always be a Maronite, the prime-minister a Sunni Muslim, and the President of the Parliament a Shi'i Muslim. The apportionment of deputies in the Parliament rests on an immutable numerical formula for sectarian representation, five Christians to every five non-Christians. The President of Lebanon will make use of his real power if he is in military alliance with the Muslim leaders.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ն. Հովհաննիսյան, Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939-1958), Երևան, 1967: նույնի, Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ հասարակական դիրքորոշումը (1975-1982), Երևան, 1982:
2. А. Агарышев, От Кэмп-Дэвида к трагедии Ливана, М., 1983.
3. Л. Вольнов, Ливанский дневник, М., 1980.
4. В. Катин, По Ливану, М., 1961; В. Катин, Ливан, Экономика и внешняя торговля, М., 1961.
5. Ph. Hitti, History of Syria including Lebanon, Beirut, 1950.
6. L. Binder, Politics in Lebanon, New York, 1966.
7. G. Hadad, Fifty years of modern Syria and Lebanon, Beirut, 1950.
8. Ю. Х. Аль-Хилу, Экономика Ливана, М., 1959.
9. Զ. Ջոնսթրաթ, Հակիկա ալ-սաուրա ալ-Լուրնանիյա (արաբերեն՝ Լիբանանյան հեղափոխության ճշմարտություն), Բեյրութ, 1959:
10. Ք. Բազրատունի, Աս-Սալամ ալ-Մաֆկուդ (արաբերեն՝ Կորցրած խաղաղություն), Բեյրութ, 1984:
11. Choueire Youssef, State and Society in Syria and Lebanon, St. Martin's Press, New York, 1994.
12. Ю. Х. Аль-Хилу, Экономика Ливана, М., 1959, с.13.
13. "За рубежом", N14 (1239), 1984г.
14. Ю. Х. Аль-Хилу, там же, стр. 14.
15. Ն. Հովհաննիսյան, Լիբանանյան ճգնաժամը ..., էջ 12; Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939-1958), Երևան, 1967, էջ 65:

16. J.C. Hurewitz, Confessional Democracy, Lebanon, Middle East Politics: The Military Dimension, 1969, p. 381.
17. Lebanese Democracy in its International Setting, "The Middle East Journal", vol. 17, Autumn 1963, pp. 487-506.
18. А. Агариев, От Кэмп-Дэвида к Трагедии Ливана, М., 1983, стр. 19.
19. Ն. Հովհաննիսյան, Լիբանանյան ճգնաժամը..., էջ 8:
20. J.C. Hurewitz, Confessional Democracy, p. 381.
21. "За рубежом", N14 (1239), 1984г.
22. Նույն տեղում:
23. Л. Вольнов..., стр. 14.
24. Նույն տեղում, էջ 13:
25. Նույն տեղում:
26. "За рубежом", N 14 (1239). 1984г.
27. Նույն տեղում:
28. Ն. Հովհաննիսյան, Լիբանանյան ճգնաժամը..., էջ 27:
29. Նույն տեղում:
30. Մանրամասն տե՛ս Ն. Հովհաննիսյան, Լիբանանյան ճգնաժամը..., էջ 34-45:
31. Ն. Հովհաննիսյան, Ազգային-ազատագրական պայքարը..., էջ 91:
32. "За рубежом", там же.
33. A. Nizar Hamzeh and R. Hrair Dekmejian, A Sufi Response to Political Islamism: Al-Ahbash of Lebanon, "The Middle East Journal" 28 (1996), No 2 May, p. 217-229.
34. Ближний Восток и Международное право, М., 1992. стр. 91.
35. "За рубежом", там же.
36. Арабский мир, Три десятилетия независимого развития, М., 1990. стр. 191.
37. Նույն տեղում, էջ 291:
38. Ռ. Կարապետյան, Սիրիա-ամերիկյան հարաբերությունները (1967-1996), էջ 70:
39. Л. Вольнов..., стр. 23.
40. Ռ. Կարապետյան, նույն տեղում:
41. ТАСС, 10.09.1990.

ԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**ՕՍԼՈ 2 ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՐԵՍԻՆՅԱՆ
ՀԱՎԱՍՏԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԶԱՅԼ**

1993թ. կնքված Օսլոյի 1-ին համաձայնագիրը հնարավորություն տվեց՝
1. 1994թ. ապրիլի 29-ին Փարիզում ՊԱԿ-ի և Բարայելի միջև կնքել
անտեսական հարաբերությունների վերաբերյալ համաձայնագիր, որի ա-
ռանցքը հանդիսացավ Մերձավոր Արևելքում յափազանց մեծ կարևորա-
յուն ունեցող ջրային ռեսուրսների (արևմտյան ափի և Ղազա) օգտագործ-
ման հարցը՝
2. 1994թ. մայիսի 4-ին Կահիրեում կնքվեց համաձայնագիր ՊԱԿ-ի և Բար-
այելի միջև, որը նախատեսում էր իսրայելական զորքերի դուրսբերում Ղա-
զայի և Երիզրովի շրջաններից²: Իսկ մինչև 1999թ. մայիսի 4-ը որոշվելու էր
Պաղեստինի վերջնական կարգավիճակի և անկախության հարցը:
3. Օսլոյի համաձայնագիրը հնարավորություն տվեց նաև 1994թ. հուլի-
սին Բարայելի և Հորդանանի միջև կնքել խաղաղության համաձայնագիր և
վերջ տալ երկու երկրների միջև պատերազմական վիճակին³:
4. 1994թ. օգոստոսի 24-ին Էրեց վայրում Բարայելի և ՊԱԿ-ի միջև
կնքվեց իշխանության վախճանման վերաբերյալ համաձայնագիրը, որը
հնարավորություն տվեց ՊԱԿ-ին ստանձնելու իրական իշխանությունը՝
Եվ վերջապես 1995թ. սեպտեմբերի 28-ին կնքվեց Օսլոյի 2-րդ համաձայ-
նագիրը, ըստ որի իսրայելական զորքերը դուրս բերվեցին արևմտյան ափի
6 քաղաքներից և 400 գյուղերից⁴: Այս համաձայնագրին հարկ ենք համա-
րում անդրադառնալ մի շարք նկատառումներով:
Համաձայնագիրը, որ ստորագրվեց սեպտեմբերի 28-ին Վաշինգտո-
նում⁵, դիվանագիտական փաստաթղթերում անվանված է «Օսլոյի 2-րդ հա-
մաձայնագիր»: Այն կրում էր հետևյալ անվանումը. «Ժամանակավոր իսրա-
յելա-պաղեստինյան համաձայնագիր արևմտյան ափի և Ղազայի շուրջ»:
Համաձայնագրի կնքմանը որպես վկաներ ներկա էին ԱՄՆ-ի, Եգիպտոսի
արարական հանրապետության, Հորդանանի և Նորվեգիայի քաղաքապետ-
ությունների, Եվրամիության և Ռուսաստանի Դաշնության ներկայացուցիչնե-
րը: Ընդհանուր առմամբ համաձայնագիրը նախատեսում էր.

1. Իսրայելական գործերի դուրսբերում արարական 6 քաղաքներից և 400 գյուղերից:

2. Նախատեսվում էր նաև 1996-ին անցկացնել պաղեստինյան Խորհրդի ընտրություններ, որը ունենալու էր օրենսդիր և գործադիր իշխանություն:

Չնայած համաձայնագրի նախաբանի բնույթին, մեր կարծիքով, համաձայնագիրը ավելի շատ պաշտպանում էր կողմերից մեկի շահերը: Նախաբանում ասվում էր.

«Համաձայն մերձավորարևելյան խաղաղության գործընթացի շրջանակներին՝ հաստատված Մադրիդում, կողմերը հաստատում են իրենց հավատարմությունը հակամարտությանը վերջ տալու գաղափարին: Կողմերը հավատարիմ են խաղաղ գոյակցության և փոխադարձ վստահության սկզբունքին. ճանաչում են միմյանց քաղաքական և օրինական իրավունքները, ճանաչում են պաղեստինյան -Պրիստինա- Կողմերը համաձայն են, որ ժամանակավոր փուլը սկսվում է 1994թ. մայիսի 4-ին և չպետք է զերբազանցի 5 տարին: Կողմերը համաձայն են, որ վերջնական կարգավիճակի համար բանակցությունները պետք է սկսվեն հենց որ դա հնարավոր լինի, քայլ ոչ ուշ քան 1996թ. մայիսի 4-ը: Կողմերը հաստատում են միմյանց փոխադարձ ճանաչումը»:

Ինչպես տեսնում ենք, համաձայնագրի նախաբանը այնքան էլ միակողմանի բնույթ չունի. սակայն դա չի պահպանվում համաձայնագրի բուն տեքստում և առավել ևս հավելվածներում: Ընդհանրապես Օսլո 2-րդը նախօրոք կնքված իսրայելա-պաղեստինյան համաձայնագրերից առավել կարևորն էր: Ճիշտ է, շրջադարձ է համարվում 1993-ի Օսլոյի 1-ին համաձայնագիրը. սակայն պաղեստինցիներին կոնկրետ ինքնավարություն, փաստաթղթում նշված կոնկրետ տարածքների շրջանակներում տալիս է 1995թ. Օսլոյի 2-րդ համաձայնագիրը: Այլ հարց է՝ որքանով է այն պաշտպանում պաղեստինցիների շահերը և որքանով է հնարավոր դրա իրականացումը: Օսլոյի համաձայնագրի կարևորությունը մյուս կնքված համաձայնագրերի հանդեպ մեր կարծիքով կայանում է նաև նրանում, որ այս համաձայնագիրը վերջնականապես որոշում է պաղեստինյան Խորհրդի թվակազմը. Խորհրդի գործունեության շրջանակները և բնույթը, պաղեստինյան ռատիկանության թվակազմը, ստեղծման կարգը և վերջապես ավելացվում են պաղեստինցիներին հանձնվելիք տարածքները: Չնայած դրան, ինչպես արդեն նշվեց, համաձայնագիրը ուներ նաև լուրջ թերություններ: Հաշվի առնելով այս հանգամանքները, նպատակահարմար ենք համարում մի վտրք ավելի անդրադառնալ սույն համաձայնագրին և կատարել որոշ վերոնշյալներ:

Մինչև պաղեստինյան Խորհրդի ընտրությունները, որոնք տեղի էին ունենալու 1996թ., պաղեստինցիները հանձն էին առնելու ամբողջ պատասխանատվությունը մերթին անվտանգության, հասարակական կարգուկանոնի և քաղաքացիական վարչության համար 6 քաղաքներում և Հերբոնի մի մա-

սում (չրջան A). ինչպես նաև վարչական և հասարակական կարգուկանոնի համար B գոտու գյուղերում և քաղաքներում: Դա նշանակում է, որ պաղեստինցիները պատասխանատու են վերոհիշյալի համար արևմտյան ափի 27 տոկոսում, որտեղ սպորում է պաղեստինյան բնակչության 98 տոկոսը: B գոտու վարչական պատասխանատվությունը մնում է Իսրայելի վրա: Բացառապես Իսրայելին է մնում պատասխանատվությունը C գոտու համար: Այդ գոտին սահմանված է որպես բնակավայրեր, ապահովության գոտիներ և հաղորդակցության ուղիներ: Իսրայելական զորքերի դուրսերումը նախատեսված է վաղերով: Դուրսերման առաջին փուլը կսպված է A և B գոտու հետ և պետք է ավարտվի պաղեստինյան Խորհրդի ընտրություններից 22 օր առաջ: Հետագա դուրսերումը ծրագրավորված է C գոտու համար և պետք է տեղի ունենա Խորհրդի բացումից հետո, 18 ամսվա ընթացքում: Այն լինելու է 3 վաղերով: Եթե ամեն ինչ ընթանա ծրագրին համապատասխան, վերջնական կարգավիճակի համար համաձայնագիրը պետք է կնքվեր դարսվերջին և այդ դեպքում պաղեստինցիները որոշակի իրավասություններ կունենային ամբողջ արևմտյան ափի վրա, բացառությամբ ուսումնական գոտիների, բնակավայրերի և Արևելյան Երուսաղեմի (մոտ 90 տոկոս):

Քարտեզները մանրամասնելով A, B, C գոտիների դիրքերը՝ բարձրացնում են բավականին հարցեր: A շրջանի քաղաքները լայնորեն բաժանված են մեկը մյուսից: Քայքայիլան և Հերբոնը լիովին շրջապատված են C շրջանով: Մյուս քաղաքները մասամբ են սահմանակից B գոտու գյուղերին, այսինքն պաղեստինցիների կողմից վերահսկվող տարածքին: C գոտին շրջապատում է նաև Նաբլուսի Բեթլեհեմի և Ռամալահի մեծ մասը, որոնք մույնպես համընկած են պաղեստինցիներին:

B գոտին, որտեղ պաղեստինցիներին առաջարկվում է ինքնակառավարում, բացառությամբ ապահովության հարցերի և արտաքին հարաբերությունների, բաժանված է մոտ 20 միմյանց հետ սահմաններ չունեցող շրջանների: Դրանք էլ իրենց հերթին բաժանված են 80 մանր հողակտորների, որոնք բոլորը շրջապատված են C գոտու հողերով: Այդ մասնատված գոտիները միմյանցից անջատված են նաև արևելք-արևմուտք ճանապարհով, որը միմյանց կապում է արևմտյան ափը, Իսրայելը և Հորդանանը: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ճանապարհների հսկողությունը դրված է Իսրայելի վրա, ապա պարզ կլինի պաղեստինյան տարածքների՝ միմյանցից կտրված լինելու աստիճանը: Համաձայնագիրը չի պարունակում ոչ մի սահմանափակում հրեական բնակավայրերի կառուցման, ոչ մի արգելք պաղեստինյան աշխատավորների առաջ սահմանների փակման, որը սպասիչ է պաղեստինյան տնտեսության համար, ոչ մի երաշխիք իսրայելական զորքերի դուրսերման ժամկետացանկի պահպանման հարցում: Ճիշտ է, համաձայնագիրը նախատեսում է ստեղծել իսրայելա-պաղեստինյան միացյալ կոմիտեներ՝ քաղաքացիական հարաբերությունների, կոորդինացման և համագործակցության, տարածաշրջանային հարաբերությունների, փոխա-

դարձ անվտանգության, կապի, ջրային, տնտեսական, այնուամենայնիվ միացյալ կոմիտեները հնարավորություն են տալիս Իսրայելին տեղեկացված լինել իրադարձությունների ընթացքին և վետո դնել որևէ քանի վրա, որը իրեն ձեռնտու չէ: Փաստորեն, ոչ մի հարցում քաժամում չի նախատեսված: Օրինակ՝ ընտրությունների վերաբերյալ փաստաթղթի 2-րդ հավելվածի 28-րդ հոդվածի համաձայն. «Պաղեստինյան կողմը պետք է Իսրայելին տեղեկացնի ցանկացած փոփոխության մասին՝ կապված բնակչության գրանցման և բնակչի բնակության վայրի փոփոխության հետ»⁴: Պաղեստինյան իշխանությունները իրավունք ունեն մշտական բնակչություն շնորհել ներդրողներին, ամուսնական զույգերին և երեխաներին, քայց միայն Իսրայելի իշխանությունների նախնական հավանությունից հետո: Փաստորեն պաղեստինցիները կատարելու են վարչական աշխատանքը, իսկ Իսրայելը հսկելու է այն: Այս համաձայնագրեր օրինականացնում է մեկուսացման համակարգը, որը ուրվագծվել էր դեռևս Կահիրեի համաձայնագրով: Պաղեստինցիները և վերաբերյալ տարածքներում ապրող 130.000 երես բնակիչները չհաշված արևելյան Երուսաղեմի շրջակայքի բնակիչները համազայակցելու են սոցիալական մեկուսացման և անհավասարության պայմաններում: Օսլո 2-րդը ապահովում է վերահսկողության մեկուսացված, դուալիստական սիստեմ: Իսրայելը ունենալու է օրինական իրավասություններ արևմտյան ափում ապրող երեսների նկատմամբ, մույնիսկ եթե նրանք հանցանք են կատարում ինքնավարության որևէ գոտում: Պաղեստինյան ոստիկանության նախնական կասեցման կետերը կարող են դիմել իսրայելական իշխանություններին միայն տվյալ անձի ինքնությունը հաստատելու համար, իսկ փնտրել կամ ձերբակալել նրանց պաղեստինյան ոստիկանությունը իրավունք չունի:

«Եթե՝ երեսան հանցանք է գործում ինքնավարության տարածքում, պաղեստինյան ոստիկանությունը մի՞նչև իսրայելական ռազմական ուժերի ժամանումը կարող է կասկածյալին պահել տեղում՝ ապահովելով նրա պաշտպանությունը»⁵:

Պաղեստինյան անվտանգության ուժերը երբեք իրավունք չունեն կանգնեցնելու իսրայելական զինվորներին կամ հարցնել նրանց փաստաթղթերը: Հրեա բնակիչները և նրանց այցելուները կարող են ճանապարհորդել իրենց 140 բնակավայրերի միջև ցանկացած ճանապարհով՝ առանց սահմանափակումների, ի տարբերություն պաղեստինցիների: Այդ մասին պարզորոշ ասվում է 11-րդ հոդվածի առաջին հավելվածում:

Վաշինգտոնյան համաձայնագիրը նախատեսում է նաև պաղեստինյան ոստիկանության փակագծեր: Ոստիկանությունը կազմակերպվելու է 6 խմբերով և ունենալու է 30.000 աշխատողներ: Համաձայնագիրը մանրամասնում է՝ որտեղ պետք է դրանք տեղակայվեն, ինչ զենք պետք է օգտագործեն, ինչ ճանապարհներ և երթուղիներ պետք է վերահսկեն իսրայելա-

կան զինվորականների հետ և ինչպես պետք է երկու կողմերը համագործակցեն՝ ահաբեկչությանը վերջ տալու համար:

Բայց երկու կողմերի դրուսթյունը դժվար է գնահատել հավասար: Պաղեստինյան անվտանգության աժերը մույնիսկ իրավունք չունեն ազատորեն երթևեկել A գոտու, այն քաղաքները, որտեղից մախ և առաջ պետք է դուրս բերվեն իսրայելական զորքերը, և B գոտու միջև, քաղաքներ և գյուղեր, որտեղ պաղեստինցիները ռմենալու են 25 ոստիկանական կետեր: Ավելին, պաղեստինյան ոստիկանությունը իրավունք չունի ազատորեն երթևեկել B գոտու մի վայրից մյուսը: Արտակարգ տեղաշարժի գնալու մասին քաղաքացիները 13-րդ հոդվածի II-VI կետերով:

«Պաղեստինյան ոստիկանության տեղաշարժը B գոտու վայրերից դուրս, որտեղ կան պահակակետեր, պետք է իրագործվի գործին առնչվող միացյալ մարզային կոմիտեի հետ կոորդինացիայից և վավերացնելուց հետո: B գոտուց ամբողջական դուրսբերումից միայն 3 ամիս հետո կոմիտեն կարող է որոշել պաղեստինյան ոստիկանության շարժը B գոտու ոստիկանական կետերից դեպի B գոտու պաղեստինյան քաղաքներ և գյուղեր, այն էլ միայն այն ճանապարհով, որոնք օգտագործվում են բացառապես պաղեստինցիների կողմից: Ըարժը լինելու է միայն կոմիտեի որոշումից հետո»¹⁰:

Փաստորեն, այսպիսի շարժի ծրագրի կոորդինացիան, մախրան վավերացումը համապատասխան մարզային կոմիտեի կողմից, ներառելու է մախագծված ծրագիր, այդ թվում ոստիկանների քիվը, զենքերի տեսակը և քանակը, փոխադրամիջոցները: Այն ներառելու է մախ մախապատրաստությունների մանրամասներ՝ երաշխավորելով շարունակվող կոորդինացիան համապատասխան հաղորդակցման գծերի միջոցով, ներառյալ շարժի մասնակալները, երթուղին, տեղությունը:

Առաջին հոդվածի առաջին հավելվածում սսվում է. «Համաձայն արևմտյան ափի և Ղազայի տարածքային ինտեգրացիայի պահպանման սկզբունքի, որպես միասնական տարածքային ամբողջականություն, իրագործելով համաձայնագրի կետերը, կողմերը ապահովելու են բնական տեղաշարժ արևմտյան ափում, ինչպես նաև արևմտյան ափի և Ղազայի միջև»¹¹:

Եթե սա իրագործվի, ապա ըստ իսրայելական տեսակետի՝ այն կարող է վտանգել վերջինիս ապահովությունը: Իրականում շարժի ազատություն խոստացված է պաղեստինցիների միայն մեկ խմբի, այն էլ որոշակի վալում: Պաղեստինցի պատանդները, ազատված դեռևս Կանիթի համաձայնագրով, քայց բանտարկված Երիբովում, կարող են վերադառնալ իրենց աները արևմտյան ափի ցամաքած վայրում: Խոսքը վերաբերում է մասնատվալ ազատ շարժին: 5284-ից ավելի պաղեստինյան պատանդներից 2600-ը պետք է ազատ արձակվեն երեք փուլերով: Համաձայնագիրը ուրվագծում է

ևս 8 կատեգորիաների պատկանող պաղեստինցի բանտարկյալների. որոնք ի վերջո ազատ են արձակվելու:

Պաղեստինյան խորհրդի ընտրությունները տեղի են ունենալու 1996թ. հունվարին. մախթան Ռամադան ամիսը: Միաժամանակ պետք է ընտրվի խորհրդի գործադիր իշխանությունը՝ Ra,ees-ը: Ընտրությունները տեղի են ունենալու A և B գոտիներից խորհրդակազմի կազմի դադարեցումից 22 օր հետո: խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը 5 տարի է 1994թ. մայիսի 4-ի Կահիրեի համաձայնագրի կնքման օրվանից սկսած: Բոլոր այն պաղեստինցիները, որոնք գրանցված են և ունեն 18 և բարձր տարիք, կարող են մասնակցել ընտրություններին: Արևելյան Երուսաղեմի բնակիչները կարող են քվեարկել վտտային գրասենյակներում. սակայն քվեաթերթիկները հաշվվելու են քաղաքի տարածքից դուրս: Արևելյան Երուսաղեմի բնակիչները կարող են քեկնածու առաջադրվել միայն այն դեպքում. եթե նրանք ունեն լրացուցիչ հասցե օկուպացված տարածքների մեկ այլ բնակավայրում:

Խորհրդի լիազորությունների և անդամների քանակի հարցը առաջացրեց բավականին բարդություններ: Իսրայելը պահանջում էր, որ խորհուրդը ունենա միայն գործադիր իշխանություն, իսկ անդամների քանակը չգերազանցի 30-ը: Այս դեպքում խորհուրդը չէր դիտվի որպես պաղեստինյան համաձայն միջազգային չափանիշների: Մակայն հետո Իսրայելը հրաժարվեց իր պահանջից և արդյունքում խորհրդին տրվելու է մաս օրենսդիր իշխանություն. իսկ անդամների թիվը հասցվեց 82-ի: Խորհուրդը իրավունք չունի այլ երկրներում ունենալ դեսպանություններ և հյուպատոսություններ կամ թույլ տալ դրանց ստեղծում արևմտյան ափում և Ղազայում: ՊԱԿ-ը կարող է այլ երկրների հետ ստորագրել միայն տնտեսական, տարածաշրջանային զարգացման, կրթական, մշակութային բնույթի պայմանագրեր:

«Խորհրդի քաջումից հետո արևմտյան ափի քաղաքացիական վարչությունը լուծարվելու է և Իսրայելի ռազմական կառավարումը վերացվելու է»¹²: Այնուամենայնիվ Իսրայելի ռազմական կառավարման դուրսբերումը չի կանխելու վերջինիս կողմից այն իշխանությունների իրականացումը, որոնք չեն փոխանցվել պաղեստինյան խորհրդին: Այն օրենքների և ռազմական հրամանների ընդունումը, որոնք գերազանցում են պաղեստինյան խորհրդի իրավասությունները չեն ունենալու ոչ մի կիրառություն և օրենքի ուժ: Այս զիջման դիմաց Իսրայելը պահանջեց, որ համաձայնագրի մեջ մտցվի հետևյալ կետը. «Խորհրդի քաջումից երկու ամիս հետո ՊԱԿ-ի Ազգային խորհուրդը ճիստ է հրավիրելու խորհրդի կանոնադրությունից Իսրայելի վերացման կետերը հանելու համար»¹³: Հերթոնի կարգավիճակի հարցը քննարկվեց բոլորից շատ և լուծվեց՝ չքավարարելով ոչ մեկին: Քաղաքը բաժանվեց սեկտորների՝

Ի, որտեղից դուրս են բերվելու իսրայելական ուժերը, իսկ հասարակական կարգուկանոնը և անվտանգությունը դրվելու է 4,000 հոգանոց պաղեստինյան ոստիկանության վրա:

Հիշ հին քաղաքի կենտրոնը, որտեղ Իսրայելի ռազմական ուժերը շարունակելու են պաշտպանել 400 հրեա բնակիչների, իսկ անգնե պաղեստինյան մուսիցիսկալ հսկիչները պետք է վերահսկեն և ուժի մեջ մտցնեն պաղեստինյան օրենքները: Համաձայնագրի այս կետը ընդհանրապես չիրականացավ և 1997թ. հարկ եղավ Հեբրոնի վերաբերյալ կնքել նոր համաձայնագիր: Համաձայնագրի այս կետը չէր էլ կարող իրականանալ: Այն բերեց լարվածության աճ քաղաքի հրեաների և պաղեստինցիների միջև: Նախ արգելված է ազատ տեղաշարժը քաղաքի կենտրոնական մասում: Հեբրոնի մզկիթի այցելման հարցը լուծված չէ: Հրեաները ունեն ազատ մուտքի իրավունք կառույցի իրենց հատվածը, իսկ պաղեստինցի ուխտավորները ժամեր են ծախսում՝ անցնելու բազմաթիվ անվտանգության կետերի միջով: Սրան ավելանում է պաղեստինցիների այն մտավախությունը, որ հրեական բնակավայրերի շինարարության սառեցման ոչ մի խոսք չկա համաձայնագրում:

Բոլոր այս խնդիրների շուրջ բանակցությունները՝ Հեբրոնի, ցրային, փախստականների վերադարձի, Երուսաղեմի, վերջնական կարգավիճակի, նախատեսվում է սկսել 1996թ. մայիսից, պաղեստինյան Խորհրդի ընտրություններից հետո: Հակամարտող կողմերին բանակցությունների սերանի շուրջ մտնեցնելու հարցում ԱՄՆ-ի դերը առավելագույնն էր: Պենտագոնը չէր խուսափում բացեիքաց հայտարարելուց, որ «ԱՄՆ-ը պետք է Մերձավոր Արևելքում մնա վերահսկող ուժ և պահպանի օդային ու ծովային ուղիների անվտանգությունը Մերձավոր Արևելքում»:

ARTAK HOVHANNISYAN

OSLO II AGREEMENT AS A NEXT STEP OF SOLVING THE PALESTINIAN CONFLICT

(Summary)

In September 24, 1995 Israeli and Palestine Liberation Organization (PLO) officials meeting in Taba, Egypt, finalized agreement on the second stage of eventual Israeli withdrawal from Palestinian lands. Under the pact, which was officially signed on September 28 in Washington, D.C., Israeli forces were scheduled to be removed from 6 Arab cities and 400 villages in the West Bank by early 1996, after which elections would be held for a 82-member Palestinian council, which would possess legislative and executive power in the West Bank and Gaza. Special arrangements were agreed upon for the West Bank city of Hebron, where Israeli soldiers will remain to protect the 450 Jewish settlers living there. Disagreement over the status of Hebron almost scuttled the agreement, and it took almost a week of non-stop negotiations between PLO leader Yasser Arafat and Israeli Foreign Minister Shimon Peres to resolve the issue. The pact

was the second stage in a three-step process agreed upon in the Declaration of Principles, a framework for eventual Palestinian autonomy signed by the PLO and Israel in September 1993. The first phase in the process was finalized in May 1994, when an accord was signed in Cairo, Egypt, for the pullout of Israeli troops from the Gaza Strip and the West Bank town of Jericho and the handing over of administrative duties to the Palestinian National Authority, led by Arafat. The third stage will tackle such contentious issues as the status of Jerusalem, the fate of Israeli settlers, and the final borders between Israel and the Palestinian state that many analysts believe is close to becoming a reality. Negotiations concerning the last phase of the peace process were scheduled to begin in May 1996, with any agreement to be implemented before the end of the century.

ՇԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Protocol of Economic Relation, Paris, 29.04.1994.
2. Gaza-Jerico Autonomy Agreement. Cairo 4.05.1994.
3. Middle East Peace Process Chronology, Historical Documents, [Http://www.ariga.com/](http://www.ariga.com/).
4. Agreement on Preparatory Transfer of powers and responsibilities, Erez, 29.08.1994.
5. The Israel-Palestinian Interim Agreement on the West Bank and Gaza Strip, Washington D.C, Sept 28.1995.
6. The Israel-Palestinian Interim Agreement on the West Bank and Gaza Strip, Washington D.C, Sept 28, 1995.
7. Murray N, Oslo II. Recipe for Apartheid not Divorce, Middle East Justice Network, X-XI, 1995.
8. The Israel-Palestinian Interim Agreement on the West Bank and Gaza Strip, Washington D.C, Sept 28, 1995.
9. Ibid.
10. Ibid, article 13.
11. Ibid, article 1, appendix 1.
12. Murray N., Oslo II. Recipe for Apartheid not Divorce, Middle East Justice Network X-XI.1995.
13. Ibid.
14. Hadar L., Americas-moment in the Middle East in: Current History, January, 1996, p 2.

ՏԱԹԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

**ՔՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՄԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

Ներկա հոդվածում փորձ է արվում ուրվագծել Քրդատանի աշխատավորական կուսակցության կազմավորման մի քանի հանգուցային հարցերը, այդ գործընթացը պայմանավորող ներքին և արտաքին գործոնները, որոնք կոչված են լույս պիտեղու ժամանակակից Թուրքիայում քրդական հիմնահարցի վիճակի և զարգացման միտումների վրա: Այդ առնչությամբ մի քանի խոսք քրդական հարցի սրությունը պայմանավորող որոշ գործոնների մասին:

Մերձավոր Արևելքում քրդական հարցը որպես քաղաքական գործոն իր զարգացման նոր վաղ մտավ Մուջին համաշխարհային պատերազմից հետո, երբ Օսմանյան կայսրությունում դրված էր ոչ քուրդ ժողովուրդների ազգային ինքնորոշման հիմնահարցը:

Սևրի դաշնագիրը (1920թ.) առաջին միջազգային իրավական փաստաթուղթն է, որտեղ դրված էր նաև քրդական հարցը: Դաշնագրի երեք հոդվածից (62, 63, 64) քաղկացած առանձին րաժին նախատեսում էր Քրդատանի անկախ պետության կազմավորումը¹: Մակայն, պատմաքաղաքական հայտնի պատճառներով Սևրի դաշնագիրը մնաց թոթի վրա: Նրան հաջորդած 1923թ. Լոզանի կոնֆերանսում արձանագրվեց էթնիկ Քրդատանի վերջին րաժանումը. այն մասնատվեց Մերձավոր Արևելքի չորս պետությունների՝ Իրաքի (Հարավային Քրդաստան), Իրանի (Արևելյան Քրդաստան), Միդիայի (Հարավ-արևմտյան Քրդաստան) և Թուրքիայի (Հյուսիսային Քրդաստան) միջև: Արդյունքում քրդական հարցը դարձավ ճշված երկրների ներքին, երբեմն նաև արտաքին քաղաքականության կարևոր գործոն, ինչը և ոչ առանց հաջորդական շահարկվում է վերջիններիս կողմից: Քրդական պոռթիկը միաժամանակ միջպետական հարաբերությունների քարտեզի հանգույց է, որտեղ ներքաշված են ոչ միայն իրենց քաղաքական կողմնորոշմամբ տարբեր երկրներ, այլև միջազգային ուժեր²:

Թուրքիայի քուրդ ազգաբնակչությունը կազմում է երկրի բնակչության շուրջ 17%-ը և կենտրոնացած է երկրի հարավ-արևելյան վիլայեթներում՝ Բինգյոլում, Բիթլիսում, Վանում, Դիարբեքիլում, Կարսում, Մաղաթիայում,

Աղբյուրներում, Արդիում, Սուշում, Էրզրումում, որոնց մեծ մասում քաղաք-
ձակ մեծամասնություն է կազմում⁷: Բնակչության կենսամակարդակը
նշված վիճակներում յուրից հինգ անգամ ցածր է Թուրքիայի Հանրապետության
տնտեսական տնտեսական քաղաքականության: Այստեղ բնակչության 70%-
ից ավելին գրաված է գյուղատնտեսությամբ: Խոշոր արդյունաբերական
ձեռնարկությունները, որպես կանոն, չեն տեղադրվում Էր ազատ աշխատուժի
հսկայական ավելցուկ, որը առաջ էր բերում միգրացիոն երևույթներ դեպի
արևմուտքի խոշոր արդյունաբերական կենտրոնները: Այս քաղաքական-
ությունն ուղղված էր մի կողմից քրդարևակ շրջանների ժողովրդագրական
կառուցվածքի փոփոխմանը, մյուս կողմից՝ քրդերի ծովամաս գործընթացը ա-
վելի դյուրին դարձնելուն:

Պետք է նշել, որ թուրքական իշխանությունների կողմից իրականացվող
ասիմիլյացիայի՝ սպիտակ գեներացիոն քաղաքականությունը միշտ բարձրաց-
վել է պետական մակարդակի, ունեցել շարունակական բնույթ և իր արտա-
ցումը գտել Թուրքիայի Հանրապետության բոլոր սահմանադրություններ-
ում: «Յուրաքանչյուր ոք, ով ունի Թուրքիայի քաղաքացիություն, թուրք է»
(գործող սահմանադրություն, հոդված 66)⁸: «Ոչ մի այլ լեզու բացի թուրքերե-
նից, չի կարող դասավանդվել և ուսումնասիրվել կրթական հիմնարկներում,
որպես մայրենի լեզու» (գործող սահմանադրություն, հոդված 42)⁹:

70-ական թվականների սկզբից Թուրքիայում դիտվում է ծայր կողմն-
որոշմամբ քաղաքական ուժերի գործունեության աշխուժացում, որը հայտնի
պատճառներով ավելի պարարտ հող էր գտնում քուրդ մտավորականությ-
ան և ուսանողության շրջանում: Այդ տարիներին ստեղծվում են քրդական
մի շարք քաղաքական կուսակցություններ և կազմակերպություններ, որոնք
հիմնականում գործում էին ընդհատակում: Դրանցից կարելի է նշել Թուր-
քական Բրդստանի դեմոկրատական կուսակցությունը (Թ-ԲԿԿ), Թուրքա-
կան Բրդստանի սոցիալիստական կուսակցությունը (Թ-ԶՄԿ), Բրդստանի
աշխատավորական կուսակցությունը (ԶՄԿ), «Այա Ռ-գաբի», «Թեքոշիմ»,
«Զավա» կազմակերպությունները: Նրանք իրենց գործունեության հիմքում
դրել էին ժողովրդավարության, սոցիալական ապահովության, գործազր-
կության և իրավահավասարության հետ կապված հարցեր, որոնք կազմում
էին այդ տարիների Թուրքիայում գոյություն ունեցող կուսակցությունների
ծրագրային փաստաթղթերի հիմնական մասը:

Թուրքական Բրդստանի դեմոկրատական կուսակցության ծրագրի հիմ-
քում ընկած էր միացյալ Թուրքական Հանրապետության շրջանակներում
թուրքերի և քրդերի իրավահավասարության գաղափարը: 1977թ. իր երրորդ
նստաշրջանում այս կուսակցությունը բաժանվեց երկու թևի: Աջ թևը շարու-
նակեց իր գործունեությունը որպես Բրդստանի բանվորական կուսակցու-

յուն, որն իրենից ներկայացնում էր մանր-բուրժուական կազմակերպություն՝ սոցիալիստական հայացքների և գաղափարների ենթատեքստով՝:

Չախ ազգայնականները հիմնեցին «Քրդստանի ազգային ազատամարտիկներ» (ՔԱԱ) կուսակցությունը: 1979թ. հրապարակված «Պայքար հանուն անկախ Քրդստանի» գրքուկում նրանք հռչակեցին քրդական անկախ պետության ստեղծման գաղափարը: Անտեսելով սոցիալ-քաղաքական ոչ քարենպաստ պայմանները, ինչպես նաև թուրք-քրդական հակամարտության մեջ վերջիններիս համար ուժերի ոչ նպաստավոր հարաբերակցությունը՝ նրանք կոչ էին անում զինված պայքարի միջոցով ազատագրել Թուրքական Քրդստանը՝:

Թուրքական Քրդստանի սոցիալիստական կուսակցությունը (ԹՔԱԿ), հիմնականում արտահայտում էր քրդական ազգային հարցի լուծման քուրդ առաջադեմ մտավորականության դիրքորոշումը: Վերջինիս նպատակը ներքում սոցիալիստական կարգերի հաստատումն էր: Վերլուծելով այս կուսակցության գաղափարախոսությունն ու գործունեությունը՝ պրոֆեսոր Մ. Հասրաթյանը նշում է, որ այն իր գաղափարական սկզբունքներով ավելի մոտ է կանգնած զիտական սոցիալիզմին, քան քրդական որևէ այլ քաղաքական կուսակցությունը՝:

1974թ. Անկարայի համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետի ուսանողների մի խումբ, որի մեծամասնությունը քրդեր էին, հիմնեցին «Անկարայի քարձրագույն կրթության դեմոկրատական հայրենասիրական միությունը», որը սոցիալիստական կողմնորոշմամբ ժախակողմյան կազմակերպություն էր և, սրայես իր գաղափարախոսության հիմք՝ ընդունում էր մարքսիզմ-լենինիզմի ուսմունքը¹⁰:

ՔԱԿ արյուրների համաձայն՝ կազմավորումից մեկ տարի անց, Դիքմենում (Անկարայի մահանգ) տեղի ունեցած մտաշրջանում այս կազմակերպությունը վափոխության ենթարկեց իր ծրագիրը և հայտարարեց «համաքրդական կուսակցության» ստեղծման մասին¹¹: Նստաշրջանում ընտրվեց «Բանվորական խումբ» (Կենտրոնական կոմիտեի լիազորություններով), որի խնդիրն էր մշակել քրդական հասարակության բոլոր խավերի շահերը պաշտպանող կուսակցության ծրագիրը: Հոչակվեց «Մանիֆեստ», որտեղ շարադրվեց Քրդստանի ազգային ազատագրության ծրագիրը¹²:

Երեք տարի քրդարնակ շրջաններում վարած քարոզչական աշխատանքներից հետո 1978թ. նոյեմբերի 27-ին¹³ Դիաքրեքիի մահանգի Ֆիսե գյուղում կազմակերպությունը գումարեց իր առաջին համագումարը, որտեղ այն վերանվանվեց Քրդստանի աշխատավորական կուսակցության (ՔԱԿ՝ Partiya Karkeren Kurdistan)¹⁴: Հաստատվեցին կուսակցության կանոնադրությունն ու գործունեության ծրագիրը, ընդունվեց նրա դրոշը¹⁵: ՔԱԿ-ի նախագահ ընտրվեց Արդուլահ Օջալանը¹⁶: Կուսակցության ծրագրային վստահաթղթերի հանգամանալի վերլուծությունը սույն հոդվածի խնդրի մեջ չի մտնում: Նշենք միայն, որ կուսակցության ինչպես այդ, այնպես էլ հետա-

գա տարիների ծրագրային փաստաթղթերի համար բնորոշ է իրապաշտության բացակայության պարագան, պատմական իրողության հետ հաշվի չնստելու հանգամանքը: Ամբողջ Քրդստանի ազատագրման և միասնական անկախ պետության կուսակցության կարգախոսի արդարացման համար հայտարարվեց, որ նա չի ճանաչում երկրի մասնատվածության փաստը և գոյություն ունեցող սահմանները: Կուսակցությունը հռչակեց իր հատուկ առաքելությունը՝ հանդես գալու ռոջ քուրդ ժողովրդի անունից: Այս կարգախոսը հիմնված էր երևակայական «մեկ ազգ և ժողովուրդ, մեկ կուսակցություն և մեկ առաջնորդ» գաղափարի վրա՝ դրանից բխող բոլոր հետևություններով: Կուսակցությունը Քրդստանը դիտում էր որպես քաղաքական և տեղի-տեղիակ ամբողջություն: Այն պաշտոնապես դավանում է մարքսիզմ-լենինիզմ, ավելի կոնկրետ՝ նրա մատչելի և կատարյալ և տարատեսակները:

ՔԱԿ-ի առաջացումը համարելով պատմական անհրաժեշտություն՝ նրա նախագահ Աբդուլլահ Օջալանը գրում է. «Քուրդ ժողովուրդը դատապարտված էր դանդաղ մահվան: Քրդերի մոտ ձևավորվել էր ստրկական հոգեբանություն և կուսակցությունը նախ և առաջ պայքար սկսեց այդ հոգեբանության դեմ՝ դրան հակադրելով ազատության, իրավահավասարության և ժողովրդավարության նոր հեղափոխական հոգեբանություն»¹⁸:

Ասպարեզ գալու առաջին իսկ պահից ՔԱԿ-ը հռչակեց ռոջ Քրդստանի ազգային-քաղաքական, ազատագրական գործերում իր գերակայությունը, մեծաշնորհ իրավունքի գաղափարը: Մինչ այդ, ինչպես նաև, ժամանակակից շրջանում գործող քրդական բոլոր կուսակցությունները և կազմակերպությունները հայտարարվեցին համաձայնողական, հաշտվողական, իսկ երբեմն՝ ազգադավ, և որպես այդպիսինների նրանց դեմ պայքարը համարվեց առաջնահերթ: 1979-1980թթ. այդ առնակատումը վերաճեց զինված ընդհարման ՔԱԿ-ի և ՔԱԱ-ի, «Ալա Ռ-գաբրիի», «Թեքոչինի» և Թ-ՔԱԿ-ի միջև»¹⁹:

«ՔԱԿ շարժումը, գրում է Օջալանը, առաջացել և զարգացել է սոցիալ-շովինիզմի դեմ պայքարում: Այն առաջացել է Քրդստանում Թուրքիայի կողմից իրականացվող գաղութային քաղաքականության բացահայտման և սուր քննադատության արդյունքում, ռեֆորմիստական-մանր բուժական մեթոդների դեմ պայքարում, որը մարքսիզմի քողի տակ հանդես էր գալիս բուրժուազարդության դեմ և տեղական ռեակցիոն ուժերի հետ սերտ կապակցված: ՔԱԿ շարժումը առաջացել է գաղութարարների հետ նրանց համաձայնողական քաղաքականության բացահայտման հետևանքում»²⁰:

ՔԱԿ-ին հաջողվեց չեզոքացնել այդ կուսակցությունները և դառնալ այն ուժը, որ կազմակերպեց և զլխավորեց վերջին և ամենաընդգրկուն քրդական շարժումը Թուրքիայում:

1980թ. զինվորական հեղաշրջումից հետո Թուրքիայի կառավարության կողմից, իրականացվող շովինիստական քաղաքականությունը ավելի

ընդգծված ընդլայնումը: Իշխանությունները, որ մինչ այդ ժխտում էին Թուրքիայում քրդական պրոլետի գոյությունը, հայտարարեցին արևելյան վիլայեթներում աճալ «քրդական վտանգի» մասին, որը փորձ էր ստանալու հասարակության աջակցությունը պատժիչ գործառնություններ սկսելու համար:

Դրան հաջորդեցին քրդերի մասսայական ձեռքարկությունները: Միայն 1981թ. ընթացքում ձեռքարկվեց 2331 քուրդ, որոնք մեղադրվում էին ՔԱԿ-ին անդամակցելու համար: Նրանցից 123-ը դատապարտվեցին մահվան՝ խռովություններ հրահրելու, անջատողական քարոզչություն վարելու և ազգային անվտանգության 30 աշխատակիցների սպանության մեղադրանքով²¹: Իշխանությունների այդ գաղտնիությունների դեմ ի նշան բողոքի ՔԱԿ-ի անդամ Մազլում Դադանը ինքնահրկիզվեց: Մա ինքնահրկիզման առաջին փաստը է կուսակցության պատմության մեջ²²:

Միջինաշխարհի աջակցությամբ²³ Օջալանը 1981թ. մայիսին Բերսայի հովտում հիմնեց զինվորական ռազմական ակադեմիա, որտեղ սկսվեց ՔԱԿ-ի անդամների մախապատրաստումը՝ հետագա ռազմական գործողությունների համար:

1984թ. օգոստոսի 15-ին կուսակցության 50 անդամներ գրավեցին Էրուռ և Շամլիճիլի քաղաքները²⁴: Դա առաջին պարտիզանական գործողությունն էր Թուրքիայի արևելքում, որը ժամանակավոր ընդհատումներով տևեց շուրջ 15 տարի: 1984թ. հոկտեմբերին III համագումարում կազմավորվեց ՔԱԿ-ի ռազմական բևեռ՝ այսպես կոչված «Քրդստանի ժողովուրդների ազատագրության բանակը» (ՔԺԱԲ), որը առաջին հրամանատար Մահմուդ Քորքմազի սպանությունից հետո մինչև օրս գլխավորում է Չամիլ Բայիկը: Կուսակցության տվյալներով՝ ՔԺԱԲ-ի անդամների թիվը հասնում է մի քանի տասնյակ հազարի²⁵: Բացի արևելյան Թուրքիայում պարտիզանական գործողություններ իրականացնելուց, ՔԱԿ-ը արևմտյան Թուրքիայում ինչպես նաև եվրոպական մի շարք երկրների թուրքական դեսպանատների դեմ իրականացնում էր ահաբեկչական ակտեր, որոնցով փորձում էր քրդական հարցի վրա հրավիրել միջազգային հանրության ուշադրությունը: Ձիմված պայքարին համընթաց հասունանում էր նաև համազգային քաղաքական կազմակերպություն ստեղծելու գաղափարը: 1985թ. ստեղծվեց ՔԱԿ-ի քաղաքական բևեռ՝ «Քրդստանի ազգային ազատագրության ճակատը» (ՔԱԱՃ)²⁶, որը սկսեց ակաիվ քարոզչություն վարել քրդական սփյուռքում: Հիմնական շեշտը դրվեց նախկին ԽՍՀՄ և եվրոպական երկրների վրա: Գրեթե բոլոր այս երկրներում կուսակցությունը ունի իր գրասենյակները, որոնք կորդինացնում են տվյալ երկրում իրականացվող քարոզչական գործունեությունը: Տարբեր, լեզուներով, այդ բլում և թուրքերեն տպագրվում են բերբեր, ամազգերի՝ "Kurdistan raport", "Serxvebun", "Ozgur politika", "Ey-lem", "Axina Walat", "Дружба", "Стол Родины" և այլն: ՔԱԿ-ը ունի նաև արբանյակային հեռուստատեսություն (MED-TV): Այս ամենի միջոցով լու-

սաքանվում է կուսակցության գործունեությունը, մանրամասնվում զինված պայքարը, քարոզվում գաղափարախոսությունը:

Կուսակցության շատ հաճախ ոչ հստակ, առաձգական ու երկինաստ ձևակերպումներով փաստաթղթերում և ելույթներում, սակայն, բացակայում է արդի փուլում քրոսական ազգային պայքարի հաջողությունն ապահովող ուղիների ու մեթոդների հստակ քննադատումը:

ՔԱԿ-ի անմիջական հովանավորությամբ 1995թ. ապրիլի 12-ին Հաագայում կազմավորվեց Քրդստանի Տարագիր խորհրդարանը²⁷:

Ընդհանրապես ՔԱԿ-ի կազմավորման և գործունեության մասին գոյություն ունեցող, իրենց իսկ կողմից տարածած տեղեկատվությունը բավական սուբյեկտիվ քնույթ ունի: Այն ավելի շուտ նման է ազգային առաջնորդի և ազգային կուսակցության մասին լավ մշակված լեգենդի:

Այսօր հազիվ հնարավոր է պատասխանել այն հարցին, թե որքանով է ՔԱԿ-ի գործունեությունը համապատասխանում ներկա ներքին և արտաքին հանգամանքների պահանջներին: Մի բան պարզ է, որ ՔԱԿ-ի պնդումը քրդերի ազգային ինքնագիտակցության զարթոնքի մեջ իր հատուկ դերի մասին չափազանցված է, իսկ նրա գործունեության մեջ կիրառվող ահաբեկական մեթոդները, ըստ ամենայնի, օգտագործվում են Թուրքիայի կողմից քրդական շարժումը վարկաբեկելու, նրա միջազգային ճանաչումը կանխարգելելու համար: Չնայած այս ամենին՝ ՔԱԿ-ի կողմից ղեկավարվող շարժումը Թուրքիայում քրդական հարցի սրության արտահայտությունն է, և այսօր Թուրքիայի ներքաղաքական կայունությունն անհնարին է առանց այդ հիմնահարցի լուծման:

TATEVIK MANUKYAN

THE FORMATION OF KURDISTAN WORKER'S PARTY

(Summary)

The paper deals with several important questions of the formation of The Kurdistan Worker's Party, with the internal and external factors of that process, which intends to illuminate the Kurdish problem in modern Turkey, it's condition and tendency of development. All the facts were taken from the party's information sources (newspapers, magazines, Internet), which are essentially contradictory.

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. История Курдистана, М., 1999, с.243.
2. О. И. Жигалина, Курдский вопрос как региональный и локальный конфликт, "Восток", N 6, 1995, с.91.
3. М. А. Гасратян, Новая турецкая конституция и курдский вопрос, "Турция: история и современность", М., 1988, с.90.
4. www.hartford-hwp.com/archives/51/007.html The legal and actual status of the Kurds with respect to domestic and international law.
5. Türkiye Cumhuriyeti Anayasasi, Ankara, 1982.
6. Նույն տեղում:
7. М. А. Гасратян, Курды Турции в новейшее время, Ер. 1990, с.288.
8. Նույն տեղում, էջ 290:
9. Նույն տեղում, էջ 289:
10. Кампания против курдских павстанцев в Турции, ТАСС 24.04.1981.
11. Տվյալները հիմնականում վերցված են ՔԱԿ-ի ինֆորմացիոն աղբյուրներից, (քերթեր, անսագրեր, ինտերնետ), որոնք շատ հաճախ հակասական բնույթ ունեն:
12. <http://bum.uscd.edu/~ais/PKK/pkk.html> "Party program of the Kurdistan Workers Party (PKK)".
13. Սա պաշտոնապես համարվում է կուսակցության ստեղծման տարեթիվ
14. Հայերեն լեզվով ներկայացվող գրականությունում քրդերին "karkar" քառը թարգմանվում է որպես «քանվոր», սակայն իրականում այն ունի «աշխատավոր» իմաստը: Մյուս կողմից հազիվ թե հնարավոր է այս քառի «քանվոր» իմաստով գործածությունը՝ հաշվի առնելով կուսակցության սոցիալական կազմը:
15. Առաջին «ուժեղացում» ընդունված դրոշի վրա պատկերված էր աստղի մեջ սոցիալիստական մոլորակ ու մանգաղը, որը 2000թ. կուսակցության արտահերթ VII համագումարում փոխարինվեց արևով երիզված աստղով, քանի որ քրդերն իրենց համարում են արևի որդիներ, www.fotw.net/flags/krcd-0kk.html
16. Արդուլահ Օջալանը կուսակցության նախագահից վերածվեց ազգային լիդերի, կուրդի: 1999թ.փետրվարի 15-ին Թուրքիայի կողմից նրա ձերբակալվելուց և հունիսի 29-ին մահվան դատապարտվելուց հետո եղան քաղաքի վերջնական լիզիզմներ, մամուլում հայտնվեցին «Չկա կյանք առանց առաջնորդի» հայտարարություններ:
17. История Курдистана, М., 1999, с. 432
18. Курдистан Репорт, N 2. 1994
19. История Курдистана, М., 1999, с. 432
20. Абдулла Оджалан, Курдистанская действительность 19-ого века по настоящее время и движение РПК, М., 1998, с.258
21. Кампания против курдских павстанцев в Турции, ТАСС N 17. 24.04.1981.
22. ՔԱԿ-ի համար ինքնահրկիզումը դարձավ պայքարի և բողոքի յուրօրինակ միջոց, որը ոչ միայն չի դատապարտվում կուսակցության ղեկավարության կողմից, այլև խրախուսվում է՝ ինքնահրկիզումներին համարելով ազգային հերոսներ:
23. Այդ տարիներին Սիրիան վերահսկում էր Բեքրասյի և Բերլիասի հովիտները: Սիրիան հովանավորում և աջակցում էր ՔԱԿ-ին դեռևս 1979թ.-ից, երբ Օջալանը տեղափոխվեց Սիրիա և այնտեղ հիմնեց կուսակցության գլխավոր շտաբը, որ-

տեղից կառավարվում և վերահսկվում էր ՔԱԿ-ի գործունեությունը: 1987թ. պաշտոնական այցով Դամասկոսում գտնվող Թուրքիայի նախագահ Թ.Օզալը զգուշացրեց, որ, եթե Սիրիան շարունակի իր հովանավորությունը ՔԱԿ-ին, ապա ԱՆԿ-ը կփակի Սիրիայի համար կենսական անհրաժեշտ Եփրատի ջրային ուտրոնները: Կառավարության որոշմամբ 1998թ. հոկտեմբերին Օջալանը արտաքսվեց Սիրիայից:

- 24. www.azgnet.ru История создания РПК.
- 25. Նույն տեղում:
- 26. www.avallion.ru Национально-освободительное движение в Курдистане: История и современность.
- 27. Նույն տեղում:

ԳԱՎԻՑ ՎԻՐԱՅՈՒՆ

1973 ԹՎԱԿԱՆԻ ԱՐԱՔԱ-ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ
ՀՈՐԴԱՆԱՆԻ ԳԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Հորդանանը, ի տարբերություն Սիրիայի և Եգիպտոսի, անմիջական մասնակցություն չունեցավ 1973թ. պատերազմում, այլ բավարարվեց Սիրիային օժանդակ գործառնություններ ուղարկելով՝ 3-րդ զբառատանկային դիվիզիան և 4-րդ տանկային բրիգադը: Առկա էին մի շարք պատճառներ:

Հրեական պետականության կերտման առաջին տարիներից ի վեր պաղեստինցի փախստականները հսկայական գաղութներ կազմավորեցին Հորդանան գետի արևելյան ափին: Աստիճանաբար նրանք կազմեցին Հաշիմյան թագավորության բնակչության մեծամասնությունը: Ժամանակի ընթացքում փախստականների ճամբարները անցան պաղեստինցիների վերահսկողության ներքո: Նվազագույն կերպով ինտեգրացվելով հորդանանյան հասարակությանը, պաղեստինցի գրեհայինները անարգում էին երկրի օրենքները և բացեիքաց սպառնում թագավորության տապալմամբ: Նրանք ստեղծել էին «պետություն պետության մեջ»: Հորդանանյան բանակի հետ բախումները, օտարերկրյա քաղաքացիական ինքնաթիռների առևանգումը Հորդանանի տարածք, ինչպես նաև մահափորձերը Հուսեյն թագավորի դեմ, ստիպեցին թագավորին երկրում հայտարարել ռազմական դրություն և հաշվեհադար տեսնել ֆիդայիներին հետ:

Նշենք, որ որոշ հորդանանյան գործիչներ, ինչպես, օրինակ, Վասֆի աթ-Թալը, որն, ըստ պաշտոնական տեղեկությունների, հինգ անգամ նշանակվել էր երկրի վարչապետ, դեմ էին պաղեստինցիներին: Նրանք չէին կիսում Հուսեյն թագավորի ցանկությունը՝ վերամիավորել Հորդանան գետի արևելյան և արևմտյան ափերը, պաղեստինցիներին համարում էին օտարներ, և գտնում, որ զրկվելով արևմտյան ափից՝ Հորդանանը ոչինչ չի կորցնում, այլ, ընդհակառակը, շահում է²: Նման դիրքորոշումը հասկանալի է, հաշվի առնելով պաղեստինցի գրեհայինների որոշ կազմակերպությունների անպարկեշտ վարքագիծը:

1970թ. տեղի ունեցան «Ա. սեպտեմբերի» իրադարձությունները, երբ հորդանանյան զորամիավորումները ցախախեցին պաղեստինցիների ջակատները³: Արդյունքում պաղեստինցիները, տալով շուրջ 5 հազար զոհ,

վտարվեցին երկրից: Այլ աղբյուրների համաձայն, այդ օրերին գոհվեցին շուրջ 1300 գրոհայիններ, իսկ ընդհանուր առմամբ գոհերի ընդհանուր քանակը կազմեց 20,000 մարդ, որից 15,000-ը՝ պաղեստինցիներ:⁴ Նշենք, որ պաղեստինցի ֆիդայիների գործողությունները էական վնաս չէին հասցնում Իսրայելին, սակայն առիթ էին հանդիսանում պատասխան պատժիչ գործողությունների, իսկ Հորդանանի քաղաքական ուժերն ի վիճակի չէին դիմակայելու իսրայելյան նախահարձակողական հարվածներին:

Գնալով ավելի հաստատուն են դառնում այն ենթադրությունները, որ պարբերաբար գաղտնի հանդիպումներ են տեղի ունեցել հորդանանյան և իսրայելյան պաշտոնյաների միջև: Մասնավորապես, հայտնի է, որ Իսրայելի իշխանությունները տեղյակ էին 1973թ. նախապատրաստվող սիրիա-եգիպտական հարձակման մասին: Ըստ մի տեսակետի, իսրայելյան կողմին դրա մասին տեղեկացրել էին հորդանանյան իշխանությունները:⁵ Սա հնարավոր է, եթե հաշվի առնենք, որ 1970թ. սեպտեմբերյան իրադարձություններից անմիջապես հետո, երբ Միդիան վարձեց իր գորամիավորումները ուղարկել Հորդանան՝ պաշտպանելու պաղեստինցի գրոհայիններին, իսրայելյան իշխանությունները լուրջ նախագուշազույց արեցին Միդիային: Ինտր-կե, միայն դա չէր, որ անհնար դարձրեց սիրիական մեծաքանակ զինված ուժերի մերխուժումը Հորդանան, այլ ԱՄՆ-ի ճակատորմի մուտքը Սիջերկրական ծով, ինչպես նաև ԽՍՀՄ-ի ճնշումները Սիրիայի իշխանությունների նկատմամբ: Դա ստիպեց սիրիական իշխանություններին քաղաքական փոքրաքանակ գրահատակային գունդ ուղարկելով, որն էլ ջախջախվեց հորդանանյան քաղաքական ուժերի կողմից: Նշենք, որ այդ գորամիավորումը հանդերձավորված էր պաղեստինցիների նման:

Անշուշտ, այս ամենում մեծ դեր է խաղացել ԱՄՆ վարչակարգը: 1970թ. տեղի ունեցավ ԱՄՆ-ի պետքարտուղար Ռոջերսի այցը տարածաշրջան, որի ընթացքում նա ներկայացրեց խաղաղ կարգավորման իր նախագիծը: Սրան հաջորդեցին 1972թ. Հունսյն քաղաքների և Իսրայելի վարչապետ Գուդա Մեյերի հաջորդական այցերը Մսիտակ Տուն:

Հետաքրքրական է իսրայելցիների դիրքորոշումը այս իրադարձությունների ժամանակ: Այդպես, քարձրաստիճան զինվորական հրամանատարությունը պահանջում էր միջամտել Հորդանանում տեղի ունեցող իրադարձություններին: Այդ հարցը կարգավորելու նպատակով Գուդա Մեյերը սեպտեմբերին մեկնեց ԱՄՆ՝ համաձայնեցնելու ընդհանուր վարքագիծը և կորդինացնելու գործողությունները: Քննարկվեցին համատեղ ամերիկա-իսրայելյան գործողությունները Հորդանանի իրադարձություններին միջամտելու վերաբերյալ, համատեղ գործողություններ Միդիայի, Լիբանանի և այլ արաբական երկրների հանդեպ: Նախատեսվում էր Հորդանանում ԱՄՆ-ի ճակատորմի աջակցությամբ ԱՄՆ-ի դեսանտի տեղակայումը՝ երկիրը հնարավոր սիրիական ներխուժումից պաշտպանելու և Հորդանանում ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությունն ապահովելու համար:

Թագավորության հարաբերությունները հարթ չէին սահմանակից արաբական հանրապետությունների հետ: Իրաքի, Սիրիայի և Եգիպտոսի հեղափոխական վարչակարգերը փորձում էին տապալել Հորդանանի թագավորական իշխանությունը: Հորդանանն, ի տարբերություն այլ արաբական երկրների, չունի բնական ռեսուրսների հարուստ պաշարներ: Երկրի բնական զարգացման համար մշտապես անհրաժեշտ են եղել մեծածավալ ֆինանսական միջոցներ: Հորդանանին, որպես Իսրայելին սահմանակից երկրի, մնան հատկացումների մասին որոշումներ ընդունվեցին արաբական երկրների լիզայում, սակայն, երբ գործը հասնում էր գումարների տրամադրմանը, ապա դրանք կամ չէին վճարվում, կամ էլ վճարվում էր միայն մի մասը, իսկ 1970թ. իրադարձություններից հետո երկրի տնտեսությունը հայտնվեց ճգնաժամային վիճակում՝ մնալ հատկացումների դադարեցման պատճառով 1973թ. պատերազմի նախօրեին Հորդանանը դեռևս գտնվում էր արաբական երկրների կալվից ձեռնարկված մեկուսացման մեջ: Դա հետևանք էր 1970թ. «Սև սեպտեմբերի» իրադարձությունների: Սեպտեմբեր ամսին կարծես թե վիճակը գնում էր կտրուկ փոփոխման: Երեք տարվա մեկուսացումից հետո կազմակերպվեց համդիպում Հորդանանի Հուսեյն թագավորի, Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադի և Եգիպտոսի նախագահ Անվար Սադատի միջև: Համդիպման նպատակները մեկը Արևելյան ճակատի ակտիվացումն էր: Չնայած որ մնալ համդիպումը արդեն իսկ ատաղձնօրաց էր, սակայն ավելի լուրջ փոխհամաձայնություն ձեռք չբերվեց, քանզի Հորդանանի թագավորը հրաժարվում էր թույլատրել պաղեստինցի գրեհայիններին վերադառնալ Հորդանան: Բացի դրանից, Հուսեյնը չէր կիսում Սիրիայի և Եգիպտոսի առաջնորդների մարտական տրամադրությունը և հրաժարվում էր Իսրայելի դեմ մոտալուտ պատերազմի գաղափարից, մինչև արաբական բանակները ավելի լավ պատրաստված չլինեին⁶:

1967թ. պատերազմից հետո բավականին վտխվել էր Հորդանանի դիրքորոշումը Իսրայելի նկատմամբ: Եթե նախկինում Հորդանանը մնացած արաբական երկրների պես չէր ընդունում Իսրայելի պետականությունը որպես այդպիսին, ապա այժմ պատրաստ էր բանակցելու հրեաների հետ: Դրա մասին են վկայում Հուսեյն թագավորի մի շարք հայտարարությունները: 1969թ. ապրիլի 10-ին նա առաջարկել էր Մերձավորարևելյան Խաղաղ Գործընթացի իր նախագիծը՝ քաղկացած 6 կետից: Նա կոչ էր անում արաբական երկրներին ճանաչել Իսրայելի պետությունը, ապառնել խաղաղ մեկուսացումը տարածաշրջանի միջազգային ջրերում, իսկ որպես դրա նախապայման՝ Հուսեյն թագավորը կոչ էր անում Իսրայելին ետ քաշվել 1967թ. հունիսի 4-ի սահմանները: Մեկ այլ դեպքում հորդանանյան մնալ դիրքորոշման մասին է վկայում այն, որ Հուսեյն թագավորը 1970թ. գարնանը ընդունեց ամերիկյան պետքարաուղար Ռոջերսի մերձավորարևելյան խնդրի խաղաղ կարգավորման նախագիծը: Ինչպես նշում է Ե.Պիրլինը,

Ռոբերտի նախագծը պատմական մեծ դեր խաղաց՝ ճշմարելով «հող խաղաղության դիմաց» սկզբունքը՝:

Հուսեյն Քազավորի հաջող նախագծում՝ ներկայացված 1972թ. մարտի 15-ին, հայտարարվում էր Միացյալ Արաբական Քազավորության ստեղծման մասին:⁸ Այդ նախագծով հաշիմյան ընտանիքի իշխանության ներքո միավորվելու էին Հորդանան գետի արևելյան և արևմտյան ափի տարածքները: Թագավորը ներկայացրեց այս նախագիծը՝ ելույթ ունենալով Բասման դղյակում: Նա ճշեց, որ դեռ 1948-1949թթ. արաբա-իսրայելյան պատերազմի ժամանակ, հուդանանյան բանակը, շնայած փոքրաքանակ էր, այնուամենայնիվ կարողացավ իսրայելյան ներխուժումից փրկել Պաղեստինի մի մասը և Երուսաղեմի արաբական մասը: Նա հիշեցրեց, որ ամբողջ Պաղեստինից արաբներին մնացին միայն որպես «Արևմտյան ափ» հայտնի շրջանը և Գազայի գոտին: Արևմտյան ափի միավորումը Անդրհորդանանին ներկայացվեց որպես ժողովրդի կամքի համաձայն մի քայլ: Եվ այժմ նույնպես մշվում էր (մասնավորապես հորդանանյան մասում), որ Հորդանանը Պաղեստինն է, իսկ Պաղեստինը՝ Հորդանանը, և Հաշիմյան ընտանիքի քնական իրավունքն է իշխել Պաղեստինում և ներկայացնել պաղեստինցիներին: Նման ծրագրի առաջ քաշումը, ըստ Ե.Պիրիյինի, հնարավոր էր միայն իսրայելցիների ասրիորի, լուսկյաց համաձայնության առկայության դեպքում⁹: Արաբական երկրների, մասնավորապես Իրաքի կողմից, այս ծրագիրը զնահատվեց որպես պարտվողական, արաբ ազգի և Պաղեստինի ժողովրդի շահերը դավաճանող մի ծրագիր: Ի հակակշիռ դրա, իրաքյան իշխանությունները որոշեցին առաջարկել Միրիային և Եզիպտոսին միավորվել Իրաքի հետ:¹⁰ ԱՄՆ մամուլը այդ շրջանում ակնարկում էր, որ Իսրայելն ու Հորդանանը գաղտնի կերպով փոխհամաձայնության են հասել պաղեստինյան խնդրի կարգավորման շուրջ: Նշենք, որ իսրայելյան պաշտոնական արձագանքը այդ նախագծի վերաբերյալ բացասական էր: Միայն Իսրայելի արտգործնախարար Ալլոնը հայտարարեց, որ Հուսեյն Քազավորի ծրագիրը չի հակասում իր սեփական պատկերացումներին այդ հակամարտության կարգավորման վերաբերյալ:¹¹ Իսրայելի շահերին լիովին համապատասխանում էր Հաշիմյան միապետի իշխանության ներքո ֆեդերատիվ Քազավորության առկայությունը, մինչդեռ առանձին պաղեստինյան պետության ստեղծման տարբերակը ձեռնադրել էր Իսրայելին: 1973թ. պատերազմից հետո, Մոշե Դալանը, որը պաղեստինյան խնդրի կարգավորման մի ծրագիր էր ներկայացրել դեռևս 1967թ., մասնավորեցրեց իր այդ ծրագիրը, մշելով, որ Իսրայելը իր իշխանությունը պետք է տարածի Գազայի գոտու, ամբողջ Երուսաղեմի և արևմտյան ափի տարածքների վրա, սակայն որոշ վարչական ֆունկցիաներ կարող են փոխանցվել Հորդանանին:

Մշակվեցին նաև մի շարք այլ ծրագրեր, որոնք միտված էին կարգավորելու մերձավորարևելյան հակամարտությունը: ԱՄՆ-ում մշակված մի շարք նախագծերի, մասնավորապես, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր

Ֆիզիկոսի ծրագրի դուրսըները, քույր եմ տալիս ենթադրելու, որ ինչ-որ գործընթացներ տեղի են ունեցել, որոնք հնարավոր են դարձնում արաբա-իսրայելյան սեպարատ փոխհամաձայնությունները:

Այսպես, Հորդանանին մեղադրում էին Իսրայելի հետ զաղտնի բանակցություններ վարելու մեջ ոչ միայն Պաղեստինի տարածքների հարցում: 1973թ. ապրիլի կեսերին, երբ Բեյրութում սպանվեցին երեք պաղեստինյան առաջնորդներ, զրավյալ տարածքների մամուլը մեղադրեց Հորդանանին այդ հարցում Իսրայելին աջակցելու մեջ¹²:

Իսկ միգուցե Հուսեյն քազավորը հենց սկզբից էլ, հասկանալով Մադաթի իրական նպատակները, չցանկացավ իր երկիրը ենթարկել փորձության: Համեմայնդեպս, մնան եզրահանգման կարելի է գալ ընթերցելով Հուսեյնի հարցազրույցը Ե.Պրիմակովի և Բ.Բելյակի հետ¹³:

Հաշվի առնելով, որ արաբական հանրապետական վարչակարգերը միտում ունենին տապալելու քազավորական ռեժիմը, իսկ ժամանակի երկրևեռ աշխարհի սոցիալիստական ճամբարում տեղ չկար քազավորական իշխանակարգով Հորդանանին, քազավորությունը ձգտում էր հզոր հովանավորներ փնտրել արևմուտքում, մասնավորապես, ի դեմս ԱՄՆ-ի ազատվելու արաբական երկրների կախվածությունից: Այսպես, 1952-1972թթ. ԱՄՆ-ը Հորդանանին տրամադրեց շուրջ 887,2 մլն. դոլարի տնտեսական և ռազմական օգնություն: Այս տվյալները ամփոփված էին ԱՄՆ-ի կոնգրեսում հրապարակված ամերիկյան գլխավոր վերահսկիչի հաշվետվության մեջ: Այդ հաշվետվության մեջ առկա էր ևս մի հետաքրքրական պահ: ԱՄՆ-ի հետաքրքրությունը Հորդանանի նկատմամբ բացատրվում էր ոչ միայն ամերիկա-արաբական ավանդական կապերով և արաբա-իսրայելյան հակամարտության անկախությամբ, այլ նաև երկրի (Հորդանանի) «հսկայական մակարդակի պաշարներով»:

Ամփոփելով վերը շարադրվածը, համոզվում ենք, որ իրադարձությունների հետագա տրամաբանական զարգացման արդյունքում Հորդանանը կարող էր լինել առաջին արաբական երկիրը, որը սեպարատ փոխհամաձայնագիր էր կնքելու Իսրայելի հետ: Մակայն իրականությունը ցույց տվեց, որ Հուսեյն քազավորը, զերծ պահելով Հորդանանը 1973թ. պատերազմից, այնուամենայնիվ, հետամուտ մնաց համաարաբական շահերին:

DAVID VIRABIAN

THE ARAB-ISRAELI WAR OF 1973 AND THE POSITION OF JORDANIA

(Summary)

In 1973 Jordan wasn't involved in the Arab-Israeli war as Syria and Egypt. There were some reasons for this. The presence of the Palestinians with their

military organisations which created in Jordan a "state in the state", negative attitude of the Jordanian society and the role of the USA. In addition to the above mentioned there was the negative position of neighbouring Arab countries towards the Kingdom of Jordan, which at that time was facing economic problems.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. G.Lenczowski, American Presidents and the Middle East, Durham, London, 1990, p. 125.
2. H.Rabinovich, H.Shaked, From June to October, The Middle East between 1967 and 1973, New Brunswick, New Jersey, 1978, p.239.
3. Н.Оганесян, Отношения Иракской Республики со странами Арабского Востока, Ереван 1985, с.74.
4. Е.Дмитриев, Палестинская трагедия, Москва, 1986, с.80.
5. Բ.Չարաշախաթյան, Սիրիա-ալեքսանդրյան հարաբերությունները (1967-1996), Երևան, 2000, էջ 47:
6. ТАСС, Атлас еженедельной иностранной информации 38/846/, 21 сентября 1973г., Об итогах переговоров Садата, Асада и Хусейна, с.42,43.
7. Е.Пырлин, Ближневосточный лабиринт, Москва, 1996, с.28.
8. Н.Оганесян, Указ.соч., с.76.
9. Е.Пырлин, Указ.соч., с.32.
10. Н.Оганесян, Указ.соч., с.76.
11. Е.Пырлин, Указ.соч. Указ.соч., с.35.
12. ТАСС, Атлас еженедельной иностранной информации 17/825/, 27 апреля 1973г., Печать об отношениях между арабскими странами и США, с.32.
13. Е.Примаков, История одного сговора, Москва, 1985, с.44.

ԱՐԱՔԻ ՓՈՒՍՊԱՆ

**ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

Մերձավոր և Սիջին Արևելքի քաղաքական գործընթացների վրա զգալի է իսլամի՝ որպես կրոնի և գաղափարախոսության անմիջական ազդեցությունը, որով ուրվագծվում է ուժերի նոր հարաբերակցություն: Միջազգային հարաբերություններում զնալով ակտիվանում է իսլամական համերաշխության շարժումը, որի շրջանակներում ներկայումս գործում են 70-ից ավելի միջազգային իսլամական կազմակերպություններ՝ կառավարական և ոչ կառավարական մակարդակով, որոնց մեջ առանձնանում է Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը (ԻԿԿ): Իրենց հետազոտություններում կազմակերպության քաղաքական, ֆինանսատնտեսական և մշակութային գործունեությանն են անդրադարձել Լ.Բ. Բորիսովը¹, Ն.Վ. Ժյանովը, Ա.Ա. Իզմատենկոն², Ա.Ի. Իոնովան³, Ի.Ի. Իվանովան⁴, Գ.Վ. Սիլոսովսկին⁵, Տ.Պ. Սիլոսովսկյան⁶, Ռ.Ս. Շաքիպովան, Է.Է. Նաջիպը⁷, Վ.Ֆ. Սիչևը⁸, Լ.Վ. Վալկովան⁹, Մ.Ի. Ֆիլիպովան¹⁰ և ուրիշներ: Սեզանում առաջինը հիշյալ խմբին անդրադարձել է Ն.Հ. Հովհաննիսյանը¹¹:

Հասկանալի պատճառով, տարածաշրջանի քաղաքական և տնտեսական անցուղարձերը չեն կարող չազդել Հայաստանի արտաքին քաղաքականության վրա: Ասվածի լավագույն ապացույցն է Իսլամական կոնֆերանս կազմակերպության դիրքորոշումը դարաբաղյան հակամարտության նկատմամբ¹²:

Իսլամական ռազմավարության նպատակը իսլամական երկրների քաղաքական, անտեսական, գաղափարական և մշակութային ինտեգրացումն է: Իսլամի ակտիվ մասնակցությունը քաղաքականության մեջ կամ, այլ կերպ ասած, քաղաքական իսլամի դրսևորումները նպատակ ունեն ոչ միայն արժեվորել իսլամի սկզբունքները, այլև կրոնական գործունի միջոցով զերակայության հասնել ինչպես զյոթալ, այնպես էլ ռեզիմնալ մակարդակներում: Իսլամական աշխարհի ամենախիտը, միևնույն ժամանակ ՍԱԿ-ից հետա ամենաբազմաճյուղ միջազգային կազմակերպությունը Իսլամական կոնֆերանսն է: Բնութով կրոնա-քաղաքական է, ձևավորվել է մանենդական համերաշխության հիմքի վրա, անդամակցելու իրավունքը վերապահ-

վում է միայն իսլամական երկրներին: Կազմակերպությանն անդամակցում են 56 պետություններ, որոնցից են Սաուդյան Արաբիան, Իրանը, Թուրքիան, Պակիստանը, Մալազիան, Մալի, Գվինեան և այլն: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ԻԿԿ-ին անդամակցում են նաև Ադրբեյջանը և Կենտրոնական Ասիայի հանրապետությունները: ԻԿԿ-ի անդամներն ունեն բնական հարստությունների հսկայական պաշար, մասնավորապես, էներգետիկ բնագավառում, զգալի մարդկային ռեսուրսներ ու ֆինանսական ծանրակշիռ միջոցներ: Անդամ երկրներից յուրաքանչյուրը գտնվում է սոցիալ-տնտեսական տարրեր մակարդակներում, ունի քաղաքական և տնտեսական զարգացման այլ ուղիություններ¹³: ԻԿԿ անդամ պետություններից շատերում իսլամ դավանող բնակչությունը փոքրամասնություն է: Գիտություն կարգավիճակով կազմակերպության աշխատանքներին մասնակցում են Կիպրոսի թուրքական համայնքը, Ֆիլիպինների Մորո ազգային ազատագրական ճակատը, միջազգային և տարածաշրջանային տարրեր կազմակերպություններ:

Իսլամական կոնֆերանս ստեղծելու լուրջ գործունեություն է ծավալվել 1960-ականներից՝ իսլամական համերաշխություն իրականացնելու և իսլամական աշխարհին հուզող խնդիրները լուծելու նպատակով: Իսլամական աշխարհում գերակայության հավակնող Սաուդյան Արաբիային մտահոգում էր 1960-ականներին արաբական ազգայնականության շեշտակի վերելքը: Սաուդյան Արաբիան Արևմտաեվրոպական ազդեցությանը վարձում էր հակակշիռ ազգայնականությունը տարածաշրջանում իսլամի դերի ընդլայնմանը: Դեպքերի ընթացքն արագացրեց 1967թ. արաբա-իսրայելական պատերազմում արաբների կրած պարտությունը և, մասնավորապես, 1969թ. օգոստոսին իսլամական երեք սրբավայրերից մեկի՝ Երուսաղեմի Ալ Ակսա մզկիթի հրկիզումը: Ստեղծված պայմաններում հրատապ էին Պաղեստինի և իսլամական սրբավայրերի պաշտպանության հարցերը: 1969թ. սեպտեմբերի 22-25-ը Ռաբատում տեղի ունեցավ Իսլամական կոնֆերանս կազմակերպության հիմնադիր համագումարը, կառավարական մակարդակով առաջին իսլամական համաժողովը, որին մասնակցում էին 25 իսլամական երկրների առաջին ղեկավարները¹⁴: Ռաբատում հավաքված իսլամական երկրների առաջնորդները համոզված էին, որ իրենց ժողովուրդները ձևավորում են անբաժանելի *Ումմա* (իսլամական ազգը - Ա.Փ.), որի օրինական իրավունքները անհրաժեշտ է պաշտպանել: ԻԿԿ արտաքին գործերի նախարարների երրորդ կոնֆերանսում (Ջիդդա, 1972թ.) ընդունվեց կազմակերպության կանոնադրությունը, ըստ որի Իսլամական կոնֆերանս կազմակերպության հիմնական նպատակներն են՝ անդամ պետությունների միջև իսլամական համերաշխության ամրապնդումը, տնտեսական, սոցիալական, մշակութային, գիտական և այլ բնագավառներում համագործակցության կազմակերպումը: Համաձայն կանոնադրության, անհրաժեշտ է ջանքեր գործադրել՝ պայքարելու ռասայական խտրականության և զաղութատի-

րության դեմ, աջակցել արդարության վրա հիմնված միջազգային խաղաղության ու անվտանգության հաստատմանը: Անհրաժեշտ է նպաստավոր պայմաններ ստեղծել անդամ երկրների և այլ պետությունների միջև համագործակցության և փոխըմբռնման համար, յուրաքանչյուր հակամարտություն հարթել խաղաղ ճանապարհով, ինչպիսիք են՝ բանակցությունները, միջնորդությունները և այլն, հարգել անդամ պետությունների ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը, ինքնորոշման սկզբունքը, չմիջամտել նրանց ներքին գործերին: Կանոնադրության ամենահրատապ հարցը Պաղեստինի ժողովրդի ազատ ինքնորոշման խնդիրն է, որի համար պետք է կոտրոլիմացնել գործողությունները՝ ազատագրելու և պաշտպանելու իսլամական սրբավայրերը, աջակցելու Պաղեստինի ժողովրդի պայքարին, օգնելու նրան՝ տեր կանգնելու իր իրավունքներին և ազատագրելու արաբական գրավյալ տարածքները¹⁵: Կազմակերպության գերագույն մարմիններն են՝ քաղաքականության, պետությունների և կառավարությունների ղեկավարների զագաթաժողովը, արտաքին գործերի նախարարների կոնֆերանսը և գլխավոր քարտուղարությունը¹⁶:

Գազաթաժողովը կազմակերպության քարձրագույն մարմինն է, գումարվում է երեք տարին մեկ անգամ անդամ որևէ երկրում և կոտրոլիմացնում է մասնակից պետությունների որդեգրած քաղաքականությունը՝ համադրելով այն իսլամական երկրների շահերին: Եթե իսլամական շրջանակներում առաջանում է որևէ հրատապ հարցի քննարկման անհրաժեշտություն, հրավիրվում է արտահերթ զագաթաժողով: Գազաթաժողովի որոշումներն ընդունվում են միաձայն: Որպես կանոն, զագաթաժողովից առաջ տեղի է ունենում արտգործնախարարների կոնֆերանսը, որը կազմակերպության քաղաքական մարմինն է: Այն գումարվում է տարին մեկ անգամ, անդամ որևէ երկրում: Արտգործնախարարների կոնֆերանսը նշանակում է ԻԿԿ գլխավոր քարտուղարին և նրա օգնականներին¹⁷: Գլխավոր քարտուղարությունը կազմակերպության գործադիր մարմինն է և կոտրոլիմացնում է մասնակից պետությունների միջև համագործակցությունը: ԻԿԿ-ի ներկայիս գլխավոր քարտուղարը Էզզեդին Լարաբին է՝ Մարոկկոյից¹⁸:

ԻԿԿ-ի պաշտոնական փաստաթղթերում նշվում է նաև 4-րդ գլխավոր մարմինը՝ իսլամական արդարության դատարանը, որպես ԻԿԿ-ի դատական մարմին, որի մասին կանոնադրության մեջ չի հիշատակվում: Ստեղծվել է 1981թ. Թաիֆի զագաթաժողովում և ղեկավարվում է մեջ է: Այն պետք է միջնորդի դեր կատարի բոլոր այն կոնֆլիկտներում, որ կծագի իսլամական պետությունների մեջ¹⁹:

ԻԿԿ-ի շրջանակներում գործում են Տնտեսական և առևտրական համագործակցության (Աճկաբա), Տեղեկատվության և մշակույթի (Մեքքա), Գիտական և տեխնիկական համագործակցության (Մեքքա) մշտական հանձնաժողովները:

ԻԿԿ-ին կից գործում են նաև ժամանակավոր հանձնաժողովներ. որոնք ստեղծվում են իսլամական շրջանակներում ճգնաժամի առաջացման դեպքում և լուծարվում ճգնաժամի կարգավորումից անմիջապես հետո: Ներկայումս գործում են Բոսնիայի և Հերցեգովինայի, Աֆղանստանի, Ֆիլիպինների, Պաղեստինի, Ջամբու և Բաշմիրի, Երուսաղեմի հանձնաժողովները:

Կազմակերպությունն ունի մի շարք օժանդակ մարմիններ: Դրանք են՝ Իսլամական համերաշխության ֆունդը և նրա վակֆերը (Ջիդդա), Երուսաղեմի ֆունդը և նրա վակֆերը (Ջիդդա), Կիճակագրության, տնտեսական, սոցիալական հետազոտությունների և իսլամական երկրների համար կադրերի պատրաստման կենտրոնը (Աճկարա), Իսլամական պատմության, աղվեստի և մշակութային հետազոտական կենտրոնը (Ստամբուլ), Տեխնոլոգիայի իսլամական ինստիտուտը (Դաքքա), Առևտրի զարգացման իսլամական կենտրոնը (Կասաբլանկա), Միջազգային մահիկի իսլամական հանձնաժողովը (Բենգազի), Իսլամական իրավագիտության ակադեմիան (Ջիդդա), Իսլամական ժառանգության պահպանության միջազգային հանձնաժողովը (Ստամբուլ, Էռ-Ռիադ), Գիտության, տեխնոլոգիայի և զարգացման իսլամական ինստիտուտը (Ջիդդա): ԻԿԿ-ին կից գործում են՝ Առևտրի և արդյունաբերության իսլամական պալատը (Կարաչի), Իսլամական մայրաքաղաքների և քաղաքների կազմակերպությունը (Սեքքա), Իսլամական մականատերերի կազմակերպությունը (Ջիդդա), Իսլամական համերաշխության խաղերի սպորտային ֆեդերացիան (Էռ-Ռիադ), Իսլամական քանկերի միջազգային ասոցացիան (Կահիրե) և այլն: Իսլամական կրոնֆերանսի հովանավորությամբ գործում են Ուզանդայի, Նիգերի, Բանգլադեշի և Մալազիայի միջազգային անկախ իսլամական համալսարանները:

ԻԿԿ-ի մասնագիտացված կառույցներն են՝ Ջարգացման իսլամական քանկը (Ջիդդա), Իսլամական կրթության, գիտության և մշակութային կազմակերպությունը (Ռաբաթ), Նորությունների միջազգային իսլամական գործակալությունը (Ջիդդա), Իսլամական երկրների ռադիոհաղորդումների գործակալությունը (Ջիդդա)²⁰:

Կազմակերպությունը սերտ համագործակցություն մեջ է ՄԱԿ-ի հետ²¹: ԻԿԿ-ի ամենակարևոր տնտեսական օղակը Ջարգացման իսլամական քանկն է, որի հիմնական նպատակն է աջակցել իսլամական ժողովուրդների տնտեսական և սոցիալական զարգացմանը՝ համաձայն իսլամական օրենքերի՝ շարիաթի²²:

Սակայն հարկ է նշել, որ ԻԿԿ-ին դեռևս չի հաջողվել ստեղծել քաղաքական միասնություն: Միջազգային իսլամական համերաշխության վրա քաղաքացիական անդադարի իրանա-իրաքյան պատերազմը, Աֆղանստանում շարունակվող հակամարտությունը: Չպետք է անտեսել այն հանգամանքը, որ իսլամում գոյություն ունի սուննի և շիա հավատքների տարբերությունը, որը լուրջ յոժվարություններ է ստեղծում միջիսլամական հարաբերություններում: Կոչ անելով միասնության և եղբայրության, կազմակերպ-

պոլիտիկայի մեջ չկա միասնական դիրքորոշում: Տնտեսապես թույլ երկրները ֆինանսական զգալի ներդրումներ են ստանում, իսկ ուղեղ երկրները քաղաքական աջակցություն են փնտրում կազմակերպության ներսում: Իսլամական կոնֆերանսի ստեղծումից ի վեր հիմնական ֆինանսական ներդրումները արվել են Սաուդյան Արաբիայի կողմից, որով էլ պայմանավորվում է այս երկրի գերիշխող դիրքը կազմակերպության մեջ: Սաուդյան Արաբիան մասնաշաղկապում է, և կազմակերպության ֆինանսական ու քաղաքական նշանակությունը ունեցող մի շարք կարևոր մարմիններ տեղակայված են հենց այստեղ: Մեկ այլ երկիր, որը նույնպես հավակնում է գերակայության, Իրանն է: Իհրակ-ի թեհրանի VIII գագաթաժողովը, որին Իրանը մեծ շուքով էր պատրաստվել, լուրջ քայլեր արեց իսլամական աշխարհը համախմբելու և Իրանի դերը տարածաշրջանում արժեկրեւի ուղղությամբ:

Չնայած ստեղծված համակարգին, համագործակցությունը միշտ չէ, որ հաջողված է: Անդամ պետությունների մեծամասնությունն ընդգրկված է մասնաշաղկապային այլ կազմակերպությունների մեջ, որը դժվարացնում է համատեղ աշխատանքը: Հարկ է նշել, որ Իսլամական կոնֆերանսին երբեմն չի հաջողվում հավատարիմ մնալ իր իսկ կողմից հռչակված սկզբունքներին: Չնայած որոշակի դժվարություններին, իսլամական համաշխարհային կոնֆերանսները այսուհետև նույնպես կպայքարեն իսլամական երկրները որպես ինքնուրույն քաղաքական ուժ ներկայացնելու համար: Իհրակ-ի ջանքերը՝ իսլամական աշխարհը համախմբելու պետական մակարդակով, փոքր նվաճում չէ, այն դեպքում, երբ իսլամական երկրները դեռևս հեռու են վերջնական համախմբումից: Ակնհայտ է, որ իսլամական պետությունները վտրժում են մեկ միասնական քաղաքականություն մշակել:

ARAKS PASHAYAN

ISLAMIC SUMMIT CONFERENCE. THE STRUCTURE AND MAIN OBJECTIVES

(Summary)

The Organization of Islamic Conference (OIC) is an international Islamic organization. The OIC primary goals are to promote Islamic solidarity among member-states in economic, social, cultural, scientific and other vital fields of activity. The OIC consists of Summit of heads of states, the annual Conference of Foreign Ministers and General Secretariat. The OIC has given birth to many subsidiary and affiliated bodies. Perhaps the OIC has been more successful in economic and cultural programs than in political matter, since Muslim states are still far from the cohesion and unity. Evidently Muslim states are trying to adopt united policy.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Борисов Л.Б., Организация Исламская Конференция: политические аспекты деятельности, "Народы Азии и Африки", 1983, No 4.
2. Жданов Н.В., Игнатенко А. А., "Ислам на пороге XXI века", М., 1989.
3. Ионова А.И., Ислам и международное экономическое сотрудничество, "Азия и Африка сегодня", 1983, No 3.
4. Иванова И.И., Турецко-арабские отношения и их место в системе международных связей на Ближнем Востоке (1945-1983), М., 1985.
5. Милославский Г.В., Интеграционные процессы в мусульманском мире, М., 1992.
6. Милославская Т.П., Милославский Г.В., Некоторые вопросы теории и практики финансово-экономической деятельности ОИК (Ислам. проблемы идеологии, права, политики и экономики, М., 1985), Концепция "исламского единства" и интеграционные процессы в "мусульманском мире" (Ислам и проблемы национализма в странах Ближнего и Среднего Востока, М., 1986).
7. Шарипова Р.М., Наджип Э.Э., Движение исламской солидарности. Основные теоретические концепции ("Исламский фактор" в международных отношениях в Азии, М., 1987), Наджип Э.Э., XIII сессия ОИК (Нигер. 1982) (Современный ислам: проблемы политики и идеологии, Вып. 2, М., 1983).
8. Сычев В.Ф., Новые тенденции в деятельности "Организации исламской конференции" (ОИК) (в том же сборнике, вып. 3, М., 1985).
9. Валькова Л.В., Саудовская Аравия в международных отношениях, М., 1979.
10. Филипова М.И., Оценка американскими учеными "исламского фактора" в международных отношениях ("Исламский фактор в" международных отношениях в Азии), М., 1987.
11. Оганесян Н.О., Активизация ислама: характер, специфика и последствия (Ислам в политической жизни стран современного Ближнего и Среднего Востока. Ереван, 1986), он же, Глобальная стратегия ислама: основополагающие принципы и конечные цели, "Вестник общественных наук", 1989/1.
12. Տե՛ս «Ազգ», 30 հունիս, 1999, էջ 5: Լարաբաղյան հարցը դիտարկելով իրրև հայ-արրբեանական հավամարտություն, Իվանական կոնֆերանսը 1992-ից սկսած դատապարտում է Արրբեանի նկատմամբ «հայկական ազրեսիան» և կոչ է անում Հայաստանին դուրս բերել զորրբրը «զրալյալ արրբեանական տարածր-ներրից»: Կազմակերպության քաջասական դրրբորոշումը դարաբաղյան հավամարտության նկատմամբ չի կարող սուվր ցցել ներկայումս մի շարք իվանական երկրների հետ ՀՀ մրբանական հարաբերությունների զարգացման վրա:
13. Socio-Economic Information Handbook on Islamic Conference Organization's Member Countries, Tehran, 1997, p. 17, 19, 23, 24.
14. Валькова Л.В., Саудовская Аравия..., стр. 163-173.
15. The Islamic Summit Conference. Sixth Issue. Revised Edition, November 1981, Kuwait News Agency, p. 56.
16. Նույն տեղում, էջ 57:
17. Նույն տեղում, էջ 57-58:

18. Որպես ԻԿԿ-ի գլխավոր քարտուղար պաշտոնավարել են՝ Թանգու Արդուլ Ռահման Բուտրա Ալ-Հաջը (Սալազիա, 1970-1973թթ.), Հասան ալ Թուխամին (Եգիպտոս, 1974-1975թթ.), Ամարու Քարիմ Գային (Սենեգալ, 1975-1979թթ.), Հարիր ալ Շատտին (Թունիս, 1979-1984թթ.), Սեյիդ Շարիֆ Ադլին Փիրզադան (Պակիստան, 1985-1988թթ.), Համեդ ալ Ղարիբը (Նիգեր, 1989-1996թթ.):
19. Ближний Восток и международное право, М., 1992, стр. 169.
20. IRCICA Newsletter, 1995, No 37, p. 23.
21. Իսլամական կոնֆերանսը դիտորդի կարգավիճակով մասնակցում է ՄԱԿ-ի աշխատանքներին: ՄԱԿ-ի և ԻԿԿ-ի համագործակցությունն անկվում է միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը, զինաթափմանը, մարդու իրավունքների պահպանմանը և այլն:
22. Ջարգացման իսլամական քանկ, հարցեր և պատասխաններ, Ջիդդա, 1997 (արաբերեն):

ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

ԱՐՄԵՆ ԲՈՅՈՒՅՈՒՄ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԻՐԻԱՅԻ ՀԵՏ Ք.Ա. 3-2-ՐԴ ՀԱՋԱՐԱՄՅԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԻՆ

Հարավային Հայաստանը (պատմական Հայաստանի Ծովք, Աղձնիք, Կորճայք նահանգները) մշտապես առևտրա-տնտեսական և մշակութային հարաբերությունների մեջ է գտնվել Միջին հեռու, և պատահական չէ, որ Հայաստանի հնագույն պատմության խնդիրները հասկանալու իմաստով էապես կարևորվում է այդ տարածաշրջանի դերը: Պատմական որոշակի շրջափուլերում Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանները մուսուլման մշակութային գոտի են կազմել սիրիական տարածքների հետ, ինչի հիմքում ընկած է, բնականաբար, աշխարհագրական գործոնը: Որոշ մասնագետներ (կարծում ենք ոչ այնքան ճշգրտորեն) մուսուլման պնդում են, որ խնդրո առարկա շրջանները և՛ աշխարհագրորեն, և՛ մշակութապես ձուլվում են հյուսիսային Միջին հեռու:

Հայկական լեռնաշխարհի և ընդհանրապես առաջավորասիական շրջանների հետ առնչությունների պարզաբանման իմաստով հատկապես կարևորվում է հյուսիսային Միջին հեռու, որը շնորհիվ իր աշխարհագրական յուրահատուկ դիրքի, մշտապես միջնորդի դեր էր կատարում իրենից հարավ և հյուսիս ընկած երկրների համար: Գրավոր աղբյուրների ուշադիր քննությամբ ցույց է տալիս, որ Ք.ա. 3-2-րդ հազ. սահմանին և, ընդհանրապես, բրոնզի դարում առնչություններ չեն նկատվում Միջագետքի և Եգիպտոսի, Միջագետքի և Քանաանի, կենտրոնական և հարավային Միջին միջև: Միջագետքյան ճանապարհները գլխավորապես ուղղված են դեպի հյուսիսային Միջին: Մրա պատճառն այն է, որ դեպի կենտրոնական Միջին և Պաղեստին տանող ճանապարհը անցնում էր անապատով և ավանակներով հարմար չէր ճանապարհորդելը, բացի այդ, մշակած ճանապարհը վտանգավոր էր քոչվորների պատճառով: Պաղեստինը և հարավային Միջին հարուստ չէին օգտակար հանածոներով, մինչդեռ Հյուսիսային Միջին գտնվում էր հանքավայրերով հարուստ հյուսիսային տարածքների հարևանությամբ և մասամբ հասու էր լեռնային երկրների հանքային հարստության:

յուններին: Այստեղ կարելի էր ձեռք բերել ոչ միայն տեղական, այլև անտառային, կիպրոսյան, էգեյան, պաղեստինյան, եգիպտական ապրանքներ: Քարեղնյան առևտրականները կարող էին հյուսիսային Սիրիա հասնել կամ Եփրատով դեպի վեր, կամ մեկ այլ՝ ավելի երկար, սակայն ավելի ապահով և հարմար՝ Տիգրիսի հոսանքով դեպի վեր, այնտեղից հյուսիսային Սիրիա՝ Կորճայքի վրայով տանող ճանապարհներով՝:

Շոփքի⁶, Աղձնիքի⁷ և Կորճայքի⁸ հնագիտական տվյալները ցույց են տալիս, որ այս շրջանները Ք.ա. 4-րդ հազ. վերջին և 3-րդ հազ. առաջին կեսին շատ սերտ հարաբերությունների մեջ էին գտնվում հյուսիսային Սիրիայի հետ: Այստեղ ոչ միայն խեցեղենի մեծ մասն է հյուսիսսիրիական (reserved slip ware, simple ware, metallic ware), այլև մշակութային մի շարք այլ առանձնահատկություններ. միևնույն ժամանակ սիրիական հուշարձաններում ի հայտ են գալիս ապրանքատեսակներ հարավային Հայաստանից՝ Սիրիա-միջագետքյան ազդեցությունները հարավային Հայաստանում գուցակցվում են անդրկովկասյան և մասնավորապես Կուր-արաքսյան տարրերի առկայությամբ (ավելի շատ Շոփքում և Աղձնիքում, քիչ՝ Կորճայքում):

3-րդ հազ. երկրորդ կեսին եփրատյան ճանապարհով Շոփքից Սիրիա են մտնում անցում Կուր-արաքսյան ազդեցությունները, որ հատկապես զգալի են Ամուկի հովտում⁹: Միևնույն ժամանակ հյուսիսային Սիրիայի հետ կապը ցույց է տալիս սիրիական հուշարձաններին ամենաբնորոշ վերոհիշյալ խեցեղենի շարունակաբար ի հայտ գալը հարավային Հայաստանում, քեև ավելի քիչ քանակությամբ քան 3-րդ հազ. սկզբին¹⁰: Շոփք-Մալաթիա շրջանից հյուսիսային Սիրիա տանող ճանապարհը պիտի անցներ Մարաշի և Էլ-բիտանի վրայով, որտեղ ևս հայտնի են Կուր-արաքսյան մշակույթի հետքեր¹¹: Անդրկովկասյան ազդեցությունների ամենածաղկուն շրջանը Սիրիայում 2600-2400թթ միջև էր¹²: 3-րդ հազ. վերջին Սիրիայում բնակավայրերի քանակը աճում է զրեթև 200 տակտով, եռում է քաղաքային կյանքը Էրալի առևտրի համակարգում, սակայն 2-րդ հազ. սկզբին նկատվում է քաղաքային կյանքի համեմատական անկում¹³: Էրալի ավերումից հետո Սիրիայի տնտեսական կենտրոնը տեղափոխվում է Ռոքշու (Հայկական Տավոսից հարավ)¹⁴, էլ ավելի մոտենալով Հայկական լեռնաշխարհին: Նմանատիպ գործընթացներ են նկատվում նաև հարավային Հայաստանում. ենթադրվում է, որ Էրալյան առևտրականները հասել են Խարբեղլի հովիտ՝ իրենց հետ բերելով սիրիական ազդեցություն, որն ակնհայտ է խեցեղենի և ճարտարապետության մեջ¹⁵:

Ք.ա. 2-րդ հազ. սկզբին հյուսիսային Սիրիան ընդգրկվում է կապադոկիական առևտրի շրջանում, ինչի մասին վկայում է սիրիական ներմուծված ապրանքների առկայությունը Քանեսում¹⁶: Կապադոկիական առևտրում պիտի անպայմանորեն ընդգրկված լինեին նաև հարավային կողմից շրջանները: Մակայն հնագիտական նյութերը, հատկապես Շոփքի տարածքից, քիչ ատնություններ են ցույց տալիս կենտրոնա- և հարավամատուցական

շրջանների հետ, մինչդեռ կապերի լավագույն փաստեր են արձանագրված հյուսիսային Սիրիայի հետ (դուրզի վրա պատրաստված մոխրագույն, մարմնագույն կամ բեմ խեցեղենը, հյուսիսսիրիական գունագաղղը իր գու-
գահեռներով՝ Համա H, Թեյ Մարդիխ IIIA, Ամուլ G-H, Խառանի մուգ դեղին խեցեղենը, Խարուրյան խեցեղենը՝ Ծոփքի և Աղձնիքի հուշարձաններում)¹⁸։
2-րդ հազ. առաջին կեսին Աղձնիք (Ուլ թեփե) են հասնում Բալիխի ավազա-
նի նյութական մշակույթի ազդեցությունները (Համամ էթ Թուրքման VII տի-
պի խեցեղեն)¹⁹։

Սիրիայի և Հայկական լեռնաշխարհի վերինեփրատյան շրջանների միջև գոյություն ունեցող առևտրական կապերը հատկապես լավ նկատելի են սի-
րիական տափաշների հանգամանքով, որոնք մշտապես եղել են Սիրիայի
հետ առնչությունների բացահայտման կարևոր չափանիշ²⁰։ Այս տափաշնե-
րը հասնում են մինչև Փոքր Հայք (Աբսլանթեփե VID)²¹, Ծոփք (Նորշունթե-
փե VI²²) և ընդհուպ մինչև Բարձր Հայք (Սոս Հյույսթ)²³։ Այնուհայտ է եփ-
րատյան ճանապարհի դերը խեցեղենի այս տեսակի տարածման պարա-
զայում։ Խարուրի ավազանում արձանագրվել են տափաշների շատ քիչ
գտածոներ, իսկ Տիգրիսի ավազանում նրանք ընդհանրապես չեն հայտնա-
բերվել։ Սա կարող է վկայել այն մասին, որ 3-2-րդ հազ. սահմանին գոյու-
թյուն են ունեցել միմյանցից էապես տարբերվող երկու ճանապարհներ՝ տիգ-
րիսյան և եփրատյան։ Այն հանգամանքը, որ Սիջազետքի աքքադական
բնակավայրերից չեն գտնվել սիրիական տափաշներ կամ այլ սիրիական
ներմծված ապրանքատեսակներ, վկայում է թերևս այն մասին, որ աքքա-
դացիների իշխանության հաստատումով Սիջազետքում առևտրական ճա-
նապարհները փոխվեցին և հյուսիս-արևմտյան կապերը տեղի էին ունենում
գլխավորապես հյուսիսային Սիրիայի վրայով²⁴։


Ք.ա. 2-րդ հազ. երկրորդ քառորդին սիրիական շրջանների հետ առնչու-
թյունները արտահայտված են միասնական՝ նուզի-ալալայյան սպիտակ
գունագաղղումով և հիմնագույնի վրա խեցեղենի ի հայտ գալով ծովափյան
հուշարձաններում²⁵։ Միևնույն ժամանակ Ալալայի XVI-VIII շերտերում ի
հայտ է գալիս ծովափյան գունագաղղ խեցեղեն²⁶, որը զարդանտիվներով
եական գուգահեռներ է գտնում Անդրկովկասի համաժամանակյա հուշար-
ձաններում։

Բացի խեցեղենից, առնչությունների մասին կարող են վկայել ծովափյան
հուշարձաններում ի հայտ եկող միտանիական կնիքները²⁷ և սիրիական
արձանիկները²⁸, որոնց հետավոր ազդեցությունները, թերևս, հասնում են
Անդրկովկաս²⁹։

Առևտրական ճանապարհները սահմանում են բնական պայմանները՝
անցումները՝ լեռնային շրջաններում, գետերը՝ հովիտներում (քարտեզ 1, 2),
հետևապես հիմքեր կան ենթադրելու, որ հայտնի ամտիկ շրջանի սիրիա-
կան ճանապարհները գոյություն ունեին նաև մեզ հետաքրքրող ժամանա-
կաշրջանում³⁰։



Նկ. 1. Լուսազար Արևելի ռելիեֆը (լստ Է. Massou, Le pays des Hittites: Les Dossiers d'Archéologie, 193, 1994, p. 50)



Նկ. 2. Լուսազար Արևելի բնագրան աննապարհները (լստ Է. Abay, Die Keramik der Frühbronzezeit in Anatolien mit «syrischen Ahi mitcu», Münster, 1997)

Ըստ գրավոր տվյալների, 2-րդ հազ. առաջին կեսին գոյություն ունեին հյուսիսսիբիրիական երկու հիմնական ճանապարհներ՝ այսպես կոչված «եռուզահանի ճանապարհը» (“Dream Book route”) Միսկալար-Ռասայիբում-Մարի-Էմար-Հալեպ-Քատոնա-Հազոր ուղղությամբ, և Մարի-Քատոնա ճանապարհը (առանց Հալեպի շրջան մտնելու): Մրանք ունեին իրենց բազմաթիվ ճյուղավորումները, որոնք հյուսիսում մասամբ համընկնելով կապաղովկիական առևտրական ճանապարհին՝ բարձրանում էին մաև մեր շրջանները³¹: Եթե փորձենք այս տեղեկությունները դիտարկել հայտնի հնագիտական տվյալների համատեքստում, ապա ճշմարտամասն կարելի է համարել այն տեսակետը, ըստ որի հյուսիսային Միդիայի և Միջագետքի քաղաք-պետությունները հարակից շրջաններին կարող էին առնչվել երեք հիմնական ուղղություններով և, մասնավորապես, 1) Խոսր գետի վերին հոսանքով դեպի Իրանական սարահարթ ընթացող ուղին, որ ճանապարհների հանգուցակետում էր գտնվում Թեփե Գավրա հուշարձանը, 2) Եփրատյան ճանապարհը, որ կարևոր դեր պիտի խաղար Մարին, և 3) Միջերկրական Տիգրիսին առնչող ճանապարհը, որի վրա էր գտնվում Թեյ Նուեռանը³²:

Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանները Միդիա պիտի արտահանեին գլխավորապես պղինձ և մկնդեղ³³: Ապրանքների հիմնական հոսքը Միդիայից գնում էր Էրբիստան, որտեղից Գյոկսունով դեպի կենտրոնական Անատոլիա և Հալիսի հարավային շրջանները³⁴: Այս ճանապարհի ճյուղավորումներից մեկը անպայմանորեն պիտի բարձրանար հարավային Հայաստան, որտեղից կենտրոնական Հայաստանով՝ դեպի Անդրկովկաս, ինչի մասին կարող են վկայել հնագիտական մի շարք տվյալներ Հայաստանի Հանրապետության և հարակից տարածքներից³⁵: Այս իմաստով հատկապես պիտի կարևորվեր Ուզարիտից և Բիբրոսից եկող և վերին Եփրատով անցնող առևտրական ճանապարհը³⁶: Ըստ անտիկ սկզբնաղբյուրների և հնագիտական տվյալների՝ Անդրկովկասի և Արևիայի կապը կարող էր իրականանալ այն միջազգային ճանապարհով, որի մի հատվածը կոչվում էր Տիգրանակերտ-Արտաշատ և որի հիմնական երակը գալիս էր հյուսիսսիբիրիական և միջագետքյան շրջաններից (Մծբին, Եղեսիա)³⁷: Այն լիովին համապատասխանում էր բրոնզեդարյան ճանապարհին, երբ մի կողմից Մծբինի շրջանը (Բրակ, Չագար Բագար), մյուս կողմից էլ Եփրատի հովիտը (Տիգրիս, Լիդար) պիտի լինեին հարավային Հայաստանի և Միդիայի առնչությունները միջնորդող ամենահարմար շրջանը³⁸:

Ամփոփելով՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Միդիայի հետ հարաբերություններում պիտի կարևորվեր եփրատյան ճանապարհը՝ հետևապես Շուփքի տարածքը, մինչդեռ Աղձնիքի և Կորճայքի շրջանները այդ դերը պիտի զլխավորապես խաղային Միջագետքի մկատմամբ: Մակայն ինչպես հյուսիսային Միդիան և հյուսիսային Միջագետքը, այնպես էլ հարավային Հայաստանի վերոնշյալ երեք շրջանները, ունենալով զարգացման շատ նման-օրինաչափություններ, գտնվում էին սերտ փոխշփումների մեջ՝ կազ-

մելով մի տեսակ ընդհանուր պատմամշակութային փոխազդեցությունների գոտի, սակայն պահպանելով իրենց յուրահատկությունները, որոնք կայանում էին նրանում, որ, ի տարբերություն հյուսիսային Սիրիայի և Միջագետքի, Մուսիքը, Աղձնիքը և Կորճայքը ձգտում էին դեպի հյուսիս՝ Հայկական լեռնաշխարհ: Այսինքն՝ Բրոնզի դարում գործում էին պատմական զարգացումների գրեթե նույն օրինաչափությունները, ինչ ամտիկ շրջանում, և չպետք է մոռանալ, որ Կամմագենեի և հարակից շրջանները միջանկյալ դեր էին խաղում այդ հարաբերություններում³⁹:

ARSEN BOBOKHYAN

THE RELATIONS OF SOUTHERN ARMENIA WITH NORTH SYRIA AT THE END OF THE III-BEGINNING OF THE II MILLENNIUM B.C.

(Summary)

The southern regions of Armenian Highland (respect. the provinces of Tsopk, Aldznik, Korduk of historical Armenia) have had permanent contacts with North Syria (as well as North Mesopotamia), in particular periods forming even cultural zones with the above mentioned territories. The aim of the article is to show that in the period under consideration the southern Armenian regions had active contacts with North Syria, but they had mere trade significance. Moreover, the main road of communications is supposed to be the Euphrates route through Tsopk, meanwhile the regions of Aldznik and Korduk were the main artery for the relations with North Mesopotamia.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ch.Burney, Eastern Anatolia in the Chalcolithic and Early Bronze Age, "Anatolian Studies" (=AS), 8, 1958, p.158; G.Kuntelian, Notes sur les monuments arméniens de la région de Kharpuz; In: The Second International Symposium on Armenian art, Yerevan, v. II, 1981, p.211-217.
2. Б.Б.Пиотровский, Материальная культура Армянского Нагорья; в кн.: Очерки по истории армянского изобразительного искусства, Ер., 1979, с.12.
3. L.Woolley, North Syria as a cultural link in the ancient world, The Hugley Memorial Lecture, London, 1942, p.1-10; N.V.Khazaradze, Tabal. Remarks on the ethnocultural description of eastern Asia Minor, "Acta Antiqua", 22, 1974, p. 432.
4. K.Schmidt, Norşuntepe I, Mainz am Rhein, 1996, s.1; J.L.Huot, Les céramiques monochromes lissées en Anatolie à l'époque du Bronze Ancien, Paris, 1982, p.991.
5. A.Altman, Reconsideration of the trade relations between Mesopotamia and Canaan during the Middle Bronze Age, Michmanim, 9, 1996, p.43

6. Kaban Project Publications, v. 1-7, Ankara, 1970-1982.
7. G.Algaze, The Tigris-Euphrates archaeological survey project 1988, *Arkeoloji Sonuçları Toplantısı (=AST)*, 7, 1989: 391-403; G.Algaze, M.Rosenberg, The Tigris-Euphrates archaeological reconnaissance project 1989, *AST*, 8, 1990, p. 137-161; M.Rosenberg, The Batman river archaeological reconnaissance survey 1990, *AST*, 9, 1991, p. 447-460; M.Rosenberg, H.Togul, The Batman river archaeological site survey 1990, "Anatolica", 17, 1990, p. 241-254. Algaze G., The Tigris-Euphrates archaeological reconnaissance project 1990, *AST*, 9, 1991, p. 425-445.
8. Նույն տեղում:
9. A.Palmieri, Excavations at Arslantepe, *AS*, 31, 1981, p. 110; Fuesanta J.G., Some architectural relations between eastern Anatolia, Syria, Mesopotamia and Iran during the end of fourth millenium B.C., In: *I.Metin-Akyurt Bahattin Devan Ani Kitabı*, Istanbul, 1995, p.127-134.
10. M.J.Mellink, Anatolian Chronology, in: *Chronologies*, In: *Old World Archaeology*, Chicago, 1965, p.117.
11. A.G.Sagona, The Caucasian region in the Early Bronze Age, Oxford, 1984, p. 108-114.
12. J.Mellaart, The Chalcolithic and the Early Bronze in the Near East, London, 1966, p. 77.
13. Древняя Эбла, М.1985, с. 52-60, 61-81; P.Mathiae, Ebla. Un empero ritrovato, Torino, 1995, p. 121-124.
14. P.Mathiae, On this side of the Euphrates, In: *Between the Rivers and over the Mountains (=BROM)*, Rome, 1993, p. 523ff.
15. F.Pincock, Trade at Ebla, *Bullein of the Society for Mesopotamian Studies*, 7, 1984, p. 31.
16. Ch.Burney, Aspects of excavations in the Altmova, *Eİzığ*, *AS*, 30, 1980, p. 161-3; H.Gladiss, H.Hauptmann, Norşuntepe, *Antike Welt*, 2, 1974, S.13.
17. T.Özgül, New observations on the relationship of Kültepe with south-east Anatolia and North Syria during the IIIrd Mill.B.C., In: *Ancient Anatolia. Aspects of Change and Cultural Development*, Wisconsin, 1996, p. 31-47.
18. G.M.di Nocera, Die mittelbronzezeitliche Keramik von Arslantepe, *BROM*, 1993, S.423,430-431; H.Hauptmann, Die Grabungen auf dem Norşuntepe-1970, KP-1 (=Kaban Project Publications), 1972, S. 108; B.Einwag, Die Keramik aus dem Bereich des Palastes A in Tall Bi'a/Tutul und das Problem der frühen mittleren Bronzezeit, München, 1998, S.137-141; U.Esin, Tepecik excavations 1969, KP-2, 1971, pl. 18, 191; Խառանի շրջանի հետ Ծոփքի հարսրերությունների մասին հմմտ. A.Özfrat, *Eskicagda Harran*, Istanbul, 1994, s. 35:
19. V.Sevin, Üc Tepe, *AS*, 39, 1989, p.184; M.H.Gates, *Archaeology in Turkey*, *American Journal of Archaeology*, 98, 1994, p.261.
20. U.B.Atkim, *Anatolia I*, Geneve, 1968, p.146.
21. A.M.Conti, C. Persiani, Cultural development in eastern Anatolia in the Early Bronze Age, *BROM*, 1993, Fig. 9: 1-4.
22. H.Hauptmann, Norşun-Tepe, *Istanbul Mitteilungen*, 1969-1970, S.53.
23. A.Sagona et al., Excavations at Sos Höyük 1995, *AS*, 46, 1996, p. 37.
24. A.Schachner, *Von der Rundhülle zum Kaufmannshaus*, Oxford, 1999, S.88-89.
25. U.Esin, Tepecik excavations 1969, KP- 2, 1971, p.125; H.Gladiss, H.Hauptmann, *Ելիւզլու*, 1974, էջ 16-17:

26. Burney, Բշվ. աշխ., 1958, էջ 175; Ch.Burney. Arslantepe as a gateway to the highland, BROM, 1993, p. 316:
27. H.Hauptmann, Բշվ. աշխ., KP-1, 1970, S.119; U.Esin, Բշվ. աշխ., KP-2, 1971, p.124:
28. M.van Loon, H.G. Güterbock, Korusuere excavations 1969, KP-3,1972, p. 83.
29. С.А.Есаян, Скульптура Древней Армении, Е.,1980, с.19.
30. A. Mari, Palmyra as an important station on the caravan's road during the second millennium B.C. In: Les Annales Archéologiques Arabes Syriennes, v.42, 1996, 137; M.Lebau, Les voies de communication en Syrie et Mesopotamie au 3-eme millenaire av. J.-C., In: Aleppo and The Silk Road, Damaskus, 1994, p. 46; Ամսիկ Դուրս Եվրոպոս-Պարսիրոս-Դամասկոս ճանապարհի գոյություն ունեցող ընդ Մարիի արևմտի ժամանակաշրջանում: Մարիի ճանապարհի մասին հմտ. J.C. Castillo, The state as an enterprise. The case of Mari; In: Studies in the Neolithic and Urban Revolution, Oxford, 1987, p.319; Մարիի ճանապարհին մասամբ համապատասխանող քանդանգի ճանապարհը անցնում էր հարավային Հայաստանով, հմտ. J.Lewy, Old Assyrian evidence concerning Kussara and its location, "Anadolu Araştırmaları", II/1, 1965, 307.
31. P.Gerstenblith, The Levant at the beginning of the Middle Bronze Age, Winona Lake, 1983, p.16.
32. H.Crawford, An early dynastic trading network in North Mesopotamia, In: La Circulation des Biens des Personnes et des Idées dans le Proche-Orient Ancien, Paris, 1992, p.77.
33. J.L.Montero-Fenollos, Le travail et le commerce du metal en Syrie du Nord, Orient Express, 1, 1997, p.19; M.J.Sasson, A sketch of North-Syrian economic relations in the Middle Bronze Age, Journal of the Economic and Social History of the Orient, 9, 1966, p.168.
34. Древняя Эбла, с. 29.
35. А.А.Мартirosян, Город Тейшебаини, Е., 1961, с.130; Э.В.Ханзадян, Результаты раскопок 1996г. Мецамора; в кн.: Археологическая Конференция Кавказа, Тбилиси, 1998, с.145; М.А.Гусейнов, Керамика Восточного Закавказья эпохи Поздней Бронзы и Раннего Железа, Баку, 1989, с. 64-76; Ա.Փիլիպոսյան, Հայկական ինքնաշխարհի մ.թ.ա. 3-2-րդ հազ. հուշարձաններից հայտնաբերված ծովախեցիները; Հայաստանի Հանրապետությունում Դաշտային Հնագիտական Հետազոտությունների և Վերականգնման Թեզիսներ, Երևան, 1998, էջ 64.
36. Э.В.Ханзадян, Б.Б. Пиотровский, Цилиндрическая печать с древнеегипетской иероглифической надписью из раскопок Мецамора, ՊԲՀ, 4, 1984, էջ 64-65:
37. Г.А.Тирация, О торговых связях Армении с Сирией в античное время, "Палестинский Сборник", 4, 1959, с.73-78; U.Serdaroglu, Agin and Kalaycik excavations, KP-3, 1972, p.43.
38. A.Schachner, Բշվ. աշխ., էջ 77.
39. M.Özdoğan, Lower Euphrates Basin 1977 survey, Istanbul, 1977; P.Wattenmaker, Household and state in Upper Mesopotamia, Washington-London, 1998, p.21; Թեև այս շրջանների երբեմն Շոփրի հետ միասին ընկալվում են որպես մեկ պատմամշակութային գոտի (հմտ. A.G. Sagona, Բշվ. աշխ., 1984, p.196), սակայն ի տարբերություն Կոմագենեի և հարակից շրջանների, Շոփրը, ինչպես բրոնզի դարում, այնպես էլ ավելի ուշ շրջաններում, զարգացման միտումներով ձգտում է դեպի հյուսիս:

ԱՐՏԱԿ ՄՈՎՄԻՍՅԱԼ

ԿԱՐԵՎՈՐ ՄԻ ՌԻՎՈՒՄ

(Կարմիր բլուրի սեպագիր սալիկներից մեկի առնչությամբ)

Վանի թագավորության պատմության ուսումնասիրության վիճահարույց խնդիրներից մեկը եղել է Ռուսայի հայր Էրիմենայի ինքնուրույն պարզաբանումը: Ընդ որում, քննարկման առարկա են եղել և՛ Էրիմենայի իշխանության ժամանակը, և՛ նրա զահակայած, քե միայն թագավորի հայր լինելու հարցը, և՛ անգամ «Էրիմենայի» անձնանուն, քե ցեղանուն լինելը: Վերջին երկու հարցերի պատասխանները գտնված համարվեցին Կարմիր բլուրից 1957թ. հայտնաբերված մի սեպագիր կավե սալիկի՝ հրապարակումից հետո, իսկ իշխանության ժամկետի հարցը տակավին մնում է քննարկման առարկա:

Ի՞նչ տվեց Կարմիր բլուրից գտնված սալիկը:
Սալիկի կնքադրոշմին Ի.Մ.Գյակոնովը կարդաց՝
[^m] E-[r]-me-n[a-n]é^m A[r (??) - ...] - Է[ր]իմեն[ա] Ա[ր ...], ճշելով նաև, որ Էրիմենա անվանը հաջորդած անձնանունը ցուցիչից հետո վնասված վանկը կարող էր լինել և՛ A[r], և՛ R[a]⁶:

Ի տարբերություն նախկինում հայտնի բնագրերի, որոնցում Էրիմենա անվանը հաջորդում էր he («որի») սեպանշանը, այստեղ անվանից հետո Ի.Մ.Գյակոնովն ընթերցեց ո՛ւր, որն էլ համարվեց Էրիմենայի զահակայած լինելու վերջնական հաստատում⁶: Այդ տեսակետն արդեն շուրջ չորս տասնամյակ համարվում է աներկրա:

Վանի թագավորության մեհենագրերի ուսումնասիրության ընթացքում հատուկ ուշադրություն դարձրեցինք մշված սալիկի կնքադրոշմին, քանի որ քիայնական կմիքներում հաճախ են հանդիպում մեհենանշաններ: Առաջին իսկ զննումից ակնառու դարձավ մի հանգամանք, որը զարմանալիորեն անուշադրության է մատնվել (թեպետ դա տեսանելի է նաև Ի.Մ.Գյակոնովի գրքում բերված լուսանկարում, մկ. 1): Սովորաբար սալիկի վրա գրելը վերջացնելուց հետո տեքստի տակ դրվել է կմիք, ընդ որում, երկու կատարումով: Կմիքը (որ զլանած էր) նախ սալիկի ողջ լայնությամբ գործվել է կողային մակերեսով՝ դրոշմելով պաշտամունքային բնույթի պատկերներ և արքայի (երբեմն՝ արքայազնի) անունն ու հայրանունը կրող գրություններ վերին ու ստորին եզրերին, ապա դրոշմվել է նաև կմիքի ստորին կողմը (հա-

տույթը): Այս սալիկի վրա լայնակի գործանքը ստացված կնիքի կուլային մակերեսի դրոշմվածքը մեկ կատարման արդյունք չէ. կնիքը գուրվել է մինչև սալիկի կնիքը, ասիս երկրորդ անգամ գործվելով կեսից հասցվել մինչև վերջ (աջ եզրը): Ընդ որում, առաջին և երկրորդ գործումները չեն արվել մեկ գծի վրա. սալիկի կենտրոնում ակնհայտ է երկու գործումների եզրագծերի տարբերությունը (տե՛ս նկ. 2): մինչդեռ Ի.Մ.Գյակոնովի մոտ դրանք ներկայացված են մի գծի վրա, որպես մեկ գործանք արդյունք (տե՛ս նկ. 3): Սա կնիքի գործանքը ընթացքի ընդհատման պարզ արձանագրում չէ. սալիկի կեսից արված երկրորդ գործանք արդյունքում դաջվել են *ri* և *me* վանկանշանները, մինչդեռ Ի.Մ.Գյակոնովը ընթերցել է [n]e^oA[r (??) - ...] կամ [n]e^oR[u (??) - ...]:


Ինչո՞ւ և ինչպե՞ս է առաջացել նման թյուրիմացությունը: Ինչպես նշվեց, Ի.Մ.Գյակոնովը չի նկատել երկրորդ տողի՝ առաջինից ցածր լինելը, դրանք ընկալելով որպես մեկ տող: Այդ պատճառով նա ո՛ր վանկի առաջին չորս սեպերը համարել է ո՛ր վանկի նշան, բայց քանի որ ո՛ր թե լինելու համար պակասում է վերին հորիզոնական երկար սեպը, ենթադրել է, որ այն ջնջված է (տե՛ս նրա գրչանկարը՝ նկ. 3): Իրականում վերին սեպանշան չան չի էլ եղել. այդ է ցույց տալիս նաև երկրորդ և երրորդ սեպանշանների երկարությունը (ո՛ր լինելու դեպքում դրանք պետք է կարճ ուղղահայացներ լինեին): Ri վանկի առաջին չորս սեպերը ո՛ր-ի ստորին մասը համարելուց հետո ավելացել է *ri*-ի վերջին՝ հիմնգերող բաղադրիչը, որն ուղղահայաց մի սեպ է (նկ. 4): Վերջինս առանձին վերցրած՝ անձնանվան (կամ ցեղանվան) ցուցիչ է, ինչպես և ընթերցել է Ի.Մ.Գյակոնովը: Այդպիսով, ո՛ր վանկի փոխառեն ընթերցվել է ո՛ր և անձնանվան ցուցիչ:

Ավելի մեծ թյուրիմացություն է ստացվել շարունակության առնչությամբ: Նշանները դժվար են նշմարվում, և Ի.Մ.Գյակոնովն առաջարկում է դրանք ընթերցել *ar* կամ *ra*՝ իրարից շատ տարբերվող սեպախմբեր ունեցող երկու վանկեր (նկ. 4), ինչն արդեն իսկ տարակուսանքի տեղիք է տալիս: Կասկածելի է և այն, որ սալիկի առաջին կեսում (առաջին գործանք տողում) *e*, *ri*, *me*, *na* վանկանշանները գրված են որոշակի հեռավորության պահպանմամբ (ինչպես մյուս սալիկների կնքադրոշմներում), մինչդեռ Ի.Մ.Գյակոնովի գրչանկարի նշանները գրեթե կպած են (նկ.3): Իրականում ո՛ր վանկից հետո առկա է *me* վանկի սեպանշանը (դրանում համոզվեցինք Հայաստանի պատմության պետական քանդադրանում կատարած մանրադիտակային զննման միջոցով):


Կա մի կարևոր փաստ ևս, որը հաստատում է երկրորդ գործանք ընթացքում *ri* և *me* սեպախմբերի դաջված լինելը: Կնքադրոշմի ստորին տողի առաջին գործանք վերջնամասում (կտր կնքադրոշմից վերև) Ի.Մ.Գյակոնովը նշում է սեպերի առկայության մասին, բայց ոչինչ չի կարդում: Այստեղ շատ որոշակիորեն տեսանելի է *e* վանկի սեպախմբը, որն ուղղությամբ համապատասխանում է վերին եզրագծի տողի *na* վանկին:



ш. 1



ш. 2



ш. 3

▶▶▶ - zi
 ▶▶ - né
 ▶▶▶▶ - ar
 ▶▶▶▶ } - ru
 ▶▶▶▶ }

ш. 4

^m Ru - ia - a - i ^m E - ri - me - na - ra
 ▼ ▶▶▶▶ ▶▶▶▶ ▶▶▶▶ ▶▶▶▶ ▶▶▶▶ ▶▶▶▶ ▶▶▶▶ ▶▶▶▶ ▶▶▶▶

ш. 5

Երկրորդ գործան ստորին տողում ևս շատ քոյլ նշանավում է e վանկի սեպախտմբը, ընդ որում, այն ուղղության վրա, որում ri-me գրությունից հետո (ջնջված շիմեթու դեպքում) պետք է գտնվեր na վանկը:

Անվտակները. կնքադրոշմի վերին և ստորին տողերում պահպանված սեպանշանների մանրագծին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կնիքի կողային մակերեսի երկու գործումների արդյունքում առաջին անգամ դաջվել է E-ri-me-n[ə] անունը, իսկ երկրորդ անգամ՝ անվան մի մասը՝ ri-me վանկերը: Երկու դեպքում էլ ստորին տողերում (նույն դիրքում) առկա է e վանկը: [ʳ]E-ri-me-n[ə] անունից հետո չկա ոչ ոճ վանկ, ոչ էլ, առավել ևս, ar կամ ru վանկով սկսվող անձնանուն: Իսկ դա նշանակում է, որ Էրիմենայի քաղաքաբնու միակ ու «վերջնական» համարված ապացույցն իրականում գոյություն չունի: Հորինված են և՛ Էրիմենային վերագրված զանազան քաղաքային փամկետները (մինչև 20-25 տարի), և՛ առավել ևս, իբր նրա հայր Արգիշթե III-ը: Ուստի կրկին պետք է անդրադառնալ մինչև 1963 թվականը եղած հարցադրումներին.

- ա) «Էրիմենան» անձի անուն է, քն ցեղի,
 - բ) եթե նա անձ է, «Էրիմենան» նրա հիմնական անունն է, քն երկրորդ (մականուն, տիտղոս և այլն),
 - գ) ո՞ր Ռուսայի հայրն է նա,
 - դ) քաղաքորել է նա երբևէ և, եթե՝ այո, ո՞ր թվականներին:
- Իսկ ո՞ւմ անունից է գրված ու կնքված խնդրո առարկա սեպագիր սաղիկը:

Կարծում ենք՝ Ռուսայի՝ Էրիմենայի որդու, որից ռենդը թագմաթիվ այլ արձանագրություններ¹⁰: Ենթաց եզրահանգման հիմք է տալիս ոչ միայն «Էրիմենա» անվան առկայությունը, որը «Ռուսայից» քացի այլ անվան հետ չի համընկնում, այլև սաղիկի և կնքադրոշմի չափագիտական վերլուծությունը: Կտր կնքադրոշմի տրամագիծը (որը նաև կնիքինն է) 1,7 սմ է, ուստի կնիքի կողային մակերեսի մեկ լրիվ գործան երկարությունը պետք է լինի մոտ 5,3 սմ¹¹ (սաղիկի լայնությունը դաջվածքի մասում 6 սմ է): Եթե հետևենք մյուս կնիքներին ու կնքադրոշմներին հայտնի օրինակաբանություններին¹², Էրիմենայի որդի Ռուսայի կնիքի ամբողջական մակագրությունը պետք է լիներ *Ru-sa-a-i *E-ri-me-na-he («Ռուսայի՝ Էրիմենայի որդու»): Ամբողջական գրությունը սեպանշաններով պատկերելուց (նկ. 5) հետո տեսնում ենք, որ սաղիկի վրա պահպանված E-ri-me-n[ə] վանկախմբի երկարությունը կազմում է ողջ գրության երկայնքի 40-45 տոկոսը: Սաղիկի վրա այդ վանկախմբերը՝ առաջին գործան վերին տողը, գրադեցնում է 2,3 սմ, որը հենց կազմում է ողջ կնքադրոշմի (կնիքի շրջագծի) երկարության մոտ 43 տոկոսը: Հետևաբար, այս հանգամանքը հաշվի առնելով ևս, կարելի է եզրակացնել, որ Հայաստանի պատմության պետական քանդակարանի 2783-86 գույքսահամարը կրող սեպագիր սաղիկն, ամենայն հավանականությամբ, գրվել և կնքվել է Էրիմենայի որդի Ռուսայի անունից:

ARTAK MOVSISYAN

AN IMPORTANT CORRECTION
(concerning one cuneiform tablet from Karmir blur)

(Summary)

In 1967 I.M.Diakonov had published cuneiform tablets from Karmir blur (unearthed in 1957). The seal-impression on one of them he read - [ʳ] E-[r]i-me-n[a-n]e ʳA[r (??) - ...]. Up-to-date this was considered as the only and definitive evidence in favour of the existence of the king Erimena (king Rusa's father). However, the careful study of the cuneiform tablet (now in the State Historical Museum of Armenia, N 2783-86) show that the reading of this seal-impression was incorrect. The seal-impression contains - [ʳ] E-[r]i-me-n[a], and incomplete repetition of the sequel - ri-me. In lower line it is possible to read only the syllable - e. One may assume that the author of the cuneiform tablet was not Erimena, but Erimena's son Rusa, from whom currently we have a number of other inscriptions.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

1. Թեպետ ոչ մի ստույգ տվյալ չունենք Էրիմենայի զահակության թվերի վերաբերյալ, այդուհանդերձ, մասնագիտական զրակամության մեջ առաջարկվել են բազմաթիվ ժամկետներ.
675-670 թթ. (Sandalgian J., *Les Inscriptions Cuneiforms Urartiques*, Venise, 1900, p. XXXVII);
635-625 թթ. (Меликишвили Г.А., *Урартские клинообразные надписи*, М., 1960, с. 426);
631-608 թթ. (Հարությունյան Բ.Հ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաքավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ.թ.ա. VII-VI դդ.), Եր., 1998, էջ 84, հեղինակը նրան համարում է նոր դիմաստիայի հիմնադիր Էրիմենա-Արամա-Արամ);
625-620 թթ. (Lehmann-Haupt C.F., *Armenien Einst und Jetzt*, II, 2, Berlin-Leipzig, 1931, S. 685; Пиотровский Б.Б., *Ванское царство*, М., 1959, с. 42);
620-610 թթ. (Վարազդեղյան Յ., Սեպագիր տեղանուններ, I, (Այրարատում եւ հարակից մահանգներում), Եր., 1998, էջ 68);
585-555 թթ. (Հմայակյան Ս.Գ., Թեյշեբաիի արշավող բանակի երթուղին, «Էրն-րումի-Երևան» հանրապետական գիտական մատչելի հիմնադրույթներ, Եր., 1998, էջ 11-12) և այլն:
2. Մի շարք ուսումնասիրողներ Վանի թագավորության իշխող հարստության ցանկում Էրիմենային նշում են որպես չզահակալած ներկայացուցիչ: Ն.Աղոնց, օ-

րինակ, նրան համարում է Ռոսա III-ի (610-585թթ.) հայր, չրացառելով, որ նա կարող է լինել նույն Սարգսի III-ը, որն իշխել է 646-610թթ. (Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Եր., 1972, էջ 196): Ֆ.Քյոնիգը առանձին արքաներ է համարում ասորական արքայությունում Ջ.ա. 670-ական և 650-ական թվերին հիշված Ռոսաներին (Ռոսա II և Ռոսա III), Էրիմենային զետեղելով նրանց միջև՝ առանց գահակալության ժամկետի (König F.W., Handbuch der chaldaischen Inschriften, I, Graz, 1955, S. 1): Նույնպիսի կարծիք է հայտնել Մ.Սալվինին (Salvini M., Geschichte und Kultur der Urartier, Darmstadt, 1995, S. 207): Փ.Է.Ջիմանսկին հնարավոր է համարում և՛ Էրիմենայի տեղադրումը 673 և 655 թվերի միջև (Ռոսա II, Էրիմենա, Ռոսա III, Սարգսի III, Սարգսի IV հերթականությամբ), և 639-ից հետո՝ Ռոսա II, Սարգսի III, Սարգսի IV, Էրիմենա, Ռոսա III շարքում (սե՛ս Zimansky P.E., Ecology and empire: The structure of the structure of the Urartian state, Chicago, 1985, p. 99):

3. Мещанинов И.И., К анализу имени Эрммена, "Язык и мышление", I, 1933, с. 37-42; Ղափանցյան Գր., Ուրարտուի պատմությունը, Եր., 1940, էջ 221-223:
4. Սեպագիր սալիկը պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում և կրում 2783-86 գույքահամարը: Բնագրի ուսումնասիրության հնարավորության սիրալիր ընձեռնման համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում թանգարանի տնօրինությանն ու աշխատակիցներին:
5. Սեպագիր սալիկի կնքադրոշմին Erimena անվան ընթերցման մասին հաղորդվում է նախ Գ.Ա.Սելիքիշվիլու ղեկավարած (Меликишвили Г.А., նշվ. աշխ., էջ 459), ապա սալիկը լրիվությամբ հրատարակվել է Ի.Մ.Դյակոնովի կողմից (Дьяконов И.М., Урартские письма и документы, М.-Л., 1963, բնագրի ընթերցումն ու վերլուծությունը՝ էջ 33-34, 51-57, լուսանկարները՝ էջ 125-126, գրանկարները՝ էջ 137):
6. Дьяконов И.М., նշվ. աշխ., էջ 34, 57:
7. Меликишвили Г.А., նշվ. աշխ., էջ 349-353:
8. Дьяконов И.М., նշվ. աշխ., էջ 28, 34, 57:
9. Ելնելով ենթադրյալ, որ կամ ընթերցումից առաջարկվել են Էրիմենայի ծագման զանազան մեկնություններ: Ի.Մ. Դյակոնովն, օրինակ, Էրիմենային համարում է Սարգսի III-ի հորեղբայրը կամ, ավելի հավանական է, եղբայրը (Дьяконов И.М., նշվ. աշխ., էջ 65), առաջին դեպքում նրա հայրը կլիներ Արգիշտի II-ը, երկրորդում՝ Ռոսա II-ը: Ն.Վ.Հարությունյանը, որը հատուկ զբաղվել է Կարմիր բլուրի սալիկների ուսումնասիրությամբ, չի ընդունում Էրիմենայի անունից հետո հայրանվան որևէ սկզբնականի որոշակի ընթերցում, իսկ նրան համարում է Սարգսի III-ի որդի Սարգսի IV-ի հաջորդն ու, հավանաբար, որդին (Арутюнян Н.В., Бжайнили (Урарту), Ер., 1970, с. 331-332; Арутюнян Н.В., Некоторые вопросы последнего периода истории Урарту, "Древний Восток", 2, Ер., 1976, с. 103-104): Հ.Հ.Վարադյանը փորձում է ոչ միայն վերականգնել Էրիմենայի հոր անունը՝ ստանալով «Երեմես անհայտ» նոր արքա՝ Արգիշտի III, այլև նրան վերագրում է գահակալության որոշ ժամանակահատված՝ Ջ.ա. 625-620 թթ., և համարում Սարգսի IV-ի որդին (Վարազեղյան Զ., նշվ. աշխ., էջ 67-68): Դրա համար նա հիմք է ընդունել Կարմիր բլուրի բրոնզե թասերից մեկի մեհենագիր արձանագրության իր ընթերցումը՝ «Արգիշտի Սարգսի որդի» (նույն տեղում, էջ 64-68): Մեր կողմից նշենք, որ և՛ մեհենագիր արձանագրության ընթերցումը, և՛ դրա հիմամբ արված եզրակացությունները լիովին

ամենին են: Բանն այն է, որ բրոնզե բառի արձանագրությունը ժամանակին Ֆ.Բ. Պիտոբովսկու կողմից հրատարակվել է գլխավոր շրջված (Кармир-Блур, III, Ер., 1955, с. 10, рис. 3а; դիրքի հարտումը տես Մովսիսյան Ա. Ե., Վանի քաղաքի արձանագրության (Բ-խայնիի, Ուրարտու. Արարատ) մեհենագրությունը, Եր., 1998, էջ 13-14): և Հ.Հ. Կարազոյանն այն փորձել է ընթերցել հենց գլխավոր շրջված դիրքով:

10. Меликишвили Г. А., Եջվ. աշխ., էջ 349-353:

11. Տրջանագծի երկարությունը հավասար է տրամագծի բազմապատկած 3,14:

12. Հմմտ. Дьяконов И. М., Եջվ. աշխ., էջ 34; Seidl U., Die Siegelbilder, Bastam, I, Berlin, 1979, S. 137-138; Bastam, II, Berlin, 1979, S. 146.

ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐԴԻՆԻ-ՄՈՒՍԱՍԻՐԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԸՈՒՐՁ

Քիչայնագիտության դեռևս վիճահարույց խնդիրներից է Արդինի-Մուսասիրի (քաղաք և երկիր)¹ տեղորոշումը: Վանյան պանթեոնի գերագույն գույզի պաշտամունքային այս գլխավոր կենտրոնը սովորաբար տեղադրվում է Ուրմիա լճից հարավ-արևմուտք՝ Մեծ Ջաբ գետի ճախափնյա հատվածում²: Քաղաքը նույնացվում է Միդեկանից 5 կմ արևմուտք գտնվող ժամանակակից Մուջեսիր քնակավայրի հետ³: Տեղորոշման այս տեսակետը հիմնվում է Կելյաշինի և Թովուզավայրի երկեզու արձանագրությունների տեղադրության և տվյալների⁴, ինչպես և Կ.Լ.Եհման-Հատայտի⁵, ավելի ուշ՝ Ռ. Քոմերի⁶ կատարած ուսումնասիրությունների վրա:

Արդինի-Մուսասիրի տեղադրվել է նաև Գյուսափառում⁷, նույնացվել Մուշի⁸, Աշտիշատի⁹, Քոչանիսի¹⁰, սեպագրերից հայտնի Արիտու-Արիդի¹¹ հետ: Ի.Մ. Դյակոնովն այն նույնացնում է Ք.ա.14-րդ դարից ասորեստանյան աղբյուրներում հիշատակվող Մուսրու երկրին և նրա կենտրոն Արիմուին, տեղադրելով Մ.Ջաբի վերին ավազանից Ուրմիայի շրջակայքը տանող քարավանային ճանապարհի վրա¹²:

Համակարծիք լինելով Մուսրու-Արիմու և Մուսասիր-Արդինի նույնակամության տեսակետին, զտնում ենք, սակայն, որ այս երկիրն ու քաղաքը Մուսրում էին, համապատասխանելով վերջինիս Միջաս (Միջա) գավառին (ճեղ ստումով) և նրա համանուն կենտրոնին: Արդինի-Մուսասիրը վանյան շրջանում ընդգրկել է Մեծ Հայքի Մուկք նահանգի տարածքը, գուցե՛և՝ հարակից այլ շրջաններ: Այս մտեցումների փաստարկման համար նախ անդրադառնանք Մուսրուի (𐎢𐎴𐎠𐎫𐎠𐎢𐎡) և Արիմուի (𐎠𐎢𐎡𐎠𐎫) տեղադրությանը, որոնց խնդրում ևս ուսումնասիրողները միակարծիք չեն¹³:

Ասլաննասար I-ի և Աշշուրբեկալայի (1076-1059) դեպի Ուրուստրի երկիր կատարած արշավանքների հիշատակությունները¹⁴ հուշում են, որ Մուսրուն, իր Արիմու քաղաքով (Աշշուրբեկալայի մոտ՝ Արիմուն)¹⁵, Ուրուստրի երկրի կազմում էին և, հավանաբար, նրա կենտրոնական երկիրն ու մայրաքաղաքն էին¹⁶: Թուկուլթի-Նիմուրտա I-ի (1234-1197) մի արձանագրությունում և նրա ժամանակի տնտեսական փաստաթղթերից մեկում Արիմին հանդես է գալիս որպես «երկիր»¹⁷: Վերջինս, մեր կարծիքով, նույն

Մուսրուն է, որը ճշյալ դեպքերում, անվանակոչված է իր մայրաքաղաքի անունով¹⁸:

Սալմանասար I-ի՝ Ուրուատրի կատարած արշավանքի երթուղու խնդրում ընդհանուր առմամբ համամիտ ենք Հ.Մանանդյանի տեսակետին¹⁹: Սալմանասարն արշավել է Մ.Ջարի ավազանից (Խիմնե)²⁰ մինչև Տիգրիսի աջափնյա հատվածը (Չիմգուն)²¹ և, այնուհետև, մտել Մուսրուն:

Թիգլաթապալասար I-ը Մուսրուն է արշավել Ջերմի ակունքների շրջանից՝ Էլամունի-Թալա-Խարուսա(ճշվում են որպես լեռներ)-Արի(ն)նի երթուղով: Այնուհետև, Թալա լեռան փեշերին ճակատամարտելով մուսրեցիների և կումանեցիների 20.000-անոց բանակի հետ, շարժվել են Խուրուսու քաղաքի վրա, գրավել այն, որից հետո մտել Կումանուի թագավորական Կիպչուսա քաղաքը²²: Նշյալ տեղավայրերից մասնագիտական գրականության մեջ որոշակիորեն տեղադրվում են Էլամունին, որը ներկայիս Ալամունն է՝ Ջերմի ակունքների շրջանում²⁴, և Կիպչուսան, որը Գեֆչենն է՝ Չախույից 14 կմ հյուսիս-արևելք²⁵: Սակայն նույն Թիգլաթապալասարի մեկ այլ արձանագրությունից պարզվում է, որ Խուրուսու բերդաքաղաքը Մեխրի երկրում էր կամ նրանից քչ հեռու²⁶, իսկ վերջինս Մեհրի-Նարն է՝ Խեզիլի ակունքների շրջանում²⁷: Այս երկիրը Կումանուի հյուսիսում էր, ինչը և անհավանական է դարձնում Մուսրունի՝ Մ.Ջարի ավազանում գտնվելու վարկածը: Թալայի տեղադրությունը որոշակիացնում է Մուսրունի և Արի(ն)նի գտնվելու վայրը. մենք այն նույնացնում ենք Թաղ-Շատախին, որն Աննու լեռան արևելյան փեշերին է: Այս տեղադրությունը թույլ է տալիս ենթադրելու, որ Խարուսա լեռը, որ Մուսրուն երկրի դիմաց էր, Առնոսն է:

Այսպիսով, ստացվում է, որ Մուսրուն և Արի(ն)ն գտնվում էին Չենգանի և Ալամունի միջև, Մեհրի-Նարից հյուսիս, Թաղից արևմուտք, Առնոսի դիմաց. այստեղ Սիջա գավառն է:

Մուսրու-Արի(ն)նի այս տեղադրությունը հաստատվում է մի շարք այլ փաստերով ևս: Այսպես, Թուկուլտի-Նիմուրտա I-ը Արի(ն)ն երկիրը հիշատակում է Դամնաուշից հետո, որն Ամիդի հարավ-արևելքում էր²⁸, իսկ նրա ժամանակի տմեսական մի փաստաթղթում Արի(ն)նն ճշվում է Կումանու-խից (Կապչուսա Կավդեք) և Մումնից հետո²⁹: Վերջինս համադրելի է Բիթլիսի վիլայեթի Մայմունիկ քանակավայրին՝ արևմտյան Տիգրիսի և Արգանի միախառնման շրջանում:

Ադադներարի I-ը (1296-1264) Մուսրունն նշում է «չուքարեցիների երկրի» հարևանությամբ³⁰, որը Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքն ու Հյուսիսային Սիջազետքն է (Աղձնիքի ընդգրկումով), իսկ Ադադներարի II-ի (911-894) մի արձանագրության համաձայն՝ Արի(ն)ն քաղաքը մտնում էր Շաքրե երկրի կոնֆեդերացիայի մեջ³¹:

Աշտարեբեկյան, Սալմանասար I-ին հետևելով, Ուրուատրի է արշավել Մ.Ջարի և Արլ. Խարուրի միջանկյալ շրջանից: Նա անցել է Արլ. Խարուր ([...դա]) և Արգաստ (Մամանու) գետերն և, մտնելով Ուրուատրիի տա-

րածքը, գրավել է նրա բազմաթիվ բնակավայրերը²², որոնք հետագայի Բիթլիսի վիլայեթի տարածքում էին: Վերջինիս տեղավայրերի հետ հավանա-կան են հետևյալ համադրումները. Կուկիարա-Գյավրու, Ամուրաշկա-Ամա-ջա, Գունաշա-Ենդիաս, Ապարունու-Ապարանը, Խարաբիա-Խրեր, Խիս-պու-Խոշապար, Իշտայասուն-Նիսյան, Սուսուկու-Սնքար, Իկկիա-Թեթն (գտնվում են Որբ և Կեծան գետերի ավազանների միջև), Թարրարա-Վեր-վան, Յարլիունու-Ելնև, Ջուրգուրա-Խմեջուր, Իշկուտնու-Բաշկան, Սասալ-լսին-Սակ, [...]սիուրու-Սիրեն, Շալագիտու-Սղերալ, Պանիրասու-Բաներաի (գտնվում են Բաղեշ և Տատիկ գետերի ավազանում), Էլակու-Ալիկան, Էլի-դա-Ալմադին, Ուլմիշ-Էրմի (գտնվում են Գարզան գետի ավազանում): Այս-տեղից Աշտարեի վայրի իջել է Ջիկունի (=Ջիմզուն-Ջեմզան)²³: Նշյալ երթու-րու միջանկյալ հատվածում է, որ հիշատակվում է Արինունը:

Սալմանասար 1-ի և Աշտարեի վայրի ճշված արշավանքների երթուղի-ները, այլ վիաստերի հետ համադրվելով, լույս են սփռում Ուրուստրի երկրի ընդգրկած տարածքի ու սահմանների վրա: Ուրուստրին, ամենայն հավա-նակամությամբ, Ք.ա. 3-րդ հազարամյակում շումերական աղբյուրներից հայտնի Արաստա երկրի ժառանգորդն էր՝ անվանապես և տարածքային առումով²⁴:

Արաստա-Ուրուստրին լավագույնս համապատասխանում է նաև հայ մատենագրության Արարաղի երկրը, որ Միջագետքից հյուսիս էր գտնվում, Սին սարից և Հարբից հարավ-արևելք և, որը Հայկ մահապետը ժառանգու-թյուն է թողնում Կադմոսի Տանը²⁵:

Մուսուրու երկրն ու Արինու քաղաքը Ուրուստրի երկրի միջամասում էին և, հավանաբար, նրա քաղաքական կենտրոնն ու մայրաքաղաքն էին: Մուս-րու-Արինուի այս տեղադրությունը հաստատվում է նաև Առնու սարի, համա-նուն լեռնաշղթայի, Առնոտն գավառի և ^{ΚΑΡΚΑΝΙ}Առո(ո)ս/Բ-Առոս(ո)-ի անվա-նական նույնականության և տարածքային համադրելիության վիաստերով:

Այժմ, անկախ Մուսուրուի և Արինուի տեղադրության վերահիշյալ մոտե-ցումներից, դիտարկենք Արդինի-Մուսասիրի տեղադրության խնդիրը:

Սալմանասար III-ի տուրտան Գայան-Աշտարը, արքայի կառավարման 31-րդ տարում, մտնում է Խուրուշկիս, այնուհետև գրավում Մուսասիրի Ծա-պարիս քաղաքապետը՝ մուսասիրյան 46 այլ բնակավայրերի հետ միասին, հասնում ուրարտական ամրոցների, գրավում և ավերում 50 բնակավայրեր, որից հետո Գայան-Աշտարը մտնում է Գիլգան երկրի տարածքը²⁶: Հասկա-նալի է, որ Մուսասիրը հարևան էր Խուրուշկիս-Նաիրին, Ուրաստունին և Գիլգանին: Սարգոն II-ի (722-705) 714թ. նշանավոր արշավանքի²⁷, նաև ա-տրեստանյան հետախուզական բնագրերի հիշատակություններից²⁸ ևս երևում է, որ Մուսասիրն ու Խուրուշկիսն հարևաններ էին: Հետախուզական այդ արձանագրությունները թույլ են տալիս ենթադրելու նաև, որ Մուսասիրն ու Ուսայախ-Ուեսին ևս ընդհանուր սահման ունեին, քանզի Մուսասիրի ար-քա Ուրգանան հետևում էր քիայմական այս շրջանում կատարվող անցու-

դարձին, իսկ Ուրարտուի արքան Մուսասիր էր այցելում Ուայախից³⁹: Նկատենք, որ Գիլգամու, Խուրուշկիա-Նաիրի երկրների, Բիայնայի Ուայախի (=Ուեսի-Ուագան-Ուագամու)⁴⁰ շրջանի ճիշտ տեղադրությամբ կուծվի նաև Առոհնի-Մուսասիրի տեղորոշման խնդիրը:

^{KURUKU} Gilzan(u)-ն գիտական գրականության մեջ տեղադրվել է՝
1. Ուրմիա լճի արևմտյան, հարավ-արևմտյան, հյուսիս-արևմտյան ավանները շրջաններում⁴¹:

2. Արձնիքում (նույնացվում է Գզնիսին)⁴²:
3. Մուկրում (նույնացվում է Խիզանին՝ Սյուս Իշայր գավառում)⁴³:

Սյու տեղադրությունների ծայրահեղությունը հանգեցրել է Ուրմիայի ավազանում և Վանա լճից հարավ-արևմուտք՝ երկու նույնանուն երկրների գոյության վարկածին⁴⁴: Սակայն ասորեստանյան աղբյուրներում խոսքը մշտապես մեկ երկրի և քաղաքի մասին է, որը հարևան էր Մուսասիրին. հեռու չէր Խուրուշկիայից և «Նաիրի երկրի ծովից»: Թուկուլթի-Նիմուրտա II-ը (889-884) Գիլգամուի հիշատակվում է Հյուսիսային Սիջագետքի և Խուրուշկիա-Նաիրի միջև⁴⁵, իսկ Աշշուրնաժիբպալ II-ը այն հիշատակում է քաղաքի երկրների շարքում. որոնցից նա հարկ է ստացել՝ մի դեպքում Կիրորի-Կրեթում, մեկ այլ դեպքում՝ Ջամուայում: Վերջինս Փ. Ջաքի վերին հոսանքի ե Ուրմիայի միջև էր: Սակայն Գիլգամուից հարկ ստանալու վայրերը չեն կարող խանգարիչ հանգամանք լինել Գիլգամ-Նիզամ նույնականության հարցում, քանզի Աշշուրի արքաները կիրառում էին հարկահանության յուրօրինակ մեթոդ. ասորեստանյան գորքերը հյուսիսից դեպի Սիջագետք տանող ճանապարհների հարմար վայրերում սպառնալի դիրք գրավելով շրջակա և ոչ հեռու երկրների նկատմամբ. նրանց ստիպում էին բազմապիսի ապրանքներ տալ Աշշուրին⁴⁶: Դեպի Սիջագետք տանող այս կարևորագույն ուղիներից մեկը անցում էր Մ.Ջաքի, մյուսը՝ Տիգրիսի ավազանով:

Գիլգամու Աշշուրնաժիբպալը հիշատակում է իր այլ արձանագրություններում ևս, որոնցում նշվում են արքայի գրաված տարածքները: Գիլգամուի այս հիշատակությունները ևս չեն խանգարում Գիլգամու-Նիզամ նույնացմանը⁴⁷:

Սալմանասար III-ը, կառավարման առաջին տարվա արշավանքի ժամանակ, անցելով Սինեի լեռնանցք⁴⁸ - Արիդու(Այրտրուանք) - Խուրուշկիա(Ջուլամերկ) - Մուգուհիա(Միկանիս կամ Մուկան)⁴⁹ - «Նաիրի երկրի ծով» (Վանա լճի հարավ-արևելյան ափ, հավանաբար՝ Ռշտունիք) երթուղիով, լճից վերադառնալիս ստացել է Ասու գիլգամացու հարկը⁵⁰: Վանա լճի ափից ասորեստանյան գորքերը, հմարավոր է անցած լինեն Խիզանի տարածքը, սակայն առավել հավանական է, որ լճափից Սալմանասարը վերադարձած լինի եկած ճանապարհով և Գիլգամուի արքան այստեղ՝ Ռշտունիքում, տված լինի իր երկրի հարկը:

Ջ.ա 856թ. իր նշանավոր ռարարտական արշավանքի ժամանակ Սալմանասարը անցել է Էնճիտե(Անճիտ) - Արծանիա(Արածանի) - Մուխմի-Դա-

յաննի(Տայր) - Արգաշկու(Արճեշ) - Էրիսխա լեռ - Արամայե - Ջանգիունա - «Լաիրի երկրի ծով» - Գիլգամ - Շիլայա (Խալուշկիայում էր) - Կիրրուրի - Թումմե - Արբեյա երթուղով⁵¹:

Արգաշկուից Սալմանասարի անցած երթուղու վերաբերյալ հետևյալ կարծիքի ենք. Էրիտիան, հավանաբար, Սիվանն է⁵², Ի⁸⁰ Aramale-ն Տարունում՝ սեպագրերի Ուրմե երկրում պետք է վնտրել: Այն համադրելի է Մուշի և Վանա լճի միջև գտնվող Ուրման կամ Օրոման բնակավայրի հետ: Այս մտտեցումն ընդունելու դեպքում, պարզվում է նաև Ջանգիունայի տեղը. այն, հավանաբար, Սանասուն-Սասունն է: Այստեղից Սալմանասարը իջել է Վանա լիճ՝ Դատվանի մոտակայքում, այնուհետև ներկայիս Դատվան-Կատուն-Վերվան-Խիզան ճանապարհով մտել Գիլգամու, այստեղից՝ Խուրուշկիա և Կրեքքավ ու Թխումով իջել Էրբիլ: Պետք է կարծել, որ Սալմանասարը Գիլգամուից Խուրուշկիա է մտել Մուսասիրի հյուսիսային կամ հարավային մասերով: Այս տեսակետների օգտին է խոսում Խուրուշկիայի Շիլայա ամրոցի հիշատակությունը. չի բացառվում, որ այն Ջերմածորի արևելքում գտնվող հայոց Ջոայ-Ջոել-Ջողայ⁵³ ամրոցը լինի: Ստացվում է, որ Գիլգամուի քաղաքությունը հյուսիսից սահմանակցում էր Ուրարտուի՝ Վանա լճի հարավային և հարավ-արևմտյան շրջաններին: Ի հաստատումն այս մտտեցման, նշենք, որ Մուսասիրի Շապարիա բերդաքաղաքը՝ Մոկսից հարավ-արևելք գտնվող Շապտ սրբավայրը պետք է որ լինի:

Սարգոն II-ը 714թ. ուրարտական արշավանքի ժամանակ⁵⁴ Սանգիրուտուից (Գաբիթյան)⁵⁵ մտել է Արմարիայի (Մեծ Աղբակ)⁵⁶, այստեղից անցել է Այադու (Հայոց ձոր): Արքան, հավանաբար, Բուն-Մարդաստանի տարածքով, Անձևացիքի և Երվանդունիքի սահմանային հատվածով հասել է Վանա լճի ափը և գրավել Արտուսի (Արցիդու) և Մոխրաբերդի քարածայրի (Մախունիա) միջև ընկած՝ Ուշասուհիքի ծովափնյա բնակավայրերը: Սարգոնի նշած 30 տեղավայրերից հավանական են հետևյալ համադրումները. Անգալիա-Անձևացիք, Կուսային-Կանգուար, Կալլանիա-Գյորանդաշտ, Կիսունա-Կավան, Ալլի-Իլի (Հիլի), Դեգիզու-Դեղձիս, Բալլուարգա-Բախավանց, Մարուարդի-Սարեն, Արուարգա-Ախավանց⁵⁷. Հին Ուսայսից Ախթամարի արձանագրությունից հայտնի Ուիշիհին է⁵⁸: Արգիշտիունան, հավանաբար, Մոխրաբերդն է: Սարգոնը, այնուհետև, անցել է Ալլուրիա, Կալլանիա և Ինճայա գետերը, մտել Ուսայիս: Նկատենք, որ Կալլանիան նույն Սարգոնը հիշում է. որպես բնակավայր: Եվ, իրոք, Գյորանդաշտը գտնվում է գետափին: Այստեղից է սկիզբ առնում Ջերմի այն վտակը, որը նրան է միանում Թաղի մոտ: Այս գետը Ուշտունիքում երկու ճյուղի է քաժանվում, սրի արևմտյանը սկիզբ է առնում Ալլի-Իլի բնակավայրի մոտակայքից և կրելում էր բնակավայրի անունը՝ Ալլուրիա (հմտ. Շապարիա): Արևելյան ճյուղը կրում էր Կալլանիա-Գյորանդաշտի անունը: Սարգոնը Մոխրաբերդից հետ է դարձել և Ալլի, Կալլանիա բնակավայրերից հարավ՝ անցել նույնանուն գետերը ու մտել Ուսայիս, որն Ուրարտուի սահմանների վերջն էր՝ Նաիրի-

Խորուշկիայի հարևանությամբ: Այս շրջանը Բիայնայի կարևորագույն ռազմա-ստրատեգիական հենակետն էր, հետախուզության կենտրոնը: Այստեղից էին վանյան զորքերը արշավում Խորուշկիա, Մուսասիր, Մանա: Ստացվում էր, որ Ուայախի-Ուեսին Անձևացիքի հյուսիսում էր: Ջերմը, հավանաբար, Ուայախի և Խորուշկիա-Նաիրիի սահմանագիծն էր: Արևելքում Ուեսին, հավանաբար, սահմանակցում էր Արմաբիալին, իսկ Կամգուարի լեռներով՝ Այադուին: Ուայախից Սարգոնը մտել է Խորուշկիա: Վերջինս տարածվում էր Մ.Ջարից (Ջուլամերկի հատված)՝ Նորդուզ և, Ջերմի հարավային ավազանով, մինչև Շատախ և Ջոայ: Սարգոնը մի կարևոր փաստ է նշում. Մուսասիրի Ուրգանա արքան դավաճանել է նրան և, կարծես, խոչընդոտում էր Սարգոնի զորքերի տեղաշարժին: Ասորեստանի արքան կատարում է ռազմական հետաքրքիր գործարար՝ անսպասելիորեն 1000 ռազմիկներով անցնում է Վերին Ջարը, որ «...Նաիրիի և Խարխիի մարդիկ անվանում էին Էլամոնիա», և այս գետը անցնելու համար նա հաղթահարում է Արսիու լեռան փեշերը⁶⁰: Գիտության մեջ ընդունված այն տեսակետը, որ Էլամոնիան թույլ Մ.Ջարի հնագույն անվանումն է⁶¹, համոզիչ չէ: Սարգոնի հիշած Վերին Ջարը, որ Էլամոնիա էր կոչվում, Լևին-սուր է՝ Մ.Ջարի արևելային վտակը, որը սկիզբ է առնում ներկայիս Ալամանի մոտակայքից: Արսիու լեռը Կալամերիկ-դաղն է, որի հարավ-արևելյան փեշերին էր Խորուշկիան⁶²: Սարգոնը Լևին-սու-Էլամոնիան անցնելով, շարժվել է Մուսասիր և այս ճանապարհին հիշում է 4 լեռներ՝ Շեյակ, Արդիկչի, Ուլայաու և Ալուրիա⁶³: Վերջինս նույնանուն է Ալլուրիա գետին, որ հոսում է Ալի-Իլլիից՝ Թայ: Այս դեպքում, սակայն, այն նշվում է որպես լեռ: Ստացվում է, որ Մուսասիր արշավելու համար Սարգոնը կրկին հասել է Ալլուրիա գետի ավազանը, սակայն նրա ստորին հոսանքում՝ Թալի մոտ: Այստեղ Մուսասիրի, Խորուշկիայի և Ուայախի սահմանային հատվածն էր: Առնոսի փեշերով Սարգոնը մտել է Մուսասիր: Այնուհետև նա դուրս է եկել Անդարտուա լեռանցքով, որը Խիպպարնա քաղաքի դիմաց էր⁶⁴: Վերջինս Աշշուբեկլայայի Խիպպուսն է, որ համադրելի է Խոչապարին՝ Կեծանի և Ջերմի միախառնման արևելակող հատվածում: Խոչապարից հյուսիս կա Խորաստ անունով մի բնակավայր, որը, հավանաբար, Սարգոնի Անդարտուսան է⁶⁵: Այստեղից Աշշուրի արքան, հավանաբար, իջել է Կուտմուխի, որն Ասորեստանի գլխավոր սեղանապետի տիրույթն էր⁶⁶:

Ասորեստանյան հետախուզական արձանագրությունների, նաև այլ հիշատակությունների, համեմատական քննությունից ակնհայտ է դառնում, որ Մուսասիրը սահմանակից էր ոչ միայն Ուեսի-Ուայախին ու Խորուշկիա-Նաիրիին, այլ նաև Խեզիլի ավազանում գտնվող բիսյանական Ուկկուի կամ նրա դիմացի շրջանին⁶⁷ (նշենք, որ Ուկկուն Տուսուրու-Տուրքիի մոտակայքում էր)⁶⁸, [...]. ինչի շրջանին, որտեղից Մուսասիր անցնում էին Սև գետով (Կեծա՞ն), այն հեռու էր Թուշխանից (Կարխ), Կուտմուխից, Ալամոնիից, Ջար-Միպարից, Մանայից⁶⁹:



Ստացվում է, որ Արդինին պետք է գտնվեր Կարխի և Ռոմիա լճի ավազանի, Ռշտունիքի և Կեզիլի ավազանի: Կիզանի և Անճևացիքի միջև: Այս տեղադրությունը փաստվում է նաև այն հանրահայտ հանգամանքով, որ Մուսասիքը պետք է գտնվեր հարուստ մետաղահանքերի շրջանում, իսկ Մոկքը, Շատայսը, Սղերքը, Ռշտունյաց լեռները հնուց ի վեր հայտնի են քաղմապիսի մետաղներով:

Պետք է նկատել նաև, որ Մ.Ջարի ծախսափնյա հատվածում, ներկայիս Իրաքյան Հրդստանի տարածքում և ավելի հյուսիս, ուր սովորաբար տեղադրվում է Արդինի-Մուսասիքը, ասորեստանյան աղբյուրները այլ երկրներ ու բնակավայրեր են հիշատակվում՝ Արիզու (Արտրուանք), «խարզայցիներին»⁷¹ (Այգաքք), «խարմասցիներին»⁷² (Օրամար), Թումմե (Թխում՝ մինչև Նեխիլի ավազան)⁷³, Մումբի կամ Մունքի: Այս վերջինը համադրելի է Պարսկահայքի Արասի գավառի Շնավի բնակավայրի հետ⁷⁴: Ըստ Շամշի-Ադադի V-ի, Մունքին Մեկրիարի որդի Շարցիմայի տիրությունում էր⁷⁵: վերջիններս, հավանաբար, տիրել են նաև Մեծ Հայքին պատկանած Մարաց ամուր դռների տարածքին՝ ներկայիս Ռևանդուզի շրջակայքին: Այս առումով հետաքրքրական են Մահկերտ Տուն գավառի և Մահկեր դաստակերտի անվանումները, որոնք, հավանաբար, կապված են Մեկրիարի հետ: վերջինս Ներքին Ձամուայի կառավարիչն էր⁷⁶ և նրա սերունդների տիրությունները, Մահկերտ, Մահկերտ Տուն անուններով, հասել են միջնադար: Շամշի-Ադադ V-ը հենց այստեղ է բախվել Շարցիմայի և Ռշաինա-Իշպուհինի հետ⁷⁷: Կեյաշինի և Շինակի լեռնաճրճերը ունեն ռազմա-ստրատեգիական կարևոր նշանակություն: Բիայնայի արքաները Մանային տիրանալու համար պետք է վերահսկեին դրանք՝ սպառնալիք ստեղծելով նաև Ասորեստանի համար: Կեյաշինի արձանագրությունը, հավանաբար, ասորա-ուրարտական այս քախումների ընթացքում է կանգնեցվել՝ հանդիսանալով յուրօրինակ սահմանաքար: Ռուսա I-ը ևս լեռնաճրճերում վերահսկողությունը պահպանելու նպատակով էր արշավել այստեղ: Թուխուզավայի արձանագրությունում նշվում է, որ քիայնական և մուսասիքյան զորքերը արշավել են Ասորեստանի լեռները⁷⁸: կաթուղի տեղադրությունը փաստում է, թե հատկապես որտեղ են արշավել դաշնակցային զորքերը:

Արդինի-Մուսասիքի՝ Մակքում գտնվելու տեսակետի օգտին են վկայում նաև «Որք», «Արբակետ» (Արվախ), «Արվենից Ձոր» տեղանունները, որոնք առնչվում են «Արտուրանի» դիցանվանը: «Միջասը» սերում է «Մուսրու»Մուսասիքից⁷⁹: Բիայնացիները Խալդիի և Արտուրանի-Քաղմաշթուի (Քազարթու) սրբավայրը կոչում էին Արաստա>Ռիտուատրի>Արարադի երկրի անունով՝ Արդինի⁸⁰, ասորեստանցիները՝ նրա կենտրոնական երկրի անունով՝ Մուսրու-Մուսասիք:

Այսպիսով, Բիայնիլի-Ուրարտուի սրբազան քաղաք Արդինի-Մուսասիքի տեղադրության վերաբերյալ ներկայացված մտնեցումները առաջադրում են

բազմաթիվ նոր խնդիրներ, որոնք առավել ծավալուն ուսումնասիրության
նյութ պետք է դառնան:

ARTAK SARGSYAN

ON THE LOCATION OF ARDINI-MUSASIR

(Summary)

The localization of ^{KURURU} Ardini-Musasir is one of the most debatable points in Urartian studies. Agreeing with the existing opinion expressed in science about Musru - Arinu and Musasir - Ardini, we assume, however, that this country and town were located in Moukc, which is appropriate to Midgas region its center. During the Urartian period Ardini-Musasir was included in Moukc of the state of Greater Armenia. These approaches are based mainly on the inscriptions of Assyrian king's travellings in the direction of Musru - Arinu and Musasir - Ardini. According to them Musru and Arinu were located between modern Zengan and Alaman to the from Takh, in front of Arnos. Musasir - Ardini was located on the banks of Karkh and Urmia lakes, as well as on the banks of Rshunik and Khezil, in the territory of Irakion Krdstan and more to the northe, where Ardini - Musasir used to be located, according to the Assyrian sources, meny other contries and settlenants, and just the neighborhood of Mahkert Tun, probably belonged to the generations of Inner Zamwy's monager and was called Mekdear - Mahkert Tun.

The people of Biaina call holly country and city Ardini - after the name of Aratta > Uruatri > Ararad country; people of Assiria call is Musru - Musasir after the name of the central region.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կելյաշինի և Թոփոզազյանի երկվեզու արձանագրությունների թիայնական տեքստերի ^{ուս} Ardini-ն գրագահեռ ասորեստանյան տեքստերում ներկայացված է ²⁸ Musasir տարբերակով (Меликишвили Г.А., Урартские клинообразные надписи, Москва, 1960 (УКН), N 19, N 264): Հարկ է նշել, որ Արդինին վանյան արձանագրություններում մշտապես հանդես է գալիս որպես իրադարձ (УКН, N 27, N 228), իսկ ասորեստանյան աղբյուրների Մոսասիրը ներկայանում է մաս «երկիր» տարբերակով (տե՛ս, օր. Меликишвили Г.А., Наир-Урарту, Тбилиси, 1954 (Н-У), էջ 35):
2. Արդնե Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 145, 197-198; Меликишвили Г. А., Мусасир и вопрос о древнейшем очаге урартских племен, ВДИ, 1948, N 2, էջ 37, ծան. 1; Н-У, էջ 36-37; УКН, էջ 417; Арутюнян

- Н. В., Байнилли (Урарту), Ереван, 1970, էջ 20, 47 (ծան. 150), 49, 55, 56, 64-66, 362, 363, 365; նույնի Топонимика Урарту, Ереван, 1985 (ТУ), էջ 33-34, 44-145; Հայկական Մովսեսյան Հանրագիտարան (ՀԱՀ), հ.8, Երևան, 1982, էջ 87-88, (հեղինակներ՝ Ս. Հմայակյան, Լ. Բիլագով); Հմայակյան Ս., Վամի քաղաքը պետական կրոնը, Երևան, 1990, էջ 86-87 (ծան.2) և այլն (տեսակետը Լեհման-Հաուսի հետ, տես ծան. 5):
3. ТУ, էջ 145; Հմայակյան Ս., 1990, էջ 86; ՀԱՀ, հ. 8, էջ 87-88 (տեսակետը Ռ. Բոլմերի հետ, տես ծան. 6):
 4. УКН, N 19, N 264 (տեսադրությունները տես քարտեզ «Ուրարտու պետությունը 860-590թթ. մ.թ.ա.», Երևան, 1980, հեղինակ՝ Երևմյան Ս. Ս.):
 5. С. F. Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, Berlin und Leipzig, II, 1, 1926, էջ 299 ;
 6. Boehmer R. M., Zur lage von Musasir, "Bagdader Mitteilungen", 1973, Bd. 6, էջ 31-40:
 7. Thureau-Dangin Fr., Une relation de la huitieme campagne de Sargon (714 av. J.-c), Paris, 1912, էջ XVI-XVII; Հեղինակը Մուսասիրը տեղադրում է Մ. Ջարի ծախս-կողմյա Նահիլ վտակի ավազանում և գտնում, որ Կելյաշիմի և Թոփուզավայի արձանագրությունները ցուցանում են Մուսասիրի միայն հարավային սահմանը:
 8. Халатьянц, Г. А., О некоторых географических названиях древней Армении в связи с данными ванских надписей (ազգային զրադարանի 417(47.925)/X-17 համարի տակ), էջ 1; Տաղավարյան Ն., Պատմություն Հայոց ի սկզբանն մինչև Գլըշակունի հարստության հաստատումը, Պարիս, 1903, էջ 4:
 9. Կատվայան Մ., Ուրարտու Մարտության քաղաքը Մովսեսյան Հայաստան (ՀԱՀ հավելյալ հատոր), Երևան, 1987, էջ 93 (հմտ. քարտեզի հետ, էջ 92):
 10. Լախմանյան Գ. Ռ., Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 13:
 11. Саркисян, Д. Н., Страна Шубрика, Ереван, 1989, էջ 15-16:
 12. Дьяконов, И. М., Ассиро-вавилонские источники по истории Урарту (АВИИУ), ВДИ, 1951, N 2, 2 (ծան.9): Арутюнян, Н. В., 1970, էջ 20, 49, 55-56, 64-66, 362-363, 365; ТУ, էջ 36, 145:
 13. Մասնագիտական գրականության մեջ Մուսասիրը տեղադրվել է Մ. Ջարի վերին հոսանքի և Նինվի միջև (Меликишвили, Г. А., К вопросу о древнейшем очаге урартских племен, ВДИ, 1947, N 4, էջ 28, 29 (ծան.2), Գեղեցիկի շրջանում (Արդնց Ն., 1972, էջ 52, 63), Ջուզանի կողմից հյուսիս (Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 280 (ծան. 2)), Ամիդից հարավ-արևելք՝ Գյուզալ-չախի շրջանում (Սարկисяն, Д. Н., 1989, էջ 15-19), նույնացվել է Մշարին (Եփրատի ավազանում) (Լախմանյան Գ. Ռ., 1940, էջ 125 (ծան. 1)), ինչպես նաև՝ Ամանուսի լեռներից հարավ՝ Ջա 13-11-րդ դդ. տարածվող Եգիպտոսի տիրույթներին (Կատվայան Մ. Ա., Ուրարտու «աշխարհի» քննարանի տեղադրումը շուրջ, ԲԵՀ, հաս. գիտ., 1992, N 1(76), էջ 93):
 14. АВИИУ, 2, 19:
 15. Արինու-Արինուն նույնականության տեսակետը Ն. Վ. Հարությունյանին է (1970, էջ 54-55; ТУ, էջ 36):
 16. Մամանասարի հիշատակություններից ակնհայտորեն երևում է, որ Արինուն էր Ատրեստամի դեմ ուղղադրված ծավալած ապստամբական շարժման կազմակերպիչը, և Աշշուրի արքան առավել պատկերավոր է ներկայացնում նրա ատմը:

17. АВИИУ, 6, 3 (ծամ. 5):
18. Ասորեստանյան արձանագրություններում նման օրինակները բազմաթիվ են, երբ այս կամ այն բաղաբաղական միավորը՝ «երկիրը», կրում է իր մայրաքաղաքի անունը (հմնտ. Խորուշկիայի և Գիլգամեշի օրինակները):
19. Манандян, Я. А., О некоторых проблемах истории и географии древней Армении, Ереван, 1956, էջ 6-9:
20. Խիմմեն պետք է տեղադրել Կորճայքի Այրտրուանը գավառի և նրա մերձակա տարածքներում՝ հարավային Լավատական լեռների շրջանում:
21. Ժամանակակից Ձեռնգրանց է՝ Սիդիսք բաղաբաղական և Վերին Տիգրիսի միջև. Ձեռնգրանցից մոտ 50 կմ հյուսիս-արևմուտք (Манандян Я. А., 1956, էջ 7-8; ТУ, էջ 82). այն նույնական է Աշտուրիկայի Ձիկունուին (Է. Վեյդեր):
22. Հ. Մանանդյանը Սամանասար Ի-ի (Մ) արշավանքի Արիմու-Մուարու հատվածի խնդիրը չի քննարկում:
23. АВИИУ, 10 (V,67; V,73; V,62):
24. Ասամու-Էլամուհա-Ուլամիա տեղանունների հետ նույնական է (տեղադրության վերաբերյալ տես. Манандян Я. А., 1956, էջ 12; ТУ, էջ 253):
25. ТУ, էջ 108:
26. АВИИУ, 13:
27. Ադոնց Ն., 1972, էջ 69, ծամ. 1; ТУ, էջ 144:
28. АВИИУ, 6: Նույն Դամդամուսան է՝ Գյուզալ շախրի շրջակայքում (ТУ, էջ 71-72):
29. АВИИУ, 3 (ծամ. 5):
30. Նույն տեղում, 1:
31. Саркисян Д. Н., 1989, էջ 14, 18-19:
32. АВИИУ, 19:
33. Բիթլիսի վիլայեթի մշյալ քննակալայնի տեղադրությունը տես Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986 (ՀՀՏՏԲ), էջ 688-689:
34. Արաստան Մաշու-Մասիոսի լեռների հյուսիսում էր, Կոտուս (լուտիների) երկրի հարևանությամբ. Շումերից այստեղ էին հասնում Եփրատի ավազանով (պետք է նկատի ունենալ ոչ միայն քում Եփրատը, այլ՝ նրա ձախակողմյա վտակ Կաբուրը) ու Ձամուա երկրով (տարածվում էր Փ. Ջարի վերին ավազանից մինչև Ուրմիա) (Մովսիսյան Ս., Հնագույն պետությունը Հայաստանում. Արաստան, Երևան, 1992, էջ 10-23; նույնի Սրբազան լեռնաշխարհը. Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2000, էջ 29-48):
35. Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», Երևան, 1990, Ժ, ԺԱ, Զ զվն.:
36. АВИИУ, 28 (174): Պետք է նկատել, որ մշված արձանագրությունում Գիլգամեշի անմիջապես հետո հիշատակվում են մասնական երկրներ, որոնցից հետո մշվում է Պարսուա - Բուշտու - Նամրու - Սիմեի լեռնանցք - Խայման երթուղին: Այս համագամանը շփոթություն է ստեղծել Գիլգամեշի երկրի տեղադրության խնդրում: Սակայն պետք է նկատել, որ Դայան - Աշտուր Գիլգամեշի Ռիմիայի ավազան հասնելու համար պետք է վերադառնալ նկատ ճամապարհով և հետդարձի ժամանակ նա ոչինչ չունի մշելու, քանզի արշավանքի սկզբին նա արդեն հպատակեցրել էր իր անցած երկրներն ու քննակալայնը:
37. Նույն տեղում, 46 (121), 49 (297; 306; 309):
38. Նույն տեղում, 50 (5), (10), (27):
39. Նույն տեղում, հմնտ. 50 (1), (2), (3), (4), (8), (10), (18), (27):

40. Арутюнян Н. В., 1970, էջ 288 (ծան. 428):
41. АВИИУ, 28 (ծան. 15); Пиотровский, Б. Б., Ванское царство (Урарту), Москва, 1959, էջ 55, 56, 58-59, 148; Н-У, էջ 31, 37, 180, 191, 195, 231, 236, 238, 326; ТУ, էջ 64 և այլն:
42. ՀԱՀ, հ. 3, Ե., 1977, էջ 65; Կատվայուն Մ., 1992, էջ 96:
43. Халатянц, Г. А., О некоторых..., էջ 7; Լեռ, երկրի ժողովածու, Երևան, 1966, էջ 184; ՀՀСՏԲ, հ. 1, էջ 863:
44. ՀՀСՏԲ, հ. 1, էջ 863:
45. Արքան մշում է, որ գրավել է «...Շուքարու երկրից մինչև Գիլգամու երկիրը և Նախիր...» (АВИИУ, 22):
46. Նույն տեղում, 23 (I, 54; I, 56; II, 80); հմտ., նաև, АВИИУ, 27 (I, 14), 23 (II, 2):
47. АВИИУ, 24, ծան. 4, 25: Աշտուրմաժիրպալը մշում է մի եռանկյունի տարածք (Սուրմատ - Կիրրուրի - Գիլգամու), որի սահմաններում նախկին Ուրտատրի որկիրն էր:
48. Այս լեռնանցքը պետք է փնտրել Դասն լեռների հարավային շրջաններում:
49. Արոնց Ն., 1972, էջ 80; Манандян Я. А., 1956, էջ 10, ծան. 2:
50. АВИИУ, 27 (II, 27), ծան. 7; (I, 14; I, 18; I, 20; I, 23; I, 27):
51. Նույն տեղում, 27 (II, 40; II, 45; II, 54; II, 60; II, 63), 28 (35), 29, 30, 31, 32, 33:
52. Էրիտրեյա-Սիլիան մույնացման տեսակետը Շտրեյկինն է (Արոնց Ն., 1972, էջ 86, ծան. 1; ТУ, էջ 261):
53. Թովմա Արծրունի և Ամամուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 198, էջ 346 (ծան. 194):
54. АВИИУ, 46, 49:
55. Կատվայուն Մ. Ա., 1987, էջ 91-92 (տե՛ս քարտեզը):
56. Որ Արմարիային Մ. Արքակն է, ակնհայտորեն երեւում է Արնա և Արրու բնակավայրերի հիշատակությունից. Արնան Պարսկահայքի Առնա-Ըռնա գավառն է, իսկ Արրուն՝ Արեքանոս-Արսեմիտան:
57. Ոչտունների բնակավայրերի վերաբերյալ տե՛ս ՀԱՀ, հ. 9, Ե., 1982, էջ 682-683; հմտ. նաև ՀԱՀ, հ. 11, էջ 275, քարտեզ «Վանի վիլայեթ»:
58. Меликшвили Г. А., 1951, էջ 177-179:
59. АВИИУ, 47 (297):
60. АВИИУ, 49 (309)
61. Thureau-Dangin Fr., 1912, էջ XVI; ТУ, էջ 253:
62. Խորոշվիա քարաքղ ժամանակակից Ջուլամերկն է և դա փաստվում է մի քարե հիշատակություններով. ա) Խորոշվիան Մ. Ջարի ավին էր (АВИИУ, 27 (I, 49; I, 18; I, 20; I, 23), 28), ք) այն գտնվում էր Արիդու (Արտրուանը)-Սուգունիա (Սիլանիս կամ Սուկան՝ գտնվում են Ջուլամերկը Ջերմի ավազանին կապող լեռնանցքի շրջանում) հատվածում) (АВИИУ, 27(I, 14; I, 18; I, 20; I, 23):
63. АВИИУ, 47 (309):
64. Նույն տեղում, 47 (415):
65. «Անդարտան» հայերեն «տնտեստ» կամ «անդունդ» քառերի հետ է համադրվի, որոնք նաև անվանական մույնակամություն են ենթադրում Խորատի հետ:
66. АВИИУ, 50 (1), ծան. 2:
67. Նույն տեղում, 50 (3):
68. Նույն տեղում, 57, 61:
69. Նույն տեղում, հմտ. 50 (3), (4):

70. Նույն տեղում, հմմտ. 50 (1), (6), (12):
71. Նույն տեղում, 23 (1, 54; II, 80), 27 (1, 14):
72. Նույն տեղում, 23 (1, 54), 27 (1, 14):
73. Թումմնի տեղադրությունը գիտական շրջանակներում վիճահարույց խնդիր է: Մենք այն նույնացնում ենք մերկայիս Թխում բնակավայրի հետ, որը գտնվում է Ջուլամերկից 30 կմ հարավ-արևմուտք: Նշյալ տեղադրության լավագույն փաստարկը Աշշուրնաձորայալ II- ի մի արշավանքի հիշատակությունն է. արքան անցել է Թումմնի Սուրբա, Արուկու, Արուրա, Արուրն բնակավայրերով և մտել Կիր-րուրի - Կրեբը: Սուրբան նույնացնում ենք հայոց Սրինգին, Արուրն, հավանաբար, մերկայիս Ավարն է՝ Նեխիլի ավազանում: Հնարավոր է, որ Թումմնն ձգվում էր Թխումից, Մ. Ջարով, Նեխիլի ավազան:
74. Հմմտ. Ընավի> Սունավի> Սունաքի> Սունքի:
75. TV, էջ 172:
76. Նույն տեղում:
77. АВММУ, 34:
78. УКН, 264:
79. «Մուսասիր» անվան *մուս արմատը, նախնական իմաստով, պետք է որ նշանակիր «ուզի, վիշապ» (հմմտ. վիշապագն Սուրբազանների տոհմանունը, հուն. Մուսաները և նրանց մայր, հիշողության դիցուհի Մուսնոսիմն, հայոց Մուշը, որ վիշապաբաղ «Լահազմի պաշտամոլներնային կենտրոնն էր, մաև՝ Մուկը-Մուկը, որսապարհ՝ «հոգևորական» քաղը): Երկրորդ՝ *սիր արմատը, հավանաբար, իրան. լեզուների խշիր>շիր՝ «առյուծ» բառն է: «Մուսասիրը», հավանաբար, նրկնային աստվածության և օձ-վիշապի կռվի՝ տիեզերածին առասպելը ընդհանրացնող «վիշապառյուծ» նշանակությունն ունի: Այս մոտեցման օգտին է խոսում նաև Մուսասիրի արքա Ուրզանայի կնիքի պատկերն ու արձանագրությունը (АВММУ, 48):
80. Հ. Մարտիրոսյանն ու Ա. Մովսիսյանը այս անունները ըխեցնում են հնդկուպ. *arso արմատից, որից հայ-հունա-արիական լեզուներում առաջացել են «սուրբ օրներ», « կարգ», «սուրբ իրավունք», « արդար», «քարեպաշտ» և այլ բառեր (Մովսիսյան Ա., 1992, էջ 30, ծան. 6):

ԵՐԿՐՈՂ ԳՐԵԿՅԱՆ

**ՄԱՆԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՔԱՐԱՔԱՎԱՆ
ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՆՑ ՏԵՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԸՈՒՐՁ**

Հինարևելյան երկրների շարքում իր ուրույն տեղն ունի Ջ.ա. IX-VI դդ. ասսորա-բաբելոնյան, ուրարտական և երրայական աղբյուրներում վկայված Մանայի թագավորությունը: Վերջինս, գոյություն ունենալով շուրջ 26 տասնամյակ (Ջ.ա. 850-590-ական թթ.), կարևոր դեր է խաղացել ժամանակի հզոր երկրներ Ասորեստանի և Ուրարտուի ռազմաքաղաքական պատմության մեջ՝ մեծապես նպաստելով նաև ապագա Մարաստանի կազմավորմանը:

Մանայի պատմությանն անդրադարձած հետազոտողները¹, ի թիվս այլ հարցերի, քննարկել են նաև երկրի պատմական աշխարհագրության հետ կապված խնդիրներ: Մակայն ճրանք, անդրադառնալով հիմնականում ուրարտական և նոստրեստանյան սեպագիր աղբյուրներում հանդիպող տեղանունների տեղորոշման² և Ջ.ա. 714թ. Ուրարտուի դեմ ասորեստանյան արքա Սարգոն II-ի (Ջ.ա. 721-705 թթ.) ձեռնարկած «VII տարվա արշավանքի» երթուղու հստակեցման խնդիրներին³, նպատակ չեն ունեցել ներկայացնելու Մանայի պատմական աշխարհագրության համապարփակ ուսումնասիրություն⁴:

Առաջարկվող հոդվածում փորձել ենք ուրվագծել Մանայի թագավորության վարչաքաղաքական միավորների հնարավոր ամբողջական պատկերը և տալ դրանց տեղադրումները:

Մանային վերաբերալ մեր տեղեկությունների հիմնական մասը գալիս է նորաստրեստանյան աղբյուրներից, որոնց մեջ քննարկվող խնդրի համար առանձնահատուկ նշանակություն ունեն Սարգոն II-ի վերոհիշյալ արշավանքը նկարագրող «Լուվրի աղյուսակը» (այսուհետ՝ ԼԱ) և Աշշուրբանակալի արձանագրություններից «Գլան B-ն»⁵: Այս և մի շարք այլ աղբյուրների ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրել Մանայի նկատմամբ Ասորեստանի և Ուրարտուի ունեցած քաղաքական, մշակութային ևն ազդեցություն: Այն իր արտահայտությունն է գտել նաև իրենից բավական բարդ համակարգ ներկայացնող երկրի վարչական կառուցվածքում: Մանան, թերևս ասորեստանյան օրինակով⁶, բաժանվել է կենտրոնական իշխանության

նկատմանը ենթակայության տարբեր աստիճաններ ունեցող միավորների՝ «մարզերի» և «երկրների»⁷: Դրանցից առաջինները (ասսուր. *naṣḫ*) հանդիսացել են թագավորության բաղկացուցիչ մասեր և կառավարվել արքաների կողմից՝ նշանակվող հատուկ պաշտոնյաների՝ փոխարքաների (ասսուր. *šaknū*)⁸ կողմից:

Երկրորդ խումբը կազմել են այն տարածքները, որոնք, բնակեցված լինելով որևէ ցեղի (ցեղերի) կողմից, հանդիսացել են տվյալ ցեղի «երկիրը»՝ ցեղատարածքը, ներկայացնելով քաղաքական, այլ ոչ վարչական միավորներ:

Գտնվելով Մանայի գերիշխանության տակ և կրելով նրա ազդեցությունը՝ պետական կազմավորումների աստիճանի բարձրացած այս «երկրները» իրենց հերթին բաժանվել են առանձին վարչատարածքային միավորների⁹: Երկրները կառավարվել են, թերևս, ժառանգաբար իշխող տեղական իշխանավորների կողմից, որոնք պաշտոնապես համարվել են մանայական երկրի «մեծ փոխարքաներ» (*šaknū* *Maḥḥā rabuṣū*)¹⁰ և կրել որոշակի պարտավորություններ (թերևս՝ հարկատու և զորատու):

Հինարևելյան աղբյուրների ուսումնասիրությունը թույլ է տալիս մեզ տարբերակելու Մանայի 13 վարչաքաղաքական միավորներ՝ 8 մարզ և 5 «երկիր»:

I. Մարզեր

«Ի-գիրտու քաղաքի շրջան» (*Ḫiḫirtu*)¹¹:

Հին Արևելքում պետական կազմավորումներից շատերի ծնունդը պայմանավորված էր այս կամ այն կենտրոն-«քաղաքի» վերելքով: Վերջինս, իր շուրջը միավորելով շրջակա տարածքները, վերածվում էր քաղաք-պետության կամ «երկրի»: Այս ուղին է անցել նաև Մանայի թագավորությունը, որն իր պատմության վաղ շրջանում հանդիսացել է մանցորինակ կազմավորում (Ի)Ջիրտու կենտրոնով¹²: Այս իրողությունից ելնելով՝ կարելի է ենթադրել, որ Զ.ա. IX դ. II կեսի ասորեստանյան և ուրարտական աղբյուրների «Ման(ն)ա (երկիր)» անվանումն արտահայտել է Ի-գիրտու քաղաքը (շրջակա տարածքներով) և այս ստումով, թերևս, համապատասխանել հետագայի «Ի-գիրտու քաղաքի շրջան» վարչամիավորի տարածքին¹³:

Նշված ժամանակաշրջանի աղբյուրներում Մանան հիշատակվում է 12 անգամ¹⁴: Ջամուայի, Ալլաբրիայի, Պարսուայի, Սումբու-Սունբուի, Խարբունայի(7), Սեսիի, Գիգիբունդայի, Մադայի և այլոց շարքում, որոնցից Պարսուային, Ջամուային, Խարբունային, Սեսիին և Ալլաբրիային սահմանակցել է հաստատապես¹⁵: Վերջիններքն տեղադրությունն¹⁶ առաջարկում է Մանայի որոշակի տեղորոշում Ուրմիա լճից հարավ, Փոքր Ջար գետից արևելք և Դիլայի ակունքներից հյուսիս¹⁷: Հարցի առավել հստակե-

ցումը, սակայն, կապված է մայրաքաղաք Իզիրատի Խ մարզի կազմում հիշատակվող քաղաքների տեղադրությունից:

Մանայի մայրաքաղաքը մասնագիտական գրականության մեջ նույնացվել է «թեփե» Կապլանտովի¹⁸, «թեփե» Քալայջի¹⁹, Բերդիզորի²⁰ հետ, տեղորոշվել Մահաբադի շրջանում²¹, Սաքըզի շրջանում²² (երբեմն՝ նույնացվել Սաքըզի²³), կամ Ջաղատուի (Ջարինե-Ռոտ) հովտում՝ Սիանդու՝Աքից հարավ և հարավ-արևելք²⁴, Բուկանից հյուսիս²⁵: Տեսակետների այս բազմազանությունից նախընտրելին, կարծում ենք, Ն. Արոնցի առաջարկած Իզիրատու-Բերդիզոր համադրությունն է²⁶: Վերջինս առավել քան համապատասխանում է Իզիրատուի ասորեստանյան աղբյուրներից ենթադրելի տեղադրությանը, այն է՝ ասորեստանյան սահմաններից, Ալաքիայից ե Սուրիկաչից ոչ հեռու²⁷ Արմայիդ և Ջիբիա քաղաքների մերձավորությամբ²⁸:

1990-ականներից սկսած շրջանառության մեջ դրվեց Իզիրատուի նոր տեղադրություն «թեփե» Քալայջի վայրում՝ Բուկանի մոտ, Ուրմիայից հարավ-արևելք, 1985թ. հայտնաբերված և գիտականորեն համեմատաբար վերջերս հրատարակված Բուկանի արամեական արձանագրության շնորհիվ²⁹: Նման տեղադրության հիմք է ծառայել արձանագրության 5-րդ ստորում նշված «Խալդիին, որը Շ'տ-ում է...» արտահայտությունը³⁰: Նշված Շ'տ վայրն էլ (թերևս՝ քաղաք) նույնացվել է Ի/Ջիբիային³¹: Սինչիեռ՝ Շ'տ-ի հիշատակությունն արձանագրությունում ոչ միայն չի ենթադրում Իզիրատու-Ջիբիայի հետ նույնացում³², այլև՝ վերջինիս տեղադրություն «թեփե» Քալայջիում՝ հետևյալ նկատառումներով.

«Հայտնաբերված բեկորը (13 տու) հանդիսացել է արձանագրության վերջնամասը, այսպես կոչված «անեծքի քանաձևը», իսկ արձանագրության բուն բովանդակությունն ամհայտ է: Հետևաբար՝ պարտադիր չէ նրան վերագրել տեղագրական նշանակություն: Պարզապես՝ «անեծքի քանաձևը» աստվածների (Հադադ և Շ 'տ-ի Խալդի) պատժով է սպառնում այն արքային, որը կվճարի կամ կզեղծի արձանագրությունը: Իսկ մնացած բովանդակություն հնարավոր է ենթադրել ցանկացած արձանագրությունում և ցանկացած վայրում, որոնց մեջ «մայրաքաղաքներ» տեսնելը քիչ է հավանական: Ասորեստանյան արձանագրություններում բազմիցս կարելի է հանդիպել, օրինակ, Իշտար աստվածուհու պաշտամունքի տեղական կենտրոնների՝ Նինվե («Նինվեի Իշտար»), Արբա՛իլ («Արբեյայի Իշտար») ևն: Սրանից, սակայն, չի հետևում, որ մնացած արտահայտություններ պարունակող արձանագրությունները հայտնաբերվել են բացառապես Նինվեից կամ Արբեյայից: Մեր դեպքում էս, ըստ ամենայնի, գործ ունենք Խալդի աստծու պաշտամունքի տեղական կենտրոնի հետ³³, որը, չի բացառվում, գտնված լինի Ջիկիրտում»:

Ելնելով վերոհիշյալից՝ հնարավոր ենք համարում «Իզիրատու քաղաքի շրջանի» տեղորոշումն Ուրմիայից հարավ՝ Ջաղատուի վտակ Թաթաու-չալի ավազանում և հարակից տարածքներում:

Մեսաի (mes/si, Mis(s)i, Mesa/s, URU/Me(š)ta)

Մանայի հաջորդ վարչամիավորը՝ Մեսսին, հիշատակվում է Ք.ա. IXդ. I քառորդից սկսած՝ տեղանվան զանազան հորջորջումներով³⁵: Ասորեստանյան արձանագրություններում այն նշվում է մերձուրմյան երկրների շարքում³⁶, որոնցից Մանան, Պարսուան և Գիզիլուրուան՝ Մեսսիի սահմանակցությամբ³⁷: Գա հիմք է տալիս մարզը տեղադրելու Ուրմիայից հարավ և Շահրերդի լեռնաշղթայից արևմուտք ընկած տարածքներում՝ հիշյալ երկրների միջև:

Ուրարտական աղբյուրներում Մեսսին՝ Մե(ի)շթա ձևով, հիշատակվում է երկու անգամ՝ խառակունիսի և Գաշ-թեփեի արձանագրություններում³⁸, որոնցից առաջինում հանդես է գալիս Բարշուայի (Պարսուա) տարածքային կազմում³⁹, իսկ երկրորդում՝ որպես ինքնուրույն միավոր՝ Մանայի սահմանակցությամբ⁴⁰: Ըստ այդմ Մե(ի)շթան նույնացվել է Գաշ-թեփեին⁴¹ (Ուրմիայից հարավ՝ Միանդու՝ Աք քաղաքից հյուսիս-արևմուտք), որի հարևանությամբ էլ տեղորոշվել են Մանա և Բարշուա երկրները: Այս տեղադրումը, սակայն, տեղիք է տվել իրարամերժ եզրակացությունների, հատկապես՝ Բարշուան տեղորոշելիս: Առաջարկված տեղադրությունից ելնելով՝ հետազոտողների զգալի մասը Բարշուան տեղորոշել է Ուրմիայի անմիջական հարևանությամբ՝ նրանից հարավ⁴², հարավ-արևմուտք⁴³ կամ հարավ-արևելք⁴⁴, տարբերակել խառակունիսի և Գաշ-թեփեի արձանագրությունների Բարշուան ուրարտական մեագյալ տեքստերի և ասորեստանյան Պարսուայից⁴⁵: Ենթադրելով մի քանի Պարսուանների գոյություն⁴⁶:

Հարցի հստակեցումը, կարծում ենք, կստված է Մե(ի)շթայի այլ տեղադրության հնարավորությունից:

Հետազոտողների կողմից ուշադրություն է դարձվել Գաշ-թեփեի փոքր ամրացի և ուրարտական աղբյուրների տվյալներից ենթադրելի Մե(ի)շթայի անհամապատասխանությանը, որից ելնելով՝ առաջարկվել են այլ տեղադրումներ⁴⁷, բացառապես՝ Ուրմիայից հարավ ընկած ուրարտական տիրույթներում⁴⁸: Այնինչ՝ Բարշուա-Պարսուա երկրի հիշատակությունը Մե(ի)շթայի հետ նշում է վերջինիս որոնման մեկ այլ որոշակի ուղղություն, այն է՝ Ուրմիայից բավական հարավ՝ դեպի Գիալայի վերին հոսանքի շրջան (այսինքն՝ ասորեստանյան աղբյուրների տվյալներով տեղորոշվող Պարսուա⁴⁹): ԼԱ տվյալներից ևս հետևում է Մեսսիի տեղորոշում Պարսուայից հյուսիս:

Ուշադրության է արժանի մտն. Աշշուր-նաժիր-սալալ II-ի տարեգրության տեղեկությունը Մեսու քաղաքի մասին: Վերջինս հիշատակվում է Ազիու և Միմակի լեռների միջև՝ դեպի Տուռնատ (Գիալա) ընդհանուր ուղղությամբ⁵⁰: Եթե ժամանակակից Միմախ անվան մեջ տեսնենք Միմակի լեռնանունը, իսկ Մեսուն հիշատակվում է այդ լեռան և այլ աղբյուրներից անհայտ Ազիուի միջև, ապա կարելի է ենթադրել Մեսուի տեղորոշում հիշյալ Միմակի-Միմախից ոչ հեռու, թերևս՝ դեպի հյուսիս, որտեղ էլ ենթադրվել է ասորեստանյան

տանյան արձանագրությունների Մեսիմ²¹: Այս նույն շրջանում, կարծում ենք, պետք է տեղադրել նաև ուրարտական աղբյուրների Մե(ի)շթան²², այն է՝ Ուրմիայից հարավ-արևելք՝ Ջաղատու գետի վերին հոսանքում՝ Մամայի և Բարշուա-Պարսուայի հարևանությամբ: Դա կրացատի սեպագիր աղբյուրների Մեսու-Մեսի-Մե(ի)շթայի մեջ տեսնել մի քանի միավորներ և տալ դրանց տարբեր տեղադրումներ:

Մուրիկաշ (Մ²³Surikas nasu):

Մամայի քաղաքության հարավային վարչամիավորը՝ Մուրիկաշը՝ Մի-նիխիմի ամրոցով, հիշատակվում է միայն մեկ անգամ՝ Մարգոն II-ի կազմած I Ա-ում³³: Չմայած այս եզակի հիշատակությանը՝ մարզը տեղադրվում է բավական վստահորեն՝ հիմք ընդունելով Միմիխիմի ամրոցի, ինչպես նաև Մուրիկաշին սահմանակից Պարսուա, Ալլաբրիա և Կարալու երկրների հիշատակությունը: Վերջիններս տեղադրությունը Փոքր Ջաբի ակունքներից Կրզը-Ուզեն ընկած շրջանում ենթադրում է մարզի տեղադրումը նրանցից հյուսիս: Նման հնարավորություն բխում է նաև մասնագիտական գրականությունում առաջարկված Միմիխիմի-Միմայի³⁴ և Սոլա-Շոլա³⁵ համադրություններից: Երևելով վերոհիշյալից՝ ընդունելի է թվում մինչ այդ առաջարկված տեղադրությունը Բանեի և Սարաբի միջև ընկած շրջանում՝ առաջինից ոչ հեռու³⁶:

«Բուշտու քաղաքի շրջան» (Մ²⁴Bustis, Bustus, Busutu, ԿՍՐ Բսճու)³⁷

Այս անվան տակ նկատի առնված մարզի գոյության հնարավորությունն առաջարկվում է մեր կողմից՝ հիմք ունենալով Մամայի դեմ ասորեստանյան արքա Աշշուբանասայի (Ք.ա. 668-627(?)թթ.) ձեռնարկած արշավանքը նկարագրող «Գլան Բ-ի» և, այսպես կոչված, «Ռասասի գլանի» տվյալները³⁸: Առաջին արձանագրությունում, կարծում ենք, խոսքը վերաբերում է վարչաքաղաքական առնվազն 7 միավորների: Մեր այս ենթադրության հիմքում ընկած է տարածքային որոշակի շրջան նշանակող «ոգեծ» տերմինի³⁹ իմաստային արտահայտման միջոցը՝ նորաստեղծության ժամանակաշրջանի արձանագրություններում⁴⁰: Ըստ այդմ՝ «ոգեծ»-ն, հատկապես Ուրարտուի հետ կապված, համընտրված է գալիս մեկ կամ մի քանի կենտրոնի շուրջ համախմբված «շրջակա բնակավայրերի» ամբողջության տեսքով: Եթե սա ընդունենք որպես հիմք, ապա «Գլան Բ-ից» հայտնի առաջին մարզը, ուր մուտք էր գործել Միմշարիշկունի գլխավորած ասորեստանյան բանակը, կլինի «Բուշտու քաղաքի շրջանը»:

Ջամաձայն արձանագրության՝ Այուսիաշ, Պաշա[...], Բուշաու (տեքստում՝ Բուսուսու), Աշիաշ, Ուրկիյամուն, Ուպպիշ, Միիուա, Նագի-նիրի քաղաքները և «ամբիվ քանակությամբ» շրջակա բնակավայրեր ընդգրկած մարզը ձգվել է ասուրա-մամայական սահմանից⁴¹ մինչև Իգի-սուի շրջան⁴²: Դատելով սեպագիր աղբյուրներում Բուշտուի հետ հիշատակվող երկրների ցանկից, որոնց մեծամասնությունը կազմում էին Մամայից և Պարսուայից արևելք տեղադրվող մարական իշխանությունները, ա-

պա ընդունելի է Բուշուռի տեղադրումն այդ իշխանությունների հարևանությամբ՝ Մանայի և Պարսուայի միջև, սակայն շատ ավելի արևելք, քան առաջարկվել է⁶³, ինչը բխում է ուրարտական արձանագրությունների տվյալներից⁶⁴, այն է՝ Կըզըլ-Ռագենի արևմտյան վտակների և Ջաղատու գետի միջև, Բուկանից արևելք:

«Շուրդիրա քաղաքի շրջան» (Շurdira)⁶⁵.

«...Շարունակելով արշավանքս՝ Շուրդիրա քաղաքը շրջապատող բնակավայրերը, որոնք արքաների՝ նախորդներին օրոք մանացիները զավթել էին և ենթարկել իրենց, ես նվաճեցի և հրո ճարակ դարձրի, քչեցի-տարա նրանց ունեցվածքը: Այս բնակավայրերը ներառեցի Ասորեստանի սահմանների մեջ»⁶⁶:

«Գլան Բ-ի» այս հատվածից ենթադրում ենք «Շուրդիրա քաղաքի շրջան» վարչամիավորի գոյությունը, քանի որ այստեղ ևս խոսք է գնում մի ամբողջությամբ կենտրոնի (իմա՝ Շուրդիրայի) և նրա շուրջը ընկած բնակավայրերի մասին: Մարզի տարածքը, ըստ ամենայնի, համապատասխանել է նորաստրեստանյան աղբյուրներից հայտնի Ալլաքրիա երկրին⁶⁷: Վերջինս հիշատակվում է Մուննա (Մանա) և Պարսուա երկրների, Մանայի Սուրիկաշ մարզի և Կարալլուի, Ձ/Սար(՝) երկրի, Շուրդիրայի հարևանությամբ, որոնց սահմանակցել է հաստատապես⁶⁸: Եկատի առնելով վերջիններին համար առաջարկված տեղադրումները⁶⁹, այն, որ Ալլաքրիայի մաս կազմող Եիկսամմա և Շուրգադիա մարզերը⁷⁰ Սարգոն II-ի կողմից կցվել են Պարսուա նահանգին, իսկ նրան սահմանակից Կարալլուն՝ Լուլումի-Չամուսային⁷¹, ապա կարելի է մարզը տեղադրել Դիալայից հյուսիս՝ Փոքր Ջաք գետի արևելյան ակունքների շրջանում, Բանեից հարավ և Մեքիվանից հյուսիս-արևմուտք:

Արսիանիշ քաղաքի շրջան (arsē ša Arsiāniš).

Այս մարզը՝ համանուն կենտրոնով, հիշատակվում է միայն «Գլան Բ-ում» Խարսի լեռան վրա գտնվող Այսկանանի(՝) քաղաքի և կումուդայցիների երկրի միջև՝ «Մանացիների երկրի ներսում»⁷²: Մարզի տեղադրությունը պայմանավորել ենք երկու հիմնական ճկատառումներով, այն է՝ ասորեստանյան բանակի հավանական երթուղին և Խարսի լեռան հիշատակությունը⁷³:


Աշշուրբանասպալը, իր IV արշավանքն ուղղելով Մանայի դեմ, նպատակ է ունեցել լուծել կոնկրետ խնդիրներ՝ վերադարձնել իր նախորդների օրոք մանացիների նվաճած ասորեստանյան ամրոցները⁷⁴ և զրկել նրան արտաքին ակտիվ քաղաքականություն վարելու հնարավորությունից: Այս հանգամանքներն էլ, կարծում ենք, պայմանավորել են ասորեստանյան բանակի երթուղին: Այս առումով ուշադրության է արժանի, որ ենթադրված 7 վարչամիավորներից առնվազն 3-ը (Բուշուուն, Շուրդիրան, Շարրուիկրին) սահմանակցել են Ասորեստանին, Բ-վիրտուն գտնվել է նրանից ոչ հեռու, իսկ Արսիանիշը, կումուդայցիների երկիրը, հավանաբար, նաև Էրիշթեյանան՝ քիչ

ավելի խորքում: Այստեղից կարելի է ենթադրել, որ արշավանքը սկզբնապես Բուշտու-Իզիրտու հատվածից հետո, ընթացել է երկու՝ թերևս զուգահեռ ուղղություններով, այն է՝ Իզիրտու-Շարդիրա-Շարրուիկքի և Իզիրտու-Արսիյանիչ (հարևանող՝ կումուրդայցիների երկիր)-Էրիշթեյանա-Շարրուիկքի կողմից: Հետևաբար ասորեստանցիներն ընթացել են Մանայի սահմանամերձ շրջաններով և հարակից տարածքներով՝ առանձնապես չվերձևյալ խորանալ երկրի մերձում, ինչը երևում է նաև ասորեստանցիների ցուցաբերած անհետևողականության մեջ՝ մայրաքաղաք Իզիրտուն պաշարելիս⁷⁵: Այստեղից կարելի է ենթադրել, որ խնդրո առարկա Արսիյանիչը գտնվել է Իզիրտու մարզի հարևանությամբ, նրանից, հավանաբար, հյուսիսարևմուտք, ինչը չի հակասում նաև Խարսի լեռան համար առաջարկված տեղադրությանը:

Ելնելով ասվածից՝ «Արսիյանիչ քաղաքի շրջանը» անդադրում ենք Ուրմիայից հարավ՝ Ջաղատուի վտակ Թաթաու-չայի ավազանում՝ ներկայիս Բերդիզորից հյուսիս-արևմուտք:

Էրիշթեյանա քաղաքի շրջան (ռաքմ ճա «Erištejana»).
Աշշուրբանուպալի արձանագրությունում, վարչաքաղաքական վերոհիշյալ միավորներից զատ, հիշատակվում է նաև Էրիշթեյանա քաղաքի շրջանի նվաճման և ավերման մասին⁷⁶: Աղբյուրներում միայն մեկ անգամ նշվող այս մարզին, ելնելով հիշյալ նկատառումներից և Շարրուիկքիի հավանապես տեղադրությունից, կարելի է տալ մոտավոր տեղորոշում Ուրմիայից հարավ՝ ներկայիս Մահարադի շրջանում⁷⁷, որտեղից հայտնի և Ք.ա. 7-րդ դարով թվագրվող ամրոցներից մեկն էլ⁷⁸, թերևս, հանդիսացել է Էրիշթեյանան⁷⁹:

«Շարրուիկքի քաղաքի շրջան» (Տարրուիկքի).
Աշշուրբանուպալի արձանագրություններից ենթադրվող վարչատարածքային վերջին միավորը «Շարրուիկքի քաղաքի շրջանն է»: Վերջինս՝ [Բի]րուա(՝), Շարրուիկքի, Գուսունն և [Բի]րուտե(՝)⁸⁰ քաղաքներով նվաճվել է արշավանքի վերջին վայրում և կցվել Ասորեստանին⁸¹: Այս վիաստը, Շարրուիկքիի հիշատակությունը («Գլան Բ-ից» զատ) Ասարխատրունի արձանագրությունում որպես «Մաննացիների երկրի սահմանին» գտնվող քաղաք⁸², ինչպես նաև արշավանքի հավանական երթուղին մատնանշում են մարզի որոշակի տեղորոշում Ուրմիայից հարավ և Մահարադից արևմուտք: Այս տեղորոշման օգտին է վկայում նաև Բիլուտե(՝) քաղաքի հիշատակությունը «Գլան Բ-ում», որը Աշշուր-Նաժիր-ապալ II-ի մոտ հանդես է գալիս Ջամուայի բնակավայրերի թվում⁸³: Իսկ Մանայի թագավորությունը, ինչպես հայտնի է, զբաղեցրել է զամուսկան երբեմնի տարածքների զգալի մասը⁸⁴: Ուստի, եթե նկատի ունենանք նաև ասորեստանյան Ջամուա-Մագամա ցահանգի տեղադրությունը⁸⁵ (որից, թերևս, նվաճվել էին հիշյալ քաղաքները), ապա «Շարրուիկքի քաղաքի շրջանը» կարելի է տեղորոշել Փոքր Ջարից հյուսիս՝ ներկայիս Խանե բնակավայրի և հարակից տարածքներում:



II. «Երկրներ»

Ուիշոնշ (ՊՆՏՃԻՅՔՐԱՅՏԻՆ(ՈՍ))

Հիշատակվում է Ջ.ա. VIII-րդ դարապահան (Արգիշտի I) և ասորեստանյան (Սարգոն II) արձանագրություններում⁸⁸, որոնցից առաջինում՝ Մանա և Բուշուու կատարված ուրարտական արչավանքի, իսկ երկրորդում՝ Մանայի դեմ բարձրացված ընթացության և Սարգոն II-ի «VIII տարվա արչավանքի» կապակցությամբ: Հիշյալ աղբյուրների ուսումնասիրությունը թույլ է տվել հետազոտություններին առաջարկելու Ուիշոնշի տարրեր տեղադրումներ հիմք ընդունելով երկու հիմնական փաստարկներ:

Ա. Մկզբնական շրջանում տեղադրության հիմնական փաստարկը Ֆ. Թյուրո-Կանժենի կողմից առաջարկված տեսակետն էր, որ հեղինակը, Ուսուշ լեռը նույնացնելով Ուրմիայից արևելք ընկած Կուե-ի-Սոհենդ (այժմ՝ Հարամդադ) լեռան հետ, Ուիշոնշը տեղադրել էր այդ լեռան և Ուրմիայի միջև՝ լճի արևելյան ափերին⁸⁹:

Բ. Երկրորդ փաստարկը բխում էր ԼԱ-ից, ըստ որի Ուիշոնշը սահմանակցել է Ուրարաուին և, առժամանակ, նվաճվել նրա կողմից⁹⁰:

Մերձուրմյան ավազանում գերմանական, այնուհետև իտալական արչավանքների կատարած լայնածավալ աշխատանքների արդյունքում ի հայտ բերված հնագիտական հարուստ նյութերն ու հուշարձանները վկայում են տարածաշրջանում ուրարտական առնվազն հարյուրամյա հաստատուն ներկայություն⁹¹: Հնավայրերի տեղաբաշխումը (Ուրմիայից արևմուտք, հարավային ափամերձ տարածքներ) թույլ է տվել որոշակիորեն հստակեցնել ուրարտական պետության հարավ-արևելյան սահմանները: Այս հանգամանքն էլ նկատի ունենալով՝ Լ.Լևինը, Ի.Սեդլեդսկայան և այլքը Ուիշոնշը տեղադրում են Ուրմիայից հարավ և հարավ-արևելք՝ ուրարտական տիրույթների հարևանությամբ, մերժելով Ուիշոնշի «արևելյան» տեղադրության հնարավորությունը⁹²:

Այս կապակցությամբ ամերաժեշտ ենք գտնում ուշադրություն դարձնել հետևյալ նկատառումներին:

Ա. Ուրարտական հուշարձանների առկայությունը Ուրմիայից հարավ և դրանց բացակայությունը լճից արևելք դեռևս չի ենթադրում, որ այդ տարածքները չէին կարող գտնվել ուրարտացիների ոչ երկարատև վերահսկողության ներքո: Անվանը հավաստվում է ուրարտական աղբյուրների տվյալներով: Դրանց համաձայն՝ Մանա երկրի դեմ ձեռնարկված արչավանքների և կատարված նվաճումների կապակցությամբ միայն մեկ անգամ է նշվում «երկիրն իմ-երկրին ավելացրեցի (կցեցի)» արտահայտությունը, այն է՝ Մայրոյրի II-ի տարեգրությունում⁹³: Նրա կողմից Մանայի դեմ Ջ.ա. 745/743թթ. ընթացքում⁹⁴ ձեռնարկված երկրորդ և ուրարտական արձանագրություններից հայտնի վերջին արչավանքի կապակցությամբ: Ըստ Ի.Գյակունովի կարծիքի՝ «Մանա» անվան տակ արձանագրությունում նկատի է

առնվել Սուրի երկիրը⁸⁵: Հետևաբար՝ Ուիշդիշին սահմանակից Սուրիին գտնվել է ուրարտական տիրապետության տակ մտնող երեք տասնամյակ և ոչ քն մեկ դար, ինչն, իհարկե, չի նպաստում Ուրմիայից հարավ ընկած և հնագիտորեն հավաստված ուրարտական տարածքներում նրա տեղադրությունը: Ուստի՝ «Ուրարտուի սահմանների սկիզբ» Սուրիին Ուշկայա ամրոցով, պետք է գտնվեր ոչ այլ վայրում քան Ուրմիայից արևելք, որի հարևանությամբ էլ՝ Ուրմիայից արևելք և հարավ-արևելք, գտնվել է Ուիշդիշը:

Բ.Լ.Լևինը, հիմնվելով հնագիտական տվյալների վրա, Ուիշդիշը տեղորոշում է կամ Բուկանի⁸⁶ կամ Մահաբադի շրջանում⁸⁷, միաժամանակ, տարբերակելով «Նեծ» և «փոքր» Ուիշդիշներ, որոնցից առաջինը, ըստ հեղինակի, Ուրմիայի հարավային ափերի ուրարտական տիրույթներն են, իսկ երկրորդը՝ սարգոնյան արձանագրությունների Ուիշդիշը⁸⁸:

Առաջինի տեղադրությունը Ուրմիայից հարավ ընկած ուրարտական տարածքներում չի հավաստվում որպես փաստարկ բերված այդ նույն հնագիտական նյութերով: Դրանց, և մասնավորապես էքնիկ տարբերակման հիմք ծառայող խեցեղենի ուսումնասիրությունը թույլ է տալիս ևնթադրել նշված տարածքների բնակչության կազմում ուրարտական էքնիկ տարրի գերազանցություն⁸⁹: Հետևաբար՝ հիմքեր չկան այնտեղ տեսնելու մանացիների կամ, ինչպես հեղինակն է կոչում՝ «ուիշդիշցիների» նշանակալի քանակ, նրանց վերագրելու «ծովեզրյա մանացիների» քարձրագրած ապստամբությունը և, վերջին հաշվով, տեղորոշելու Ուիշդիշը⁹⁰:

Ինչ վերաբերում է Ուիշդիշի տեղադրությանը ուրարտական տիրույթներին հարավից հարող հովիտներում, ապա, այս պարագայում, քիչ է հավանական Մանայի քաղաքության կենտրոնական շրջաններում, մայրաքաղաք Բզիխումից ոչ հեռու այնպիսի հզոր և փաստացի անկախ իշխանության գոյություն, ինչպիսին հանդիսանում էր Ուիշդիշը:

Այս նկատառումներից ելնելով և ընդունելով Ուսուշ-Մոհենդ նույնացումը, ընդունելի ենք գտնում Ուիշդիշի տեղադրությունը Ուրմիայից արևելք և հարավ-արևելք՝ մինչև Սոհենդ և Մարադա ընկած տարածքներում:

Կումուրդայցիների երկիր (՝⁹¹ Kumurdaia).

Կումուրդայցիների երկրի՝ որպես Մանայի քաղաքության վաքյաքաղաքական միավորի գոյությունը նշվել է Լ.Լևինի կողմից⁹²՝ առանց, սակայն, տեսնելու տեղադրության որևէ հնարավորություն⁹³:

Մեր կարծիքով, հնարավոր է տալ «Կումուրդայցիների երկրի» մտավոր տեղադրություն՝ հիմք ընդունելով Արսիյանիչ քաղաքի տեղադրությունը այսպիսի անվանող վերը քննարկված նկատառումները: Ըստ այդմ՝ հնարավոր ենք համարում «Կումուրդայցիների երկրի» տեղորոշումը այդ մարզի հարևանությամբ դեպի արևելք, Բերդիզորից հյուսիս-արևելք:

Սուրի (՝⁹⁴ Suri).

Սուրի երկիրը հիշատակվում է միայն ԼԱ-ում՝ որպես մանացիներով բնակեցված ուրարտական նահանգ: Մասնագիտական գրականությունում

Սուբիի տեղորոշումը պայմանավորվել է Ուիշդիշի տեղադրությամբ՝ նրանից հյուսիս կամ արևմուտք՝ հիմք ընդունելով վերջինիս նկատմամբ ուրարտական իշխանության առկայության և Ուիշդիշի հետ սահմանակցության համաձայնագրի:

«Ուրարտուի սահմանների սկիզբ» Սուբիի՝ սկզբնապես առաջարկված «արևելյան» տեղադրությունը մերժող հիմնական փաստարկը Ուրմիայի արևելյան ափերին ուրարտական հուշարձանների (արձանագրություններ, խեցեղեն և այլն) բացակայությունն է¹⁰¹: Այս փաստը, սակայն, բացատրվում է ԱԱ-ի տվյալներով, համաձայն որոնց, իրենք՝ ուրարտացիները, թերևս էթնիկ նկատառումներից ելնելով, Սուբիին անվանել են «մանացիների երկիր»: Արդ, հնարավոր է ակնկալել մանացիներով բնակեցված և ոչ վաղուց նվաճված տարածքներում ուրարտական ներկայության արդյունք համոզիասցող այնպիսի մեծաքանակ նյութերի և մասնավորապես՝ ուրարտական կարմիր-անգորավորված խեցեղենի առկայություն, ինչպիսիք հայտնի են Ուրմիայից արևմուտք և հարավ¹⁰²: Այս համաձայնագրը, կարծում ենք, կարող է լինել Սուբիի «արևելյան» տեղադրությունը նպաստող և ոչ թե բացառող փաստարկ:

Սուբիի տեղորոշմանն ամերաժեշտ հասցող պայմանը Ուիշդիշից հետո աստրեստանյան բանակի երթուղին պայմանավորող գործոնների հնարավոր բացահայտումն է:

Ուիշդիշից աստրեստանյան բանակը պետք է ընթանար երկու ճանապարհով՝ կամ դեպի հյուսիս կամ արևմուտք: Հետազոտողների զգալի մասն ընդունել է Ֆ. Թյուրո-Դանթենի կողմից առաջարկված «հյուսիսային» երթուղին, մնացյալը՝ ովքեր Սուբին տեղորոշել են Ուրմիայից հարավ՝ «արևմտյան»: Մենք ևս գտնում ենք, որ Սարգոնն ընթացել է հյուսիս՝ ելնելով, Սուբիի տեղադրությունից գառ, հետևյալ նկատառումից:

Եթե Սարգոնն ընթանար դեպի արևմուտք, ապա ստիպված էր լինելու հաղթահարել մեկդարյա ներկայության ընթացքում ստեղծված ուրարտական ամրոցների մի ամբողջ շղթա (Դաշ-թեփե, Արսլան Քալէ, Շեթան Արսղ, Ագրաթ-թեփե, Հասանլու, Կալապահ ևն), ինչը, անկախ Ուառլում ուրարտական բանակի կրած պարտության հետևանքներից, աստրեստանցիներից կպահանջեր մեծ ջանքեր և ժամանակ: ԱԱ-ը, սակայն, ներկայացնում է արշավանքի սահուն, անկաշկանդ ընթացք, ինչը հազիվ թե պայմանավորվեր ուրարտական զինվորների «համատարած փախուստով» կամ նրանց համակած «սարսափով»¹⁰³: Ենթադրում ենք, որ Սարգոնն ընտրել է երկար, բայց առավել դյուրին և, որ կարևոր է, թույլ պաշտպանված երթուղի, այն է՝ Ուրմիայի արևելյան ափերով դեպի հյուսիս¹⁰⁴: Ասվածից, բնականաբար, կհետևի Սուբիի «արևելյան» տեղորոշում:

Հայկական լեռնաշխարհի և հարակից տարածքների ֆիզիկական, բնակլիմայական պայմաններին քաջատեղյակ Պ. Ջինանկինն նշում է Սուբիի «արևելյան» տեղադրությունը հաստատող ևս մեկ փաստարկ:

Ի տարբերություն Ուրմիա լճի հարավային բերրի հովիտների՝ Սուրբի գրադեցրած «արևելյան» տարածքը (տե՛ս ստորև) եղել է երկրագործության համար քիչ պիտանի, սակայն նպաստավոր՝ անասնապահության և ձիաբուծության համար¹⁶⁵։ Այս նույնն է հայտնում նաև ԼԱ-ը։ «Երջին Սուրբի նկարագրումում չի նշում երկրագործության հետ կապված որևէ փաստ, ինչի փոխարեն, սակայն, Սուրբին համարվում է սրբարական բանակին ձիերով ապահովող անասնապահական կարևոր շրջան, նրանում հիշատակված Անիաշտանիան՝ «նրա (Ռուսայի) երանակների տունը»¹⁶⁶։

Այսպիսով, ի մի բերելով ասվածը, Սուրբին, կարծում ենք վստահաբար կարելի է տեղադրել Ուրմիայից արևելք և Ուխդիչից հյուսիս¹⁶⁷, լճակից մինչև Մարանդ, Թավրիզ և Սահենդ լեռն ընկած տարածքներում։

Չիկիրտու (^{ՊՊ}Չիկիրտու)

Մանային ենթակա երկրներից հզորագույնը՝ Չիկիրտուն¹⁶⁸, հանդես է գալիս բացառապես սարգոնյան ժամանակաշրջանի աղբյուրներում՝ հիշատակվելով բազմիցս՝ Մանայի, Ուխդիչի և Անդիայի սահմանակցությամբ։ Թվարկված երկրների և, մասնավորապես, Ուխդիչի տեղադրությունը, ի լրումն աստիճանյան բանակի հավանական երթուղու (Չիկիրտուից Մարգանն ընթացել է մտնեցող ուրարտական բանակին ընդատաջ կամ, ինչպես նշվում է «արևելքից արևմուտք»¹⁶⁹), մատնանշում է երկրի հնարավոր տեղադրություն Ուրմիայից արևելք՝ Ջաղատուի աջափնյա վտակների և Հաշտա-Ռուս գետի միջև, Սահենդից հարավ-արևելք՝ Ուրմիայից հարավ ընկած ուրարտական տիրույթների մերձավորությամբ¹⁷⁰։

Անդիա (^{ՊՊ}Andia)

Աստիճանյան արքաներ Մամանասար III-ի, Աղադ-Նիրարի III-ի և Սարգոն II-ի արձանագրություններից¹⁷¹ հայտնի Անդիան ևս, ամենայն հավանականությամբ, հանդիսացել է Մանային ենթակա երկիր կամ, ամենավազմ, դիտվել այդպիսին¹⁷²։ Սարգոնյան արձանագրություններում Անդիան և Չիկիրտուն մեծ մասամբ նշվում են համատեղ, ինչից ենթադրվել է նրանց սահմանակցություն¹⁷³։ Աղադ-Նիրարի III-ի մոտ (Ջ.ա. 810-782թթ.) Անդիան համարվում է մինչև «Արևելքի մեծ ծով (Կասպից ծով)» ձգվող հեռավոր երկիր¹⁷⁴, իսկ ԼԱ-ից հայտնի Պանգիչը՝ Չիկիրտու և Անդիա երկրների դեմ կառուցված սահմանային ամրոց¹⁷⁵։ Ասվածից ելնելով՝ Անդիան կարելի է տեղադրել Կըզըլ-Ուզենի (Մեջիտ-Ռուս) միջին հոսանքի շրջանում՝ Չիկիրտուից հյուսիս-արևելք¹⁷⁶։

ERVAND GREKYAN

THE ADMINISTRATIVE-POLITICAL UNITS OF THE KINGDOM
OF MANNA AND THEIR LOCATIONS

(Summary)

The problem of historical geography and administrative division of ancient Oriental kingdom of Manna is still actual. The number of administrative-political units of Manna, known from cuneiform sources, reaches up to thirteen, including eight districts and five "lands".

Districts - 1. "District of Izirtu" (south of Lake Urmia, in and around Berdizor), 2. Missi (in the region of Saqqez), 3. Surikash (east of Lower Zab, near the town of Baneh), 4. "District of Bushtu" (between the rivers of Zarineh Rud and Qizil Uzun, east of Bukan), 5. "District of Shurdira" (in the area of upper stream of Lower Zab, north-west of Marivan), 6. District of Arsiyanish (along the valley of Tatau Chay, north-west of Berdizor), 7. District of Erishteyana (in the region of Mahabad), 8. "District of Sharruqibi" (in and around Khaneh).

"Lands": 1. Uishdish (east and south-east of Urmia, between the seashore, Mt. Sahend and Maragheh), 2. Subi (east of Urmia, south-west of Tabriz), 3. Zikirtu (south-east of Urmia, between the rivers of Zarineh Rud and Hashta Rud), 4. Andia (in the area of middle stream of Qizil Uzun), 5. Kumurdu (south of Urmia, north of Berdizor).

ՄԱՆՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մաննայի բազմաթիվ ժամանակների մասին տե՛ս Գ.Ա.Մելիքիշվիլի, *Некоторые вопросы истории Маннейского царства*, "Вестник древней истории" (ВДИ), 1949, № 1, с. 57-72; Բուշտի՝ Նանր-Սարտու, ԹԵ, 1954; И.М.Дьяконов, *История Мидии*, М.-Л., 1956; И.Г.Алиев, *История Мидии*, Б., 1960; Э.А.Грантовский, *Ранняя история иранских племен Передней Азии*, М., 1970; Н.В.Артюнян, *Бийани-ли*, Ер., 1970; С.М.Кашкай, *Из истории Маннейского царства*, Б., 1977; Խնչուբու նաև "Reallexikon der Assyriologie" (RLA), 7, 1989-ում ("Mannäer", p. 340-342) նշվ. գրականությունը:
2. M.Streck, *Das Gebiet der heutigen Landschaften Armenien, Kurdistan und Westpersien nach der babylonisch-assyrischen Keilinschriften*, "Zeitschrift für Assyriologie und verwandte Gebiete" (ZA), XIII Band, 1 Heft (1898), XIV Band, 1-2 Heft (1899), XV Band, 2-4 Heft (1901); L.D.Levine, *Geographical Studies in the Neo-Assyrian Zagros*, I ("Iran" XI, 1973), II ("Iran" XII, 1974); J.E.Reade, *Kassites and Assyrians in Iran*, ("Iran" XVI, 1978); S.Brown, *Archaeological and Historical Studies in the Neo-Assyrian Zagros* (Ph.D.diss.), University of Toronto, 1979; I.M.Diakonoff, S.M.Kashkai, *Geographical Names According to Urartian Texts*, Répertoire

Geographique des Textes Cuneiformes (RGTC), Band 9. Wiesbaden, 1981; Н.В.Арутюнян, Топонимика Урарту, Е., 1985; J.E.Reade. Iran in the Neo-Assyrian Period. - in "Neo-Assyrian Geography" (ed. M.Liverani), Rome, 1995.

3. Այս կապակցությամբ իրենց մտածումներն արտահայտած հետազոտողներն անդրադարձել են նաև մանաթանային այն մարզերի և երկրների տեղադրությանը, որոնց տարածքով ընթացել է արշավանքի երթուղին: Sbv F.Thureau-Dangin, Une relation de la huitième campagne de Sargon, Textes cuneiformes du Louvre, vol. 3, Paris 1912, pp. I-XX; C.F.Lehmann-Haupt, Mosaik und der achte Feldzug Sargons II (714 v.Chr.), "Mitteilungen der Vorderasiatischen (und Ägyptischen) Gesellschaft" (MVAG), 21, (1916), pp.119-151; H.A.Rigg, Sargon's Eight Military Campaign. "Journal of American Oriental Society" (JAOS), 62 (1942), pp. 130-138; E.M.Wright, The Eight Campaign of Sargon II of Assyria (714 B.C.), "Journal of Near Eastern Studies" (JNES), 2 (1943), pp. 173-186; L.D.Levine, Sargon's Eight Campaign, in Mountains and Lowlands: Essays in the Archaeology of Greater Mesopotamia (eds. L.D.Levine, T.C.Young), "Bibliotheca Mesopotamica" (BM), vol.7, Malibu, 1976/1977, pp.252-271; W.Kleiss, Alte Wege in West-Iran, "Archologische Mitteilungen aus Iran" (AMI), 10 (1977), S. 137-151; A.Çilingiroglu, The Eight Campaign of Sargon II, "Jahrbuch für Kleinasiatische Forschung" (JKF, "Anadolu Araştırmaları"), 4/5, (1976/77); W.Mayer, Sargons Feldzug gegen Urartu -714 v. Chr.: Eine militärhistorische Würdigung, "Aus Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft" (MDOG) 112 (1980), S.13-33; И.Медведская, К уточнению маршрута похода Саргона в 714 г. до н.э., ВДИ, N2 (1989), с.100-117, G.W.Vera Chamaza, Der VIII. Feldzug Sargons II. Eine Untersuchung zu Politik und historischer Geographie des späten 8. Jhs.v.Chr., AMI 27 (1994), S. 91-118.
4. Այս առումով քաջատրյուն կազմող Ռ.Բոյների ռաումնասիրությունը (R.M.Boehmer, Volkstum und Städte der Mannäer, "Baghdader Mitteilungen" (Bagh.Mit), 3 (1964), S. 11-24, Tafel 1-3), արժեքավոր է այնքանով, որ նրանում ի մի են բերված Մանային վերաբերող տեղանունների մեծագույն մասը՝ արդյուրների համապատասխան հղումներով հանդերձ: Սակայն, հեղինակի կատարած մի շարք եզրահանգումներ, հատկապես տեղադրումների հետ կապված, անհամոզիչ են և սակավ փաստարկված:
5. F.Thureau-Dangin, Une relation...; D.D.Luckenbill, Ancient Records of Assyria and Babylonia (այստիեստ՝ ARAB) I-II, Chicago, 1926-1927, II 139-178, 851-853; И.М.Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту (այստիեստ՝ АВВИУ), ВДИ, 1951, N. 2-4, N. 49, 73. Արձանագրության մեր հրատարակությունը տե՛ս W.Mayer, Sargons Feldzug gegen Urartu - 714 v. Chr.: Eine militärhistorische Würdigung, MDOG 112 (1980) und 115 (1983), Berlin, 1984.
6. Ատրեստանում, ընդհուպ մինչև Թիգրաբալասար III-ի (Ք.ա. 745-727) ձեռնարկած ռազմավարական բարեփոխումը, գործել է երկիրը փոխարքայությունների բաժանվելու սկզբունքը՝ «Տառն»-ների գլխավորությամբ: Բարեփոխումից հետո փոխարքայությունները բաժանվել են ավելի մանր վարչամիավորների՝ մարզերի՝ մարզային կառավարիչների՝ (*^ušēl rīšā) գլխավորությամբ: Վարչական այս համակարգի կիրառումը, ամենայն հավանականությամբ, վերցվել է Ուրարտուից (И.Дьяконов, Урартские письма и документы, М.-Л., 1963, с.66 n.75), որտեղ մարզային կառավարիչների ինստիտուտը գործել է ի սկզբանե:

7. Հմտ. Ասորեստանում (Ջ.ա. VII դ.) 56 նահանգների (նախկինում՝ ինքնուրույն երկրներ) և «բուն ասորեստանյան» 50 մարզերի գոյությունը:
8. ¹⁰⁰šaknu, շում. šakan/sakkanakku բառից՝ «տեր, տիրակալ, փոխարքա ևն, բառացի՝ իշխանություն ունեցող» (P.A. Deimel, Akkadisch-Sumerisches Glossar, Romae, 1937, S.423): Կառավարման այս ինստիտուտի մասին տե՛ս R.A. Henshaw, The Office of Šaknu in Neo-Assyrian Times, JACS 88 (1968), N. 3, J.N. Postgate, The Place of The Šaknu in Assyrian Government, "Anatolian Studies" (An.St.), vol. XXX, (1980), p.68-76.
9. Մանային ենթակա երկրներից հայտնի են Ձիկիտտի և Անդիայի օրինակները, որոնք ունեցել են նման միավորներ. АВИИУ,46 (75), 49 (79), 54 (28), n.8.
10. G.Postgate, RLA 7 (1989), p. 341; Г.Меликишвили, ВДИ, 1949, N 1, с.71.
11. «Իզիրտու բաղարի շրջան» և յակիրտների մեջ առնված մնացյալ անվանումները կրում են պայմանական բնույթ:
12. Г.Меликишвили, Наирн-Урарту, с.194-199.
13. Г.Меликишвили, Наирн-Урарту, с.197. Սրա օգտին է վկայում Մալմանասար III-ի (Ջ.ա. 859-824) արձանագրություններից մեկը, ուր Սանան հանդես է գալիս «քաղաք» որոշելով "Menas" (քաղաք) Մանա(շ) («Սև կոթոր» տ. 168, ARAB I, 587), ինչի տակ, քերես, կարնի և ենթադրել Իզիրտուի մեկ այլ անվանում կամ ներկայացման ձև. J.V.Kinnier-Wilson, The Kurba'il statue of Shalmaneser III, "Iraq", vol. XXIV (1962), Pt. 2, p. 111.
14. S.Papola, Neo-Assyrian Toponyms, Neukirchen-Vluyn, 1970, p.236-237. Г.Меликишвили, Урартские клинообразные надписи (այստե՛հա՝ УКН), М.1960, 28, 29.
15. Г.Меликишвили, Наирн-Урарту, с.41-42.
16. Երկրների տեղադրության վերաբերյալ տե՛ս L. Levine "Iran" XI, XII, և BM, 7, 1977. Н. Арутюнян, Топонимика Урарту, Е., 1985.
17. Н.Арутюнян, Топонимика Урарту, с.134-135.
18. A.Godard, Le Trésor de Ziwayé (Kourdistan), Haarlem, 1950, p. 6; U.Seidl, RLA, III (1965), (Ghaflantu), p. 345.
19. A.Lemaire, Une inscription Araméenne du VIII^e S.AV J.-C. Trouvee à Buk^a n (Azerbaïdjan Iranien), "Studia Iranica", 27 (1998), p. 15, 21-22.
20. N.Adontz, Histoire d'Arménie (HA), Paris, 1946, p. 101. n. 1.
21. A.Olmstead, JACS, 41 (1921), p. 378, n. 72.
22. J.Readc, 1995, p. 31-42, sp. 41, map on p. 35 (Fig. 3); «Մարզերից 50 կմ. արևելք», Г.Меликишвили, Наирн-Урарту, с. 45, 197, 285.
23. E.Wright, JNES, 1942, vol. 2, p.178
24. G.Vera Chamaza, AMI, 27 (1994), S. 112.
25. G.Vera Chamaza, AMI, 27 (1994), S. 104; նույնի՝ AMI, 28 (1995/96), p. 235-267, sp. 239.
26. Ն.Ադունցը, ըստ ամենայնի, Բերդիզորը տարանջատել է «բերդ (հայկ. բերդ, ամրոց)» և «իզր» բաղադրիչների՝ վերջինիս մեջ տեսնելով Իզիր(տու) անունը:
27. Г.Меликишвили, Наирн-Урарту, с.45.
28. Н.Арутюнян, К локализации города Зибна-Изибна-Узбна Маннейского царство. КБС, Т. VII (1984), с.102-103. Վերջինիս տեղադրումը Ձերին բնակավայրում (Բերդիզորից մոտ 20 կմ. հարավ) ենթադրում է նման հնարավորություն՝ ի տարրերություն նախկինում առաջարկված Ձիրիա-(թեփե) Ձիվին նույնացման

(նշվ. աշխ. էջ 105): Ինչ վերաբերում է Արմայիդին, ապա այն, կարծում ենք, անհրաժեշտ է որոնել Ջաղատտի վտակ Թաթաու-չայի միջին հոսանքի շրջանում:

29. A.Lemaire, "Studia Iranica", 27 (1998), p. 15-30, M.Sokoloff, The Old Aramaic Inscription from Bukan: A Revised Interpretation, "Israel Exploration Journal" (IEJ), vol. 49 (1999), N 1-2, p. 105-115. Շնորհակալություն ենք հայտնում պ.գ.ք. Ա Մովսիսյանին՝ նշված հոդվածները մեզ տրամադրելու համար:
30. A.Lemaire, "Studia Iranica", 27 (1998), p. 16, 21.
31. A.Lemaire, "Studia Iranica", 27 (1998), p. 15, 21-22.
32. Նման կասկած հայտնել է արձանագրության հրատարակչներից Մայրլ Սոկոլովը, IEJ, 1999, N 1-2, p.111, n. 36. Տե՛ս նաև I.Eph'al, The Bukan Aramaic Inscription: Historical Considerations, IEJ, vol. 49 (1999), N. 1-2, p. 120.
33. I.Eph'al, IEJ, 1999, N 1-2, p. 119-120.
34. Տվյալ դեպքում, գուցե, խոսքը վերաբերում է Ձիկիրտուի Միտերա (АВИМУ, 49 (79)) քարաքին (ինչն է, քերես, Ջիտ(ն)րա, հմմ. արձանագրությունում միևնույն տեղանվան Միրդակկա և Ջիրդիակկա գրեթե նույնը): Ձիկիրտում, ըստ ամենայնի, գտնվել է Ուրարտուի ոչ միայն քաղաքական, այլ նաև մշակութային (այդ թվում՝ հոգևոր) խոր ազդեցության ներքո: Դժվար է սակայն, առայժմ, խոսել զիկիրտացիների դերի մասին՝ որպես կապող օղակ՝ ուրարտական և արեմնյան քաղաքակրթությունների միջև:
35. Ասորեստանյան աղբյուրներում հանդես է գալիս Մեսսի, Միսսի, Մեսու/ա, Մեսայցիների երկիր, իսկ ուրարտականում՝ Մե(հ)շթա (ինչն է, քերես, Մեսթա կամ Միշթա (Г.Меликишвили, Наирни-Урарту, с.44)) տարբերակներով: Երկրանվան մեծ թվով փոփոխությունը տեղիք է տվել տարբերակելու երկու կամ երեք քաղաքական միավորներ՝ Մեսու/Միսսի և Մե(հ)շթա: Միսսի-Մե(հ)շթա նույնականության շուրջ տե՛ս Н.Арутюнян, К некоторым урартским топонимам южнее Урмии, "Древний Восток" (ДВ), 4 (1983), с. 230-231: Դժվար է, սակայն, ընդունել մեծ ճանաչողություն Մեսսիի և Նիմրուդի արևիվային մասնակներից մեկում նշվող Մեծի (Me-š(i)) քաղաքի միջև. H.W.F.Saggs, The Nimrud Letters. 1952, part 9 (XCIX), "Iraq", XXXVI (1974), Pts 1/2.
36. АРАВ I, 581, 718-719, 739; II, 148-149.
37. Н.Арутюнян, Топонимика Урарту, с.142-143.
38. Г.Меликишвили, УКН, 24, 29.
39. Ենթադրաբար՝ Բարշաշի «արքայական քաղաքների», Н.Арутюнян, Бийанили, с.143.
40. М.Сальвини, Распространение влияния государства Урарту на Востоке, ДВ, 4, (1983), с.225-226.
41. И.Дьяконов, История Мидии, с.170; LDiakonoff, S.Kashkai, RGTC.9 (1981), p. 57, map; E.Wright, JNES, vol. 2 (1943), p. 179, n. 31; R.Boehmer, Bagh.Mitt. 3 (1964), S. 21, ann. 76, 79.
42. J.Kinnier-Wilson, "Iraq", vol. XXIV (1962), P 2, p.111-112, map on p. 112; E.Wright, JNES, vol. 2, 1943, p. 178, n.26, map on p.176.
43. R.Boehmer, Zur Lage von Parsua im 9. Jahrhundert vor Christus, "Berliner Jahrbuch für Vor- und Frühgeschichte" (BJV), 5 (1965), S. 187-198 (197).
44. M.Salvini, P.E.Pecorella, Tra lo Zagros e l'Urmia, Incunabula Graeca, vol.78, Roma, 1984, p. 20. (14).

45. Э. Грантовский, Ранняя история..., с.142-143.
46. D. Wiseman, The Vassal-Treaties of Esarhaddon, "Iraq", vol. 20, 1958, map.
47. Մ.Սավլինին Մե(հ)ջթան նույնացրել է Ուրմիայի հարավ-արևելյան ափի մոտ գտնվող Հասանյու հայտնի քնակավայրին (М.Сальвини, ДВ, 4, 1983, с.226-227, նույնի Tra lo Zagros e l'Urmia, p.19-21), Դաշ-թեփեից մոտ 40 կմ. արևմուտք: Պ. Ջինսմեյկին հավանական է համարել նրա տեղադրությունը Արսլան Քալէ հնավայրում՝ Դաշ-թեփեի մասով մոտ (P.Zimanski, Urtarian Geography and Sargon's Eighth Campaign, JNES, vol.49 (1990), N. 1, p. 9, n. 38):
48. Դաշ-թեփեի արձանագրության տվյալներից (ամրոցի կառուցում, նվաճված երկրում հետևակ զինվորների (կայագրի) հետ մեկտեղ մարզային կառավարչի(՝) հաստատում նմ) դեռևս չի հետևում Մե(հ)ջթայի նկատմամբ ուղարտված երկարատև իշխանության հնարավորություն: Վերջինս, Մանայի հետ միասին, կարող էր ունենալ ինքնավարություն և շամարվել ուղարտված պետության տարածք (И.Дьяконов, История Мидии, с.216, п.3): Մյուս վկայությունը կարող է լինել արձանագրությունում «երկիրն իմ-երկիրն ավելացրի (լցեցի)» արտահայտության բացակայությունը:
49. Н.Арутюнян, Топонимика Урарту, с.55.
50. E.A. Wallis Budge, L.W.King, Annals of the Kings of Assyria, vol. I, L. 1902, p. 324 (82-83).
51. АВИИУ 49, п. 23.
52. Բացառված չէ Մե(հ)ջթայի նույնացումը Սաքզդի մերձակայքում գտնվող հնավայրերից որևէ մեկին:
53. I.U, տ. 31-36 (ARAB II, 144; АВИИУ, 49,(6)).
54. N. Adontz, HA, p.100-101. Չի բացառվում, սակայն, որ վերջինս պահպանած լինի Աշշուր-Մաժիր-ապալ II-ի տարեգրությունից հայտնի Միմակի լեռնամուղ՝ Դիսայից հյուսիս. E.A. Wallis Budge, L.W.King, Annals..., p. 324.
55. Н.Арутюнян, КБС, Т. VII (1984), с.104.
56. N. Adontz, HA, p. 100-101, L.Levine, Geographical Studies..., II, p. 114.
57. «Բուշտու» անվան ընտրությունը պայմանավորել ենք, ի տարբերություն մարզի մնացած քաղաքների, սեպագիր աղբյուրներում նրա բազմակի իշխատակումներով: Տե՛ս Գ.Меликишвили, УКН, с.424; S.Parpola, Neo-Assyrian Toponyms I, p. 95, 96.
58. ARAB II, 851-853, 786, АВИИУ, 72,73.
59. Տե՛ս P.A.Deimel, Akkadisch-Sumerisches Glossar, S. 289.
60. «ոսցե» տերմինի ընդգրկված աշխարհագրաքաղաքական իմաստի վերլուծությունը տե՛ս P.Zimansky, Ecology and Empire: The Structure of the Urtarian State, "Studies in Ancient Oriental Civilizations" (SAOC), N 41, 1985, p. 93-94, նույնի՝ JNES, vol.49 (1990), N. 1, p. 10-12.
61. Н.Арутюнян, Топонимика Урарту, с. 60-61, Э.Грантовский, Ранняя история..., с.138.
62. ARAB II, 851-853, 786, АВИИУ, 73.
63. Н.Арутюнян, Топонимика Урарту, с. 61.
64. Խորհրդային տարեգրության 10-րդ(՝) տարվա (Ք.ա. 777(՝)թ.) տվյալներից հետևում է տեղորոշում Ուրմիայից արևելք և հարավ-արևելք ընկած երկրներից ոչ հեռու, քամի որ վերջիններս նվաճվել են դեպի Բուշտու արշավելիս (Գ.Меликишвили, УКН, N.127 (IV, 42-66)): Այլ տեղադրության դեպքում քիչ ա-

մինաստ է բլում Բուշտոի հիշատակությունը նրանց հետ կամ, զուցե, արձանագրությունում խոսքը վերաբերում է երկու տարբեր ուղղությունների՝ արտահայտված մեկ միասնական արշավանքի տեսքով:

65. Ընթերցվում է նաև Պաղղիրա, Շուկիրա, Բուղղիրա են: Ն. Հարությունյանը Շաճի-Աղաղ V-ի արձանագրությունում հիշատակվող Շուղղիրան (Պաղղիրա) տարբերակում է մանայական նույնանուն (Շուղղիրա՝ Պաղղիրա) քաղաքից (Н.Арутюнян, Топонимика Урарту, с.250.):

66. ARAB II, 852; АВИИУ 73.

67. Մարզոն II-ի կառավարման 6-րդ տարվա (Ջ.ա. 716 թ.) իրադարձությունները նկարագրող մեկ այլ տարբերակի պահպանված հատվածում (E.Weidner, Silkan(he)ni, König von Musri, ein Zeitgenosse Sargons II. Nach einem neuen Bruchstück der Prisma-Inschrift des assyrischen Königs, "Arciv für Orientforschung", 14, 1941/44, S. 41-43). Այսպիսի փոխարեն առկա է Պատտիրա (Շուղղիրա) անվանումը. «...Ի-ն-ի "Pat-tir-a-a (Իտի (Իտտի) պատտիրացի)» (նույն տեղում, էջ 43, տող 12): Նույն արձանագրությունում Իտիի հաջորդ Բել-ապա-իդընը անվանվում է «Պատտիրա քաղաքի տեր/կառավարի (տող 21-22): Տարակուսելի է այս քաղաքի և մանայական Շուղղիրայի նույնականությունը: Այգրնական շրջանում (Ջ.ա. IX դ-ի վերջին քառորդ) Ալաքրիան և Շուղղիրան եղել են տարբեր քաղաքական միավորներ (W.Schramm, Das Land Zab der assyrischen Königsinschriften, "Orientalia" (Or.), vol. 38, F.1, 1969, S.126.):

68. Н.Арутюнян, Топонимика Урарту, с.21-22; S.Parpola, NAT I, p.12; W.Schramm, Or., vol. 38, F. 1, S. 126; D.Wiseman, " Iraq ", vol. 26, 1964.

69. Տես ծնթ. 2 (նշվ. գրկ.):

70. Ի.Դյակոնովը ենթադրել է դրանց մանայական պատկանություն (И.Дьяконов, История Мидии, с. 208): Ուշադրության է արժանի, սակայն, Նիկամմայի և Շուրգադիայի հիշատակությունը Ջ.ա. 716 թ. դեպքերի նկարագրության «մանայական» հատվածից հետո, երբ խոսվում է Կարակուի և Ալաքրիայի Քասին (ARAB II, 209): Քանի որ Կարակուն ամրոցապես կցվել էր Չամուային, իսկ նշված մարզերը՝ Պարտուային, ապա, կարծում ենք, հնարավոր է դրանց պատկանությունը Ալաքրիա երկրին:

71. ARAB II, 209, 10, 56.

72. ARAB II, 853; АВИИУ, 73.

73. Մանագիտական գրականությունում վերջինս նույնացվում է Թիզբաթյալասար I-ի հիշատակած Խարուսայի և որարտական արձանագրությունների՝ Ար-սի(տա)ի հետ՝ տեղորոշվելով Ուրմիայից հարավ կամ հարավ-արևմուտք (Н.Арутюнян, Топонимика Урарту, с.40-41, 225):

74. И.Дьяконов, История Мидии, с. 282, n.1; АВИИУ, 75.

75. АВИИУ, 73. Մայրաքաղաք Իզիրտուի, ինչպես նաև Արմայիղ և Չիրիա ամրոցների պաշարումը, կարծում ենք, թելադրված էր տակտիկական նկատառումներով՝ ստիպել մանագիներին իրենց ուժերը կենտրոնացնել վտանգի տակ զանվող մայրաքաղաքի և զլխավոր մարզի պաշտպանության վրա և շահել ժամանակ Շուղղիրան նվաճելու (և նրանում հաստատվելու) համար, որով կկանխվեր հնարավոր հարձակումը ասորեստանյան բանակի դեմ. Իզիրտուից մոտ 50 կմ. հեռավորության վրա զանվող Շուղղիրայից (ARAB II, 210, Г.Меликян, Меликян, Наври-Урарту, с.41,45) հնարավոր էր ցամաքած ժամանակ սպառնալ մայրաքաղաքին:

76. ARAB II, 853; АВИИУ, 73.
77. Ընդունելի չէ այս քաղաքի և սարգոնյան արձանագրություններից հայտնի Էրիշ-թանայի նույնականությունը (Г.Меликишвили, Наирн-Урарту, с. 301), վերջինս եղև է մարական իշխանություն և գտնվել Կերխն գետի վերին հոսանքի շրջանում տեղորոշվող Էլիպի երկրի հարևանությամբ (И.Дьяконов, История Мидии, с. 90, 219): Ուստի, քիչ է հավանական մնան հետավոր շրջանում Մանայի քաղաքական իշխանության գոյության հնարավորություն և դրանից ենթադրվող Էրիշթեյանա-Էրիշթեյան նույնականություն:
78. И.Медведская, ВДИ, 1989, N 2, с.104
79. Ասորեստանյան քանակի երթուղուց դատելով՝ հավանական չի թվում մաս Էրիշ-թեյանայի տեղորոշումը Էրեշթեյան քանակալայի շրջանում՝ Թավրիզից հարավ-արևելք (Н.Арутюнян, Топонимика Урарту, с. 261):
80. Տեքստում անունն արձանակված է. քմերցվում է [...]մե: Հավանաբար, այստեղ եղել է այլ արդյունքներից հայտնի Բիրտուն/ու անունը (S.Parpola, Neo-Assyrian Toponyms, p. 75): Վերջինս հիշատակվում է Աշշուր-Մադիդ-պալ II-ի տարեգրությունում՝ զամուսկան քնակալայերի շարքում (ARAB I, 451):
81. АВИИУ, 73.
82. АВИИУ, 68, 6.
83. ARAB I, 451.
84. Г.Меликишвили, Наирн-Урарту, с. 196; И.Дьяконов, История Мидии, с.157, Н. Арутюнян, Топонимика Урарту, с. 78.
85. Տե՛ս Всемирная История, Т.1, քարտեզը՝ 556/7 էջերի միջև՝ ներդիրում:
86. L.Levine, Geographical Studies..., II, p. 113.
87. L.Levine, Geographical Studies..., II, p. 115. Ըստ աննայնի՝ «Գ-ն Բ-ն» Կոմուրդուն հիշատակող միակ արձանագրությունը չէ: Գ-նոն շումերական (մասնավորապես՝ Ուրի III դինաստիայի) տեքստերից հայտնի էին Խոմուրտու և Խարշի երկրները, որոնք թվում են նույնական ասորեստանյան արդյունքների Խարի-Խարոասայի և Կոմուրդացիների երկրի հետ. (И.Дьяконов, История Мидии, с. 117, 282 и п. 3).
88. УКН, 444; S.Parpola, NAT, p.365.
89. F.Thureau-Dangin, Une relation..., p. VII.
90. АВИИУ, 49 (156).
91. Կատարված աշխատանքների մասին տե՛ս "Encyclopaedia Iranica" IV-ում (p. 477-478) նշվ. գրականությունը:
92. L.Levine, Geographical Studies..., II, p114-115., նույնի՝ ВМ, p.141-142; И.Медведская, ВДИ; 1989, N 2, с. 106-108.
93. УКН, 155 В, 1-55 (24-26).
94. Г.Меликишвили, Наирн-Урарту, с. 228.
95. И.Дьяконов, История Мидии, с. 216, п. 3.
96. L.Levine, ВМ, p. 141-142, map on p. 145.
97. L.Levine, Geographical Studies..., II, p. 115.
98. L.Levine, Geographical Studies..., II, p. 115.
99. Դա արդյունքն էր ոչ միայն հարյուրամյա հաստատուն իշխանության, այլև ուրարտական պետության վարած հետևողական քաղաքականության, որի շնորհիվ կայանում էր ռազմավարական մեծ նշանակություն ունեցող տարածքներում (ինչպիսին, օրինակ համդիսանում էր ուրարտացիների մերձուրմյան հենա-

- կետը) էքսիկական քնիկ տարրի դերի առավելագույնս նվազեցման մեջ. վերջինս մեծությամբ կարող էր վտանգել ուրարտացիների իշխանությունը:
100. L.Levine, *Geographical Studies...*, II, p.114-115.
101. И.Медведская, ВДИ, 1989, N 4, с. 106-107. Մերձուրմյան ավազանում ուրարտական խեցեղենի տարածման սահմանը տե՛ս L.Levine, The Iron Age. - in "The Archaeology of Western Iran" (ed. F.Hole), L., 1984, pp. 229-250, sp. 242, map on p. 249 (Fig. 72).
102. Ուրմիայից արևելք ուրարտական հուշարձանների քարտեզագրությունը, կարծում ենք, պայմանավորված է ոչ միայն ուրարտական համեմատաբար ոչ նրկարատև տիրապետությամբ, այլև՝ նրկրի ունեցած ռազմավարական վերջը նշանակությամբ. Սուրին պաշտպանվում էր ոչ այնքան Ուշկայայի, որքան՝ Ուրմիայից հարավ ընկած ամրոցների միջոցով:
103. АВИИУ, 49 (167).
104. Ամիրաժնշտ է ուշադրություն դարձնել, որ Սուրին, Ջարանդան և նրան հաջորդող Բարին եղել են ամենաթույլ ամրացված մարզերը: ԼԱ-ը նշում է ընդամենը մեկ ամրոցի (birta) և նրկու: «ամրացված քաղաքների (bit dbrt)» առկայության մասին: Արշավանքի ընթացքում նվաճված ամրոցների, «ամուր քաղաքների» և «չրջակա քնակավայրերի» հարաբերությունն ըստ նշված մարզերի տեսնում է P.Zimansky, *Ecology and Empire*, p.40-47, Fig. 7.
105. P.Zimansky, *JNES*, vol. 49 (1990), N. 1, p.11, նույնի՝ *Ecology and Empire*, p. 22.
106. ԼԱ, տ. 184.
107. Տես նաև Н.Арутюнян, *Топонимика Урарту*, с.170.
108. Նույնացվում է Բեհիսթունի արձանագրության Ասարգադայի և անտիկ աղբյուրների սազարտիացիների հետ՝ Ջազրոսից արևելք (N.Adontz, HA, p. 99):
109. N.Adontz, HA, p. 104-105.
110. И.Медведская, ВДИ, 1989, N. 2, с.106; I.Diakonoff, I.Medvedskaya, "Bibliotheca Orientalis", XLIV (1987), N. 3 / 4, p. 389.
111. S.Papola, NAT I, p. 19.
112. АВИИУ, 54, Г.Меликишвили, ВДИ, 1949, N.1. с. 71.
113. Г.Меликишвили, *Наирн-Урарту*, с.46.
114. АРАБ I, 739; АВИИУ, 35.
115. АРАБ II, 150; АВИИУ, 49 (74).
116. АВИИУ, 28, п. 17; Н.Арутюнян, *Топонимика Урарту*, с. 28.

ՎԱԶԳԵՆ ԳԱԶԱՐՅԱՆ

ՄԻ ՔԱՆԻ ՄԵՊԱԳԻՐ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿՈՄՊՅՈՒՏԵՐԱՅՈՒՄԸ

Կոմպյուտերային տեխնիկայի հույժ արագ զարգացման հետ կապված՝ վերջին տարիներին խնդիր առաջացավ սեպագիր հսկայածավալ արխիվը տեղափոխել կոմպյուտերի հիշողություն: Այս խնդիրը հեշտորեն լուծելի է սեպագրի լատինատառ տառադարձության կիրառմամբ: Մենք առաջարկում ենք խնդրի լուծման մեթոդ, որը թույլ կտա այդ ամենն անել առանց տառադարձման կիրառման:

Կոմպյուտերի համար գրված մի քանի տառատեսակները լիովին քացահայտում են բիայնական (ուրարտական), նորաստարական, պարսկական և ուզբարիթյան սեպագիր գրային համակարգերի մոնումենտալ ձևերը: Տառատեսակները ներկայացվող հողվածի հեղինակի կողմից ստեղծվել, վերջնականապես մշակվել և առաջարկվել են 1998 թվականին: Վերը նշված 4 համակարգերի կոմպյուտերացման համար մշակվել են 3 տարբեր մեթոդներ՝ լրիվ և մասնակի տարրալուծման օգտագործմամբ: Մտորև ներկայացնում ենք տառատեսակների ընդհանուր բնութագիրը:

Բիայնական սեպագիր համակարգ

Այն գործածվել է Ք. ա. 9-6-րդ դարերում՝ Վանի թագավորության (Ուրարտու) արքունական արձանագրություններում: Մինչ օրս հայտնաբերվել է 600-ից ավելի արձանագրություն:

Բիայնական սեպագիրը նորաստարական սեպագրի պարզեցված տարբերակն է, որում զգալիորեն նվազել է մեկ նշանի իմաստների քանակը, և, որ ամենակարևորն է, անհետացել է սեպի անկյունից սկսվող գիծը՝ որաչափի դեպքերում վերածվելով առանձին սեպի: Եկար 1-ում ներկայացված է մի քանի նշանների ձևափոխությունը:

Նմանօրինակ պարզեցումը թույլ է տալիս բիայնական սեպագիր նշանները տարրալուծել պարզագույն բաղադրիչների: Կարևոր է նաև նշել, որ այդ բաղադրիչները հորիզոնական ուղղությամբ պիտի այլևս անբաժանելի լինեն: Ուղղահայաց տարրալուծումը ոչինչ չի տա՝ այն կոմպյուտերի մեջ հավաքելու անհնարինության պատճառով: Օրինակ, ձև վանկը կարելի է վերածել 2 բաղադրիչների, երբ աստիճանաձև մասն բաժանումը գործնականում անհնարին է (տես նկ. 1): Երկար ուղղահայաց բաղադրիչն, օրինակ,

մտնում է ռաճ վանկի կազմության մեջ, որն, իր հերթին, վեր է անվում կարճ ուղղահայաց ե բաղադրիչների և այսպես շարունակ: Աշխատանքի ընթացքում պարզվեց, որ այդ եղանակով ստացված բաղադրիչների քանակն անհամեմատ ավելի քիչ է, քան քիայնական սեպագրում օգտագործված նշանների քանակը: Որպես օրինակ բերենք նկար 2-ի համեմատական աղյուսակը:

Չախ կողմում բերված են քիայնական սեպագրի որոշ նշաններ: Նկարում դրանց քանակը 23 է: Աջ կողմում դրանց պարզագույն բաղադրիչներն են: Վերջիններիս քանակը 4 է: Նկարից ակնհայտ է դառնում, որ անհամեմատ ավելի նպատակահարմար է ստեղծաշարին գետեղել ոչ քե ատանձին նշանները, այլ դրանք կազմող բաղադրիչները: Հիշեցնենք, որ քիայնական սեպագիրը բաղկացած է ավելի քան 200 նշաններից, իսկ ստեղծաշարի հնարավորությունները թույլ չեն տալիս 101-102-ից ավելի ատանձին նշաններն ունենալ: Հետևաբար, ունենալով բաղադրիչների լրիվ բազմություն, կարելի է անբողջապես արտապատկերել քիայնական սեպագիրը: Աղյուսակ 1-ում ներկայացնում ենք ստեղծաշարին համապատասխանեցված քիայնական սեպագրի բաղադրիչների ցանկը:

Նոքաստրալական սեպագիր համակարգ
Սեպագրի այս տեսակը գործածվել է Բ. ա. 8-7-րդ դդ.: Ասորեստանի տարածքում: Նշանների բարդության տեսակետից այն զգալիորեն զերագանցում է քիայնական սեպագրին: Բաղկացած է մոտ 600 նշաններից:

Ասորական սեպագրի կոմպյուտերացման համար ընտրվել է լրիվ տարրալուծման եղանակը, այն է՝ տարրալուծումը եռանկյունների և գծիկների (նշանների ձևի պատճառով): Մեթոդի կարևորագույն նվաճումը զրո «սեփական լայնություն» տատանչանների օգտագործումն է: Պարզաբանենք այս հանգամանքը:

Սովորական տատանչաններում տառի՝ էկրանին հայտնվելուն պես, կուրսորը տեղափոխվում է այժմ նշանը թողնելով ետևում: Վերջինիս զբաղեցրած տարածքի վրա որևէ քան ավելացնելու փորձն անմիջապես անհաջողությամբ է մատնվում՝ նախորդ նշանի ջնջվելու և տեղը նոր նշան գրվելու հետևանքով: Պատճառը տատանչանի «սեփական լայնություն» ունենալն է (տե՛ս նկ. 3), կամ, այլ կերպ ասած, d լայնությամբ տարածքի՝ միայն տվյալ նշանի կողմից օգտագործման հնարավորության հանգամանքը: Այս խոչընդոտի հաղթահարման նպատակով տատանչանների «սեփական լայնություն» վերցված է զրո, իսկ սեպանշանը տեղադրված է կուրսորից ձախ «չեզոք գոտում» (տե՛ս նկ. 4): Դրա հետևանքով նշանի էկրանին գրվելուց կուրսորը չի տեղաշարժվում (քանզի քայլը զրո է), և հնարավորություն է ստեղծվում նույն տեղում ավելացնել տվյալ սեպանշանի ստացման համար անհրաժեշտ քանակի նշան, կամ, այլ կերպ ասած, մեթոդը թույլ է տալիս կամայական քանակությամբ նշանների վերադրում: Մրանում է կայանում նորաստրական սեպագրի կոմպյուտերացման մեթոդի էությունը: Բաղադրիչների

լրիվ խումբն ընտրվել է հետևյալ կերպ: Նորաստրական սեպագիրը բաժանվել է 3 ուղղահայաց գոտու (սեպագրում առավելագույնը 4 հորիզոնական սեպերի ուղղահայաց վերադրման պատճառով), որոնցում և տեղադրվել են «Նուսնկյուններն» ու «գծիկները» (տե՛ս նկ. 5):

Ասորական սեպագրում օգտագործվում են նաև փոքր չափի նշաններ (տե՛ս նկ. 6), որոնք տեղադրված են [0.5 ; 2] ինտերվալում: Արդյունքում ստացվել է երկու տառատեսակ՝ Cuneiform Assyrian Large և Cuneiform Assyrian Small: Արդյուսակ 2-ում ներկայացնում ենք նորաստրական սեպագրի քաղաղիչների և ստեղծաշարի համապատասխանության ցանկը:

Պարսկական սեպագիր համակարգ.

Պարսկական սեպագիրը գործածության մեջ է եղել Ք. ա. 6-4-րդ դդ., Արեւմտյան արքայատոհմի կառավարման օրոք: Այն խառը համակարգ է, քաղկացած է 41 նշանից, որոնցից 36-ը վանկագրեր են, 4-ը՝ գաղափարագրեր, 1-ը՝ քառանջատիչ նշան:

Իր պարզության շնորհիվ պարսկական սեպագրի կոմպյուտերացումը ոչ մի բարդություն չի ներկայացնում: Հնչյունային նշանները պարզապես համապատասխանեցվել են ստեղծաշարի գրեթե նույնանուն ստեղծերին. գաղափարագրերը՝ «1», «2», «3», «4» և «5» ստեղծերին, իսկ քառանջատիչ նշանը՝ «v»-ին (տե՛ս աղյուսակ 3-ը):

Ուգարիթյան սեպագիր համակարգ.

Մա ևս վանկային համակարգ է (գրեթե այրուբեն) և բավկացած է 31 նշանից: Ուգարիթյան գրի հուշարձանները քվագրվում են Ք. ա. 14-13-րդ դարերով: Գործածվել է փյունիկերենին և հին եբրայերենին մոտ մի լեզվի, ինչպես նաև խոտիերենի համար:

Կոմպյուտերացման սկզբունքը նույնն է, ինչ պարսկական սեպագրինը, ուստի ներկայացնում ենք միայն համապատասխանության աղյուսակը (աղյուսակ 4):

Այսպիսով, կոմպյուտերացման առաջարկվող մեթոդները հետևյալն են.

1. Մասնակի տարրալուծման եղանակ,
2. Լրիվ տարրալուծման եղանակ,
3. Հնչյունային համապատասխանեցման եղանակ:

Նշենք, որ բիայնական սեպագրի կոմպյուտերացումն ամենար է 2-րդ մեթոդի կիրառմամբ. դրա ապացույցն է այն հանգամանքը, որ ասորական սեպագրում նշանի երկարությունը որոշվում կամ, ավելի ճիշտ, կարգավորվում է գծի երկարության միջոցով, իսկ բիայնական սեպագրում՝ սեպի (տե՛ս նկ. 7): Այդ պատճառով, ասորական սեպագրում տարբեր երկարության նշաններ կարելի է ստանալ գծեր ավելացնելու, իսկ բիայնական սեպագրում՝ սեպի երկարությունը փոխելու միջոցով, որն, ինքնին, նոր նշանի առկայություն է պահանջում:

Asyrian Cuneiform (Large)

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| - | ' | ! | ! | @ | 2 | # | 3 | 5 | 4 | % | 5 | ^ | 6 | & | 7 |
| ∇ | ∇ | | v | | v | | v | | v | | v | | v | | v |
| * | B | (| 9 |) | 0 | - | - | + | = | Q | q | W | w | E | e |
| . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . |
| R | r | T | t | Y | y | U | u | I | i | O | o | P | p | { | |
| < | < | < | < | < | < | < | < | < | < | < | < | < | < | < | < |
|) | | A | a | S | s | D | d | F | f | G | g | H | h | J | j |
| ^ | . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . |
| K | k | L | l | : | : | : | : | Z | z | X | x | C | c | V | v |
| Δ | Δ | ▷ | ▷ | ▷ | ▷ | ▷ | ▷ | ▷ | ▷ | ▷ | ▷ | ▷ | ▷ | ▷ | ▷ |
| B | b | N | n | M | m | < | . | > | . | ? | / | | | \ | |
| . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . |

Asyrian Cuneiform (Small)

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| - | ' | ! | ! | @ | 2 | # | 3 | 5 | 4 | % | 5 | ^ | 6 | & | 7 |
| ∇ | ∇ | | v | | v | | v | | v | | v | | v | | v |
| * | B | (| 9 |) | 0 | - | - | + | = | Q | q | W | w | E | e |
| . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . |
| R | r | T | t | Y | y | U | u | I | i | O | o | P | p | { | |
| < | < | < | < | < | < | < | < | < | < | < | < | < | < | < | < |
|) | | A | a | S | s | D | d | F | f | G | g | H | h | J | j |
| ^ | . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . |
| K | k | L | l | : | : | : | : | Z | z | X | x | C | c | V | v |
| Δ | Δ | ▷ | ▷ | ▷ | ▷ | ▷ | ▷ | ▷ | ▷ | ▷ | ▷ | ▷ | ▷ | ▷ | ▷ |
| B | b | N | n | M | m | < | . | > | . | ? | / | | | \ | |
| . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . | . |

Uppurak

Հայերենի տառեր

| Մայր- տառ | Հայերեն | Ստանդարտ | Մայր- տառ | Հայերեն | Ստանդարտ | Մայր- տառ | Հայերեն | Ստանդարտ | Մայր- տառ | Հայերեն | Ստանդարտ |
|--------------|---------|----------|--------------|---------|----------|--------------|---------|----------|--------------|---------|----------|
| Ա | a, օ | a | Բ | b, ba | b | Գ | g, ga | j | Դ | d, da | d |
| Բ | b, ba | b | Գ | g, ga | j | Դ | d, da | d | Ե | e, օ | e |
| Գ | g, ga | j | Դ | d, da | d | Ե | e, օ | e | Զ | z, za | z |
| Դ | d, da | d | Ե | e, օ | e | Զ | z, za | z | Է | e, օ | e |
| Ե | e, օ | e | Զ | z, za | z | Է | e, օ | e | Ը | e, օ | e |
| Զ | z, za | z | Է | e, օ | e | Ը | e, օ | e | Թ | θ, θa | v |
| Է | e, օ | e | Ը | e, օ | e | Թ | θ, θa | v | Պ | p, pa | p |
| Ը | e, օ | e | Թ | θ, θa | v | Պ | p, pa | p | Պ | p, pa | p |
| Թ | θ, θa | v | Պ | p, pa | p | Պ | p, pa | p | Պ | p, pa | p |
| Պ | p, pa | p | Պ | p, pa | p | Պ | p, pa | p | Պ | p, pa | p |

Պատկերներ

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|----|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| Ա | Բ | Գ | Դ | Ե | Զ | Է | Ը | Թ | Պ |
| Ն | Ն | Ն | Ն | Ն | Ն | Ն | Ն | Ն | Ն |

Մաս 3

| Հայերեն | Ստանդարտ | Ստանդարտ | Հայերեն | Ստանդարտ | Ստանդարտ |
|---------|----------|----------|---------|----------|----------|
| ա | a | m | ա | m | m |
| գ | g | n | գ | n | n |
| դ | d | s | դ | s | s |
| է | e | . | է | . | C |
| զ | z | g | զ | g | G |
| է | e | p | է | p | p |
| ը | e | t | ը | t | c |
| թ | θ | z | թ | z | Z |
| պ | p | x | պ | x | q |
| հ | h | H | հ | H | r |
| տ | t | T | տ | T | f |
| յ | y | y | յ | y | j |
| կ | k | k | կ | k | t |
| լ | l | l | լ | l | J |

Մաս 4

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ա | Բ | Գ | Դ | Ե | Զ | Է | Ը | Թ | Պ |
| Ն | Ն | Ն | Ն | Ն | Ն | Ն | Ն | Ն | Ն |

Նկար 1

Պարսկական և ուգարիթյան համակարգերում տարրալուծումն անիմաստ է նշանների սակավության պատճառով և դա միայն կրարդացներ տպման պրոցեսը:

Դժեմք, որ տառատեսակները կարող են օգտագործվել մասնագիտական գրականության հրատարակման մեջ, և որ առավել կարևոր է, կոմպյուտերով վիճակագրական բնույթի խնդիրների լուծման և կոմբինատոր անալիզի համար:

Սեպագրի մասնօրինակ կոմպյուտերացումը զերծ չէ մաև որոշ թերություններից, որոնք մատնանշվել են ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում կայացած քննարկման ժամանակ: Մասնավորապես նշվել է, որ ամենայնուրեք թերությունը սեպագրի գրաֆիկական առանձնահատկությունների անտեսումն է կամ, այլ կերպ, սեպագրի ունիֆիկացումը՝ լույս սխեմատիկ արտապատկերումը: Սա թույլ չի տալիս հնագրագետներին և վիճակագրագետներին օգտագործել այս տառատեսակները: Սակայն մեզ առավել կարևոր է թվում հեղինակի ստեղծագործության բովանդակությունը, և ոչ՝ նրա ձևագրի գրաֆիկական առանձնահատկությունները: Հրատարակության ժամանակ օգտագործում են ոչ թե տվյալ հեղինակի համար հատուկ ստեղծված տառատեսակ, այլ ունիվերսալ գրաֆիկական համակարգեր: Յուրաքանչյուր գրչի ձեռագրի գրաֆիկական առանձնահատկությունները հաշվի առնելն անհնար է: Այդպիսի մտեցմամբ սեպագրի համակարգերից և ոչ մեկը ենթակա չէ կոմպյուտերացման: Որպես մեկ այլ թերություն նշվել է նորատեսակ սեպանշանների հավաքման բարդ և աշխատատար պրոցեսը: Սակայն մեզ թվում է, որ դա առավել գերադասելի է, քան սեպագիրը ձեռքով նկարելը և ապա սկաներով կոմպյուտեր ներմուծելը, որից հետո գործնականում անհնար է այդ նկարում առկա վրիպակներն ուղղելը:

VAZGEN KHAZARYAN

THE COMPUTERIZATION OF SOME CUNEIFORM TEXTS

(Summary)

The author offers a method for the computerization of cuneiform inscriptions which will enable Assyriologists to have the vast corpus of ancient Oriental cuneiform texts in their computers, without preliminary transliteration by means of the Latin alphabet. Through this method at least 4 main cuneiform systems were transferred into computer - Urartian, Neo-Assyrian, Old Persian (Achaemenid) and Ugaritic.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Գ. Ա. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960.
И. Фридрих, Дешифровка забытых письменностей и языков, М., 1961.
Д. Дирингер, Алфавит, М., 1963.
И. М. Дьяконов, Урартские письма и документы, М.-Л., 1963.
R. Borger, Assyrisch-Babylonische Zeichenliste. Neukirchen - Vluyn, 1978.
И. Фридрих, История письма, М., 1979.
И. Е. Гельб, Опыт изучения письма, М., 1982.
Վ. Ղազարյան, Ուրարտական սեպագրի կոմպյուտերացումը. «Հայաստանի Գիտությունների ակադեմիայի զեկուցումներ», հ. 99, N 4, 1999

ՄՈՒՐԵՆ ԱՄՐՏԻԿՑԱՆ

**ԽԱՐԽԱՐԻ ՃԱԿԱՏԱՍԱՐՏԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՌԱԶՄԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

5-րդ դարը հայ ժողովրդի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի քախտորոշ ժամանակահատվածներից մեկն է: Հոռմի ու Պարակաստանի միջև Մեծ Հայքի քաժանումը (387թ.), Արշակունիների հարստության անկումը (428թ.) և, որպես դրա հետևանք, տարածաշրջանում ուժերի հարաբերակցության վտաճիտությունը հարկադրեց փոխել ռազմական գործողությունների կազմակերպման ու վարման ձևերը:

Կրճատվում էին արքունի զնդերը, որոնք Բյուզանդիայի ու Պարակաստանի իշխանությունների կողմից քաջաերվող կենտրոնախույս ուժերի զսպման հիմնական միջոցն էին: Թեև Բյուզանդիային էր անցել Մեծ Հայքի տարածքի միայն 1/5 մասը, այդ տարածքի հայ նախարարների ուժերի մեկուսացումը ևս էապես ազդեց քանակի հնարավորությունների վրա: Բարեփոխումներ սկսվեցին նաև ռազմաքվեստի քննազավատում. անցում կատարվեց ապստամբական մարտավարությանը:

Պետականության կորստից հետո հայոց ռազմաքվեստի առաջին խոշոր փորձությունը 450-451թթ. Վարդանանց պատերազմն էր: Այն ապստամբական մարտավարությանն անցման յուրօրինակ միջանկյալ օղակ դարձավ ու կանխորոշեց ռազմաքվեստի զարգացման հետագա ավելի քան յոթարյուրյա ուղին:

Առաջին հայացքից տարօրինակ կարող է թվալ, սակայն այսօր էլ պատերազմի քազմաթիվ վերլուծություններում գերիշխող է քարոյական ու կրոնական հարցերի ուսումնասիրման ձգտումը, որը պատերազմի դերի գնահատումը դարձնում է թերի: Ապստամբության (մեր կարծիքով ավելի ճիշտ կլինի այն ազատագրական պատերազմ անվանել) իրատեսական ռազմավարության «որոնումը» պատմաքաննների տասնյակ հոդվածների ու աշխատությունների գրվելու, ինչպես նաև քանակների առիթ է դարձրել ոչ թե ռազմաքվեստը, այլ Վարդան Մամիկոնյան - Վասակ Սյունի հալանարտությունը՝:

Պատկերը նույնն է նաև ռազմական գործողությունների նկարագրության ժամանակ: Ժողովուրդը սրբացրել է Ավարայրի ճակատամարտի հե-

րոս-հաստատակներին. պատմաբաններն ու բանաստեղծները բազմիցս գովերգել են մարտը, սակայն, որքան էլ անուրանալի է Ավարայրում տարած քարոյական հաղթանակի նշանակությունը, մարտավարության տեսանկյունից այն ավարտվել է պարտությամբ (ռազմարվեստում ընդունված է մարտի զնախառման հետևյալ սկզբունքը. պարտված է համարվում այն կողմը, որն անաջինն է հեռանում մարտի դաշտից): Դա էլ բազմաթիվ շահարկումների առարկա է դարձել: Կասկածի տակ դնելով Վ.Մամիկոնյանի զորավարական տաղանդը: Սուրբկտիվ մտեցում է ձևավորվել նաև Խաղխաղի ճակատամարտի ուսումնասիրման հարցում: Այն կարծես մնացել է Ավարայրի ստվերում, մինչդեռ Խաղխաղի ճակատամարտի համակարգմանի վերլուծությունը կարող է էական փոխել հայոց ռազմարվեստի զարգացման աստիճանի ու Վ. Մամիկոնյանի զորավարական տաղանդի մասին գոյություն ունեցող տեսակետները:

450թ. ամռանը պարսից հազարապետ Միհրնեսեհը, Աղվանքի մարզպան Մերուխտ Նիխորակյանի զորաբանակին միանալու և միացյալ ուժերով ապստամբությունը ճնշելու համար, խոշոր բանակով մտավ Փայտակարան: Մերուխտի ու Միհրնեսեհի ուժերի միավորումը կանխելու, ինչպես նաև Շորա պահակը (այժմյան Դեբրենտ քաղաքի մոտ) զրավելով՝ հոների հետ կապ հաստատելու համար Աղվանք շտապեց Վ. Մամիկոնյանը: Սպարապետը հաշվենկատորեն զորքը բաժանեց երեք մասի: Երկուսը թողնվեց երկրում և միայն մեկ մասով շարժվեց դեպի Աղվանք:

Պատմիչների միաբերան պնդմամբ², Վ.Մյունուց տեղեկանալով հայոց բանակի ռազմերթի մասին՝ պարսիկները դիրք են գրավում Խաղխաղ քաղաքից քիչ հեռու՝ Լուխնաս (Չեզամ) գետի հովտում³:

Մերուխտի նախապատրաստական միջոցառումներից անտելյակ՝ հայոց զորքը ռազմերթով Խաղխաղի դաշտ է հասնում, որտեղ մարտակարգով նրանց էին սպասում պարսիկները: Մերուխտը մարտակարգի կենտրոնում և աջ թևում շարել էր պարսկական զորամասերը, ձախ թևում՝ Բաղասակյան և Լիննաց զորամասերը: Պարսիկները արդեն մարտակարգ էին ընդունել, սակայն քանի որ վերջապահ զնդերը դեռևս չէին ավարտել Կուրի գետանցումը, նրանց գրեթե հասպտեց, որն էլ Վ.Մամիկոնյանին հնարավորություն տվեց արագ կողմնորոշվել և ընդունել մարտը սկսելու որոշումը: Մինչ պարսիկները անցնում էին Կուրը, նա կարողացավ զորքը բաժանել երեք զորաթևերի, որոնք էլ ինքնուրույնաբար բացազատվելով, հասցրեցին ձևավորել զորքի մարտակարգը:

Ընդհանուր դեկավարումից քացի, Վ.Մամիկոնյանը ստանձնեց նաև կենտրոնի հրամանատարությունը: Սպարապետը աջ թևի հեծելազորի հրամանատարությունը հանձնեց իր փեսա Արշալիր Կամսարակյանին, ձախ թևը՝ Խորեն Խորխոռունուն⁴: Որոշ ուշացումով մարտադաշտ հասած վերջապահ զորամասերն էլ, փաստորեն, կազմեցին մարտակարգի պահեստազորը: Դեպի Աղվանք շարժվող հայոց զորքի կազմը նկարագրելով՝ Ղազար

Փարպեցին խոսում է նաև Մարդպետական այրուձիռ գնդերի մասին⁵: Մակայն մարտի ժամանակ զորաթևերի կազմի մեջ նրանք չեն հիշատակվում: Դրանից կարելի է եզրակացնել, որ Մարդպետական հեծյալ գնդերը կազմում էին մարտակարգի պահեստագործը:

Այս ընթացքում գետանցումն ավարտելով՝ պարսիկները շտապեցին գրոհել՝ դեռևս նախամարտական կարգով շարված հայկական զորքի կենտրոնի զորամասերի վրա:

Մարտի ընթացքում մարտակարգ ձևավորելով՝ գրոհի անցան նաև հայկական զորամասերը: Հատկապես հաջող էր Ա.Կամսարականի զորաթևի գրոհը, որին չդիմանալով՝ պարսիկների ծախսը սկսեց նահանջել: Նրանց հետապնդելով՝ Ա.Կամսարականի հեծելագունը հայտնվեց մերձկուրյան ճահճուտներում (այսօր հայտնի է տեղացի՝ դիպեցան քանձրախոր սաստիկ մօրից)⁶ և ստիպված դադարեցրեց հաջող սկսած գրոհը: Նման քարոյ իրադրությունում արագորեն կողմնորոշվելով՝ Ա.Կամսարականը վերադասավորեց ճահճուտներում խրված և մարտակարգը խախտած իր զորամասերը: Պարսիկների համար անսպասելի արագությամբ վերադասավորումն ավարտելով՝ այս քվի հեծելագործ խորը թևանցման զորաշարժով դուրս եկավ Կուրի ափը:

Պարսից զորքի մարտական դասավորությունը նախատեսված չէր թևերում ու թիկունքում մարտ վարելու համար, և հայոց այրուձիռ դեմ ամբողջական մարտաշար ձևավորել չկարողանալով՝ սկսեց նահանջել նաև կենտրոնը: Պարսկական բանակի ջախջախումը կատարյալ դարձավ, երբ նահանջող պարսկական զորամասերը սեղմվեցին Կուրի այս ափին և գետը լողալով անցնող պարսկական զորքի մի մասը խեղդվեց ջրում: Հատկանշական է, որ մարտի այս փուլում Վ. Մամիկոնյանը առաջ քերեց նետածիգներին, որոնք սկսեցին նետահարել՝ գետը լողալով անցնել փորձող հակառակորդի զինվորներին:

Փորձենք վերլուծել ռազմավեստին վերաբերող որոշ հարցեր:

Ճակատամարտը նկարագրած պատմիչները մեզ քիչ նյութ են տալիս հատկապես Սեբուխտի մտահղացման վերլուծության համար, որը նվազեցնում է ճակատամարտը համակողմանիորեն վերլուծելու հնարավորությունը: Այնուամենայնիվ, կարելի է պատասխանել որոշ հարցերի:

Պատմությունը լուծում է պարսիկ զորավարի փայլուն հաղթանակների մասին, սակայն դա չի կարող հիմք հանդիսանալ նրա ապաշնորհության մասին եզրակացությունների համար: Այս հարցի շահարկումը որոշ դեպքերում մպատակ է ունեցել նսնացնել հայոց զորքի հաղթանակը: Մասնավորապես, մինչ հայոց զորքի Աղվանք մտնելը, Սեբուխտը հաջողությունների էր հասել աղվան ապստամբների դեմ պայքարում: Նա ընդհանուր առմամբ լավ էր նախապատրաստվել նաև ճակատամարտին: Մարտադաշտը պարսիկների կողմից ճիշտ էր ընտրված և ընդհանուր առմամբ քարենպաստ էր նրանց համար: Լուփնաս և Կուր գետերի միախառնման վայրից քիչ հեռու

զանվող դաշտում լավ տեսողաչտ էր ապահովվում, սակայն հայոց բանակի գլխավոր հարվածող ուժը՝ մեծաթիվ այրուձին, բաց հարթավայրային տեղանքում լինելով, ճահճուտների և դաշտը եզերող անտառի պատճառով չէր կարողանալու ազատորեն զործել: Այսինքն՝ հայերը գրկվելու էին իրենց առավելությունից՝ զորաշարժային բարձր ցուցանիշները զործի ղեկու հնարավորությունից: Բացի այդ, հայոց բանակը մարտի դաշտ մտավ երթային կարգով: Այդ պայմաններում բաց տեսողաչտը Մերուխտին հնարավորություն էր տալիս հետևել հայկական զնդերի բացազատման ընթացքին, գտնել նրանց ամենաթույլ տեղամասը և ուժերը կենտրոնացնել այդտեղ: Բացի այդ, ճակատամարտը այդպես սկսելով, Մերուխտը մի շարք առավելություններ էր ստանում: Հանկարծակիության գործունը մարտի սկզբից եթե նախաձեռնությունը պարսիկներին տվեց: Դրա համար Վ.Մամիկոնյանը հարկադրված էր բարդ զորաշարժերի ու մի քանի տեղամասերում միաժամանակ հասարդ գրոհների ղիմել, որն, ի դեպ, միջնադարյան ռազմավեստում չէր խրախուսվում: Եթե նկատի ունենանք նաև պարսկական բանակի քանակական առավելությունը (պարսիկներն առնվազն մեկ ու կես անգամ ավելի պետք է լինեին), ապա կարելի է կարծել, որ Մերուխտը, իր հաջողության վրա վստահ լինելով, առանձնակի ռիսկի ղիմելու անհրաժեշտություն չունեց: Առավել ևս՝ այդ մասին ոչ մի ակնարկ պատմիչների մոտ չկա: Ուստի, հավանական է, որ պարսիկները կիրառել են ամբողջ ճակատով միաժամանակյա հզոր հարձակում: Մարտի մտահղացման այս տարբերակը լայն տարածում էր ստացել ղեռևս Զ.ու. 1-ին հազարամյակում և շատ հարմար էր միջին (աչքի չընկնող) ընդունակությունների տեր, սակայն մեծ քանակ ունեցող զորավարների համար:

Միանգամայն այլ է Վ.Մամիկոնյանի գործողությունների պատկերը: Հակառակորդին հանդիպելով և մարտի կազմակերպման (դաշտի ղիտում, տեղազննում, մարտական կարգով զորամասերի շարում և այլն) համար անհրաժեշտ ժամանակ չունենալով՝ սպարապետը կարողանում է ճիշտ գնահատել ստեղծված մարտավարական իրադրությունը և ընդունել մարտը:

Բնական է, որ այս հարկադրված հասցենայությունը չէր կարող չանդրադառնալ մարտի ընթացքի վրա. անձանք տեղանքում թևանցում իրականացնող Ա.Կամսարականի զորաթևը հայտնվեց մերձկություն ճահճուտներում: Դրանից օգտվելով պարսիկները ճոր գրոհով կարողացան ներել հայերին: Ավելի քան հազար տարի Առաջավոր Ասիայում իր զորաշարժային հատկություններով փայլող հայոց այրուձիու պատրաստվածության բարձր մակարդակն էր պատճառը, որ նման դժվարին իրադրությունում աջ թևի վերադասավորումը հաջողվեց: Այստեղ պետք է շեշտել, որ հայոց պատմագրության կողմից հանրալի մոտացության է տրվել Ա.Կամսարականի զորավարական տարածը: Արտակարգ բարդ իրադրությանը արագ գնահատելու և վճռական որոշումներ կայացնելու նրա ընդունակությունը հնարավոր

բությունը ընձեռեց անբարեմաստ պայմաններում սկսված մարտը ուղղակիորեն փրկել անխուսափելի թվացող պարտությունից: Ավելին, ճանճուտներին սեղմված աջ զորաթևը, հավանաբար օգնական զորամասեր ստանալով, էլ ավելի հանդուգն քայլի՝ խորը թևանցող (փաստորեն՝ շրջանցող) զորաշարժի դիմեց: Արդյունքում պարսիկների ձայն թևը ջախջախելով՝ Ա.Կամսարականի զորագունդը հայտնվեց նրանց մարտակարգի թիկունքում: Առաջացած խուճապն էլ վճռեց ճակատամարտի բախտը: Պարսկական բանակը սկսեց անկանոն մահանջը, որն ավարտվեց մետերի տարափի տակ ընկած պարսիկ զինվորների կոտորածով:

Նետածիճների զորամասերը մարտի ընթացքում սովորաբար ծանրագին հետևակի ու հեծելազորի թիկունքում են գտնվում: Ըսկատամարտի վերջին փուլում մետածիճներին առաջին գիծ բերելը Վ.Մամիկոնյանի ուշագրավ մարտավարական հմտորենրից մեկը պետք է համարել, թեև շեշտեմք, որ այն ռազմարվեստում նորություն չէր:

Հաջող գրոհով, սպա մահ համառ դիմադրությամբ այնքի ընկավ սպարապետի անմիջական հրամանատարության տակ գտնվող մարտակարգի կենտրոնը: Այն կաշկանդեց պարսիկների մեծաթիվ ուժերը, հանգույց համդիսացավ հզոր գրոհների դիմակայող ձայն թևի և նոր գրոհի համար վերադասավորվող աջ թևի միջև: Կենտրոնի մարտակարգի կայունությունն էր, որ կենտրոնի ու աջ թևի միջև մխրճված պարսիկներին հնարավորություն չտվեց կտրել նրանց կայքը:

Սակայն ինչպես հայոց, այնպես էլ համաշխարհային ռազմարվեստում Խաղխաղի ճակատամարտի դերը չի սահմանափակվում մարտի հմուտ կազմակերպումով, իրադրության արագ գնահատումով ու փայտն իրականացված շրջանցումով: Դրանք ռազմարվեստում վաղուց արդեն նորություն չլին⁸, թեև կարող էին բավարար լինել ցանկացած զորավարի փառաբանման համար:

Համաշխարհային ռազմարվեստում առաջին անգամը լինելով՝ հայոց զորքը Խաղխաղում կիրառեց համդիպակաց մարտը⁹: Մի բան, որն այս ճակատամարտից հետո էլ երկար ժամանակ չէր ընդունվում ռազմարվեստում: Ուշագրավ է, որ Վ.Մամիկոնյանը գրոհը սկսելու որոշումը ընդունել է այն ժամանակ, երբ մարտակարգը դեռևս ձևավորված չէր: Փաստորեն, զորքը գրոհը սկսեց նախամարտական կարգով: Ընդ որում, Եղիշեն շեշտում է, որ պարսիկների դիմադրությունը հաղթահարվեց «յոյժ յանդուգն յարձակմանն»¹⁰ պատճառով:

Վ. Մամիկոնյանի զորավարական տաղանդի վառ արտահայտումը դարձավ ընթացքից մարտի մեջ մտնելը, որը նույնպես համաշխարհային ռազմարվեստում առաջին անգամ էր կիրառվում (այն այսօր համդիպակաց մարտի պարտադիր նախապայման է համարվում)¹¹: Մերժելով գրեթե բոլոր երկրներում միաձայն ընդունվող տեսակետը՝ Վ.Մամիկոնյանը վերացրեց ռազմերթի ու մարտի միջև պարտադիր դադարը: Հայոց սպարապետի՝

դարակազմիկ նշանակությամբ սմեցող այս քայլն առայժմ չի արժանացել համապատասխան գնահատանքի: Որպեսզի պարզ դառնա կատարվածի կարևորությունը, նշենք միայն, որ հետագա ավելի քան տասներեք դարերի ընթացքում զորավարները չէին համարձակվում կրկնել ընթացքից մարտի մեջ մտնելու փորձը:

Խաղխաղում կիրառված այդ նորարարությանը անտեղյակ լինելն է պատճառը, որ մինչև այսօր հանդիպակաց մարտի առաջին օրինակ է համարվում Տրեքիա գետի մոտ 1799թ. հունիսին Ա. Սուվորովի գլխավորած ռուս-ավստրիական բանակի ճակատամարտը ֆրանսիացիների դեմ¹²: Այս հանգամանքն էլ պատճառ է հանդիսացել, որպեսզի հանդիպակաց մարտի կազմակերպումը կապվի արագածից հրազենի ի հայտ գալու և շարասյունների (կառնների) մարտավարության կիրառման հետ¹³:

Խաղխաղի ճակատամարտով ոչ միայն հայոց, այլև համաշխարհային ռազմարվեստը հարստացավ ընթացքից (առանց նախամարտական դադարի) մարտի մեջ մտնելու և հանդիպակաց մարտի գործնական փորձով: Գրանով Խաղխաղի ճակատամարտը հավասար դիրք է զբաղում այնպիսի ճակատամարտերի շարքում, ինչպես Ջ.ա. 371թ. Լևկոթայի (առաջին անգամ զորքը շարվեց ճակատով անհավասար), Ջ.ա. 331թ. Գավգամելայի (կիրառվեց բարդ զորաշարժ), Ջ.ա. 216թ. Կաննեի (առաջին անգամ փոքր բանակը շրջապատեց ու ջախջախեց ավելի մեծաթիվ բանակին), Ջ.ա. 49թ. Փարսալուսի (առաջին անգամ պահեստազորը մարտի դաշտում վճռական դեր կատարեց) մարտերը: Իսկ Վարդան Մամիկոնյանը իր արժանի տեղն է զբաղում ռազմարվեստի այնպիսի բարեփոխիչների կողքին, ինչպիսիք են Էլյամինոնդասը, Ալ.Մակեդոնացին, Հաննիբալը, Հ. Կեսարը և ուրիշ բարեփոխիչներ:

Յավոք, պետականության կորստին հետևած զինված ուժերի թուլացումը քաղաքաբար անդրադարձավ հայոց ռազմարվեստի հետագա զարգացման վրա: Ապստամբական մարտավարությանն անցնելը, անշուշտ, պարտադրված քայլ էր: Մակայն ապստամբական փոքրաթիվ ուժերով հակառակորդի հզոր բանակների հետ քաջ դաշտում առճակատումից խուսափելով՝ հետագա շրջանի հայ զորապետերը ստիպված հրաժարվում էին մարտավարական այնպիսի հնարքներից, որոնք դարերով մշակվելով՝ բարձր մակարդակի էին հասցրել հայոց ռազմարվեստը: Աստիճանաբար մոռացության տրվեց նաև Խաղխաղում ձեռք բերված ուշագրավ և ուսանելի փորձը:

SUREN MARTIKYAN

THE BATTLE OF KHAGHKHAGH IN THE HISTORY OF THE MILITARY ART

(Summary)

The liberation war against the Persian rule is one of the most interesting pages of Armenian liberation war. From the point of view of military art the battle in Khaghkhagh has a great importance. Armenian army headed by V. Mamikonian, entering the field of Khaghkhagh met with Persian army which was in military order and was ready for attack. Dividing into flanks Armenian army attacked the Persians immediately. And this demolished the Persians before the battle which was very important up to nowadays. Armenian army used for the first time a new type of battle in the history of military art - a counter battle. But up to our days the first counter battle was considered to be the attack of Russian-Austrian forces headed by of A. Suvorov on the French army, in Trebbian battle in June 1799. So nearly 13 centuries before the Trebbian battle Armenian army gave an example of attack from the duration and of the counter battle and opened a new page in the history of military art, and V.Mamikonian got his worthy place among other gifted generals. But losing the independence, the weakening armed forces didn't have any opportunity to develop the example of Khaghkhagh battle.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հարկ չենք համարում քվարկել դրանք, քանի որ չեն ամօշխում մյուսին: Այս մասին անս չայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳՍ հրատ., հ. II, Ե., 1984, էջ 182-183:
2. Եղիշե, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, Ե., 1989, Գ., էջ 150, Վազար Փարսեցի, Պատմություն հայոց, Բ., լի, էջ 150:
3. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. II, էջ 596, 631:
4. Վազար Փարսեցի, Պատմություն հայոց, Բ., լի, էջ 152:
5. Նոյն տեղում, Բ., լի, էջ 148:
6. Նոյն տեղում, Բ., լի, էջ 152:
7. Б. Х. Лиддел Гарт, Стратегия непряных действий, М, 1957, с.61-62.
8. Военная история, М, 1971, с.19. История военного искусства (учебник для военных академии советских вооруженных сил), М, 1984, с.13-14.
9. Ս. Վ. Սարգսյան, Հայ ռազմական արվեստի պատմությունից, Ե., 1969, էջ 182-183:
10. Եղիշե, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, Գ, էջ 144 :
11. Боевой устав сухопутных войск ВС СССР, ч. II, М, 1990, с.243-251.
12. Л.М.Лещинский, Военные победы и полководцы русского народа во второй половине XVIII в., М., 1959, с.192-199. А.А.Строков, История военного искусства (рабовладельческое и феодальное общество), М., 1955, с.608.
13. Военное искусство рабовладельческого и феодального общества (сборник материалов для военных училищ), вып. 1, М., 1953, с.424-435.

ՏԻԳՐԱՆ ԱՆՔԱՅԵՆ ՅԱՆ

**ԱԶԳԵՐԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ ԱՐԱՔԱԼԵՁՈՒ
ԱՐԼՅՈՒՐՆԵՐՈՒՄ (IX-XI Գ.Գ.)**

Միջնադարյան մուսուլմանական հեղինակների երկերում բազմաթիվ տեղեկություններ են հաղորդվում ինչպես խալիֆայության տարբեր մահանգների բնակիչների, այնպես էլ նրա սահմաններից դուրս ապրող ժողովուրդների և ցեղերի մասին: Ներկայացնելով նրանց ապրելակերպը, հավատալիքները, սոցիալական և քաղաքական կազմավորումները, մուսուլման հեղինակները անդրադառնում են նաև այդ ժողովուրդներին բնորոշ հատկանիշներին՝ մարդաբանական տիպին, ազգային բնավորության առանձնահատկություններին՝ զնահատելով դրանք բացասաբար կամ դրականորեն: Իհարկե, նրանց զնահատման չափանիշները իրական հիմք չունեն, հաճախ պայմանավորված են որոշակի ստերեոտիպներով և նախապաշարմունքներով, սակայն նման ստերեոտիպներ կարելի է հանդիպել նաև այլ ժողովուրդների գրականության և բանահյուսության մեջ, պեղծիստում, և այլն՝ դրանք կրում են համամարդկային բնույթ: Այս խնաստով բացատրություն չէ նաև արաբական միջնադարյան պեղծիստ և բանահյուսությունը: Սույն հոդվածի նպատակն է որոշ պատկերացում տալ այլ ժողովուրդների վերաբերյալ միջնադարյան արաբալեզու հեղինակների մոտ տարածված այսպիսի զնահատականների մասին: Այս կարգի դատողությունները և ստերեոտիպները կարող են վերաբերել շրջապատող ժողովուրդների կամ խալիֆայության այս կամ այն նահանգի բնակիչների ամենազանազան մարդկային, մարդաբանական, մասնագիտական հակվածություններին, ֆիզիոլոգիական և անզամ սեռական հատկանիշներին:

Մուսուլմանական կայսրության տարածքում բնակվող տարբեր ազգերի, նահանգների բնակիչների կերպարների վերլուծությունները հանդիպում են հատկապես աշխարհագրագետ հեղինակների Իբն ալ-Ֆակիհի, ալ-Մուկադդասիի և այլոց հայտնի աշխատություններում:

Հայտնի են, օրինակ, Վասիտում (Բասրայի և Քուֆայի միջև ընկած շրջան) բնակվող նաբաթագիների (ըստ երևույթին՝ արամեացիներ) մասին ծայրաստիճան բացասական զնահատականները: Ըստ հեղինակների, նրանք բնությունից օժտված են բազմաթիվ ծայրաստիճան վատ հատկա-

նիշներով. չար են, նենգ, ազահ և այլն: Իրն ալ-Ֆակիհը գրում է. «Երբ քնակվեց ալ-Հաջջաջը Վասիտում, դարս վոնդեց այնտեղից նարաթեսացի-նրին և ասաց «թող նրանցից ոչ ոք չապրի իմ կողքին. քանզի նրանք վատ արարքներ են թույլ տալիս»: Նույնիսկ բերվում է մարգարեի բացասական խոսքը նարաթեսացիների մասին: «Ասաց Ալլահի մարգարեն, թալ օրհնի նրան Ալլահը և ույջունի նրան. մի արհամարհեք կուրայշիտներին, մի հայ-հոյեք (մյուս) արարքներին, ... և մի ապրեք նարաթեսացիների կողքին, քանի որ նրանք հավատի հայտնողներ են և մարգարեսուպաններ: Եթե նրանք քնակվեն քաղաքներում, տներ կառուցեն, արարքներ խոսեն և ուսուցանեն՝ «ուրանը, ապա նրանք կտիրեն մարդկանց խորամանկությամբ և կեղծիքով, և իսլամը մոլորության կտանեն»:

Կարելի է բերել նաև ծագումով պարսիկ հայտնի արաբ բանաստեղծ Բաշշար Իբն Բուրդի տողերը.

1. Հագար անեծք Վասիտին և նրան ով այնտեղ է, և Վասիտի ինը հագար քնակիչներին,
2. Միթ Ն ղու ինչ որ զնահատելի բան ես սպասում Վասիտի քնակիչներին, որում քնակվում են միայն անկված քարքարոսները և նարաթեսացիները
3. Բարբարոսները և խուզատանցիները իրենց մեջ կրում են Ալլահի ստրուկների ողջ չարությունը:

Ամենայն հավանականությամբ, այսպիսի ոչ նախանձելի զնահատականները նարաթեսացիների վերաբերյալ արտահայտում են արաբների արհամարանքը և հակակրակը Իրաքի տեղացի արամեացի բնակչության նկատմամբ: Իրն ալ-Ֆակիհի մոտ ամբողջ էջերով բերվում են տարբեր, հիմնականում հայտնի անձանց բացասական կարծիքները նարաթեսացիների մասին:

Վերը բերված բանաստեղծությունից երևում է նաև արաբների ոչ բարենպաստ զնահատականները խուզիտանցիների մասին: Այս է վկայում Իբն ալ-Ֆակիհի մոտ հանդիպող գրականագետ ալ-Մադաինիի բերած պատմությունը. «Պարսկաստանի թագավորներից մեկը հրամայեց իր մերձավորներից մեկին. «Բռնիր ամենավատ թռչունը, եփիր այն վատարանի մեջ ամենավատ վայրտով և կերակրիր ամենավատ մարդուն»: Նա բռնեց քվեճ, եփեց այն թրիքի վրա և տվեց այն խուզի (ցեղից) մի մարդու: Խուզիտանցիները ասաց նրան. «Դու սխալվեցիր, զնա և բռնիր բու, եփիր այն իմ միջակայմից արված խարոսկով և տուր այն նարաթեսացուն, շնության որդուն»:

Կարելի է բերել նաև ալ-Մուկադդասիի հայտնի աշխատության մեջ տեղ գտած իբրև թե մարգարեի խորհուրդը, որն է. «Մի ամուսնացեք խուզերի հետ, քանզի նրանց արմատները նրանց անհավատարմության են մղում»:

Մարգարեն հազիվ թե առիթ ունեցած լիներ ճանաչելու խուզտանցիներին, սակայն նրան վերագրվող խոսքերը և ծայրաստիճան բացասական վերաբերմունքը թերևս իրանական ազդեցություն արդյունք են:

Հետաքրքրական է. սր խուզատանցիների վատ համբավը տարածված է եղել նաև ոչ մուսուլման ժողովուրդների մոտ: Սրա մասին է խոսում հայերենում ածական դարձած «խուժան» բառը. որը նշանակում է խուզատանցի⁸: Այստեղ պետք է նշել որ արաբերենում «խ-զ-ա» արմատը ունի «խայտառակություն. անօթալի արարք» ընդհանուր իմաստը⁹:

Արաբալեզու աղբյուրներում բազմաթիվ են թյուրքերի մասին գնահատականները, որոնք մեծ մասամբ պայմանավորված են իշխող քաղաքական իրադրությամբ: Այսպես, օրինակ IXդ., երբ թյուրքերը հիմնականում ստրուկ-զինվորներ էին և ծառայում էին արբասյան խալիֆաների զուկատներում, Բաղդադի բնակիչները բացահայտ արհամարհական և նույնիսկ թշնամական վերաբերմունք ունեին նրանց նկատմամբ: Հաճախ էին այն դեպքերը, երբ մայրաքաղաքի քաղաքացիները կռվի էին բռնվում թյուրքական զինվորականության հետ¹⁰: Հայտնի է, որ բաղդադցիների թշնամական վերաբերմունքը դեպի խալիֆի թյուրք զինվորները այն հիմնական պատճառներից էր, որը ստիպեց Մուֆասիմ խալիֆային հիմնել Սամարրան: Ընդհուպ մինչև Բաղդադի գրավումը մոնղոլների կողմից, թյուրք զինվորականները հաճախ միջամտում էին Բաղդադում տեղի ունեցող տարբեր թե սոցիալական և թե կրոնական բնույթի տարբեր խռովություններին¹¹:

Աղբյուրների այս ժամանակահատվածին վերաբերող տեղեկություններում թյուրքական ցեղերը ընդհանուր առմամբ ներկայացվում են իբրև շատ ցածր մակարդակ ունեցող բարբարոսներ, վայրենիներ, որոնք անմարդկային վարքագիծ ունեն: Այդպիսին են ներկայացնում նրանք Իբն ալ-Ֆակիհի աշխատության մեջ: Սակայն հենց նույն IXդ. մեկ այլ հեղինակ՝ Ջահիզը, փորձելով հերքել հասկերանքը թյուրքերի նկատմամբ, մի աշխատություն գրեց, որտեղ հնարավորին չափ գովաբանում էր թյուրքերի դրական կողմերը, այն է՝ բաջությունը, բծնելու բացակայությունը, սերը դեպի ուսման գործը և այլն, սակայն միևնույն ժամանակ Ջահիզը ընդունում էր, որ նրանք անսահման սեր ունեն դեպի թալանը և բռնությունը¹²:

Բայց հետագայում մուսուլմանական քաղաքակրթությանը թյուրքերի միաձուլմանը և հատկապես Սելջուկյանների իշխանությանը գլուխ գալուն գուզընթաց արաբալեզու աղբյուրներում թյուրքերի հանդեպ նկատվում է վերաբերմունքի համատարած դրական փոփոխություն: Այսպես, սելջուկյան պաշտոնյա Իբն Հասուլը, XIդ. կեսերին գովաբանում էր թյուրքերի խառնվածքի «առյուծանման» գծերը, նրանց հպարտությունը, բարձր ուզանական պաշտոնների հասնելու անկոտրում ձգտումը և այլն¹³:

Արաբական աղբյուրներում հետաքրքրական տեղեկություններ են հանդիպում նաև սևամորթների կամ զինջիների վերաբերյալ: Պետք է նշել, որ միջնադարյան մուսուլմանական հասարակությունում նրանք, կարելի է ասել, ամենաարհամարված տարրն են եղել: Արաբները նրանց հեզմանքով անվանում էին «ադրիբաթ ալ-’սուադ»՝ արաբների ազգամերը: Սրանց

մաշկի սևությունը, սովորաբար վաճում էր և տհաճությամբ առաջացնում սպիտակամորթ մեծամասնության մտտ։

Հետաքրքրական է, որ արարքներից շատերի վերաբերմունքը դեպի սևամորթները արտահատված է հենց իրենց սևամորթ բանաստեղծների ստեղծագործություններում։ Այսպես, Հարուն առ-Ռաշիդ խալիֆայի պալատական սևամորթ բանաստեղծ Նուսայր ալ-Ասդարը հենց իրեն ուղղված տողերում գրում է.

*Սևամորթ, յ՛ճ, գործ ունես դու սիրտ հետ,
Վե՛ր տուր սպիտակ աղջիկներին հետապնդելու, եթե խելք ունես.
Ղու որ երովպագու նման սևամորթ ես,
Միջոցներ չունես նրանց հասնելու¹⁴։*

Մեկ այլ սևամորթ բանաստեղծ Աբու Բուլաման հեզնում է իր սեփական արտաքինը.

... մկր դեմքերը սև և տգեղ են, մեր անունները անոթալի¹⁵

Ինչպես հայտնի է, սևամորթները մուսուլմանական հասարակության մեջ սովորաբար գտնվում էին սոցիալական սանդղակի ամենատարբին մասում՝ նրանք ստրուկներ էին և մույմիսկ ստրուկների մեջ էլ արհամարված էին։ Սովորաբար սևամորթները որպես ստրուկ օգտագործվում էին ամենածանր ֆիզիկական աշխատանքներում,՝ ներքիններ էին կամ դոճապաններ¹⁶։

Արար հեղինակների աշխատություններում, ինչպես տեսանք, բազմաթիվ են տարբեր ազգերի մասին տեղեկությունները ու նկարագրությունները։ Ստորև բերում ենք ալ-Մուկադդասիի բնորոշումները, որոնք վերաբերում են խալիֆայության բոլոր մահանգների բնակիչներին և ազգություններին։ Եվ չնայած այն գիտակցությանը, որ շատ դեպքերում այդ կարծիքները կարող են սուբյեկտիվ և ոչ իրական լինել, այնուհանդերձ մեր առջև պատկերանում է միջնադարյան այդ բազմազգ հասարակությունը, և ըստ դրական կամ բացասական գնահատականների, այն բարոյա-էթետիկական նորմերը, որ իշխել են արաբա-մուսուլմանական իրականությունում։

Նա գրում է, որ «... չկան ավելի ազահ քան մեքքացիները, ավելի ալ-քատ քան յասրիբցիները, ... ավելի կիրք քան հերաթցիները, ... ավելի ըմբռնող քան ռեյցիները, ... ավելի անգրագետ քան ամանցիները, ավելի անատակ քան սիրաֆցիները, ավելի անհնազանդ քան սիջիստանցիները և դամասկոսցիները, ավելի տգեղ քան խորեզմցիները, ավելի կովարար քան սամարյանցիները և Շաշի բնակիչները, ավելի ցածրահասակ քան եգիպտացիները, ավելի հիմար քան բահրեյցիները և հոմսեցիները, ավելի սիրալիր քան մարտացիները, ռեյցիները և քաղղաղցիները, ավելի գեղեցիկ լեզու ունեցող քան քաղղաղցիները և ավելի տգեղ լեզու ունեցող քան սայդացիները և հերաթցիները, ավելի ճիշտ լեզու ունեցող քան խորասանցիները և ավելի գեղեցիկ պարսկերենով խոսող քան քալիսցիները և Շաշի բնակիչները»¹⁷։

Իրն ալ-Ֆակիհը նույնպես զնահատականներ է տալիս տարբեր նահանգների բնակիչներին և այլ երկրների ժողովուրդներին. «Հնդկաստանի բնակիչները ... բարոյական են, գեղեցիկ կազմվածք ունեն. գեղեցիկ են և չափավոր են... Եգիպտացիները ամհոզ են և խորաքափանց: Բերբերները զվախ ընկնող են, նրանք գուրկ են գոռոգությունից և սրիկայությունից: Հոռոմները (իմա բյուզանդացիները) գոռոգամիտ են և պայմանականություններ սիրող են, իսկ Սիրիայի բնակիչները ամհոզ են և խաղաղասեր: Հիջազցիները երաժշտական են, սիրում են զվարճանալ և սիրահետել կանանց: Իրաքի բնակիչները խորաքափանց և նենգ են, իսկ Հնդկաստանի բնակիչները ամհոզ, քաջ և փափկասիրտ: Չինացիները նպատակալաց են, թեթև բնավարություն և հմուտ ձեռքեր ունեն: Եմենցիները ամհոզ են, թեթև բնավարություն ունեն և փափկասիրտ են: Խորասանցիները ամհոզ են, ժլատ և խիզախ:»¹⁸, և կամ «Հաշիմիտը սովորաբար գեղեցկադեմ է և ազնվաբարո բնավորությամբ տեղ, որով նրանք տարբերվում են բոլոր կուրեյշիտներից և այլ արաբներից:»¹⁹:

Մի սկիզբ է ստանում մի յուրատեսակ ժանր, որ կարելի է բնորոշել որպես ստրուկների գնման վերաբերյալ տրակտատներ: Մրանցում տարբեր ազգությունների ստրուկները քննարկվում են այս կամ այն ուղղությամբ նրանց աշխատանքային կամ հմտությունների կիրառման տեսակետից: Առաջին այսպիսի աշխատության հեղինակ է քաղաքացի քրիստոնյա, մասնագիտությամբ բժիշկ Իբն Բալալը: Բացի գործնական իտրադիցիոններից, այս աշխատությունը հարգարդում է նաև հետաքրքրական ազգագրական տեղեկություններ տարբեր ազգերի բնավորության գծերի և այլ հատկանիշների մասին: Հատկապես առանձնահատուկ են կամանց վերաբերող դիտարկումները: Պետք է ասել, որ հեղինակի կողմից ներկայացվել են զրեթե բոլոր ազգերի կամայք՝ իրենց թերություններով և առավելություններով:

Այսպես. «Հնդիկ կամայք հնազանդ են, սակայն շուտ են քառամուսն: Եվ մասնագիտությամբ բժիշկ հեղինակը հավատացած է, որ «Երանք ունեն մի առավելություն այլ կամանց նկատմամբ. ասում են, որ նրանք բաժանվելուց հետո նորից կույս են դառնում...»: Այնուհետև հեղինակը շարունակում է. «Սինդի կամայք հայտնի են իրենց քարակ իրանով և երկար մազերով: Սեդիմուհին իր մեջ միավորում է հաճելի խոսքը, հոյակապ մարմինը, պշրամբը և խելքի աշխուժությունը: Նա խամոտ չէ, չարամիտ չէ, ճղճղան չէ, լավ երգչուհի կարող է դառնալ: Սեքրուհին փափկասուն է, նրբամկան է և ունի քախձագորով աչքեր: Թաիֆի բնակչուհիները սակեթուխ են, սլացիկ են, թեթևամիտ, կատակասեր են և խաղացկուն, սակայն հակված չեն հիլանալու և մահանում են ծննդաբերելիս: Բերբերուհիները, ընդհակառակը, լավ ծննդաբերում են, ամենահնազանդն են և ցանկացած գործում հմուտ են»²⁰:

Այստեղ էլ սևամորթների մասին կարծիքը քարենպաստ չէ: «Սևամորթ կամայք որքան սև են այնքան ավելի տգեղ են և այդքան ավելի սուր են նրանց ատամները: Երանք ոչ մի աշխատանքի պիտանի չեն, շատ հեշտ

դառնում են թափթփված և ընդհանրապես ոչնչի մասին հոգ չեն տանում: Երանց Իտությունը պարմ է և տակտ խփելը: Ասում են, եթե անգամ սեամորթը երկնքից ցած է ընկնում, ապա տակտով է ընկնում:... Երանց թևատակների հոտը տհաճ է, իսկ մաշկը կռպիտ է: ...

Թյուրք կամայր գեղեցիկ են, փափուկ և սպիտակամաշկ: Երանց այրերը փոքր են, բայց հաճելի, ցածրահասակ են... Երանք ծննդաբերության անսպառ աղբյուր են...

Հույն կնոջ մաշկը՝ վարդագույն-սպիտակ է, մազերը ուղիղ են, աչքերը՝ կապույտ, նա հնազանդ է, զիջող, ընկերասեր, հավատարիմ և հուսալի»²¹:

Այժմ կաղղասին երբեմն, ի միջի այլոց, հիշատակում է այս կամ այն երկրի կանանց հատկությունների մասին, այսպես, օրինակ, Հերաթում անող բույսերը նկարագրելիս նա գրում է. «ասում են, որ նրանք հեղիտորույնների ծաղկման ժամանակ կրթոտում են կատուների նման»²²:

Չնայած այս նկարագրությունները վերաբերում են ստրուկ կանանց, այնուամենայնիվ մենք հնարավորություն ենք ստանում պատկերացում կազմելու ընդհանրապես միջնադարյան կնոջ կերպարի մասին՝ իր առավելություններով և թերություններով:

Հետաքրքրական է հայերի մասին Իրն Բուտլանի հայտնի հատվածը, որից հետևում է, որ այլ ազգերի համեմատությամբ շատ վատ ստրուկներ են եղել. «... նրանք արտահայտիչ կազմվածք ունեն, սակայն նրանց ոտքերը տղեղ են, ամոթը քացակայում է, գողությունը շատ տարածված է նրանց մեջ: Երանց բնույթը և լեզուն կռպիտ են: Եթե դու հայ ստրուկին անգամ մեկ ժամով անգործ թողնես, ապա նրա էությունը նրան կմղի չարության: Ես աշխատում է լավ միայն փայտով կամ վախից: Եթե դու տեսնես, որ նա ծուլանում է, ապա դա նրանից է, որ դա նրան հաճույք է պատճառում, այլ ոչ թե թուլությունից: Այդ ժամանակ պետք է վերցնել փայտը, հասցնել նրան մի քանի հարված և ստիպել նրան անել այն ինչ ուզում ես»²³: Նախապաշարմունքները և ստերեոտիպները կարող են վերաբերվել նաև այս կամ այն կրոնի ներկայացուցիչներին: Այսպես խոսում էին հրեաներից եկող զարշահոտի (Իրն Կուտայրա, Աղար ալ-Քատիբ), քրիստոնյաների հարբեցողության (Յաթիմա), նրանց միանձնուհիների և երգչախմբերի տղաների հեշտ մատչելիության, սարեացիների իրար նկատմամբ անգութ վերաբերմունքի մասին (Իրն ալ-Քիֆտի)²⁴:

Ամվտփելով, կարելի է ասել, որ միջնադարյան հեղինակների այնատություններում տարբեր ազգերի նկատմամբ ներկայացվող բնորոշումները կամ ստերեոտիպները հաճախ ստրեկտիվ և կանխակալ բնույթ են կրում, երբեմն ինչ-որ տեղ պայմանավորված են կրոնա-քաղաքական ազդեցությամբ, սակայն նրանք իրենց մեջ պարունակում են նաև ճշմարտության և օբյեկտիվության էլեմենտներ: Բացի այդ, դրանք հետաքրքրական են նաև այն տեսակետից, որ հնարավորություն են տալիս պատկերացում ստանալու այլ ժողովուրդների նկատմամբ միջնադարյան արարա-մատուցման

կան հասարակությունում ստեղծված վերաբերումքի, մախապաշարմունքների. պատկերացումների, ինչպես նաև հենց իրենց սեփական աշխարհընկալման, էթնոիկական հայացքների մասին:

TIGRAN MIKAYELYAN

IMAGES OF PEOPLES IN MEDIEVAL ARABIC SOURCES (IX-XIcc.)

(Summary)

The article presents images and stereotypes of different peoples and inhabitants of various provinces of the Arab Caliphate as seen by medieval Arab Muslim authors such as Ibn al-Fakih (IX c), al-Muqaddasi (X c) and others. The article also discusses images of women belonging to different peoples, their attractive and negative features in a guide for purchasing slaves of Ibn Butlan, a Baghdad physician (XI c.).

These images and stereotypes, also being subjective and egocentric, enable us to see some aspects of Arabo-Muslim medieval society's aesthetic views and world outlook.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* Տեքստում հղվող բնագրերի թարգմանությունները հնդհակնին են:

1. Nöike – Tabari, Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden, aus der arabischen Chronik des Tabari, übersetzt und mit ausführlichen erläuterungen und ergänzungen versehen, Leyden, 1879, S.22.
2. Ибн ал-Факих, Ахбар ал-булдан (Известия о странах), Введение, перевод с арабского, издание текста и комментарии А.С. Жамкояна, с. 23-42 passim.
3. Նույն տեղում, էջ 29.
4. Նույն տեղում, էջ 34.
5. Տե'ս ԵԻԷ. Հոնիզման "Nabatheans".
6. Նույն տեղում, էջ 40.
7. Descriptio imperii moslemici auctore Shams ad-Din Abu Abdallah Mohammed Ibn Ahmed Ibn Abi Bekr al-Bannā al-Basshār al-Moqaddasi, edidit M.J. de Goeje, Editio tertia, Lugduni Batavorum, 1967, p.403.
8. Հր. Աճառյան, Հայերեն արմատական քառաբան, Ի. Ի, Երևան, 1973.
9. X.K. Баранов, Арабско-русский словарь, издание шестое стереотипное, Москва, 1984, с. 219.
10. Տե'ս Ի.Ե. Михайлова, Средневековый Багдад, Москва, 1990, passim.
11. Նույն տեղում.
12. К. Э. Босворт, Нашествие варваров: появление тюрок в мусульманском мире, Мусульманский мир 950-1150 ժողովածուում, с.25.

13. Նոյն տեղում.
14. B. Lewis, *Race and Slavery in the Middle East, An Historical Enquiry*, New York, Oxford, 1990, p.30.
15. Նոյն տեղում.
16. А. Мец, *Мусульманский ренессанс*, перевод с немецкого, предисловие и указатель Д.Е. Бертельса, с.137.
17. *Descriptio*, p.34.
18. Ибн ал-Фажик, с.92-93.
19. Ибн ал-Фажик, с.81.
20. А. Мец, с.139.
21. А. Мец, с.140.
22. А. Мец, с.286; *Descriptio*, p.436.
23. Նոյն տեղում.
24. А. Мец, с.52.

Գ Ա Յ Ա Ն Ե Ս Կ Ը Տ Ո Ւ Մ Յ Ա Ն

**ՔՐԻՍՏՈՆՅԱՍ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ
ՍԱՀՄԵՂԱԿԱՆ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵՋ**

Իսլամի ծագումը ու զարգացումը յոթերորդ դարում կապված էր արաբական հասարակության ընդերքում ընթացող պրոցեսների և բարդ սոցիալա-քաղաքական շարժումների հետ: Իսլամը դարձավ այս շարժումների գաղափարախառնական թաղանթը: Նորաստեղծ արաբական պետության ամրապնդման և համախառնական պետության ձևավորման ընթացքում մեծ զարգացում ապրեց մահմեդական իրավագիտությունը՝ *ֆիկհը*, որը հենվում է Ղուրանի վրա: Մահմեդական իրավունքը որպես կրոնական երևույթ ներառում էր իսլամի իրավական և կրոնական բարոյախոսական նորմերը: Սակայն իրավական նորմերի հետագա ռազմամասերությունը հանգեցրեց իրավագիտության և աստվածաբանության, որպես ինքնուրույն բնագավառների ձևավորմանն իսլամական գաղափարախոսության մեջ:

Սերձավոր և Միջին Արևելքի, Միջին Ասիայի, Հյուսիսային Աֆրիկայի նվաճված երկրներում արաբները հանդիպեցին զարգացման տարբեր աստիճանների վրա կանգնած հասարակարգերի, որոնք պահանջում էին յուրահատուկ վերաբերմունք: Եվ դրան համապատասխան արաբական իրավագիտության մեջ մշակվեցին այն դրույթները, որոնք պիտի կարգավորեին իրենց վախճարաբերությունները նվաճված երկրների բնակչության հետ:

Մահմեդական իրավագիտության հիմքը կազմում է մուսուլմանների սրբազան գիրքը՝ Ղուրանը, որտեղ և ձևակերպված են իսլամի վերաբերմունքը ոչ-մուսուլման ազգաբնակչության նկատմամբ և առաջ է քաշված սրբազան պատերազմի (Ջիհադի) գաղափարը անհավատների, այսինքն՝ հեթանոսների նկատմամբ: Հետագայում այս վերաբերմունքը արտահայտվեց նաև քրիստոնյաների նկատմամբ: Սրբազան պատերազմը համարվում էր հավատի պատերազմ, որը պիտի մղվեր մինչև անհավատներին վայրժի բերելը: Կարելի է կարծել, որ քրիստոնյաները և հրեաները, որպես Սուրբ գիրք ունեցող ժողովուրդ, չպիտի դասվեին անհավատների շարքը: Սակայն հայտնի է, որ իսլամի հիմնադիրը հենց ինքն է հարձակվել հրեական ցեղերի վրա և հարկատվության պայմանագրեր կնքել Արաբական թերակղզու

քրիստոնյաների հետ²: Իսլամի տիրապետության տակ գտնվող երկիրը կոչվում էր «դառ-ուլ-իսլամ», այսինքն «իսլամի երկիր», որտեղ իշխում է իսլամական օրենսդրությունը (շարիաթ), իսկ մնացած բոլոր երկրները կոչվում են «դառ-ուլ-հարթ», այսինքն՝ «պատերազմի երկիր», որովհետև այստեղ չի գործում իսլամական օրենսդրությունը, որի դեպքում պիտի պատերազմեր նրանց դեմ: Իսլամական օրենքները մեկնողները գտնում են, որ «Ջիհադ» նշանակում է «գործադրել պատերազմում ամեն ջանք Ալլահի համար, թե անձնական մասնակցությամբ, թե՛ դրամական նպաստներով և խորհուրդներով»³:

Սահմեղական պետության մեջ գտնվող քրիստոնյաները և հրեաները կոչվում էին *զիմմի* (հպատակ, հարկատու): Նա պիտի վճարեր գլխահարկ (ջիզիա), որից ազատ էին մուսուլմանները: Այս հարկի վճարմամբ զիմմիները փոխում էին իրենց պարտքը իսլամական պետության մեջ⁴: Վաղ իսլամի շրջանում այս տերմինը նշանակում էր ընդհանրապես «հարկ»: Հայտնի է, որ Սուհամմեղ մարզարեն Արարական քերականության բնակվող Եմենի, Նեջրահի, Օմանի, Թայիֆի քրիստոնյա ազգաբնակչության հետ պայմանագրեր է կնքել նրանց կողմից իսլամի կրոնը հարգելու և ջիզիա վճարելու պայմանով: Այսպես, Եմենի քրիստոնյաների հետ նա պայմանագիր է կնքել յուրաքանչյուր չափահաս ամձից մեկ դինար կամ դրան համարժեք հազուստ, ինչպես նաև երեսուր կովից մեկական ձագ վերցնելու պայմանով⁵:

Սկզբնական շրջանում ջիզիան ուներ ձևական բնույթ, որը քաջատրվում է նվաճված երկրներում խալիֆայության իրավական իշխանության նոր հաստատվելով: Այսպես, XII դարի հայ պատմիչ Սամուել Անեցիոն հաստատում է, որ VII դարի կեսերին արաբները Հայաստանում յուրաքանչյուր ծխից վերցնում էին չորս դրամ, երեք *միթ*⁶ գտված հացահատիկ, մեկ խուրջիմ, մեկ մազն պարան և մեկ գույգ ձեռնոց⁷: Եթե հաշվի առնենք, որ այն ժամանակ մեկ ծխի տակ միավորվում էին մի քանի ընտանիք, ապա հասկանալի է, որ հարկի այս տեսակը առանձին ժանրություն չպիտի ներկայացներ:

Գլխահարկի հետ միասին քրիստոնյաները պարտավոր էին վճարել նաև տասանորդ (խարաջ): Այն կազմում էր, բերքի մեկ քառորդից մինչև կեսը: Այս տերմինը հենց իր այս նշանակությամբ սկսել է օգտագործվել միայն IX-X դարերում: Ավելի վաղ շրջանում այն ուղղակի համարվում էր հարկ-նվիրատվություն, որ պիտի տային քրիստոնյաները:

Մուհամմեդ մարզարենից հետո Օմար իբն Խատտաբը (634-644) առաջին օրենսդիրն էր, որն ամրագրեց այն հարաբերությունները, որ պիտի ունենար իսլամական իշխանությունը ոչ-իսլամական կրոնների և պետությունների հետ: Երբ Օմարը նվաճեց Սիրիան, տեղի քրիստոնյաների հետ նա դաշնագիր կնքեց, որում ձևակերպված են այն պայմանները, որոնցով խալիֆը պիտի ընդուներ նրանց հպատակությունը: Այդ պայմանագրում քրիստոնյաներին ներկայացվող պահանջները հետագայում օգտագործվեցին ուրիշ գո-

րավարների կողմից այլ քրիստոնյա երկրների հետ խաղաղության պայմանագիր կնքելու ժամանակ: Պայմանագրում քրիստոնյա կողմը պարտավորվում էր քաղաքներում և բնակելի վայրերում եկեղեցիներ և վանքեր չկառուցել, չվերանորոգել դրանք: Նրանք պարտավոր էին մուսուլմաններին հարգել, օթևան տալ, կերակրել, լրտեսներ չպահել իրենց տանը, չմահավել մուսուլմաններին իրենց հագուստով, անգամ եկեղեցիների վրա խաչեր չդնել¹:

Հիջրայի դեռևս 2-րդ դարում գոյություն ունեին իրավաբանական դպրոցներ, որոնցից առավել հայտնի էին Ալ-Շաֆիի և Աբու Համիֆի դպրոցները: Այս դպրոցների մեկնաբանություններով պարզաբանված օրենսդրությունների մեջ հստակորեն է դրվում այն հարցը, թե ինչպիսի վերաբերմունք պիտի ունենար մահմեդական պետությունը ոչ մահմեդական պետությունների նկատմամբ:

Հարցի ուսումնասիրման համար կարևոր աղբյուրներ են իրավագետներ Աբու Յուսուֆի (VIII դար) «Հարկերի մատյանը», Մավադիի (IX դար) «Պետական կանոնների մատյանը», իսկ պատմագիրներից՝ Ալ-Բալազուրիի (IX դար) «Երկրների նվաճման» գիրքը:

Աբու Յուսուֆի «Հարկերի մատյանը» գրվել է խալիֆ Հարուն-ար-Ռաշիդի կարգադրությամբ, որը ձգտում էր կարգավորել հպատակների նկատմամբ տարվող հարկային քաղաքականությունը: Աբու Յուսուֆը իր գրքում ուշադրություն է դարձնում հարկային քաղաքականությամբ նախատեսվող հողային սեփականության և հսոցտագործման տարրեր ձևերին:

Աբու Յուսուֆի և մյուս արաբ իրավագետների կողմից մշակված օրենսդրությունը հպատակ ժողովրդի համար ավելի ամբողջական է դառնում ալ-Բալազուրիի «Երկրների նվաճման» գրքում: Հեղինակը ներկայացնում է դեռևս Մուհամմեդ մարգարեի ժամանակից քրիստոնյա և հպատակ ժողովուրդների նկատմամբ տարվող քաղաքականության պատմությունը, անդրադառնում արաբական նվաճումների ժամանակ արաբ խալիֆների և զորավարների ոչ-մուսուլման բնակչության հետ կնքած պայմանագրերին, որով հստակ է դառնում քրիստոնյաների իրավական վիճակի պատկերը արաբական խալիֆայության մեջ:

Մահմեդական իրավունքը խալիֆայության հպատակներին բաժանում էր 3 խմբի՝ մահմեդականներ, զինմիներ, ստրուկներ: Չի կարելի անտեսել այն փաստը, որ զինմիների մասին եղած իրավական ձևակերպումները վերաբերում են առաջին հերթին Եգիպտոսի, Ասորիքի, Միջագետքի ոչ-մահմեդականներին¹¹: Տեսականորեն զինմի էին համարվում միայն քրիստոնյաները, բայց ժամանակի ընթացքում ինքնաբերաբար այս խմբի մեջ մտցվեցին զրադաշտականները և սաբիները (հառան քաղաքի հեթանոսները)¹²:

Չինմիների իրավական վիճակը որոշելու համար մահմեդական իրավագետները հենվում էին Ղուրանի հետևյալ խոսքերի վրա «Կովեցեք ս. Գրքի ժողովրդի այն մարդկանց դեմ, որոնք չեն հավատում աստծուն, Ահեղ Դատաստանի օրվան, արգելված չեն համարում այն, ինչ Աստված և ճրա մար-

գարեն արգելել են եւ չեն դավանում ճշմարիտ կրոնը. մինչև իրենց ձեռքով խոնարհարար վճարեն գլխահարկը»:

Այդ սկզբունքն էր, որ զարգացրեց մահմեդական իրավագիտությունը՝ ժամանակի ընթացքում ստեղծելով մի ամբողջ տեսություն:

Ըստ մահմեդական իրավունքի, մահմեդական համայնքի նվաճածը նրանց է. իսկ տեղական բնակչությունը միայն մահմեդական դատնալով կարող է հավասարվել նվաճողի հետ: Ինչ վերաբերում է մահմեդականությունը ընդունողին, ապա նա անձի և ունեցվածքի ապահովություն կարող էր ձեռք բերել գլխահարկ (ջիզիա) վճարելու պայմանով խաղիֆայության հետ պայմանագիր կնքելու միջոցով (աման)¹³:

Ապահովության գիրը մահմեդական իշխողները կարող էին տալ թե՛ խաղիֆայությանը հպատակ ոչ-մուսուլմանին, թե՛ այլ պետության հպատակին, որն ապաստանում էր խաղիֆայությունում: Պայմանագիր ունեցող քրիստոնյաները ապստամբության դեպքում կորցնում էին ամեն ինչ¹⁴:

Գլխահարկը արարները անվանում էին ջիզիա, որ բառացի նշանակում է «վարձատրություն, հատուցում»: Հարկի այս տեսակի լավագույն բնորոշումը կա ալ-Մավերդիի մոտ. «Ինչ վերաբերում է գլխահարկին, ապա այն իջեցվում է ըստ շնչերի եւ անունն էլ ծագում է «ջեզա» - հատուցում քառիջ՝ գինմիների անհավատության համար վճարի իմաստով, այնպես որ մենք այն նրանցից հավաքում ենք ի նշան նվաստացման կամ որպես վարձատրություն նրանց կյանքը խնայելու համար»:

Հետևելով Աբու Յուսուֆին՝ ալ-Մավերդին նշում է, որ գլխահարկը զանգված է «միայն բանակառություն ունեցող տղամարդկանցից, քայց ոչ կանանցից, հոգեկան հիվանդներից և ստրուկներից»: Գլխահարկը զանգված էր տարեկան մեկ անգամ, տարեվերջին¹⁵:

Հետաքրքիր է, որ գլխահարկի ենթակա ոչ-մուսուլման հպատակները գլխահարկի հետ միասին պարտավոր էին կատարել այլ պարտականություններ, որոնց մի մասը. ինչպես հավաստում է Աբու Յուսուֆը, կրում է պարտադիր, մի մասն էլ՝ ցանկալի բնույթ:

Հիմնական պարտավորությունները վեցն էին: Չիմմիները պարտավոր էին՝

- 1) չպարսավել Ալլահի գիրքը՝ Դուրանը և չանվանարկել այն,
- 2) չանվանել Ալլահի մարգարեին խաբեբա,
- 3) չարատավորել մուսուլմանական հավատը,
- 4) չամուսնանալ մուսուլմանի հետ,
- 5) չզայթակրել մուսուլմանին իր հավատից հրաժարվելու,
- 6) չօգնել մուսուլմանների հետ կռիվներին:

Հետաքրքիր են արար գործարարների կնքած պայմանագրերը Անտիքի, Սիջազետքի, Հայաստանի և Վրաստանի քաղաքների հետ: Այդ պայմանագրերը թեև ունեն ընդհանրություններ, այնուհանդերձ, ունեն նաև ամեն

մի երկրին հատուկ կետեր, որոնք մուսուլման կարևոր են տարրեր երկրների պատմության ուսումնասիրման համար:

Վերին Միջագետքի Ռակկա քաղաքի բնակիչների հետ կնքված պայմանագրում ասվում է, որ այն տրվել է Ռակկա քաղաքին. նրա բնակչության ունեցվածքի և եկեղեցիների ապահովության համար. որոնք չպետք է ավերվեն, բնակչությունը պիտի վճարի գլխահարկ և հավատարիմ լինի արաբներին: Նման բովանդակություն ունի նաև Եդեսիա քաղաքի հետ կնքված պայմանագրի տեքստը¹⁶:

Ջառահ բեն Աբդուլլահ շիրմի գորավարը երբ նվաճում է Թիֆլիս քաղաքը, պայմանագիր է կնքում նրա բնակչության հետ, ըստ որի քաղաքում գտնվող երկու մեծ հողակտորների և խաղողի այգիների նկատմամբ լրիվ պիտի տրամադրվեն մուսուլմաններին¹⁷:

Այսպես, երբ Մրվանը արշավում է Հայաստան, նրա շրջաններից մեկի բնակչության հետ պայմանագիր է կնքում, ըստ որի նրան պիտի տրամադրվեն գեղեցիկ «սև մազերով և հոնքերով և երկար թարթիչներով 50 սպասուհի և 50 սպասավոր»¹⁸:

Իրավական շատ նորմերի հետ մեկտեղ հանգամանորեն մշակվեց նաև հողային իրավունքը հայտնի օրենսգետ Աբու Յուսուֆի կողմից: Հողային սեփականության և իրավունքի մասին հանգամանորեն խոսում է նաև այ-Քալազուրին իր «Երկրների նվաճման գրքում»: Նա գրում է, որ «բոլոր մարդիկ անհավատներից, որոնց հետ իմանք խաղաղության դաշն կնքել. պայմանով. որ նրանք ընդունեն իր իշխանությունը, ապսվինեն իր երդում հավատարիքին ու խարաջ վճարեն, համարվում են զիմմիներ, և նրանց հողերը դառնում են խարաջի ենթակա հայեր»:

Այսպիսով, քրիստոնյա ազգաբնակչության իրավական վիճակի ձևակերպումը մահմեդական իրավագիտության մեջ առաջին հերթին բխում էր խալիֆայության շահերից և նպատակ ուներ ամրացնելու խալիֆայության դիրքերը նվաճված երկրներում:

GAYANE MKRTUMYAN

THE LEGAL STATUS OF CHRISTIAN COMMUNITIES IN MOSLEM LAW

(Summary)

A number of countries with various degrees of social-economic development were included in the Arab Caliphate. The Moslem jurisprudence established special guiding principles for treatment with the peoples of conquered Christian countries. In this respect the "The book of the taxes" of Abu Yusuf (8th century), "The book about the State taxes" of Al-Maverdi (9th century), "The book of the

conquest of countries" of Al-Balazuri are of great interest. They contain valuable information about the policy of the Arab conquerors in the Christian countries.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒՄՅՈՒՆՆԵՐ

1. И. П. Петрушевский, Ислам в Иране, Москва, 1966, с. 166.
2. Ալ-Բալազուրիի, Քիրար-ուլ-ֆերրիի իլ-րուլան, Կահիրե, 1957, էջ 67:
3. В. Гиргас, Права христиан на Востоке по мусульманским законам, Спб., 1865, с. 11.
- 4 Ա. Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1968, էջ 286:
5. Ալ-Բալազուրիի, նշվ. աշխ., էջ 89:
6. Լճորը հավաքար է 24 կգ:
7. Самуел Анеци, Собрание из сочинений историков, Вагаршалат, 1869, с. 57.
8. Гиргас, ук. соч., с. 67-68.
9. М. Караулов, Основы мусульманского права, Тифлис, 1891, с. 7, А. Массе, Ислам. Очерк истории, Москва, 1961, с. 88.
10. Н. А. Медников, Палестина от завоевания ее арабами до крестовых походов по арабским источникам, СПб., 1897, т. 4, с. 1307.
11. Ալ-Բալազուրիի, նշվ. աշխ., էջ 165, 178, 195:
12. Ա. Ն. Տեր-Նոնդյան, Հայ ժողովրդի իրավական վիճակը խալիֆայության տիրապետության մեթոդ, «Լրարեր հաս. գիտ.», Երևան, 1975/4, էջ 77:
13. Ա. Ն. Տեր-Նոնդյան, Արարական ամիրայությունները Հայաստանում, Երևան, 1965, էջ 310:
14. Ал-Мавердий, Православный палестинский сборник, вып. 2, СПб., 1897, с. 24.
15. Ал-Мавердий, ук. соч., с. 26.
16. Ալ-Բալազուրիի, նշվ. աշխ., էջ 127:
17. Ալ-Բալազուրիի, նշվ. աշխ., էջ 135:
18. Ալ-Բալազուրիի, նշվ. աշխ., էջ 127:

**ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԿՐՈՆԱԳԻՏՈՒՄ ԵՎ ՅՈՒՆ**

ՅՈՒՆ Ի ԱՆՏՈՆՅԱՆ

ՍՈՒՐԲԱ ՄԱՐԳՍԻ ՊԱՇՏԱՄԱՆԻ ԿՐԹԻ ԸՆԴՈՒՄ

Սր. Սարգսի անունը այլ սրբերի անունների շարքում հաճախ հանդիպում է բուժիչ նշանակություն ունեցող մոզական աղոթքներում: Հայտնի են մի շարք աղոթքներ, որտեղ Սր. Սարգիսը ներկայանում է որպես «բող ձիավոր», որը ազատում է ցավից, հիվանդություններից, օգնում է ծննդկաններին, կամ առասպելական դեղ է հայթայթում հիվանդի համար (օձի կաթից պատրաստած): Այս փաստը մղում է Սր. Սարգսի պաշտամունքն ավելի խորը ուսումնասիրելու՝ փորձելով նրա առասպելաբանական կապը հայտնաբերել հայ բուժող ժեսարների ինստիտուտի հետ: Հայոց տոմարական ծիսաշարում Սր. Սարգսին նվիրված է հատուկ տոմարակատարություն, որի նշելը որոշ շրջաններում շարունակվում էր մի ամբողջ շաբաթ՝ Այս շաբաթվա ընթացքում պատ էին պահում, ուխտի էին գնում, փոխինձը խառնում էին մեղրով ու ուտում, փոխինձից մի որոշակի քանակ դնում էին կամ տան անկյունում կամ դռան հետևը, որպեսզի Սր. Սարգսի ձիու պայտը դիպչի և սրանով առատություն բերի տանը: Այդ նույն փոխինձի մնացորդներով առավելապես գուշակություններ էին անում տվյալ տարվա բերքատվության մասին: Ուրբաթ օրը երիտասարդ աղջիկներ ու տղաներ ամբողջ օր պատ պահելով երեկոյան ուտում էին այսպես կոչված «աղի բլիթը», որպեսզի գիշերը երագում իրենց նշանածին տեսնեն՝ ջուր մատուցողի կերպարով: Սր. Սարգսին նվիրված շաբաթվա ընթացքում գույություն ունեին մի շարք արձեթքների գուլի վանալու, լվացք անելու, բուրդ գզելու, ճախարակ մանելու, ծանր աշխատանքներ կատարելու վերաբերյալ: Ասում էին, որ նույնիսկ եղջերուն այդ օրը տեղից չի շարժվում, քե չէ մազերը կթափվեն²:

Ըստ ուսումնասիրողների՝ Սր. Սարգիսը հանդես է գալիս որպես հողմի և փոթորկի ոգի, ամուսնության և պտղաբերության/հողագործության հովանավոր, Արա Գեղեցիկի քրիստոնեացած հաջորդը³: Ստորև փորձ է արվում նոր տվյալների ներգրավմամբ լայնացնել ու հարստացնել այս համահայկական սրբի կերպարը:

Առաջին հերթին աչքի է զարնում Սր. Սարգսի հատկությունների և գործառնությունների երկվությունը: Այսպես, մի խումբ տվյալներ Սր. Սարգսին դասում են վիշապամարտիկ և ամպրոպամարտիկ աստվածների շարքը: Օրինակ, աղոթքներում նա հանդես է գալիս որպես ձիավոր, որը Սր. Գևորգի հետ միասին (կամ նույնիսկ միայնակ) օձ է սպանում, հիվանդին դեղ հայթայթելու նպատակով: Այդպիսին է, օրինակ, Բարբերդի հայերի մեջ հայտնի աղոթքի տարբերակը.

«...Դժողքին դունն անցուր, դրախտին դուռը ցցուր.

Իմ հոգին այ հոն հանգուստ

Սուրբ Սարգիս գորավարին, Սուրբ Գևորգ ձիավորին,

Սև օձ յունեցին, կթեցին, մերեցին. սև ձձում զարկեցին.

Սև կարագ հանեցին, չար աչից դեղ էրին...»⁴

Ավանդազույցներում նույնպես Սր. Սարգիսը օձ է սպանում, քարացնում. պայքարում է առասպելական Ուշաբ (Վիշապ) թագավորի դեմ, կամ նրա ձին պայտավ աղբյուր է առաջացնում, ինչը կարող է դիտվել որպես օձամարտի առասպելի եզրակակիչ մաս⁵: Ժողովրդական ծեսերում գյուղացին դիմում է Սր. Սարգսին, երբ ցանկանում է դադարեցնել կարկուտը⁶: Կերպարի այս կտրվածքը ընդհանուր բնութագրիչներ ունի ամպրոպամարտիկ աստծո՝ քրիստոնեական այլ մարմնավորումների հետ՝ ի դեմս Սր. Գևորգի, Եղիա մարգարեի և, վերջապես, Քրիստոսի⁷:

Մյուս կողմից, տվյալների մեկ այլ խումբ այլ պատկեր է ներկայացնում: Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմության» մեջ բյուզանդական կայսերն ուղղված Ներսես եպիսկոպոսի նամակում մի այսպիսի դրվագ կա. «Մի վաղը էլ խասնք առաջավորաց՝ մեր կողմից պաս կռվածի մասին, որին դուք տգիտաբար հայեցում եք՝ էլ և փոքրիկ շուն ունեցող ոմն կախարդ Սարգսի ասելով»⁸: Անտիոքյան ժողովի որոշումների վրացական թարգմանությունում հայերի մեջ հեթանոսության տարրերը նշելիս հաստակ շեշտ է փոխում Սուրբույ՝ Սարգսի պաշտամունքի վրա⁹: Այստեղ հատկանշական է և Սարգսի «կախարդ» մականունը, և էլի ու շան հիշատակումը որպես նրա ատրիբուտներ:

Դիտարկենք այդ ատրիբուտները: Էշը նշանակալի դեր է խաղացել միջնադարյան բուժարվեստում, ընդ որում, բոլոր դեղամիջոցները ակնհայտորեն մագական բնույթ ունեն: Ամիրդավլաթ Ամասիացու վկայությամբ, էլի մարմնի մասերը (կաշին, պայտերը, լյարդը) թախամանների տեսքով թույություն էին տալիս ընկնավորներին, կամ կարիճի կողմից խայթվածներին¹⁰: Ընկնավորություն բուժումը, սովորաբար, ավանդական բուժողների մասնագիտացման շարժաններից մեկն է: Հին աշխարհում էշը կապված էր մեռնող և հարություն առնող աստծու հետ (Խնմտ. էլի դերը հռոմեական սատուրնալիաներում, նրա կապը արևային աստծու հետ Եգիպտոսում, և այլն)¹¹: Հին հայերի մեջ, հավանաբար, էշը նույնպես պաշտամունքային նշանակություն ուներ: Թուրք ճանապարհորդ Էվլիա Չելեբիի վկայությամբ,

Խարբերում քրիստոնյա տեղացիների (այսինքն հայերի) մեջ տարածված էր լեզունը. ըստ որի նրանք հնուց էլ են պաշտել: Բացի այդ, Խարբերողի լինելը վրա կառուցված վանքում իբր թաղված է մումիացված «սսկեփայլ քուրծով մի ավանակ»¹³: Հայտնի են նաև էջի կերպարի հետ կապված հայկական ծեսեր՝ հմմտ. օրինակ, «Քշու պարը» քարեկենդանին, կամ էջի մասնակցությունը անձրևաբեր ծեսերում¹⁴: Կարելի է ենթադրել, որ այստեղ մենք գործ ունենք արևային մեռնող-հարություն առնող աստծու կերպարի մի սինվոլի հետ, սակայն ճշգրիտ եզրակացություններ անելու համար այս տեղեկությունները ակնհայտորեն պակաս են:

Բացի դրանից, էջը ուներ մեկ այլ հիպոստոսիս: Նույն Եգիպտոսում էջը հանդես է եկել միաժամանակ և որպես ծագող արևի խորհրդանիշ, և որպես Սեթ աստծու մարմնավորում¹⁵: Վերջինս չար, ստորերկրյա աշխարհի հետ սերտ կապ ունեցող վիշապակերպ աստվածների շարքին է պատկանում: Ստեփանոս Օրբելյանի «Մյունիքի պատմություն» մի դրվագում, քահանան էջը թամբած անցնում է գետի միջով, երբ էջը հանկարծ աստանայի տեսք է ընդունում, և փորձում քահանային գայթակղել: Վերջինս սանձահարում է նրան¹⁶: Այստեղ հետաքրքրական է, որ սատանան (էջը) հանդես է գալիս ջրի հետ կապված: Դա հիշեցնում է վիշապամարտի մոտիվը, քանի որ քրիստոնեության հետ կապված կերպարները հաճախ հանդես են գալիս վիշապամարտի կամ օձամարտի կերպարով (տես՝ սրբերի մասին ասվածը, ինչպես նաև Լ. Արրահամյանի վերոհիշյալ հոդվածը՝ Քրիստոսի վերաբերյալ¹⁷): Իսկ օձը/վիշապը և սատանան քրիստոնեական գաղափարախոսության մեջ, ինչպես հայտնի է, նույնացվում էին:

Սուրբ Սարգսի պաշտամունքի մեկ այլ քաղաքիչ, այն է՝ հողմի և փոթորկի ոգի լինելը ակնարկում է նրա կապը վիշուպ-օձի հետ: Ըստ Մ. Արեղյանի ուսումնասիրության, հայկական հավատալիքներում հողմի ու փոթորկի մարմնավորումն էր հենց վիշապը¹⁸: Իսկ Եզնիկ Կողբացին վիշապին ներկայացնում է որպես գրաստային անասնի տեսք ստանալու ունակությամբ ունեցող մի էակ¹⁹: Սբ. Սարգսի կապը ջրի հետ (վիշապի հատկություն) երևում է նաև վերը նկարագրված երազի միջոցով նշանածի գուշակության ծեսից:

Վերը նշվածից ենթադրելով, որ օձամարտի լինելով՝ Սբ. Սարգսը մինևույն ժամանակ կրում է նաև հենց ջրին տիրացող վիշապի հատկանիշները, համեմատենք Սբ. Սարգսի կերպարին համապատասխանող աստվածությունը հնդեվրոպական այլ ժողովուրդների մեջ գործառնություն ունեցող աստվածների հետ: Խոսքը վերաբերում է այսպես կոչված «հիմնական առասպելի» հերոսներից մեկի՝ ամպրոպի աստծու հակառակորդ աստվածությանը (հնդեվրոպական *wel-), որը օձի կամ վիշապի տեսքով սպանվում է աստծու կողմից, ինչի հետևանքով առաջանում է կենսատու աղբյուր կամ ինքը կյանքը՝ բույսերի, հատկապես, դեղաբույսերի տեսքով²⁰: Հետևաբար, առասպելաբանական համատեքստում հենց այս աստվածության հետ

են կապված բուժելու և կախարդանքի ունակություններին տիրապետելը և քաշխելը:

Մյավոնական առասպելաբանության մեջ այս կերպարի ժառանգն է Վեյես/Վոլուս աստվածը: Նրա պաշտամունքը հետագայում պահպանվել է քրիստոնեական մի շարք արքերի կերպարներում, որոնցից ամենանշանավորն է Սուրբ Նիկոլան²¹: Փորձենք դիտարկել Նիկոլա/Վեյեսի և Սբ. Սարգսի նմանությունները:

Նիկոլա-Վեյեսը հավանավորում է տան անասունին: Սբ. Սարգսի հետ ամենավառ նմանություններից մեկն է այն, որ երկուսին էլ ուղղված են այսպես կոչված գեկկապի աղոթքներ²², նման նույնիսկ կառուցվածքով: Նիկոլա-Վեյեսը սերտ կապված է երկրագործության հետ, որն արտահայտվում է նրան նվիրված ծեսերում ցորենի ու այլ բույսերի դերի և նրա լիություն ու առատություն պարգևելու ունակության մեջ²³: Նույնը կարելի է ասել Սբ. Սարգսի սուրբ ուղեկցող ծեսերի մասին: Փոխհնձից պատրաստված ծիսական ուտեստը, փոխհնձի շաղ տալը դրան առջև, որպեսզի գիշերը նրան դիպչի սրբի ձևու պայտը, որը լիություն է բերելու տան տիրոջը, այս ամենը թույլ են տվել ուսումնասիրողներին եզրակացնելու, որ Սբ. Սարգսիսը պտղաբերության մի աստծու քրիստոնեացած հաջորդն է:

Հատկանշական է դիտվող ռուս և հայ արքերի կապը բուսականության հետ, որն արտահայտվում է նաև մագերի, հյուսելու, քել մանրու գաղափարների հետ: Սբ. Սարգսի պասի ժամանակ արգելվում էր գլուխ վանալը և ճախարակ մանելը: Նույնը նկատվում է Նիկոլայի հետ կապված ծեսերում²⁴:

Նիկոլա/Վեյեսի առնչությունը բշկության և թավության հետ արտահայտվում է մի շարք փաստերում: Օրինակ, հայտնի են ավանդություններ, որտեղ Նիկոլան միաձուլվում է կախարդի (ռուս. *сортас*) կերպարի հետ, որը բուժում է հիվանդներին: Պետք է նշել, որ ինքը՝ *сортас* տերմինը ստուգաբանորեն առնչվում է Վեյես/Վոլուս դիցանվանը²⁵: Հիշենք այստեղ Սարգսի «կախարդ» մականունը, նրա ատրիբուտների՝ էչի և շան²⁶ կապը բշկության հետ, Սարգսի անվան հիշատակությունը բուժիչ աղոթքներում:

Սբ. Սարգսի՝ ամուսնության հավանավոր լինելը (նրա տունը նշանածին գուշակելու հնարավորություն էր տալիս) համադրելի է Նիկոլայի նույն հատկանիշի հետ, որն արտահայտվում է այդ սրբի հիշատակմամբ ուսական հարսանեկան երգերում²⁷: Բ. Ռուպենսկու աշխատության մեջ շեշտվում է Նիկոլա-Վեյեսի կապը արջի պաշտամունքի հետ: Յույց է տրվում, որ արջը Վեյեսի կենդանակերպ մարմնավորումներից մեկն է: Հայկական նյութը այս առումով ևս հնարավորություն է տալիս համեմատություններ անելու: Մինչև օրս Հայաստանի տարբեր վայրերում պահպանվել են գրույցներ, որտեղ արջը հանդես է գալիս իբրև երիտասարդ աղջիկներ առևանգող անտառի տեր²⁸: Հայկական ավանդություններում հաճախ արջը օգնում է մարդկանց, հատկապես, ծառայություններ է մատուցում ինչ-որ վանքի կամ հե-

տագայում սուրբ դարձած վանականի, որի շնորհիվ մահվանից հետո նրա գերեզմանատեղը բուժիչ հատկություններ է ձեռք բերում՝ բուժում է հատկապես հիվանդ անասունները²⁹։ Խիստ հատկանշական է, որ ավանդություններից մեկում այսպիսի մի արջ թաղվում է հենց Սբ. Սարգսի մատուռին անմիջապես կից։ Մեկ այլ արցախյան ավանդություն պատմում է մի արջի մասին, որը կայծակնահարվել է և նրա մահվան վայրում աղբյուր է առաջացել, որը բուժիչ ուժ ունի³⁰։ Ավանդությունը իր կառուցվածքով կրկնում է հնդեվրոպական «հիմնական առասպելը», ընդ որում *wel- արմատով կապվող կերպարի փոխարեն հանդես է գալիս արջը։ Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ արջի պաշտամունքը հաղորդակցվում է Սբ. Սարգսի և նրա նախորդող աստծո պաշտամունքի հետ։

Քերենք նաև Նոր Նախիջևանի հայերի մի ավանդությունը Սբ. Սարգսի մասին։ Այն ներկայացնում է սրբին իբրև մի աղանդավոր (հմմտ. «կախարհ» մակամվան հետ), որը շան ուղեկցությամբ շրջում է գյուղերով՝ իր աղանդը տարածելով։ Ամեն տեղ նա իրենից առաջ ուղարկում է իր շանը, որպեսզի իր գալու մասին իմաց տա ժողովրդին և իրեն պատշաճ կերպով ընդունեն։ Սակայն մի անգամ ճանապարհին գայլը հռչատում է շանը և անտեղյակ մնացած բնակիչները ընդունելություն չեն կազմակերպում։ Սարգիսը զայրանում է և իր զոհված շան հիշատակին հրամայում է պաս պահել, որը հայերի առաջավորաց պասն է³¹։ Այսպիսով, Սբ. Սարգսի պատվին պահվող պասը ներկայացված է որպես իր շան հիշատակին նվիրված պաս։ Եթե ենթադրենք, որ շունը մարմնավորում է հենց իրեն՝ Սարգսին, ապա շան սպանության (և նրա շնորհիվ՝ ծնսի առաջացման) մեջ կարելի է տեսնել «հիմնական առասպելի» մի հետավոր արձագանքը։

Այսպիսով, մեզ քվում է, թե հնարավոր է որոշ եզրահանգումների գալ։ Սբ. Սարգսի պաշտամունքի մեջ պտղաբերության, հողագործության, միս-ծամանակ մեռնող և հարություն առնող աստվածության տարրերը բնութագրում են աստվածության հիպոտետախնդրից մեկը։ Սբ. Սարգսի անվամբ հանդես եկող աստվածությունն ըստ իր մոտավոր բնութագրի ավելի քաղմանշանակ է։ Ենթադրաբար, դա սլավոնական Վելես/Վոլոսի կարգի մի աստվածություն է, որը հակառակորդի դիրքում է գտնվում ամպրոպի աստծո նկատմամբ։ Հնարավոր է, որ այս աստվածը սկզբնապես գլխավոր դեր էր խաղացել պանթեոնում, իսկ հետո իր տեղը զիջել ամպրոպի աստծուն (նույնը, հավանաբար, տեղի է ունեցել և սլավոնական ժողովուրդների մոտ)։ Քրիստոնեության մեջ Քրիստոսը և որոշ սրբեր (օրինակ, Սբ. Գևորգը) ստանձնել են ամպրոպարտիկի գործառնությունը, և Սբ. Սարգիսը ևս, մնալով համաժողովրդական նշանակության սուրբ, ներառել է օժա/վիշապամարտիկի որոշ հատկանիշներ³²։ Սակայն ինքը՝ պաշտամունքը հակադիր է մնում, հավանաբար, քրիստոնեական գաղափարախոսությանը (դա էր, ըստ երևույթից, պատճառը, թե ինչու քրիստոնեության հայրերը մոլի կերպով մեղադրում էին Սարգսին պաշտողներին հեթանոսության մեջ)։ Քանի որ Սբ.

Սարգսի նախորդը կապված էր բուժման ու մոգության հետ, կարելի է ենթադրել, որ նրա պաշտամունքում եղել են մոգության, բուժման, քովչության մեջ մասնագիտացող ծիսարարներ, թեև այս ենթադրությունը կարիք ունի հետագա հիմնավորման:

ՄԻ ԼՐԱՑՈՒՄ

Հոդվածն արդեն հանձնված էր տպագրության, երբ մենք ծանոթացանք ր.գ.յ. Ա.Պետրոսյանի աշխատություններին, որտեղ նա Արա Գեղեցիկի անվան և կերպարի մի բաղադրիչը հանգեցնում է հնդեվրոպական *wel- դիցանվանը (< հայ. գեղ-, արից նաև Գեղամ և Անգեղ դիցանունները, և այլն), տե՛ս հատկապես А.Петросян, Отражение индоевропейского корня *wel- в армянской мифологии, Լրաբեր հասարակական գիտությունների, 1987/1, նաև նույնի «Արա Գեղեցիկ և Սուրբ Սարգիս. հեթանոսական աստվածն ու նրա քրիստոնեական հետնորդը» (տպագրության մեջ):

YULYA ANTONYAN

TOWARDS THE WORSHIPPING OF ST.SARGIS

(Summary)

The author tries to investigate the cult of one of the most worshipped Armenian saints, Surb Sargis (Saint Sargis). So far Surb Sargis was classified as a deity of fertility and marriage, who was at the same time a patron of winds. However, the involvement of some new data allows us to enlarge his characteristics. In traditional folklore Surb Sargis reveals himself as a bifunctional god. Some features (snake-fighting, patronage of winds and hail) classify him as a Christianized version of the Thunderer, the others (connection with fertility, vegetation, water, healing, bear cult, death and resurrection) are properties of another deity, the serpent, adversary of the Thunderer, killed by him (Indo-European *wel-). The Slavic Volos/Veles corresponds to this god. His Christian counterpart is Saint Nikola. If compared, Veles/Nikola and Surb Sargis are evidently analogous in their functions and related rituals. This might suggest that Surb Sargis' pagan prototype was a descendant of IE *wel-. Later he assumed some basic features of the thunder god, as main Christian saints, including Christ did.

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ Սր. Սարգսի վերաբերյալ տե՛ս օրինակ, Ազգագրական Հանդեսներում զետեղված Բորչալուի, Երրակի, Վարանդայի, Գամձակի, Վասպուրականի, Նոր Նախիջևանի նյութերը: Ցավոք, սույն աշխատության ծավալը և բնույթը հնարավորություն չեն տալիս ավելի մանրամասն անդրադառնալու Սր. Սարգսին ուղղված աղոթքների կառուցվածքին և բովանդակությանը:
- ² Լալայան Ե., Վարանդա, Երկեր, հատոր 2, Եր., 1988, էջ 194-195:
- ³ Տե՛ս Արեղյան Մ., Հայ ժողովրդական հավատքը, Երկեր, հ. է. Ե., 1975, էջ 78-82, Մատիկյան Ա., Արա Գեղեցիկ, Վիեմնա, 1930, 153-170; Աղոնց Ն., Հին հայոց աշխարհայացքը, Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948, 289-292; Վահանյան Գ., Արա Գեղեցիկի պաշտամունքը, Եր., 1944, 63-68; Բորչյան Վ.Ն., Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972, էջ. 444, 447:
- ⁴ Հայկունի Ս., Ժողովրդական երգ, ասած, ասած, համելուկ, երդում, օրհմանք, ամենք և այլն, Էմինյան Ազգագրական ժողովածու, հատոր 2, Մոսկվա-Լադիս-Ղապատ, 1906, էջ 305:
- ⁵ Ղանալանյան Ա.Տ., Ավանդապատում, # 94, 95, 792, Եր., 1969:
- ⁶ Լալայան Ե., Վարանդա, Երկեր, հատոր 2, Եր., 1988, էջ 192-193, Բորչալուի գավառ, Ազգագրական Հանդես, X գ., Թիֆլիս, 1903, էջ 249:
- ⁷ Абрамян Л. А., Христос как змеёборец: церковная традиция и память художника, в книге: Мифологические представления в народном творчестве (сборник статей), М., 1993, с. 165-179.
- ⁸ Կիրակոս Գամձակեցի, Հայոց Պատմություն, Եր., 1982, էջ. 111-112:
- ⁹ Ծաղկաբոյսի տեսակ (այս մականունը քերես ակնարկում է Սուրբ Սարգսի կապը քրտականության հետ):
- ¹⁰ Вирсаладзе Е. В., Грузинский охотничий миф и поэзия, М., 1976, с.144.
- ¹¹ Амирдовлат Амасиаци, Ненужное для неучей, М., 1990, с.218-219.
- ¹² Мифы народов мира, Осел, том 2, М., 1992, с.264.
- ¹³ Էվիա Չելբի, Ուղեգրություն, Եր., 1967, էջ 161:
- ¹⁴ Բորչյան Վ.Ն., նշվ. աշխ., էջ 447:
- ¹⁵ Мифы народов мира, Осел, с.264.
- ¹⁶ Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Եր., 1986, էջ 92:
- ¹⁷ Абрамян Л.А., указ. соч.
- ¹⁸ Արեղյան Մ., նշվ. աշխ. 66-67:
- ¹⁹ Եզմինկ Կորթաջի, Եղծ աղանդոց, Եր., 1970, էջ 79:
- ²⁰ Топорова В.Н., Заметки о растительном коде основного мифа (перец, петрушка и т.п.), Балканский лингвистический сборник, М., 1977, с.196.
- ²¹ Успенский Б.А., Филологические разыскания в области славянских древностей, М., 1982.
- ²² Արեղյան Մ., նշվ. աշխ., էջ 93:
- ²³ Успенский Б.А., указ. соч., с.76.
- ²⁴ Успенский Б.А., указ. соч., с.176.
- ²⁵ Успенский Б.А., указ. соч., с.76.
- ²⁶ Տունը, շամ միսը ժողովրդական հավատալիքներում հանդես է գալիս որպես վախից և չար աչքից բուժող դեղամիջոցներից մեկը: Թերևս սխալ չէր լինի հիշել

Մովսես Խորենացու մոտ հիշատակվող արաբացիների՝ շան կերպարանքով էակների մասին, որոնք վերջերս լիզելով, կենդանացնում էին գոիվածներին:

- ²⁷ Успенский Б.А., указ. соч., с.76.
- ²⁸ Անտոնյան Յու.Ա., Դաշտային նյութեր, Վայոց Ձոր, 1996 (իմն. ման ավանդության համաձայն Ար. Մարգարի կողմից հունական բազավորի դատեր ստանգումը):
- ²⁹ Դանալանյան Ա.Տ., Ծշվ. աշխ., # 538 ա.թ.գ: Կիրակոս Գանձակեցի, Ծշվ. աշխ., էջ 53: Лисицян С. Д., Армяне Нагорного Карабаха, Е., 1992, с.149.
- ³⁰ Лисицян С.Д., указ. соч., с.144.
- ³¹ Շահազիզ Ե., Նոր-Նախիջևանը և մոր-մախիջևանցիք, Ազգագրական հանդես, IX գիրք, Թիֆլիս, 1902, էջ 15: Այս գրույցի հունական ու ռումինական տարբերակները, ինչպես նաև Ար. Մարգարի վերևում հիշված «փորքիկ շան» վերաբերյալ տեղեկությունները ընճարկվել են Մատիկյանի, Արտնցի, Բախանցյանի հղված աշխատություններում (Արա Գեղեցիկի կերպարի առնչությամբ):
- ³² Տե՛ս մույնանճան գործընթացը կապված ռուսական Գեորգիի, Բլյայի և Նիկոլայի հետ (Успенский Б.А. указ. соч., с.68):

ԱՄԱՆ ԳՐԲՈՅԱԼ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԿԱԶՄԱՎՈՐՎՈՂ ԳՐԱԿԱՆ ԶՐԴԵՐԵՆԻ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՈՃԻ ՄԻ ԶՄՆԻ ՀԱՐՑԵՐԻ ԸՈՒՐՋ**

Գրական քրդերենի զեղարվեստական ոճը ձևավորման ու հարստացման լայն հնարավորություններ ձեռք բերեց և զարգացման նշանակալից աստիճանի հասավ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո իր կայուն դիրքը հաստատելով գրական լեզվի մնացած երեք հրապարակախոսական, պաշտոնական և գիտական ոճերի շարքում¹։ Լեզվամյութի ոճական ու քերականական միջոցների ընդարձակ հնարավորությունների առկայությունը պայմաններում այն մեծ և չափազանց կարևոր դեր է կատարում մյուս ոճերի հարստացման, դրանց փոխհարաբերությունների աշխուժացման, հստակեցման ու ծավալման գործում՝ նպաստելով գրական լեզվի ամբողջական կազմավորմանն ու զարգացմանը։ Նրա կազմավորման համար անսպառ աղբյուր են հանդիսացել ու հանդիսանում այսօր, նախ և առաջ, առօրյա խոսակցական լեզվի ու ժողովրդական քանակաբանության բազմա-տեսակ ժանրերը, նրանց բազմաբովանդակ հարուստ լեզվամյութը, պատկերավոր մտածելակերպի միջոցներն ու հնարավորությունները։ Գեղարվեստական ոճի կազմավորմանն ու նշանակալի զարգացմանը շարունակում է նպաստել նաև թարգմանչական գրականությունը, որի բացառիկ դերը նրա հարստացման ու մշակման գործում կայանում է ոչ միայն լեզվի հարուստ քառասյալարի, քերականական ու ոճական միջոցների ամբողջ բազմազանության լայն ներգրավման ու կիրառման մեջ, այլ նաև նրան բազմազան մոր ոճական միջոցների ու պատկերավոր զեղարվեստական մտածելակերպի մոր հնարավորություններ փոխանցելու ուղղությամբ։ Հայ և ուսու դասական ու ժամանակակից գրականության բարձրարժեք նմուշների քրդերեն լեզվով թարգմանությունները, մասնավորապես, իՍ. Արտվյանի «Վերջ Հայաստանի» վեպից հատվածներ (թարգմ. Հ. Ջնդիի)², Հով. Թումանյանի «Գիջրո» (թարգմ. Ա. Ավդալի, Հ. Ջնդիի), «Ամուշ» պոեմը (թարգմ. Գրամբյանի)³, Մ. Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունը (թարգմ. Հ. Ջնդիի)⁴, «Մանկության օրեր» բանաստեղծությունը (թարգմ. Մ. Ասադի)⁵, Հ. Հակոբյանի «Մեկ էլ, մեկ էլ» բանաստեղծությունը (թարգմ. Ռ. Դրամբյան-

նի)⁶ հեղափոխության մեծ երգիչ Չարենցի «Ընկերներ», «Համայնական արտերի սերմնացաններ», «Լենինն ու Ալին» (թարգմ. Ա. Ավդալի)⁷, Հմ. Սի-րասի «Ամար», «Կյանքի կարոտ» (թարգմ. Ա. Ավդալի, Ջարդոն Գեմջոյի)⁸, Հրայրա Քոչարի «Խաչե» վիպակը (թարգմ. Հ. Ջնդիրի)⁹, Սարգենի «Լաթի-ֆե» պոեմը (թարգմ. Հ. Ջնդիրի)¹⁰, Ավ. Իսահակյանի «Քուրդ Ամոն» (թարգմ. Հ. Ջնդիրի)¹¹, Գ. Դեմիրճյանի «Արդուլը» (թարգմ. Ա. Ավդալի)¹², Հ. Կազար-յանի «Քուրդ Ամոնի պատմությունը» (թարգմ. Հ. Ջնդիրի ու Ա. Ավդալի)¹³, Գոր-կու «Երգ արծվի մասին» (թարգմ. Ղաչաղե Մրադի), Լեռմոնտովի «Փայս-տական» (թարգմ. Եկոն Հասանի), Լ. Ն. Տալստոյի «Կովկասի գերին» (թարգմ. Ղաչաղե Մրադի), Պուշկինի «Շմեռվա երեկոն» (Խաչիկե Մուրա-դի) և այլն¹⁴, ինչպես նաև երկու առանձին ժողովածուներ Պուշկինի չափա-ծու և արձակ գործերից (թարգմ. Ջասմե Ջալիլի) և «Նախահեղափոխական ոտու գրողները մանուկների համար ժողովածուն», որը պարունակում է Կ. Գ. Ուշինսկու, Ի. Ս. Տալբենևի, Լ. Ն. Տալստոյի, Վ. Մ. Գարշինի, Գ. Մ. Մա-մին-Սիբիրյակի, Ա. Պ. Չեխովի գործերը (թարգմ. Է. Բաբոնայի) և այլն, հրամայական պահանջ ստեղծեցին գեղարվեստական խոսքի մեջ ներառե-լու բանավոր, առօրյա խոսակցական, բանահյուսական ու խոսքի բարձր ս-ճին պատկանող լեզվական ու ոճական հսկայական գանձերը, այդ ոճերին բնորոշ պատկերավոր, գեղարվեստական մտածելակերպը արտացոլող բազմահարուստ ու բազմաբովանդակ միջոցները և այլն:

Խոսելով գեղարվեստական խոսքի նյութական բազայի մասին՝ անհրա-ժեշտ է ընդգծել նաև տարածուի դերը և դրանով պայմանավորված արդյու-նավետ ստեղծագործական աշխատանքի բարձր արգասիքները այս ոճի կազմավորման գործում, նրա կայացման ողջ ընթացքում: Մասնավորապես, իրենց տաղանդով, լեզվի ու նրա ոճերի խորը իմացությամբ, նրանց մշակ-ման ու կիրառման վարպետությամբ առանձնանում են բազմաթիվ գույն-գործոց ստեղծագործությունների հեղինակներ, այդ թվում՝ գրող Ա. Շամիլ-վը՝ «Ծվանե քուրդ» և «Դըմըլը»¹⁵ բարձրարժեք գործերով, որոնցից առաջի-նը պատմվածք է, իսկ երկրորդը՝ պատմավեպ, Ահմադե Սիբազին՝ «Իմ հիշ-դությունները», Չ. Բաբոն՝ «Ուժե Բոհորի», Հ. Ջնդիր՝ «Հավարի», Իսմաիլե Դուբոն՝ «Ջավազա Բեդլը», Վազիլե Նադրին՝ «Ռավա Ժրմե», Սիբոյե Ասա-ղը՝ «Սիսե» ու «Մարդար ու Կարե», Ա. Ավդալը՝ «Գյուլիզար» և այլն: Սրանց թվին ավելացնենք նաև մի շարք այլ ստեղծագործողներին, պոեմը հայտնի են իրենց մեծարժեք գործերով մեր պոեզիայի բնագավառում՝ Ասկյարե Բո-յիկին, Սաիլե Իբրային, Ազիտե Շամսիին, Սիբայեյե Ռաշիդին, Եկոն Հասա-նին, Ղաչաղե Մուրադին, Ֆերիկե Ռատրին, Սմեռե Շամոյին և այլն: Հատ-կանշական է, որ այս քուրդ գրողների ու բանաստեղծների ընդհանուր շար-քում նշանակալից տեղ են զբաղեցնում իրենց գեղարվեստական գործերով հայտնի, Հայաստանում քրդական մշակույթի, գրականության զարգացման մասնակից հայ լայնախոհ մտավորականներ շատախցի Հովակիմ Մար-գարյանը, որը քրդական միջավայրում հայտնի է եղել նաև Նուրի կամ եր-

բեմն Նուրի Հիզանի գրական ամուններով, պլաֆ. Ա. Խաչատրյանը, մանկավարժ Ս. Մովսիսյանը, որոնց գրչով ստեղծվել են քրդերեն լեզվի քերականությունները, գրողներ՝ Հ. Սկրտչյանը և Հ. Քաչարը, որոնք եղել են «Ռ-յա թագա» թերթի խմբագիրներ, բանաստեղծներ Սարմենը, Տարոնցը, մանկավարժներ Պետոյանը և Ռ. Դրամբյանը, որոնք Բուսիակ Մարագուլուի հետ միասին կազմել են քրդերեն լեզվի դասագրքեր, երկար տարիներ շարունակ աշխատել են «Ռ-յա թագա» թերթում իբրև թարգմանիչներ, կատարել են գեղարվեստական թարգմանություններ հայ և ռուս գրականություններից, որոնց թվին են պատկանում մասնաճյուղի քրդերեն լեզվով Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» և այլ գործերը:

Քրդերեն գրական լեզվի գեղարվեստական ոճին ընդարձակ տեղ է հատկացրել Հայաստանի քրդական մամուլը, որն իր ողջ գոյության ընթացքում եղել է այս ոճի տարածման, մշակման ու պրոպագանդան ղրջակակիրը: Այս ուղղությամբ գոյություն ունեցող առաջընթացի մեջ մեծ ավանդ ունի քրդական «Ռ-յա թագա» թերթը, որի էջերից մեկը մշտապես ծառայել է այդ ոճի ներկայացմանը, ավելին՝ վերջին տարիներին թերթը ձգտում է շրջանառության մեջ ներառել և լայն հրապարակ հանել այս ոճի դրվածքի ու քրդական միջնադարյան դասական գրականության անոթությունները, որոնց վտխարաթերություններն ու որոշակի օրգանական կապը:

Թերթը պարբերաբար լուսարանում է միջնադարյան գրականության ներկայացուցիչների արժեքավոր ստեղծագործությունները, այդ թվում՝ Անմադն Նաանիի, Մալան Ջզիրի, Ֆակիե Տայրայի, Ալի Հարիրի, Փարթավ բեկ Հակիարի և շատ ու շատ այլ դասականների ստեղծագործությունները, մատչելի դարձնելով նրանց այսօրվա հեղինակների և ընթերցողների լայն շրջանակների համար: Եվ մեկ քայլ գեղարվեստական ոճի զարգացման ճանապարհին հանդիսացավ «Ռ-յա թագա» թերթին կից ու նրա նախածեղծությամբ ստեղծված տերմինաբանական կոմիտեն¹⁶, որի շնորհիվ լեզվական ու լեզվաչինարարական որոշակի աշխատանք կատարվեց: Նշենք մասնաճյուղի լեզվաբանների որոշ ծանայությունները այս ոճի լեզվանյութի հարստացման ճանապարհին, մասնավորապես, մահացած, հնացած, շրջանառությունից դուրս եկած, եթե ոչ հազարավոր, ապա հարյուրավոր բառերի վերականգնմանը վերաբերող օրինաչափությունների քաջահայտման ուղղությամբ¹⁷: Գրական լեզվի գեղարվեստական ոճը այսօրվա դրությամբ զարգանում, աճում ու կիրառություն է գտնում հիմնականում իր գոյության չորս ձևերում, որոնց թվին են պատկանում.

1. Լիրիկական ստեղծագործության ենթատեսակ,
2. Էպիկական ստեղծագործության ենթատեսակ,
3. Էպիկական-լիրիկական ստեղծագործության ենթատեսակ,
4. դրամատիկական ստեղծագործության ենթատեսակ:

(Պետք է նշել, որ գիտական գրականության մեջ սովորաբար այս ձևերը կոչվում են գեղարվեստական ոճի սեռեր, սակայն մեզ թվում է, որ «ենթատեսակ»

տերմինը ավելի տեղին է, ցկատի ունենալով. որ մենք խոսքի տվյալ տեսակը ոճ ենք անվանում):

Այս չորս ենթաոճերով ներկայացվող հարուստ գրականությունը լայնորեն արտացոլում է լեզվի երեք մյուսական բնագավառների՝ քառային կազմի, դարձվածաբանության ու պարբերականի հարուստ շերտերը, մեծապես պարունակում է բարբառային նյութեր, ինչպես նաև մեծ քանակությամբ բառեր ու ոճական արտահայտություններ տարբեր երկրներում լույս տեսնող քրոյական գրականությունից ու մամուլից:

ASAN DRBOYAN

ON THE FORMATION OF LITERARY STYLE
OF KURDISH LANGUAGE IN ARMENIA

(Summary)

The developing Kurdish language which is based on the dialectal Kurdish, spoken by Kurdish population of Armenia, has acquired various opportunities for the formation of following four styles: public speech, official, scientific and literary. By this four styles Kurdish literature and press are being edited. The main problems concerning the conditions, contributing to the enrichment and realization of the literary style, are touched upon in this article.

As a result of the study it becomes clear that nowadays this style develops, enlarges and finds its appliance in the following four types of existence, namely, in Lyric, Epic, Epic-Lyric and Dramatic substyles.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գրական քրոնիկաների հիշյալ չորս ոճերի առաջին նկարագրությունը տեսնում ենք Մարտինի Խամո, Զրոյի լեզու, գրականություն, Երևան, «Լույս», 1999, էջ 165-190:
2. «Այնպիսի Մովսեսիան Հայաստանի քրոյական գրականության», ՀՄՄՀ ԳԱ հրատարակություն, Երևան, 1970, էջ 76:
3. Հովհաննես Թումանյան, «Գիրք», քարգմ. Ա. Ավրա, Հ. Ջնդի, Երևան, 1932: «Ամուշ», քարգմ. Ռ. Դրամբյան, Երևան, 1934, էջ 64:
4. Մ. Նարանդյան «Ազատություն», քարգմ. Հ. Ջնդի, «Ռյա քազա», 1969, N 18:
5. Մ. Նարանդյան, «Մանկության օրեր», քարգմ. Մ. Ասադի, «Ռյա քազա» 1979, N 23:
6. Հակոբ Հակոբյան, «Մեկ էլ մեկ էր», քարգմ. Ռ. Դրամբյանի, «Ռյա քազա», 1936, N 50:
7. Եղիշե Չարնեց, «Լեռնիմ ու Ալին», քարգմ. Սիբանի Ռաշիդ և Սալիդ Իրո, «Ռյա քազա», 1956, N 25:

8. Հմ. Սիրա, «Ամմար», «Երանքի կարոտ», քարգմ. Ա. Ավդալ, Ջարդոնի Գեմեո, «Լաքիֆն», Երևան 1936:
9. Հրայր Բոյար, «Խազն», քարգմ. Հ. Ջնդի, «Ույս քազա», 1933 N16:
10. Մարմն, «Լաքիֆն», քարգմ. Հ. Ջնդի, «Ույս քազա», 1936, N21:
11. Ավ. Իսահակյան, «Քուրդ Ամոն», Երևան, հայկեստհրատ 1955, էջ 68:
12. Գ. Դեմիրճյան, «Արդու», քարգմ. Ա. Ավդալի, Երևան, 1986:
13. Հ. Բազարյան, «Քուրդ Ամոնի պատմությունը», քարգմ. Հ. Ջնդի, Երևան, 1987, էջ 225:
14. Մովսեսյան Հայաստանի քրդերը. Մատենագիտություն (1920-1980), կազմեց Ջալին Ջալիլ, Երևան, 1987:
15. Ա. Շամիրով, «Դրնդն», «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1966:
16. Տերմինաբանական կոմիտեն ստեղծվեց 1989թ.:
17. Մաքսիմ Խամո, Քրդերեն լեզու, գրականություն, Երևան, «Լույս», 1999, էջ 198:

ԵՎԱՏԵՐԻՆԱ ԽԱՉԱՏԲԱՆ

**ՀԱՎԱՏԱՆԵՎՈՒԹՅԱՆ ԿՐՈՆԱՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ
ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԻ ՇՈՒՐՁ**

Յուրաքանչյուր կրոնի կարևորագույն պայմաններից մեկը նրանում իրական կամ մտացածին օրինակելի այնպիսի օբյեկտների առկայությունն է, որոնց մասին պատումները կոչված լինելով արտահայտելու տվյալ կրոնական մոլորության քարոզած գաղափարները՝ կհամապատասխանեն այդ կրոնի՝ կատարյալ մարդու մասին պատկերացումներին: Քաղմաստվածության պայմաններում որպես ընդօրինակման արժանի՝ հանդես էին գալիս քաղմասթիվ աստվածներ ու աստվածություններ, Հին Հունաստանում՝ այն հերոսները, որոնք, ըստ առասպելների, ծնված էին աստվածների և մարդկանց միջև ամուսնություններից: Քանի որ քրիստոնեության և իսլամի հիմքում դրված է հավատն առ միակ Աստված, և այլ աստվածների գոյությունը քացատված է, ուստի այս կրոններում որպես օրինակելի անձինք ներկայանում էին սրբերը՝ դիցաբանական կամ պատմական կերպարներ, որոնք իրենց ուջ կյանքն ի սպաս են դրել Բարձրալիմ ծառայելուն և այքի ընկել առանձնահատուկ աստվածապաշտությանը:

Քրիստոնեական ավանդություն կանոնակարգված սրբերին կարելի է տարադասել երկու խմբի՝ հանուն հավատքի իրենց կյանքը զոհած նահատակների և աշխարհիկ կյանքից կամավոր հրաժարված ճգնավորների:

Հաճախ, ճգնակյացի կենսածն ընտրած անձինք այնքան էին նվիրվում Աստծուն, որ չբավարարվելով հասարակական կյանքից հեռանալով՝ իրենց ենթարկում էին հոգեբանական և ֆիզիկական զանազան այնպիսի սահմանափակումների, որոնք ոչ միայն գերազանցում էին մարդկային օրգանիզմի հնարավորությունները, այլև հակասում էին մարդու կենսագոյության տարրական օրենքներին: Վարքաբանական երկերում առավել հաճախ հիշատակվում են հետևյալ ինքնագրկանքները՝ սննդի խիստ սահմանափակումը, ուջ կյանքի ընթացքում միևնույն հագուստը կրելը, քնից հրաժարվելը և այլն:

Ճգնակյացների մեջ առանձնահատուկ խավ էին կազմում այն ճգնավորները, ովքեր գիտակցաբար հրաժարվում էին հասարակության հետ խե-

լամիտ վարքագծով առնչվելուց: Քրիստոնեության մեջ նման միջոցները կոչվեցին հավատախներ (сорожубие):

Այս երևույթը միայն քրիստոնեությանը չէ յարահաստուկ. դեռ Հին Հուստանում, անտիկ պոլիսների ճգնաժամի պայմաններում գործում էր կի-նիկների դպրոցը, որը բարոյական և իրավական նորմերը շրջանցելով՝ նա-խընտրում էր ճգնակյացի կենսակերպը: Այս դպրոցի ամենավառ ներկայա-ցուցիչ՝ Դիոգենեսի անվան հետ է կապված ապատիսայի՝ աշխարհի բոլոր երևույթների համդեպ արհամարհանքի գաղափարը, որն առաջնահին դեր է ունեցել հատկապես հավատախնության մեջ:

Ճգնակյացների մեկ այլ խումբ էին կազմում հիմնադրվածները, որոնց հետ, XVI դ. անգլիացի հետազոտող Ջիլ Ֆլեթչերի կարծիքով, ժամանակին զույգներ է ունեցել Ալեքսանդր Մակեդոնացին¹:

Խենթությունը հոգեկան խանգարման վիճակ է և դրսևորվում է այդ հի-վանդությամբ տառապողների յուրաքանչյուր արարքում: Հետևաբար, խենթ ձևացող և այդ իսկ պատճառով համապատասխան վարքագիծ դրսևորող հավատախներին դժվար չէր նկատել մարդկանց բազմության մեջ: Ուշադ-րություն չցարձնելով ամառային տապին և ձմեռվա ցրտին՝ նրանք շրջում էին կիսամերկ (երբեմն նույնիսկ՝ բոլորովին մերկ)՝ անտրտունց դիմակայե-լով բոլոր դժվարություններին: Իրենց նման ինքնատանջանքների ենթա-կելով՝ հավատախները համոզված էին, որ այդ ամենն աստվածահաճ է, և կրած բոլոր զրկանքների դիմաց նրանք փոխհատուցման կարծանմանն դրախտում: Օրինակ, XVI դ. մոսկովյան հավատախն Մաքսիմը հաճախ կրկնում էր. «Թեև դաժան է ձմեռը, սակայն քաղցր է դրախտը»²:

Ակադեմիկոս Գ. Լիխաչովի կարծիքով, քրիստոնեական հավա-տախնությունը զուտ ռուսական երևույթ է, քանի որ այդպիսիք չեն եղել ո՛չ Ուկրաինայում, ո՛չ էլ Բելառուսում: Կաթոլիկ աշխարհում ևս հավա-տախնությունը բացակայում է³:

Ռուսաստանում հավատախները, ինչպես և աղքատները մեծ մասամբ բնակվում էին եկեղեցիների շրջակայքում: Այն մասին՝ արդյո՞ք նրանք զբաղվում էին մուրացկանությամբ, թե ոչ, կա երկու հակադիր կարծիք (սա ի միջի այլոց, քանի որ այս հայեցակետը չի վերաբերվում մեր խնդրո առար-կային):

Ուղղափառ եկեղեցին սկզբում հավատախնների համդեպ ցուցաբերում էր հանդուրժալական վերաբերմունք: Նրանցից շատերը, ինչպես արդեն նշե-ցինք, սրբացման էին արժանացել: Գոյություն ունեին նույնիսկ պալատա-կան հավատախներ, որոնց դերը շատ նման էր եվրոպական թագավորների ծառայածուների կարգավիճակին: Իրավիճակը կտրուկ փոխվեց Պետրոս I-ի ժամանակ, որն, ինչպես հայտնի է, ձգտում էր «պատռուհան բացել դեպի Եվ-րոպա», իսկ հավատախնությունը խոչընդոտ էր հանդիսանում այդ ծրագրի իրականացման ճանապարհին, քանի որ քննադատաբար էր վերաբերվում իշխանավորների ձեռնարկած քայլերին: Պետրոս Մեծն արգելեց այս

երևույթի՝ բոլոր հավատախներին հայտարարելով «ճակատն դիվանագիտական»⁴։

Հավատախնությունն առկա է նաև իսլամում, որտեղ նրանք հայտնի են *օղալա-յի մաջալին*՝ «իմաստուն խենթեր», մաջալաբան «[Աստծո սիրով] գերվածներ» և այլ անվանումներով։

Նրանք նույնպես, ինչպես և քրիստոնյա հավատախները, հասարակ մարդկանցից տարբերվում էին արտաքին տեսքով ու պահվածքով։

Եվ քրիստոնեության մեջ, ե՛ր իսլամում հավատախներից շատերը թեև հրաժարվում էին խելականն պահվածքից, այդուհանդերձ, օժտված էին ոչ սովորական մտավոր կարողություններով։ Այդ են վկայում բազում պատմություններում ավանդված նրանց իմաստուն խոսքերն ու խորհուրդները։ Բացի այդ, հավատախներից շատերն էին հայտ էին բերում հրաշք գործելու ձիրք, ինչը, կրոնական պատկերացումներով, առ նրանք աստվածային սիրո քարձրագույն դրսևորումներից է։

“Իմաստուն խենթերի” շարքին է պատկանում X-XIդդ. հայտնի պարսիկ միստիկ բանաստեղծ Բարա թահեր Համադանին, որն իր մերկության պատճառով ստացել է Օրյան («մերկ») անվանումը։ Նրան նույնպես վերագրվում են որոշ հրաշագործություններ։ Օրինակ, ձմռանը նրան այցելած մի դերվիշ նկատում է, որ թեև ողջ շրջապատը ձյունապատ է, սակայն թահերի շուրջ գետինը չոր է։ Գերվիշի զարմանքը կրկնապատկվում է, երբ համատեղ աղոթքից հետո Բարա թահերը տարբեր ուտեստներով սեղան է պատրաստում, մինչդեռ, դերվիշի պատկերացմամբ, նա նույնիսկ հացի մի կտոր պիտի չունենար⁵։

Կամավոր գրկանքների ծայրահեղ քաջասական ազդեցությունը նյարդային համակարգի վրա մարդուն ոչ հազվադեպ հասցնում էր խելահեղության, այսինքն՝ կարող էր վերածվել իսկական մտավոր խանգարման։ Դա առավելապես վերաբերում է միստիկական ուղղությունների ներկայացուցիչներին, քանի որ միստիցիզմն ինքնին ենթադրում է ոչ ստանդարտ մտածողություն և վարվելակերպ։

Կ.Կազանսկին, որը դեռևս դարասկզբին զբաղվում էր սուֆիզմի հոգեպատառգիական հայեցակետերի ուսումնասիրությամբ, այն կարծիքն է հայտնել, որ ինչպես անհնար է որոշել առողջ ու հիվանդ օրգանիզմների սահմանը, այնպես էլ հնարավոր չէ նկատել, թե երբ է տեղի ունենում անցումը մարդկային նորմալ մտածելակերպից դեպի երևույթների ու աշխարհի միստիկական ընկալմանը⁶։

Բնութագրելով սուֆի դերվիշներին, նույն հեղինակը նշում է, որ նրանք «միշտ կանգնած են խենթության եզրին»⁷։ Այդ վիճակը Կազանսկին քաջատրում է արտաքին աշխարհի տպավորությունների սակավության, ինչը կամավոր գրկանքների, այլ խոսքերով՝ հավատախության արդյունք է։

Եվ ակամա, ե՛ր կամադրված խենթությունը դրսևորվում էր միևնույն վարքով, միայն այն տարբերությամբ, որ երկրորդ դեպքում հավատախնի պահ-

վածքը մտածված խելահրաժարման արդյունք էր լինում: Երբեմն նրանց մտանոթյան պատճառով քրիստոնեության մեջ սխալմամբ հասարակ խենթերը, որպես հավատախն, դասվել են սրբերի կարգը: Չի բացառվում, որ սուֆիզմում նույնպես վարքաբանական երկերում որոշ խենթեր թյուրիմացաբար ներկայացվել են որպես սուֆիներ: Այս հարցի պարզաբանումը դժվարանում է նրանով, որ միջնադարյան վարքագիծները որևէ սուֆիի կյանքին ու վարքին անդրադառնալիս, հաճախ մեկ այլ վարքագրության սյուժե կամ դրվագ գետեղում էին այդ սուֆիի վարքագրության մեջ: Բացի այդ, հայտնի են դեպքեր, երբ որոշ սուֆիներ ընկալվել են որպես «իմաստուն խենթեր»:

Պատճառն այն է, որ սուֆիներից շատերի արարքները, դատելով ըստ վարքաբանական գրականության տեղեկությունների, կարծես, գուրկ են տրամաբանական իմաստից: Ոչ հազվադեպ, դա հիմք էր տալիս նրանց դասել «իմաստուն խենթերի» խմբին: Այսպես, ժամանակակից խոշոր սուֆիստներ Աբդ-օլ-Հուսեյն Զառոինջուրն անդրադառնալով «իմաստուն խենթերին» նրանց թվում նշում է նաև առաջին կին սուֆի Ռաբիա Ադալիային: Ռաբիային այս խավին դասելու համար, հեղինակը հիմնվում է մի ավանդության վրա, ըստ որի մի օր Բասրայում Ռաբիային տեսնում են՝ ձեռքին ջահ վազելիս: Այն հարցին, թե ուր է շտապում, նա պատասխանում է, որ զննում է դժոխքն ու դրախտը այրելու, որովհետև սերը չէ մարդկանց՝ Աստծուն հնազանդվելու պատճառը:

Եվ քանի որ առաջին հայացքից այս արարքն անտրամաբանական և անհասկանալի է թվացել, այդ կինը թյուրիմացաբար ընկալվել է որպես «իմաստուն խենթ»: Բայց միջնադարյան վարքերում, որ Ռաբիայի անունը քավականին հաճախ է հանդիպում, չկա որևէ հիշատակում նրա՝ հավատախն լինելու մասին:

Բազմաթիվ ճգնափորների սրբերի կարգը դասելով, եկեղեցին նրանց հիշատակը նշում է հատուկ տոներով: Դա ևս վկայում է այն մասին, թե ինչպիսի կարևոր տեղ էր հատկացնում պաշտոնական կրոնը սուրբ նվիրյալներին:

Իսլամում սրբերի կանոնակարգման ինստիտուտը բացակայում է, սակայն «իմաստուն խենթեր» *Բակուլի*, *Օլայանի*, *Լոդնան-ե Սարախայի* և ուրիշների մասին մեզ հասած ավանդապատումները իրենց շրջապատում նրանց վայելած մեծ հեղինակության վառ ապացույցն են: Երբեմն խորհուրդ ստանալու համար նրանց էին այցելում նույնիսկ իշխանավորները: Իր գրքի գլուխներից մեկը XVդ. պարսիկ հեղինակ Ֆախրեդդին Ալի Սաֆան ամբողջությամբ նվիրել է Հարուն ալ-Ռաշիդի, Մահմադ Գազնավիի և այլ մեծամեծների՝ «իմաստուն խենթերի» հետ ունեցած հանդիպումներին:

Նման պատումներ գոյություն ունեն նաև սուֆի բանաստեղծ Բարա Թահերի վերաբերյալ: Այսպես, ըստ դրանցից մեկի, մի անգամ նրան է այցելում Թուրքի բեկը, որին սուֆին նվիրում է սափորի բոնիչից պատրաս-

տած մատանի: Ավանդված է, որ քանի դեռ թուղթիլը կրում էր այդ մատանին, նրան ուղեկցում էին հաջողությունն ու հաղթանակները¹⁰։

Հայտնի են դեպքեր, երբ մարդիկ «իմաստուն խենթերի» հոգևոր ուժի և հոնետրական ձիրքի ազդեցության տակ ապաշխարում էին և դառնում նրանց զաղափարների հետևորդ: Այս հանգամանքը նույնպես զալիս է հաստատելու. որ հավատախենթն իրականում ոչ միայն չէին տառապում հոգևոր հիվանդությամբ, այլև ուժեղ, կամային անհատականություններ էին: Օրինակ, նշանավոր շեյխ Աբու Սայիդ Աբու-լ-Խեյրը սուֆի դառնալու որոշում է կայացրել Լոդյան-ն Սարախսիի ազդեցության տակ, Լայխորի դրաման է ապաշխարել քանաստեղծ Սանային և այլն:

Հարկ է նշել, որ բացի կրոնահոգեբանականից, ճգնակեցության այս տարատեսակն ունեցել է սոցիալական, քաղաքական և այլ հայեցակետեր: Իրանից բացի, այս երևույթի առաջացումը պայմանավորված է եղել նաև այն հատուկ վերաբերմունքով, որ դարեր շարունակ ցուցաբերվում էր խենթի հանդեպ: Միայն այս բոլոր հայեցակետերի համադրումով է հնարավոր հավատախենթյան օրյնկտիվ համակողմանի ուսումնասիրությունը:

EKATERINA KHACHATRYAN

ON RELIGIOUS-PSYCHOLOGICAL ASPECTS OF THE PHENOMENON OF THE YURODIVIES OF THE YURODIVIES

(Summary)

There were persons in Christianity who voluntarily refused to use their mind and took themselves for madmen. They have been called "Yurodivies, God's fools". A similar phenomenon in Islam also exists. In the Islamic tradition such persons are known as *oqala-ye majanin* ("wise madmen"), *majzaban*, etc. Many of them, in spite of refusal to use intellect, had a special sharp mentality. They also had the ability to make miracles, which, according to the Islamic tradition, is the highest manifestation of the divine love. The people under the influence of the "wise madmen" often repented and became their followers. The existence of such a phenomenon both in the Christianity and Islam once more corroborates many common features of these two religions.

ՃԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Лихачев Дм., Панченко А., "Смеховой мир" Древней Руси, Ленинград, 1976., с. 179.
2. Алмазов С., Питерский П., Праздники православной церкви, М., 1962, с. 188.

3. Лихачев Дм., Панченко А., указ. соч., с. 94.
4. Там же, с. 180.
5. Roba'iyat-e shurangiz-e Baba Taher, Tehran, 1373/1994, pp. 15-16.
6. Казанский К., Суфизм с точки зрения современной психопатологии, Самарканд, 1905, сс.1-2.
7. Там же, с. 108.
8. Abd-ol-Hosein Zarrinkub, Donbale-ye josteju dar tasawwof-e Iran, Tehran, 1369/1990, p. 42.
9. Faxreddin 'Ali Safa, Lata'ef-at-tava'ef, Tehran, 1367/1988, pp. 417-418.
10. Roba'iyat-e shurangiz..., pp. 14.

ՆԱԻՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԱՀԱ ՀՈՒՍԵՅՆԻ «ՕՐԵՐԸ» ԻՆՔՆԱԿԵՆՆԱԳՐԱԿԱՆ ԵՐԿԸ ԵՎ
ԵԳԻՊՏԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր ժողովրդի ինքնագիտակցության և ինքնարտահայտման ձևերից մեկը համարվում է տվյալ ժողովրդի գրական ժառանգությունը: Արարական ցեղերի, հետագայում՝ արաբ ժողովրդի բազմադարյա պատմության օրինակը բացառություն չի հանդիսանում:

Արարական գրականության մեջ ժամանակագրական առումով հատուկ տեղ է գրավում 20-րդ դարի սկիզբը: Հենց այս ժամանակաշրջանում Եգիպտոսում ծնվում և ծնավորվում է մի նոր ոճ՝ նովելը, որը և հետագայում հետզհետե դառնում է գերիշխող: Եգիպտական նովելի հիմնադիր կարելի է համարել վաղամեծիկ Մուհամմադ Թեյմուրին (1892-1921թթ), որը սկսեց կերտել ժամանակակից սոցիալական կյանքի ռեալիստական պատկերներ: Նովելներն իրենցից ներկայացնում էին քեթև ընթերցվող ստեղծագործություններ, որոնք հիմնականում նկարագրում էին Եգիպտոսի կյանքն ու իրականությունը: Դրանցում պատկերվում էր հասարակ գյուղացիների՝ ֆելլախների կյանքը, միատուկացը, գյուղի անցուղարձը: Այս ժանրը գտավ թափանք և լայն տարածում ստացավ:

Այս պատկերի վրա առանձնակի և անմախաղեպ տեղ է գրավում նոր արարական գրականության հուշարձաններից մեկը՝ Տահա Հուսեյնի «Օրերը» ինքնակենսագրական տարեգրությունը, որը պատկերում է կույր եգիպտացի տղայի մանկությունը Նեղոսի ափամերձ քաղաքներից մեկում: Այն ուշագրավ է ոչ միայն այն պատճառով, որ իրական կյանքի կենդանի արտացոլումն է, այլև վարպետորեն գրված գրական ստեղծագործություն է ոճի, կոմպոզիցիայի և լեզվի տեսանկյունից:

Տահա Հուսեյնը ծնվել է 1889թ. մերձնեղոսյան Մահագա քաղաքում, որն ավելի շատ գյուղի էր նման: Սեծանալով միջին քարեկեցիկ ընտանիքում, նա մանուկ հասակից կորցնում է տեսողությունը: Ծնողները երեխայի ապագան տեսնում էին, շատերի պես կարծելով, որ նա կդառնա Դուրանի ընթերցող: Նա նախնական կրթությունը ստանում է գյուղի քոլեջարում՝ սովորական մահմեդական նախակրթական դպրոցում, ապա ալ-Ազհաբին կից դպրոցում անցնում է աստվածաբանական գիտությունների լրիվ դասընթաց:

ցը: Այստեղ նա ունկնդրում է հայտնի Մուհամմադ Աբդուլի դասախոսություններից մի քանիսը, ինչը խոր հետք է թողնում կույր տղայի հոգում: 1908թ. Կահիրեում հիմնվում է Եգիպտոսի համալսարանը, որտեղ 1912-ից ուսանում է Տահա Հուսեյնը: Մեծ ազդեցություն է ապավորություններ ստանալով գրականության պատմության, փիլիսոփայության դասախոսություններից, երիտասարդ կույր հանճարը արդեն հստակ պատկերացնում էր իր ապագա գործունեությունը:

1914թ. նա գրում է մեկ տարի անց տպագրում է գիտական թեզ կույր բանաստեղծ փիլիսոփա Աբու ալ-Ալա ալ-Մաարիի ստեղծագործական ուղու մասին: Այս թեզից հետո համալսարանը մեծ ուշադրություն է ցուցաբերում շնորհաշատ կույր երիտասարդին, և նրան ուղարկում են Փարիզ՝ գիտական կատարելագործման: Սորբոնում, սակայն, Հուսեյնը չի բավարարվում միայն ժրագրային դասընթացներով: Բացի դասական բանասիրությունից նա ուսումնասիրում է նոր ֆրանսիական գրականությունն ու արվեստը, թատրոնը, այցելում է Փարիզում մատչելի արաբական գրականության և իսլամի դասընթացներ:

Ֆրանսիացի բնագաղտների և գրականագետների աշխատանքների ազդեցությամբ հղկվում է նրա ճաշակը, ձևավորվում մեթոդը: Փարիզը Տահա Հուսեյնին մեկ այլ նվեր է պատրաստում. այստեղ նա հանդիպում է իր ապագա կնոջը, որի մասին հետագայում գրել է. «Ինձ տրվեց լույս խավարից հետո, ընկերություն մեծակությունից հետո և երջանկություն դժբախտությունից հետո»:

1917թ. Սորբոնում նա պաշտպանում է արաբ պատմության Իրն Խալիդու-նի մասին գիտական թեզ և երկու տարի անց վերադառնում է Կահիրե՝ իբրև Եգիպտոսի համալսարանի Հին պատմության ամբիոնի պրոֆեսոր: 1925թ. համալսարանի բարեփոխումներից հետո նա վտխադրվում է արաբական գրականության ամբիոն:

Փորձենք ներկայացնել, թե ինչ պայմաններում է Տահա Հուսեյնը սկսել աշխատել իր «Օրերը» երկի վրա: 20-րդ դարի երրորդ տասնամյակի սկզբում Եգիպտոսում տիրում էր խառնակ իրավիճակ: 1919թ. անգլիացիների կողմից ցրված Եգիպտական օրենսդիր ժողովի մի խումբ անդամներ եգիպտական ազգային բուրժուազիայի առաջնորդ Սաադ Ջազուլի (1860-1927թթ.) գլխավորությամբ պահանջեցին անգլիական պրոտեկտորատի լիկվիդացում և Եգիպտոսի անկախության ճանաչում: Առաջնորդի և իր խմբի անդամների ձեռքակալումը անգլիական իշխանությունների կողմից առաջ բերեց հասարակության գրեթե բոլոր խավերի զայրույթը և դժգոհությունը: Ջազուլի կողմնակիցների շարքերում հայտնվեցին ինչպես հասարակ ֆելլախներ, աշխատավորներ, այնպես էլ ազգային բուրժուազիան և խաշուր հաղատների մեծ մասը: Դրա հիման վրա առաջացավ քաղաքական «Վաֆդ» կուսակցությունը, որը հանդիսացավ բոլոր եգիպտացիների իրավունքների պաշտպանը: Այն իր բնույթով համազգային էր:

1919թ. մաքու-ապրիլ ամիսների իրադարձությունները, երբ տեղի էին ունենում արյունալի բախումներ անգլիական զորքերի հետ. ինչպես նաև 1921թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ելույթները, 1922թ. փետրվարի 28-ին հանգեցրին Եգիպտոսի անկախության հայտարարմանը և անգլիական պրոտեկտորատի վերացմանը: 1923թ. ապրիլի 13-ից սկսեց գործել Եգիպտոսի Առաջին սահմանադրությունը:

Այդ տարիներինց սկսած Եգիպտոսում զարգանում է ռեալիստական ուղղվածություն ունեցող գրականությունը, որը կապված էր Մերձավոր Արևելքի երկրներում ազգային ազատագրական շարժման աճի հետ: Այդ շարժմանը մասնակցում էին հասարակության լայն խավեր: Ազգային ազատագրական շարժման մեջ մեծ էր գրականագետների և գրողների դերը, որոնք ամենայն նվիրվածությամբ փորձում էին հայրենասիրական լիցք տալ իրենց ժողովրդին: Տարբեր ստեղծագործությունների միջոցով նրանք ուզում էին օգնել ազգային զարթոնքին:

«Իրենց գրական երկերով և հողվածներով նրանք սնում էին այս շարժումը... Ազնվորեն արտացոլում էին ազգային արժույթները, կոչ անում ժողովրդին վերհիշելու վաղեմի հզորությունը և ներկայացնում ներկայիս խղճուկ իրավիճակը, ինչպես գյուղերում, այնպես էլ ամբողջ երկրում»:

1927թ. Տահա Հուսեյնը սկսում է աշխատել իր գլուխգործոցի՝ «Օրերը» ժամանակագրության վրա: Այս աշխատանքը բաղկացած է երկու մասից, այն իր ավարտուն տեսքն է ստացել 1939թ.: Մենք փորձեցինք պատկերացում տալ Տահա Հուսեյնի կենսագրության մասին, քանի որ նրա առաջին փուլը այս երկի սյուժեն է հանդիսանում:

Անգամ ամենախիստ քննադատներն այս երկը անվանել են Տահա Հուսեյնի «Հաջողված և անգերազանցելի գործը»²:

Տահա Հուսեյնը, զգալով իրեն տարեգրության հերոս, որոշել է իր կյանքի մի փոքրիկ անկյուն բացել և ներկայացնել աշխարհին՝ զեղարվեստորեն պատկերելով այն:

«Մտեղծագործության նշանակությունը,- նշում է Ի.Կրաչկովսկին,- ոչ միայն նրանում է, որ այն տալիս է հարուստ պատկերներով լի այնպիսի առօրյա՝ հասանելի միայն հեղինակին. այլև նրանում, որ այս պատկերներին տրված է սոցիալական նշանակություն: Այստեղ լայնակի կտրվածքով, առանց զեղարվեստականության խափանման, ներկայացված են փոքրիկ քաղաքի մաքուր ռեալիզմը, հակասությունների աճը, այն հակասությունների, որոնք դեռ բերելու են ավելի մեծ հակասությունների ամբողջ երկրի մակարդակով»³:

Հետաքրքրարժան է նաև հեղինակի լեզուն և շարադրման ոճը: Գրքի ընթերցման ժամանակ մենք շատ հետաքրքիր և յուրահատուկ զգացումներ ենք ապրում. հանգիստ, էպիկական պատմությունը հետզհետե լարում է ուշադրությունը, հասնում բարձր ռեբերզականության (օրինակ՝ եղբոր մահ-

վան պատմության ժամանակ): Չարմանալի են կույր հեղինակի տրված
նկարագրությունները (Տահա Հուսայնը կուրացել է 4 տարեկան հասակում):
Տարեգրությունը իրենից ներկայացնում է ժամանակակից արաբական
գրականության մեջ ստեղծագործության նոր ձև, որը XX դարի ընթացքում
գտավ իր հետագա կիրառումը:

NAIRA KARAPETYAN

TAHA HUSAYN'S AUTOBIOGRAPHIC WORK "THE DAYS" AND THE
EGYPTIAN REALITY

(Summary)

This article deals with the autobiographic work "The Days" of Taha Husayn -
one of the greatest novelists of Egypt at the beginning of the XX century. The
author is blind and the hero of the chronology is also blind. The chronology con-
sists of two parts and the first part is the biography of young Taha Husayn. In the
article we tried to give the brief view of his biography and the political situation
of Egypt since 1919 till 1922-23, when Egypt received Independence and the
First Constitution.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. al-Rafi A. R., Thaurat sanat 1919, 2 vols., Cairo, 1946.
2. Brugman G., An Introduction to the History of Modern Arabic Literature in Egypt, Lei-
den, E.J.Brill, 1984, p. 276.
3. Крачковский И. Ю., Арабская литература в XX веке, Избранные сочинения, Т.
3, М., 1956, с. 156.
4. Коцарев Н.К., Писатели Египта XX века, Наука, М., 1976г., с. 81.

ՉԱՐՈՒՒՄ ԿԱՄԱՐՉՈՒՄՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԸՆԿԱՆՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՇՈՒՐՁ

«...ցրիվ ընկած և վերջապես՝ դարձեալ ժողովկած հայերն գերութեան մէջ ընկելով, գերութեան մէջ ծնանելով գերութեան մէջ այք քանալով...իւրեանց նախնեաց ազատութիւնն որպէս թէ ի սրտէ ուրացել էին, ուր ուրեք մէկ տուն ի ձեռս բերեին, ուր ուրեք մէկ սեփեական ազարակ ստանային, ուր ուրեք մէկ այգի ունենային արծաթագին, ուր ուրեք ձեռնահաս լիմէին մէկ եկեղեցի կանգնել, մէկ առանձին գերեզմանատուն ունենալ, այն երկիրն կրհամարէին իւրեանց հայրենիք»:

Լ. Պատկանյան

Ճակատագրի բերումով հայ ժողովուրդը իր պատմությունը կերտել է ոչ միայն իր պատմական տարածքում, այլև նրա սահմաններից դուրս: Հայոց պատմության անբաժան մասն է կազմում հայ գաղթականության պատմությունը, որը մանրակրկիտ ուսումնասիրված է պատմաբանների կողմից: Մույն հոլովածով փորձ կարվի դիտարկել գաղթօջայլների պատմությունը ազգաբնակչան տեսանկյունից: Կանոնադաճանք միայն Ղրիմից՝ Նոր Նախիջևան կրկնակի տարագրված մի խմբի՝ նոր տարածքում հարմարվողականության մեխանիզմներին:

Մյայ քանի հարյուրամյակ Ղրիմի գաղթօջայլում ապրելուց և որոշակի «միկրոաշխարհ» կառուցելուց հետո հայության այս խումբը կրկնակի «խմբային տեղանկություն» ենթարկվեց: Չնայած գաղթը դրիմահայերին պարտադրված էր ցարական Ռուսաստանի կողմից, գաղթականներին լայն հնարավորություն էր ընձեռված տարածքի ընտրության, կառուցման և սեփական ինքնավար «միկրոաշխարհի» ստեղծման համար:

Ղրիմից վերագաղթող հայերը վարձել են նոր տարածքում վերստեղծել իրենց *հայրենիքը*: Այսպես, նրանք իրենց հետ տեղափոխել են հայրենի գյուղի սրբերի գերեզմանաքարերը և տեղադրել են դրանք նոր գյուղի տարածքում: «Մէկ սայլ քանի եզն լծած կտանէր Պարուն Լոյս նահատակի գերեզմանի քարն, և այն քարի ներքոյ թաղուած նահատակի հոգեհանգիստն

այս վիճի վերայ կըլինեն»¹: Ակնհայտ է, որ դրոնահայերի համար խիստ կարևորվել է գերեզմանի տեղավախման խնդիրը: Այս կապակցությամբ իմաստ ունի, թերևս, դիտարկել որոշ ընկալումներ հայրենիք-հող կապի մասին:

Ըստ առասպելաբանական մտածողության՝ հողը կենդանի էակ է: Այն ծնողն է, կյանքը նրանից է ծնունդ առնում, այն կյանքի կրողն է, ինչպես մոր արգանդը, և պատահական չէ, որ առասպելաբանության մեջ անցկացվում են պարզ զուգահեռներ հողի և կնոջ՝ իբրև արարիչ: Սկզբի միջև²: Հողի և արգանդի նույնացումը հասուկ է բազմաթիվ ժողովուրդների առասպելաբանությանը: Հայ առասպելաբանության մեջ հողը քեղմնավորվում է ցրից, քրտից, երկինք՝ «արտացոլ», իսկ երկիր՝ հարված ընդունող: Այս քեղմնավորումը նույնացվում է սեռական ակտին և կնոջ արգանդին փոխարինում է հողը: Սրա վառ ապացույցն է Վիշապաբաղ Վահագնի մասին գեղեցիկ ավանդույթը: Անձնական դիտարկումներից զրանցվել են հետաքրքիր փաստեր, երբ վաղաժամ ծնված կամ թուլակազմ երեխային պահել են հողի մեջ, ինչը ակնհայտորեն վկայում է կնոջ և հողի՝ իբրև հրակամ մոր կամ նախամայր լինելու մասին: Մ. Էլիադեի մտտ գրանցված են բազմաթիվ փաստեր, որոնք ևս վկայում են այդ մասին: Այսպես, գերմանական, սկանդինավյան որոշ ժողովուրդների, ճապոնացիների, պարսիկների մտտ պահպանվել է հետաքրքիր սովորույթ, ըստ որի նորածին անմիջապես դրել են հողին, որից հետո միայն հայրը նրան վերցրել է հողից՝ Մայր հողից (Tellus Mater): Ապորինի երեխային անվանել են «հողի զավակ» (terrae filius)³: Ամերիկյան հնդկացիական շատ ցեղերի մտտ դեռ պահպանվել է այն պատկերացումը, որ չի կարելի հերկել հողը, քանի որ չի կարելի դանակով հարվածել ծնող մորը. հակառակ դեպքում մահից հետո նա կերասթափվի կրկին առնել մահացածին իր մեջ: Դեռ ավելին, հողը նախամայրն է Terra cenerix, նա է իրական մայրը և դրա համար էլ մահանալուց կրկին վերադառնում էս քո իրական մորը՝ այսինքն սկզբին. նախնական վիճակին⁴:

Անդրադառնանք «երկիր» և «հայրենիք» բառերի ստուգաբանությանը: Ըստ Հ. Աճառյանի *Երկիր* նշանակում է «հող, գետին, հողագունդ, նաև գավառ»⁵, այսինքն՝ ունի տարածքային-պատմա-աշխարհագրական իմաստ: Գյուղացիները միմյանց որտեղից լինելը հարցնում են հետևյալ կերպ. «՞ր էրգրից ես», վերջինիս ժամանակ պատասխանի դեպքում ենթադրվում է, թե որտեղից են նրա ապուպապերը, որտեղ են նրանք ծնվել, այսպիսով ընկալելով հայրենիքը նախ իբրև ծննդավայր: Ի դեպ, *հայրենիք* նշանակում է «հայրենի իրք, ժառանգութի, նախնիք, հարք և նախահարք ցեղին կամ ազգին»⁶: Այսպիսով ծնունդով «որտեղից լինելը» նշանակում է, ռ՞ր երկրի, այսինքն՝ «՞ր հողի ժառանգն ես»: Ծննդի զարգացումը, ինչպես հայտնի է, նույնպես կապված է հողի հետ. «Թրկիր ասի, զի կրակն է... դարձեալ մեռանին և ի հողոյ պարտակին և դարձեալ յերկիր կրին և կորչին»⁷, այսինքն՝ ամեն ինչ հողից է ծնվում և հող դառնում: Եվ քանի որ երկիրը կամ գետինը

մայրն է բոլոր բարիքների, ապա զարմանալի չէ, որ հողին են վերագրվել այն բոլոր հատկանիշները, որ ունի ծնող-մայրը: Մարդը ևս հողից է ծնունդ առնում. «ստեղծած զմարդն հող յերկր...դարձցիս յերկիրն, ուստի առար...», այստեղից էլ «երկրէ եղեալքն», «երկրատրք», «հողեղէնք», ինչպես նաև «երկիր» նշանակում է հենց «որպէս քնակիչ քերթի»⁸:

Հայրենիք, երկիր-երգիրը, ծննդավայր հասկացությունները կապված են միմյանց հետ: Ավելին, նրանք նույնիսկ ստ, երբեմն համարժեք են միմյանց: Հետևաբար նրանք պիտի որ լինեն նույն կետում, համեմայն դեպք, այդպես է եղել «ի սկզբանե»: «Ի սկզբանե» մայր-հողն է եղել մարդու ծնարանը: Մալայն այդ ներդաշնակությունը խախտվել է «պատմական» ժամանակի ընթացքում: Եվ որպեսզի վերականգնվի սկզբնական ներդաշնակությունը, անհրաժեշտ է ետ զնայ դեպի «սկիզբ»: Կարծում եմ, որ սրանով է քաջատրվում նոր տարածքի սիմվոլիկ յուրացման ձգտումը: Գրիմից տեղափոխվող գերեզմանաքարը սիմվոլիկ կերպով փոխարինում է աճյունին և այն տեղադրելով նոր տարածքում այդ հողը ընկալվում է իբրև հարազատ տարածք, այն փոխարինում է «խսկական մորը», այսինքն՝ այն հող-երկրին, որին իրականում աճյունը պիտի վերադարձվեր: Տվյալ դեպքում նոր տարածքը ինքնին ստանձնում է մայր հողի դերը, նույնացվում է ծնող մորը՝ երկիր-հայրենիքին: Կարևորվում է նույն հողից ծնված լինելու և նրան վերադառնալու փաստը:⁹

Այն ամենը, ինչ այդ հողի ծնունդն է, իր մեջ պարունակում է այդ հողի հտորհուրդը: Այս առումով դրիմահայերի մտա պահպանվել է մի ավանդույթում Անիից քերված *գերասարտի* մասին: *Չերտարուն* դա հայկական ծիրանին է, որի կորիզը Անիի հայերը հրաշքով իրենց հետ քերել են Գրիմ: Ավանդությունը ասում է, թե ինչպես «մի սուրբ ճգնավոր երազ է տեսնում և երազի մեջ սպիտակ ձիով սուրբ Գևորգը գալիս ու ասում է, որ Աստված հրաշքով կազատի հայի հողը: Սի գիշերում ծաղկում ու պտուղ են տալիս գերտալուի ծառերը: Թշնամին հրաման է արձակում, որ այդ տարվա պտուղը միայն տաճիկներին քաժին լինի: Անկուշտ քշնամին վրա է տալիս ու ուտում է ամբողջ գերտալուն: Մեկ էլ տեսնում են, որ տաճիկները սկսում են ճանճի պես սատկոտել: Այդպես հայի հողը Աստծո հրամանով մաքրվում է տաճիկներից: Այդ է պատճառը, որ մեր հայ ազգը այդքան սիրում է գերտալուի ծառը»¹⁰: Կորիզը դառնում է սիմվոլ և, քանի որ պտուղը մայր հողից է, ապա պտղի կորիզը տնկելով նոր հողում՝ ինքնին այդ հողին հաղորդում են իրական մայր հող-երկրի կարգավիճակը:

Գրիմեցիների կողմից ընտրված նոր տարածքում սկզբում որոշվում է գյուղի գերեզմանի, հետո նրան կից եկեղեցու տեղը. «Երբ գերեզմանատանց կարգադրությունն վերջացավ՝ Յովսեփ արքեպիսկոպոսն... սկսաւ Լուսաւորչի ասագ եկեղեցու լայնածաւալ սրահի տեղը բափել, որովհետև նորա շքեպատն պիտի շինուէին վաճառականաց և արհեստաւորաց խանութներն ու կրպակները»¹¹: Այնուհետև, նախքան եկեղեցիների կառուցվե-

ը, տարածքը նախապես օրհնվում է քահանաների կողմից, «այնտեղ հավաքվեցան Քեֆէի հրեշտակապետաց, Աննայի և Յովակիմայ, Ս. Սարգսի և այլ եկեղեցեաց քահանայք և սարկավագուրք՝ ծնծողաներով և ձեռաց զանգակներով, և այն դաշտի մէջ՝ ուր մինչև այն օրն Յիսուսի անունն չէր լսուած հայ բարբառով՝ սկսեցին զոհացողական թափոր կատարել»¹²: Կարելի է ասել, որ մանօրինակ փաստերը վկայում են տարածքի մշակութային յուրացման փաստի մասին: Հայերի համար միշտ էլ կարևոր է եղել կրոնական պատկանելիությունը, և այն հանդիսացել է ինքնության ճանաչման կարևորագույն մասը:

Ուշագրավ է քաղաքի կենտրոնի որոշման փաստը. «...Շինուեիք քաղաքի սահմանում վրան պատրաստուեցաւ եկեղեցական զարդերով... Սրբազանն Յովսէփ եկավ հասաւ այն լայնատարած որգոստայն, որ թողել էին բաց որպէս կեղրոն շարժական քաղաքի: Անդ սրբազանն սկսավ երգել Նոր Միոն ծննալ մանկունք շարականն, զոհաբանական թափոր կատարեց և հոգեհանգիստ Պետրոս սրբազանի և այն ամենայն ննջեցեղոց համար, որ այն ճանապարհին իրենաց կենանք կնքել էին...»¹³: Նշանակում է սա, արդյոք, որ կենտրոնը որոշվում է նախապես և հետո նոր դառնում է կենտրոն, նրա արդեն շուրջը կատուցվելիք շինությունների հաշվին: Կենտրոնը սիմվոլիկ կերպով «իր մէջ է առնում» ճանապարհի հանգուցայններից, որպես զոհ, իսկ շարականը ավետում է նոր կյանքի սկիզբը: Կենտրոնի օժանդակ հասցրելով է քաղաքի յոթս կողմերի հիմնաքարերի օժանդակ ու հանդիսավոր թափորի ուղեկցությամբ նրանց տեղադրումը¹⁴: Այստեղ տեղին կլինի մտաբերել ևս մի հետաքրքիր փաստ. քահանայի տարածքի օրհնումը զուգորդվում է հայ ժողովրդի պատմական անցյալից քաղած դրվագների ըմբռնմամբ (ինչը հիշեցնում է արխայիկ արարչագործական ծիսակատարություններում նախնիների մասին առասպելական պատմությունների վերարտադրումը). «Չկմի հիմնօրհնութեանց Յովսէփ սրբազանն պատմեց նոցա տէր Բարդուղիմէոսի և տէր Մարկոսի ազգասիրութիւնն, ինչպէս Նախիջևանցուց պատմել էր Բագրատունեաց թագաւթութեան անկումն»¹⁵: Ինչպես գերեզմանաքարի տեղավորումը նոր տարածք, ճանապարհի հանգուցայնների հիշատակումը իբրև զոհ, այնպես էլ ժողովրդի պատմության վերադրեցումը ապահովում է հաստատում են հողի «յուրացումը», նրան հաղորդելով պատմական անցյալի կրողի դերը:

Յուրացման յուրահատուկ ձևերից է նոր տարածքի անվանակոչումը. գյուղին տրվում է նախկին գյուղի անունը, տարածքում կատուցվելիք եկեղեցուն ևս տրվում է նախկինի անունը, հաճախ այն իրերը, որոնք հնարավոր է եղել տեղափոխել, տեղադրվում են նույն եկեղեցում, նույնիսկ գյուղի շինարարությունը փորձում են նույնացնել նախկինին. գաղթականները նույնիսկ ձգտում էին նույնությամբ պահպանել նաև իրենց թողած դուշտերի, բուրմերի, աղբյուրների անունները. «...Կատարեց առաջին գիւղի հիմնարկութիւնն, և որովհետև այս գիւղի նոր բնակիչք էին ըստ մեծի մասին գաղթա-

կանք երկու գիղեր՛ Ծայթըրէ և Հորթալանքէ, այս պատճառով գիղն սեփականեց երկու անուն՝ Ծայթըր և Հորթալանք: Հին Հորթալանք գիղն շինուած իր... Փրկիչ վանքէն չորս փարսախ հեռաւորութեամբ, յորոց մին էր յանուն Ս. Համբարձման Քրիստոսի. վասն որոյ և նոցա նոր հիմնարկելի եկեղիցին ես Համբարձման անուամբ օրհնվեցաւ...»¹⁶: Նույն կերպով ընթանում է մյուս գյուղերի հիմնադրումը:

Զարմանալիորեն ստեղծվում է այն իրավիճակը, որ կարծես թե ոչինչ չի փոխվել՝ նույն գյուղը, նույնանուն եկեղեցին է, վերջապես, որ ամենակարևորն է, նույն «երկիր-հողը»: Վերանվանումը ինքնին պատմական անցյալի կրկնողություն է. և մեկ փորձ տարածքին «իրական հող-երկրի» կարգավիճակ հաղորդելու ձգտում:

Այսպիսով, տարածքի յուրացումը կատարվում է մի քանի եղանակներով.

1. Տարածքի ընտրությունից հետո որոշվում է գերեզմանի տեղը, կամ տարածքը «յուրացվում» է քերված գերեզմանաքարերի տեղադրությամբ, որով նոր տարածքը ստանձնում է «մայր-հողի» դերը:

2. Այնուհետև կենտրոնում կառուցվում է ապագա եկեղեցին, որի շուրջը հետագայում կառուցվում են մյուս շինությունները: Օժվում են տարածքի չորս կողմերը, ուր ևս կառուցվում են եկեղեցիներ. այսինքն՝ տարածքը շրջափակվում է, սահմանագատվում է մյուս աշխարհներից («օտար» աշխարհից «յուրայինի» սահմանագատում, մշակութային սահմանագատում):

3. Նոր տարածքին տրվում են նախկին քնակավայրերի անունները, եկեղեցիներին նախկին եկեղեցիների անունները և նույնիսկ նախկին եկեղեցիներից քերված իրերը համապատասխանաբար տեղադրվում են նոր եկեղեցիներում:

Արտաքննապես ստացվում է, որ ոչինչ չի փոխվել. նույնանուն գյուղն է նույնանուն եկեղեցիներով, հարգված սրբերի գերեզմաններով: Կարծես պատմական այն իրողությունը, որ ստիպել է հայերին գաղթել մի տարածքից մյուսը, վերափոխման է ենթարկվում (զուցե գիտակցաբար) և ներկա իրողությունը ոչ թե դառնում է նոր սկիզբ, այլ նույն տրամաբանությամբ անցյալի շարունակությունը: Հայի համար կարևոր է դառնում վերադարձ դեպի սկիզբ, սակայն դա ոչ այնքան վերադարձ է դեպի աշխարհարարման ժամանակի սկիզբ, (ինչպես Էլիադեի մոտ) այլ վերադարձ է դեպի պատմաբանության սկիզբ: Պատմական հիշողությունը հերոսական անցյալի մասին, տարածքային ամբողջության և հզորության մասին, հայերի համար դառնում է ինքնաարժեքավորման չափանիշ: Հիշողությունը կապված պատմական անցյալի հետ, դարձել է ինքնադրուստրման և ինքնաճանաչման սկզբունք:

Պատմությունը դառնում է հիշողություն, իսկ դրա կողքին իրականություն է դառնում գաղթը, նոր տարածքը: Հիշողությունը հերոսական անցյալի մասին կրկնվում է ամեն անգամ նոր տարածքի յուրացման դեպքում և այն յուրացվում է «պատմականորեն»: Զարմանալիորեն այն, ինչ նոր է ստեղծ-

վում, պիտի կրի իր մեջ պատմական անցյալից որևէ մաս, ինչպես օրինակ *զերուարուի* դեպքում, որը կարծես թե «առաջնորդում» է հայերի ճանապարհը Անիից Վրին, Վրինից Նախիջևան, կամ էլ, ինչպես վերը նշվեց, գերեզմանաքարի տեղափոխման դեպքում: Իսկ ամենահետաքրքիրը մերկայիս Հայաստանն է, որը հանդես է գալիս որպես «կորուսյալ» հայրենիքի միկրոսինեմա, սրի ամենակարևոր մասը նրա մայրաքաղաք Երևանն է: Այն վերջինն է պատմության մեջ որպես մայրաքաղաք Հայաստանի՝ նախկին մայրաքաղաքների կողքին, հետևաբար նաև ամենամոռը, բայց, չնայած դրան, այն հնագույններից է: Երևանը կառուցվեց Էրեբունիի տեղում, որը կառուցվել էր դեռևս մ.թ.ա. 782-ին. ստացվում է, որ այն ավելի հին է. քան Անին, Վիինը... Ահա ինչպես է գովերգվում Երևանը. «Երևան դարձաց իմ Էրեբունի, դու մեր մեծ Վիին, մեր մեծ Անի, ..դարեր ես անցել, բայց մնացել ես պատանի»: Վերադարձ դեպի պատմության սկիզբ, դեպի պատմական հիշողության սկիզբ. սա է ամենակարևորը հայի համար, դեպի ակունքը, դեպի արմատը, դեպի կորիզը:

ZARUHI HAMBARDZUMYAN

ON THE PERCEPTION OF "MOTHERLAND"

(Summary)

The article considers the model of adaptation to a new place of an emigrant group of Armenians experiencing second emigration. People felt at home at the new place by transferring tombstones, cross-stones, and church utensils from the former settlement, and by giving its name to the new place. Thus the new land, the soil is symbolically adapted by ascribing the attributes of a mother in labour (*Tellus Mater*) to it.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գ. Պապկանյան, Նոր Նախիջևանի պատմությունը, Նոր Նախիջևան, 1917, էջ 24:
2. Е.Г. Рабинович, Богиня - мать, - Мифы народов мира, М., т.1., 1991, с.180:
3. М. Элиаде, Очерки сравнительного религиоведения, М. 1999, с.236-237.
4. М. Элиаде, Мифы, сновидения, мистерии, М., 178.
5. Երկիր. - Նոր քաղաքի հայկազնան լեզուի, հ.1, Եր., 1979:
6. Հայրենիք. - Նոր քաղաքի հայկազնան լեզուի, հ. 2, Եր., 1980:
7. Երկիր. - Հր.Անուշյան. Հայերեն արձատական քաղաքան, հ. 2, Եր., 1973:
8. Երկիր. - Նոր քաղաքի հայկազնան լեզուի, հ.1, Եր., 1979:
9. Ըստ Հ.Մարտիրոսյանի՝ հայերի մոտ մոր գյուղը առանձնացված է համարվում հին րեակավայրից, երբ այստեղ կատարվում է առաջին քաղումը, գոյանում է առա-

- ցին գերեզմանը (Հ. Մարության, Տունը որպես աշխարհ, L. Abrahamian, N. Swezy (eds.), *Armenian Folk Arts, Culture, and Identity*, Indianapolis (in press), մենք օգտվել ենք հայերեն ձեռագրից):
10. Գ. Պատկանյան, *Զերտալու, - Նոր Նախիջևանի պատմվածքներ*, Եր., 1973:
 11. Նույն տեղում, էջ 37:
 12. Նույն տեղում, էջ 30:
 13. Նույն տեղում, էջ 36:
 14. Գ. Պատկանյան, *Նոր Նախիջևանի պատմությունը, Նոր Նախիջևան*, էջ 40-41:
 15. Նույն տեղում, էջ 42:
 16. Նույն տեղում, էջ 31, 41-43:

ԳԱԳԻԿ ՄԱՐՏՈՅԱՆ

ՄՂԵՐ-ՄԻՂԻԻ ԱՌԱՍՊԵԼԻ ՇԵՐՏԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱՔՆԵՐՈՒՄ

Հայ բանագիտության մեջ գրեթե ուսումնասիրված չեն հայկական հրաշապատում հեքիաթները: Անպարեզու մ այդ քեմայի վերաբերյալ չկա հրապարակված որևէ մեծագրություն կամ չի կազմակերպվել գիտական որևէ ատենախոսության ձեռնարկում: Մինչդեռ բանահյուսության այս ոլորտն անսպառ նյութ է պարունակում հին հայոց դիցաբանական աշխարհայացքը վերականգնելու, հայկական առասպելաբանության հետ կապված խնդիրների լուծումը հեշտացնելու առումով:

Հայկական հրաշապատում հեքիաթների մի խումբ («Օձ Մանուկ և Արին Արմանելին»¹, «Օձնամուկ, Արմանուկ», «Արեվ-Մանուկին հեքիաթը»², «Օձ-Մանուկը»³, «Արևատ աղջկա հեքիաթը»⁴, «Ծաղիկներ քագուհու աղջկա հեքիաթը»⁵, «Աղամի ծաղիկը»⁶, «Ասողաֆեայ խամուս»⁷, «Աղբյուրի հարսն»⁸, «Մեռուկ Մանուկ»⁹, «Օխշ»¹⁰, «Մայրը և դուստրը»¹¹, «Չփյաղը»¹², «Օձամանուկ և Արևատ»¹³, «Արևատ և Օձամանուկ»¹⁴, «Օձ-Մանուկ, Վարք-Մանուկ»¹⁵, «Օգ-Մանուկին հարյսքը»¹⁶) պահպանել է հին աշխարհի օրացուցային առասպելների ավանդական մոտիվների հետքերը: Դրանցում արտացոլված է Յորեն հատիկ աստծո առասպելների մոտիվային առանցքը կազմող անդրաշխարհի տիրուհու և սիրո աստվածուհու (կամ Մայր աստվածուհու) հակամարտության քեման՝ հանուն մեռնող և հարություն առնող աստծո սիրո:

Մեռնող և հարություն առնող աստծո առասպելի սյուժեի ամբողջական զարգացումը հայկական հեքիաթներում, ցավոք, անավարտ է, քանզի ավելի ուշ ժամանակներում հին հայոց Յորեն հատիկ աստծուն փոխարինելու է եկել հեռացող աստված, նույնպես հացամշակույթը հովանավորող Արև - Մեծը - Միթրա - Միհրը: Արդյունքում երկու առասպելների արձագանքները քե՛ մոդիլային, քե՛՛ գաղափարախասական առումով համակցվել են մեկ սյուժեով պատմվող հայկական հեքիաթների մեջ: Ավելին, հեքիաթների առասպելական երկու շերտերն էլ դրսևորված են «Մասնա ծոեր» էպոսում, որը հայ հնագույն դիցաբանական աշխարհընկալման հարուստ աղբյուր է: Այս համգամանքը բացառում է կասկածն այն մասին, քե մեր հեքիաթներն,

իրեն թափառիկ պլուժները կարող էին հայկական միջավայր ներմուծել հին աշխարհի օրացուցային առասպելների քեկորները: Իրականում, չէին կարող նույն միջավայրում արմատներ չձգած հավատալիքները վերարտադրվել ազգային էպոսի մեջ:

Հայկական հեքիաթների հիշյալ լսմբից դուրս բերված հիմնական համառոտ սխեման հետևյալն է.

Ձափակ շունենալու վշտով տառապող մի թագավորի Աստված օժ գափակ է պարզևտում, որին անվանակոչում են Օժ Մանուկ:

Օժ Մանուկին՝ խժոկու (կամ ամուսնանալու) համար զոհարելում են տեղաբնակ բոլոր աղջիկներին: Մնում են երկու քույր, որոնցից մեկը՝ Ծաղիկը որք է:

Թագավորի մարդիկ գալիս են քույրերից մեկին Օժ Մանուկի համար հարս (կամ կերակուր) տանելու:

Հովիվ (կամ աղբատ, կամ վաճառական) հայրը տատանվում է և չի ուզում աղջկան տալ, բայց խորք մայրն ի վերջո համոզում է և Ծաղիկին հանձնում թագավորի մարդկանց:

Ծաղիկի մեռած մայրը գերեզմանից խորհուրդներ է տալիս, քե ինչպես վարվի Օժ Մանուկի հետ, որպեսզի անվնաս մնա: Աղջիկն անում է այնպես ինչպես մայրն էր պատվիրել, և Օժ Մանուկը դուրս է գալիս շապիկից ու դառնում գեղեցկատես պատանի:

Ծաղիկն ու Օժ Մանուկը սիրահարվում և ամուսնանում են:

Ծաղիկի խորք քույրը (կամ մայրը) իմանում է աղջկա բախտավորության մասին և որոշում կործանել նրան: Հրավիրում է գետի (կամ ծովի) ափ, հանում է նրա շորերը և հրում, զցում ջուրը:

Խորք քույրը հագնում է Ծաղիկի շորերը և գնում Օժ Մանուկի պալատ, ներկայանալով իրն նրա կին:

Ծաղիկը աղջկան ջուրն ափ է հանում մի ամայի վայրում: Մի արահետով նա գնում և հասնում է ժայռի (եռան կամ քարի, կամ սև քարից եկեղեցու): Ժայռը ծեղրվում է և նրան ներս առնում (կամ լեռան մոտ դուռ է տեսնում: Մտնում է ներս: Դուռը ետևից անհետանում է):

Ժայռի մեջ, դագաղում պատկած է մի գեղեցկատես երիտասարդ: Ոչ այն է մեռած է, ոչ այն է՝ կենդանի: Դագաղի շուրջ փայլեր և կերտներ են դրված:

Արևը մայր մտնելուն պես, երիտասարդը վեր է կենում դագաղից (կամ դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ աղջիկը տեղափոխում է փայլերն ու կերտները, կամ գիշերը քարը դառնում է մարդ):

Աղջիկը պատմում է իր դժբախտության մասին: Երիտասարդն իր պատմությունն է անում: Դա Արև Մանուկն է: Որոտոր է եղել: Մի անգամ շատ է թափառել, բայց որս չի գտել: Որոշել է արևը ծագելուն պես նետահարել նրան և խավարով ծածկել երկիրը, քանի որ ինչի՞ն է պետք արևի լույսը, երբ որս չպիտի անի, քեֆ չպիտի անի: Արևը հայտնվելուն պես, ծեղրն է առել

նետք. քայց մի բոցերեն ապտակ է ստացել, մի երեղեն ձեռք մագնիսից բռնել և որով է այդ ամայի վայրում: Արևն անիծել է. որ իր լուսը շտենի ու չվայելի: (Կամ նրա ծնողներն իր ծնվելու համար Աստծուն յոթ անձին երկնք են գոհ խոստացել, քայց մտացել են խոստման մասին: Աստված էլ նրան քար է դարձրել): Գրանից հետո Արև Մանուկը ցերեկները մեռնում է. գիշերները կենդանանում և հոգում իր ապրտուտը: Ոչ որ չգիտես. քե որտեղ է նա:

Օձ Մանուկի հետ ասրած Շաղիկը սկսում է ապրել Արև Մանուկի հետ և հղիանում:

Արև Մանուկն աղքեական գիշերով տանում է իր ծնողների տան մոտ. ինքը՝ վերադառնում ժայռի մեջ:

Արև Մանուկի մայրը չի ուզում ներս ընդունել Շաղիկին, քայց երբ վերջինս վկայակոչում է Արև Մանուկի հիշատակը, օրևան է տալիս:

Շաղիկը աշխարհ է բերում մի լուսածաճանգ մանկան, որը շատ է մնամ Արև Մանուկին:

Արև Մանուկը գիշերները փոշում է դառնում և գալիս է իմանալու, քե ինչպես է աղքեական վիճակը: (Կամ գալիս է ձիով): Վշտանում է, լսելով, որ Շաղիկին և որդուն անհարմարավետ կացարանում են տեղ տվել ու հոգ չեն տանում նրանց մասին: Այցելում է երեք գիշեր, վայ է տալիս ծնողներին, որոնք, եթե իմանային, քե ում որդին է նորածինը, կհեզային նրա մասին:

Երկխոսության լուրը հասնում է Արև Մանուկի մոր պահեցին, որը ֆարստոց է մտնում իմանալու համար, քե ո՞վ է գիշերային այցելուն:

Արև Մանուկի մայրը ճանաչում է իր գավակին: Շաղիկի ու նրա որդու համար հարմարավետ պայմաններ է ստեղծում և խնդրում Արև Մանուկի հաջորդ այցելության ժամանակ հարցնել, քե ի՞նչ անեն, որ նա վերադառնա:

Գիշերն Արև Մանուկը պատասխանում է, որ պետք է յոթ անձին երկնք զոհաբերեն, մի անձին երկնք էլ -դնեն արյունի առաջ: Եթե արյունը չընկնի, տարավ այդ երկնքին, ուրենն ինքը կվերադառնա: (Կամ պետք է կատարեն Աստծուն տված խոստումը և յոթ երկնք զոհաբերեն):

Արև Մանուկի ծնողները կատարում են զոհաբերությունը և իրենց կորած որդին վերադառնում է:

Արև Մանուկը և Շաղիկը պսակվում են:

Ժամանակ անց, Արև Մանուկի պալատ է գալիս իր կորած կնոջը փնտրող Օձ Մանուկը և Շաղիկին տեսնելով, ճանաչում է նրան:

Շաղիկը որդուն հանձնում է Արև Մանուկին և ինքը սիրահոժար զնում Օձ Մանուկի հսկից:

«Մասնա ծոեր» է պոսի մի պատմում¹⁸ Մերս կոսպայտ քաղաքում արշավում է Հայաստան, քարդում Կապուտկոլում նստած Պապ քաղաքի գործը և քաղաքի վ գերիներ տանում: Ժամանակ անց, իր վեբիլին և վեզիրին ուղարկում է Պապի Փիրգատ խանում տասներկու տարեկան աղջկան իր Փաշա տղային ուզելու: Պապը երկար տատանվելուց հետո համաձայ-

նում է: Աղջիկը մի տարի հետո ուզում է ինքնասպան լինել, որ «դույս հավատար» չկարգվի: Դ՛նում է սար ու տեսնում մի «ղար» (ծայր): Մի դուռ է բացվում: Մտնում, աղոթք է անում: Առաստաղից ջուր էր գալիս: Երեք բռն խնում, դուրս է գալիս: Դ՛ուրը ետևից փակվում է: Փորձատ խանումը հոլիանում է: Ի՛նն ամիս անց, ծնվում է երեխան: Մոր կշտամբանքին Փորձատը պատասխանում է. «Լրեխեն ջրից հելավ»:

Երբ Լորադինը մեկ ամիսը մեկ տարվա չափ է մեծանում: Երբ դառնում է երկու տարեկան. տասներկու տարեկանի չափ է դառնում: Մի անգամ երազում մատուռն է տեսնում («ղարը»), որն ասում է, թե նրա անունը Մեթ է: Այս պատվիրում է տասն անժին երից զոհել, զինավառվել և կոսպաշտ թագավորի դեմ կռիվ գնալ. որ «ժայի հավատը չկորչի»:

Մեթը քառասուն երից է զահաբերում: Աստծո հրամանով բացվում է մատուռի դուռը: Մեթըն այնտեղից հանում է թագ, գոտիկ, գուրգ, հմայիլ, հեծնում և Բուռլե Ջելաթյու և սկսում աննպատակ որս անել: Ժամանակ անց, հաշվեհարդար է տեսնում իր թշնամիների հետ:

Մեթին Վանում մի աղջիկ են ուզում: Կինը երկվորյակ է բերում: Մեկի անունը դնում են Աբամելիք. մյուսինը՝ Սանասար: Պապ թագավորը մեռնում է, երեք տարուց հետո էլ՝ Մեթը:

Այս պատումի պատմականությունն իր «Ջոջանց տան պատմականը» աշխատությանը հիանալիորեն հիմնավորել է Ստեփան Կանայանցը, կապելով Արշակունի արքաների և Մամիկոնյան իշխանների ժամանակներում պարսից դեմ մղվող պատերազմական դեպքերի հետ¹⁹: Մեզ հետաքրքրողը, սակայն, պատումի առասպելական հումքն է, որն իր մեջ մեծ չափով արտացոլում է մեր քննարկման առարկա հեքիաթների պոետիկային մոդելների տարրերը: Կոսպաշտ թագավորը հեքիաթների թագավորն է, որն իր մարդկանց ուղարկում է հովիհ աղջկան իր Օձ Մանուկ որդու համար ուզելու: Պապ թագավորը հովիվն է, որը տատանվում և չի ուզում աղջկան տալ: Աղջիկը Փորձատ – Ծաղիկն է, որ գնում, մտնում է ժայռի մեջ և կես ողջ, կես մեռած հերոսից լուսաճաճանջ երեխա է ունենում: Շիշտ է, Մեթըն է պատում կես ողջ, կես մեռած հերոսը չէ դեռ («ղարը»), այլ նրա որդին, բայց դա, ըստ երևույթի, ասացողի միջամտության արդյունքն է, ինչպես նաև միջամտություն է այն, որ Մեթըն ավելի ավագ է ներկայանում, քան Աբամելիքը (Բաղդասարը) և Սանասարը: Երկուսից նրանցից ավագ է կա՞ Պապը:

Էսպոսի մեկ այլ պատում մասամբ լրացնում է բացթողումը.

«Կարմիր կիրակին յիրիկուան պատարագ, որ կընը, են յիրիկուան մեկ մարդ ուր աղջկան կասը. – Իլի, կինա ժամ, մում կըսը, օխնուկ կրակ առ, թի: Ախչիկ կընը տիս, կիրիշկը, կը տեսայ էրա քիարեն ճրագի բուխ կընը. Էդ ախչիկ էլա կինաց են ունտուով, թի ժամն ի: Մտաւ էնտեղ, զճրագ կայուց, դարձաւ, տը կէր, տիս էկա իրար: Ախչիկ մնաց էնտեղ. տեսաւ, որ էրկնուց մանանայ իկի. Մեթըն էլ առից, կերաւ, ծին էլ, ախչիկն էլ: Էլ չքեաղացան,

մինչև տարին թըմըմա: Էն ատըր ինչ տարին թըմըմա, ախչիկ զճրագ կպսց, ինչ տիւռ քացուա, էլաւ տխա, ճրագ առից, էկաւ տուն»²¹:

Այս դրվագն ավանդվում է «Արեւի Մանուկին հեքիաթից» Խորթ մայրը և իր աղջիկը մի ամառի վայրում Ծաղիկ աղջկա վրայից հանում են շորերը և հեռանում: Ծաղիկը մի քարակ արահետով գնում է և հանդիպում սև քարն մի եկեղեցու («Ժամի»): Մտնում է ներս ու տեսնում, որ մի մեռել է պառկած, ոտքերի և գլխի մոտ մեկական կերտն է վառվում («օխմուկ կրակ»), աջ ու ձախ կողմերում արծաթե փարջով շարքաթ է դրված: Փոխում է կերտնների և փարջերի տեղերը, տեսնում է, որ մեռելը շարժվեց և վեր կացավ:

Այսքանով մեզ համար պարզ է դառնում, որ հեքիաթներում կես ողջ, կես մեռած հերոսի մասին հյուսված պատմությանը մեզ է ներկայանում Արև Միթրա - Միհր - Մեհրը, որը հին հայոց դիցաբանական պատկերացումներում ոչ պակաս կարևոր տեղ է զբաղեցրել, քան հնագույն մեռնող և հարուստի ամենող աստվածը:

Հայկական միհրապաշտության մասին առավել ամբողջական պատկերացում կազմելու համար հաճախ դիմում են հարևան պարսիկների Միհրի պաշտամունքի ուսումնասիրությանը: Պարսից առասպելում Միհր - Միթրան սկզբից մինչև վերջ քարու և լույսի աստված է: Ծնվել է դեկտեմբերի 25-ին, ձմեռային արևադարձի օրը՝ քարից կամ ստորերկրյա աշխարհից: Կատարել է մեծ քաջություն՝ սպանելով առասպելական ցլին, որի արյունից առաջ է եկել երկրի պտղաբերությունը: Այդ խիզախության շնորհիվ կոչվում է ամեն բանի արարիչ: Դարերի վերջում նա այնտեղ է կրկնի իր այդ արարքը և ստեղծի նոր աշխարհ, հարություն տա մեռելներին: Այդ իսկ պատճառով Միհրին պաշտում էին իբրև փրկիչ մեսիա: Նա համարվում էր լույսի, արևի, կրակի և սրբազան պայմանագրի (դաշինքի) հովանավոր աստված: Միջնորդն էր մարդու և Անսրամագրայի միջև: Կոչվում էր չարության մարմնավորում Անգրա Մանյուի (Արեմնի) դեմ²¹:

Միթրան մեծ տեղ էր զբաղեցնում նաև հնդարիական դիցաբանության մեջ, որտեղ Վարունայի հետ աստվածային զույգ էր կազմում խորհրդանշելով տիեզերական երկվությունը: Միթրան ցերեկն էր, Վարունան գիշերը կամ Միթրան առավոտյան արևն էր, Վարունան երեկոյան²²:

Հայ առասպելաբանության մեջ Միթրա - Միհրին է հիշեցնում նախ Արտավազդը, որը Մասիսի ծերպերում փակված, կալանված է դևերից, քայց մի օր դուրս է գալու որպես ազատարար և արդարության մարմնացում: «Բայց Արտավազդը դեռ Միհրը չէ, թեև ավելի հին է, քան Միհրը, - ասում է Թադեոս Ավդալբեգյանն իր «Միհրը հայոց մեջ» աշխատությունում, - Հայաստանն ուներ իր իսկական Միհրը, որ Արամագրի որդին էր»²³: Այդ Միհրը, հանձին Մեհրի, իր լավագույն արտացոլումն է գտել «Սասնա ծռեք» էպոսում, իբրև վիշապամարաիկ և զագանների դեմ կռվող, ինչպիսին պարսից մեջ էր: Նա քարից ծնվող և քարի մեջ փակվող հերոս է: «Մեջպէս, որ փոքրիկ կրակը - կայծը պահուած է քարի - կայծքարի մէջ եւ դուրս է գալիս կայծքարի - քա-

րի միջից, այնպես էլ մեծ կրակը, Հուր – Միերը փակուած է վիթխարի քարա-
ժայռի – Ալուփու քարի մէջ եւ դուրս է գալու այնտեղից», - գրում է Ավդալ-
բեգյանը²⁴: Ժողովուրդը հավատում էր, որ կգա ժամանակ, երբ «Միերն ու
ուր ճին կու գան աշխարհ: Նոր Միեր կտտորում կէնի, վերջ կը մարտիրոսու-
լի»²⁵: Հավատում էր նաև, որ մինչ այդ, Միերն ամեն տարի, Համբարձման և
Վարդավառի օրը, ժայռից դուրս գալով, ստուգողական այցելություններ է
կատարում²⁶:

Էպոսում Դավթի որդի Միերը ժայռի մեջ է կալանված հոր անեծքով, և
այդ անեծքը նրա վրայից պետք է վերանար այն ժամանակ, երբ Քրիստոսն
աշխարհ գա²⁷: «Աղանի ծաղիկը» հեքիաթում Ծաղիկ աղջիկը հրեշից հա-
լածվելով, մտնում է Փոքր Արարատ լեռան աներևութացող դարպասներից
ներս և տեսնում դագաղի մեջ պառկած կիսամեռ երիտասարդին: Դագաղը
դրված է ոսկե ջրավազանով, մարմարե պալատում, որի առջև երկու հսկա
առյուծ են կապված: Գիշերը երիտասարդը կենդանանում է: Ընդունալով
լուսավորություն է տարածվում: Բազմաթիվ ճրագներ են վառվում: Նա
պատմում է, որ մեկընդմիջտ կենդանանա և ազատություն կտանա այն
ժամանակ, երբ Պողոս առաքյալն աշխարհ գա: Այդ երիտասարդն, իհարկե,
Արև-Միերն է, որ ի հիշատակ Արտավազդի առասպելի, փակված է ոչ թե
Ալուփու (Ագռավու) քարում, այլ՝ Փոքր Արարատում:

Կեղծ Պլուտարքոսից մի գործ է ավանդված՝ «Վասն լեռանց ու գետոյ»,
որում Հայաստանի տեղանունների վերաբերյալ որոշ ավանդություններ են
մեջբերվում: Դրանցից Դիորքոս լեռան մասին գրույցին ուշադրություն է
դարձրել Ալեքսանդր Մատիկյանը, որի եզրակացությունները նոր լույս են
սփռում լեռան մեջ փակված հերոսի խնդրի վրա: Ահա այդ ավանդությունը.

«Անոր քով (Արաքս գետի մերձակայքում: Ո՞ր հաստվածում, չի սալվում -
Գ. Մ.) կայ Դիորքոս լեռը, այսպես կոչուած երկրածին Դիորքոս, որում
մասին այս պատմութիւնը կը պատմուի. Միեր քաղձալով որդի մ'ունենալ եւ
կանացի սեռը ատելուն՝ քար մը կը բեղմնատրե, որ յղանալով, Դիորքոս ա-
նունով որդի մը կը ծնանի: Ասիկա երբ կը մեծնայ եւ կը զօրանայ, մեծամ-
տօրէն՝ Արեւսը կռուի կը գրգռե, քայքայ անկից կը սպաննուի եւ այսպէս աս-
տուածներու նախախնամութեամբ համանուն լեռան կը փոխուի»²⁸:

Մատիկյանի կարծիքով, այդ լեռը Մասիսն է, որը ժուլվորդի մեջ անվան-
վում էր «մթին լեռ», «սև լեռ», «մատախապատ լեռ», ինչը քաջատրվում է
«Դիորքոս» անվան Դևոնդ Ալիշանի «մութ» կամ «մութը թափանցող» ստու-
գարանությամբ: Բայց հունարեն «Դիորքոս» նշանակում է «ծածկված»,
որն էլ համապատասխանում է Կեղծ Պլուտարքոսի վկայած ավանդության
Միերի որդու լեռան մեջ ծածկված լինելու հանգամանքին²⁹:

Հերոսի քար դառնալու մտովն արտահայտված է «Օձ-Մանուկ, Վաքք-
Մանուկ» հեքիաթում. մի այր ու կին զավակ չեն ունենում և Աստուծոց
խնդրում են. «Աստված, մզգի աղե մի տաս, յոթ անձին էրինք մորթինք մա-
տաղ ու յոթ կիտր խունկ ու մտմ ծխենք Աստծուն»: Աստված զավակ է

պարզում, բայց այր ու կինը մտաւում են խոստման մասին: Ու մի օր էլ, երբ Վարդ-Մանուկ զավակը ջրի պոնկին է հասնում, Աստված նրան քար է դարձնում:

Դժվար չէ կռահել, որ հեքիաթի «ջրի պոնկին» Արարսի մերձակայքն է, որտեղ Դիորվասը Մասիս լեռան է վերածվել: Անհայտ է սակայն, Դիորվասի՝ Կեղծ Պլուտարքոսից վկայված «Արեոս» հակառակորդը, թեև Մասիկյանը նրան նույնացնում է Արա Գեղեցիկի հետ²⁰: Բայց մարտահրավեր նետելու թեման առկա է նաև հայկական հեքիաթներում. Արև Մանուկն անհուշող որսորդություն անելուց հետո վարձում է ճեռահարի Արևին: Արևն ապտակում է նրան և փակում ժայռի մեջ: Մեզ թվում է, որ Դիորվաս - Արև Մանուկի հակառակորդի անունը Կեղծ Պլուտարքոսին հասել է «Արև» անվանն «աս» հունական վերջավորության հավելումով, և «Արեոս»-ը ուսումնասիրված Արեսը չէ: Փորձենք նրան որոնել հայկական էպոսում:

Էպոսի մի շարք պատումներում Փոքր Մեծը ամեն օր իր հինգ քեռիների հետ որսորդության է գնում և խայեր որսում: Քեռիները որսը մորթում, շալկում, քերում են տուն: Սի օր, Մեծի մայր խանդութն ասում է. «Ի՞նչ կընը, կ'ասըն՝ դու կտրիճ իս, ամեն օր քու քեռիք մեշիկ կ'ենին, կը քիռին, դու մեկն ընձի չըս քիռի»: Հաջորդ օրը Մեծը մի խոյ է որսում, տանում է, որ տա մորը, քեռիներն ասում են. «Մեկ էլ բռնի, մեկ էլ բռնի»: Մեծը չի բռնում: «Էսկանդար ընձի բոլի, - ասում է, - գացեք, ծի խամար բռնեցեք»: Քեռիները մտածում են, որ ամբ է դատարկ ձեռքով տուն դառնալը և որոշում են Մեծի ձեռքից որսը խլել: Մեծը հինգ քեռուն էլ զարկում է գետնին: Հինգն էլ մինչև մեջքները թաղվում են հողի մեջ: Ինքը որսն ամռում, գալիս է տուն: Մայրը հարցնում է. «Տղա, դու էկար, քո քեռիք հա՞ր ին»: Ասում է. «Ի՞նչ քեռիք կանգնած ի ճամբիս մեջ կը ծողան, չըն իցա»: Դավիթը գնում, տեսնում է հինգն էլ մեռած են: Գալիս է տուն, երեք անգամ ապուսկում է որդուն: Մեծը ասում է. «Էն մեկն՝ դու ի՞նչ խերն էր, քի խաթըր: Մեկն էլ՝ Աստղծուն խաթըր էլավ, էս էրկուս... Էս իրի՞քն... Դու հըն՞չի՞ զարկեցիր, ի՞նչ հախավ»: Ձեռքը գցում է Դավիթի մեջքին, բարձրացնում և ասում է. «Ի՞նչպես քեռիք տեղն ու տեղ չորցուցի, քեզ էլ կը վիրիցում, կը զարկի՞ն գիտին, վաղ չորսանաս»: Բայց չի զարկում, ցած է իջեցնում: Դավիթն անհիծում է Մեծիին. «Անմախ ըլնըս, քու ժառանգն էլ դուս չընկը. վոր ընկը՞ աշխարք կ'ավիրի»²¹: Դրանից հետո է Մեծը փակվում ժայռի մեջ:

Էպոսի Դավիթի և Մեծի ճյուղին վերաբերող բոլոր պատումներն էլ վկայում են Դավիթի՝ որդուն տված անեծքի մասին: «Օձնամանուկ, Արևմանուկ» հեքիաթում էլ Արևից ապտակ ստացած Արև Մանուկն ասում է. «... ինձի մի փնտռեք, ես արև չեմ կրնար տեսնալ, մեր քաղաքը և մեր տունը չեմ կրնար մտնալ, եթե գամ՝ անպատճառ կու մեռնիմ, անհիծված եմ»:

Ինչպես ընդունված է ասել, Մեծի կերպարն էպոսում երկփեղկված է Մեծ Մեծի (Առաջնածև Մեծը) և Փոքր Մեծի միջև: Նրանց երկուսի մեջտեղում Դավիթն է՝ մեկի որդին, մյուսի՝ հայրը: Ո՞վ է նա: «Դավիթի ազգ դեվա-

տաննհրուց ի», - ասում է ասացողը⁷², իսկ եկեղեցին, ինչպես գիտենք, դևեր էր հռչակել հեթանոս աստվածներին: Դավթի կերպարը չէր կարող պատահականորեն հայտնվել արևի, լուսնի և սրբազան դաշինքի աստվածների միջև: Նա պետք է կրեր Միհր-Միերմների աստվածային հատկանիշները: Եվ կրում է. Դավթիս էլ, ինչպես հնդիրանական Միթրա-Միիրը, դաշինքի աստված է ու սրբազան երկյուղածություն ունի երդման նկատմամբ: Էպոսի Դավթի և Մեծ Միերմ ճյուղերին վերաբերող գրեթե բոլոր պատումներում էլ նրա, ինչպես և իր հոր մահվան պատճառը երդմանազանցությունն է: Նա տկարանում է և ապա հաղթվում, որովհետև Չնչկիկ Սուրբանին (կամ այլ անուններով հայտնի միևնույն գործող անձին) խոստանում է յոթ կամ ութ օր հետո գալ և մեծամարտել հետը, քայքայ մոռանում է: Միերմի կերպարը ոչ թե երկփեղկվել, այլ եռափեղկվել է սրբազան եռամիասնությամբ: Դավթին էլ երդման և արևի աստված է, քանզի Արև Միիրի որդին և Արև Միիրի հայրը չէր կարող Արև կամ Արև աստծո էմանացիաներից մեկը չլինել:

Հայկական ավանդույթներում էլ, թերևս, արևների գծտության թեման կապ ունի ցերեկվա և գիշերվա հերթափոխի հետ: Արեգակն օրվա տարբեր կեսերին տարբեր ձևով և տեսքով է հայտնվում մարդկանց: Ուրիշ է այգաքացի նոր ծագող արևի կերպարանքը, միանգամայն այլ է, երբ նա զենիթում է գտնվում, բոլորովին այլ տեսք ունի վերջալույսին, երբ մայր է մտնում: Կարծես, իրոք, երեք, իրարից տարբեր արևներ ենք տեսնում առավոտյան, կեսօրին և մթնշաղիին: Այս երևույթը նկատել են նաև բնությունն աստվածացնող մեր նախնիները ու որպեսզի ինչ-որ կերպ արդարացնեն կենսատու լուսարերի՝ երկնականաբից անհետանալը, հնարել են վերջալույսի Արև աստված Փոքր Միեր - Արև Մանուկի և ցերեկվա Արև աստված Դավթի (նրա նախատիպի) գծտության թեման: Արեգակը հավիում է Արարատ լեռան ևտևում, Փոքր Միեր - Արև Մանուկը փակվում է Արարատ լեռան մեջ: Երկնքում չկա այլևս ոչ կեսօրվա և ոչ էլ այգաքացի Արևը: Մութը պատում է երկիրը: Հայտնվում է լուսինը, որը կարծես նվազած արև լինի: Նա Փոքր Միերն է՝ գիշերվա արևը՝ ոչ այն է մեռած, ոչ այն է՝ կենդանի: Անիծված է կեսօրվա Արևից և միայն գիշերներն է «ժուռ գալիս իր ապրուստին», ինչպես «Օձեմանուկ, Արևմանուկ» հեքիաթն է ասում: Ի՞նչ անել, որ լույսն ու քարին վերածնվի: «Արեվ Մանուկին հեքիաթում» Ծաղիկ աղջիկը հանդիպում է «մեռելիլիս» եղած Փոքր Միերին, տեսափոխում է նրա ոտքերի և գլխի մտ լրված երկուական կերտներն ու փարչերը և Միեր - Արև Մանուկը կենդանանում է: Ի՞նչ է սա նշանակում:

Միթրա-Միիրը որմնաքանդակներում և քարձրաքանդակներում ներկայանում է երկու ջահակիր մանուկների մեջտեսում, որոնցից մեկի ջահը վեր է պարզած, մյուսինը՝ վար: Միերագետներն այդ ջահերի խորհուրդը հանգեցնում են նոր ծագող և մայր մտնող արևի քացատրությանը կամ Յավաստղի համաստեղություն մտնող՝ գարնանամուտն ու պտղաբերումն ավետող և Կարիճի համաստեղությամբ անցնող՝ ձմեռան վերադարձն ազդարարող

արևի շրջապատւոյտը: Մեկ այլ տեսակետով էլ ջահակիրներին մեկը դիտվում է ջերմության և կյանքի, մյուսը՝ ցրտի և մահվան խորհրդանիշ³³:

Այդ երկու ջահերն են մեր հեքիաթում ներկայացնում երկու կերտները: Բայց դրանց հետ կա նաև երկու փարչ, որոնք նույնպես Արև Մանուկի թալիսմաններն են: Անշուշտ, փարչերն ու կերտները տիեզերական երկվայթյունն են արտահայտում՝ հուր – ջուր տարերքներով, որոնք կարող էին խորհրդանշել ինչպես գիշերվա և ցերեկվա, այնպես էլ ձմռան ու գարնան հակադրությունը: Ամենայն հավանականությամբ, հնում Միհր - Միերի սրբարանում վստփալ ջահերի և ջրով լի սափորների նույնպիսի ծխական տեղափոխություններ են կատարել, որպեսզի նպաստեն «մեռելկոխ» եղած սիրելի աստծո վերադարձին: Այդ մասին հուշում է նաև հեքիաթասացը, երբ վկայում է, որ նա ժամանակ առ ժամանակ կենդանանում էր, երբ որևէ մեկը տեղափոխում էր կերտներն ու փարչերը:

Երբ Միեր-Միհրն ընկալվում է իրև գարնանաբեր աստված, ինչպես նաև իր վրա է վերցնում աշխարհի փրկչի առաքելությունը, նրան սկսում են յոթ անձինք երինջ գոհարներ և մի անձինք երինջ էլ դնում են արյան առջև, որ «էն արունը քշի տանի են էրինջին», որ չուշանա Միերի գալուստը, ինչպես ասվում է «Օձ Մանուկ և Արին Արմանելին» հեքիաթում: Բայց, ընդհանրապես, քառասուն անձինք երինջ է գոհարներում նաև ինքը՝ Միերը, երբ պատրաստվում է կռուսաշտ թագավորի Փաշա որդու (վիշապի) վրա կռիվ գնալ:

Միերի գարնանամուտն ազդարարող գործառույթը երևան է հանում հատկապես նրան նվիրված Տյառնընդատաջ (Տրնդեզ) հայ ազգային տոնը, որի գլխավոր նպատակն է կրակապաշտության միջոցով ազդել ստոնամանիքների վրա և հմայական ճանապարհով զորացնել արևի ջերմությունը: (Տոնը նշվում է փետրվարի 13-ին)³⁴:

Միեր-Միհրը հեռացող աստված է, քայքայ երեսն է, որ փոխարինելու է եկել իհն հայոց Յորեն հատիկ մեռնող և հարություն առնող աստծուն: Դա ակնհայտ է նույնիսկ հացի նկատմամբ նրա ունեցած վերաբերմունքից. «Եր օր ցորնի հատն էլա՛ մեկ մանուր, գետին կը խայիմնա, Միերն ու ուր ձին կուզան աշխար»: «Դժուար չէ կռահել, որ սկզբնական վարիանտի համաձայն, Միերի գալու է հենց սկզբունքում երջանիկ դարաշրջանը, երբ ցորենի հատը կարող է լինել և լինելու է մեկ մասուր», - գրել է Թադևոս Ադալթեզյանը³⁵: Վրացական դիցաբանության մեջ էլ Միերի զուգահեռ Ամիրանի մասին ասվում է. «Ցանկանում է ցանել աշխարհում հավասարություն-արդարություն, ժողովրդին տալը հացը կաթնով և ոչ թե արյունոտ»³⁶: Պատահական չէ, որ Միերին նվիրված Տրնդեզի տոնական ուտեստում գերակշռող հացահատիկային կերակրատեսակներն էին (խաշի, փոխիմո, աղանձ): Միերի (Մեծ Միերի) հացի ճանապարհը փակած առյուծին սպանելու պատմությ-

յունն էլ վկայում է, որ նա հացահատիկը հովանավորող աստծո գործա-
նույթներ ունի:

Մթնադարյան շարականներում Քրիստոսին վերագրում էին Սհերի
հատկանիշները, ինչպես օրինակ՝ «հուր փայլակնացեալ», «արեգակն ար-
դար», «առաւօտ լուսոյ», «ոյս քան զարեւ առաջ», «լուսատու տիեզերաց»,
«առաջին լոյս» և այլն: Իսկ Քրիստոսի մասին հավատալիքներն, ինչպես
հայտնի է, զգալիորեն ազդված են ոչ միայն Միհրի առասպելից, այլև մեռ-
նող և հարություն առնող աստվածների (մանավանդ փոյուզական Ատտի-
սի) պաշտամունքներից և ծեսերից: Մա նշանակում է, որ Սհերն արդեն
դուրս էր մղել հին հայոց մեռնող, հառնող աստծուն, որի սրբարանները վե-
րածվել էին մեհյանների («մեհերյան», «միերյան» ստուգաբանությամբ):

Քայց հենց քեկուզ Սհերի առասպելն էլ իր մեջ արտահայտում է մեռնող
և հարություն առնող աստվածների օրացուցային առասպելների մոդելների
հետքերը: Ինչպես փոյուզական Ատտիսը գիշերները կենդանանում և իր
տարփածուի՝ Մայր աստվածուհի Կիրեի մոտ էր գնում³⁷, այնպես էլ Արև
Մանուկը գիշերները օղջանում և ապրում էր Ծաղիկ աղջկա հետ: Ինչպես
Ատտիսի առասպելի մի տարբերակում Կիրեին իր սիրեցյալին թաղում է
քարանձավում և ողբում նրա մահը³⁸, այնպես էլ հայկական հեքիաթների
հերոսն է փակվում ժայռի մեջ: Ըստ երակյան Դամուզիի առասպելի տեքս-
տերից մեկում էլ Դամուզին մեռնում և լետան մեջ է փակվում³⁹:

Սի ուշագրավ հանգամանք ևս. Դավթի անեծքով, Սհերն անժառանգ
պետք է մնար, իսկ եթե ժառանգ լիներ՝ աշխարհն ավերվելու էր: Այդ ժա-
ռանգի աշխարհ գալու մասին հիշատակում է էպոսի պատումներից մեկը:
Նա ածղահա, դյուցազն է՝ Հոհանես անունով: Քայց Սհերը չճանաչելով,
սարսափից մետահարում է որդուն: Այդ արարքից հետո անբախտ հայրն իր
ասյրելն անարժան հանարելով, կնոջ՝ Գոհարի հետ փակվում է Վանա ժայ-
ռի մեջ, որտեղից ամեն ուրբաթ օրերին լսվում է նրանց լացն ու կոծը⁴⁰: Սինչ-
դեռ հեքիաթներում Սհերի վրայից, ինչպես ասացինք, վերանում է հոր ան-
եծքը: Նա ժառանգ է ունենում և վերադառնում ժայռից (լեռից) կամ եթե
քար էր (լեռ), մարդկային կերպարանք է ընդունում: Ժողովուրդը ցնծու-
թյամբ է դիմավորում նրան: «Որ էկավ, քեֆ. ուրախությամբ, նարարա, զու-
նա, ուտել, խմել, էլ չարի չկար», - ասում է «Օձ Մանուկ և Արին Արմանելին»
հեքիաթը: Հավանաբար, եղել է մի ժամանակ, երբ ժողովուրդն, իրոք, Սհե-
րին մեկընդմիջտ ժայռից դուրս եկած է տեսել, իսկ աշխարհն՝ ավերված (վե-
րափոխված): Կամ ժայռից դուրս գալուց հետո, Սհերը, չճանաչելով, սպա-
նել է որդուն և վշտից կրկին մտել իր ժայռը, ինչի մասին վկայում է էպոսը,
քայց ոչինչ չեն ասում հեքիաթները:

GAGIK MARTOYAN

THE MYTHICAL LARE OF MHER-MITHRA IN ARMENIAN FAIRY TAILS

(Summary)

From materials of one of a cycle of the Armenian magic fairy tales becomes clear, that the hero, closed in a mountain, Arev Manuk (Child Sun) is the same as Low Mher - Mithra, and his father is the same as David of Sasun of the Armenian epos "The Mads of Sasun". The latter, as well as his son Low Mher and his father High Mher too was considered as the god by the Sun. For the ancient Armenians Mithraism was expressed in a worship of three suns - mornings, day time's and evenings. Arev Manuk is the evening sun, which every day is closing down behind a mountain and occurring at the night - in an image of the moon.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒՄ ԶՈՒՆՆԵՐ

1. Էմինան ազգագրական ժողովածու, հտ. Դ, Մոսկվա-Վաղարշապատ 1902, էջ 20:
2. Գ. Սրվանձախյան, Երկեր, հտ. I, Ե. 1978, էջ 490:
3. Ռ. Պատկանյան, Երկասիրություններ, հտ. III, Պետերբուրգ-Դոմ-Ռոստով, 1904, էջ 217:
4. «Բիրական», 1899, N 33, օգոստոս 25, էջ 519:
5. Сборник материалов для описания племен и местностей Кавказа, книга 42, отдел II, Тифлис, 1912, с.48.
6. «Հասկեր» 1914, հունվար, էջ 42:
7. Сборник материалов, книга 13, отдел II, Тифлис, 1892, с.93.
8. Գ. Տերենց, Վանա սազ, Ս մաս, Թիֆլիս, 1899, էջ 99:
9. Գ. Սրվանձախյան, անդ, էջ 452:
10. Բն. ազգ. ժող., անդ, էջ 174:
11. Անդ, էջ 390:
12. Сборник материалов, книга 19, отдел II, Тифлис, 1894, с.159.
13. Сборник материалов, книга 7, отдел II, Тифлис, 1889, с.187.
14. Դ. Աղայան, Երկերի ժողովածու, հտ. III, Եր., 1973, էջ 104:
15. Հայ ժողովրդական հեթանոսներ հտ. I, Եր., 1959, էջ 236:
16. Նույնը, հտ. IX, Եր., 1968, էջ 231:
17. Նույնը, հտ. VI, Եր., 1973, էջ 77:
18. Սասնա ծռեր, հտ. Բ, Եր., 1951, էջ 93-107:
19. Ս. Վանայանց, Ջրանց տան Սասնայ ծռեր: Դաիթ և Սիեր ազգային ժողովրդական վեպի պատմականը, Վաղարշապատ, 1907:
20. Սասնա ծռեր, հտ. Ա, Եր., 1936, էջ 244-245:
21. Թ. Ավարտեզյան, Միերը Հայոց մեջ, Վիեննա, 1929, էջ 51-53:
22. Ж. Дюмезиль, Верховные боги индоевропейцев, Москва, 1986, с. 51.
23. Թ. Ավարտեզյան, էջ 67-68:
24. Նույնը, էջ 78-79:

25. Նույնը, էջ 80:
26. Սասնա ծռեր, հտ. Ա, էջ 470:
27. Նույնը, էջ 101:
28. Ա. Մատիկեան: Արայ Գեղեցիկ, Վեներաիկ, 1930, էջ 283:
29. Նույնը, էջ 300-301:
30. Նույնը, էջ 302-304:
31. Սասնա ծռեր, հտ. Ա, էջ 467-470:
32. Նույնը:
33. Կ. Սելիք-Օհանջանյան, Միքրա-Միհրը «Սասնա ծռերի» մեջ, Եր., 1946, էջ 269-270:
34. Տե՛ս ման է. Խառատյան-Առաքելյան, Հայ ժողովրդական տոները, Եր., 2000, էջ 44-50:
35. Թ. Աղալտեցեան, էջ 88:
36. Նույնը, էջ 92:
37. Ա. Մատիկեան, էջ 201-202:
38. Գր. Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Եր., 1944, էջ 103:
39. Ա. Մատիկեան, էջ 177:
40. Սասնա ծռեր, հտ. Բ, էջ 228-230:

ՀԱՄԱՐԿ ԿՈՆՔՐԵՏԱՆ

**ԱՐԵՎԵԼՑԱՆ ՊՈՆՁԻԱՅԻ ԱՌԱՆՁԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴՐՄԵՎՈՐՈՒՄԸ Յ. Վ. ԳՅՈԹԵԻ «ԱՐԵՎԱՏՍԱ-ԱՐԵՎԵԼՑԱՆ
ԴԻՎԱՆՈՒՄ»**

1819թ. հրատարակվեց Յ. Վ. Գյոթեի «Արևմտա-արևելյան դիվանը», որում հեղինակը ներկայացնում է Արևմուտքի և Արևելքի գրականության, մասնավորապես, պոեզիայի առանձնահատկությունները:

Արևմտյան գրականության մեջ ինչպես Գյոթեից առաջ, այնպես էլ հետո բազմիցս անդրադարձել են Արևելքի թեմային: Դեռևս XV-XVI դդ. Արևմուտքի վարած գաղութային քաղաքականությունը գրականության մեջ հիմք դրեց «ֆիլոսոֆիկալիզմին»՝ ձևավորմանը, որի ներկայացուցիչները իդեալականացնում էին արևելյան հերոսներին: Սակայն նրանք արևելյան ֆոնի վրա, արևելյան համընդհանրով ներկայացնում էին արևմտյան մարդուն, նրա մտորումներն ու հույզերը, այսինքն՝ հերոսները արտաքինով արևելյան էին, իսկ գաղափարներով, ներաշխարհով՝ արևմտյան: Արևելյան մտքի կիրառման այս ձևը մալ ռոմանտիկների սիրած բանաստեղծական ձևերից էր: Միայն Հերդերը, իսկ այնուհետև նրա բարեկամ ու գրական մտազգորդ Գյոթեն կարողացան օրգանապես միացնել այս երկու աշխարհամասերի մշակույթն ու գրականությունը, «արևմտա-արևելյան» տերմինը օգտագործել որպես հոսանիչ «հասմամարդկայինի»: Այդ են վկայում Հերդերի փիլիսոփայական հոդվածները, «Ժողովուրդների ձայնը» աշխատությունը, Գյոթեի «Արևմտա-արևելյան դիվանը»:

«Դիվանը» ստեղծվել է 1814-15թթ. և ընդգրկում է 12 գրքեր՝ Մագանի մամե, Հաֆեզ մամե, Ուշկ մամե, Թեֆկիր մամե, Ռենց մամե, Հիլմետ մամե, Թիմուր մամե, Ջուլեյկա մամե, Մաքի մամե, Մաքիալ մամե, Պարսիկ մամե և Խուլդ մամե: «Դիվանի» ստեղծման կարևորագույն խթանը հանդիսացավ արևելյան բանաստեղծությունների, մասնավորապես, Հաֆեզի ստեղծագործությունների ընթերցումը և ծեր բանաստեղծի սերը երիտասարդ կնոջ՝ Մարիանե Յունգի հանդեպ, որը 1814թ. ամռանը ամուսնանում է իրենից 26 տարի մեծ ֆրանկֆուրտյան հարուստ բանկիրի՝ Յոհան Յակոբ ֆոն Վիլմեռի հետ: Այդ սերը «Դիվանում» կերպարամազված է մեծագույն սիրո՝ Հատեմի և Ջուլեյկայի միջև, որը ծեր բանաստեղծին դարձնում է երիտասարդ

և այդ երիտասարդացումն է նաև «Դիվանի» կենտրոնական մտփվմներից մեկը:

«Դիվանում» խառնված. միահյուսված են արևելյան սովորույթներն ու քարքերը արևմտյանի հետ՝ ստեղծելով արևմտա-արևելյան հարուստ կոլորիտ: Գլոբեն հաճախ է անդրադարձնում արևելյան հերոսներին, արևելքին բնորոշ մտքերին ու գաղափարներին. սակայն չի կարելի ասել, որ «Դիվանի» կառուցվածքն ու բովանդակությունը միայն արևելյան է, քանի որ ժողովածուում առկա են նաև գերմանական ժողովրդական երգի, բանասիրության. անտիկ հունական գրականության տարրեր: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ Գլոբեն «Դիվանում» պահպանել է արևելյան պոեզիայի թե՛ բովանդակային և թե՛ կառուցվածքային առանձնահատկությունները.

1. «Դիվանը» հարուստ է արևելյան լիրիկական ժանրին բնորոշ բանաստեղծական ձևերով, առավելապես շատ է կիրառվել պարսկական գազելը,
2. Գլոբեն հաճախ պահպանել է արևելյան պոեզիային հատուկ հանգավորումը, օրինակ՝ *aa, bb, cc,*

3. «Դիվանում», ինչպես արևելյան պոեզիայում առկա է յուրահատուկ հարգանք բառի, նրա երկու հիմնական հատկանիշների՝ իմաստի և բազմիմաստության նկատմամբ: Շնորհիվ իր իմաստի՝ բառը ծառայում է որպես թուր, որ կարող է հաղթել նույնիսկ սուլթանին (օրինակ՝ Ֆիրդուսին՝ սուլթան Մահմուդին), շնորհիվ իր բազմիմաստության, բառը ծառայում է որպես վահան, որը թաքցնում է բանաստեղծության իսկական իմաստը:

4. «Դիվանի» առանցքն են կազմում արևելյան պոեզիայի երեք հիմնական սկզբունքները՝ պոետի կերպարը, բանաստեղծական պատկերը և գեղարվեստական մեթոդները:

5. «Դիվանի» բանաստեղծությունները այն չորս տարրերի ռեզնանսն են արդյունքներն են, որոնք հարյուրամյակներ շարունակ ռեզնանս են արևելյան պոետներին, դրանք են՝ սերը (ուշք նամե), ատելությունը (ռենջ նամե), գինին (սաքի նամե), և թուրը (թիմուր նամե):

«Դիվանի» գրքերը թեև կառուցվածքով անկախ են, սակայն ունեն մերթն, բովանդակային կապ, օրինակ՝ թե՛ Մոզանի նամեում, թե՛ Հաֆեզ նամեում հիմնական թեման բանաստեղծն է ու նրա ստեղծագործությունը: Այստեղ Գլոբեն առավել շատ է օգտագործել արևելյան բառապաշար (օր.՝ քաղաքական, թալիսման և այլն) և արևելյան բանաստեղծությանը բնորոշ համագավորում (օր.՝ *aa, bb, cc*): Ուշք նամեում արտացոլված են արևելյան պոետի հայտնի սիրահար գույզերի պատմությունները: Թեֆկիր նամեն պարունակում է աշխարհի և կյանքի մասին խրատական, ուսումնասիրող բանաստեղծություններ: Ռենջ նամեին բնորոշ է հակադրությունը, բանավեճը: Հիկմետ նամեում հիմնականում ամփոփված են արևելյան ծագում ունեցող իմաստասիր խոսքեր ու ասացվածքներ: Թիմուր նամեն նվիրված է մոզոլ տիրակալ Թիմուրին, սակայն որոշ դրվագներում արտացոլված է նաև Նապոլեոնի կերպարը: Ջուլեկա նամեն «Դիվանի» ամենածավալուն գիրքն է,

որտեղ ամփոփված են սիրային քանաստեղծություններ: Սիրային լանդս-տեղծությունները այստեղ մերթ քմերտ են. մերթ զվարճալի, մերթ էրոտիկ: Գրքում իշխում են սերը և կիրքը, որոնք չեն ճանաչում աշխարհագրական տարածքներ և սահմաններ: Եթե «Դիվանի» մյուս գրքերում մերթ զերիշ-խում է արևմտյան մոտիվը, մերթ՝ արևելյան. ապա Զուլեյկայի գրքում այդ անհնար է միմյանցից տարանջատել: Սաքի նամեում ներկայացված է գե-լեցիկ պատանու համոտեքաուալ հակումը, պոետը մեծարում է զինին. նրա քաղած ազգեցությունը: Մասնալ նամեում Գյոթեն անդրադառնում է խրատ-ներին և ճշմարտություններին: Պարսիկ նամեմ նվիրված է պարսիկների կրոնին ու պատմությանը, Խուլլո նամեմ՝ իսլամական կրոնում պատկերված սրբախոհին, որը վայելքի վայր է:

1820թ. մայիսի 11-ին Գյոթեն Ցեյթերին գրում է. ««Դիվանի» պոեզիան համապատասխանում է իմ ապրած տարիներին, այն հստակ ակնարկ է սի-րո, համակրանքի, հիասթափության մասին, որոնք բնորոշ են այս երկու աշ-խարհներին...»²:

«Դիվանին» կցված է նաև արձակ մասը՝ «Գրառումներ և հուլվածներ» «Դիվանը» լավագույնս ընկալելու համար»: Իր «Գրառումներում» Գյոթեն հանդես է գալիս որպես գրականագետ, իսկ «Դիվանում»՝ որպես պոետ: Որ-պես գրականագետ Գյոթեն կարողացավ քաղմակողմանի և խաղը բնութագ-րել արևելյան և ամենից առաջ հաֆեզյան պոեզիան, որպես պոետ նա քա-ցահայտեց արևելյան պոեզիայի առանձնահատկությունները, բառերի, նշանների, գույների նկատմամբ տաժած արևելյան պոետների խորհրդա-վոր վերաբերմունքը:

Գրառումներում, ինչպես ինքն է գրում, նա հանգես է գալիս որպես ճա-նապարհորդ, «ուր չի կարող անտարբեր անցնել արևելյան մարզաբնակների կողքով»³. Իսկ «Դիվանում» Գյոթեն ոչ թե դիտորդ, ճանապարհորդ է. այլ արևելյան պոեզիայի առանձնահատկությունների կրողն ու արտահայտո-ղը:

Գյոթեն, շնորհիվ իր ինքնատիպության և քաջատիկ տաղանդի. կարողա-ցավ պահպանել արևելյան պոեզիայի առանձնահատկությունները, արևել-յան հերոսների ներաշխարհը, սակայն միաժամանակ չկորցնել սևփական ինքնատիպությունը: «Դիվանում» իշխում են պոեզիան, սերը, կիրքը, զի-նին. սրանք համամարդկային զգացմունքներ ու գաղափարներ են, «որոնք բնորոշ են թե՛ Արևելքին, թե՛ Արևմուտքին»⁴:

1815թ. մայիսի 18-ին Գյոթեն իր հրատարակիչ Ջոթային գրում է. «Ես ցանկանում եմ, որ այն հասանելի լինի շատ գերմանացիներին...»⁵: Սակայն նրա այս ցանկությունը չի կարելի իրագործված համարել, քանի որ «Դիվա-նը» իր ձևով և բովանդակությամբ խաղը էր թե՛ իր ժամանակակիցներին և թե՛ մեր ժամանակակից եվրոպացիներին: Սակայն որպես ազգերի մշա-կալյոթների մերձեցման, համամարդկային գրականության ստեղծման փորձ «Դիվանը» իր քաջատիկ դերն ունի համաշխարհային գրականության մեջ:

«Երջում պետք է ցավով նշել, որ Գյոթեի «Արևմտա-արևելյան դիվանը», որն ավելի քան երկու հարյուրամյակ ոգեշնչում է բազմաթիվ պետների. դեռևս չի քարզմանվել հայերեն:

HASMIK MELKONYAN

THE REFLECTION OF PECULARITIES OF THE EASTERN POETRY
IN "WEST-EASTERN DIVAN" OF J.W.GOETHE

(Summary)

In 1819 was published the "Western-Eastern Divan" of Goethe. The author presents the peculiarity of the west and east lecture and especially poetry in it. The eastern traditions and customs are mixed, interlaced with western in "Divan", which creates the west-eastern rich colour. Thanks to Goethes individuality and exclusive talent, he could keep the peculiarities of eastern poetry, the inner life of eastern heroes, but in the same time he could save his own individuality.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒՅՈՒՆՆԵՐ

1. И. С. Брагинский, Западно-восточный синтез в Диване Гете, Москва, 1988, с.572.
2. J. B. Metzler, Goethe Lexikon, Weimar, 1999, S. 539.
3. Նույն տեղում, էջ 540.
4. Goethes sämtliche Werke, Stuttgart, Berlin, 1902.
5. Goethes Briefe, Hamburg, 1959, Bd. 4, S. 114.

ԳԱՅԱՆԵ ԸԱԳՈՅԱԼ

«ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ» ԹԵՄԱՆ ՀԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ
ՀԱՐՄԱՆԻՔԻ ՓԵՍԱՑԻ ԾԻՍԱԿԱՆ ՏԵՋՍՈՒՄ

Բազմաշերտ հարսանյաց ծեսում վերակազմվում են նվիրագործության մի շարք ծեսեր: Դրանց առկայությունը պայմանավորված է ոչ միայն հարսանիքի իրրև անցման ծես՝ հասնարակական կարգավիճակի փոփոխություն դիտարկելով, այլև հարսանիքում մինչև ամուսնական նվիրագործման ծեսերի կամ նրանց տարրերի ժառանգական կապի շարունակականությունը: Այսօրինակ ծեսերը ամուսնության ծիսական համալիրից տարրերվում են թե՛ իրենց կառուցվածքով, թե՛ հիմնական առասպելաբանական բովանդակությամբ: Քանի որ ամուսնական հանդիսությունները հիմնականում վավերացնում են զուգի միացումը, ուստի դրանցում կարևորվում է նրանց միասին հանդես գալը (հմմտ. օր.՝ թոմրի շուրջը և եկեղեցում կատարվող պսակի արարողակարգերը, հարս ու փեսային միասին նստեցնելու կամ միմյանց կերակրելու սովորությունները): Մինչդեռ նվիրագործման համալիրն, ընդհանրապես, ենթադրում է փեսայի և հարսի իրարից առանձնացված ծիսական և առասպելաբանական տեքստեր: Եթե հարսի նվիրագործումը իրրև կնոջ անցման ծես, ավելի անհատականացված է ու չունի վառ արտահայտված հասարակական հնչեղություն՝, ապա փեսայինը, որպես տղամարդկանց խմբի անցման ծես՝ համայնքային արարողության բնույթ է կրում: Այն պայմանավորված է արխայիկ հասարակություններում հաճախ տղամարդկանց անցումնային ծեսերը օրացուցային որևէ տոնին համընկեցնելով և դրա առանցքը դառնալով: Քանի որ նման տոների բովանդակությունը կապվում է տիեզերաստեղծ առասպելաբանության հետ՝, ուստի զարմանալի չէ, որ փեսային առնչվող բազմաթիվ ծեսերում ևս առկա է հիշյալ թեմաների արտացոլումը: Ընդ որում, պետք է նշել, որ նվիրագործման ծեսի և տոնի (իրրև հիմնական համայնքային ծիսական արարողության) համակցման շնորհիվ է, որ *կռնուցիտաս*՝ («անդեռ» երիտասարդների խմբի) անդամը ծեսում վերապրում է առասպելաբանական հերոսի ուղին, և նրան են վերագրվում մախադեպային առաջին արարքները: Տոնի և նվիրագործության համագումարը հանգեցնում է նախածեսին՝ ծիսական դրամայի, որը և ներկայացնում է նախադեպի առասպելաբանությունը: Միևնույն ծիսական գործողության

տակ կարող են թաքնված լինել երեք զուգահեռ համատեքստեր՝ Գվիրա-գործման, Գախատուցի և Գախածեսի: Ու թեև դրանք մնացորդակ կառուց-վածք ունեն, սակայն տարբեր առասպելաբանական սյուժեներ են ենթադ-րում: Եվիրագործման առասպելի հերոսի մահը և վերածնունդը մի կողմից համապատասխանում է Գախատուցի «գերկառուցվածքի»⁵ քայքայմանն ու կառուցվածքի վերականգնմանը⁶, մյուս կողմից՝ Գախածեսի «արարչագոր-ծություն» առասպելին: առաջին զոհից տիեզերքի ստեղծման և տիեզերքից առաջին մարդու վերստեղծման⁷ թեմային: Եթե Գախատուցային ենթա-տեքստը հիմնականում արտահայտվում է հարսանիքի վարքային (կամ հու-զակամ) ծածկագրում (այսինքն՝ *գործում*), ապա Գախածեսի վերականգ-ման առումով ավելի հարուստ տեղեկատվություն է պարունակում վերջալ ծածկագիրը՝ այսինքն *խաղը* (ինչպես հարսանեկան երգերի տեքստերը): Եվիրագործության ենթատեքստն ինքնին արտածվում է ծեսի տրամաբա-նությունից. *մտքից*, ի նկատի առնելով հարսանիքի բուն գիտակցվող նպա-տակը. նորաստեղծների նոր հասարակական կարգավիճակ ձեռք բերելը:

Տվյալ հոդվածում կանոնադրաբանաբար միայն Գախածեսի *աշխարհի* և *ա-ռաջին մարդու արարման* թեմային, որն ինչ-որ չափով արտահայտվում է փեսայի տեքստում: Այն հիմնականում առնչվում է հարսանիքի թագավորա-կան ծածկագրին, քանի որ Գախածեսի առասպելաբանությունը կապ-վում է ժամանակների սկզբում գործող առաջին մարդու՝ թագավորի հետ: Հայոց հարսանիքում փեսայի կերպարի նման մեկնաբանությունն ակն-հայտ է հենց փեսային տրվող «թագավոր» անվանումից⁸: Մակայն թագա-վորական տարրորոշիչները (ատրիբուտիկան) ոչ միայն փեսային, այլև թա-վորին ու ազապաշուն են բնորոշ, որ ամենայն հավանականությամբ, հար-սանիքում ամրագրված տղամարդկանց խմբային Գվիրագործման ծեսի ար-ձագանքն է: Հարսանեկան ծեսում թագավորի կերպարի նման շեշտադրվա-ծությունն է առիթ տալիս ենթադրելու, որ այն ավելի հնամենի արմատներ ունի, քան փեսայի կերպարը: Վերջինս ոչ միայն թագավորին բնորոշ առան-ձին հատկանիշներ է ժառանգել, այլ կերպավորում է առասպելաբանական ողջ համայնի թագավորն իբրև միկրոկոսմոս, որի մակրոկոսմոս տարբերակնե-րի ամենաբնորոշ խորհրդանիշը տիեզերական ծառն է: Հայկական հարսա-նիքում այդ դերի կրողը «փեսի ծառ»-ն է («տոտի ճյուղ»⁹, փոփխ¹⁰, առք կամ նորոճ¹² ևն), որի ստեղծումը հարսանեկան ծեսի որոշ տարբերակներում ըն-թանում է փեսային թագավոր դարձնելուն զուգահեռ¹³: Թեև, ծառ պատրաս-տելու և փեսա հագցնելու ծեսերն հաճախ իբրև առանձին արարողություն-ներ են կատարվում¹⁴, հատկանշական է, որ ծառ և փեսա զովելիս նույն եր-գերն են երգում: Եվ ինչպես ծառ զովելիս են հիշատակվում փեսայի հան-դերձանքի մասերը¹⁵, այնպես էլ թագավոր զովելիս պարտադիր է «ծառա-յին» թեման¹⁶: Այս գովերգի տեքստերը հնարավորություն են տալիս խասելու հարսանեկան ծառի և, համապատասխանաբար, փեսա-թագավորի կեր-

պարմերի մասին որպես տիեզերական հարացույցների (մոդելների) որոնք մի քանի մակարդակներ են միահյուսում.

1. *Աստվածաշնչային* աշխարհը, որտեղ հիշատակվում են «զուսեղեն պտուղ յայվան», «Աստվածածինը», «առաքյալները», «որախտ-քախեն» և «ծով դժոխքը». «մեղավորներն» ու «զետ Յորդանան», «մկրտված աղբյուրն» ու «աուրբ Կարապետն» և «խնկե ծառը»¹⁷:

2. *Եկեղեցական* աշխարհը, որտեղ նշվում են Էջմիածինն ու Երուսաղեմը, քահանան ու սարկավազը, վարդապետն ու երիցները, տիրացուներն ու «արդար հոգիքն»¹⁸:

3. *Տիեզերական* մակարդակը, որտեղ նորապսակները (հմմտ. *մկրտկրամ*) հանդես են գալիս իբրև լուսատուներ¹⁹:

4. *Սեզոկոսմոս*, մարդկային աշխարհը՝ որի մեկնակետում նորապսակներին են (թագավորը, թագավորահայրը, ազապները, աղջիկները, հալևորներն ու պառավները, գեղի գզիլը)²⁰:

5. *Պատմական* հարթությունը, որտեղ փեսայի թագը նմանվում է անվանի թագավորների «թագերին» («Դավիթ մարգարեի թագին նման ի», «Սողոմոն իմաստունու թագ», «Սելբոն, Կասպար, Բաղդասար թագի նման է», «Կոստանդին թագավորի», «Ալյգար թագավորի», «Սենաքարիմ թագավորի», «Յովանասի թագավորի», «Տրդատ թագավորի», «Մանասէր թագավոր», «Կիրկեօր Լուսավորչի»)²¹:

6. *Ժամանակը*, որի բաժանումները ևս կրոնական ծածկագրով են ներկայացվում (օր. «քսան ու չորս մարգարեանց» հմմտ. օրվա 24 ժամի հետ, «տասներկու առաքելոց»՝ 12 ամիսների, «երեք հարիւր վացունը վեց հայրապետաց»՝ նահանջ տարվա հետ)²²:

Փեսայի և «Ժառի» տիեզերական համատեքստերը հաստատվում են նաև այս գովերգների հարց-պատասխան կառուցվածքով, և հարազատ է հենց տիեզերաստեղծ ծեսերին, որտեղ արարման սրբազան գործողությունը փոխարինվում է խոսքով²³:

Ինքնուրույնություն ձեռք բերելով՝ Հնդկաստանում նման ծեսի խաչքային մասը, դարձել է որոշակի գեղարվեստական ժանր՝ *brahmodya*. հանելուկներ աշխարհարարման մասին: Ինչպես ցույց են տվել Տ.Յ. Ելիզարենկովան և Վ.Ն. Տուպորովը, այս հանելուկները արտածված են զոհաբերության տիեզերաստեղծ ծեսերից: Այսպես, Պուրուշայի զոհաբերության ծեսերում՝ *Պուրուշամեհիայում*, ծիսական վարպետների միջև տեղի ունեցած երկխոսության ընթացքում մարդու մարմնի մասերը նույնացվում են աշխարհի տարրերի հետ՝ Ինչպես տեսանք, հայկական հարսանեկան գովերգերը ևս ենթադրում են միկրո- և մակրոկոսմոսների համապատասխանեցումը՝ դիտելով փեսային և «ծառը» իբրև նույնի երկու իզոմորֆներ: Հարց-պատասխանային երգերն ուղեկցում են նաև հայկական ավանդական հարսանիքի փեսա սավորելու ծեսը²⁴, որը, փաստորեն, զոհաբերության ծեսի մի տարրերակ է և այսպիսով հանգում է առաջին զոհի առասպելաբանական թեմային: Փե-

սային սափրելու արարողակարգում զոհաբերության իմաստը կարելի է տևանել զոհաբերության ծեսին բնորոշ գործողություններում. այսպես մինչև սափրելը փեսայի այտերին գինով (որն ըստ սինվալիկ ստածառության, արյան փոխարինողն է) խաչ են անում²⁶ (հմտ. զոհաբերելուց առաջ մատաղացուի ճակատին արյունով խաչ քաշելու սովորույթի հետ): Նույն զոհաբերության իմաստի հաստատումն է նաև ծեսն ռդեկցող «աճուրդը», ըստ որի փեսային սափրելը դիտարկվում է իբրև «քաստանի» մասնատում՝ քաստանում արարողության մասնակից անձանց միջև²⁷: Ջոնի պարտադիր քաշխամը յուրաքանչյուր զոհաբերության ծեսի անենակարևոր պայմաններին է: Ջոնի մասնատման թեմայի ձևափոխված տարր կարելի է համարել փեսայի սափրվող մազերից թողնված վերջին փունջը համբուրելու սովորույթը: Այն համադրելի է երկրագործական գրեթե բոլոր ժողովուրդներին բնորոշ դաշտում մնացած վերջին խրճի հետ կապված ծեսերի հետ²⁸: Հաշվի առնելով վերջին խրճի/փնջի սրբազան (սակրալ) բնույթը, այն համբուրելն ադերսվում է զոհին հարողակցվելու ծեսին, որտեղ համբուրը փոխարինում է զոհի քաշխամը: Ինչպես նկատել է Ս.Բ. Հարությունյանը, նշխարը ռտելը նույնացվում է զոհաբերված հացի՝ Աստծո մարմինը համտեսելուն: Ըստ նշված հեղինակի, այն հիշեցնում է վերջին խրճի այրելը կամ բովված հատիկների մասամբ ուտելը կամ դաշտով մեկ ցրիվ տալը: Նման սովորությունները տարածված են եղել մի շարք երկրագործ ժողովուրդների, այդ թվում՝ հայերի մեջ²⁹:

Եվ վերջապես, թագավորի՝ իբրև զոհի, նկարագիրն անժխտելի է դարձնում սափրելու ծեսի ավարտն ազդարարող կանչը. երբ մակարներից մեկը ձայն է տալիս՝ «Թագավորը թառն է», և բոլորը պատասխանում են՝ Աստծու գառն է³⁰: Կարելի է նույնիսկ ասել, որ փեսային թագավոր ճանաչելով առաջին զոհի առասպելաբանական կերպարը կապվում (կամ նույնացնում) է թագավորի կերպարի հետ: Նման ենթադրության հիմք է տալիս նաև այն, որ միայն սափրելու ծեսից հետո է փեսան ճանաչվում թագավոր: Սափրելու ծեսը երբեմն ռդեկցող երգերն էլ դասվում են *թագ* զովերի շարքին³¹: Դիտելի է, որ այդ ընթացքում փեսան ոչ միայն «թագ» (զլխարկ կամ պսակ) չի կրում, այլ նույնիսկ իր թագավորական թախտին նստած չէ: Ավանդույթի համաձայն՝ թախտ-գահը պատրաստվում էր առաստաղից կախված մրգերով, քաղցրավենիքով, քամբակով զարդարված կարպետից: Այս ամբողջական կառույցն անվանվում էր «թաղ»: Մրա ձևափոխված ժամանակակից տարբերակը՝ հարսի և փեսայի վերևում կախված գորգը, որի վրա քամբակով զրված են լինում նրանց անունները (երբեմն նաև՝ երջանկության մատրանները), գյուղական շրջաններում հանդիպում էր ընդհուպ մինչև 1990-ականները, հազվադեպ՝ նաև այսօր: Կարելի է ասել, որ ժամանակակից հարսանիքում ավանդական *թախտի* և փեսայի նույնացումն իր յուրօրինակ արձագանքն է գտնում, ինչպես հնդկական *brahman*-ի տարբերա-

կամ այն միաժամանակ և՛ զոհ է, և՛ զոհասեղան²²։ Ի նկատի ունենալով, որ վերջին երկուսը նույնաճուճ են նաև տիեզերական ծաղի հետ, հայկական փեսայի և *brahman*-ի միջև ենթադրելի զուգահեռներն այս իմաստով ավելի ակնհայտ են դառնում²³։

Հայկական հարսանիքում առավել բնորոշ դրսևորում է ձեռք բերում զոհաբերության և տիեզերական ծաղի քենաների սերտ կապը։ Այսպես, Նախիջևանում «ուտի ճյուղի» հիմքում դնում էին «մի լաւաշ հաց. մէջը սալ ածած և ծալած»²⁴։ Եթե հիշենք, որ մինչև մոթթելը մատաղացուին սրբազործելու համար պարտադիր օրինած աղ էին կերցնում, ապա դժվար չէ կուսիս, որ «ուտի ճյուղի» լավաշն, ամենայն հավանականությամբ, եղել է զոհի խորհրդանիշ փոխարինողը։ Եվ ինչպես ծառն է աճում գոհից՝ լավաշից, այնպես էլ խորհրդանշորեն զոհաբերված փեսան վերածնվում է նոր կարգավիճակով։

Ձոհաբերությանը հաջորդող ծի, նոր աճի քենաները հատուկ բուսական ծածկագրով զարգանում են փեսայի տարբերակում։ Երբ «սափրելու» ծեսն ամմիջապես շարունակող հագցնելու ծեսի գովերգերում փեսան բազմաթիվ ծաղիկների է նմանվում²⁵։ Տեղին է մշել նորապսակների երկրորդ ամենատարածված անվանումը՝ «ծաղիկներ» (ընդ որում, առանց որևէ տեսակի նախընտրության)։ Կարելի է ենթադրել, որ ինչպես թագավորն է ընկալվում իբրև իդեալականացված առաջին մարդու հավաքական կերպար, խորհրդանշելով և՛ հասարակությունը, և՛ աշխարհը, այնպես էլ «ծաղիկը» իբրև տեսակի բնորոշում (մշեցիներ, որ գովերգերում հիշատակվում են բազմաթիվ ծաղկատեսակներ), ի դեմս փեսայի (նաև հարսի) որոշակիորեն ընդհանրացվում է։ Ծաղիկը դառնում է փեսայի առավել ընդունված տարրորոշիչ՝ ատրիբուտ (նմտ. պարտադիր կրծքին սպիտակ ծաղիկ կրելը)։ Թագավորին հագցնելու (ծաղիկ քենա) և սափրելու (զոհաբերության քենա) ծեսերն «արարչագործության» գաղափարի շուրջը կառուցված լինելու և միևնույն ծեսի երկու բաղադրյալ փուլերը կազմելու երևույթը հաստատվում է նաև գրեթե նույն հանդիսությամբ փեսային մերկացնելու ու նրան իր զգեստի առանձին մասերի հետ մեկտեղ գովերգելու արարողակարգով։ Պակաս կարևոր չէ նաև այն, որ ծեսի տարբերակներից մեկում հենց սափրիչն է հագցնում փեսայի հանդերձանը։ Այլ խոսքով, մինչև մասերից հավաքելը՝ հագցնելը (նմտ. «ծառ» գարդարել, կառուցել)՝ մասնատման, բաժանման գործողություն էր կատարվում՝ հանդերձների հանելը, որ կարելի է դիտել իբրև սափրելու ժամանակ «բոստանի» վաճառքին զուգահեռ (կամ պտերմատիվ) ծես։ Այսպիսով՝ հագցնելու ծեսում, բացի աճի առասպելային, առկա է նաև *հավաքման* (որպես մասնատման հակառակ գործընթաց), առաջին մարդ-թագավորին տիեզերքի տարբեր մասերից կառուցելու (*ինտեգրել*) առասպելայինը։ Տիեզերական տեսանկյունից արտահայտված է փեսային հագցնելու արարողակարգն ուղեկցող հետևյալ երգում.

*«Անա բարձր լտններն ի վար,
Սեզի քարակ արև սրն է ծաբեր
Ամենուն երդիկն ի վար,
Սեզի դուռն ի ներս է ծառագեր,
Ամենդ ի վար եկեր,
Թագավորին կապան կապեցեր,
Լուսնկան աստառ արեցեր,
Արեգակն երես ձևեցեր,
Ան մոյ ու խոշոր աստղեր,
Թևերուն այուկմն կապեցեր»³⁶*

Մակայն փեսայի հագուստներն ավելի հաճախ նկարագրվում են որպես ուղղակի տարրեր քաղաքներում³⁷, հոգևոր (Երուսաղեմ, Էջմիածին) կամ աստվածական (Ստամբուլ, Թիֆլիս) կենտրոններում պատրաստված: Այսպիսով, փեսայի կերպարում արտացոլվում է իրական աշխարհագրական երկիրը՝ յուրօրինակ «հայկական գոթուսը»:

Հետաքրքիր է, որ ժամանակակից հարսանիքում ընդհանրացման (ինտեգրման) աշխարհագրական սկզբունքը անսպասելիորեն ի հայտ է գալիս երաժշտական *պոպուրիի* ձևով, որտեղ հավաքված են հայկական սոսյալ-միկայի որևէ հիշատակում (ինչպես, օրինակ, «Բարաբառուցի», «Երևանի սիրուն աղջիկ», «Վանաձոր» ևն) պարունակող երգերը:

Ներկայացված փեսա սափրելու և հագցնելու ծեսերի համատեքստում նախածիսային առաջին զոհի և առաջին մարդու արարման առասպելաբանական համապատասխան թեմաների վերակազմությունը թույլ է տալիս զուգահեռներ անցկացնել Բ.Լիմբուրգի կողմից առաջարկված «արարման» առասպելաբանական ցիկլի հետ, ըստ որի, աշխարհի հիմքն է դրոնում առաջին զոհը, որի մասերից ստեղծվում է տիեզերքը, ապա՝ տիեզերքի տարրեր մասերից նորից վերականգնվում է առաջին մարդը՝ դառնալով արարման հաջորդ փուլի ենթադրյալ (պոտենցիալ) զոհը³⁸:

GAYANE SHAGOYAN

THE THEME OF "CREATION" IN THE BRIDEGROOM'S RITUAL TEXT OF THE TRADITIONAL ARMENIAN WEDDING

(Summary)

The article discusses the mythological content of the bridegroom "Ur-ritual". It is reconstructed on the base of two rituals: of shaving and dressing the bridegroom as a "king". Both of them have a context of creation, but while the ritual of shaving has the theme of world unfolding from the primordial sacrifice, the

ritual of dressing implies the integration (creation) of the First Man from the different parts of the universe. Initial unity of these rituals assumes their correlation with the mythological "creation cycle" by Bruce Lincoln.

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինչն ըստ Մ.Էլիադի պայմանավորված է աղիկների ֆիզիոլոգիական առանձնահատկություններով դաշտանը որպես հասունության նշան ընդունելը: - տե՛ս M.Eliade, Rites and Symbols of Initiation. The Mysteries of Birth and Rebirth, New York, 1958, էջ 41:
2. Л.А.Абрамян, Первобытный праздник и мифология, Ер., 1983, с.52.
3. В.Н.Топоров, Праздник, - Мифы народов мира (далее МНМ), М., 1992, с.330.
4. *Կոմունիստի վերաբերյալ* տե՛ս В.Тэрнер, Ритуальный процесс, - Символ и ритуал, М., 1983, էջ. 168-230, 246-247:
5. Երբ որևէ ճգնաժամային իրավիճակում ամբուսափնի է դառնում եղած կառուցվածքի քանդվելը (իննի դա տեղեկորը թե՛ հասարակություն) անվանում ենք «գերկառուցվածք»: Վերջինիս ուժեղացումը կամ խտացումը քանդվում է տոմի՛ քսուտիկ վիճակի, ժամանակ: - տե՛ս Լ.Ա.Արրահամյան, Գ.Հ.Շազոյան, Տոմի շարժընթացը՝ կառուցվածք, գերկառուցվածք, հակակառուցվածք, - «Ազգագրական հանդես», Մարդաբանություն, 2000 (հրատարակության ընթացքում է):
6. Ինչպես հայտնի է նախատոնն առավել ամբողջական է հանդիսանում ամանորյա տոնում, որի հիմքում ընկած է *վերջի* ամբուսափնի քսուտի գաղափարը, որը համահնչում է նվիրագործվողի ծիսա-առասպելաբանական *սպանությունը*:
7. B.Lincoln, Death, War, and Sacrifice, Chicago & London, 1991, p.168-184.
8. Թագավորն իրրև առասպելաբանական կերպար տե՛ս Н.В.Брагинская, Царь, - МНМ, С. II, М., 1992 (և այնտեղ նշված գրականությունը):
9. Նորաստիճանի կերպարը՝ իրրև իդեալական արխետիպային զույգ (հմմտ. առասպելաբանական քազավոր և քազոհի), արտահայտված է, օրինակ, ավանդական տարազում (հարսանկան զգեստը որպես ավանդական տարազի առավել կատարյալ նմուշ - հմմտ. П.Г.Богатырев, Функция национального костюма в Моравской Словакии, - իր գրքում. Вопросы теории народного искусства, М., 1971, էջ 303; Г.С.Маслова, Народная одежда в восточнославянских традиционных обрядах и обрядах XIX - начала XX вв., М., 1984, էջ. 41-42:) և ժամանակակից «արձր նորանորյան» պրիմա մոդելի հարսանկան զգեստն է:
10. Եր.Լալայան, Վարսնիա. - «Ազգագրական հանդես» (այստեղից ԱՀ), գիրք Բ, Թիֆլիս, 1897, էջ 129: նույնի Գ-տրքն, ԱՀ, գիրք XII, Թիֆլիս, 1904, էջ 125:
11. Եր.Լալայան, Բորչալու, ԱՀ, գիրք IX, Թիֆլիս, 1902, էջ 235:
12. Վ.Ս.Պետրյան, Մասնա ազգագրություն, Եր., 1963, էջ. 250-259:
13. Sh' L.A.Абрамян, P.B.Пикичян, Греческая свирель, австралийская гуделка и армянская зурна: генезис музыкального инструмента в ритуально-мифологическом контексте, - ՊԲՀ, 1991, 2, (133), էջ.180-182.
14. Հաճախ քավորը ծաղը պատրաստած է ինձում մինչև փնես սափրելու և հագցնելու ծեսերը (տե՛ս Բաջրերունի, Ընտանեկան կյանք և սովորույթներ, ԱՀ, գիրք

VII-VIII, Թիֆլիս, 1903, էջ. 41-42), երբեմն բավորի տանը միայն իրար են ամրացնում ծառի փայտերը իսկ զարդարում փեսայի տանը (անդ, էջ 58):

15. Տե՛ս, օրինակ.
*«Էս քազն իր խաչ,
 Խաչի կորն իր խաչ ու մաչ,
 Գրակց էր բուխարի
 Արևից իր կամանց»:*
 Զաքարյանի, մշվ. աշխ. էջ 42-45:

16. Տե՛ս, օրինակ.
 «Մուրր Կարապետի սուրբ զորութենով,
 Ջորութենով, ծառս ծաղիկ է.
 Ծառ ծաղկեցավ, ծառ կայնեցաւ,
 Կամանց ու կարմիր»:
 Ա.Մխիթարեանց, Փշրանք Շիրակի ամբարներից, - Էմինեան ազգագրական ժողովածու, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, 1901, էջ 246:

17. Տե՛ս Ջազարյանի, մշվ. աշխ. էջ 59-60:

18. Անդ, էջ 61:

19.
*«Արեզակ նոր շաղիշաղ
 Ինչու՞ մնամ էր»:*
*Արեզակ նոր շաղիշաղ,
 Այն քազուհին էր.
 Լուսնեակ նոր սարն եղաւ,
 Ինչու՞ մնամ էր»:*
 Անդ, էջ 61:

20. Անդ, էջ 62-63:

21. Անդ, էջ 43:

22. Տե՛ս անդ, էջ 44:

23. Տե՛ս Փ.Բ.Кейпер, Древний арийский словесный поединок, - Труды по ведийской мифологии, М., 1986, էջ 47-100:

24. Տե՛ս Т.Я.Елизаренкова, В.Н.Топорова, О ведийской загадке типа *brahmodya*, - Паремимологические исследования, М., 1984.

25. Հմտ. օր. «Փեսային մտնեցնում էին աթոռին, երկու ազգաբաշխները մի-մի մոմ ձեռքերին կանգնում էին փեսայի աջ ու ձախ կողմերում, սափրիչը ածելին ձեռքին կանգնում էր փեսայի ետևը, մրա կողքին կանգնում էր զովք ասողը, ինչպես մաս գյուղի գզիրը՝ օղիով լի քաժակը ձեռքին: Թազը զովորը կանցում է նորափեսայի հարազատներին...» Երգի առաջին մասում, որն ուղեկցում է փեսայի դեմքի մի կողմը սափրելով, հիշատակվում են փեսի հարազատները («խեր», «մեր», «աղա-քյավոր», «ճոճ բավորկին», «խրոխպերներ», «քոյր», «քեռիկներ» ու «խորքոյրներ»), այսինքն մերկայացված է ընտանեկան ասպեկտը: դեմքի մյուս կողմը սափրելուց՝ անդրադառնում են սրբազան ոլորտին («Խուս-Ջըրիստոս», «Աստվածածին», «Սըփ-Կարապետ»), սրբիչով երեսը մաքրելն էլ ուղեկցվում է այն պատմական հերոսների հիշատակումով, որոնց հայ եկեղեցին դասել է սրբերի շարքը («Լուսավորիչ», «Քաչ Կարթան»): - տե՛ս Ս.Ավագյան, Արձակ, ՀԱՅ, N 8, էջ 65-66: Այսպիսով, սափրելու ծեսի քազ գովքերում մերկայացված են «հայկական տիեզերքի» անմկազն երեք հարթություններ՝ հասարակական, կրոնական, պատմական:

26. Եր. Լալայան, Գանձակի գավառ, - ԱԿ, Գիրք Զ, Թիֆլիս, 1900, էջ 254:

27. Եր. Լալայան, Մուշ-Տարոն, ԱՀ, Գիրք XXVI, Թիֆլիս, 1916, էջ 165:
28. М.Элиаде, Очерки сравнительного религиоведения, М., 1999, §128: "Сила" урожая. - Ելիադեի մոտիվների վերաբերյալ ամփոփագիրը տնս Տլավյանականության, Էթնոլինգվիստիկական սլոար, Մ., 1995, տ.1, էջ 231-234:
29. Տնս Տ.Բ.Արտյոնյան, Օտրաժենիե ճրենե-վոստոչնոյ յերտվեննոյ յատեննոյ միֆոլոգիի վ յաղաճե ու քշենիցե, - ԱՀԳ, 1969, N11, էջ75:
30. Տնս Եր.Լալայան, Նոր-Քալաթի ճալառ. ԱՀ, գիրք XVI, Թիֆլիս, 1907, էջ 23:
31. Տնս Ա.Ավազյան, Նշվ. աշխ., էջ 65:
32. В.Н.Топоров, О брахмане. К истокам концепции, - Проблемы истории языков и культуры народов Индии. М., 1974.
33. Նման տեսակետների յարցը ըննարկելու է ճալ մի ալ յողվածում, տնս Գ.Ա.Տաղյան, Օпыт реконструкции ритуально-мифологического контекста одного магического обряда армянской свадьбы, - Հալ ազգագրության և յնագիտության յննողներ, Եր., 2000 (յրատարակության ընթացքում):
34. Եր.Լալայան, Նախնիների ճառ, - ԱՀ, գիրք XII, Թիֆլիս, 1904, էջ 129:
35. Տնս օր.
« Թազարո, յի՞նչ բերնն ընն ման,
Քն կանանչ արևող նման.
Էն թալասան ծաղիկն որ կրացողի,
Բացողի արևող նման»:
Նոյն տեքստը կրկնում է, փոխելով մանուշակ, յնկի ծաղիկ, անթառամ, շուշան, նոնենի, քրաքիոն, նունուֆար, ոսկենծաղիկ և այլն: - *Լացրիտմի*, Նշվ. աշխ., էջ63-64:
36. Ա.Քնյան, Ալն և Ալնցիք, Փարիզ, 1952, էջ 259:
37. «Ազգայնաշին փնսի յանդերճներից մնկը, օրինակ՝ յոլխան վեր թարճրացնելով թղվում է. - «Տերտեր, օրինես յ Տեր, ջամիաթ ամկաջ էրէք, մեր թագավորն յի՞նչ ունի». շրջապատողները միաբերան ձայն են տալիս «ի՞նչ ունի»: - «Անկ յալ յուլխալ ունի, Ստամբոլու թուրդն է, Ինկիզի մանածն է, Տոանկնզի գործածն է. Թիֆլիսու ձևածն է, քարզի Փիլոսի կարածն է ու Աստիտ օրինածը. Աստուած շնորհավոր անէ»: - տնս Ա. Մխիթարեանց, Փշրանք Շիրակի անթարներից, էջ 146:
38. Bruce Lincoln, Death, War, Sacrifice, Chicago & London, 1991, p. 168-184.

ՆՈՐԱՅԻՐ ՊՈՂՈՍՅԱՆ

**ԹՅՈՒՐԱԿԱՆ ԲԱՐՔԱՆՆԵՐԻ ՎՐԱ ՀԱՅԵՐԵՆԻ ԹՈՂԱԾ
ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ**

Թյուրքական բարքառներ ասելով՝ նկատի ունենք Հայաստանում և հարակից տարածքներում բնակություն հաստատած թյուրքական ցեղերի ու ժողովուրդների լեզուներն ու բարքառները, որոնց հետ հայերն ունեցել են անմիջական ու երկարատև շփումներ:

Հայերենի ու թյուրքական բարքառների շփումների ու փոխազդեցությունների մասին առաջին գրավոր վկայությունները վերաբերում են 5-րդ դարի հայ մատենագրությանը: Մակայն իբրև լեզվական լայն երևույթ այդ շփումները սկսվում են 11-րդ դարից, երբ Հայկական լեռնաշխարհ ներթափանցեցին թուրք-սելջուկները: Ավելի ուշ Կիրակոս Պատմիչը (13-րդ դար) մոնղոլ-թաթարների լեզվի մասին խոսում է որպես նոր-նոր ծանոթացած երևույթի և ասում է. «Այլ եւ խօսք նոցա խժականք անծանօթք ի մենջ. քանզի կոչէին զանունն Աստուծոյ Թանկրի եւ զքոյր՝ արանի... Եւ զայլ այսպիսի խժականք անուանք, զոր ի բազում ամաց մեզ անծանօթ, իսկ այժմ ականայ ծանուցեսայ՝»:

Նույն շրջանի միջնադարի հայ մատենագիրների երկերում հանդիպում են թյուրքական ցեղերի ու նրանց լեզվի մասին այլ հիշատակությունների ևս. որոնց վրա հենվելով կարելի է այնպիսի, որ թուրքերեն փոխառյալ բառերը հայերեն խոսակցական լեզվի մեջ արմատավորվել են մոտավորապես 13-14-րդ դարերից:

Եթե միջնադարում թուրքերենից հայերենին անցած բառերը հայտնի են, քանի որ դրանք ամրագրվել են հայ մատենագրության մեջ, ապա նույն ժամանակահատվածում (11-13րդ) հայերենից թյուրքական բարքառներին փոխանցված բառերն ուղղակի չեն պահպանվել՝ Հայկական լեռնաշխարհում բնակված թյուրքերի գրավոր արդյունքների չգոյության պատճառով: Բացի այդ, հայ լեզվաբանները գրական լեզվի ու բարքառների մատմնասիրություններում ավելի շատ ուշադրության են արժանացրել հայերենում թուրքերենից կատարած փոխառություններին, և հայերենից թյուրքական բարքառներին անցած բառերի (թուրքական և հատկապես ադրբեջանական

գրականության մեջ դրանք անվանվում են արմենիզմներ) ամփոփ վերլուծություն չի արվել:

Թուրքական բարբառների վրա հայերենի թողած ազդեցությունը բազմաբնույթ է: Այստեղ փորձում ենք վերհանել 1) թուրքերեն գրավոր առաջին հիշատակարանների, 2) հայերեն ու թուրքական բարբառների շփումների, 3) թուրքախոս հայերի, 4) հայաստան թուրքերեն գրականության և 5) հայոց տեղանունների միջոցով թուրքական բարբառներին անցած հայերենի լեզվական փաստերը:

1. Թուրքերեն առաջին գրավոր վկայություններից «Զիթաքի Դադա Գորգուր» ավանդազրույցում արդեն հանդիպում են հայերեն բառեր՝ *azna-vur*- հայերեն ազնավուր, *al*- հայ. այլ (անսովոր կերպարանքով ոգի), *arkao*-արկան, *arxaru*-Արկուտի, *gıvao(mak)*-գովսն(ք), *gut* (մաս՝ *gutsus*, *gulu*)-գութ, *takyr*- թագավոր, *kəlisə*- եկեղեցի, *bolik*- հովիկ և այլն՝ ընդամենը 19 փոխառություն²: Ավանդազրույցի հնագույն տարբերակը թեև պահպանվել է 15-րդ դարից, սակայն ենթադրվում է, որ դրա կորած բնագիրը 11-12-րդ դարերից է: Նշանակում է, արդեն այդ դարերում հայերենից փոխառյալ որոշակի թվով բառեր կային, որոնք թուրքական բարբառներում քաղաքացիություն ստանալու շնորհիվ մուտք էին գործել մաս բանահյուսության, մի փոքր ուշ՝ գրավոր խոսքի մեջ: Հայերեն բառեր պարունակող գրավոր մեկ այլ աղբյուր է Շամախիի բանաստեղծ Իմադդին Նասիմիի (14-րդ դար) ժողովրդական լեզվով գրված «Դիվանը»՝ աղու, գութ, թագավոր, տավար հայերեն բառերով:

Դժվար չէ նկատել, որ առնվազն երկու բառ (գութ, թագավոր) կրկնվում են նշված երկու աղբյուրներում, ինչը նշանակում է, որ հայերեն փոխառությունները թուրքական բարբառներում պատահական ու տեղային բնույթ չէին կրում և ընդունված էին տարածքի թուրքախոս համրության կուլմից: Նույն երևույթը նկատվում է մաս հետագայում. 19-րդ դարում, օրինակ, հայերեն փոխառյալ միևնույն բառը կրկնվում է թե Օսմանյան Թուրքայի, թե ներկայիս Ադրբեջանի տարածքների թուրքախոսների մոտ:

Այն, որ հայերեն բառերի փոխառումը դիվանային բնույթ չէր կրում և դրանք տարածվում էին թուրքական մի շարք բարբառներում, ապացուցվում է մաս նրանով, որ հայերեն միևնույն բառերն օգտագործում էին, թուրքախոսների հետ մեկտեղ, մաս այլ լեզուներ կրողները: Օրինակ, Սղեռյի թուրքախոս. ինչպես մաս արաբախոս համրությունը (արաբներ, հայեր, թուրքեր և այլք) ունեն աճող (անտեր), անսքամ (անզգամ), բաղիխաս (պատուհաս), խաչըրկեթ (խաչերկաթ), կոզասթ (կեղծավոր), շրթան (չորթան), պատիճ (պատիժ) և այլ բառեր, որոնք կրկնվում էին բնակավայրից բնակավայր, խոսվածքից խոսվածք:

Թուրքական միջնադարյան աղբյուրներում հանդիպող հայերեն թագավոր բառը կիրառել է մաս արաբ պատմիչ Ռաշիդ-եդ-Դիմը՝ պարսկերեն գրված «Թարիխ-ալ-Աֆրանջ»-ում (Փրանկների պատմություն): Նրա այս

երկում Թարգմար-ը հաստուկ անուն է, որով նկատի է առնում Կիլիկիայի (Արմինիա-ալ-տուրա) հայ թագավորին (ամենայն հավանականությամբ՝ Հեթում 2-րդին կամ Լևոն 3-րդին): Կամ՝ հնդեվրոպական ծագման հայերեն տավար (գրարարում՝ տուար) բառն ունեն հայերի հետ շփված գրեթե բոլոր քյուրքական ժողովուրդները. թաթար. tuar, ադրբ. և թուրք. davar, թուրքմեն. dovar (փոքր անասուն), իսկ կարակալպակ. tuvar (մատաղ անասուն) կարող էր Հայաստանից «տարված» լինել քյուրքական այլ ցեղերի միջոցով: Մեկ այլ օրինակ. քյուրքական բարբառները հայերենից են վերցրել զուգան բառը. որն ադրբեջանական բարբառներում (kotan) «մեծ հողատարածք. արոտ» իմաստն է ձեռք բերել: Հայերեն Գաթանասար տեղանունն ըստ այդմ պատճենվել է Քրթանդաղի:

2. Թյուրքական բարբառներին անցած հայերեն բառերի ու լեզվական այլ միավորների հավաքման գիտական աշխատանքը սկսվեց 19-րդ դարի վերջին, ե այս հարցում նախաձեռնությունը Հրայրա Աճառյանինն է: 1898թ. Կ.Պոլսի «Բիւրակն» հանդեսում նա կոչով դիմում է Արևմտյան Հայաստանի բանասերներին և ուսուցիչներին՝ բարբառային բառեր, առհասարակ՝ բարբառների վերաբերյալ լեզվական նյութեր հավաքելու և հրատարակելու խնդրանքով: Դրան անմիջապես հետևում են տասնյակ հրատարակումներ, գյուղերից ու քաղաքներից հոգվածներ են ուղարկվում «Բիւրակն»-ին, որոնցում ներկայացնում են նաև տեղացի թուրքերի ու թուրքախոս այլ ժողովուրդների փոխառած հայերեն բառերը (նման հրատարակումներ կարելի է հանդիպել «Բիւրակնի» 1898-1900 համարներում): Լեզվագիտական այս շարժման արդյունքը աչքեցնող էր. հավաքվում են հարյուրավոր բառեր, որոնք լեզվաբանական հետազոտումնափորձային ատաղձ էին: Հ.Աճառյանն իր այս ոլորտի պրպտումների մի մասը ներառում է «Հայերեն արձատական բառարանում», իսկ 1926թ. Բաքվում կայացած մի գիտաժողովի ժամանակ ներկայացնում է հայերենից թուրքական լեզուներին անցած 200-ի հասնող մի բառացանկ:

Ըստ «Բիւրակն»-ի նյութերի, Օսմանյան Թուրքիայի քյուրքական մի շարք բարբառներում հանդիպում են հայերեն բառեր: Արքիստանի թուրքերի մոտ մնացած հայերեն բառերից են (փոխառյալ բառերը բերում ենք հայերեն տառադարձությամբ). արտաղ-առաստաղ, քալաար-դաան վերին մասի սեմը, գալար-ձավար, թոռու-թոռն, հեմեր-համար, հեաիկ-հատիկ, սողձող, փեկ-բակ, քեթ-գաթա, քեու-գոց և այլն: Եվրոպիայի թուրքերի մոտ մնացած հայերեն բառեր. քեու-գոմ, չեմիչ-չամիչ, պոտու-պատիճ, քեոչկեր-կոչկար, կոչկակար, քոռու-քոռն, ախլու-ախտա, փեոչ-պոչ, հեզե-հեծան, քիւրիքեմտ-քարոքանդ և այլն: Արևմտյան Հայաստանից մինչև Կ.Պոլիս տարածված քյուրքական այլ բարբառների փոխառած հայերեն բառերից են նաև. ապուր, առու, ավագան, բագուկ, բարի, բիթ, բրուտ, գամ, գերան, գոգնոց, դեղթափ, գոց, թել, թերմաշ, թոմիր, իլիկ, խաշ, խարշ, խտի, կոթ,

հով, մագ, մածուց, մարագ, միգակ, շիվ, պարան, պուպոկ, սայլ, տխարած, վիկ(ն), փարախ, փեթակ, քարուկիր և այլն:

Բազմաթիվ հայերեն բառեր են պահպանվել աղբյուրներում: Աղբյուրների լեզվաբան Մ.Շիրալինը իր երկու աշխատություններում՝ «արմենիզմներ է համարում ընդամենը 5 բառ՝ անդր (անտեր), բարբվ (պատալ), մաքի (մաքի), հախչիխ (աղջիկ), զըղա (տղա): Մյուս լեզվաբանները ևս ամեն կերպ փորձում են չտեսնելու տալ հայերեն բառերի առկայությունը իրենց բարբառներում կամ գրական աղբյուրներում:

Մակայն իրականում արմենիզմների թիվն աղբյուրներում շատ ավելի մեծ է: Օրինակ, աղբյուրներում Նախիջևանի բարբառը, հիմնական, հազարի և այլ խոսվածքները փոխառել են ասմա (հայերեն՝ ասում և ձևից), անտեր, հիմ(ք), հերիկ, աղջիկ (հախչիխ), պահակ, աղբյուր, կամ, եղան, սամի, չորթան, հոտաղ, գոմ, թառ, բանջար, մարագ, ավելուկ, թոռ, խաշու, խորթ, խոփ, ծեփ, կոճակ, կոտ, կուլա, հորովել, սրբիչ և տասնյակ այլ բառեր: Չուտ բարբառային հայ բառերից՝ քաղալակ (կողով), կուտ, շատարար, վաղանել (հատումանալ), խաշիլ, շիթ (թեթևամիտ), ճողպուր (ընկույզ) և այլն: Խորհրդային շրջանից են աղբյուրներում անցել՝ աշխատուր, շաքար(յակ), դաշտավարական, մախազահ բառերը: Գրական աղբյուրներում տարբեր բառարաններ են մտել 24 հայերեն բառեր՝ անտեր, հատիկ, խաչ, հիմ(ք), շեն, սալ, բանջար, թափիկ, թաղ, թել, լինգ, խաչաջուր, տնկի և այլն:

3. Հայերեն բառերը բյուրքական բարբառներին էին վախանցվում մասնաբաժնու հայերի միջոցով: Տարբեր պատճառներով իրենց մայրենի լեզուն մասամբ կամ ամբողջությամբ մոռացած և թուրքերենով հաղորդակցվող հայերը շարունակում էին պահպանել մասնաբաժնու տասնյակ այնպիսի բառեր, որոնց համարժեքները թուրքերենում գոյություն չունեին: (Ի դեպ՝ խալամ ընդունած հայերը շարունակում էին պահպանել մասնաբաժնու մասնաբաժնու քրիստոնեական կրոնի ծեսերի ու հավատալիքների ինչ-ինչ դրվագներ ու մասնաբաժնու փոխանցում էին թուրքերեն: Այդպիսի մի օրինակ է մանեղական հայերի ու թուրքերի մոտ թոնրում լավաշը թխելիս խաչակնքվելը):

Անկյուրիայի թուրքախոս հայերի մոտ պահպանված բառերից են՝ աճար, աւանակ (ամմիտ), բանճար, եաղ (յալ) և այլն, որոնք գործածում էին մասնաբաժնու թուրքերեն ու հույները, Աղանայի թուրքախոս հայերի մոտ պահպանված հայերեն բառերից են՝ ախաս-աղ ու հաջ, անես-անեթ, զարգաթար-ծառզարգար, ժամդու-ժամկու, իրիսկին-երեցկին, իրիշինկ-երշիկ, կոշմակ-կոշմակ, մուճուխ-միջուկ, մաննու-մատնոց, սեթոն-սիրուն, քեսմուք-քամուք, օշնեսալ-օրինեսալ և այլն:

Մակայն պետք է զգույշ մտնե՞լ այս փոխառություններին այն իմաստով, որ հաճախ մույն լեզուն (ասենք՝ արաբերենը) կամ պարսկերենը կարող է աղբյուր լինել թե՛ հայերենի, թե՛ բյուրքական բարբառների համար: Օրինակ, պարսկական ծագում ունեցող հետևյալ բառերը փոխառել են և՛ հա-

յերենը, և՛ քուրքերենը, հայերեն մտմ - քուրքերեն մտմ, քրիմո-քրիմոն, գոմեշ-քեմիշ, խմոր-խամուր ե այլն: Պարսկերենից են քուրքերենին անցել նաև՝ թաս, ռահան, տէֆ (դափ), շըրըզ (չարխ), քեմեր (կամար), քեթր (կոյր), սեփեթ (սապատ) և այլն: Հունարենից քուրքերենին են անցել՝ անխոն, լոտոս, պակսիմատ, մաղաղամոս և այլն: Նշված բառերն իրենց համարժեքներն ունեն հայերենում և բնականաբար հայերենից չէ, որ անցել են քուրքական բարբառներին:

Թյուրքական բարբառների հայերեն փոխառություններն իրենց բառիմաստներով քաշխվում են մի քանի հիմնական իմաստային դաշտերում, որոնցից առանձնանում են հողագործության, արհեստների հետ կապվող բառերն ու հասկացությունները: Նախապես քոչվոր կենցաղավարություն ունեցող քուրքական ցեղերը հարևան ժողովուրդներից, հայերից վերցնելու րավակներն րան ունեցան, ինչպես հայերենից՝ գուրան, թոնիր, հերկ, գոգնոց, գերան, հերկ, խուփ, կամ և այլն:

4. Մեծ թվով հայերեն բառեր են պահպանվել հայատառ քուրքերեն գրականության մեջ: Դրանք թեև անմիջական կապ չունենին բարբառների հետ, սակայն կարող էին քուրքախոսների կողմից հայերեն բառերի յուրացման միջավայր ստեղծել: Այս գրականության սկիզբը դրվում է 15-16-րդ դարերից՝ աշուղական, պատմական, կրոնադավանական և այլ բովանդակության ծեղագիր գրքերով: 1727թ.-ից տպագրվում են հայատառ քուրքերեն գրքեր, և առաջիններից է Մխիթար Սեբաստացու թերականությունը: Հետագա 250 տարում տպագրվում է մոտ 1200 անուն նման գիրք և մի շարք պարբերականներ:

Հայատառ քուրքերեն գրականությունը տպագրվում էր նախ և առաջ քուրքախոս հայերին հասկանալի ինչ-որ գրականություն մատուցելու, հայերենը մոռացած հայերին կրթելու համար: Կաթոլիկություն տարածելու նպատակով այս եղանակից օգտվում էին նաև լատինադավան հայերը: Եվ, բնականաբար, հայերեն բազմաթիվ բառեր էին սպրդում այդ գրականության մեջ, որոնք հասկանալի էին հայերին ու հիմք էին դառնում քուրքախոսների մոտ տարածվելու համար:

Այս գրականության շարքում, իբրև հնագույն մուշնեթից մեկը, հիշատակելի է Խիկար Իմաստունի խրատների դիպչադեբեն հայատառ թարգմանությունը: Այն 17-րդ դարի է, պատրաստվել է Գրիմից Լեհաստան գաղթած դիպչադախոս հայերի համար և պարունակում է, ինչպես ցույց են տալիս նախնական դիտարկումները, հայերեն բազմաթիվ բառեր, ինչպես՝ ճարտար, հիշատակ, գերեզման(կա), անգզամ(լարկա), լեղի, բամբաս(ել), վարձանք, վերծություն, արդար, փառք, ազահ, քաջ և այլն: Իսկ 1791թ. Կ.Պոլսում տպված մի գիրք կրում էր «Անկիւրիւ սուրբ Թեալիտոն նահատակըն վէ էնտի կուսանքլարըն պատմութիւնու» վերնագիրը:

Հայատառ քուրքերեն հսկայածավալ գրականության և մամուլի ուսումնասիրություններից հիշատակելի են Հ.Սահմանյանի, Է.Սևորյանի աշ-

խառնությունները՝ Մեր տվյալներով, Անկարայի պետական համալսարանն է ձեռնամուխ եղել այդ գործին և մասնագետների պատրաստման մասնակցում ուսանողներ է գործույթի Սանկտ Պետերբուրգի արևելագիտության ինստիտուտում սովորելու համար:

5. Հայերենից մի սովոր խումբ բառեր թուրքերենին են անցել տեղանվանական փոխառությունների միջոցով: Պատմական Հայաստանի տարածքում բնակություն հաստատած թուրքական ցեղերը յուրացրին բնիկ տեղանունները մի քանի ճանապարհով: ա) Իմաստային պատճենումներ, որի դեպքում թուրքերը պարզապես թարգմանեցին իրենց հանդիպած տեղանունները, ինչպես՝ Ազնվածոր տեղանունը պատճենմամբ դարձավ Գյոզաղարա, Արեգունի-Գյունեյ, Շերմակավան-Աղբիլիսա, Վարդահովիտ-Գյուլիդուզ, Գարբնիկ-Գեմուրչի և այլն:

բ) Իմաստային-հնչյունական պատճենումներ, Աղբեղը-Աղբուլաղ, Ջարեհավան-Ջարաֆիսանե, Կորս ձոր (գետ)-Քյոս առ և այլն:

գ) Այս շարքում մեծ խումբ է կազմում տեղանվան համապատասխանեցումը թուրքերենի հնչյունական կանոններին: Օրինակ, հայկական Ակն տեղանունը դարձավ Ազին և հնչյունական այդ կառուցվածքով մտավ թուրքերենի մեջ: Այդպիսի տեղանուններից են Բարբերդ-Բայբուրթ, Կումայրի-Գյումրի, Չազածոր-Չանգեզուր, Արագած-Ալագյազ, Կապան-Կափան, Գոմք-Գոմար, Ագարակ-Էդրեն, Կարմիր-Կեմիր, Ընկուզեն-Էնկուզեն, Սեւակերակ-Սեւերեն, Գանձակ-Գյանջա, Ջերմակ-Չերմիկ, Ջերման-Չերմե, Ուղական-Սիլկան, Աևան-Սեյվան(կալա), Գավառ-Գեւեռ, Պարտավ-Բարդա, Կապադակ-Կարալա (վերջին երկուսը՝ արաբերենի միջնորդությամբ)¹⁶ և այլն:

Հայերեն մի շարք փոխառյալ բառեր դարձան նաև թուրքերեն բաղադրյալ տեղանունների բաղադրիչներ, ինչպես՝ Խաչու, Խաչաշ, Խաչղաղ, Խաչբուլաղ, Վարդանու, Դաշխաշ, Լորդարա, Վանքոյու, Վանքղաղ և այլն:

Եզուների փոխադրեցությունը երկկուսմանի դեպք է կրում, տարբերությունը միայն փոխառությունների (բառային, իմաստային, քերականական) չափի մեջ է: Նույնը վերաբերում է նաև հայերենի ու թյուրքական բարբառների շփումներին: Հայերեն գրավոր հին աղբյուրներում պահպանվել են 170-ի հասնող թուրքերեն բառեր, հայ բարբառները թուրքերենից ավելի շատ բառեր են փոխառել, Պոլսի բարբառում դրանց թիվը հասնում էր 4000-ի, Վանի բարբառում՝ 2100-ի, Կարաբաղի բարբառում և Երեսնի խավածքում՝ մոտ 800-ականի և այլն, սակայն գրական հայերենը պահպանել է համագործածական դարձած միայն 20 թուրքերեն բառ՝ ալուն, բարթոթ, բեկ, ելակ, երշիկ, խամաճիկ, չոքեկ, տապրակ և այլն:

Իսկ հայերենից թյուրքական բարբառներին անցած բառերի քանակը մեր բառացանկում անցնում է 300-ից (ճշգրտված լիարժեք ցանկը կներկայացնենք առաջիկայում), թեև այս թիվը էլ վերջնական համարել չի կարելի, և ուսումնասիրությունները պետք է շարունակվեն, մկատի ունենալով, որ

տութեան շարք փոխառյալ բառ իր հետ թաղաքակրթական որոշակի տարր է փոխանցում փոխառու լեզվին ու ժողովրդին:

NORAIR POGHOSYAN

THE INFLUENCE OF ARMENIAN ON TURKISH DIALECTS

(Summary)

In the course of long-lasting contacts with Armenians the Turkish tribes that had settled down in Armenia have borrowed numerous words from Armenian (the so-called Armenisms). These words have passed to Turkish dialects through oral language, and partially, through written sources, which are examined in this article. According to the author, the overall number of Armenisms in the Turkish dialects exceeds 300.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կիրակոսի բառացանկում ընդգրկված է մոտավորապես 50 բառ, որն այդ լեզվի մասին ամենաինքնուրույն գրավոր հիշատակությունն է:
2. Ռ.Բաղդասյան, Հայերեն բառեր «Բիթարի Դադա Գորգուլում», ՊԲՀ, 1974, N 1, էջ 162-174:
3. Բիլրակն, 1899, N8, էջ 116:
4. Մ.Շիրալին, Բարվի բարբառը, Բաքու, 1957, Աղբյուրներում բարբառագիտության հիմունքներ, Բաքու, 1962 (երկուսն էլ աղբյուրներ են լեզվով):
5. Գ.Բաղդիբով, Հայկական հասարակական շրջանի աղբյուրներում խոսվածքը, Բաքու, 1966, Մ.Շիրալին, Աղբյուրներում լեզվի բարբառներն ու խոսվածքները, Բաքու, 1983, Ա.Հյուսեյնով, Աղբյուրներում բարբառագիտություն, Բաքու, 1967, էջ 100 (բոլորն էլ աղբյուրներ են լեզվով):
6. Բիլրակն, 1898, N 45-46, էջ 788-790:
7. Մխիթար Մեղակոցի, «Դուռն քերականության աշխարհաբան լեզվին հայոց, շարադրեցեալ տառակալ լեզուս», Վենետիկ, 1729:
8. Հմմտ. Ա.Մարտիրոսյան, Պատմություն եւ խրատը Խիկարայ իմաստնոյ, գիրք Բ, Երևան, 1972, էջ 189-196:
9. Э.Севортян, Документы на половецком языке XVIв., М., 1967; Հ.Ստեփանյան, Հայաստանի բարբառներն աղբյուրական մանուկ, Եր., 1987:
10. Տն՛ն մա՛ն՛ն. Ն.Պողոսյան, Հայաստանի բնակավայրերի վերամկանման մերկա փուլը, Հանդես Երևանի համալսարանի, 1997, N 2, էջ 85-90:

ԳՈՂԱՐ ՎԱՐԳՆԱՅԻՆ

ԲԱՆԱԾԻՆԵՐԻ ԴԵՎԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՎԱՐԳԸ

Աշխարհի նորագույն կրոններից մեկը՝ բահայականությունը (բահայի հավատքը), ծնունդ է առել 19-րդ դարում՝ Պարսկաստանում: Այն ծագել է Բաբի ուսմունքից: Շիրազի երիտասարդ վաճառական Մեյեղ Ալի Մուհամադը, որը հայտնի է Բաբ (արաբերեն՝ «գարպաս») անունով, 1844թ. մայիսի 23-ին իրեն հայտարարեց Աստծո պատվիրակ, որից հետո իր աշակերտներին ուղարկեց երկրի տարբեր կողմեր՝ ավերելու ուրիշ, ավելի մեծ պատգամաբերի՝ «ճրագ, ում ի հայտ կբերի Աստված»¹, մուտավազ գալուստը: Դա առաջ բերեց մուսուլմանական հոգևորականության թշնամանքը, որը թարգմանում էր, թե աստծո մարգարեն միայն Մուհամեդն է և ով կրացասի դա, կենթարկվի մահապատժի: Բաբն իր վարդապետության պատճառով հրապարակայնորեն զնդակահարվեց 1850թ. հուլիսի 9-ին Թավրիզում: Մի քանի տարիների ընթացքում մահապատժի ենթարկվեցին նոր դավանանքի հազարավոր հետևորդներ²: Բաբի առաջին աշակերտներից մեկը՝ իրանցի ազնվական Միրզա Հուսեյն Ալին, որն իրեն անվանեց Բահաուլլահ (արաբերեն՝ «Աստծո փառք»), հայրենիքում հալածվելով, արտրվեց Բաղդադ, որ 1863թ. ապրիլի 21-ին Ռիզվան պարտեզում իրեն հայտարարեց Աստծո մարգարե, որի գալստյան մասին պատգամել էր Բաբը³: Բահաուլլահը շարունակեց և մեծապես զարգացրեց Բաբի ուսմունքը և քեղմնավոր գրչի ու եռանդուն գործունեության շնորհիվ այն տարածեց նաև այլ երկրներում, դառնալով նոր կրոնի անվանադիրը: Նա կյանքից հեռացավ 1892թ.՝ նշանակելով իր ավագ որդի Աբդուլ-Բահային (արաբերեն՝ «Փառքի ծառայ») իր գործի շարունակող և խոսքի թարգման⁴:

Նոր կրոնի սկզբնավորումից հետո՝ մոտ մեկուկես հարյուրամյակի ընթացքում, այն տարածվել է աշխարհի համարյա բոլոր երկրներում և այսօր ունի շուրջ վեց միլիոն հետևորդ: Բահայիների սուրբ գրքերը թարգմանվել են մի քանի հարյուր լեզուներով: Բահայիները իրենց կրոնը համարում են համաշխարհային կրոն, ընդունում են բոլոր ազգերի եղբայրությունն ու հավասարությունը, միաստված են, և Աբրահամին, Կրիշնային, Մովսեսին, Ջրադաշտին, Բուդդային, Ջրիստոսին և Մուհամեդին դիտում են որպես այս միակ աստծո մարգարեներ, ընդ որում, վերջին մարգարեն Բահաուլլահն է, իսկ Բաբը՝ նրա նախակարապետը⁵:

Հետաքրքրական է, որ այս նոր կրոնը չունի հոգևորականներ:
Վարչական առումով քահայիների համայնքը բաղկացած է *ճշմարտվի մարմիններից*, որոնք կազմում են Գլխունականներ և *ընտրվող խորհուրդներից*, որոնք կազմում են Ղեկավարողներ:
Նշանակվող մարմիններ. Նշանակվող մարմիններն են՝ Աստծո Գործի Չեղբերը, Ուսուցման միջազգային կենտրոնը, Մայրցամաքային խորհրդականների խորհուրդը և Օժանդակ խորհրդի անդամները:
Բահաուլլահը և Արդու-Բահան իրենց հավատքի ամենաբնականին հետևորդներին անվանել են Աստծո Գործի Չեղբեր: Նրանց պարտականություններից էր քահայի հավատքի տարածումն ու պաշտպանումը: Արդու-Բահան իր կտակում պարզաբանել է նրանց նշանակման կարգը և պարտականությունները. «Աստծո Գործի Չեղբերը որոշվում և նշանակվում են Աստծո Գործի Պահապանի կողմից: Նրանք պետք է ենթարկվեն Պահապանին և կատարեն նրա հրամանները... Աստծո Գործի Չեղբերի պարտականությունները կայանում են նրանում, որ տարածեն Աստվածային բուրմունքը, ազնվացնեն մարդկային հոգիները, նպաստեն լուսավորությանը, կատարելագործեն մարդկանց բնավորությունները և պահպանեն մշտապես և ամենուր մաքրություն և հրաժարում ամբողջ երկրայինից: Նրանք վարքագծով, քաղաքականությամբ, արարքներով և բառերով պետք է արտահայտեն իրենց վախը Աստծո առջև: Աստծո Գործի բոլոր Չեղբերը գտնվում են Աստծո Գործի Պահապանի ղեկավարության տակ»⁸:
Աստծո Գործի Չեղբերին նշանակել է Արդու Բահայի թոռ և քահայի հավատքի Պահապան Շուի Էֆենդին: Նա 1951-57թթ. նշանակել է Աստծո Գործի 32 Չեղբեր⁹, որոնցից այժմ ողջ են 2-ը: Շուի Էֆենդիի մահից հետո համայնքի կառավարումը ստանձնեցին Աստծո Գործի Չեղբերը մինչև 1963թ.: Արդարության համաշխարհային տան անդամների առաջին ընտրությունները¹⁰: Այսուհետ Աստծո Գործի Չեղբերին առնչվելու հարցերը պետք է վերաբերեն մաս Արդարության համաշխարհային տանը¹¹: Բահաուլլահի կտակի համաձայն՝ Արդարության համաշխարհային տանը տրված էր անսահմանափակ իրավունք քահայի համայնքի կարիքների բավարարման համար հիմնելու ցանկացած կառավարման ինստիտուտ¹²: Արդարության համաշխարհային տանը 1968թ. ստեղծեց հատուկ ինստիտուտ, որը կազմեց «Խորհրդականների խորհուրդ» և գործում է մայրցամաքային մակարդակով¹³: Խորհրդականները նշանակվում են հավատի ամենաակնառու հետևորդներից՝ 5 տարի ժամանակով: Մայրցամաքային խորհուրդը կարող է ունենալ 7-16 անդամ¹⁴: Խորհրդականների խորհուրդների գործելու տարածքները որոշում է Արդարության համաշխարհային տանը և յուրաքանչյուր խորհուրդ պետք է ընդգրկի որևէ մայրցամաք ամբողջությամբ¹⁵: Հայաստանի քահայիների համայնքը մինչև Ազգային հոգևոր ժողովի 1995թ. ընտրությունները գտնվում էր Ռուսաստանի տարածաշրջանային

խորհրդակցանքների խորհրդի, այնուհետև՝ Ասիայի խորհրդակցանքների խորհրդի իրավասության տակ:

Խորհրդակցանքները իրենց աստիճանով ավելի բարձր են, քան Ազգային հոգևոր ժողովների անդամները: Խորհրդակցանքի աստիճանը և պարասպորտայինները թույլ չեն տալիս նրան ընտրվել Տեղական կամ Ազգային ժողովներում: Եթե նա ընտրվում է Արդարության համաշխարհային տան անդամ, ուրեմն չի կարող մնալ խորհրդակցանքի պաշտոնում: Խորհրդակցանքները զբաղեցնում են ավելի ցածր դիրք, քան Աստծո Գործի Չեռքերը. սակայն ունեն նույն հանձնառությունները՝ հավատի տարածում և պաշտպանում¹⁴:

Յուրաքանչյուր խորհրդի խորհրդակցանքների թիվը որոշում է Արդարության համաշխարհային տունը¹⁵: Ներկայումս կան 81 մայրցամաքային խորհրդակցանքներ, 9 միջազգային խորհրդակցանքներ և 2 Աստծո Գործի Չեռքեր¹⁶:

1954թ. Շոտլանդիայի հավանությանը Աստծո Գործի Չեռքերը յուրաքանչյուր մայրցամաքում նշանակեցին իրենց ներկայացուցիչներին: Շոտլանդիայի նրանց անվանել է Օժանդակ խորհրդի անդամներ¹⁷, որոնք այժմ նշանակվում են Արդարության համաշխարհային տան կողմից, Խորհրդակցանքների մայրցամաքային խորհրդի հավանությանը: Օժանդակ խորհրդի անդամները մի անդամ ունի ծառայության իր տարածքը, որից դուրս նա չի կարող գործել, բացառությամբ այն դեպքերի, երբ նրան հաստիկ լիազորել են խորհրդակցանքները: Օժանդակ խորհրդի անդամները լինում են երկու բնույթի՝ հավատքի պաշտպաններ և հավատքի տարածողներ: Յուրաքանչյուր երկրում պարտադիր պետք է լինեն օժանդակ խորհրդի այս երկու անդամները¹⁸: Սակայն Հայաստանի Հանրապետության բնակիչների համայնքը ունի Օժանդակ խորհրդի միայն մեկ անդամ՝ հավատքի պաշտպան, քանի որ ըստ ՀՀ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի 8-րդ և 17-րդ հոդվածների, քարոզչությունը արգելվում է: Այժմ աշխարհում կան 700-ից ավելի Օժանդակ խորհուրդների անդամներ¹⁹:

Այսպիսով, ներկայումս Ազգային և Տեղական հոգևոր ժողովներին զուգահեռ գոյություն ունի վարչական կարգի անսահման ճյուղ, որը կատարում է հաստիկ գործառույթներ՝ մայրցամաքային, տարածաշրջանային և տեղական մակարդակով:

1973թ. հունիսին Արդարության համաշխարհային տունը հայտարարեց ևս մի նոր ինստիտուտի ստեղծման մասին: Այդ մարմինը կազմված էր Աստծո Գործի Չեռքերից և 3 խորհրդակցանքներից: Այն ամբողջ աշխարհում հետևում և համաձայնեցնում է Մայրցամաքային խորհրդակցանքների խորհրդի գործերը, խորհրդակցանքների և Օժանդակ խորհուրդների անդամների միջոցով օգնում Աստծո Գործի Չեռքերին իրենց պարտականությունների կատարման մեջ²⁰: Այդ նոր ինստիտուտը Ուսուցման միջազգային կենտրոնն է: 1988թ. Արդարության համաշխարհային տունը ավելացրեց Ու-

սուցման միջազգային կենտրոնի անդամ-խորհրդակցականների թիվը՝ հասցե-
յով այն ինչի՞»:

Ընտրովի խորհուրդներ, Բահայիների համայնքները ղեկավարում են
Տեղական և Ազգային հոգևոր ժողովները, որոնց ընտրությունները տեղի են
ունենում ամեն տարի ապրիլի 21-ից մայիսի 2-ը, ի պատիվ Ռիզվան պար-
տեզում Բահաուլլահի հայտնությամբ: Նրանց լիազորությունները և պար-
տականությունները շարադրված են Բահաուլլահի, Աբդու-Բահայի, Շադի
Լեյնդիի գրքերում և ձևակերպված են Արդարության համաշխարհային
տան կողմից:

Ընտրություններին մասնակցում են 21 տարեկանից սկսած այն բահայի-
ները, որոնք ապրում են տվյալ բնակավայրում: Տեղական հոգևոր ժողովնե-
րի անդամների թիվը ինն է և ընտրությունները կատարվում են բոլոր այն
բնակավայրերում, որոնցում բահայիների քանակը անցնում է իննից, իսկ
երբ ուղիղ ինն է, ապա նրանք Տեղական հոգևոր ժողով են կազմում՝ համա-
տեղ հայտարարության միջոցով²²: Ընտրությունները կատարվում են ամեն
տարի միայն ապրիլի 21-ին: Եթե այդ օրը չի ընտրվում Տեղական հոգևոր
ժողով, ապա մինչև հաջորդ տարվա ընտրությունները համայնքը ղեկավա-
րում է Ազգային հոգևոր ժողովի կողմից նշանակված, տվյալ բնակավայրի
հինգ հավատացյալներից կազմված վարչական կոմիտեմ:


Ընտրություններին թեկնածուներ չեն առաջադրվում և չի տարվում մա-
խլանտրական քարոզչություն, ցանկալի չէ երկու անձանց (մույնիսկ ամու-
սինների) խորհրդակցելը, ինչը կարող է ազդել ընտրությունների վրա: Ընտ-
րություններն անցկացվում են գաղտնի քվեարկությամբ: Քվեաթերթիկը ան-
վավեր կարող է համարվել այն դեպքում, եթե այն պարունակում է իննից ա-
վելի կամ պակաս անուն կամ նույն անվան կրկնություն²³:

Երբ տվյալ երկրում Տեղական հոգևոր ժողովների թիվը հասնում է 5-ի,
ապա Արդարության համաշխարհային տան որոշմամբ կարող են կայանալ
տվյալ երկրի Ազգային հոգևոր ժողովի ընտրություններ, որին մասնակցում
են այդ երկրի բոլոր բահայիները: Ազգային հոգևոր ժողովի անդամների թի-
վը նույնպես ինն է:

Հայաստանում Ազգային հոգևոր ժողովի առաջին ընտրությունները տե-
ղի են ունեցել 1995թ.: Բահայիների համայնքների անդամները ընտրում են
իրենց Ազգային համագումարի պատգամավորներին, որոնց ընդհանուր թի-
վը որոշում է Արդարության համաշխարհային տանը²⁴ (Հայաստանում
1995-98թթ՝ 9-ական, 1999-2000թթ՝ 19-ական պատգամավոր): Բահայիների
հոգևոր ժողովը, խորհրդատուն, օժանդակ կոլեգիայի անդամը, պատգամա-
վորները և այն բահայիները, ովքեր մասնակցում են համագումարին,
քննարկում են համայնքի խնդիրները, առաջարկություններ անում ընտրու-
յից Ազգային հոգևոր ժողովին: Այս ամենը գրի է առնում միստի քարտուպա-
րը, որն այն ընտրություններից հետո հանձնում է նորընտիր Ազգային

հոգևոր ժողովին: Երկրորդ օրը առավոտյան խորհրդատուն քաջատրում է ընտրություններին վերաբերող մանրամասներ, իսկ օրվա երկրորդ կեսին գաղտնի քվեարկությամբ և ձայների մեծամասնությամբ ընտրվում են Ազգային հոգևոր ժողովի անդամները, որոնք հաջորդ օրը խորհրդակցանի և օժանդակ խորհրդի անդամների հետ քննարկում են առաջիկա տարվա ծրագրերը և բյուջեն:

ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՈՒՆ



Ազգային հոգևոր ժողովի իրավագործության տարածքը որոշում է Արդարության համաշխարհային տունը:

Վարչական կարգի գերագույն մարմնն՝ Արդարության համաշխարհային տան առաջին ընտրությունները տեղի են ունեցել Բախաուլյաի հայտնության հարյուրամյակի հոբելյանի ժամանակ՝ 1963թ. ապրիլի 21-ին, որին մասնակցում էին 56 Ազգային հոգևոր ժողովների ներկայացուցիչներ¹: Ընտրությունները տեղի են ունենում 5 տարին մեկ անգամ, քսեսիների միջազգային համագումարի ժամանակ, գաղտնի քվեարկությամբ²: Չմասնակցելու դեպքում Ազգային հոգևոր ժողովների անդամները փակ ծրարով տեղյակ են պահում, թե ում են տալիս իրենց ձայները: Արդարության համաշխարհային տան անդամների թիվը ինն է: Այն գտնվում է Իսրայելի Հայֆա քաղաքում:

1972թ. Արդարության համաշխարհային տունը հրապարակեց իր կանոնադրությունը, որում նշված էին նրա նպատակները, պարտավորությունները և լիազորությունները, ինչպես նաև Միջազգային համագումարի անցկացման կարգը, որի հիմնական խնդիրներն են՝ Արդարության համաշխարհային տան անդամների ընտրությունը, համաձայնագրությունների և առա-

ջարկությունների պատրաստումը Արդարության համաշխարհային տանը
ընկելու համար:

1978թ. ապրիլին Հայֆայում տեղի ունեցած շորթորդ Միջազգային հա-
մագումարին մասնակցեցին 123 Ազգային հոգևոր ժողովների անդամներ,
իսկ 1988թ. 148 Ազգային հոգևոր ժողովներից Միջազգային համագումարին
մասնակցեցին 132-ը⁴:

1992թ. Հայաստանում ևս կազմավորվել է բահայիների համայնք. որը
30.09.1994թ. ՀՀ կառավարությանն առնաթեր կրոնի գործերի պետական
խորհրդում գրանցվել է որպես «Երևանի բահայիների համայնք», իսկ
12.12.1996թ. վերագրանցվել է «Հայաստանի բահայիների համայնք» ան-
վամբ:

Հայաստանի բահայիների թիվը ըստ Ազգային հոգևոր ժողովի կողմից
ներկայացվող տվյալների, 1997թ. 200 էր, 1998թ.՝ 260, 1999թ.՝ 380, իսկ
2000թ.՝ 500: Ի դեպ, համայնքում բացի հայերից, կան նաև ալբազգի հավա-
տացյալներ (այդ թվում՝ 4 ասորի, 2 եզդի, 10 ռուս, 1 վրացի, 2 հրեա. 3 ուկ-
րաինացի):

2000թ. ապրիլի 21-ին Հայաստանի բահայիների համայնքներում տեղի
ունեցան ընտրություններ, որոնց ժամանակ ընտրվեցին 23 Տեղական
հոգևոր ժողովներ (1997թ.՝ 17): Իսկ Ազգային հոգևոր ժողովի ընտրություն-
ները տեղի ունեցան մայիսի 1-ին՝ Երևանում:

GOHAR VARDANYAN

THE GOVERNANCE OF BAHAI COMMUNITIES

(Summary)

One of the modern religions - Baha'i faith, was founded in Persia in 19-th
century by one of the followers of Bab-Baha'u'llah. There are about 6.000.000
believers of this faith in different countries. This modern religion has no priests.
The administration of international baha'i community consists of the appointed
bodies - The Scientists (The Learned) and elected councils - Administrators (The
Rulers). The appointed bodies are - The Hands of the Cause of God, The Inter-
national Teaching Centre, Continental Board of Counsellors and the Auxiliary
Board Members. The elected councils are: The Local Spiritual Assemblies, The
National Spiritual Assemblies and Universal House of Justice. In 1992 there was
also founded the Armenian Baha'i community of Armenia, the members of
which by 2000 reached approximately 500. The community is governed by The
National Spiritual Assembly and also by 23 Local Spiritual Assemblies.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Хэтчер У. С., Мартин Дж. Д., Новая мировая религия, Санкт-Петербург, 1995, стр. 39; Эсслемент Дж. Э., Баха-Улла и новая эра, Екатеринбург, 1991, стр. 25; Баха-Улла, Москва, 1992, стр. 5; Բախա-Ուլլահ, Երևան, 1996, էջ 5; Перкинс М., Хейнсворт Ф., Вера бахаи, Москва, 1992, с. 10.
 2. Շիրվան, Հալիվանը քաղաքի դիմ. Տարած, Թիֆլիս, 1903, N 25-32:
 3. Эсслемент Дж. Э., с.34; Баха-Улла, с. 14-18; Բախա-Ուլլահ, էջ 13-16; Перкинс М., Хейнсворт Ф., с. 21; Хэтчер У. С., Мартин Дж. Д., с.52.
 4. Faizi G., The Bahai Faith, New Delhi, 1990, p. 19; Эсслемент Дж. Э., с. 57; Хэтчер У. С., Мартин Дж. Д., с.65.
 5. Там же, с.102; Перкинс М., Хейнсворт Ф., с.35.
 6. Воля и Завещание Абдул-Баха, Санкт-Петербург, стр. 15; The Covenant of Bahá'í, London, 1963, p. 101; Хэтчер У. С., Мартин Дж. Д., с.176; Перкинс М., Хейнсворт Ф., с.62.
 7. Там же, с.63; Эсслемент Дж. Э., с.277; Վարչական կարգը (Ժողովածու քաղաքի ակադեմիայի համար), կազմող Ռեյխանի Ֆ., Երևան, 1996, էջ 41, ինչպես նաև Административный порядок (Сборник для академии бахаи), составитель Рейхани Ф., Душанбе:
 8. Перкинс М., Хейнсворт Ф., с.63.
 9. Там же, с.64; Վարչական կարգը, էջ 34.
 10. Хэтчер У. С., Мартин Дж. Д., с.176.
 11. Перкинс М., Хейнсворт Ф., с.64.
 12. Хэтчер У. С., Мартин Дж. Д., с.176.
 13. Վարչական կարգը, էջ 46:
 14. Նոյնը, էջ 47-48:
 15. Նոյնը, էջ 45:
 16. Община бахаи: основания, цели и намерения, Хайфа, 1990, с.16; Բախայական համայնքը, հիմունքները, նպատակները և մտադրությունները, Երևան, 1996, էջ 11:
 17. Хэтчер У. С., Мартин Дж. Д., с.176; Перкинс М., Хейнсворт Ф., с.63.
 18. Վարչական կարգը, էջ 51:
 19. Община бахаи..., с.7; Բախայական համայնքը..., էջ 12:
 20. Перкинс М., Хейнсворт Ф., с.19; Վարչական կարգը, էջ 43-44:
 21. Նոյնը, էջ 44:
 22. Նոյնը, էջ 10:
 23. Նոյնը, էջ 13:
 24. Նոյնը, էջ 32:
 25. Перкинс М., Хейнсворт Ф., с.69.
 26. Там же, с.61.
 27. Վարչական կարգը, էջ 37:
 28. Перкинс М., Хейнсворт Ф., с.62.
- * Իմ երախտագիտությունն եմ հայտնում Հայաստանի քաղաքների համայնքի օժանդակ խորհրդի անդամ տիկին Անահիտ Նալբանդյանին՝ ցուցաբերած աջակցության համար:

ԲՈՎԱՆ-ԳՄԿՈՒԹՅՈՒՆ

Իմստիտուտի կողմից (Պրոֆ. Ն. Հովհաննիսյան).....5

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊՍՏՈՒԹՅՈՒՆ

ԶՆԱՐԻԿ ԱՎԱԳՑԱՆ
Թուրքիայի հայոց պատրիարքարանի դիվանի փաստաթղթերը
ԱՄՆ-ի հայ գաղութի վերաբերյալ (XIX դ. վերջ - XX դ. սկիզբ).....7

ՆՈՐԱ ԱՐԻՍՅԱՆ
Հայոց ցեղասպանությունը և սիրիական սփյուռքի մասնուր.....16

ՍՈՒՐԵՆ ԲԱԳՎԱՍՏՐՅԱՆ
Թուրքիայի քաղաքական ընտրամու ըմդիանուր
քննող զօնրը (1920-1930 թթ.).....21

ՍՈՒՐԵՆ ԲԱԳՎԱՍՏՐՅԱՆ
Թուրքական Հանրապետությունում քաղաքական մոդեռնացման
առանձնահատկությունների խնդրի շուրջ (1920-1930ական թթ.).....28

ԱՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Նոր միտումներ Միացյալ Նահանգների մերձավորարևելյան
քաղաքականության մեջ (1978-1979թթ. իրամական
հեղափոխությունից հետո).....37

ՀԱՅԿ ԳԵՄՐՅԱՆ
Ղարաբաղյան հակամարտությունը քյուրդալեզու պետությունների
փոխհարաբերությունների համատեքստում.....46

ԿԱՐԵՆ ԴՈՒԼԻՆՅԱՆ
Իրանում ԱՄՆ-ի դեսպանատան գրավումը և ամերիկա-իրանյան
հարաբերությունների ճգնաժամային փուլը.....53

ԳՈՀԱՐ ԻՄԿԱՆԴԱՐՅԱՆ
Ամերիկյան օգնությունները Իրանին՝ որպես իրանա-ամերիկյան
հարաբերությունների կարևորագույն գործոն.....61

ՋՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ
Սյունիքի Օրբելյանները XVIII-XIX դարերում.....70

ԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ջողական գործողի աշխարհաքաղաքական դերը.....79

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Լիբանանի կրոնա-համայնքային համակարգը.....88

| | |
|---|-----|
| ԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՑԱՆ | |
| Օսր 2 համաձայնագիրը որպես պաղեստինյան հակամարտության կարգավորման հեղթական քայլ..... | 96 |
| ՏԱԹԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՑԱՆ | |
| Քրդական աշխատավորական կուսակցության կազմավորման հարցի շուրջ..... | 104 |
| ԴԱՎԻԹ ՎԻՐԱԲՑԱՆ | |
| 1973թ. արաբա-իսրայելյան պատերազմը և Հորդանանի դիրքորոշումը..... | 112 |
| ԱՐԱՋՍ ՓԱՇՏՑԱՆ | |
| Իսլամական Կոնֆեդերացիայի կազմակերպությունը. կառուցվածքը և հիմնական նպատակները..... | 118 |

ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

| | |
|--|-----|
| ԱՐՄԵՆ ԲՈՒՐՆԱՑԱՆ | |
| Հարավային Հայաստանի առնչությունները Հյուսիսային Սիրիայի հետ Ջ.ա. 3-2-րդ հազարամյակների սահմանին..... | 125 |
| ԱՐՏԱԿ ԱՌՎՄԻՍՑԱՆ | |
| Կարևոր մի ուղղում (Կարմիր բլուրի սեպագիր սալիկներից մեկի առնչությամբ)..... | 133 |
| ԱՐՏԱԿ ԱՐԳՍՑԱՆ | |
| Արդենի-Մուս սալիկի տեղորոշման շուրջ..... | 140 |
| ԵՐՎԱՆԻ ԳՐԵԿՑԱՆ | |
| Մանայր թագավորության վարչա-քաղաքական միավորների և դրանց տեղադրության շուրջ..... | 153 |
| ՎԱՋԳԵՆ ԴԱՋԱՐՑԱՆ | |
| Մի քանի սեպագիր համակարգերի կոմպյուտերացումը..... | 173 |
| ՄՈՒՐԵՆ ՄԱՐՏԻԿՑԱՆ | |
| Խաղիաղի ճակատամարտի մշամակությունը ռազմարվեստի պատմության մեջ..... | 181 |
| ՏԻԳՐԱՆ ՄԻՋԱՅԵԼՑԱՆ | |
| Ազգերի կերպարները միջնադարյան արաբալեզու արքայությունում (IX-XIդդ.)..... | 188 |
| ԳԱՅԱԼԵ ՄԿՐՏՈՒՄՑԱՆ | |
| Ջրիստոնյա համայնքների իրավական կարգավիճակը մահմեդական իրավազիտության մեջ..... | 196 |

ԲԱՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐՈՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|-----|
| ՅՈՒԼԻԱ ԱՆՏՈՆՑԱՆ | |
| Մուրր Սարգսի պաշտամունքի հարցի շուրջ..... | 202 |

| | |
|--|-----|
| ԱՍԱՆ ԳՐԲՈՅԱԼ | |
| Հայաստանում կազմավորվող գրական քրոնիկների գեղարվեստական ոճի մի քանի հարցերի շուրջ | 210 |
| ԵԿԱՏԵՐԻՆԱ ԽԱՉԱՏՐՅԱԼ | |
| Հավատախնայության կրոնափոխանակման հայեցակետի շուրջ | 215 |
| ՆԱԻՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱԼ | |
| Տահա Հուսեյնի «Օրերը» ինքնակենսագրական երկը և եզիպտական գրականությունը | 221 |
| ՋԱՐՈՒՀԻ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱԼ | |
| Հայրենիքի ընկալման գաղափարի շուրջ | 225 |
| ԳԱԳԻԿ ՄԱՐՏՈՅԱԼ | |
| Միևր-Սիիդի առասպելի շերտը հայկական ժողովրդական հեքիաթներում | 232 |
| ՀԱՍՄԻԿ ՄԵԼՔՈՒՅԱԼ | |
| Արևելյան պոեզիայի առանձնահատկությունների դրսևորումը Յ.Վ.Գյոթեի «Արևմտա-Արևելյան դիվանում» | 244 |
| ԳԱՅՆԵ ՇԱԳՈՅԱԼ | |
| «Արարչագործության» թեման հայոց ավանդական հարսանիքի փեսայի ծիսական տեքստում | 248 |
| ՆՈՐԱՅՐ ՊՂԳՍՅԱԼ | |
| Թյուրքական քարրամների վրա հայերենի թողած ազդեցությունը | 257 |
| ԳՈՂԱՐ ՎԱՐԿԱՆՅԱԼ | |
| Բահայիների ղեկավարման համակարգը | 264 |

СОДЕРЖАНИЕ

От института (Проф. Н. Оганесян)..... 5

НОВАЯ И НОВЕЙШАЯ ИСТОРИЯ

| | |
|--|----|
| КНАРИК АВАГЯН Архивные документы армянской патриархии в Турции об армянской колонии США (конец XIX - начало XXвв.)..... | 7 |
| НОРА АРИСЯН Армянский геноцид и печать сирийской диаспоры | 16 |
| СУРЕН БАГДАСАРЯН Общая характеристика турецкой политической элиты (1920-1930-е годы)..... | 21 |
| СУРЕН БАГДАСАРЯН К вопросу об особенностях политической модернизации в Турецкой Республике (1920-1930-е годы)..... | 28 |
| АРАМ ГАСПАРЯН Новые тенденции в ближневосточной политике США (после иранской революции 1978-1979гг.) | 37 |
| ГАЙК ДЕМОЯН Карабахское противостояние в контексте взаимоотношений тюркоязычных государств..... | 46 |
| КАРЕН ДОЛИНЯН Захват посольства США в Иране и кризисный период в американско-иранских отношениях | 53 |
| ГОАР ИСКАНДАРЯН Американская помощь Ирану как важнейший фактор в ирано-американских отношениях..... | 61 |
| КРИСТИНЕ КОСТИКЯН Сюникские Орбеляны в XVIII-XIXвв. | 70 |
| АВАГ АРУТЮНЯН Геополитическая роль курдского фактора | 79 |
| ЛИЛИТ АРУТЮНЯН Религиозно-общинная структура Ливана | 88 |
| АРТАК ОВАННИСЯН Соглашение Осло-2 как очередной шаг в урегулировании палестинского противостояния..... | 96 |

| | |
|---|-----|
| ТАТЕВИК МАНУКЯН К вопросу об образовании Курдской Рабочей Партии..... | 104 |
| ДАВИД ВИРАБЯН Арабско-израильская война 1973г. и позиция Иордании..... | 112 |
| АРАКС ПАШАЯН Организация Исламская Конференция. структура и основные цели..... | 118 |

ДРЕВНЯЯ ИСТОРИЯ И СРЕДНЕВЕКОВЬЕ

| | |
|---|-----|
| АРСЕН БОБОХЯН Взаимоотношения южной Армении с северной Сирией на рубеже III-II тысячелетий до н.э..... | 125 |
| АРТАК МОВСИСЯН Важное уточнение (относительно одной клинописной таблички из Кармир блура)..... | 133 |
| АРТАК САРКИСЯН К локализации Ардини-Мусасира..... | 140 |
| ЕРВАНД ГРЕКЯН Об административно-политических единицах царства Манна и их локализации..... | 153 |
| ВАЗГЕН КАЗАРЯН Компьютеризация нескольких клинописных систем..... | 173 |
| СУРЕН МАРТИКЯН Значение Хаххахского сражения в истории военного искусства..... | 181 |
| ТИГРАН МИКАЕЛЯН Образы народов у средневековых арабских арабоязычных источниках (IX-X вв.)..... | 188 |
| ГАЯНЕ МКРТУМЯН Юридический статус христианских общин в мусульманской юриспруденции..... | 196 |

ФИЛОЛОГИЯ И РЕЛИГИЯ

| | |
|--|-----|
| ЮЛИЯ АНТОНЯН К вопросу о культе Св. Саргиса..... | 202 |
| АСАН ДРБОЯН О некоторых вопросах художественного стиля курдского литературного языка в Армении..... | 210 |
| ЕКАТЕРИНА ХАЧАТРЯН О религиозно-психологическом аспекте юродивости..... | 215 |
| НАИРА КАРАПЕТЯН Автобиографическое произведение "Дни" Таха Хусейна и египетская действительность..... | 221 |

| | |
|--|-----|
| ЗРУИ АМБАРЦУМЯН | |
| О понимании идеи родины..... | 225 |
| ГАГИК МАРТОЯН | |
| Слой мифа Мхера-Митры в армянских народных сказках..... | 232 |
| АСМИК МЕЛКОНЯН | |
| Выражение особенностей восточной поэзии в "Западно-восточном Корпусе" И.В.Гете..... | 244 |
| ГАЯНЕ ШАГОЯН | |
| Тема "Сотворения" в ритуальном тексте жениха в армянской традиционной свадьбе..... | 248 |
| НОРАЙР ПОГОСЯН | |
| Влияние армянского на тюркские диалекты..... | 257 |
| ГОАР ВАРДАНЯН | |
| Руководство бахаистских общин | 264 |

CONTENTS

From the Institute (*Prof. N. Hovhannisyan*).....5

MODERN HISTORY

| | |
|--|----|
| KNARIK AVAKIAN The Archival Documents of the Armenian Patriarchate of Turkey concerning the Armenian Community of the USA (end of the XIX - beginning of the XX centuries) | 7 |
| NORA ARISYAN The Armenian Genocide and the Syrian Diaspora Press..... | 16 |
| SUREN BAGHDASARYAN General Characteristics of the Turkish Political Elite (1920-1930s)..... | 21 |
| SUREN BAGHDASARYAN On the Question of the Peculiarities of the Political Modernization in the Turkish Republic (1920-1930's)..... | 28 |
| ARAM GASPARYAN New Trends in the Middle-Eastern policy of the USA (after the 1978-1979 Revolution in Iran) | 37 |
| HAYK DEMOYAN The Karabagh Conflict in the Context of Relations between Turkish-speaking Countries..... | 46 |
| KAREN DOLINYAN The USA Embassy Occupation in IRAN and the Crisis Period of the USA-Iranian Relations | 53 |
| GOHAR ISKANDARYAN The USA Aid to Iran as a main factor of the Iranian-American Relations..... | 61 |
| KRISTINE KOSTIKYAN The Orbelians of Syunik in the XVIII-XIX centuries..... | 70 |
| AVAG HARUTYUNYAN The Geopolitical Role of the Kurdish Factor..... | 79 |

| | |
|--|-----|
| LILIT HARUTUNIAN | |
| The Confessional Political System of Lebanon | 88 |
| ARTAK HOVHANNISYAN | |
| Oslo II Agreement as a next step of Solving the Palestinian Conflict | 96 |
| TATEVIK MANUKYAN | |
| The Formation of Kurdistan Worker's Party | 104 |
| DAVID VIRABIAN | |
| The Arab-Israeli war of 1973 and the Position of Jordania | 112 |
| ARAKS PASHAYAN | |
| Islamic Summit Conference. the Structure and Main Objectives | 118 |

ANCIENT AND MEDIEVAL HISTORY

| | |
|--|-----|
| ARSEN BOBOKHYAN | |
| The relations of Southern Armenia with North Syria at the end of the III - beginning of the II millennium B.C. | 125 |
| ARTAK MOVSISYAN | |
| An impotant correction (concerning one cuneiform tablet from Karmir blur) | 133 |
| ARTAK SARGSYAN | |
| On the Location of Ardini-Musasir | 140 |
| ERVAND GREKYAN | |
| The Administrative-political Units of the Kingdom of Manna and Their Locations | 153 |
| VAZGEN KHAZARYAN | |
| The Computerization of Some Cuneiform Systems | 173 |
| SUREN MARTIKYAN | |
| The Battle of Khaghkhagh in the History of the Military Art | 181 |
| TIGRAN MIKAYELYAN | |
| Images of Peoples in Medieval Arabic Sources (IX-XIcc.) | 188 |
| GAYANE MKRTUMYAN | |
| The Legal Status of Christian Communities in Moslem Law | 196 |

PHILOLOGY AND RELIGION

| | |
|---|-----|
| YULYA ANTONYAN | |
| Towards the worshipping of St.Sargis | 202 |
| ASAN DRBOYAN | |
| On the Formation of Literary Style of Kurdish Language in Armenia | 210 |
| EKATERINA KHACHATRYAN | |
| On Religious-Psychological Aspects of the Phenomenon of the Yurodivies | 215 |

| | |
|---|-----|
| NAIRA KARAPETYAN | |
| Taha Huseyn's Autobiographic work "The Days" and the Egyptian Reality | 221 |
| ZARUHI HAMBARDZUMYAN | |
| On the Perception of "Motherland" | 225 |
| GAGIK MARTOYAN | |
| The Mythical Lare of Mher-Mithra in Armenian Fairy Tails | 232 |
| HASMIK MELKONYAN | |
| The Reflection of Peculiarities of the Eastern Poetry in "West-easter Divan" of J.W.Goethe | 244 |
| GAYANE SHAGOYAN | |
| The Theme of "Creation" in the Bridegroom's Ritual Text of the Traditional Armenian Wedding | 248 |
| NORAIR POGHOSYAN | |
| The Influence of Armenian on Turkish Dialects | 257 |
| GOHAR VARDANYAN | |
| The Governance of Bahai Communities | 264 |

ՄԵՐԶԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ
ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐ

XIX

Գեղ. խմբագիր՝
Համակարգչ. ծնակորոզ

Արա Բաղդասարյան
Գրիգոր Հարությունյան

Տպագրությունը՝
Թուրքը՝
Չափսը՝
Ծավալը՝

օֆսեթ
օֆսեթ
60x84/16
17.5 տպ. մամ.
13.93 հրատ. մամ.

Տպաքանակը՝
Գինը՝

16.3 պայմ. մամ.
300
պայմանագրային

Տպագրված է «Զանգակ-97» հրատարակչության տպարանում.
375010, Երևան, Վարդանանց փակուղի 8, հեռ. 54-69-32, 54-05-17 (ֆաքս):

